

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ԱԿՈՒՆՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 1(18)

ԵՐԵՎԱՆ 2018

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝

ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Առաքելյան Ս. Ա. – պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ասատրյան Ա. Գ. - արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

Գասպարյան Ս. Ք. - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Դերձյան Հ. Մ. - իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

Զաքարյան Ս. Ա. - փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ղարիբյան Գ. Ա. - տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Մանուչարյան Հ. Գ. - քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր

Մինասյան Է. Գ. - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Միքայելյան Մ. Վ. - տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Միքայելյան Վ. Հ. – հոգեբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Մուրադյան Ս. Պ. - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Նահապետյան Ռ. Ա. - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ակունք: Գիտական հոդվածների ժողովածու /Խմբ. խորհուրդ՝ Ս. Ա. Առաքելյան և ուրիշ.; Գլխ. խմբ.՝ Ա.Ա. Ներսիսյան – Եր.: ԵՊՀ հրատ., 2018 թ.-356 էջ:

© ԵՊՀ հրատարակչություն, 2018թ.

© Հեղ. խումբ, 2018 թ.

YEREVAN STATE UNIVERSITY

IJEVAN BRANCH

A K U N Q

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

NUMBER 1 (18)

YEREVAN 2018

YSU PUBLISHING HOUSE

EDITOR-IN-CHIEF

ASHOT NERSISYAN - *doctor of historical sciences, professor*

EDITORIAL COUNCIL

Arakelyan S. A. - candidate of historical sciences, professor

Asatryan A. G. - doctor of art, professor

Derdzian H. M. - doctor of law, professor

Gasparyan S. K. - doctor of philological sciences, professor

Gharibyan G. A. - doctor of economic sciences, professor, associate member of NAS,
RA

Manucharyan H. G. - doctor of political science, professor

Minasyan E. G. - doctor of historical sciences, professor

Mikaelyan M. V. - doctor of economic sciences, professor

Mikaelyan V. H. - doctor of psychological science, professor

Muradyan S. P. - doctor of philological sciences, professor

Nahapetyan R. A. - doctor of historical sciences, professor

Zakaryan S. A. - doctor of philosophy, professor

Akunq. Collection of Scientific Articles/Editorial Board - S. A. Arakelyan and others; Editor – in – chief - A. A. Nersisyan. - Yerevan; YSU Publishing House, 2018 – 356 pages.

© YSU Publishing House 2018

© Author group, 2018

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ե.ԼԱՆԱՅԱՆԸ ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԻ ՄԿԶԲՆԱՎՈՐՈՂ

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Ազգագրության մեջ «պատմաազգագրական շրջան» և «տնտեսամշակութային տիպ» հասկացությունները անհամեմատ քիչ են մշակված:

«Պատմաազգագրական մարզ» հասկացության ներքո հասկացվում է այն բնատարածքը, որի վրա ապրող ժողովուրդների կապերի փոխադարձ ազդեցության և պատմական ճակատագրերի ընդհանրության արդյունքում ձևավորվել է որոշակի մշակութային ընդհանրություն¹: Այդ ընդհանրությունը առավել դյուրին հետազոտվում է ըստ ազգագրական տվյալների, որոնք վերաբերում են նյութական մշակույթին (բնակավայր, բնակարան, բնակարանի ներսույթ, փոխադրության միջոցներ, ուտեստ, սպասք, զգեստ և զարդարանք), նաև հոգևոր մշակույթի առանձին երևույթների (ծեսեր, հավատալիքներ, տոներ, ժողովրդական բանահյուսություն): Ազգագրական նյութի օգնությամբ հաճախ հստակորեն ուրվագծվում են տնտեսամշակութային տիպերի բնատարածքային ու էթնիկական տարածման սահմանները, դրանով իսկ բնորոշվում են նաև պատմաազգագրական մարզերը:

Տնտեսամշակութային տիպերի և պատմաազգագրական մարզերի առանձնացումը շատ կարևոր է ազգագրական դասակարգման համար: Աշխարհի ժողովուրդների գոյություն ունեցող դասակարգումները կառուցված են հիմնականում լեզվաբանական սկզբունքներով: Ուստի անհրաժեշտություն է ժողովուրդների բուն ազգագրական դասակարգումը՝ հիմնված պատմաազգագրական մարզերի և ենթամարզերի առանձնացման վրա: Սա ազգագրագետների կարևորագույն խնդիրներից է: Այս տեսանկյունից պետք է բարձր գնահատել «Ազգագրական հանդեսի» (1895-1916) և անձամբ Երվանդ Լալայանի գիտակազմակերպչական նպատակաւաղ ու բազմաբովանդակ գործունեությանը: Նրա ջանքերի շնորհիվ «Հանդեսի» շուրջը համախմբվեց ականավոր մտավորականների և գավառական գրագետների լայն ցանց, պատմական Հայաստանի ազգագրական շրջանների մեծ մասի վերաբերյալ ազգագրական-բանահյուսական նյութեր հավաքվեցին՝ պարբերաբար հրատարակվելով «Հանդես»-ում, նաև առանձնատիպերի ձևով, որոշ մասը՝ ռուսերեն թարգմանությամբ: Ե. Լալայանը Հայաստանի

¹ См. М.Г. Левин и Н.Н. Чебоксаров, *исл.* 1921 г., т. 4:

վերաբերյալ ազգագրական ուսումնասիրությունները կատարել է ըստ որոշակի շրջանների, որոնք իրենցից ներկայացնում են ազգագրական մի ամբողջություն:

Նշենք, որ «Ազգագրական հանդես»-ում բանահյուսական նյութը զգալի տեղ էր գրավում, այդուհանդերձ Հայաստանի տարբեր շրջաններին վերաբերող ազգագրական ուսումնասիրությունները ավելի ծավալուն ու մեծաքանակ էին, որոնց հեղինակը հիմնականում հենց Երվանդ Լալայանն էր¹: Նրանից առաջ ժողովրդական մշակույթի հիմնական աղբյուր հանդիսացող ազգագրական նյութը տակավին կարոտ էր մասնագիտական, հատկապես ըստ պատմաազգագրական մարզերի և ենթամարզերի դասդասման ու ընդհանրացման: Նա իր բանահավաքչական գործունեությունը սկսել է Ախալքալաքում դեռևս 1889 թվականին: Որպես բանահավաք՝ Լալայանը ոչ թե նյութի պարզ արձանագրող է, այլ հետազոտող-գիտնական: Գրի առնելու ընթացքում նա առաջնորդվել է նյութի ամբողջականությունը պահպանելու սկզբունքով, կենցաղավարության, նյութական ու հոգևոր մշակույթի միջև բնական պատճառական կապերը վեր հանելով:

Իր գործունեության ընթացքում Ե.Լալայանը առաջնորդվում էր Գրիգոր Խալաթյանցի կազմած ծրագրով, որը «Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորույթների» վերտառությամբ լույս է տեսել Մոսկվայում 1887 թվականին: Այդ մասին Լալայանը գրում է. «Ես ազդվեցի Խալաթյանցի ծրագրից, և ինքս ինձ նվիրեցի ազգագրությանը»: Նույնը առաջարկում է մյուս բանահավաքներին՝ որպես «անհրաժեշտ ուղեցույց»²: Այդ ծրագրի հիման վրա պատմական Հայաստանի երկու հատվածներում շրջագայելիս նա գրի է առնում ու հրատարակում տվյալ վայրի ազգագրական նյութը՝ ժողովրդական բանավոր գրականության նմուշներով, նշանավոր վանքերի, պատմական հուշարձանների, միջնադարյան ձեռագիր մատյանների և այլ հնությունների նկարագրություններով:

Նրա՝ ազգագրական առանձին շրջաններին ուղղված աշխատությունները ընդգրկում են հետևյալ հիմնական բաժինները. *պատմական համառոտ տեսություն, տեղագրություն, պատմական հուշարձաններ, ազգաբնակչությանը վերաբերող տեղեկություններ, տնտեսական դրություն, լուսավորություն, նյութական մշակույթ. բնակարան, զգեստ և զարդ, ընտանեկան բարք՝ ամուսնություն, տղաբերք և կնունք, ընտանեկան կյանք, հիվանդություն և բժշկություն, մահ, թաղում և մեղեղոց, հոգու և հանդերձյալ կյանքի ժողովրդական ընկալումներ, հավատք՝ լեոների, քարի, կրակի, ջրի, ծառերի, կենդանիների, լուսավորների, ոգիների պաշտամունքային դրսևորումներ, կախարդություն, սնտոխապաշտություն,*

¹ Տե՛ս **Ռաֆիկ Նահապետյան**, Երվանդ Լալայանի և «Ազգագրական հանդես»-ի դերը հայ ազգագրական գիտության կայացման և զարգացման գործում: - Պատմություն և մշակույթ. Հայագիտական հանդես (Գիտական հոդվածների ժողովածու), ԵՊՀ պատմության ֆակուլտետ, Երևան, 2016, էջ 373-386:

² Տե՛ս **Ե.Լալայան**, Ջավախք (Նյութեր ապագա ուսումնասիրության համար): - «Ազգագրական հանդես» (այսուհետ՝ ԱՀ), Ա գիրք, Շուշի, 1895-1896, էջ 379:

*նշանավոր տոներ, ժողովրդական բանավոր գրականություն*¹: Ընդհանրապես, որևէ շրջանի վերաբերող նրա ուսումնասիրությունը կարելի է բաժանել երկու մեծ բաժնի՝ պատմաաշխարհագրական և ազգագրական: Ազգագրական տեղեկությունների հետ մեկտեղ՝ Լալայանը մանրամասն տեղեկություններ է տալիս տվյալ շրջանի պատմության, բնակլիմայական և աշխարհագրական պայմանների, հուշարձանների, գյուղական բնակավայրերի մասին:

Սակայն հարկ է նշել, որ այդ բաժինները ընդհանրապես և առանձին շրջաններ մասնավորապես, նույն չափով չեն արժանացել Լալայանի ուշադրությանը: Ազգագրագետի ուսումնասիրություններում առավել մեծ տեղ են գրավում ընտանեկան բարքերին ու հավատքին վերաբերող բաժինները: Դա պետք է բացատրել այն հանգամանքով, որ Լալայանը գտնվում էր էվոյուցիոնիզմի՝ ժամանակի ազգագրության տիրապետող և առաջադիմական ուղղության ազդեցության ներքո:

Է. Կարապետյանը «Ազգագրական հանդեսի» հիմնադրման 60-ամյակին նվիրված իր հոդվածում նկատում է, որ «հեղինակի [Ե. Լալայանի - Ռ.Ն.] տեսադաշտից դուրս է մնացել նյութական կյանքը»²: Այս բնորոշումը մեզ համար այնքան էլ պարզ չէ, մանավանդ որ նույն հոդվածում Է. Կարապետյանը Ե. Լալայանի հետազոտությունների պլանում նշում է նաև «տնտեսական դրություն» բաժինը: Մեր կարծիքով, ավելի հստակորեն կարելի է նշել, որ ժողովրդի տնտեսական կենցաղը և դրա հետ կապված նաև աշխատանքի գործիքները անհամեմատ քիչ են արտացոլվել Ե. Լալայանի գործերում, այն էլ միայն առանձին շրջաններ նկարագրելիս: Իսկ նյութական մշակույթի այնպիսի տարրերի, ինչպիսիք են բնակարանը, տարազը, ուտեստը, Լալայանը բավականին հանգամանալի է անդրադարձել:

Սովորաբար Ե.Լալայանը ուսումնասիրության համար ընտրում է Հայաստանի որևէ վարչական միավոր: Սակայն նա ազգագրական ուսումնասիրությունը կատարում է ոչ թե տարբերայնորեն, այլ դիտում է այն որպես մի ազգագրական շրջան՝ իր յուրօրինակ համալիր նկարագրով: Լալայանը երբեմն որևէ մեծ շրջան բաժանում է ազգագրական տեսակետից ավելի փոքր ենթաշրջանների, որոշ նյութեր հավաքելով ողջ շրջանի, որոշ նյութեր էլ առանձին ենթաշրջանների վերաբերյալ: Միաժամանակ նա տվյալ շրջանի բնակչությանը առանձնացնում է գաղթականներից՝ ուսումնասիրության օբյեկտ դարձնելով միայն բնիկներին: Այդ առիթով նա «Ջանգեգուրի գավառ» աշխատության մեջ գրում է. «Մեր ներկա հետազոտության մեջ մենք միայն նրանց (գաղթականների - Ռ.Ն.) գյուղերը նկարագրեցինք, որպեսզի տեղագրական բաժինները փոքր ի շատե լրիվ

¹ Տե՛ս օրինակ, **Ե. Լալայան**, Վարանդա, ԱՀ, երկրորդ տարի, Բ գիրք, 1897, Թիֆլիս (տե՛ս բովանդակությունը):

² **Յ.Կարապետյան**, К 60-летию армянского этнографического издания «Азгагракан андес», - «СЭ», № 2, 1956, էջ 113:

կարողանայինք ներկայացնել, այնինչ մյուս, զուտ ազգագրական կետերում, մենք նրանց բոլորովին անուշադիր թողինք, հետազոտելով միմիայն բնիկ ժողովրդին, որպեսզի ազգագրական տեսակետից սխալներ արած չլինենք և տարբեր սովորույթներ իրար չխառնեինք»¹:

Որպես Լալայանի գործելակերպի առանձնահատկություն, պետք է նշել, որ նա իր հետազոտությունները դատարկ տեղում չի սկսում: Ձեռնարկելով որևէ շրջանի ուսումնասիրությունը՝ Լալայանը օգտագործում է մատենագիրների և այլ հեղինակների անտիպ կամ տպագրված հատուկենտ տեղեկություններն ու հավաքած նյութերը՝ հարստացնելով աղբյուրագիտական հենքը:

Ե.Լալայանը առաջինն էր, որ հայ ազգագրությունը հանեց տնայնագործական շրջանակներից, ազատվեց իր նախորդների աշխատանքների միակողմանիությունից, ազգագրական ուսումնասիրությունների համար մշակեց որոշակի համակարգ, հայ ազգագրությունը դրեց գիտական հիմքերի վրա: Դա է նրա մեծագույն ծառայությունը:

«Ազգագրական հանդեսի» Ա, Բ և Գ գրքերում տեղ գտած Ե. Լալայանի «Ջավախք»² մեծածավալ աշխատությունը գրված է հեղինակի հավաքած դաշտային ազգագրական նյութերի հիման վրա և իր տեսակի մեջ նորույթ է³: «Ջավախք» աշխատությունը նվիրված է նախկին Գուգարք նահանգի Ջավախք գավառին (ներկայիս Ախալքալաքի շրջան, Վրաստանի Հանրապետություն): Աշխատությունը կազմված է հետևյալ մասերից՝ «Պատմական համառոտ տեսություն» (էջ 117-124), ուր տրվում է Ջավախքի պատմական անցյալը հնագույն ժամանակներից մինչև XIX դարի վերջը, «Ջավախքի տեղագրությունը» (125-152)՝ լեռներ, լճեր, գետեր, կլիմա, բուսական և կենդանական աշխարհը, նշանավոր գյուղերը, հնությունները՝ եկեղեցիներ, ամրոցներ (153-172): Մյուս գլուխները նվիրված են Ջավախքի բնակչությանը (173-185), հանգամանորեն տրված են վիճակագրական տվյալներ (186-192) գավառում բնակվող հայերի, հայ բոշաների, ռուսների, վրացիների, հույների, թուրքերի, քրդերի, ինչպես նաև ազգաբնակչության տեղաշարժի (193-199), ժողովրդական լուսավորության մասին (218-223): «Տնտեսական դրություն» բաժնում (200-217) նկարագրված են ինչպես գյուղացիների, այնպես էլ քաղաքացիների զբաղմունքները: Նյութական մշակույթից ներկայացված են բնակարան, զգեստ և զարդարանք բաժինները (227-231): «Ընտանեկան բարք» (232-319) բաժնում նկարագրված են ամուսնությունը և հարսանեկան սովորույթները, տղաբերքը և կնունքը, ընտանեկան կյանքը, ժողովրդական բժշկությունը, հոգու և հանդերձյալ կյանքի մասին սնահավատ պատկերացումները և այլն: Աշխատության վերջին բաժինը նվիրված է հավատքին և նշանավոր տոներին (320-379):

¹ Ե.Լալայան, Միսիան. – ԱՀ, գ. Գ, Թիֆլիս, 1989, № 1, էջ 194:

² Տե՛ս ԱՀ, գիրք Ա, 1896, էջ 117-378, գիրք Բ, 1897, էջ 245-295, գիրք Գ, 1898, էջ 91-104, գիրք Դ, 1898, էջ 159:

³ Տե՛ս Կ.Վ. Մելիք-Փաշայան, Երվանդ Լալայան, – ՊԲՀ, № 3, 1964, էջ 33:

«Ազգագրական հանդեսի» Բ և Գ գրքերում զետեղված է Ե. Լալայանի խմբագրությամբ գրված կոլեկտիվ «Վարանդա» աշխատությունը, որը նվիրված է Շուշու գավառի ազգագրությանը (ներկայիս Արցախի Հանրապետության Շուշիի և Մարտունու շրջանները, Հադրութի շրջանի մի մասը): Այս աշխատությունը Լալայանը գրել է համահեղինակությամբ. բանահավաք Լ. Աթաբեկյանը կազմել է Վարանդայի վիճակագրությունը, Ղ. Տեր-Ղազարյանը նկարագրել է տնտեսական կենցաղը, «Ընտանեկան բարք» բաժնի «հիվանդություն և բժշկություն» հատվածի վերաբերյալ նյութեր է գրառել նաև Հ. Տեր-Հովհաննիսյանը, իսկ Հ.Վ.-ն («Տղաբերք և կնունք») և Ա.Բ.-ն («Ընտանեկան կյանքը») (որոնց ով լինելը հայտնի չէ)¹ մասնակցել են ընտանեկան կենցաղի նկարագրությանը: Աշխատության մեծ մասը գրել է Ե. Լալայանը: Այս աշխատությունը ևս կազմված է նախորդ աշխատության սխեմայով¹. 1) Պատմական տեսություն (էջ 5-8), 2) «Տեղագրություն» (9-53), 3) «Վիճակագրական տեղեկություններ» (54-76), 4) «Տնտեսական դրություն» (77-101), 5) «Լուսավորություն» (102-112), 6) «Ընտանեկան բարք» (113-185), ա) «Ամուսնություն» (113-143), բ) «Տղաբերք և կնունք» (144-150), գ) «Ընտանեկան կյանք» (151-172), դ) «Հիվանդություն և բժշկություն» (173-177), ե) «Մահ, թաղում և մեղեղոց» (178-184), զ) «Հոգու և հանդերձյալ կյանքի մասին» (185-186), 7) «Հավատք» (187-243), ա) «Լեռների պաշտամունք» (187-188), բ) «Քարի պաշտամունք» (188-193), գ) «Կրակի պաշտամունք» (194-195), դ) «Ջրի պաշտամունք» (196-197), ե) «Ծառերի պաշտամունք» (198-203), զ) «Կենդանիների պաշտամունք» (204-215), է) «Լուսավորների պաշտամունք» (216-220), ը) «Ոգիների պաշտամունք» (221-230), թ) «Կախարդություն» (231-239), ժ) «Մնտոխապաշտություններ» (245-293) և վերջապես՝ «Նշանավոր տոներ» (245-278), «Հայ գրագիրներ» (245-278): ԱՀ-ի երրորդ գրքում անդրադարձել է Ջավախքի բանավոր գրականությանը²:

Ե. Լալայանի հաջորդ գործը՝ «Զանգեզուրի գավառ» աշխատությունն է նվիրված Զանգեզուրի ազգագրությանը: Ձեռնարկելով պատմաազգագրական այս շրջանի ուսումնասիրությունը, Ե. Լալայանը նպատակահարմար է գտել այն բաժանել «ազգագրական տեսակետից անհրաժեշտ շրջանների (Սիսիան, Կապան)», դրանք ուսումնասիրել առանձին-առանձին, իսկ այնուհետև հավաքել այն նյութերը, որոնք ընդհանուր են ողջ գավառի համար: Սակայն Լալայանին հաջողվեց նկարագրել միայն Զանգեզուրի ոստիկանական շրջանի³ (ներկայիս Գո-

¹ Ե. Լալայանը «Վարանդա» աշխատության վերջում, ծանոթագրության մեջ գրում է. «Բացի իմ հավաքած նյութերից, ինձ համար տարբեր գյուղերից նյութեր հավաքեցին և Պ.Պ. Ալլահվերդյան, Վարդապետյան, Հովհաննիսյան և ուրիշներ, որոնց շնորհակալություն եմ հայտնում» (տե՛ս ԱՀ, գիրք Գ, էջ 349): Հավանաբար նրանք նշված սկզբնատառերով գրված հեղինակներն են, որոնց գրառած նյութերը Ե. Լալայանը խմբագրել և տեղադրել է իր աշխատության մեջ:

² Տե՛ս ԱՀ, գիրք Բ, 1897, էջ 4-244, գիրք Գ, 1898, էջ 339-349:

³ Տե՛ս ԱՀ, գիրք Գ, 1898, էջ 91-102:

⁴ Տե՛ս ԱՀ, գիրք Դ, 1898, № 2, էջ 7-116:

րիսի շրջանի) և Միսիանի ոստիկանական շրջանի¹ (ներկայիս Միսիանի շրջան) ազգագրությունը, իսկ Կապանի շրջանի² վերաբերյալ տվել է միայն պատմական համառոտ տեսություն: Այդ իսկ պատճառով վերոհիշյալ «Զանգեզուր» և «Միսիան» աշխատություններում բացակայում են այնպիսի բաժիններ, ինչպիսիք են հավատքը, տնտեսական դրությունը, վիճակագրական տեղեկությունները, կերակուրը և խմիչքը, ազգային իրավաբանական սովորույթները: Աշխատությունները գրված են հետևյալ ծրագրով. պատմական համառոտ տեսություն, բնագրություն, նշանավոր գյուղեր և պատմական հուշարձաններ, բնակիչներ, բնակարան, զգեստ և զարդ, ընտանեկան բարք, նշանավոր տոներ, ժողովրդական երգեր: Մակայն Միսիանի և Զանգեզուր աշխատությունների էջերում զետեղված են ազգագրական բացառիկ նշանակություն ունեցող Միսիանի քարտեզը, Ռոտոնա վանքը, Մատանի կամուրջը, Տաթևի վանքը իր պյուն-գավազանով, մանհիրներ և դոլմեններ, սիսիանցիներ՝ տեղական տարագով, սիսիանցի գերդաստանը, բնակարանը իր ներսույթով, երաժշտական գործիքներ, սափորներ, գութան, դաշտային այլ գործիքներ (Միսիան), Զանգեզուրի քարտեզը, ջրվեժը («շոռան»), Գորիսի համայնապատկերը, քարահունջեցի կիներ՝ իր տարագով, գորիսեցի տղամարդը իր տարագով, Ծիծեռնավանքը, պղնձե անոթներ, մանկան օրորոցը-«ճոճքը», մանկան բարուրը՝ երեք կնոջ և մեկ տղամարդու հետ իրենց ազգային հագ ու կապով, զանգեզուրցի կանայք և քողը երեսին նորահարսը ճաշելիս (Զանգեզուր):

Ե. Լալայանի գրչին է պատկանում նաև «Գանձակի գավառ»³ մեծածավալ ուսումնասիրությունը: Պատմական տեսության մեջ Լալայանը անդրադառնում է հայ մելիքություններին, մելիքների, կյանքին, նրանց հասարակական և իրավաբանական սովորություններին: Տեղագրության մեջ ներկայացված են ինչպես հայկական նշանավոր գյուղերը, վանքերն ու բերդերը, այնպես էլ գավառում բնակվող գերմանացիների, թուրքերի և մալականների գյուղերը: Այնուհետև տրված է հայ բնակչության մարդաբանական նկարագիրը, նրանց բնակարանը, տարազը, ընտանեկան բարքը՝ ամուսնահարսանեկան, տղաբերքի և կնունքի սովորույթներն ու ծեսերը, ընտանեկան կյանքը՝ բաղնիքը, ուտեստը և ըմպելիքը, ժողովրդական բժշկությունը, մահվան, հուղարկավորության և մեռելոցի հետ կապված սովորույթներն ու ծիսական արարողակարգը, ինչպես նաև հավատքը՝ լեռների, քարի, ջրի, կրակի, ծառերի, կենդանիների, տարերքի և տիեզերական երևույթների, ոգիների, սրբերի պաշտամունքային դրսևորումները, սնոտիապաշտամունքային երևույթները, նշանավոր տոները: Առանձին ներկայացված է գավառում բնակվող մալականների ազգագրությունը: Աշխատության մեջ տեղ են գտել Գանձակի մելիքներից մեկի լուսանկարը՝ մելիքական զգեստով, բեկը և հասարակ

¹ Տե՛ս ԱՀ, գիրք Գ, 1898, № 1, էջ 105-272:

² Տե՛ս ԱՀ, գիրք XII, էջ 175-202:

³ Տե՛ս ԱՀ, գիրք Ե, 1899, էջ 213-360: 1900, 232-282, գիրք VII VIII, 1901, 255-270:

գյուղացի կինը՝ իրենց տարագներով, Գանձակի հրապարակը, Շահ-Աբասի հիմնած մզկիթը Գանձակում, նշանավոր վանքերից՝ Չարեքա անապատը, Գանձակի բերդը, Մամուտ բերդը:

Ե. Լալայանի նշանավոր գործերից է «Բորչալուի գավառ»¹ աշխատությունը, որը նվիրված է Լոռվա ազգագրությանը: Այս գործը հեղինակը ձեռնարկել է նախ և առաջ նահապետական կյանքով ապրող Լոռու ազգագրության վերաբերյալ հինավուրց թանկագին նյութերը սերունդներին պահ տալու մտահոգությամբ, քանզի այն արագ կարող էր ոչնչացվել քաղաքային կենցաղավարության անցնելու պատճառով՝ պայմանավորված Թիֆլիս-Կարս կառուցվող երկաթուղով: Իր դաշտային բանահավաքչական տևական հետազոտության հետ մեկտեղ Լալայանը աշխատությունը գրելիս օգտվել է նաև տպագրված ու անտիպ վիճակում եղած նյութերից ու տեղեկություններից, որոնք վերաբերում էին ուսումնասիրվող գավառին, թեև «մատենագիրներից քաղած տեղեկությունների ամենաչնչին մասն է վերաբերում ժողովրդի կուլտուրական զարգացմանը»²: Իր նախանշած ծրագրով Լալայանը տալիս է գավառի բնագրությունը, ընդգրկած սահմանները, բնական հարստությունները, կլիման, բուսական ու կենդանական աշխարհը, համառոտ պատմական տեսությունը, ռուսիկանական շրջանի հայաբնակ գյուղերի տեղագրությունը, ընդհանուր տեղեկություններ գավառի ազգաբնակչության, վանական համալիրների ու եկեղեցիների, նշանավոր հուշարձանների մասին՝ նկարներով հանդերձ, և ազգագրական տվյալներ բնիկ ազգաբնակչության վերաբերյալ: Նկարագրված են նրանց բնակարանը, զգեստը և զարդը, գլխի հարդարանքը, ամուսնական սովորույթներն ու ծեսերը՝ ուշագրավ պատկերներով, ինչպես օրինակ՝ փեսա-թագավորին սափրելու ծեսը, տղաբերքն ու կնունքը, մանկածնությունը, ընտանեկան կենցաղը, որտեղ հեղինակը ցույց է տալիս նահապետական գերդաստանի ներքնտանեկան հարաբերությունները, վարվելակարգը, գերդաստանի տրոհումը անհատական փոքր ընտանիքների, նրանց միջև պահպանվող ազգատոհմային կապերն ու պարտականությունները: Ուշագրավ են կերակուրին ու ըմպելիքներին, ժողովրդի առողջապահական դրությանը, մահվան, հուղարկավորման և հիշատակմանը հատկացված բաժինները: Զգալի տեղ են գրավում հավատքին, ժողովրդական տոներին ու պասերին, ուխտագնացությամբ և ժողովրդական բանահյուսությանը վերաբերող բաժինները: Ե. Լալայանը աշխատության մեջ զետեղել է նաև ուշագրավ նկարներ, քարտեզներ:

¹ Տե՛ս ԱՀ, գիրք VII-VIII, 1901, գիրք 271-437, գիրք IX, 1902, էջ 197-262, գիրք X, 1903, 112-268, գիրք XI, 1904, էջ 33-128:

² Ե. Լալայան, Բորչալուի գավառ, Թիֆլիս /ա.թ./, էջ 4:

Ե.Լալայանի «Նախիջևանի գավառ»¹ ուսումնասիրությունը ընդգրկում է «Գողթն» կամ Օրդուբադի՝ Վերին Ագուլիսի ոստիկանական և «Նախիջևանի ոստիկանական շրջան» կամ Նախճավան տարածաշրջանները: Առաջինը նվիրված է Հայկական տառերի գյուտի 1500-ամյակին: Ներկայացված են Գողթնի տեղագրությունը, բնագրությունը, պատմությունը, որի տակ խոսվում է քաղաքական կրոնական և մտավոր ու հասարակական զարգացման մասին, հանգամանորեն ներկայացվում են ոչ միայն Օրդուբադը, այլև Վերին Ագուլիս, Վանանդաձոր, Ցղնա կամ Չանանաբի ձոր, Բատաձոր-Գիլանաձոր և նրա շրջակա մյուս բնակավայրերը, գործող և կիսավեր վանքերն ու եկեղեցիները, բնակարանը տարազը, գլխի հարդարանքը, ընտանեկան բարքը և նշանավոր տոները: Աշխատության երկրորդ մասը՝ «Նախիջևանի ոստիկանական շրջան կամ Նախճավան» վերնագրով, հավանաբար կիսատ է մնացել և ընդգրկում է բնագրություն, պատմական տեսություն և տեղագրություն բաժինները: Պատմական տեսության առաջին մասը՝ նախապատմական շրջանը, Ե.Լալայանը գրել է իր կատարած պեղումների նյութերի հիման վրա: «Ազգագրական հանդեսի» 15-րդ գրքում ներկայացվում է Նախճավան (Նախիջևանի ոստիկանական) շրջանի տեղագրությունը՝ բաղկացած 31 գյուղից. Նախիջևանից դեպի հարավ և հյուսիս ընկած գյուղերը՝ իրենց բնակչության կազմով, տներով, շրջակա պատմական հուշարձաններով. վանքեր, եկեղեցիներ, ամրոցներ, հայ և թուրք բնակչության զբաղմունքները և այլն: Ե.Լալայանը ջանացել է աշխատության մեջ զետեղել պատմական հուշարձանների բնակավայրերի, անհատ գործիչների հնարավորինս շատ նկարներ:

Հրատարակվել է նաև Ե. Լալայանի «Նոր Բայազետի գավառ կամ Գեղարքունիք»² մեծածավալ աշխատությունը, որտեղ ներկայացված է Սևանա լճի ավազանի ազգագրությունը: Աշխատության մեջ հանգամանորեն տրված են Նոր Բայազետի բնագրությունը, իր կատարած հնագիտական պեղումների արդյունքների հիման վրա՝ նախապատմական շրջանը, տեղագրությունը, հաղորդակցության երթուղիները, պատմությունը, պատմական հուշարձանները, ընտանեկան բարքը. ամուսնահարսանեկան, տղաբերքի, կնունքի և մանկատաժության սովորությունները, ժողովրդական դեղերն ու բժշկությունը, հուղարկավորման և մեռելոցի սովորություններն ու ծիսական արարողակարգերը, ժողովրդական հավատալիքներն ու պաշտամունքային դրսևորումները՝ լեռների, քարերի, կենդանիների, շենքի, տարրերի և ֆիզիկական երևույթների, ոգիների, սրբերի, հավատքը՝ չար ոգիների վերաբերյալ, կախարդությունը, սնոտիապաշտությունները, պասերն ու տոները, ժողովրդական բանահյուսությունը, նշանավոր վանքերը: Աշխատույթ-

¹ Տե՛ս Նախիջևանի գավառ, Ա մասն, Գողթն կամ Օրդուբադի ոստիկանական շրջան. – ԱՀ, գիրք XI, 1904, էջ 240-336, գիրք XIII, 1906, էջ 199-226, գիրք XV, 1907, էջ 133-163:

² Տե՛ս ԱՀ, գիրք XIII, 1906, էջ 167-198, գիրք XV, 1907, էջ 164-205, գիրք XVI, 1907, էջ 8-65, գիրք XVII, 1908, էջ 86-125, գիրք XVIII, 1908, էջ 109-156, գիրք XIX, 1910, էջ 115-150, գիրք XX, 1910, էջ 31-60, գիրք XXIII, 1912, էջ 123-148, գիրք XXIV, 1913, էջ 51-59:

յունը գրված է Ե. Լալայանի երկար տարիների պեղումների և հավաքած ազգագրական նյութերի հիման վրա: Սակայն պետք է նշել, որ այս աշխատության մեջ հեղինակը մի շարք բաժիններ, նվիրված ազգաբնակչության վերաբերյալ տեղեկություններին, նյութական մշակույթին, չի ներկայացրել, պատճառաբանելով, որ բնակարանները, զգեստները նման են Վայոց Ձորի, Բորչալուի գավառներին, ուստի ևս ավելորդ է ժամանակ վատնելը:

Ե.Լալայանը գրել է նաև «Շարուր Դարալագյազի գավառ»¹ աշխատությունը, որը սակայն անավարտ է և լրիվությամբ չի ընդգրկում ամբողջ գավառին վերաբերող ազգագրական նյութը: Գավառը բաժանելով երկու մասի, Լալայանը ներկայացրել է միայն նրա մի մասի՝ Դարալագյազի կամ Վայոց Ձորի ազգագրությունը: Ներկայացված են Վայոց ձորի բնագրությունը, պատմությունը, տեղագրությունը՝ գյուղերը, բնակչության տարածքը, ընտանեկան բարքը՝ ամուսնության և հարսանիքի սովորությունները, տղաբերքի և կնունքի, ժողովրդական դեղերի և բժշկության, մահվան, հուղարկավորման և մեռելոցի հետ կապված սովորությունները և նշանավոր վանքերը:

Ազգագրական շրջանների վերաբերյալ «Ազգագրական հանդես»-ում տեղ գտած բացառիկ արժեքավոր ուսումնասիրություն է Ե.Լալայանի «Վասպուրական»² աշխատությունը: Նյութերը Ե. Լալայանը հավաքել է 1910 թ. Վասպուրական կատարած ճանապարհորդության ժամանակ, ինչպես նաև Արևելյան Հայաստանի այն վայրերում, ուր հայտնվել էին այդ նահանգից մագապուրծ փախած գաղթականները: Վասպուրական վերաբերյալ աշխատանքը Ե.Լալայանը նախատեսել էր հրատարակել 6 հատորով, որոնք առանձին-առանձին պետք է ընդգրկեին՝ ա) ամբողջ Վանի նահանգի տեղեկագրությունը, պատմական և հնագիտական տեղեկություններով, բ) նահանգի բոլոր վանքերի նկարագրությունը, գ) ազգագրական տեղեկություններ Վանի, Շատախի, Մոկսի վերաբերյալ, դ) ժողովրդական հավատքը, ե) Վասպուրականի ձեռագրերի ցուցակը, զ) Վասպուրականի բանավոր գրականությունը³ ըստ բարբառների՝ հատորների բաժանված: Սակայն այս բանը հեղինակին չի հաջողվում, հրատարակված աշխատությունը ընդգրկում է հետևյալ մասերը՝ Վասպուրականի ազգագրությունը, որտեղ մարդաբանական տեղեկություններ են տրված Վանի, Տոսպի և Հայոց Ձորի բնակչության վերաբերյալ, մանրամասնորեն նկարագրված է նրանց բնակարանները և նրա ներսույթը, զգեստը և զարդեղենը՝ իրենց նկարներով, ընտանեկան բարքերը. ամուսնահարսանեկան, տղաբերքի, կնունքի սովորություններ, ընտանեկան կյանքը, մահը, թաղումն ու մեռելոցը: Հաջորդ բաժիններն են Վասպուրա-

¹ Տե՛ս ԱՀ, գիրք XII, 1904, էջ 235-293, գիրք XIII, 1906, էջ 139-166, գիրք XIV, 1906, էջ 133-155:

² Տե՛ս ԱՀ, գիրք XX, 1910, 116-196, 197-202, գիրք XXI, 1911, 101-104, գիրք XXII, 1912, 85-100, 117-197, գիրք XXIII, 1912, 149-196, գիրք XXIV, 1913, 117-180, 181-232, գիրք XXV, 1913, 20-60, 109-164, 189-215, գիրք XXVI, 1916, 196-212:

³ Տե՛ս ԱՀ, գիրք XX:

կանի նշանավոր վանքերը՝ դրանց մի զգալի մասի չափագրումներով, ամբողջական համալիրների նկարներով, արձանագրություններով, տապանագրերով, տնայնագործությունը, որի տակ ներկայացված է Շատախի շալագործությունը: Հավատք խորագիրը կրող բաժնում¹ Ե. Լալայանն անդրադարձել է լեռների, քարի, ջրի, ջրի բուժիչ հատկությունների, բույսերի, ծառերի, թփերի, կենդանիների՝ թռչունների, սողունների, շան, գայլի, ոգիների (չար ու բարի), սրբերի տեղական պաշտամունքային դրսևորումներին: Սրանց վերաբերյալ լրացումներ է կատարել 1915-1916 թվականներին փախստականներից հայ բանահյուսության վերաբերյալ դաշտային ազգագրական նյութեր հավաքող արշավախումբը ղեկավարելիս: Մի առանձին բաժին է նվիրված Վասպուրականի ասորիների ազգագրությանը: «Վասպուրականը» հիմնարար և արժեքավոր աշխատություն է տվյալ պատմաազգագրական շրջանի վերաբերյալ և արդյունք է հեղինակի մի քանի տարիների համառ աշխատանքի:

Հայոց ազգագրական ընկերության միջոցներով 1915 թ. սեպտեմբերին հայ իրականության մեջ առաջին անգամ կազմակերպված ազգագրական-բանահավաքչական խմբարշավը չորս ամիս շրջելով Անդրկովկասի այն վայրերում, ուր ապաստան էին գտել հայ փախստականները, գրի են առնում 874 հեքիաթ և բազմաթիվ երգեր: Դրանով Ե. Լալայանի ջանքերով կորստից փրկվեցին Մշո, Մոկսի, Վանի, Բիթլիսի, Արճեշի, Մասունի, Ալաշկերտի, Բասենի, Շատախի, Բուլանլիսի և այլ ազգագրական շրջանների հեքիաթներ, երգեր, գրույցներ, ազգագրական այլ նյութեր: Նույնքան արժեքավոր էին Ե. Լալայանի գրի առած ազգագրական նյութերը մշեցիների վերաբերյալ: Գիտնականը ծրագրել էր գրառած նյութերը լրացնելու և ամբողջացնելու նպատակով նոր խմբարշավ կազմակերպել դեպի Մշո պատմական գավառը: Սակայն նյութական սղությունը մի կողմից, և պատերազմական պայմաններում թուրքական վայրագությունները մյուս կողմից, այն դարձնում են անհնար: Իր հայտնի «Մուշ-Տարոն» աշխատության ծանոթագրության մեջ նշում է նաև, որ հավաքած նյութերի հավաստիությունը վերստուգելու հույսով այս աշխատությունը կարդացել է գավառի պատմությանն ու ազգագրական երևույթներին քաջածանոթ երեք անձնավորությունների (Եղիշե քահանա Տեր-Բարսամյան, Մուշեղ քահանա Տոնապետյան, Նազարեթ Մարտիրոսյան), որոնց հավանությանը արժանանալուց հետո՝ այն հրատարակության է ներկայացրել²:

«Մուշ-Տարոն» աշխատությունը սկսում է «Զգեստ և զարդ» բաժնով՝ նկարագրելով կանանց և ապա տղամարդկանց տարազների բարդ և անկրկնելի համալիրները՝ մշեցի փախստականների լուսանկարներով: Անդրադառնում է առօրյա և տոնական համալիրներին, գլխի բարդ հարդարանքներին, զարդերին, ա-

¹ ԱՀ, գ. XXVI, էջ 196-212:

² Տե՛ս նույն տեղը, էջ 149:

զանեկիքներին՝ ոտնամանների, գուլպաների տեսակներին: Այնուհետև անդրադառնում է ամուսնության և հարսանեկան սովորություններին ու ծեսերին, եզակի նյութ է հաղորդվում ամուսնական երկսեռ տարիքի, խնամիության աստիճանների, ամուսնությունը ըստ ազգության, տեղի և սոցիալական համակարգի, ամուսնական զանազան դեպքերի, օրորոցախագով ամուսնության, հարսնացուի ընտրության, աղջիկտեսի, նշանադրության, մինչև հարսանիքն ու պսակը՝ երկուստեք խնամիական կապերի, այցելությունների կարգի, տոներին միմյանց խոնջաբոխչա ուղարկելու, հարսանիքի նախապատրաստական աշխատանքների, տաշտադրոնքի, ազգալվածքի, հինադրեքի, փեսային սափրելու, հարս ու փեսայի զգեստներն օրհնելու, դրանց ուղեկցող երգերի, քավորի դերակատարության, բուն հարսանեկան և պսակի ու ապա հետհարսանեկան արարողությունների՝ կրթա՝ նորահարսին նվերներ հանձնելու, օժիտի, հարսին առաջին անգամ դարձ տանելու, փեսապատիվ սովորության և այլնի վերաբերյալ:

Առանձին բաժնով ներկայացված է մանկան ծննդի և կնունքի, անվանակոչման կարգի, քառասունքի սովորության, նորածնի մարմնակրթական դաստիարակության սովորությունները: Առանձին գլուխ են կազմում մահվան, հուղարկավորման և մեռելոցների արարողությունների նկարագրությունները: Յավոք, այս աշխատության մեջ ամբողջապես և համալիր ձևով չեն ներկայացված Գր. Խալաթյանցի ծրագիր-հարցարանի բոլոր պահանջները, ինչպես դա արված է նախորդ աշխատություններում:

Իհարկե, Ե. Լալայանին չհաջողվեց ամբողջությամբ սպառել հայոց պատմագագազրական շրջանների ազգագրական բնութագրումը, ինչպես պատմական հայրենիքի տարածքում, այնպես էլ սփյուռքում: Դա մեկ մարդու կամ նույնիսկ մեկ սերնդի ուժերից վեր գործ է: Այստեղ կարևորն այն է, որ նա սկիզբ դրեց ու լայն ծավալով ներկայացրեց Հայաստանի ազգագրական շրջանների մի զգալի մասը՝ ըստ ազգագրական և տնտեսամշակութային երևույթների համադրման սկզբունքների: «Ազգագրական հանդեսի» 1896-1916 թթ. բանահավաքներից առաջինը Ե. Լալայանն էր, որին հաջողվեց պատմական Հայաստանի մի շարք շրջաններում ուսումնասիրություններ կատարել: Գիտնականի ազգագրական հետազոտությունների արդյունքը հանդիսացան Ջավախք, Վարանդա, Սիսիան, Ջանգեզուր, Գանձակի գավառ, Բորչալուի գավառ, Նախիջևանի գավառ, Ա մասն՝ Գողթն, Վայոց ձոր, Նոր Բայազետի գավառ, Վասպուրական, Մուշ-Տարոն աշխատությունները, որոնց աղբյուրագիտական, հաճախ նաև գիտական արժեքը մեծ է:

Նրա տեսադաշտից չվրիպեցին նաև Հայաստանի ազգային փոքրամասնությունների տեղաբաշխվածությունը և նրանց էթնոմշակութային փոխառնչակցությունը հայերի և միմյանց նկատմամբ:

«Ազգագրական հանդեսի» բոլոր հիմնական բաժինները ազգագրական հետազոտությունների հիմքում ունեցել են որևէ (մեծ կամ փոքր) բնատարածք՝ իր

բնակչությամբ և մշակույթով, չափանիշ ընտրելով երբեմն ժամանակի վարչատարածքային բաժանումը, երբեմն էլ՝ ավանդությանին կենցաղամշակութային համալիրը: Հայաստանի պատմագագադրական շրջաններին նվիրված Ե. Լալայանի համալիր նյութերն ու հրատարակությունները մինչև օրս պահպանել են իրենց արդիականությունն ու թարմությունը, թեպետ քիչ չեն նաև տպագիր պարբերականներում ու ժողովածուներում նրա մյուս գործերը, որոնք ևս արժանի են հանգամանակի քննության: Այսպիսով, իր կյանքի 46 տարիները Ե. Լալայանը անձնվիրաբար ծառայեցրեց հայ ազգագրությանն ու բանահյուսությանը, գերազանցապես նյութերի հավաքման ու հրատարակման գործին: Այն, ինչ արել է Ե. Լալայանը, իսկական գիտական սխրանք է:

Ե. Լալայանից բացի, առանձին շրջանների վերաբերյալ ազգագրական ուսումնասիրություններով «Ազգագրական հանդես»-ում հանդես են եկել նաև այլ բանահավաքներ: Դրանցից առավել աչքի է ընկնում Բենսեի (Սահակ Մովսիսյան) Բուլանըխ կամ Հարք գավառ»¹ ուսումնասիրությունը՝ նվիրված Տուրուբերան նահանգի Հարք գավառի ազգագրությանը: Ուշագրավ է Յ. Մուրադյանցի «Համշենցի հայեր»² ուսումնասիրությունը, որը նվիրված է Սև ծովի անատոլիական ափերից կովկասյան ափերը գաղթած մոտ 15 հազար հայերի ազգագրությանը, որոնք իրենց համշենցի են անվանում իրենց նախկին հայրենիքի՝ Համշենի անունով:

Ե. Շահագիզի «Նոր Նախիջևանը և նոր նախիջևանցիք»³ ուսումնասիրությունը նվիրված է Նոր Նախիջևանի հայկական գաղթօջախի պատմությանը և ազգագրությանը:

Արցախի տնտեսական կենցաղը նկարագրել է Ղ. Տեր-Ղազարյանը⁴, ընտանեկան կենցաղը, հիվանդությունն ու բժշկությունը, հուղարկավորության ծեսերը և այլն ներկայացրել են Հ.Վ. և Ա.Բ. անվանումներով բանահավաքները⁵:

Հայ ժողովրդի արհեստագործության վերաբերյալ նյութեր և ուսումնասիրություններ է հրատարակել Ս. Թառայանցը⁶: Վ. Փափազյանը մեծ աշխատություն է գրել հայ բոշաների կենցաղի վերաբերյալ, որի ազգագրական նյութը ամբողջությամբ անձամբ ինքն է հավաքել⁷: Կովկասյան ժողովուրդների, այդ թվում

¹ Տե՛ս ԱՀ, գիրք Ե, 1899, էջ 5-184, գիրք Զ, 1900, էջ 7-108:

² Տե՛ս ԱՀ, գիրք Դ 1898, էջ 117-143, գիրք Ե, 1899, էջ 361-406, գիրք Զ, 1900, էջ 109-158:

³ Տե՛ս ԱՀ, գ. VII-VIII, 1901, էջ 5-102, գ. IX, 1902, էջ 5-82:

⁴ Տե՛ս ԱՀ, Բ, էջ 77-101:

⁵ Տե՛ս ԱՀ, Բ, էջ 144-186:

⁶ Տե՛ս ԱՀ, Գ, էջ 3-71:

⁷ Տե՛ս ԱՀ, Գ, էջ 74-90, Դ, էջ 203-275: Այս շատ ուշագրավ աշխատությունը բովանդակում է բազմաթիվ թեմաներ՝ ժողովրդի ծագումը, թիվը, մարդաբանական կառուցվածքն ու բնավորությունը, թափառական կենցաղավարությունը, բնակարանը, հագուստներն ու զարդերը, կերակուրներն ու խմիչքները, զբաղմունքը, լեզուն, կրոնական հավատալիքները, ամուսնության սովորույթները, հուղարկավորության ծեսերը, ժողովրդական արվեստը, բանահյուսությունը, իրավաբանական սովորությունները և այլն:

հայերի կաթնամթերքների վերաբերյալ ուսումնասիրություն է կատարել Ա. Քալանթարը¹: Ալաշկերտի բանահյուսությունը մեծապես շահել է Գր. քահ. Նժդեհյանցի շնորհիվ²:

Հին Նախիջևանի, Ջուղայի, Ագուլիսի, Ալեքսանդրապոլի, Կարսի, Բասենի, Շիրակի և Ղազախի ու Շամախու հայերի սովորությունները ջանասիրաբար գրի է առել «Փորձ» ամսագրում, ապա «Ազգագրական հանդես»-ում տպագրել նշանավոր բժիշկ, հայրենասեր Հ. Քաջբերունին³: Հրաչյա և Արմենուհի Աճառյանյանները գրի են առել Կ. Պոլսի ժողովրդական բանահյուսությունը⁴: Եվ այսպես, ուրիշ շատ բանահավաքներ Լալայանի խմբագրած «Ազգագրական հանդես»-ում տպագրում են իրենց գավառների ազգագրական նյութերի ազգագրական նշխարներն ու բանահյուսությունը:

Ներկայումս նման կարգի հետազոտությունը մասնագետ ազգագրագետների կողմից գրեթե լռել է: 2014 թ. տողերիս հեղինակի կողմից այս հրատապ հարցի վերաբերյալ հրատարակված մի հոդվածում գրել ենք. «Ցավոք, ներկայումս ավանդական ազգագրությունը մոռացության է մատնվում ազգագրագետ բանահավաքներիս աչքի առաջ: Պատմական Հայաստանի 9/10 մասի և առանձնապես սփյուռքի ազգագրությունը կորստյան է մատնված: Մենք ցարդ պետական մոտեցում չունենք հատկապես Արևմտյան Հայաստանի ազգագրության ուսումնասիրության նկատմամբ: Այն աննպաստ վիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է, որ կորստյան մատնվող ազգագրական նյութերը փրկվեն, առանձին շրջաններում և մարզերում դեռևս մնացած ազգագրական հետաքրքրություններ կայացնող փաստերը գրի առնվեն: Մի⁵ թե հնարավոր չէ շարունակել Ե. Լալայանի, Ստ. Լիսիցյանի, Վ. Բդոյանի, Դ. Վարդումյանի և այլոց թողած ավանդները՝ ավարտին հասցնելով պատմական Հայաստանի բոլոր պատմաազգագրական շրջանների ուսումնասիրությունը՝ պատրաստելով նաև ազգագրագետ կադրեր: Այս խնդիրը պետք է բարձրացնել պետական մակարդակի: Հայաստանի Հանրապետության պատմաազգագրական շրջանների ուսումնասիրության առումով մենք դեռևս չունենք համապարփակ հետազոտություններ, էլ ուր մնաց Արևմտյան Հայաստանը և ժամանակակից սփյուռքը»⁵: Նույն հոդվածում մենք կարևորել

¹ Տե՛ս Ա. Քալանթար, Կաթնային արդյունքները / ԱՀ, Դ, էջ 276-292:

² Տե՛ս Գր. քահ. Նժդեհյանց, Ալաշկերտի բանավոր գրականություն. - ԱՀ, Ե, էջ 185-199, VII-VIII, էջ 437-505, IX, էջ 263-271, XI, էջ 197-240, XII, էջ 95-103, XIII, էջ 83-86, XVII, էջ 49-52, XVIII, էջ 33-36, XIX, էջ 95-98, XX, էջ 108-111:

³ Տե՛ս Քաջբերունի, Հայկական սովորություններ. - «Փորձ», 1879, № 10, էջ 39-47, 1881, № 5-6, էջ 57-62, ԱՀ, VII-VIII, էջ 113-204, IX, էջ 83-116:

⁴ Տե՛ս Հրաչյա և Արմենուհի Աճառյաններ, Հավաքածո պոլսահայ ռամկական անգիր գրականության, ԱՀ, IX, էջ 160-196:

⁵ Տե՛ս Ռ. Նահապետյան, Հայաստանում ազգագրական նյութերի գրառման սկզբնավորման պատմությունից. - ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Հայ ժողովրդական մշակույթ, XVI, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Դերենիկ Վարդումյանի

ենք նաև ավելի ընդլայնված և համապարփակ նոր հարցարան ունենալու անհրաժեշտությունը:

Բանալի բառեր - «Ազգագրական հանդես», պատմաազգագրական շրջան, բանահավաք, ազգագրական նյութեր, խմբարշավ, ծրագիր-հարցարան, տեղագրություն, ընտանեկան բարքեր

Ռաֆիկ Նահապետյան, Ե. Լալայանը հայ ազգագրության ուսումնասիրության պատմաազգագրական շրջանցման մեթոդի սկզբնավորող - Ե.Լալայանի ազգագրական և բանահավաքական գործունեությունը բազմահարուստ ու բազմաբովանդակ է: Հիմնադրելով ու խմբագրելով «Ազգագրական հանդեսը»՝ նա ստանձնեց մեր ազգային դարավոր մշակութային արժեքների գրառման, կորստից փրկելու և դրանք հետագա սերունդներին հանձնելու առաքելությունը: Անձնական դիտումների հիման վրա Լալայանը ուսումնասիրեց և հրատարակեց նյութեր ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստանի պատմաազգագրական շրջանների մի զգալի մասի վերաբերյալ՝ բարեբախտաբար ունենալով նաև իր հետևորդները: Գիտնականը մեզանում կիրառության մեջ դրեց ազգագրության ուսումնասիրությունը ըստ պատմաազգագրական շրջանների իրականացնելու մեթոդը: Նա առաջնորդվել է Գր. Խալաթյանցի կազմած ծրագիր-հարցարանով:

Յուրաքանչյուր ազգագրական շրջանի հետազոտություն Ե. Լալայանը սկսում է պատմական համառոտ տեսությամբ, ապա ներկայացնում է տվյալ տարածքի տեղագրությունը, բնագրությունը, նշանավոր քաղաքներն ու գյուղերը, պատմական ու ճարտարապետական հուշարձանները, բնակչության կազմն ու տեղաշարժերը: Տնտեսական զբաղմունքներին զուգընթաց՝ ներկայացնում է նաև հոգևոր-մշակութային կյանքի պատկերը: Առավել հանգամանորեն է լուսաբանում ընտանեկան բարքերն ու ծեսերը, տոներն ու հավատալիքները: Ե.Լալայանի գիտական ժառանգությունը, մասնավորապես Հայաստանի պատմաազգագրական շրջաններին նվիրված նրա նյութերն ու հետազոտությունները մինչև օրս պահպանել են իրենց այժմեականությունն ու գիտական թարմությունը:

Рафик Наапетян, Е. Лалаян как основатель метода историко-этнографического районирования в армянской этнографии - Этнографическая и собирательская деятельность Е. Лалаяна богата и содержательна. Посредством основания и редактирования “Этнографического журнала” он взялся за осуществление миссии по сбору и записи наших многовековых национальных и культурных ценностей, их спасению от уничтожения и передаче последующим поколениям. На основании личных наблюдений Лалаян, у которого были последователи, изучил и опубликовал материалы о значительной части историко-

ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2014, էջ 31-40:

этнографических областей Восточной и Западной Армении. Ученым был введен метод осуществления этнографических исследований по историко-этнографическим районам. Он руководствовался программой-вопросником Г. Халатянца.

Исследование каждого этнографического района Е. Лалаян начинает с краткого исторического обзора, затем представляет топографические данные и природу данной территории, известные города и села, исторические и архитектурные памятники, состав и движение населения. Наряду с хозяйственными занятиями он представляет также картину духовно-культурной жизни населения. Ученым наиболее обстоятельно освещаются семейные нравы и обряды, празднества и верования. Научное наследие Е. Лалаяна, в частности материалы и исследования, посвященные историко-этнографическим районам Армении, сохраняют свою актуальность и научную свежесть по сей день.

Rafik Nahapetyan, E. Lalayan as founder of method of historical and ethnographical region in Armenian ethnography - E. Lalayan's ethnographic and collecting activities are rich and informative. Through the creation and edition of the "Ethnographic Journal", he undertook to carry out a mission on collecting and recording our centuries-old national and cultural values, protecting them from destruction and transferring them to upcoming generations. Based on the personal observations, Lalayan, having the followers, has studied and published materials on a significant part of the historical and ethnographic regions of the Eastern and Western Armenia. The scientist has introduced a method for carrying out ethnographic researches on historical and ethnographic regions. He has been guided by the program-questionnaire of G. Khalatyants.

E. Lalayan has started the study of each ethnographic region with a brief historical overview, then he has presented the topographical data and the nature of the given territory, famous cities and villages, historical and architectural monuments, the composition and movement of the population. Along with the economic studies, he has also presented a picture of the spiritual and cultural life of the population. The scientist most thoroughly has covered the family customs and rituals, festivals and beliefs. The scientific heritage of E. Lalayan, in particular, materials and studies devoted to the historical and ethnographic regions of Armenia, are topical and preserve their scientific freshness up to this day.

**ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1995-2001 ԹԹ.**

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ, ՆԺԴԵՀ ՀՈՎՍԵՓՅԱՆ

1995-98թթ. ՀՀ միջկուսակցական հարաբերություններն առանձնացան իրենց վայրիվերումներով՝ առաջին հերթին կապված ընտրական գործընթացների առատության հետ: Սակայն եթե 1995-96թթ. ընտրական շրջափուլը պիտի հանդիսանար միջկուսակցական հարաբերությունների հստակեցման տրամաբանական հանգրվան, ապա 1998թ. ընտրությունները, ըստ էության, անակնկալի բերեցին հայաստանյան քաղաքական կազմակերպություններին: Իսկ ահ անկախության առաջին տասնամյակի միջկուսակցական հարաբերությունների վերաշարադրման «պատիվը» վերապահվեց 1999թ. խորհրդարանական ընտրություններին, որը վերջնականապես փոխեց ինչպես 1991-98թթ. քաղաքական կազմակերպությունների միջև հաստատված հարաբերակցությունը, այնպես էլ քաղաքական բանավեճի տրամաբանությունը:

1995-96թթ. ընտրական գործընթացները փոխանակ ավելի կարևորեին կուսակցությունների դերակատարությունը քաղաքական հարաբերությունների կառուցման հարցում, հակառակ ազդեցությունն ունեցան: Դա պայմանավորված էր ինչպես ընտրությունների կազմակերպման գործում նկատված թերությունների, հընթացս արձանագրված լարված մթնոլորտի, բռնությունների ու քվեարկության օրը արձանագրված ընտրախախտումների դեպքերի հետ, այնպես էլ կուսակցական կյանքում նկատվող գաղափարաբանական ետընթացի հետ: Եվ եթե 1995-96թթ. քաղաքական պայքարի կենտրոնում էին գտնվում կուսակցությունները, որոնց ստեղծած դաշինքներն էին ձևավորում քաղաքական օրակարգը, ապա 1998թ. քաղաքական պայքարը մղվում էր միջանձնային մակարդակում՝ կուսակցությունների դերը աստիճանաբար երկրորդական դարձնելով:

1994թ. ամռանը ՀՀ ԳԽ-ում ՀՀ Սահմանադրության ընդունման շուրջ ընթացող քաղաքական զարգացումները հանգեցին նրան, որ ընդդիմադիր կուսակցությունների ճակատը տրոհվեց, մինչդեռ իշխանական դաշտը ավելի համախմբվեց: Արդեն 1995թ. հունվարի 25-ին Հայոց համազգային շարժման (ՀՀԾ), Հայաստանի հանրապետական կուսակցության (ՀՀԿ), Հայաստանի քրիստոնեադեմոկրատական միության (ՀՔԴՄ), Ռամկավար-ազատական լիբերալ դեմոկրատական կուսակցության (ՌԱԼԴԿ), Սոցիալ-դեմոկրատ հինչակյան կուսակցության (ՄԴՀԿ), Մտավորական Հայաստան միության (ՄՀՄ) միավորմամբ ստեղծվեց «Հանրապետություն» դաշինքը, որը հանդես էր գալիս ՀՀ նախագահ Լևոն

Տեր-Պետրոսյանի քաղաքական գծի սատարմամբ:¹ Փորձելով հակակշիռ ձևավորել «Հանրապետություն» դաշինքին՝ ընդդիմադիր կուսակցությունները 1995թ. ամռանը միավորման փորձ ձեռնարկեցին: «Համագործակցություն հանուն արդարության» կարգախոսի ներքո ստեղծված միավորման կազմում էին Ազգային ժողովրդավարական միությունը (ԱԺՄ), Հայ յեղափոխական դաշակցությունը (ՀՅԴ), Հայաստանի կոմունիստական կուսակցությունը (ՀԿԿ), Ազգային ինքնորոշում միավորումը (ԱԻՄ), Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը (ՀԴԿ), Մահմանադրական իրավունք միությունը (ՄԻՄ) և այլն: Այդուհանդերձ, ընդդիմության միասնական դիրքորոշումը հայտարարությունների մակարդակից չբարձրացավ, և նրանք ընտրություններին մասնակցեցին առանձին-առանձին:²

1995թ. հուլիսի 5-ին կայացավ ՀՀ Ազգային ժողովի առաջին ընտրություններում պատգամավորական 150 տեղերը բաժանվում էին մեծամասնական թեկնածուների, իսկ 40-ը՝ համամասնական ցուցակներով ընտրվածների միջև: Ընտրություններին մասնակցելու իրավունք ստացան միայն 13 ուժեր: ՀՀ ԿՀՀ-ի հրապարակած տվյալների համաձայն՝ ԱԺ-ի անցողիկ շեմը հաղթահարել էին 5 քաղաքական ուժեր՝ «Ազգային ինքնորոշում միավորում»՝ 42.987 (5.57%), «Ազգային ժողովրդավարական միություն»՝ 57.996 ձայն (7.51%), «Հայաստանի կոմունիստական կուսակցություն»՝ 93.353 (12.10%), «Շամիրամ»՝ 130.252 (16.88), «Հանրապետություն» դաշինք՝ 329.300 (42.66%):³ ՀՅԴ-ն, կասեցված լինելու պատճառով, հնարավորություն չունեցավ մասնակցելու առաջին խորհրդարանական ընտրություններին: Նկատելի է, որ ընդդիմությունը կասկածի տակ առավ խորհրդարանական ընտրությունների արդյունքները: Դեռևս նախընտրական շրջանում բարձրաձայնելով ընտրությունների կեղծման հնարավորությունների մասին՝ ընդդիմադիր կուսակցությունները հետընտրական փուլում վերահաստատեցին իրենց գնահատականը և չընդունեցին ԱԺ-ի լեգիտիմությունը:⁴ Ինչևէ, ընտրությունների արդյունքում 1995թ. խորհրդարանում իրենց ներկայացուցիչներն ունեցան ՀՀ 18 քաղաքական կազմակերպություններ:⁵ Այդպիսի բազմազանությամբ խորհրդարանը կարող էր դրական նշանակություն ունենալ ժողովրդավարական, քաղաքական և սոցիալ-տնտեսական վերափոխումների գործընթացում:

Անկախ Հայաստանում միջկուսակցական պայքարի նոր հանգրվան դարձան 1996թ. նախագահական ընտրությունները, որոնց մասնակցեցին ՀՀ գրեթե բոլոր հասարակական-քաղաքական կազմակերպությունները: Օրենքով սահմանված ժամկետում ՀՀ նախագահի թեկնածու գրանցվեցին 7 քաղաքական գոր-

¹ Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 1688, ց. 1, գ. 100. թթ. 15, 19, 20:

² «Առավոտ», 18 հունիսի 1995:

³ Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 1183, ց. 1, գ. 31:

⁴ Մանուկյան Վ., Հայկական երազանքը գոյատևման փակուղում (Ելույթների և հոդվածների ժողովածու), «Վ.Ի.Վ. Այսօր և վաղը», Երևան, 2002, էջ 153:

⁵ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, Ե., 1996, էջ 2:

ծիչներ՝ ՀՀ նախագահ, ՀՀՇ առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանը, ԱԺՄ նախագահ Վազգեն Մանուկյանը, ԱԻՄ առաջնորդ Պարույր Հայրիկյանը, Գիտնականների և արդյունաբերողների քաղաքացիական միության (ԳիԱրՔՄԻ) համակարգող Աշոտ Մանուչարյանը, Հայաստանի դեմոկրատական կուսակցության (ՀԴԿ) ղեկավար Արամ Սարգսյանը, ՀԿԿ առաջին քարտուղար Սերգեյ Բադալյանը և «Արցախ-Հայաստան» հասարակական-քաղաքական կազմակերպության ներկայացուցիչ Լենսեր Ադալովյանը:¹

Վերընտրության ճանապարհին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին սատարում էին 14 կուսակցություններ և 69 հասարակական կազմակերպություններ, որոնց թվում՝ ՀՀՇ, ՀՀԿ, ՀՔԴՄ, ՌԱԼԴԿ, ՄՀՄ, ՄԴՀԿ, ՀՌԱԿ, «Շամիրամ», «Հայ աշխատավորական կուսակցություն», «Հայ միապետականների կուսակցություն», «Հայաստանի ագրարային ժողովրդական կուսակցություն», «Հայաստանի թագավորական կուսակցություն» և այլն:² Մասնատված ընդդիմություն քայլեր ձեռնարկեց միավորման ուղղությամբ: Այս անգամ դրանք հաջողությամբ պսակվեցին, երբ 1996 թ. սեպտեմբերի 9-ին ՀՅԴ, ԱԺՄ, ՀԴԿ, ԱԻՄ, «Արցախ-Հայաստան» ընդդիմադիր կուսակցությունները Վազգեն Մանուկյանին հռչակեցին իբրև իրենց միասնական թեկնածու:³ Հետաքրքիր է, որ ընդդիմադիր կուսակցությունների որոշումը դրական արձագանքի չհանդիպեց ՀԿԿ-ի մոտ, որը նախընտրեց ընտրություններին գնալ միայնակ:⁴ Նկատենք, սակայն, որ ընտրություններում հիմնական պայքարն ընթացավ «Հանրապետություն» դաշինքի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի ու «Ազգային համաձայնության» դաշինքի թեկնածու Վազգեն Մանուկյանի միջև:

1996թ. սեպտեմբերի 22-ին կայացած ՀՀ նախագահական երկրորդ ընտրություններին մասնակցեց 1 մլն 333 հազար 204 ընտրող: ԿԸՀ-ի հրապարակած պաշտոնական արդյունքներով՝ Լևոն Տեր-Պետրոսյանը ստացել էր 646.888 ձայն (51.75%), Վազգեն Մանուկյանը՝ 516.129 (41.29%), Սերգեյ Բադալյանն ու Աշոտ Մանուչարյանը՝ համապատասխանաբար 79.347 (6.34%) և 7.529 (0.6%):⁵ Ընտրությունների հաջորդ օրը հրավիրված հանրահավաքում Վ. Մանուկյանին սատարող կուսակցությունները կտրականապես հրաժարվեցին ընդունել ընտրությունների արդյունքների իսկությունը՝ դրանք կեղծված հայտարարելով: Ընդդիմության հանրահավաքային շարժումը, սակայն, սեպտեմբերի 25-ին վերաճեց գրոհի ՀՀ ԱԺ շենքի վրա՝ բախումներ հարուցելով իրավապահների ու բողոքավորների միջև: Ձերբակալվեցին բազմաթիվ ընդդիմադիրներ, շատերն անցան ընդհատակ: Հետընտրական ցնցումների առնչությամբ իրենց գնահատականը

¹ Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 1183, ց. 3, գ. 82-88;

² «Հայաստանի Հանրապետություն», 14 սեպտեմբերի 1996:

³ «Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան – 1997», Ե., 1997, էջ 28:

⁴ «Հայաստանի Հանրապետություն», 10 սեպտեմբերի 1996:

⁵ «Հայաստանի Հանրապետություն», 1 հոկտեմբերի 1996:

ներկայացնելիս ընդդիմադիր ու իշխանական կուսակցությունները միմյանց էին մեղադրում բախումների պատասխանատուն լինելու համար:¹ Այսպիսով, պետականաշինության գործընթացում միջկուսակցական հարաբերությունների ճշգրտման հերթական կանգառը դարձած 1996թ. նախագահական ընտրությունները առանձնացան ոչ թե փոխզիջումի ու համաձայնության, այլ ծայրահեղության դրսևորումներով: Ընտրությունները ավելի հեռացրին միմյանց հետ տարաձայնություններ ունեցող կուսակցություններին՝ նրանց հարաբերությունները տեղափոխելով առճակատման հարթություն: Նախագահական այս ընտրություններով ամփոփվեց 1995-1996թթ. ընտրական շրջանը՝ ցուցադրելով միջկուսակցական փոխհարաբերությունների բացասական ընթացքը: 1995թ. խորհրդարանական ընտրություններից հետո աներևույթ լարվածությունը պայթեց առաջին իսկ առիթի դեպքում՝ թուլացնելով թե՛ իշխանական, թե՛ ընդդիմադիր կուսակցություններին:

Պետության ներսում քաղաքական հարաբերությունները սկսեցին ճշգրտվել ոչ թե միջկուսակցական, այլ միջանձնային ձևաչափերում: Բացասական այդ միտումները էլ ավելի խոշորացան 1996թ. ընտրություններին հաջորդած բախումներից հետո ստեղծված խաբուսիկ կայունության շրջանում՝ գործնականում դրսևորվելով 1998թ.:² Այդժամ էլ ծագեցին ներիշխանական սուր հակասություններ՝ հանգեցնելով 1998թ. փետրվարի 3-ին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հրաժարականին: Հանրապետությունը կանգնեց նոր՝ արտահերթ նախագահական ընտրությունների փաստի առաջ: 1998թ. մարտի 16-ին նշանակվեցին ՀՀ նախագահական արտահերթ ընտրությունները, իսկ թեկնածուներ առաջադրվեցին 12 գործիչներ: Նրանցից անկուսակցական էին միայն 4-ը՝ Ռոբերտ Քոչարյանը, Կարեն Դեմիրճյանը, Դավիթ Շահնազարյանը և Յուրի Մկրտչյանը: Սերգեյ Բադալյանը ներկայացնում էր ՀԿԿ-ն, Աշոտ Բլեյանը՝ «Նոր ուղի» կուսակցությունը, Արտաշես Գեղամյանը՝ «Ազգային միաբանությունը», Հրանտ Խաչատրյանը՝ ՍԻՄ-ը, Վիգեն Խաչատրյանը՝ ՌԱԼԴԿ-ն, Պարույր Հայրիկյանը՝ ԱԻՄ-ը, Վազգեն Մանուկյանը՝ ԱԺՄ-ն, Արամ Սարգսյանը՝ ՀԴԿ-ն:³

Նախագահական ընտրություններում Ռոբերտ Քոչարյանին սատարելու նպատակով կազմավորվեց «Արդարություն և միասնություն» միավորումը, որի մեջ մտան ՀՀԿ, ՀՅԴ, ՀՌԱԿ, ԳիԱրՔՄԻ կազմակերպությունները, ՀՀ ԱԺ «Երկրպագի» խմբակցությունը, Հայաստանի սոցիալիստական ուժերի միությունը և այլն:⁴ 1998թ. փետրվարի 17-ին Հայաստանի սոցիալիստական կուսակցության կողմից Կարեն Դեմիրճյանը ներկայացվեց որպես ՀՀ նախագահի թեկնածու, սա-

¹ «Հայաստանի Հանրապետություն», 26 սեպտեմբերի 1996: «Այժմ», 11-17 հոկտեմբերի 1996, թ. 37:

² Թորոսյան Տ., Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա: Ե., «Գիտություն», 2006, էջ 124:

³ Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 1183, ց. 3, գ. 143:

⁴ «Հայաստանի Հանրապետություն», 7 փետրվարի 1998:

կայն նրան չսատարեց ազդեցիկ կուսակցություններից որևէ մեկը:¹ ՀՀ ԿԸՀ ներկայացրած պաշտոնական տվյալների համաձայն՝ ՀՀ նախագահական արտահերթ ընտրություններին մասնակցեց 1 մլն 455 հազար 605 ընտրող. Ռ.Քոչարյան՝ 38,76%, Կ.Դեմիրճյան՝ 30,67%, Վ.Մանուկյան՝ 12,24%, Ս.Բադալյան՝ 11,01%, Պ. Հայրիկյան՝ 5,4%, Դ.Շահնազարյան՝ 0,48%, Ա.Գեղամյան՝ 0,45%, Վ.Խաչատրյան՝ 0,28%, Հ.Խաչատրյան՝ 0,21%, Ա.Սարգսյան՝ 0,19%, Յ.Մկրտչյան՝ 0,18%, Ա.Բլեյան՝ 0,11%:²

Քանի որ թեկնածուներից և ոչ ոք չէր հավաքել ձայների մեծամասնությունը, 1998թ. մարտի 30-ին նշանակվեց ընտրության երկրորդ փուլը:³ Դրան մասնակցելու հնարավորություն ստացան Ռ. Քոչարյանն ու Կ. Դեմիրճյանը: Առաջին փուլում 3-րդ և 4-րդ տեղերը գրաված ազդեցիկ գործիչները՝ ԱԺՄ առաջնորդ Վազգեն Մանուկյանն ու ՀԿԿ առաջնորդ Սերգեյ Բադալյանը, նրանց կուսակցությունները, Կ. Դեմիրճյանի հետ համաձայնության չգալով, չեզոքություն պահպանեցին:⁴ Մարտի 30-ին կայացած քվեարկության պաշտոնական արդյունքներով հաղթանակ տարավ Ռոբերտ Քոչարյանը՝ ստանալով 908.613 ձայն (59.49%), իսկ Կարեն Դեմիրճյանի օգտին քվեարկել էր 618.764 ընտրող (40.51%):⁵ Այսպիսով, մարտի 30-ի քվեարկությամբ եզրափակվեց 1997-1998թ. իշխանության ճգնաժամը՝ ամբողջանալով նոր նախագահի ընտրությամբ:

1998թ. իշխանափոխությունից հետո յուրահատուկ դրության մեջ էր հայտնվել խորհրդարանական մեծամասնությունը, որը ոչ մի կուսակցություն, որպես այդպիսին, չէր ներկայացնում: Այս պայմաններում բնական էր թվում քաղաքական իշխանությանը հավակնելու համար կազմակերպված մարմնի անհրաժեշտությունը:⁶ Նման իրավիճակում երկրապահներն ունեին երկու տարբերակ՝ կա՛մ ստեղծել ինքնուրույն քաղաքական ուժ, կա՛մ միավորվել մեկ այլ կուսակցության հետ: Այդպիսի կուսակցություն դարձավ Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ)՝ Երկրապահ կամավորական միության (ԵԿՄ) հետ ունեցած գաղափարական, ծրագրային ու համագործակցության ներդաշնակությամբ: Մի քանի ամիս տևած խորհրդակցությունների շարքն ամբողջացավ 1998թ. հուլիսի 2-ին ՀՀԿ, ԵԿՄ և ԱԺ-ում «Երկրապահ» խմբի պայամանավորվածությամբ: Մեկնարկում էր քաղաքական համախմբման մի գործընթաց՝ ՀՀԿ ծրագրի նորացմամբ:⁷ Արդեն 1999թ. հունվարի 29-ին կայացավ կուսակցության 5-

¹ Լիպարիտյան Ժ., Պետականության մարտահրավերները. Հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր: Թարգմ. Հ. Հարությունյան, «Արմատ» ԺՔՀԶԿ, Երևան, Նաիրի, 1999, էջ 23:

² Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, N10 (43), 15.05.1998, էջ 22:

³ «Հայաստանի Հանրապետություն», 7 փետրվարի 1998:

⁴ Դեմիրճյան Ռ., Հիշատակ, Եր. 2012, էջ 528:

⁵ Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, N10 (43), 15.05.1998, էջ 22

⁶ ՀԱԱ, ֆ. 1688, ց. 1, գ. 85, թ. 26:

⁷ Մարգարյան Ա., Անկախությունն այլընտրանք չունի, Ե., 2005, էջ 70:

5-րդ համագումարը, որը իր դիրքը ձևակերպեց հայաստանյան քաղաքական ներկայակում:

Կարեն Դեմիրճյանի նախաձեռնությամբ նույն թվականին ստեղծվեց Հայաստանի ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ):¹ Այն, սակայն, իր առաջին համագումարն անցկացրեց 1999թ. փետրվարի 27-ին: Կուսակցությունը հանդես էր գալիս ազատական (լիբերալ) գաղափարախոսության քննադատությամբ՝ հիմնական խնդիր հռչակելով ժողովրդի իշխանությունը նրան վերադարձնելը:² Փաստացիորեն նորահայտ վերոնշյալ կուսակցությունների առաջնորդները նախընտրեցին միավորվել և լուծել երկրի առջև ծառացած խնդիրները:³ 1999թ. մարտի 30-ին տեղի ունեցավ ՀՀԿ-ի ու ՀԺԿ-ի միավորմամբ «Միասնություն» դաշինքի ձևավորումը:⁴ Բացի «Միասնություն» դաշինքից, 1999թ. խորհրդարանական ընտրություններին մասնակցելու հայտեր ներկայացրին ինչպես հասարակական-քաղաքական կյանքում ակտիվ ու հնաբնակ, այնպես էլ նորահայտ կուսակցությունները: Այդ կուսակցությունների շարքում էին ՀՀՇ, ԱԺՄ, ՀԿԿ, ԱԻՄ, ՀՌԱԿ, ՕԵԿ, ՀՅԴ և այլն: Ի դեպ, վերջինս 1999թ. մարտին վճռեց ինքնուրույնաբար մասնակցել ԱԺ ընտրություններին՝ նպատակ ունենալով հստակեցնել իր տեղն ու դերը քաղաքական կյանքում: Կուսակցությունն ազատ և արդար ընտրությունների միջոցով խորհրդարանի ձևավորումը համարում էր կարևորագույն քայլ՝ շեշտելով, որ ընտրություններով պիտի լուծվեր իշխանության լեգիտիմության հարցը:⁵

1990թ. մայիսի 30-ի խորհրդարանական ընտրություններին մասնակցեցին 18 հասարակական-քաղաքական կազմակերպություններ, կուսակցություններ և դաշինքներ: 1999թ. հունիսի 4-ին ԿՀՀ-ն հրապարակեց ընտրությունների վերջնական արդյունքները: ԱԺ-ում մանդատներ էին ստացել 6 քաղաքական միավորներ: Ամենազանգվածայինը «Միասնություն» դաշինքն էր (29 մանդատ), որին հաջորդում էր ՀԿԿ-ն՝ 8, «Իրավունք և միաբանություն»՝ 6, ՀՅԴ՝ 5, ՕԵԿ՝ 4, ԱԺՄ՝ 4:⁶ Մեծամասնական ընտրակարգով ԱԺ պատգամավոր դարձածների ճնշող մեծամասնությունն անկուսակցականներն էին (27), որոնց հիմնական մասը հարում էր <Միասնություն> դաշինքին: Այս ընտրակարգով պատգամավորներ դարձան ՀՀԿ-ի 24 ներկայացուցիչներ, ՀԺԿ՝ 5, ՀՅԴ՝ 3, ԱԺՄ՝ 2, ՕԵԿ՝ 2, ԱՄ՝ 1, «Առաքելություն»՝ 1, ՀՀՇ՝ 1:⁷ «Միասնություն» դաշինքը ստանձնեց իշխանության պատասխանատվությունը, և վերջինիս առաջնորդներ Կարեն Դեմիրճյանն ու

¹ Դեմիրճյան Ռ., Հիշատակ, Ե. 2012, էջ. 530-531:

² «Հայաստանի Հանրապետություն», 2 մարտի 1999:

³ Վազգեն Սարգսյանի նամակը Կարեն Դեմիրճյանին, 24 մարտի 1999:

⁴ ՀԱԱ, ֆ. 1688, ց. 1, գ. 85, թ. 28:

⁵ «Հայաստանի Հանրապետություն», 5 մարտի 1999:

⁶ «Հայաստանի Հանրապետություն», 5 հունիսի 1999:

⁷ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, Ե, 2001, էջ 15:

Վազգեն Սարգսյանը համապատասխանաբար դարձան ՀՀ ԱԺ նախագահ ու ՀՀ վարչապետ: Թվում էր՝ 1999թ. խորհրդարանական ընտրություններից հետո Հայաստանի կուսակցությունների գործունեությունը մտել էր զարգացման մի նոր շրջափուլ՝ առավել ևս, որ հաջորդ ընտրությունները նախատեսվում էին միայն 2003թ. : Սակայն Հայաստանի պետական-քաղաքական համակարգը դաժան հարված ստացավ 1999թ. հոկտեմբերի 27-ին, երբ ԱԺ դահլիճ ներխուժեցին 5 ահաբեկիչներ և սպանեցին վարչապետ Վ. Սարգսյանին, ԱԺ նախագահ Կ. Դեմիրճյանին, բարձրաստիճան այլ պաշտոնյաների: Հանրապետության կյանքը մտավ ծանր լարվածության շրջափուլ՝ դրսևորվելով ՀՀ նախագահի ու ԵԿՄ-ի միջև տարաձայնություններով ու անհաշտ հարաբերություններով, որոնք ազդում էին նաև գործադիր-օրենսդիր իշխանությունների հարաբերությունների վրա: «Միասնություն» - ՀՀ նախագահ տարաձայնությունները թերևս պայմանավորված էին Հոկտեմբերի 27-ի աննախադեպ ոճրագործությամբ ու դրա արդյունքում պետական համակարգ ներթափանցած կասկածամտության մթնոլորտով: Շուրջ կես տարի իշխանության ներսում ընթանում էր ուժերի վերաբաշխման գործընթաց, որտեղ միջկուսակցական հարաբերությունները լիովին մոլված էին երկրորդ պլան՝ քաղաքական հարաբերություններում առաջնայնությունը զիջած ԵԿՄ - ՀՀ նախագահ դիմակայությանը: Այն հանգուցալուծվեց 2000թ. մայիսի 2-ին ՀՀ վարչապետ Արամ Սարգսյանի ու պաշտպանության նախարար Վաղարշակ Հարությունյանի պաշտոնազրկմամբ: Արդեն մայիսի 12-ին ՀՀ վարչապետի պաշտոնում նշանակեց ՀՀԿ նախագահ, ԱԺ-ում ՀՀԿ խմբակցության ղեկավար Անդրանիկ Մարգարյանը՝ ֆորմալ առումով պահպանելով «Միասնություն» դաշինքի դիրքերը:¹ Պաշտոնանկությունները հանգեցրին մի բաժանարար նոր գծի առաջացմանը՝ հենց ՀՀԿ-ում՝ հանգելով մի շարք կուսակցականների հեռացմանն ու նոր «Հանրապետություն» կուսակցության ստեղծմանը: 2000-2001թթ. ներքին կուսակցական տեղաշարժերը տրոհեցին նաև ՀԺԿ-ն, որը հակվեց «Հանրապետության» հետ համագործակցությանը՝ 2001թ. աշնանը նախագահի հրաժարականի պահանջով հանրահավաքային ակտիվ պայքարի մեջ ներգրավվելով: Իսկ ՀԺԿ-ից դուրս եկած գործիչները նախընտրեցին խորհրդարանում գործակցել ՀՀԿ-ի հետ և պաշտպանել Ա. Մարգարյանի կառավարությանը:²

Հայաստանյան քաղաքական կազմակերպությունների՝ դեռ 1998-99թթ. նկատվող թուլացումը չշրջանցեց որևէ կուսակցության: ՀԿԿ-ն ու ԱԺՄ-ն, որ 1990-ականներին հիմնական ընդդիմադիր կուսակցություններն էին, ենթարկվեցին ծանր պառակտումների՝ կորցնելով քաղաքական գործընթացների վրա ազդեցությունը: ՀՀՇ-ն, չկարողանալով հայնվել խորհրդարանում, դուրս մնաց քա-

¹ ՀՀ նախագահի հրամանագիրը «Ա. Մարգարյանին Հայաստանի Հանրապետության վարչապետ նշանակելու մասին», Երևան, 12.05.2000, ՆՀ-572:

² «Առավոտ» 19 հուլիսի 2001:

դաքական ակտիվ զարգացումներից: Լուրջ պառակտումներից խուսափած թերևս միակ կազմակերպությունը ՀՅԴ-ն էր, որը շարունակեց 1998թ. իրացվող քաղաքականությունը՝ նախընտրելով համագործակցությունն անձամբ նախագահի հետ:¹

Այսպիսով, 2000-2001թթ. գլխավար փոխեցին կուսակցական հարաբերությունների դաշտը, երբ նախկինում գերակայող ՀՀԸ-ն անգամ խորհրդանում չհայտնվեց, իսկ նրա գաղափարական հակառակորդ ՀՅԴ-ն, թեպետ հայտնվեց խորհրդարանում, սակայն գործադիրի վրա ազդելու իրական լծակներ չստացավ: Փոխարենը իշխանությունը ստացավ «Միասնություն» դաշինքը, որը ՀՀԿ-ի և ՀԺԿ-ի միավորումը լինելուց զատ, ավելի ևս քաղաքական դաշտում ամենաազդեցիկ երկու անհատների դաշինք էր: Եվ պատահական չէ, որ Հոկտեմբերի 27-ից հետո դաշինքի ներսում սկսվեցին քառսային տեղաշարժեր՝ հանգելով միավորման փաստացի քայքայմանը: Եթե տարբեր գաղափարաբանություններ ունեցող կուսակցությունների դաշինքի տրոհումը քաղաքական զարգացումների օրինաչափության շրջանակներում էր, ապա ՀՀԸ-ի, ԱԺՄ-ի, ՀԿԿ-ի և մյուս կուսակցությունների տրոհումները արդեն իսկ խոսում էին կուսակցական համակարգի հիվանդության մասին: Թեպետ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքը տեսակա՛նորեն ավելի հստակությամբ էր սահմանում կուսակցական դաշտը, սակայն գործնական քաղաքականության մեջ կուսակցականությունը զիջել էր իր դիրքերը անհատականությանը: Եվ եթե 1995-96թթ. ընտրական գործընթացում կուսակցական հարաբերություններում դրսևորվեցին ճգնաժամի առաջին նախանշանները, ապա 1998-99թ. ընտրաշրջանը ամբողջացրեց գործընթացը՝ քաղաքական հարաբերությունների կառուցման գործում նախաձեռնությունը կուսակցություններից անհատներին փոխանցելու առումով:

Բանալի բառեր - միջկուսակցական հարաբերություններ, բազմակուսակցական համակարգ, գաղափարախոսություն, Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, ՀՀԸ, ՀՅԴ

Նժդեհ Հովսեփյան, Միջկուսակցական հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում 1995-2001 թթ. - 1995-2001թթ. ՀՀ միջկուսակցական հարաբերությունները առանձնացան իրենց վայրիվերումներով՝ առաջին հերթին կապված ընտրական գործընթացների առատության հետ: Ընտրական գործընթացները փոխանակ ավելի կարևորեին կուսակցությունների դերակատարությունը քաղաքական հարաբերությունների կառուցման հարցում, էականորեն հակառակ ազդեցություն ունեցան: Քաղաքական պայքարը միջկուսակցական մակարդակից փոխակերպվեց միջանձնային՝ կուսակցությունների դերը աստիճանաբար երկրորդական դարձնելով: Իշխանության ձևավորման գործընթացը

¹ Մինասյան Է., Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն: Եր., ԵՊՀ հրատարակչություն, 2013, էջ 285:

սկսեց ավելի ևս կենտրոնանալ անհատների շուրջը՝ զգալիորեն թուլացնելով կուսակցությունների դերը քաղաքական կյանքի կազմակերպման գործում:

Нждэ Овсебян, Межпартийные отошения в Республики Армения в 1995-2001 гг. - Межпартийные политические отношения в 1995-2001 гг. отлучились перескоками в зависимости от многообразия избирательных процессов. Избирательные процессы в место того что бы уменьшить роль политических партий в построении политических отношений в стране, имели противоположное влияние. Политическая борьба в стране трансформировалась в уровень межличностных отношений, постепенно переводя межпартийные отношения во второстепенные. Процесс формирования властей стал намного зависеть от лидеров и личностей, существенно сокращая влияние политических партий в государственно-политической жизни.

Nzhdeh Hovsepyan, Interparty relations in the Republic of Armenia in 1995-2001 - Inter-party affairs in 1995-2001 were demonstrated by their precarious character firstly connected with the multiplicity of electoral processes. Specifically, the electoral processes of 1995-96 instead of underscoring the role of political parties in the construction of political relations domestically, significantly played contrary role by minimizing them The political strife transformed from inter-party level into interpersonal one by gradually making political parties as secondary. The formation of powers became much more concentrated in circle of individuals substantially weakening the influence of political parties in the process of statecraft.

**ՍՈՒՄԳԱՅԻԹՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ
ՄԱՍՈՒԼՈՒՄ 1988 Թ. ՀՈՒՆԻՄ ԱՄՍԻՆ (ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)**

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԵՐՈՐՑԱՆ

1988թ. փետրվարի 27-29-ը Բաքվից 25կմ հեռավորության վրա գտնվող բազմազգ Սումգայիթում սանձազերծվեց հայության սպանողը, որը ցնցեց քաղաքակիրթ հանրությանը: ԽՍՀՄ –ում հռչակված հրապարակայնության պայմաններում հարկ էր հրապարակավ դատապարտել տմարդի գործողությունը, հանրային և տեղեկատվության միջև ապահովել անմիջական և ուղղակի կապ՝ համապարփակ լուսաբանելով տեղի ունեցած իրադարձությունները և տալով դրանց անկողմնակալ և առարկայական գնահատականը: Սակայն կոմունիստական խորհրդային յոթանասունամյա գաղափարախոսության առկայության պայմաններում, երբ հիմնախնդիրների առարկայական ու անկողմնակալ վերլուծության ցանկացած փորձ դատապարտված էր, երբ «հրապարակայնությունը» Արևմուտքում ավելի օպերատիվ էր գործում, քան ներմիութենական տարածքում, և Խորհրդային Միության մասին հրատապ, օրախնդիր լուրերը ավելի շուտ հասանելի էին դառնում արտասահմանյան, քան խորհրդային ընթերցողին, փետրվարյան արյունոտ դեպքերի հետ կապված մարտ- մայիս ամիսներին բազմիցս դրսևորվեց մամուլի քաղաքական սնանկությունը. «վերակառուցման լուսարձակ» խորհրդային մամուլն ի սկզբանե միտումնավոր կեղծելով Արցախյան հիմնախնդրի էությունը՝ նաև խայտառակ ու ամոթալի խեղաթյուրման մատնեց սումգայիթյան դառը ճշմարտությունը վերհանող փաստերը:

1988թ. հունիսի 1-ին կենտրոնական և հանրապետական մամուլում տպագրվեց հաղորդում Ադրբեյջանի ԿԿ՝ մայիսի 31-ին կայացած պլենումի մասին, ուր նշվում էր, որ պլենումը թույլ տված քաղաքական լուրջ սխալների համար ԽՍՀՄ շարքերից հեռացրել է ԼՂԻՄ մարզկոմի նախկին առաջին քարտուղար բ. կնոբկովին և Սումգայիթի քաղկոմի նախկին առաջին քարտուղար դ. մուսլիմ – զադեին՝ կազմակերպչական և քաղաքական աշխատանքում ունեցած մեծ թերացումների համար, որոնք հանգեցրին Սումգայիթի ողբերգական իրադարձություններին¹: Այս հաղորդման, սումգայիթյան դատավարության, ինչպես նաև եղեռնագործության անմիջական հետևանք հանդիսացող փախստականության խնդիրների վերաբերյալ մամուլում ծավալվեցին մտքերի փոխանակումներ, բանավեճեր, եղան հրապարակումներ և տեղեկատվական նյութեր՝ կայացած հանրահավաքների մասին.

¹ Տե՛ս <<Սովետական Հայաստան>>, 01.06.1988:

Հունիսի 1-ին հանրապետական մամուլում տպագրվեց Արմենպրեսի հաղորդումը Հայկական ԽՍՀ Նախարարների խորհրդի կողմից ձեռնարկված միջոցառումների մասին՝ Սումգայիթից տեղափոխված 802 ընտանիքի (3189 մարդ) տեղավորման, սոցիալ – կենցաղային պայմանների ստեղծման և աշխատանքով ապահովման վերաբերյալ, ուր նշվում էր, որ 150 ընտանիք բնակեցվել էր Բաղրամյանի, 50-ը՝ Ապարանի, 40-ը՝ Միսիանի շրջաններում և այլուր¹։ Մամուլում նշվում էր նաև Սումգայիթից եկած քաղաքացիների հարցերի քննարկման հանձնաժողովի աշխատանքների մասին, որ հունիսի 6-ի դրությամբ լուծվել էր 239 ընտանիքի կամ 955 քաղաքացու մշտական բնակության հարցը, մյուսները շարունակում էին ապրել տարբեր պանսիոնատներում կամ իրենց ազգականների մոտ, ինչպես նաև շարունակվում էին նրանց հողահատկացման, Սումգայիթի իրենց բնակարանների փոխանակման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպման աշխատանքները²։

Հունիսի 2-ին կայացած բազմամարդ հանրահավաքում ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Ս. Հարությունյանը, ներկայացնելով հանրապետությունում Սումգայիթից փախստականների տեղավորման , աշխատանքի ապահովման և այլ խնդիրների ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները, հրապարակավ դատապարտեց սումգայիթյան ողբերգական իրադարձությունները³։

«Անդրադառնալով Սումգայիթի ողբերգությանը, որը ցնցել է սովետական ողջ ժողովրդին, - կարդում ենք Փ.Սեթյանի հոդվածում՝ հունիսի 4-ին կայացած հանրահավաքի մասին, - միտինգի մասնակիցները դժգոհություն հայտնեցին դատավարության ընթացքից և պահանջեցին պատասխանատվության կանչել եղեռնագործության բուն կազմակերպիչներին, դատը վարել հրապարակայնորեն, Հայկական ԽՍՀ պատվիրակների ներկայությամբ, նաև՝ պաշտոնական ցավակցություն հայտնել անմեղ զոհերի հարազատներին»⁴։

Հունիսի 7-ին կայացած հանրահավաքում մի խումբ հացադուլավորներ (հունիսի 4-ից 11 ցուցարար հայտարարել էր հացադուլ-Ս.Ս.) իրենց գլխավոր պահանջների շարքում առաջադրեցին սումգայիթյան ոճրագործությունների կազմակերպիչների ու մասնակիցների դատապարտումը՝ օրենքի ողջ խստությամբ. «...Իսկ ի՞նչ է արվում. Խմբակային ոճրագործությունների մասնակիցներին դատում են առանձին – առանձին, ոչ թե ազգային հողի վրա կատարած սպանությունների համար, այլ՝ որպես քրեական հանցագործությունների։ Պահան-

¹ Տե՛ս „Коммунист“, „В совете министров АРМССР“, но. 128, 01.06.1988.

² Տե՛ս <<Ավանգարդ>>, <<Սումգայիթից եկած քաղաքացիների հարցերի քննարկման հանձնաժողովում>>, 08.06.1988:

³ Տե՛ս „Коммунист“, „Сообщение“, но.129. 02.06.1988.

⁴ Տե՛ս <<Երեկոյան Երևան>>,”Միտինգ Երևանում>>, թիվ.130,04.06.1988:

ջում ենք արդարացի և բաց դատ, որպեսզի այն դաս լինի բոլոր նրանց համար, ովքեր կփորձեն ձեռք բարձրացնել անմեղ մարդկանց վրա...»¹:

Հունիսի 8-ին կայացած բազմամարդ հանրահավաքի մասին մամուլում տպագրված ռեպորտաժում մեջբերվում էին հացադուլ հայտարարած նշանավոր շինարար, Սոցիալիստական աշխատանքի հերոս Գ.Մանասյանի և նրա երեք ընկերների պահանջները՝ սումգայիթյան դատավարությունը իրականացնել ԽՍՀՄ Գերագույն դատարանի կողմից և թույլ չտալ ԶԼՄ-ների կողմից դատավարության շուրջ հերթական լուրջ գոտու ստեղծում կամ դրա մակերեսային, ենթակայական լուսաբանում² : Հատկանշական է, որ այս հոդվածում ևս լրագրողներ Ա.Բադդասարյանը և Ս.Նուրիջանյանը խոստովանում էին, որ տեղեկատվական օրգաններն անպատրաստ գտնվեցին՝ լուսաբանելու անսովոր ու բարդ իրավիճակները: Հոդվածում ներկայացվում էր նաև Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի դասախոս Հ.Գալստյանի պահանջը՝ մամուլի անհապաղ և արդար արձագանք սումգայիթյան սպանող իրականացրած հանցագործների դատավարության նկատմամբ³ :

Հունիսի 9-ին «Միակն ու հավերժականը» խորագրով հոդվածում հոդվածագիր Գ.Զանիկյանը կոչ էր անում սումգայիթյի հայրենակիցներին՝ հաստատվելու ողջ հայության օրրան Հայաստանում⁴:

Լրագրող Գ. Մինասյանը «Ապրե՛ք, երեխեք...» խորագրով հոդվածում անուն առ անուն ընթերցողին էր ներկայացնում հացադուլավորներին (Գ.Մանասյան, Կ. Հարությունյան, Շ. Հարությունյան, Գ. Հարությունյան, Լ.Քոչարյան, Կ. Ղազարյան, Կ. Ագաթյան, Ս. Գրողյան, Գ. Շահինյան, Ռ. Ավագյան և Ռ. Հովսեփյան) և նրանց պահանջները՝ կոչ անելով դադարեցնել պայքարի ծայրահեղ ձևը այն հիմնավորումով, որ հունիսի 15-ին ՀԽՍՀ ԳԽ հերթական նստաշրջանում քննարկվելու էր ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20-ի որոշումը⁵:

Հունիսի 11-ին տեղական մամուլը տեղեկատվություն հաղորդեց Թատերական հրապարակում Երևանի բնակիչների հետ Հայաստանի կոմկուսի ԿԿ առաջին քարտուղար Ս.Հարությունյանի հանդիպման մասին, ուր վերջինս պատմել էր Սումգայիթից եկած ընտանիքներին Հայաստանում տեղավորելու ձեռնարկված աշխատանքների մասին⁶:

Նպատակ ունենալով հետագայում մանրամասն քննարկել Սումգայիթից փախստականության հիմնախնդրի վերաբերյալ մամուլի հրապարակումները,

¹ Տե՛ս <<Սովետական Հայաստան>>,"Թատերական հրապարակ.0 ժամից մինչև առավոտ>>, 07.06.1988:

² Տե՛ս „ Коммунист“, „ Репортаж Театральная площадь, 8 июня“, но.136, 09.06.1988:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս <<Սովետական Հայաստան>>, 09.06.1988:

⁵ Տե՛ս Երեկոյան Երևան, թիվ 137, 11.06.1988:

⁶ Տե՛ս <<Սովետական Հայաստան>>, <<Հանդիպում Երևանի բնակիչների հետ>>, 12.06.1988:

հարկ ենք համարում միայն նշել, որ հանրապետությունում առկա սոցիալ – տնտեսական ու քաղաքական բարդ իրադրության պայմաններում, երբ դրանց գումարվեցին առարկայական ու ենթակայական այլ գործոններ (օրըստօրե ահազնացող փախստականների թիվը, Սպիտակի ահավոր երկրաշարժը, իշխանական մարմինների քաղաքականությունը և այլն), հնարավոր չեղավ քաղաքաբնակի մշակույթ ունեցող, բայց խեղված ճակատագրով բոլոր սումգայիթցիների համար երկրում անհրաժեշտ կենսապայմանների ապահովումը, ինչն էլ հետագայում հիմք դարձավ նրանցից շատերի արտագաղթի :

Անդրադառնալով հրապարակային ցույցերի և հանրահավաքների պատմության առանձին էջերին, հավելենք, որ դրանք հռչակված վերակառուցման, ժողովրդավարության ու հրապարակայնության պայմաններում խորհրդային իրականությունում նոր երևույթ էին և կապված էին հանրույթի կոնկրետ պահանջների, նրան հուզող կոնկրետ հիմնահարցերի հետ և ունեին հասարակությունն առողջացնելու, նրա արատավոր ու ստվերոտ կողմերը վերացնելու միտում: Հասարակական բարձր գիտակցության դրսևորում հանդիսացող ցույցերը տարբեր պահանջներով էին. շրջակա միջավայրի և պատմական հուշարձանների պահպանում, սոցիալ – տնտեսական տարբեր հարցերի լուծում, կառավարման մեթոդների բարելավում, ազգային –տարածքային բաժանումներում թույլ տրված սխալների վերացում և այլն: Ինչպես իրավամբ նշում էր պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը, Արցախյան շարժման նոր փուլում բարձր մակարդակով ու խիստ կազմակերպված ընթացող ցույցերում ու հանրահավաքներում բազմակարծությունը հռչակվեց որպես ժողովրդավարության իրական նորմ:¹ : Այս փուլում խորհրդահայ մշակույթի կոնցեպտում ի հայտ եկան նաև բողոքի ու դատապարտման ցույցերն ու հանրահավաքները՝ սումգայիթյան ոճրագործության հետ կապված: «Դա իսկական ցեղասպանություն էր,- գրում էր Ն.Հովհաննիսյանը, - որը հստակորեն ուներ նաև հակասովետական և հակասոցիալիստական բովանդակություն, որը արդարացիորեն դատապարտվեց հայ ժողովրդի և նրա ազնիվ ու անկաշառ բարեկամների կողմից»²:

«Ինչու՞ է թալեն այդ երեկո գնացել հայեր սպանելու, երբ նրա հոգում ոչ մի չարություն և վիրավորանք չի եղել աշխարհի ոչ մի կոնկրետ հայի նկատմամբ», - Վ. Լոշակի այս և մյուս հարցադրումների շուրջ ընթերցողի հետ իր խոհերն էր կիսում գրող Շ.Թաթևիկյանը³: Նա արձանագրում էր, որ կենտրոնական մամուլում այնքան քիչ էր աննախադեպ չարագործության հանդեպ մարդկային վշտին կարեկցանքը, որ բարեկամական ու մարդասիրական ամենափոքր արտահայտու-

¹ Տե՛ս <<Երեկոյան Երևան>>, <<Չկորցնենք ձեռք բերածը>>, թիվ 128, 02.06.1988:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս <<Երեկոյան Երևան>>,"Սումգայիթի եղեռնագործությունը կամ խոհեր <<Սումգայիթ. ողբերգության վերջաբան>>հոդվածի շուրջը >>, թիվ 139,13.06.1988:

թունը երախտագիտություն էր առաջ բերում , և այս իմաստով նա երախտիք էր հայտնում Վ.Լոշակին, որ վերջինս «...Սումգայիթի հրեշավոր հանցագործին անվանեց հանցագործ»։ Սակայն Շ.Թաթիկյանը իրավամբ նկատում էր, որ հողվածագիրը ինտերնացիոնալիզմի քարոզչության միտումով խուսափել է հանցագործությանը սկզբունքային ու արդարացի գնահատական տալուց, ավելին՝ փորձել խղճահարություն առաջացնել ընթերցողների մոտ թալենների հանդեպ և դրանով իսկ «...մեղմացնել բարբարոս – վանդալ – չարագործների (ընդգծումը հեղինակինն է - Ս. Ս.) հանցանքի բնութագրումը և, հետևաբար, դրանից բխող պատիժը...»¹։ Գրողը հաստատում էր, որ Սումգայիթը ոճրագործ պատասխան էր Ղարաբաղի բնակչության արդարացի, օրինական– սահմանադրական պահանջին. «...Եթե պատմականորեն կամ բարոյական տեսակետներից հիմքեր կային առարկելու, ապա թող Սումգայիթի հեղինակներն էլ արտահայտեին նույնքան կոռեկտ, խաղաղ, օրինական ու սահմանադրական եղանակներով և ոչ թե ելնեին եղեռնագործության (ընդգծումը հեղինակինն է - Ս. Ս.)»²։ Նա արդար բողոք էր հայտնում առ այն, որ հայ ժողովրդին ու նրա պայքարն անվանարկում էին ծայրահեղական ու ազգայնամոլական, որ ոճիրի իրական պարագլուխները սոսկ վարչական ու կուսակցական պատիժների էին ենթարկվել և չէին ներկայացվել ու պատժվել իբրև իրական հանցագործներ :

Անշուշտ, Շ.Թաթիկյանի հրապարակումը կարևոր էր իբրև կոչ՝ ի վերջո խախտելու Սումգայիթի շուրջ լռությունը և իրերն իրենց անուններով անվանելու։ Սակայն, մեր կարծիքով, հողվածին բնորոշ էր նաև հեղինակի ավելորդ լավատեսությունը, որ դրսևորվում էր կոմունիստական կուսակցության կուրսի հաղթանակի, երկրի հասարակական – քաղաքական հիմքերի ժողովրդավարացման ու վերակառուցման ծրագրերի հանդեպ։ Բնավ կասկածի տակ չդնելով հեղինակի ազնիվ մղումները և արժևորելով ոչ հեռու անցյալի իրողությունները, խոստովանենք, որ այդ հավատը և լավատեսությունը կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականությունում տեղ գտած սխալները վերացնելու հանդեպ անգամ սումգայիթյան իրողություններից ամիսներ անց բնորոշ էր մեր ժողովրդին ու նրա մտավորականությանը, քանի որ դրան էր ուղղված խորհրդային ՁԼՄ – ների քարոզչությունը : Եվ այսօր մենք հաճախ հարցնում ենք՝ նաև ինքներս մեզ. ինչպե՞ս էր կարելի մոլորվել ու հավատալ խորհրդային երկրի հումանիստական, ժողովրդավարական վերափոխմանն ու վերակառուցմանը, երբ յուրաքանչյուր քայլին վիրավորվում ու ոտնահարվում էր մարդկային ու ազգային արժանապատվությունը:

Խորհրդային կենտրոնական մամուլը շարունակում էր պատրանք ստեղծել, թե ճշմարտության համար երկրում լայնորեն բացվում են դռները, թե

¹ Տե՛ս նույն տեղում:

² Նույնը:

քննարկվում են տարբեր դիրքորոշումները, թե հրապարակայնությունն անիմաստ է առանց նոր որակական քայլերի՝ ՋԼՄ – ների ժողովրդավարացման ուղղությամբ¹։ Մինչդեռ իրականում ի՞նչ ենք կարդում հունիսյան մամուլում, օրինակ, Լենինյան մրցանակի դափնեկիր, գրող Ե.Բասնի հոդվածում. «...ի՞նչ են իրադարձությունները ԼՂ –ում:...նրանց սադրանքը, ովքեր սենսացիաների պղտոր ալիքներում միջոցների ընտրության հանդեպ առանց զագրանքի, անգամ արյունոտ պառակտում սանձազերծելով՝ ձգտում են ազգային վերակառուցման քողի ներքո իրենց համար անուն ստեղծել։ Դա վերակառուցման այլասերում է և նրա դեմ քողարկված պայքար»²։ Կամ՝ լրագրող Ն. Դեմիրդովի հոդվածում. «...մարտ – ապրիլին ԼՂ հոգեբանական կլիման ձևավորում էին Սումգայիթից հայերի պատմությունները։ Ճշմարտությունը հերթագայվում էր մտացածինով։ Ողբերգությունը հառնում էր սահմոկեցուցիչ մանրամասներով, որոնք ոչ մի ընդհանրություն չունեին ռեալության հետ...»³։ Նմանատիպ ձեռագրով էր շարադրված նաև լրագրող Ռ.Հուսեյնովի հոդվածը, ուր կրկին խեղվում ու մերժվում էր արցախահայության ինքնորոշման պահանջը և կրկին քար լռության էր մատնվում սումգայիթյան սպանդը։ Ավելին՝ Արցախյան շարժումը որակելով որպես «տնաբույծ պատմաբանների «կեղծ փաստարկների ու ոչ կոմպետենտ հայտարարությունների արգասիք, հեղինակը նշում էր.» ...Այն ամենը, ինչ տեղի է ունենում Լեռնային Ղարաբաղի շուրջ, դա հարված է վերակառուցմանը, հավանաբար վերջին ժամանակներում ամենալուրջ հարվածը։ Դա մարտահրավեր է հրապարակայնությունից ծնունդ առած գաղափարներին, դա պահպանողականների տրված հնարավորությունն է՝ հաստատելու իրենց տեսակետը»⁴։

Եվ այսքանից հետո կրկին ոչնչով չհիմնավորված լավատեսություն ԽՄԿԿ քաղաքական գծի հանդեպ Մեծ հայրենականի վետերան, անհատական թոշակառու Գ.Շեկյանի «Դասեր, որ չպետք է կրկնվեն «հոդվածում, ուր արձանագրվում էր , որ ժամանակին Մ.Բաղիրովի հատուկ կարգադրությամբ Սումգայիթի կառուցման համար բեռնատար ավտոմեքենաներով Ղարաբաղի լեռնային գյուղերից ընտանիքներով Սումգայիթ տեղափոխված հայ բնակչությունը 1988թ. փետրվարին աներևակայելի բռնության հետևանքով հարկադրված էր եղել թողնել այն քաղաքը, որի կառուցմանը գործուն մասնակցություն էր ունեցել։ Հեղինակը Սումգայիթը համարում էր խորթ ու անհամատեղելի խորհրդային իրականությանը և դատապարտում էր սպանդը, բայց նաև վերջում արձանագրում.

¹ Տե՛ս „Правда”, Т.Самолис, Очищение правдой, 07.06.1988.

² Տե՛ս „Социалистическая индустрия”, Е.Исаев, По зову совести, но.10, 06. 1988:

³ Տե՛ս „Правда”, Н.Демидов, Сегодня в НК, 10.06.1988:

⁴ Տե՛ս „Комсомольская правда”, „Дом под общей крышей”, 15.06.1988:

«Մենք հասկանում ենք, որ սովետական օրենքները օբյեկտիվ են ու մարդասիրական...»¹:

Արցախյան շարժման ծավալմանը համընթաց հանրապետական և ԼՂ մամուլում տեղ գտան նաև հեղինակների՝ խորհրդային իրականության և կոմունիստական կուսակցության քաղաքականության հանդեպ իրատեսական դիրքորոշումներով և համարձակ, սթափ գնահատականներով հրապարակումներ. ԽՄԿԿ վետերան Ա.Ղազարյանը իրավամբ նկատում էր, որ խորհրդային երկրում բազմիցս հանիրավի բռնադատվել են մարդկանց խոսքն ու միտքը, փականքի տակ դրվել ազգերին ու ժողովուրդներին հուզող կենսական հարցերը, և «դեռևս շատ են «պարապ» խոսքերն ու հավաստիացումները: Այս առումով բացառություն չի կազմում նաև ինտերնացիոնալ դաստիարակության բնագավառը²»: Նա նկատում էր, որ ԽՄԿԿ-ն Արցախյան հիմնախնդրի լուծման ուղղությամբ կոնկրետ քայլերի փոխարեն հարցին մոտեցել է վերամբարձ կոչերով ու ընդհանուր դատողություններով. «...Ղարաբաղյան հարցի հետ կապված փետրվարյան օրերը մի՞թե չեն վկայում հենց այդ մասին: Սումգայիթում կատարվել էր հրեշավոր ոճրագործություն, եղեռն, իսկ թերթերն ու մասսայական ինֆորմացիայի մյուս միջոցները հանցագործին մերկացնելու փոխարեն, եղելության տաք հետքերով եղբայրություն էին քարոզում, դրանով իսկ գցում իրենց վարկն ու հեղինակությունը»³: Մեր կարծիքով, հողվածում հատկապես արժեքավոր էր Ա.Ղազարյանի կոչը իր կուսակցական ընկերներին՝ ի վերջո գերծ մնալու միակողմանի մոտեցումներից, դրսևորելու գործուն դիրքորոշում, սկզբունքայնություն և անկեղծություն. «Մենք սովորել ենք ինտեգրայով կրկնել, թե ովքեր են մեր «ավագ» ու «կրտսեր» եղբայրները, ինչպիսի օգնություն ենք ստանում նրանցից և ինչպես... Իսկ ինչ՞ ու չասել, թե մենք էլ մեր հերթին ինչպիսի նյութական ու բարոյական նպաստ ենք բերել այդ եղբայրության մեծ «կոթողի» կերտմանը: Հավանաբար դարձյալ վախենում ենք, որ մեզ ճիշտ չեն հասկանա, կհանդիմանեն մեծամտության կամ էլ շոփինիզմի մեջ»⁴: Հեղինակը բարձրաձայնում էր խորհրդային երկրում առկա կուսակցական ուռճացած ապարատի, դիմագուրկ կոմերիտմիության և խոսքի ու գործի հակասության խնդիրները:

Հանրապետական մամուլում լուրջ քննադատություն հնչեց նաև ԶԼՄ-ների հասցեին. լրագրող Ա.Բրուսյանը ներկայացնում էր իր հարցազրույցը ԵՊՀ Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ.Կարապետյանի հետ, ուր վերջինս նշում էր, որ Սուզդալում կայացած Խորհրդային սոցիոլոգիական ասոցիացիայի վարչության պլենու-

¹ Տե՛ս <<Սովետական Ղարաբաղ>>, թիվ 133, 08.06.1988:

² Տե՛ս <<Երեկոյան Երևան>>,"Քո դիրքորոշումը, պատգամավոր>>, թիվ 139, 13.06.1988:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս նույն տեղում:

մի՝ Մ.Գորբաչովին ուղղված դիմումում անբավարար է գնահատվել ԶԼՄ-ների աշխատանքը՝ ԼՂԻՄ հիմնախնդրի և, մասնավորապես, սումգայիթյան հրեշավոր հանցագործությունների լուսաբանման ուղղությամբ, որ ստեղծված իրավիճակում ԶԼՄ – ները չեն կարողացել անհրաժեշտ մակարդակով լուծել իրենց առջև ծառացած խնդիրները: Պլենումում միաժամանակ հույս էր հայտնվել, որ առաջիկայում սումգայիթյան դատավարության և նրա արդյունքների հրապարակումը բացառիկ կարևոր միջոց կդառնա ամեն տեսակ նացիոնալիզմի դեմ, մինչդեռ ճշմարտության քողարկումը կարող է վտանգել կուսակցության հեղինակությունը¹:

«...Ինչու՞ կենտրոնական և հանրապետական մարմինները, մասսայական ինֆորմացիայի միջոցները չեն կարողանում մեզ հասկանալ միանշանակ: Ինչու՞ ... միութենական հանրապետությունները, չիմանալով մեր մասին ճշմարտությունը, մեզնից երես թեքեն: Ինչու՞ չկա Սումգայիթի ողբերգության քաղաքական գնահատականը: Այս և այլ բազմաթիվ ինչուների պատասխանն էր փնտրում կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի քարտուղար Հ.Միքայելյանը «Սովետական Ղարաբաղ» թերթի բանավեճի ակումբում²: Հեղինակն արձանագրում էր, որ խորհրդային երկրում տիրում է քաղաքական աններելի կարճատեսությունը, և ազգային հիմնախնդիրները բարձրաձայնելու և չարիքի արմատները, սկզբնապատճառները փնտրելու փոխարեն խոսվում է միայն դրանց հետևանքների մասին, հին մեթոդներով փնտրվում – գտնվում – հեռացվում է մեկը՝ «քավության նոխազը»³:

«...Մեր պատմության մատյանում մի նոր ողբերգական անուն ավելացավ՝ Սումգայիթ», - արձանագրում էր լրագրող Մ.Հովհաննիսյանը և հավելում, որ խորհրդային երկրում ժողովուրդների բարեկամության և ինտերնացիոնալիզմի մասին պերճախոսությունը խլացրել էր ժողովուրդների հոգսերն ու խնդիրները⁴:

Ն. Ավագյանը «Ճշմարտության և արդարության անունից» վերտառությամբ հոդվածում փորձում էր մեկնաբանել ում է. Սարկիսովայի կոչը արցախահայությանը՝ դադարեցնելու գործադուլներն ու պայքարը: Հեղինակը վեր հանելով ԼՂ շուրջ ծավալված իրադարձությունների պատճառահետևանքային կապերը, հիմնավորում էր, որ ողջ ժողովուրդը փորձում է «... պաշտպանել – վերականգնել տասնամյակներ շարունակ վիրավորված ազգային արժանապատվությունը: Գուցե ավելին եմ վերցնում ինձ վրա, - գրում էր հեղինակը, - բայց ահա մտածում եմ, որ եթե չլինեք Սումգայիթը, չշարունակվեին ջարդարամետ խլրտումները

¹ Տե՛ս „Коммунист“, „Социология и межнациональные отношения“, но.136, 09.06.1988:

² Տե՛ս <<Սովետական Ղարաբաղ>>, <<Սկզբունքայնության դիրքերից>>, թիվ 137, 12.06.1988:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս <<Սովետական Ղարաբաղ>>, <<Մեծ փորձության ժամանակը>>, թիվ 141, 17.06.1988:

Բաքվում և այլուր, հազիվ թե ինքներդ էլ ներքուստ հպարտ չզգայիք մեր ժողովրդի այս հոգևոր արթնացման համար...»¹:

Հարկ է նշել, որ 1988թ. հունիսին հանրապետական մամուլում Արցախյան հիմնախնդրին և, մասնավորապես սումգայիթյան ողբերգությանը իրենց մասնագիտական ծանրակշիռ խոսքով արձագանքեցին նաև ԵՊՀ նշանավոր իրավաբանները, ովքեր իրենց հրապարակումներում անդրադարձան Սումգայիթում կատարված հանցագործությունների իրավաբանական որակմանը՝ կատարելով անհրաժեշտ մասնագիտական ճշգրտումներ, պարզաբանումներ.

ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ Մ.Գրիգորյանը, անդրադառնալով Գ.Էմինի «Բարեկամության պահանջով» հոդվածին, իր համերաշխությունն էր հայտնում հոդվածի հեղինակին՝ Սումգայիթում կատարված հանցագործությունների գնահատման հետ կապված, բայց նաև հոդվածագրին և ընթերցողներին պարզաբանում էր, որ «խորհրդային ներպետական քրեական օրենսդրության մեջ բացակայում է ցեղասպանության համար պատասխանատվություն սահմանող հատուկ իրավանորմը. հետևապես «...այդ հանցագործությունները պետք է որակվեն ներպետական քրեական օրենսդրության նորմերին լիովին համապատասխան՝ հանցագործությունների համակցության կարգով»²:

ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի խորհրդի 1988թ. տեղեկանքում (հեղինակ՝ իրավագիտության թեկնածու Գ.Ղազինյան և այլք-Ս.Ս) նշվում էր, որ կենտրոնական մամուլի հրապարակումներում և երկրի իրավապահ մարմինների ղեկավարների ելույթներում Սումգայիթում կատարված զանգվածային հանցագործությունների նկարագրությունը գալիս է հաստատելու այն իրողությունը, որ դատարանի կողմից անտեսվել է հանցագործությունների սուբյեկտիվ կողմի բովանդակությունը (կատարված հանցագործությունների շարժառիթները), և այս իմաստով էլ այդ հանցագործություններն արհեստականորեն տարանջատվել են, իսկ թ. իսմայիլովի հանցագործությունը որակվել է որպես դիտավորյալ սպանություն խուլիգանական դրդումներով: Մինչդեռ «...դրանք կատարվել են որոշակի շարժառիթով: Այդ հանցագործությունները ծագել են ազգամիջյան հողի վրա, այլ ոչ թե արդյունք են սոսկ հասարակական կարգի կոպիտ խախտման և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի: Մարդկանց սպանել են միայն այն բանի համար, որ պատկանել են ուրիշ ազգության»:³ Տեղեկանքում կրկին մասնագիտորեն պարզաբանվում էր, որ սումգայիթյան հանցագործությունները ոչ թե պետք է արհեստականորեն տարանջատել, այլ՝ իրավաբանորեն որակել որպես պետական հանցագործություններ (բանդիտիզմ և զանգվածային անկարգություններ):

¹ Տե՛ս <<Սովետական Ղարաբաղ>., թիվ 143, 19.06.1988:

² Տե՛ս <<Սովետական Հայաստան>., <<Անհրաժեշտ ճշգրտումներ>>12.06.1988:

³ Տե՛ս նույն տեղում, <<Անկանխակալ հայացքով>., 12.06.1988:

Ընթերցողի հետ սումգայիթյան դատավարության շուրջ իրենց մտորումներն էին կիսում ՀԽՍՀ արդարադատության մինիստրության դատական փորձաքննությունների ԳՀԼ-ի բաժնի պետ Կ. Բալայանը և ԵՊՀ ամբիոնի վարիչ, բանասեր Ս. Զոլյանը¹: Հեղինակները ցավով էին արձանագրում, որ «... դատավարության մասին առաջին իսկ լրագրային հաղորդումները իրենց կես-ճշմարտությամբ, կես-հրապարակայնությամբ և կես- արդարությամբ հուսախաբ արեցին, որ... մամուլը գերադասում է կոծկել սումգայիթյան դատավարության համանման երևույթները»:² Հոդվածում ընդգծվում էր , որ խախտվել է դատական իշխանության անաչառության և անկանխակալության գլխավոր պայմանն ու անօտարելի հատկանիշը՝ անկախությունը, քանի որ սումգայիթյան գործը վարում է Ադրբեջանական ԽՍՀ բարձրագույն մարմինների կողմից նշանակված դատարանը, ուր ընդգրկված մարդիկ պաշտոններ են զբաղեցնում այդ հանրապետությունում , հետևաբար դատարանը չի կարող գերծ մնալ իր գործառնություններում ինչ-որ ազդեցությունից կամ ներգործությունից: Հոդվածում իրավաբանի արհեստավարժությամբ հիմնավորվում էր նաև, որ իրենց հանցավոր կեցվածքի՝ անգործունեության համար, սումգայիթյան հանցագործների հետ միասին դատական ատյանի առջև պետք է կանգնեին իրավապահ մարմինների աշխատակիցները, և առաջարկվում էր սումգայիթյան՝ իբրև առանձնահատուկ բարդության և բացառիկ կարևորության գործի, վարույթի իրականացումը հանձնել ԽՍՀՄ Գերագույն դատարանին: Հեղինակները նկատում էին, որ սումգայիթյան գործով կյանքի կոչված դատարանի կազմում ազգությամբ ռուս Ա.Կլոկովի ընդգրկվածությունը անաչառության սոսկ պատրանք է, քանի որ «դատավորի ազգային պատկանելությունը չի կարող նրա անկախության և արդարամտության երաշխիք լինել»:³ Անդրադառնալով թ. իսմայիլովի նկատմամբ կայացված դատավճռին և մամուլում դրա լուսաբանմանը, հեղինակները միանգամայն ակնհայտ էին համարում այն հանգամանքը, որ իսմայիլովը չի կարող համարվել այդ գործի միակ ամբաստանյալը, քանի որ 62-ամյա Շահեն Սարգսյանը մեքենայից դուրս էր քաշվել և կտտանքների ենթարկվել զագագած ամբոխի կողմից, որ այս հանցագործության, ինչպես նաև Աշոտ Սարգսյանի սպանության շարժառիթը և նպատակը բացահայտելու համար անհրաժեշտ է գործը վերադարձնել դատախազության լրացուցիչ նախաքննությանը: Մինչդեռ դատարանն իր որոշումով միանձնյա հանցագործության երևութականություն է ստեղծել: Հոդվածագրերը կատարում էին կարևոր հարցադրում. ինչու՞ մոռացվեց ԽՍՀՄ գլխավոր դատախազի տեղակալի այն միտքը, որ հանցագործությունների զոհեր են դարձել բացառապես հայերը, և

¹ Տե՛ս <<Հայրենիքի ձայն>>, <<Սումգայիթյան դատավարություն. Բարձրաձայն մտորումներ>>, Թիվ 25, 15.06.1988:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում:

խամայիլովի ոճիրը չորակվեց որպես «ազգային հողի վրա կատարված հանցագործություն»։ Նրանք իրավամբ բողոք էին հայտնում, որ ԽՍՀՄ –ի ստորագրած միջազգային համաձայնագրերում հստակ է ցեղասպանության ըմբռնումը, մինչդեռ խորհրդային օրենսդիրը համարելով, որ մարդկության դեմ ուղղված ամենամեծ այդ հանցագործությունը անհարիր է խորհրդային իրականությանը, համապատասխան հողված չի նախատեսել քրեական օրենսգրքում։

Հողվածի ընթերցումով ակնհայտ է դառնում, որ սումգայիթյան դատավարության ընթացքում խորհրդային օրենսդրությունից բազմաթիվ շեղումներ էին կատարվել, մինչդեռ կենտրոնական մամուլում դրանք ոչ միայն չէին արձանագրվել, պարզաբանվել ու մեկնաբանվել, այլ, ընդհակառակը, շրջանցելով բարոյական նորմերը, կարեկցական մանրամասներ էին ներկայացվել թալեի ընտանիքի մասին, ինչը դժգոհություն էր առաջ բերել դատավճռի խստությունից աղբյուրների շրջանում և վերջիններիս բողոքի ցույցերի հանել։ Ինչպես իրավամբ նկատում էին հեղինակները, թալեի ճակատագիրը կենտրոնական մամուլը դարձրել էր հայերի ու աղբյուրների միջև սակարկության առարկա՝ հանգեցնելով ազգային թշնամանքի բորբոքման։

1988թ. հունիսի 15-ին Արցախյան շարժման նոր փուլի պատմության մեջ արձանագրվեց նոր էջ. ՀԽՍՀ ԳԽ նստաշրջանը ընդունեց որոշում «ԼՂԻՄ-ը Աղբյուրանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ կազմի մեջ անցնելու վերաբերյալ Աղբյուրանական և հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդների առջև միջնորդելու մասին «Աղբյուրանական ԽՍՀ ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ Մարզային խորհրդի 1988թ. փետրվարի 20-ի արտահերթ նստաշրջանի որոշման մասին»¹։ ՀԽՍՀ ԳԽ նստաշրջանում ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Ս.Հարությունյանը իր ճառում կսկիծ ու խոր ցավակցություն հայտնեց Սումգայիթում զոհվածների ազգականներին ու մտերիմներին և ներկայացրեց Սումգայիթից Հայաստան տեղափոխված 702 ընտանիքի բնակեցման և աշխատանքի տեղավորման հետ կապված խնդիրները՝ ընդգծելով, որ արդեն լուծվել է 616 ընտանիքի մշտական բնակության հարցը²։

ՀԽՍՀ ԳԽ ընդունեց նաև «Աղբյուրանական ԽՍՀ Սումգայիթ քաղաքում կատարված ոճրագործությունները դատապարտելու մասին որոշումը», ուր դատապարտվեցին սումգայիթյան ոճրագործությունները և խոր ցավակցություն հայտնվեց զոհվածների ընտանիքներին ու հարազատներին և կարեկցանք՝ անմեղ տուժածներին³։

¹ Տե՛ս <<Երեկոյան Երևան>>, թիվ 142, 16.06.1988:

² Տե՛ս <<Հայրենիքի ձայն>>, թիվ 26, 22.06.1988:

³ Տե՛ս նույն տեղում:

Վերոնշյալ այս որոշումները հիմք ծառայեցին մամուլում Արցախյան շարժման հետ կապված իրողությունները լուսաբանող նոր հրապարակումների, նոր մեկնաբանությունների.

Իրավագիտության դոկտոր Վ.Նազարյանը «Հեղինակը ժողովուրդն է» խորագրով հոդվածում ՀԽՍՀ ԳԽ նստաշրջանի 1988թ. հունիսի 15-ի որոշումը համարում էր պատմական՝ հայ ժողովրդի իդձերն ու ցանկություններն արտացոլող «ժողովրդի ճակատագրի նկատմամբ հոգատարությամբ հագեցված»¹: Նա գտնում էր, որ համաժողովրդական աննկուն պայքարի արդյունք հանդիսացող այս որոշումով սկսվում է հոգևոր զարթոնքի ու պայքարի նոր ժամանակաշրջան, չնայած այն բանի, որ շարժման հակառակորդներն ու զանգվածային լրատվության առանձին միջոցներ ջանքեր չէին խնայում Արցախյան հիմնախնդիրը փակուղի մտցնելու համար՝ մեջտեղ բերելով ԽՍՀՄ սահմանադրության՝ ազգամիջյան հարաբերությունների հետ ոչ մի առնչություն չունեցող 78 հոդվածը, վերջինս հակադրելով ԽՍՀՄ սահմանադրության 70 հոդվածում ամրագրված ազգերի ինքնորոշման սկզբունքին: Անդրադառնալով սումգայիթյան եղեռնագործության իրավաբանական որակմանը, Վ.Նազարյանը գտնում էր, որ դրան պետք է մոտենալ «...սոցիալիստական օրինականությամբ ներծծված ժողովրդաիշխանության դիրքերից» և բողոքի ձայն բարձրացնել սումգայիթյան դատավարության դեմ, «երբ բանդիտիզմի իրավ թրեստոմատիական օրինակը ճգնում են ներկայացնել որպես խուլիգանական հողի վրա կատարված սպանություն և դրանով իսկ ճանապարհ բացել կազմակերպված բանդայի մասնակիցներին առանձին – առանձին՝ որպես սոսկ խուլիգաններ դատելու»: Հեղինակը իրավամբ մեղադրում էր ԶԼՄ- ներին՝ զգացմունքներից զուրկ բանականությամբ առաջնորդվելու հնչեցրած կոչերի համար, որը «... իր էությամբ ... նման է ... ստերիլ ինտերնացիոնալիզմին՝ զուրկ ազգային բովանդակությունից, սեփական ժողովրդի տառապանքի գիտակցությունից»²:

Ընթերցելով հոդվածը և բնավ կասկածի տակ չդնելով արհեստավարժ իրավաբանի ակտիվ քաղաքացիական կեցվածքն ու հայրենասիրական անկեղծ մղումները, հարկ ենք համարում նշել, որ հոդվածագիրը զերծ չէր մնացել ժամանակին բնորոշ այն մտայնությունից, որ Արցախյան հիմնախնդրի արդարացի լուծումը հնարավոր է խաղաղ ճանապարհով՝ երկրի հեղափոխական վերակառուցմամբ և վերջինիս հակառակորդների պարտությամբ: Այս իմաստով էլ հոդվածում կոչ էր արվում «պետական համախմբվածությամբ և պետական միասնությամբ» նվիրվել «հեղափոխական վերակառուցման պրոբլեմների սուրբ գործին»³: Մեր կարծիքով այդ մտայնությունը բացատրվում էր նաև նրանով, որ

¹ Տե՛ս <<Սովետական Հայաստան>>, 17.06.1988:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում:

ՀԽՍՀ բարձրագույն օրենսդիր մարմնի վերոհիշյալ որոշումները հիմք էին ստեղծել ԽՄԿԿ բարձրագույն ղեկավարության հանդեպ հույսերի ու ակնկալիքների, չնայած այն բանի, որ 1988թ. հունիսի 17-ին Ադրբեջանական ԽՍՀ ԳԽ նստաշրջանի որոշմամբ անընդունելի էր համարվել ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների խորհրդի նստաշրջանի փետրվարի 20-ի որոշումը¹։ Նկատենք նաև, որ 1988թ. մամուլում Արցախյան հիմնահարցին առնչվող նյութերում առկա էր երկու տրամաբանություն՝ լենինյան արդարության վերականգնման պահանջ ժողովրդի կողմից և հանդարտության ու զգաստության կոչ՝ կուսակցական ղեկավարության կողմից։ Մեր կարծիքով Վ.Նազարյանի հոդվածը այդ երկու տրամաբանությունների ամբողջությունն էր։

«Հիրավի պատմական փաստաթուղթ և հիրավի ժողովրդական միասնական կամքի արտահայտություն», - այսպես էր բնութագրում ՀԽՍՀ ԳԽ նստաշրջանի 1988թ. հունիսի 15-ի որոշումը գրող Գ.Դևրիկյանը և ցավով արձանագրում, որ այն ըմբռնում չգտավ Ադրբեջանի կողմից. «...Իսկ այդ ըմբռնողությունը շատ ու շատ կարևոր էր մանավանդ Սումգայիթում սանձազերծված վայրագ ոճրագործություններից հետո։ Մինչդեռ Սումգայիթի մասին մոռացվեց, ասես այդպիսի բան չէր եղել։ Ահա թե ինչու շատ կարևոր էր ՀՍՍՀ Գերագույն Սովետի նստաշրջանում Սումգայիթ քաղաքում հայ բնակչության նկատմամբ կատարված ոճրագործությունների դատապարտման մասին որոշման ընդունումը»²։ Հեղինակը անողորմ քննադատության էր ենթարկում սումգայիթյան դատավարության կամայական ընթացքը, փաստերը կոծկելու և ծուռ հայելու մեջ ներկայացնելու միտումը և ընդգծում, որ դատավարության ընթացքը հակասում է հայ և ադրբեջանական ժողովուրդների բարեկամությունն ամրապնդելու տրամաբանությանը։ Գրողը կոչ էր անում չխեղաթյուրել պատմական փաստերը, ինչը միշտ էլ բնորոշ է եղել մեր հարևան- թյուրքերին. «... Եվ գուցե սումգայիթյան ու այլ ողբերգությունները չլինեին, ... եթե նրանք «Ադրբեջանի պատմությունը» չսովորեին աղավաղված վիճակում ու նաև ճշմարտությունն իմանային Լեռնային Ղարաբաղի մասին, որի անունն իսկ բացակայում է այդ դասագրքում։ ... Այո՛, պետք է պատմությունը լավ գիտենալ և ո՛չ թե նրանից վերցնել բարդուղիմեռույան չարագուշակ գիշերվա փորձը միայն, այն երկարաձգելով երեք օրով, ինչպես դա եղավ Սումգայիթում»³։

«...Ու՛ր և ո՛րն է հայ ժողովրդի սպասումի սահմանը», - այս հարցերին էր փորձում պատասխանել հրապարակախոս Ա. Հովհաննիսյանը «Տագնապի բաղադրությունը» խորագրով հոդվածում⁴։ Հեղինակը հայ ժողովրդի սպասումին,

¹ Տե՛ս „Известия“, „Сессии Верховных советов союзных республик“, 19.06.1988:

² Տե՛ս <<Սովետական Հայաստան>>,” Հաշվի նստել այդ կամքի հետ>>, 22.06.1988:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս <<Երեկոյան Երևան>>, թիվ 148, 22.06.1988:

հույսերին, հույզերին ու ակնկալիքներին հակադրում էր ստեղծված այն իրողությունը, որ «...խոսքից գործերի անցնելու պրոցեսը խիստ է ձգձգվում», որ «...վախվորածության լեթարգիայից ուշքի եկող տեղական մամուլն ու հեռուստատեսությունն են միայն իրար անցել, շոշափելով և քննելով թեմաներ...»¹: Հոգվածագիրը իրատեսորեն նկատում էր, որ իրավիճակը կարող է լարվել ու բարդանալ, ընթանալ բախումներով, եթե չհետևել բանականությանը և չբարձրաձայնել այն ճշմարտությունը, որ չարիքը չարիք է ծնում...² Դաժանության ու ապօրինության նմուշ, անհեթեթ ու անիրական թվացող հին դատավարությունների (ստալինյան ժամանակաշրջանի – Ս.Ս) մոայլ ստվերն ընկած չէ՞ արդյոք մեզանից ոչ շատ հեռու, բոլորիս սիրտ և ուղեղում սև խարան թողած Սումգայիթ՝ այլևս չարագույժ անվանումը կրող քաղաքում ընթացող դատական ֆարսի հեղձուկ ու փակ դուռ – սրահի վրա: ...Ո՞ւր մնացին ... մամուլի հավաստիացումները, թե հրապարակային դատ ենք անելու, հեռուստատեսությամբ ենք ներկայացնելու ոճրագործներին...»²: Հեղինակը լավատես էր, երբ գրում էր, որ հույսին ապավինած մեր ժողովուրդը երբեք չի հուսալքվի:

1988թ. հունիսին հրապարակայնությունը Հայաստանում կարծես քաղաքացիություն էր ստացել, քանի որ տեղական ԶԼՄ – ները խզել էին երկարատև լռությունը և հնարավորություն տվել շատերին՝ արտահայտվելու հուզող հիմնախնդիրների շուրջ: Մինչդեռ սումգայիթյան եղեռնագործների դատավարության շուրջ պաշտոնական կենտրոնական մամուլի կծծի հաղորդումները և մույժգաղտնապահությունը առաջ էին բերել հայ ժողովրդի արդար բողոքը: «Իզվեստիա»-յի թղթակիցներ Ս.Բաբուլմյանը և Ե. Վոստրովյովը իրավամբ գրում էին, որ վերջին շրջանում, չնայած կենտրոնական թերթերի համերաշխված լռությանը, իրավիճակը Հայաստանում տագնապալի է: Սումգայիթյան դատավարության մասին մամուլի ժլատ հաղորդումները ևս իրենց հերթին սրել են դրությունը:³

Լրագրող Յու. Դմիտրիևի «Սումգայիթ. Հետաքննությունը շարունակվում է «խորագրով հողվածում սումգայիթյան դատավարության շուրջ թղթակցի հարցերին պատասխանում էր արդարադատության երրորդ աստիճանի պետական խորհրդական Վ. Նենաշևը ⁴: Վերջինս նշում էր, որ քննչական խմբում ընդգրկված արհեստավարժներն աշխատում են օրնիբուն, սակայն նրանք դեռևս չեն ամբողջացրել Սումգայիթում կատարվածի պատկերը: Մի քանի հսկող դատախազներ ապահովում են օրինականությունը քրեական գործերի մինչդատական վարույթներում: Նա արձանագրում էր նաև, որ ձերբակալված 94 իրավախախտներ

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս „Известия“, „Сессии Верховных Советов союзных республик“, 17.06.1988.

⁴ Տե՛ս „Труд“, 17.06.1988.:

րից 20 մեղադրյալների գործերը արդեն հանձնվել են դատարան: Դատավճիռ է կայացվել թ. իսմայիլովի, տասնվեցամյա յ. գարիբովի և երեսունամյա ա. իբիշովի գործերով: Վերջինս փետրվարի 29-ի առավոտյան ավտոկայարանում կազմակերպել է երկաթե ձողերով զինված «...խուլիգանական անձանց խումբ՝ **կոչ անելով հաշվեհարդար տեսնել ազգությամբ հայ քաղաքացիների հանդեպ** (ընդգծումը իմն է –Ս.Ս.)», իսկ գարիբովը քարեր է նետել զինվորների վրա, իսկ հետո մետաղաձողով մի քանի հարված հասցրել քաղաքացի **Վիկտոր Սարգսյանի** (ընդգծումն իմն է –Ս.Ս.) գլխին, նաև՝ վնասել նրա ձախ ձեռքը: Վ. Նենաշևը ընթերցողին էր ներկայացնում նաև մի քանի «ճշգրտված» թիվ. տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ են ստացել երկու հարյուրից ավելի մարդ, վնասվել է հիսունից ավելի կենցաղ- մշակութային օբյեկտ, թալանվել մոտ երկու հարյուր բնակարան, հրկիզվել ու ջարդվել քառասունից ավելի մեքենա: Իբրև վերջաբան նշվում էր, որ ոչ մի տարակուսանք չի կարող լինել, որ կատարվածի մեղավորները անպայման պատասխանատվություն ու պատիժ կկրեն¹:

Ընթերցողին այս հարցազրույցից պարզ ու ակնհայտ էր դառնում, որ սում-գայիթյան ջարդը իրականացվել էր ազգային հողի վրա՝ հայազգի մարդկանց հանդեպ: Սակայն խորհրդային երկրում բարոյական արժեքների անկման մթնոլորտում միտումնավոր չտեսնելու և մոռացության էր տրվում այս փաստը, և իրատեսության, բաց խոսակցության ու սթափ գնահատականների փոխարեն կենտրոնական պաշտոնական մամուլում իմաստազրկվում ու արժեզրկվում էր «ճշմարտություն» բառը:

Լրագրող Ա.Մուրսալիևը, ներկայացնելով Ադրբեջանում տիրող անհանգիստ իրավիճակը, հաղորդում էր ադրբեջանցիների սովոր զանգվածի՝ Հայաստանի սահմանները թողնելու մասին և կատարում սադրիչ հարցադրում. արդյո՞ք միայն որոշ թշնամաբար տրամադրված մարդկանց սառնալիքներն են ստիպել նրանց լքել տունը, դաշտային աշխատանքների եռուն շրջանում թողնել գյուղը²: Հոդվածագիրը միտումնավոր լրության էր մատնում այն փաստը, որ ՀԿԿ ԿԿ բյուրոն քննարկել էր հանրապետության սահմաններից ադրբեջանական ազգության ներկայացուցիչների դուրս գալու փաստը և իր համապատասխան որոշմամբ անթույլատրելի համարել այն՝ ձեռնարկելով անհրաժեշտ ու անհապաղ միջոցառումներ³: Թերթում հայտնվում էր նաև Ադրբեջանական ԽՍՀ ԳԽ նստաշրջանի 1988թ. հունիսի 17-ի որոշման մասին, սակայն բացարձակ լրության էր մատնվում այն փաստը, որ Ադրբեջանական ԽՍՀ ԳԽ նստաշրջանը հոտն-

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս „Комсомольская правда“, „Сохраним единство“, 18.06.1988:

³ Տե՛ս ՀՀ Ազգային արխիվ, Ֆ.1, Ց.82, Գ.38, թ.4-5:

կայս հարգել էր կյանքից հեռացած պատգամավորների , սակայն չէր հարգել սումգայիթյան եղեռնագործության անմեղ զոհերի հիշատակը¹:

1988թ. հունիսի 23-ին «Սովետական Ղարաբաղ» թերթում տպագրվեց Ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ-ի 20-րդ գումարման խորհրդի 1988թ. հունիսի 21-ի որոշումը մարզում ստեղծված իրադրության և նրա կայունացման միջոցառումների մասին, ուր նշվում էր նաև պատգամավորների խորհրդի միջնորդության մասին ԽՍՀՄ գերագույն դատարանին՝ վերջինիս դատավարության տակ վերցնելու սումգայիթյան գործը²: Սակայն հանրապետական օրենսդիր մարմինների նստաշրջանների որոշումներից հետո խորհրդային կենտրոնական մամուլը լուրջության մատնեց նաև այդ իրողությունը՝ բավարարվելով միայն հայ ժողովրդին ուղղված տարբեր խրատական դիմումներով , գործադուլները, ցույցերն ու հանրահավաքները դադարեցնելու կոչերով:

«Պրավդա»-յի հատուկ թղթակից Ն. Դեմիդովը , զանց անելով 1988թ. հունիսի 21-ի որոշման բովանդակությունը, նրանում սուկ արձանագրում էր արցախահայերի անհամաձայնությունը ադրբեջանական բարձրագույն օրենսդիր մարմնի հունիսի 17-ի որոշմանը, հերթական անգամ փորձում էր նենգափոխել Արցախյան շարժման էությունը, երբ գրում էր, թե փետրվարին Ստեփանակերտում ցուցարարները Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմից դուրս բերելու պահանջն առաջադրել էին մարզում չլուծված սոցիալ – տնտեսական խնդիրների հետևանքով³: «Պրավդա»-յի հաջորդ համարում տեղ գտավ նաև այն կեղծ տեղեկատվությունը, թե ԼՂԻՄ մարզխորհուրդն ընդունել է հակասահմանադրական որոշում. չսպասելով ԽՍՀՄ ԳԽ համապատասխան որոշման ընդունմանը, հայտարարվել է , թե մարզը դուրս է գալիս Ադրբեջանի կազմից⁴ : Չնայած թերթի խմբագրությունը հաջորդ համարում ուղղում կատարեց՝ ապատեղեկատվության մեղքը բարդելով հողվածի հեղինակ Ս.Օհանյանի վրա⁵, սակայն այն ճշմարիտ, անկողմնակալ ու առարկայական տեղեկատվությունը, որին սպասում էր հանրությոը այն մտայնությամբ, թե դրա շնորհիվ հնարավոր կդառնա ստեղծված իրավիճակի նորմալացումը և խնդրի՝ փակուղուց դուրսբերումը, երբեք էլ տեղ չգտավ կենտրոնական մամուլի էջերում: Ավելին, Ն. Դեմիդովը, «Իզվեստիա» թերթի հատուկ թղթակից Ա.Կազիխանովը և այլք հռչակելով, որ հրապարակայնությունը վերակառուցման այն առավել շոշափելի հատկանիշն է, որը պատասխանատվություն է հաղորդում հանրությանը, որ «միայն նորմալ ժողովրդավարական պայմաններում է հնարավոր բարդ հիմնախնդիրների լուծումը»⁶, իրակա-

¹ Տե՛ս «Սովետական Ղարաբաղ», Ստեփանակերտ, 17 հունիսի>>,թիվ 143, 19.06.1988:

² Տե՛ս «Սովետական Ղարաբաղ», թիվ 145, 23.06.1988:

³ Տե՛ս „Правда“, „И снова Нагорный Карабах“, но. 176 , 24.06.1988:

⁴ Տե՛ս „Правда“, „Степанакерт: призыв не услышан“, но.178, 25.06.1988:

⁵ Տե՛ս „Правда“, „Поправка“, но.179, 26.06.1988:

⁶ Տե՛ս „Известия“, „Нагорный Карабах: Наладить нормальную работу“, 27.06.1988:

նում ընկրկեցին ու հեռացան իրենց իսկ հայտարարություններից և երբեք էլ պատասխանատվություն չստանձնեցին՝ հանգամանորեն լուսաբանելու Արցախյան հիմնախնդրի շուրջ իրողությունները և տալու դրանց անաչառ գնահատականը: Այստեղ տեղին է հիշատակել «Մոսկովսկիե նովոստի» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Ե. Յակովլևի այն միտքը, որ «...հրապարակայնության ամբողջ մեխանիզմը գործում է մինչև արտակարգ հանգամանքների ծագումը: Հենց որ դրանք վրա են հասնում, ծագում են «արտակարգ կարգադրություններ»: Մենք դրանում համոզվեցինք Չեռնոբիլի, Լեռնային Ղարաբաղի օրինակով»¹: Մինչդեռ, ինչպես իրավամբ գրում էին լրագրողներ Ն.Օրդինյանը և Յու. Կոզլովսկին, մարդիկ արտասովոր ոչինչ չէին ասում, պահանջում և հարցնում. «Ինչու՞ գործնականում ոչինչ չի հաղորդվում սումգայիթյան դատավարության մասին «կամ էլ՝ ինչու՞՝ այդքան հետաձգվեց հանրապետության բարձրագույն օրենսդիր մարմնի միջնորդությունը՝ ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի փետրվարի 20-ին կայացրած որոշման շուրջ»²:

Երիցս իրավացի էր գրող Ե. Միլիտոնյանը, երբ հաստատում էր, որ խորհրդային «...մամուլը... տարիներ շարունակ մամլված էր և արտացոլում էր զուտ պաշտոնական կարծիքն ու դիրքորոշումը»³: Նա գտնում էր, որ ժողովուրդների բարեկամության գաղափարի սոսկ «թմբկահարությամբ, տասնօրյակներով, հանդիսավոր երեկոներով հնարավոր չէ սքողել ...ժողովուրդների միջև պատմականորեն գոյություն ունեցող վիճահարույց հարցերը» և այս իմաստով էլ համարձակորեն արժեզրկված բառերի շարքն էր դասում նաև «ինտերնացիոնալ» բառը: Հեղինակը ավելորդ ու անտեղի զգուշություն էր համարում սումգայիթյան ոճրագործությունից մի քանի օր անց ԽՍՀՄ գրողների միության վարչության պլենումի հրավիրումը՝ ազգային հարաբերությունների խնդրի վերաբերյալ և իր խոր վրդովմունքն էր հայտնում, որ պլենումում որևէ մեկը չդատապարտեց սումգայիթյան եղեռնագործությունը և «չխոսեց այդ բաց վերքի մասին»⁴: Գրողն իրատես էր և միաստություն էր համարում հեշտ հաղթանակին հավատարմ՝ վկայակոչելով սումգայիթյան դատական վարույթը... Իսկ որտե՞ղ են կազմակերպիչները, քաղաքի հեռախոսներն անջատել հրահանգողները, միլիցիայի պաշտոնատար անձինք, որոնք այդպես էլ չլսելու են տվել դժվար կացության մեջ ընկած հայերի ահագանգերը: Տխրահոչակ քաղաքի նախկին առաջին քարտուղար Մուսլիմգադեն հեռացվել է կուսակցությունից: Թող հեռացվի, բայց արդյո՞ք նրա

¹ Տե՛ս <<Սովետական Հայաստան>>, <<Հրապարակայնությունն արդյոք ունի՞՞ սահմանափակում>>, 26.06.1988:

² Տե՛ս „ Социалистическая индустрия”, „ Когда стихают страсти”, но.143, 22.06.1988:

³ Տե՛ս „Սովետական Հայաստան>>, <<Վերագտնել իմաստները>>, 28.06.1988:

⁴ Տե՛ս նույն տեղում:

արձակուրդում երկար մնալն էր եղերական դեպքերի պատճառներից կարևորը, արդյո՞ք նրա ներկայությունը կարող էր կանխել ստույգ ծրագրած ջարդը...»¹:

Ողջ հայ ժողովուրդն ու առաջադեմ հանրությո՞ւնը տագնապով ու ցավով պահանջում էին դրական լուծում տալ արցախահայության՝ Արցախը մայր Հայաստանին միացնելու պահանջին, պահանջում էին ՁԼՄ-ներին լինել շիտակ ու ազնիվ և սումգայիթյան դաժան եղեռնագործության ու նրա դատավարության մասին խոսել ճշմարտության լեզվով, նաև՝ բեկանել ԽՍՀՄ լուսավորության միևնույնության համամիութենական մրցության 1987թ. ամփոփագրի արդյունքներով սումգայիթին փոխանցիկ կարմիր դրոշի արժանացնելը և սոցիալիստական մրցության հաղթող ճանաչելը: ²: Մինչդեռ կենտրոնական ՁԼՄ-ներն արձանագրելով, որ Լեռնային Ղարաբաղը դարձել է «հակամարտությունների հանրագումար», հավատարիմ կուսակցական գծին, անթույլատրելի էին համարում իրավիճակի որևէ փոփոխություն՝ խնդիրը սահմանափակելով միայն սոցիալ – տնտեսական և կրթական – մշակութային ոլորտներով. Համամիութենական 19-րդ կուսկոնֆերանսի մամուլ կենտրոնում ԽՄԿԿ ԿԿ կազմակերպական բաժնի վարիչի տեղակալ Բ.Միխայլովը պատասխանելով լրագրողների հարցերին, նշում էր. «...Լեռնային Ղարաբաղը Արևելքի և Արևմուտքի մշակույթների խաչաձևման եզակի անկյուն է : ...այստեղ ձևավորվել է եզակի մշակույթ: Այսօր Լեռնային Ղարաբաղը մեկ միասնություն է , մեկ օրգանիզմ: Չի կարելի այն պոկել, կտրել, չի կարելի երկու մասի բաժանել»³ : Անդրադառնալով Ֆրանս Դրեսս գործակալության՝ սումգայիթյան դատավարության ընթացքի վերաբերյալ հարցին, Բ.Միխայլովը արձանագրում էր, որ դատավարությունը կշարունակվի, իսկ չորս գործով արդեն կայացվել է դատավճիռը⁴:

Ամփոփենք. 1988թ. հունիս ամսին Արցախյան շարժման ծավալմանը համընթաց հանրապետական և ԼՂ մամուլում տեղ գտան հեղինակների՝ խորհրդային իրականության և կոմունիստական կուսակցության քաղաքականության հանդեպ իրատեսական դիրքորոշումներով և համարձակ, սթափ գնահատականներով հրապարակումներ: Նրանցում առավել մեծ ծավալով ընդգծվեց սումգայիթյան իրադարձությունների քաղաքական – իրավական սկզբունքային գնահատականի անհրաժեշտությունը, այդ զանգվածային – պետական հանցագործությունների չարամիտ խեղաթուրումը և դրանք որպես խուլիգանական նկատառումներով կատարված սպանություններ ներկայացնելու Ադրբեջանական ԽՍՀ գերագույն դատարանի փորձը, ինչպես նաև չարագործությունների հսկա-

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս <<Սովետական դպրոց>>, <<Խոսենք ճշմարտության լեզվով Ի՞նչ անուն տալ>>30.06.1988 :

³ Տե՛ս „ Комсомольская правда”, „ Гласность, правда, объективность”, 29.06.1988:

⁴ Տե՛ս նույն տեղում:

յական վնասը Ադրբեջանի և Հայաստանի ժողովուրդների քաղաքական – բարոյական կյանքին :

Մինչդեռ խորհրդային կենտրոնական մամուլը ԼՂԻՄ –ի շուրջ տեղի ունեցող իրադարձությունների, սոււմգայիթյան եղեռնը սանձազերծողների և իրագործողների դատավարության ընթացքի կիսատ – պռատ մեկնաբանություններով, համերաշխված լուրջամբ կամ մութ գաղտնապահությամբ շարունակեց իր որդեգրած ստի ու կեղծիքի, չքմեղության ամոթալի ուղեգիծը: Կենտրոնական մամուլի անհիմն, մակերեսային, ոչկառուցողական հրապարակումները, դիմում – հերյուրանքները բացարձակ գիտակցված արհամարհանք էին Արցախյան շարժման, սոււմգայիթյան եղեռնագործության զոհերի և , ընդհանրապես, հասարակական կարծիքի հանդեպ:

Բանալի բառեր – Արցախ, հիմնախնդիր, արդարություն, Սոււմգայիթ, ցեղասպանություն, մամուլ, կեղծիք, խեղաթյուրում, ապակողմնորոշում, պայքար:

Սուսաննա Մերոբյան, Սոււմգայիթյան ողբերգությունը խորհրդային պարբերական մամուլում 1988թ. հունիս ամսին (քննական վերլուծություն) - 1988թ. փետրվարի 27-29-ը Բաքվից 25կմ հեռավորության վրա գտնվող բազմազգ Սոււմգայիթում սանձազերծվեց հայության սպանող, որը ցնցեց քաղաքակիրթ հանրությունը:

Հեղինակը քննության է առնում 1988թ. հունիս ամսին խորհրդային մամուլի՝ սոււմգայիթյան իրողություններին վերաբերող հրապարակումները: Խորհրդային կենտրոնական մամուլը ապակողմնորոշեց ընթերցողին՝ խեղաթյուրելով փաստերը և չտալով սոււմգայիթյան ողբերգության իրավաքաղաքական ու բարոյական գնահատականը, չորակելով այն որպես ցեղասպանություն: 1988թ. հունիս ամսին խորհրդային հանրապետական և ԼՂ մամուլը ապահովեց բազմակարծություն և հանրույթի ու տեղեկատվության իրական կապ՝ լուսաբանելով սոււմգայիթյան ողբերգության արմատները և պատճառահետևանքային կապերը:

Сусанна Серобян, Сумгаитская трагедия в советской периодической печати за месяц июнь 1988г. - С 27-29 февраля 1988 года в многонациональном Сумгаите, находящемся в двадцатипяти километрах от Баку , произошла резня армянского населения, которая потрясла цивилизованное общество.

Автор рассматривает те публикации советской периодической печати, которые касались сумгаитских событий.

Советская центральная пресса дезориентировала читателя , искажая факты и не давая юридическую, политическую и моральную оценку сумгаитскому геноциду.

За месяц июнь 1988 года местная пресса смогла обеспечить плюрализм мнений и прямую связь между читателем и информацией. В прессе были освещены как причины, так и последствия сумгаитской трагедии.

Susanna Serobyan, Sumgait tragedy in the Soviet periodical press in June 1988

From February 27-29, 1988 in multinational Sumgait, located in 25 kilometers from Baku, took place a massacre of the Armenian population, which shocked the civilized society. The author considers those publications of the soviet press release that referred to the Sumgait events in June 1988. Central Press disoriented reader, distorting the facts and not giving legal, political and moral assessment of Sumgait genocide. The soviet republican and Nagorno-Karabakh press was ensure diversity of opinions and a direct connection between the reader and information, covering both causes and consequences of the Sumgait tragedy in June 1988.

**1903 թ. ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ
ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՄԱՍՈՒԼՈՒՄ**

ՄԿՐՏԻՉ ԴԱՆԻԵԼՅԱՆ

1903 թ. հունիսի 12-ին Ռուսաստանի կայսր Նիկոլայ 2-րդը հաստատում է հայկական եկեղեցուն պատկանող հողերը և գույքը բռնագրավելու մասին հրամանագիրը, որը ոտնահարում էր ոչ միայն հայոց եկեղեցու իրավունքները, այլև ուղղված էր հայ ժողովրդի դեմ՝ ընդգրկելով նրա թե՛ քաղաքական, թե՛ հասարակական, թե՛ տնտեսական, թե՛ կրթական և թե՛ մշակութային շահերը: Հիմնահարցի ուսումնասիրման համար մեծ կարևորություն է ստանում ժամանակի հայկական տեղական մամուլի էջերում տեղ գտած այն նյութերի հրապարակումը, որոնք այս կամ այն ձևով կամ չափով անդրադարձել են 1903 թ. հունիսի 12-ի ցարական հրամանագրին: Չպետք է մոռանալ, որ 19-րդ դարավերջի և 20-րդ դարակզբի հայ իրականության մեջ պարբերական մամուլն ուներ մեծ դերակատարություն: Այն շաղկապող օղակ է դառնում ազգահավաքման գործում: Արևելահայ մամուլն, անշուշտ, առաջինն էր, որ պետք է անդրադառնար 1903 թ. հունիսի 12-ի ցարական հրամանագրին: Այդ շարքում առաջինը Թիֆլիսում հրատարակվող «Մշակ»-ն էր: Գործելով ցարական խիստ ցենզուրայի (գրաքննության) պայմաններում, ցավոք, թերթը զրկված էր հրամանագրի ինքնուրույն մեկնաբանությունից և վերլուծությունից:

Չպետք է մոռանանք, որ դեռ 19-րդ դարի 80-ական թթ. հայ հասարակական-քաղաքական կազմակերպությունների դեմ ուղղված ցարական իշխանությունների հետապնդումները չորջանցեցին նաև հայկական մամուլը և մասնավորապես «Մշակ»-ը: 1883 թ. մարտին Երևանում գործող «Հայասեր-ազգասեր» կազմակերպությունը բացահայտվեց և նրա ղեկավարները աքսորվեցին: Դա իշխանություններին առիթ տվեց «Մշակ»-ի խմբագրությունում և Գրիգոր Արծրունու, ապա Բաֆֆու բնակարաններում կատարված խուզարկությունների համար, որի հետևանքով «Մշակ»-ը ժամանակավորապես դադարեցվեց, իսկ Բաֆֆին ենթարկվեց տնային կալանքի¹: «Մշակ»-ի 1903 թ. հուլիսի 31-ի համարում կարդում ենք. «Кавказ» պաշտոնական լրագիրը մի շարք հոդվածներ է նվիրում հայ եկեղեցու կալվածների գրավման հարցին: Դա մի ընդարձակ զեկուցում է, թե մինչև այժմ ինչպես է լուծվել այդ նույն հարցը Ռուսաստանում այլադավան եկեղեցիների և վանքերի կալվածների վերաբերմամբ (N 197, 198, 199 Кавказ)»²: Այստեղ մեջբերվում են այն բոլոր «պատճառները», որոնք իշխանություններին «ստիպել» էին գնալ այդ քայլին և որ դա արվել է ի բարօրություն հայ եկեղեցու և հայ հոգևո-

¹ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ.6, Երևան, 1981, էջ 146:

² Տե՛ս «Մշակ», 1903 սեպտեմբեր, N 197, N 198, N 199:

րականության: Հաջորդ համարը գրում է, որ դրանցով (հունիս 12-ի հրամանագրով-Մ.Դ.) ամենևին չեն խախտվում հայ եկեղեցու իրավունքները: Նա առաջվա նման մնում է իր բոլոր անշարժ գույքերի և կալվածների, դրամագլուխների սեփականատեր¹: Սրանով հակադրության մեջ էին դրվում հոգևորականության շերտերը. «...Նախատեսվում է առանձին օժանդակ դրամագլխի ստեղծում՝ եկեղեցական կալվածների եկամտից 5% հետ գցելու միջոցով, որը հնարավորություն կտա կառավարությանը բավարար հասույթով ապահովել ոչ միայն բարձր, այլև ստորին, ծխական հոգևորականությանը: Սրանով նաև կոչնչանա գյուղերի կախումը հոգևոր վարչությունից, որ այժմ մի անխրոնիզմ է»²: Այստեղ տրամաբանական հարց է առաջանում. ինչու՞ էր կառավարությունը ստորադաս հոգևորականության նյութական ապահովվածության հարցը լուծում հայոց եկեղեցու եկամուտների հաշվին, այլ ոչ պետական միջոցներով:

Իրականում կառավարությունը ցանկանում էր սեպ խրել հայ հոգևորականության տարբեր շերտերի մեջ՝ առաջնորդվելով դեռևս Հռոմեական կայսրության որդեգրած «բաժանի՛ր, որ տիրե՛ս» կարգախոսով: Սրանով նա կհեշտացներ իր խնդիրը և գույքի բռնագրավման ժամանակ տեղ գտնելիք հնարավոր դիմադրությունը հնարավորինս կմեղմանար:

«Մշակ»-ի հաջորդ համարներում խոսվում է հակացարական առաջին ելույթների մասին, որոնք տեղի էին ունեցել Կարսում և Բաքվում (N 192, N 193, N 196)³: Ցարական հրամանագիրը «Մշակ»-ում ամբողջությամբ տպվում է միայն սեպտեմբերի 7-ին «**Կառավարչական կարգադրություններ**» վերտառությամբ հոդվածում, որում տրված է նաև եկեղեցական գույքն ու կալվածները համապատասխան նախարարություններին հանձնելու կարգը սահմանող **կանոնները**⁴: Այն, որ թերթն ի գործու չէր թեմային առնչվող որևէ ինքնուրույն հրապարակում կատարել ակնհայտ երևում է այն փաստից, որ լրագրի հերթական համարներում խախտված է ժամանակագրական հաջորդականությունը: Չնայած այն հանգամանքին, որ Գանձակի և Թիֆլիսի հակացարական ելույթները տեղի էին ունեցել ավելի վաղ, քան Կարսի և Բաքվի իրադարձությունները, թերթում ավելի ուշ են ներկայացվում Գանձակի և Թիֆլիսի ելույթները (N 197) ⁵: Սա պայմանավորված էր այն հանգամանքով, որ սկզբում իշխանություններն արգելել էին տեղեկություններ հաղորդել Գանձակի և Թիֆլիսի իրադարձությունների մասին՝ հուսալով, որ դրանց մասին անտեղյակությունն այլ վայրերում իրենց կօգնի խուսափել առճակատումներից, սակայն, տեսնելով, որ դա ապարդյուն է, իշխանությունը որոշեց հրապարակել տեղեկատվություն՝ հույս ունենալով, որ այժմ դա կստեղծի

¹ Նույն տեղում, 1903 օգոստոս, N 164:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, N 192, N 193, N 196:

⁴ Տե՛ս «Մշակ», 1903, N 195:

⁵ Նույն տեղում, N 197:

վախի մթնոլորտ և կհեշտացնի եկեղեցական գույքի բռնագրավումը: «Մշակ»-ի հաջորդ համարներում (N 197, N 202, N 203, N 209), տրվում է տեղեկատվություն՝ Կարս, Գանձակ, Շուշի, Նուխի և Ալեքսանդրապոլ քաղաքներում տարբեր օրերին մտցված սաստկացրած դրության մասին: Նյութեր են հրապարակվում նաև Կովկասի կառավարչապետ Գոլիցինի դեմ 1903 թ. հոկտեմբերի 14-ին կատարված մահափորձի առթիվ (N 226, N 229)¹: Հետաքրքրական է այն, որ ռուսական մամուլում շրջանառության մեջ էր դրվել այն կեղծ թեզը, թե Գոլիցինի դեմ մահափորձ էր կատարվել շահադիտական նկատառումներով:

«Մշակ»-ի հոկտեմբերի 23-ի համարում՝ մեջբերելով «Новое Время» լրագիրը, ասվում է, որ Կովկասյան կառավարչապետ իշխան Գոլիցինի վրա հարձակվողները կամեցել են ձեռք գցել կառավարչապետին՝ նրա համար փրկագին ստանալու դիտավորությամբ²: Մինչդեռ մեզ հայտնի է, որ մահափորձի հեղինակները հնչակյաններ էին և որ այդ երեքը արևմտահայեր էին՝ մշեցի Միերը, բուլանիսցի Սարգիսը և Պողոսը³: Հնչակյան կուսակցությունն, անշուշտ, այդ քայլին գնացել էր Գոլիցինին ֆիզիկապես ոչնչացնելու նպատակով՝ չունենալով փրկագնի ակնկալիք: Ռուսական մամուլում այդ վարկածի ակնարկումը բնավ չի նշանակում, թե իրենք՝ ռուսական իշխանությունները, չէին հասկանում մահափորձի իրական նպատակը և հայկական կուսակցությունների գործողությունները, որոնց նպատակը ահաբեկման ճանապարհով ցարական պաշտոնյաներին՝ հայության դեմ ուղղված վայրագ գործողություններից հետ պահելն էր: Մեր կարծիքով հիշյալ վարկածի արծարծումն ուներ ավելի շատ քարոզչական նպատակ և այդ քայլով իշխանությունները չէին ցանկանում վեր հանել մահափորձի իրական նպատակները և կովկասյան ազգերին փորձում էին ապակողմնորոշել և ապացուցել, որ դա մասնավոր անձանց ձեռնարկում է: Լրագրում մինչ 1905 թ. օգոստոսի 5-ի համարը բացակայում է որևէ վերլուծություն՝ կապված հրամանագրի հետ: Միայն այդ համարից սկսյալ տեսնում ենք որոշ վերլուծություններ և նույնիսկ քննադատություն: 1905 թ. օգոստոսի 5-ի համարում գրված է. «Հասկանալի է, որ այս ակտը (խոսքը 1905 թ. օգոստոսի 1-ի ցարական հրամանագրի մասին է՝ Մ.Դ.) մեծ ցնծություն պետք է պատճառի ոչ միայն Ռուսաստանի հայերին, որոնց ուղղակի վերաբերում է, այլև ի սփյուռ աշխարհի ցրված ամբողջ հայ ազգին: ...Վերջին 10-ը տարիների ընթացքում կովկասյան նախկին իշխանության հայերի դեմ ձեռք առած մի շարք ճնշող միջոցները առաջ էին բերում հայ ժողովրդի մեջ բարոյական վիատություն և լքում...: Ծանր էր հարվածը ուստի և նա խորապես ցնցեց հայ ազգը և եկեղեցին»⁴: 1905 թ. օգոստոսի 9-ի համարում քննադատ-

¹ Նույն տեղում, N 197, N 202, N 203, N 209, N 226, N 229:

² Նույն տեղում, N 232:

³ Տե՛ս Գ.Հովհաննիսյան, Հնչակյան կուսակցության պատմություն, Երևան, 2012, էջ 146:

⁴ Տե՛ս «Մշակ», 1905 օգոստոս, N 154:

վում է կովկասյան նախկին իշխանությունը. «...Գոլիցինյան քաղաքականությունը մահացու կերպով վիրավորեց հայության հոգին իր անվստահությամբ, իր հալածանքներով, նա քանդեց, խեղդեց այն նեցուկը, այն աջակիցը, որ եղել էր և պատրաստ է լինելու այժմ հայ ժողովուրդը ռուս ազդեցության համար ամեն տեղ»¹: Այստեղ դժվար է չկիսել հեղինակի արտահայտած տեսակետները, քանզի հայությունը միշտ էլ եղել էր ցարական իշխանությունների նեցուկը: Ցանկալի կլիներ, որ ի տարբերություն հեղինակի արտահայտած կարծիքի, հայությունը առաջնորդվեր իր շահերով և ոչ թե պատրաստ լիներ ռուս ազդեցության համար ամեն տեղ պայքարել: Ցավոք այս մտայնությունը հայության մեջ խորը արմատներ ուներ՝ ինչի պտուղների դառնությունը հայությունը զգաց առաջին աշխարհամարտի տարիներին: Հիշյալ քննադատական հրապարակումը բնավ չի նշանակում, թե լրագիրը ազատվել էր ցարական գրաքննության ստուգումներից: Այդ քննադատական հոդվածները ևս թույլատրված էին նույն իշխանությունների կողմից, որոնք այժմ Գոլիցինի դարձրել էին քավության նոխազ և ցանկանում էին հայ ժողովրդին հավատացնել, որ 1903 թ. հունիսի 12-ի հրամանագրի ընդունումը կապված էր միայն Գոլիցինի անվան հետ: Հիշյալ պնդումը հեռու է իրականությունից: Ցավոք այդ պնդման ճշմարտացի լինելը փորձում էին ապացուցել ոչ միայն ռուսները, այլև դա գերիշխող դարձավ նաև հայ հասարակական-քաղաքական շրջանակներում: Հետագայում այդ թեզը տարածվեց նաև հայ պատմագրության մեջ և գտնվեցին շատ պատմաբաններ, որոնք ևս ամեն գնով փորձում էին ապացուցել, որ հունիսի 12-ի հրամանագիրը միայն Գոլիցինի ցավագար ուղեղի արգասիքն էր: Մինչդեռ նրանք չպետք է մոռանային, որ ցարական իշխանությունների՝ հայ դպրոցի և եկեղեցու դեմ ուղղված քայլերը ունեին ավելի հին պատմություն և դեռ մինչև 1896 թ., Գոլիցինի կառավարչապետ դառնալը, 1870-ական և 1880-ական թթ. 2 փուլով անցկացվել էր հայ դպրոցների փակում, որոնց արդյունքում փակվել էր 350-ից ավելի դպրոց:

Արևելահայ մամուլի մյուս օրգանը, որում մանրամասն անդրադարձ է կատարված 1903 թ. հունիսի 12-ի հրամանագրին, «Մուրճ»-ն է: Հրատարակվելով Թիֆլիսում և գործելով ցարական խիստ գրաքննության պայմաններում՝ «Մուրճ»-ը ևս զրկված էր հիմնահարցին նվիրված ինքնուրույն վերլուծություն կատարելու հնարավորությունից: Ցարական գրաքննության գործողություններն իրենց մանրախնդրությամբ երբեմն զավեշտի էին հասնում: Այստեղ տեղին է մեջբերել ժամանակի հեղինակներից Չալխուշյանի վերլուծությունից մի հատված. «...2-ի թույլատրվել սնկերի վնասակարության մասին հոդվածը, որովհետև, գրաքննիչը պարզաբանում է. «սնկերը-ուղղափառների սիրելի ճաշատեսակն է»: Տպագրության չթույլատրվեց չորացրած մրգերի արտահանման մասին հոդվա-

¹ Նույն տեղում, 1905 օգոստոս, N 157:

ծը՝ արտահանման մասին խոսելու ժամանակը չէր: Աստված գիտի, թե ինչ կարող էր նկատի ունենալ հեղինակը¹:

«Մուրճ»-ի 1903 թ. սեպտեմբերի համարում մեջբերվում է ցարական հրամանագիրն ամբողջությամբ, իսկ «Պաշտօնական հաղորդագրություն» վերտառությամբ հոդվածում նկարագրվում է օգոստոսի 29-ի Գանձակի հակացարական ելույթը, ապա օգոստոսի 31-ին Թիֆլիսում, սեպտեմբերի 2-ին Կարսում, նույն օրը Բաքվում տեղի ունեցած հակացարական ելույթները: Հաջորդիվ նկարագրվում է նաև սեպտեմբերի 12-ին Շուշի քաղաքում եկեղեցական կալվածները բռնագրավելու ժամանակ տեղ գտած ժողովրդական դիմադրության ընթացքը²: Մեզ համար հետաքրքրական է հատկապես «Կարգադրություններ մամուլի վերաբերեալ» հոդվածը, որում ասվում է «Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետի պաշտօնակատարի կարգադրութեամբ վնասակար ուղղութեան պատճառով դադարեցրուած է 2 ամսով «Մշակ» և «Новое обозрение» լրագրների հրատարակութիւնը...»³: Թե ինչ ասել է վնասակար ուղղություն հոդվածում չի մեկնաբանվում: Այստեղ, թերևս, հարցը կայանում է նրանում, որ իշխանությունները ոչ թե նկատի ունեին առկա բացթողումները, քանզի մենք անդրադարձել ենք մասնավորապես «Մշակ»-ի հրատարակությանը, որտեղ ինքնուրույն դիրքորոշման որևէ նշույլ չկա, այլև սրանով իշխանությունների համար մամուլի որևէ օրգանով հակացարական ելույթներին թեկուզ անդրադառնալը կարող էր անկանխատեսելի արձագանքներ ունենալ թե՛ Արևելյան Հայաստանում, թե՛ Ռուսաստանում, թե՛ արտասահմանում:

Արևելահայ մամուլի մյուս կարևոր օրգանը, որն անդրադարձել է հիմնահարցին, Սպանդար Սպանդարյանի՝ Թիֆլիսում հրատարակվող «Նոր-դար»-ն է: «Նոր-դար»-ը թեմային անդրադառնում է սկսած հակացարական ելույթների 2-րդ փուլից՝ մասնավորապես 1903 թ. սեպտեմբերի 2-ին Կարսում տեղի ունեցած դեպքերի նկարագրությունից⁴: Հաջորդ համարում նկարագրված է Բաքվի ելույթը⁵, ապա հրապարակվում է Ներքին գործերի նախարար Պլենյի կողմից 1903 թ. հունիսի 30-ին հաստատած կանոնները: Այնուհետև նկարագրված է Շուշիում տեղի ունեցած դեպքերը, ապա տրված է տեղեկատվություն Պլենյի կողմից սեպտեմբերի 15-ին Գանձակ, Շուշի և Նուխի քաղաքներում սաստկացրած պահպանության դրություն մտցնելու մասին կանոնները⁶: «Քրոնիկոն» վերտառությամբ հոդվածում նշվում է, որ մինչ այդ հայոց եկեղեցապատկան գույքի բռնագրավումն ավարտվել է Թիֆլիսում, Գանձակում, Նուխում, Շուշում, Բաքվում, Քու-

¹ St'e u Чалхушьянь, 'Армянский вопрос в России', Ростов на Дону 1905, с. 14:

² St'e u «Մուրճ», 1903 սեպտեմբեր, N 9:

³ Նույն տեղում, 1903 նոյեմբեր, N 11:

⁴ St'e u «Նոր-դար», 1903 սեպտեմբերի 4, N 157:

⁵ Նույն տեղում, 1903 սեպտեմբերի 5, N 158:

⁶ Նույն տեղում, 1903 սեպտեմբերի 11, N 161, սեպտ. 17, N 164:

թայիսում, Բաթումում, Զաքաթայի շրջանում, Սև ծովի նահանգի Թուափսէի և Մոչու շրջաններում, Եկատերինադարում, Արմաիրում, Ղզլարում, Մոզդուկում, Պետրովսկում և Դերբենտում: Այնուհետև այդ շարքը լրացնում են Վաղարշապատ, Օշական, Մուղնի և Եղվարդ գյուղերը: Հաջորդ համարում կարդում ենք . «Կալկադ»-ն իւր N 246-ից արդէն սկսել է հրատարակել հայոց եկեղեցապատկան և վանքապատկան յարքունիս գրաւուած կալուածների և դրամագլուխների մանրամասն ցուցակը»¹: Մեր կարծիքով պաշտոնական մամուլի օրգանով նման տվյալների հրապարակումը պայմանավորված էր ոչ թէ բնակչությանը այդ մասին տեղեկացնելու մղումով, այլ հետապնդում էր հայության նկատմամբ այդ միջոցով ճնշում գործադրելու նպատակ, որով փորձ էր արվում ապացուցել, որ ժողովրդական դիմադրությունն ապարդյուն է և իշխանությունը հասել է իր նպատակին: Լրագիրը հողվածների մի ամբողջ շարք է նվիրում 1903 թ. հոկտեմբերի 14-ին կառավարչապետ Գուլիցինի դեմ կատարված մահափորձին և նրա առողջական վիճակի գրեթէ ամենօրյա ներկայացմանը²: Այնուհետև սկսում են բացակայել հիմնահարցին վերաբերող հողվածները մինչև 1905 թ. օգոստոս ամիսը, ինչը բացատրվում է նրանով, որ ցարական ցենզուրան չէր թույլատրում հրապարակել տվյալներ հիմնահարցի թեմայով՝ այն դեպքում, երբ 1904 թ. լի է ցարական իշխանության՝ հայության դեմ ուղղված բռնությունների և ձեռքակալությունների փաստերով, ինչպես նաև ցարական չինովնիկների դեմ հայերի կազմակերպած սպանություններով կամ մահափորձերով: 1905 թ. օգոստոսի 2-ի համարում պատմական անդրադարձ է կատարվում հիմնահարցին, խոսվում է ծխական դպրոցների փակման, ապա դրան հետևած եկեղեցական կալվածների գրավման մասին. «..Առաջին դեպքում մի ամբողջ ժողովրդի մայրենի լեզուն էր խափանուում, իսկ երկրորդ դեպքում՝ ազգի հաւատն էր վտանգւում: Բայց այդ ամենը որոշ ռեժիմի (գուլիցինյան-Մ.Դ) հետևանք էր, մի թիրիմացութեան, որին շատ զոհ բերուեց: ...Կառավարիչ սենատին օգոստոսի 1-ին ուղղած Բարձրագոյն Ուկագով վերականգնում էն հայոց ազգի անկապտելի իրաւունքները: Եկեղեցական կալուածները և նրանց կառավարութիւնը վերադարձնւում է հայոց Եկեղեցուն»³: Այնուհետև տրվում է 1905 թ. օգոստոսի 1-ի հրամանագրի տեքստը⁴: Այստեղ կրկին հրամանագրի ընդունման ողջ մեղքը բարդվում է Գուլիցինի վրա, սակայն նույն լրագիրը, ճշմարիտ խոսքին դեմ չգնալու համար, պետք է նշեր, որ հայ դպրոցների փակումը սկսվել էր դեռ 1870-ական թվականներից և Գուլիցինը շարունակում էր իր նախորդների սկսած գործը՝ տալով այդ քաղաքականությանն ավելի կոշտ ընթացք:

¹ Նույն տեղում, 1903 սեպտեմբերի 18, N 165:

² Տե՛ս Նոր-դար, 1903 հոկտեմբերի 16, N 185, հոկտեմբերի 17, N 186, հոկտեմբերի 22, N 188, հոկտեմբերի 28, N 192, N 203:

³ Նույն տեղում, 1905 օգոստոսի 2, N 2:

⁴ Նույն տեղում:

Այսպիսով, արևելահայ մամուլի՝ մեր կողմից լուսաբանված օրգանները («Մշակ», «Մուրճ», «Նոր-դար») 1903 թ. հունիսի 12-ի հրամանագրի ընդունման և կիրառման, իսկ ապա չեղարկման հարցին անդրադառնում էին այնքանով, որքանով դա թույլ էր տալիս ցարական գրաքննությունը: Մակայն վերոնշյալը բնավ չի նվազեցնում նրանց աղբյուրագիտական արժեքը: Լինելով ժամանակի արևելահայ կյանքն արտացոլող կարևոր օղակ, նրանք, իրենց սեղմ հնարավորությունների շրջանակներում, կարողացել են հնարավորինս ամբողջական ներկայացնել հիմնահարցը: Նրանց շնորհիվ էր, որ արևելահայությունը քիչ թե շատ ամբողջական տեղեկատվություն էր ստանում հրամանագրի ընդունման, կիրառման և չեղարկման ժամանակ տեղ գտած իրադարձությունների մասին: Վերոհիշյալ լրագրերի վերլուծությունների մեջ մեծ բացթողում կարելի է համարել այն, որ նրանք հիմնահարցը ներկայացնում էին ռուսական պաշտոնական աղբյուրներին հղում կատարելով, այն դեպքում, երբ նրանք որոշ դեպքերում կարող էին կատարել ինքնուրույն վերլուծություններ և տուրք չտալին հիմնահարցի ներկայացման պաշտոնական վարկածներին:

Բանալի բառեր - մամուլ, հրապարակում, ցարական, գոհեր, հրամանագիր, հողված, եկեղեցապատկան, գրաքննություն, հակացարական, դիմադրություն, հիմնահարց, իշխանություններ:

Մկրտիչ Դանիելյան, 1903 թ. հունիսի 12-ի օրենքի ընդունման և կիրառման հիմնահարցի արտացոլումը արևելահայ մամուլում - 1903 թ. հունիսի 12-ին Ռուսաստանի կայսր Նիկոլայ 2-րդը հաստատում է հայկական եկեղեցուն պատկանող հողերը և գույքը բռնագրավելու մասին հրամանագիրը, որի ընդունումը ոստնահարում էր ոչ միայն հայոց եկեղեցու իրավունքները, այլև ուղղված էր հայ ժողովրդի դեմ՝ ընդգրկելով նրա թե՛ քաղաքական, թե՛ հասարակական, թե՛ տնտեսական, թե՛ կրթական և թե՛ մշակութային շահերը: Հիմնահարցի ուսումնասիրման համար մեծ կարևորություն է ստանում ժամանակի տեղական հայկական մամուլի էջերում տեղ գտած այն նյութերի հրապարակումը, որոնք այս կամ այն ձևով կամ չափով անդրադարձել են հրամանագրին: Արևելահայ մամուլն, անշուշտ, առաջինն էր, որ պետք է անդրադառնար 1903 թ. հունիսի 12-ի ցարական հրամանագրին: Արևելահայ մամուլի օրգաններից հիմնահարցի վերաբերյալ ընդարձակ հրապարակումներով աչքի են ընկնում «Մշակ», «Մուրճ» և «Նոր-դար» թերթերը, որոնք, գործելով ցարական գրաքննության պայմաններում, կարողացել են հնարավորինս ամբողջական ներկայացնել հիմնահարցը:

Мкртич Даниелян, Публикации восточно-армянской прессы в связи с принятием и применением закона от 12-го июня 1903 г. - 12-го июня 1903 г. царь России Николай 2-ой подписал указ о конфискации земель и имущества, принадлежавших армянской церкви, принятие которого ущемляет не только права армянской церкви, но и направлен против армянского народа, включая и политические,

и общественные, и образовательные и культурные интересы. Для изучения данной проблемы приобретает особую важность публикация материалов, нашедших место в армянской местной прессе, где тем или иным способом было отражение царского указа от 12-го июня 1903 г..Естественно, восточно-армянская пресса должна была первой обратить внимание данному указу. Обширными публикациями о данной проблеме отличаются газеты «Мшак», «Мурч» и «Нор-дар», которые, действуя в условиях царской цензуры, смогли по мере своих возможностей комплексно представить проблему.

Mkrtich Danielyan, Publikacions of Eastern Armenian press related to the adoption and enforcement of the 1903 June 12 law - In 1903 on June 12 Russian Emperor Nikolay 2 affirmed the decree on confiscation of the property and lands belonging to the church but was also against Armenian people including their political, social, economic, educational and cultural interests. To investigate this issue the publication of the subjects, found place in the Armenian local press of that time, which somehow had referred to the 1903 June 12 tsarist decree, got great importance. Eastern Armenian press was certainly the first to refer to the 1903 June 12 tsarist decree. Those of Eastern Armenian press organs that strike one's eye with their extended publications are «Mshak», «Murch» and «Nor-dar» newspapers that acting in the conditions of the tsarist censorship were able to represent the issue entirely as far as possible.

ՕՇԻՆ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ ԳԱՂԹԸ ԿԻԼԻԿԻԱ 1073 Թ.

ԱՐԱՐԱՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

XI-րդ դ. երկրորդ կեսին Բյուզանդական կայսրության թուլացումը նպաստեց սելջուկ-թուրքերի՝ Փոքր Ասիայի արևելքում նվաճողական արաշավանքներ իրականացնելու համար: 1064 թ. սելջուկ-թուրքերը Ալփասլան սուլթանի (1063-1072) գլխավորությամբ պաշարեցին Անի քաղաքը: Բյուզանդական կայսրորդը չկարողացավ կազմակերպել Անիի պաշտպանությունը: 1064 թ. օգոստոսի 16-ին քաղաքը գրավվեց¹: Այս արշավանքից հետո հայության գաղթը դարձավ զանգվածային²: Բագրատունյաց թագավորության անկումից հետո (1045) Կարսում իր գոյությունը դեռևս պահպանում էր Գագիկ Կարսեցու (1029-1065) թագավորությունը, բայց Անիի գրավումից հետո վերջինս, վախենալով սելջուկ-թուրքական հարձակումներից, իր թագավորությունը հանձնեց Բյուզանդիայի Կոնստանդին Դուկաս կայսերը (1059-1067) և փոխարենը ստացավ Ծամնդավ³ բերդաքաղաքը⁴: Հայաստանում ստեղծված այսպիսի պայմաններում Գանձակի մոտ գտնվող իր տիրույթից՝ «Մայրաց ջուրքից», Օշին իշխանը ևս իր ընտանիքի և զորագնդի հետ 1073 թ. գաղթում է Կիլիկիա: Օշինի գաղթին անդրադաձող միակ աղբյուրի՝ Սամուել Անեցու շարունակողի երկում կարդում ենք. «Ի ՇԻԲ (1073) ամին ի բռնութենէն Տաճկաց (իմա՝ Սելջուկների- Ա. Ս.) ել Օշին իշխանն ի ժառանգութենէն իւրմէ որ կոչի Մայրաց ջուրք հանդէպ Գանձակայ ունելով ընդ իւր գեղբայրն իւր զՀալկամ եւ զմայրն իւր եւ զամուսինն իւր, ազատագունդ իշխանօքն եւ ամենայն աղիսին, ունելով ընդ իւր եւ զմատն սուրբ առաքելոյն Պետրոսի: Եւ եկեալ յաշխարհն Կիլիկեցոյ եւ աջողմամբն Քրիստոսի եւ սուրբ մատին առաքելոյն էառ ի Տաճկաց եւ զականաւոր բերդն Լամբրօն որ է մերձ առ ստորոտով լերինն Տօրոսի ի գահ մայրաքաղաքին Տարսոնի⁵»: Ըստ Սամուել Անեցու շարունակողի՝ Օշին իշխանը Կիլիկիա գաղթելիս տանում է սուրբ Պետրոս առաքյալի մասուն-

¹Տե՛ս **Մանանդյան Հ.**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Երևան, 1977, էջ 63: Հմմտ. «Հայ ժողովրդի պատմություն», ՀՄՍՀ ԳԱ հրատ., հ. III, Երևան, 1976, էջ 456:

²Տե՛ս **Մանանդյան Հ.**, նշվ. աշխ., էջ 65:

³ Ծամնդավ բերդաքաղաք (բերդ, ամրոց, քաղաք) Փոքր Հայքում, Կեսարիա քաղաքից 30-35 կմ արևելք, Սարոս գետի Ծամնդավ (այժմ՝ Զամանթի) վտակի ափամերձ ապառաժոտ լեռան վրա: Այժմ կոչվում է Զամանթի կալեսի: Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Դ-Կ, Երևան, 1988, էջ 840-841: Հմմտ. **Hild Friedrich und Marcell Restle**, «<Kappadokien (Kappadokia, Charsianon, Sebasteia und Lykandos)>», Tabula Imperii Byzantini, Band. 2, Wien 1981, S. 300-301:

⁴Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 151: Վարդան վարդապետը գրում է, որ Կարսի Գագիկ Բագրատունին, բացի Ծամնդավից, ստացել է նաև Լարիսա, Կոմանա, Ամասիա քաղաքները և 100 գյուղ, տե՛ս «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ», Վենետիկ, 1962, էջ 102:

⁵ Սամուել Անեցի եւ շարունակողներ, «Ժամանակագրություն», աշխատասիրությամբ **Մաթևոսյան Կ.**, Երևան, 2014, էջ 195:

քը: Նա գրավում է Լամբրոնի բերդը¹, որը գտնվում էր Տաբսոն մայրաքաղաքի մոտ (Տաբսոնը պատկանում էր Փիլարտոս (Վահրամ) Վարաժնունուն²), սակայն ձեռագիր հիշատակարաններից տեղեկանում ենք, որ Օշին իշխանը ոչ թե գրավել է հիշյալ բերդը, այլ ստացել է Վասպուրականից գաղթած իշխան Ապլղարիպ Արծրունուց³, և երբ Օշին իշխանը հաստատվում է Լամբրոնում, ձեռնամուխ է լինում երկար ժամանակ բարձիթողի մնացած բերդի նորոգմանը և տեղադրում է սուրբ Պետրոսի մատունքը⁴: Օշինը դարձավ Լամբրոնի առաջին իշխանը և պատմագիտության մեջ հայտնի է Օշին Ա անունով:

Օշին Ա-ի ծագումը

Օշին անունը, ըստ Հ. Աճառյանի, ծագում է պարսկական Ավշին (**Afsin**) անունից⁵: Պատմագիտության մեջ Օշին Ա-ի անձի շուրջ կա բանավեճ և թյուրըմբռնում: Աղբյուրների պատմաբան Ֆ. Մամեդովան վերջինիս վերագրում է աղվանական ծագում, ով տեղափոխվել է Գանձակից և հաստատվել Կիլիկիայում: Զարգացնելով այս միտքը՝ Ֆ. Մամեդովան պնդում է, որ Հեթումյանների հիմնադիր Օշին Ա-ն աղվանական շառավիղ է՝ փորձելով ապացուցել, որ հետագայում Կիլիկիայի հայկական պետությունն էլ աղվանական է: Պետք է նշել, որ սա քննություն չբռնող տեսակետ է և պատմակեղծարարության հերթական անհաջող փորձ⁶: Հետազոտողների մի մասը, հիմնվելով Աննա Կոմենեայի աշխատությունում նշվող Ասպետես գորականի մասին տեղեկությունների վրա, նրան համարում է Արշակունիների տոհմի շառավիղ: Վերջինս 1081 թ. մասնակցել էր Ալեքսիոս Կոմենենոսի (1081-1118 թթ.)՝ Իտալիայի նորմանական առաջնորդ Ռոբերտ Գվիսկարի դեմ մղած պատերազմին և 1106-1108 թթ. կայսեր կողմից նշանակվել էր Կիլիկիայի բյուզանդական կառավարիչ⁷՝ ստրատոպեդարխիոս⁸

¹ Լամբրոն կամ Լամբրուն՝ Հայկական Կիլիկիոյ ամենեւն նշանատր եւ պատմական յիշատակներով ճոխ բերդերէն մէկն է. կը գտնուի Տաբսոնէն 145 քիլոմէր հեռու, դէպի արևմուտք, Տաւրոսի լեռներուն մէկ բարձունքին վրայ, այսօրուան Թուրքիոյ Nemrun (Նեմրուն), տե՛ս Հայկական Կիլիկիոյ բերդերն ու բերդաքաղաքները, գրեց **Յովհաննէսյան Մ.**, Վենետիկ, 1989, էջ 68:

² Տե՛ս **Chronique de Michel le Syrien**, patriarche jacobite d'Antioche (1166-1199), ed. et trad. en français par J.-B. Chabot, t. 3, Ernest Leroux, Paris, 1905, p. 173:

³ Ապլղարիպ Արծրունին Վասպուրականի Թոռնվան գավառի իշխան Խուլ Խաչիկի թոռն էր, Հասանի որդին, ով գաղթել էր հայրենի բնակավայրից սելջուկ-թուրքերի արշավանքների պատճառով, տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի** նշվ. աշխ., էջ 219:

⁴ Տե՛ս **Յովսէփեան Գ.**, Յիշատակարան ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 541-542:

⁵ Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Երևան, 1962, էջ 235: Հմմտ. *Iranisches Namenbuch von Ferdinand Just*, Georg Olms Verlagsbuchhandlung Hildesheim, 1963, S. 253.

⁶ Տե՛ս **Мамедова Ф.**, Кавказская Албания и албаны, Баку, 2005, էջ 99, 415-416:

⁷ Տե՛ս **Анна Комнина**, «Алексиада», Вступительная статья, перевод, комментарий Я. Н. Любарского, М., 1965, էջ 152, 322-323:

⁸ Բառացի նշանակում է արշավանքի դուրս եկած զորքի հրամանատար: Տե՛ս **Բարթիկյան Հ.**, Հայ-Բյուզանդական հետազոտություններ, հ. 2., Երևան, 2006, էջ 169:

տիտղոսով¹: Առանց լուրջ հիմնավորման՝ ուսումնասիրողները նրան նույնացրել են Օշինի Ա-ի հետ: Մ. Չամչեանը, անդրադառնալով Օշին Ա-ի գործունեությանը, նրան նույնացնում է Ասպետես զորականի հետ. «Յետ այսորիկ ի խաղալ կայսեր պատերազմաւ ի վերայ Հռոբերտոսի դքսին լոնգոբարտիոյ եկն յօգնութի նմա և տիրէ ամրոցին Լամբրոնայ Օշին մեծ իշխան Հայոց զօրօք իւրովք, ... որ և յԱլեքսիաս գիրսն իբր մականուամբ ասպետ կոչի»²: Ն. Ակինյանը հետևելով Աննա Կոմնենային, եզրակացնում է, որ Օշինը ազնվական էր, Արշակունիների տոհմի ներկայացուցիչ, և գրում է, որ Աննա Կոմնենան, խորշելով «բարբառիկ» անունից, այն է՝ Աւշին, նրան անվանում է Ասպետ (Aspietes)³: Ֆ. Շալանդոնը ևս Ասպետեսին նույնացնում է Օշին Ա-ի հետ⁴: Նույնն է հիշատակում նաև Ա. Ալպոյաճյանը. «Ալեքս Ա. ի գործակիցներուն մէջ է նաեւ Գիլիկիոյ Լամբրոնի տէրը Օշին զոր Ասրպիէտէս կը կոչէ Աննա Կոմնեն իր Ալեքսիասին մէջ»⁵: Սակայն, ինչպես իրավացիորեն պնդում է Ժ. Լորանը, պատմական աղբյուրներում որևէ հիմնավորում չկա, որի հիման վրա կարելի լինի Ասպետեսին նույնացնել Օշին Ա-ի հետ⁶: Կ. Մուրաֆյանը գրում է, որ Ասպետեսին առանց փաստարկելու նույնացրել են Օշին Ա-ի հետ⁷ Ժ. Դեդեյանը հիմնավորում է, որ Ասպետեսը ծագումով Բագրատունի է և պատկանում է Բագրատունիների Սպերում հաստատված Ասպետունի ճյուղին և որևէ կապ չունի Օշին Ա-ի հետ: XI-րդ դ. կեսերին Սելջուկները գրավեցին Սպերը, ազնվականությունը ստեղծված իրադրությունում գաղթեց դեպի Արևմուտք⁸:

Հետազոտողները Օշին Ա-ի հետ են նույնացրել նաև Ադանայի կառավարիչ Ուրսինիոսին: Նման կերպ է վարվել, օրինակ, Ժ.Դեդեյանը⁹: Ս. Տեր-Ներսեսյանն էլ, անդրադառնալով վերոնշյալ հարցին, հստակ կարծիք չի արտահայտում, միայն նշում է, որ Ռաուլ Կանենացին և Ալբերտ Ախենացին Օշին Ա-ին են

¹Տե՛ս **Ակինեան Ն.**, Ներսէս Լամբրոնացի, արքեպիսկոպոս Տարսոնի (կեանքն և գրական վաստակները հանդերձ ազգաբանությամբ Պաղիալունեաց և Լամբրոնի Հեթմեանց), Վիեննա, 1956, էջ 414:

² **Չամչեանց Մ.**, Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ 1784, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 10:

³Տե՛ս **Ակինեան Ն.**, նշվ. աշխ., էջ 416-417:

⁴Տե՛ս **Chalandon F.**, Les Comnènes. Etudes sur l'Empire Byzantin au XI et XII siecles. T. II: Jean II Comnene (1118-1143) et Manuel I Comnene(1143-1180), Paris-Picard, 1912, p. 105.

⁵ **Ալպոյաճեան Ա.**, Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Բ, Գահիրէ, 1955, էջ 519:

⁶Տե՛ս **Laurent J.**, Etudes d' histoire arme'nienne, Louvian, 1971, էջ 55-60:

⁷Տե՛ս **Մուրաֆյան Կ.**, Գիլիկյան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 2001, էջ 379:

⁸Տե՛ս **Dédéyan G.**, Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisés., vol. 2, Lisbonne, 2003, էջ 693-700: Հմմտ. **Каждан А.**, Армяне в составе господствующего класса Византийской империи, Ереван, 1975, էջ 43-46:

⁹Տե՛ս **Dédéyan G.**, նշվ. աշխ., էջ 673-674, 693: Օշին Ա-ին Ադանայի կառավարչի պաշտոնն է վերագրվում նաև **Զ. Թ. Նալբանդյանը**, (տե՛ս «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին» գրքում, Երևան, 1965, էջ 127):

վերագրել Ասպետեսի և Ուրսինիոսի գործերը¹: Հ. Զյուբելը չի նույնացնում Ուրսինիոսին և Օշին Ա-ին², Ժ. Լոռանն էլ հետևելով Հ. Զյուբելին, գրում է, որ Ուրսինիոսը և Օշին Ա-ն տարբեր իշխաններ են³: Միջնադարյան աղբյուրներում Ուրսինիոսին Օշին Ա-ի հետ նույնացման համար հիմնավոր ապացույցներ չկան, ուստի մեզ հավանական է թվում, որ Ուրսինիոսը, Ասպետեսը և Օշին Ա-ն տարբեր իշխաններ են և նրանց ծավալած գործունեությունը պետք է դիտարկել առանձին:

Իսկ Օշին Ա-ի եղբոր՝ **Հալկամի** մասին պատմական աղբյուրներում տեղեկություններ չկան, բացառությամբ Սամուել Անեցու շարունակողի բերած եզակի տեղեկության: Պատմագրության մեջ Հալկամ անունը հիշատակված է Սմբատ սպարապետի երկում. «Բակուրնայ և Վասակայ եղբայր մի այլ կայր **Հալկամ** անուն, և Վասակն է հայրն աւագ պարոնին»⁴: Ըստ Լ. Տեր-Պետրոսյանի, այս Հալկամը, Օշին Ա-ի ծոռն էր՝ Բակուրանի և Վասակի եղբայրը⁵:

Մայրաց ջուրք բնակավայրը

Մայրաց ջուրքը նշանակում է մայրի անտառներից բխող աղբյուրներ: Մայրաց ջուրք տեղանվան հիշատակությունը հանդիպում է Սյունիքի Վահանավանքի տապանաքարերից մեկի վրա. «Հ{ԱՅՈՑ} Թ{ՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ} ԾԻԵ (1076): ԶՔՈՒՐԴԻԿ/ ՄԱՐԷԶՐԵՑԻ/ ՅԱՂԱԻԹՍ ՅԻ/ ՇԵՑԷՔ. ԱՂ/ԱԶԵՍՔ»⁶: Վահանավանքի մեկ այլ՝ 1084 թ. Սողոմոն Մարեջրեցու հիշատակին նվիրված տապանաքարի վրա դարձյալ հանդիպում է **Մայրաց ջուրք** տեղանունը. «ԶՍՈՂՈՍՈՆ ՄԱՐԷԶՐԵՑԻ ՅԱՂԱԻԹ/Ս ՅԻՇԵՑԷՔ ԹՈՒԻՆ: ՇԼԳ»⁷: Ինչպես իրավացիորեն գրում է Ա. Հակոբյանը, Մայրաց ջուրքը պետք է փնտրել ոչ թե Սյունիքում, այլ Արցախում: Նրա համար կովան է այն հանգամանքը, որ եթե Մայրաց ջուրքը Սյունիքում գտնվեր, ապա Ստեփանոս Օրբելյանը անկասկած կանդրադառնար տեղանվանը⁸: Մայրաց ջուրքի՝ Արցախում գտնվելու հանգամանքը ապացուցվում է է նաև Սամուել Անեցու շարունակողի հիշատակությունից, ըստ որի՝ Օշին Ա-ի հայրենիքը, որտեղից նա գաղթեց Կիլիկիա, **Մայրաց ջուրքն** էր՝ «հանդէպ Գանձակայ»: Մայրաց ջուրքը Մեծ Հայքի Ուտիք աշխարհի Շակաշեն գավառում է

¹Տե՛ս **Der Nersessian S.**, The kingdom of Cilician Armenia, in "Kenneth M. Setton, A History of te Crusades", vol, II, Philadelphia, 1962, p. 630-633:

²Տե՛ս **Sybel H.**, Geschichte des ersten Kreuzzuges, Leipzig, 1881, S. 251.

³Տե՛ս **Laurent J.**, նշվ. աշխ., p. 51-60:

⁴**Սմբատայ Սպարապետի «Տարեգիրք»**, Վենետիկ, 1956, էջ 187:

⁵Տե՛ս **Տեր-Պետրոսյան Լ.**, Խաչակիրները և Հայերը, հ. Ա, Երևան, 2005, էջ 417:

⁶**Գրիգորյան Գ.**, Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները (1966-1970 թթ.) Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1970, N 10, էջ 89:

⁷Դիվան հայ վիմագրության, պր. II, կազմեց **Ս.Գ. Բաթումյան**, Երևան, 1960, էջ 139:

⁸Տե՛ս **Յակոբեան Ա.**, Հակարիի Վերնահովտի նորայայտ վիմագրերը, «Հանդես ամսօրեայ», 1998, յունվար-դեկտեմբեր, թիւ, 1-12, էջ 302: Հմտ. **Յակոբեան Ա.**, Պատմա-աշխարհագրական և վիմագրական հետազոտություններ (Արցախ և Ուտիք), Վիեննա-Երևան, 2009, էջ 69-70:

գտնվում, Գանձակ քաղաքի մոտակայքում¹: Ըստ Ա. Հակոբյանի՝ Մայրաց ջուրքը հենց Աղբրաձորի, այսինքն՝ Արցախի Վայկունիք գավառի հայտնի տեղանուն է: Հետագոտողը այսպիսի եզրահանգում է կատարում, քանի որ «Մեծ Վարդիկ Մայրեջրեցու» տապանաքարը հայտնաբերվել է Աղբրաձորի վանքի գերեզմանատանը²: Իսկ ըստ Ս. Գրիգորյանի՝ Մայրաց ջուրքը գտնվում է Արցախի Կողթ գավառում: Ուսումնասիրողը այսպիսի տեսակետ է հայտնում՝ ելնելով 1965 թ. Շատախ գյուղի Նահատակի ձոր կոչվող հանդամասում³ գտնված խաչքարից, որի վրա հիշատակվում է Հեթում անունը⁴:

Անառարկելի է, որ Մայրաց ջուրքը հաստատապես գտնվում է Արցախում: Վերոնշյալ հեղինակների բերած տեղեկությունները Մայրաց ջուրքի տեղադրության վերաբերյալ քիչ հավանական են: Մայրաց ջուրքը Գանձակի մերձակայքում՝ է «հանդեպ Գանձակայ», բայց միջնադարյան աղբյուրներում չկա հստակ տեղեկություն ինչն էլ հանգեցրել է ուսումնասիրողների տարակարծությանը:

Օշին Ա-ն Կիլիկիայում

Պատմագիտության մեջ Օշին Ա-ի գաղթի թվականի շուրջ կան հակոտնյա կարծիքներ: Ըստ Ղ. Ալիշանի՝ Օշին Ա-ն գաղթել է Կիլիկիա 1071 թ., «Մուռք այսր տոհմի (Հեթմեանց)՝ ի Կիլիկիա յառաջէ քան զՌուբինի գլուխ ամբառնալն. զի տոհմապետն Օշին յամի 1071 ելեալ՝ ի կողմանց Գանձակա...»⁵: Բ. Ուլուբաբյանն էլ, անդրադառնալով խնդրո առարկա գաղթի թվականին, գրում է, որ պատմաբան-հետազոտողները կրկնել են Ղ. Ալիշանի մի վրիպակը Օշին Ա-ի՝ Գանձակից ելնելու տարեթվի վերաբերյալ՝ գտնելով, որ այն տեղի է ունեցել 1073 թ., այնինչ, ըստ Բ. Ուլուբաբյանի՝ գաղթը տեղի է ունեցել 1123 թ. (ՇՀԲ)⁶: Այս վրիպակը արդյունք է 1893 թ. Սամուել Անեցու աշխատության⁷ հրատարակության մեջ տեղ գտած սխալի, որից և օգտվել է Բ. Ուլուբաբյանը: Օշին Ա-ի՝ Կիլիկիա գաղթելու թվականը 1123 թ. չէր կարող լինել, քանի որ այդ ժամանակ Լամբրոնում՝ իր նստավայրում, արդեն իշխում էին նրա ժառանգները:

¹Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Կ-Ն, Երևան, 1991, էջ 677:

²Տե՛ս **Յակոբեան Ա.**, Հակոբիի Վերնահովտի նորայայտ վիմագրերը, նշվ. աշխ., էջ 303:

³Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, կազմեց **Քարխուդարյան Ս. Գ.**, Երևան, 1982, էջ 254:

⁴Տե՛ս **Григорян С.**, Ошин из страны Армянской: О локализации Майреац-джурк'а, восточно-армянской прародины Гегумянов, Գարդամանի և Շիրվանի հայության պատմա-մշակութային ավանդները, հանրապետական գիտաժող, Երևան, 2016, էջ 64-65:

⁵**Ալիշան Ղ.**, Սիսուան. համագրություն հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 46:

⁶Տե՛ս **Ուլուբաբյան Բ.**, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Ե., 1975, էջ 96:

⁷Տե՛ս **Սամուելի քահանայի Անեցոյ**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, աշխատասիրությամբ Արշակ Տեր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 117:

Կիլիկիայում Օշին Ա-ի՝ հաստատվելու վերաբերյալ մեզ տեղեկություններ են հաղորդում նաև հայերեն ձեռագիր հիշատակարանները, որոնցից պարզ է դառնում Կիլիկիայում Օշին Ա-ի՝ հաստատվելու, և իր յուրային Ապլղարիպ Արծրունունուց Լամբրոնի բերդը ստանալու փաստը: Հայերեն ձեռագիր հշատակարաններից մեկը, որ գրված է 1190 թ. Սամուել Սկևռացու կողմից, նվիրված է «Պատմութիւն Ներսիսի վարուց եպիսկոպոսին, երգոցս Մադոնսի քննադի», այստեղ կարդում ենք. «Ընդ նուադել թագաւորութեան և իշխանութեան Հայոց, յորժամ յափըշտակեցաւ յԻսմայէլացոցն մայրաքաղաքն Անի, եւ տարագրեցան թագաւորքն մեր ի գաւառս եւ յիշխանութիւնս արքայիցն Յունաց, այր ոմն յիշխանացն Հայոց Ապլխարիպ անուն՝ որ էր ի տանէն Վասպուրականի, իբրև զմտերիմ և զխոհեմ և զարի ի գործ պատերազմի՝ առաքեցաւ յինքնակալէն Ալէքսէ ի գաւառս Կիլիկեցոց՝ իշխել մայրաքաղաքին Տաքսովնի և Մամ [ո] փստիոյ, ... Սա եգիտ ի ստորոտս լերինս Սորոսի և ի գլուխ քաղաքիս Տաքսովնի երկու անմատոյց դղեակս, միոյն անուն Լամբրուն և միւսումն Պապեռուն՝ որք և ունէին շուրջ զինքեամբք գեաւոյս և աւանս: ԶՊապեռուն՝ իւր սեպհականեաց գանձուց ըշտեմարան, և շինալ եկեղեցի մեծ՝ դամբարան հանգստեան սահմանեաց իւր և իւրոցն, և զԼամբրունն ետ ի մտերիմ և ի սիրեցյալ իշխանն, որ եկեալ էր ընդ իւր յաշխարհէն Հայոց անուն Աւշին (իմա՝ Օշին Ա- Ս.Ս.), և աւանդեաց ի նա զմասն մեծի և զլիաւորի առաքելոցն Պետրոսի, զոր ունէին Հայք ըստ նախագրեալ պատմութեանն: Եւ հրամայեաց հպատակութեամբ սպասաւորել յայսմ դղեկի Սրբոյ Առաքելոյն, և իւր սեպհական ունել զբերդս և զգաւառս, որ եկեալ ազգատոհմաւ իւրով և գտեալ զանառիկս ամա [յ] ացեալ՝ շինէր ըստ կարի և պատրաստեաց նախ ի ծայր բերդիս հանգստարան սուրբ և զլիաւոր առաքելոյն նշխարաց¹: Այստեղ հիշատակվում են Ապլղարիպ Արծրունու գաղթը Վասպուրականից, կայսեր կողմից Կիլիկիայում տարածքներ ստանալը: Ապլղարիպ Արծրունին Պապեռոնի դոյակը պահում է իրեն, իսկ Լամբրոնը հանձնում է իր մտերիմ և սիրելի Օշին Ա-ին: Հիշատակարանում առկա այն տեղեկությունը, որ Ապլղարիպ Արծրունին իր տարածքները ստացել էր Ալեքսանդր Կոմնենոսից, մերժելի է քանի որ միջնադարյան մեր աղբյուրների հավաստմամբ, Ապլղարիպ Արծրունին դեռևս 1079 թ. տիրում էր Տաքսունին, Մամեստիային, Լամբրոնին և Պապեռոնին²: Իսկ Բյուզանդական կայսրը այդ ժամանակ Միքայել VII Դուկասն (1071-1078) էր³: Հիշատակարաններից մեկում էլ Մեղր Վարդապետը գրեթե նույն տեղեկություններն է տալիս Ապլղարիպ Արծրունու, ինչպես նաև Լամբրոնը Օշինին

¹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., աշխատասիրությամբ Մաթևոսյան Ա. Ս., Երևան, 1988, էջ 255:

² «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», նշվ. աշխ., 1962, էջ 106:

³ Տե՛ս Քասունի Ե., Տաքսունի իշխանը Ապլղարիպ Հասան Արծրունի, Հայկազեան հայագիտական հանդես, հ. Գ, Պեյրուք, 1972, էջ 94: Հմմտ. Հարությունյան Բ., Արծրունյաց իշխանական ընտանիքը հայոց պատմության մեջ, Երևան, 2016, էջ 237:

փոխանցելու վերաբերյալ. «Եւ ընդ նուագել թագաւորութեանն յազգէ Բագրատունեաց և ցան և ցիր լինել ազգի մերոյ ընդ ստրկութեամբ ծառայութեան այլասեռ ազգաց... Ի սոյն ժամանակի այր ոմն Բարեպաշտան և երկիւղած յԱստուծոյ՝ ի նախարարաց թագաւորին Հայոց Գագկայ, որոյ անուն Ապլղարիպ յորջորջիւր, եկեալ առ արքան Յունաց Միքայիլ, մտեալ ի ծառայութիւն ինքնակալին, որոյ պարգեւեալ զիշխանութիւն աշխարհիս Կիլիկեցոց, ընձեռն նմա թագաւորն Գ-Տարսոն քաղաք հանդերձ ընդ ձեռամբ անկեալ դրեկաւք... Եւ զի ունէր ընդ իշխանութեամբ իւրով դղեակս ամուրս և վայելուչս ի լերինս Տարսուի՝ անուամբ կոչեցեալ Լամբրոն և Պապառան: ... Եւ զայլ եւս գանձս իւր ամրացուցանէր ի սոյն դղեկի, զոր և պարգեւէր միում ի հաւատարիմ իշխանաց իւրոց, որ կոչէր Աւշին, զաւանս գաւառաւք իւրովք, և ինքն յար ունէր բնակութիւն ի Տարսոն քաղաքի»¹: Մեղր Վարդապետը Ապլղարիպ Արծրունուն հիշատակում է որպէս Գագիկ Բ Բագրատունու (1042-1045) նախարարներից, որը Միքայել VII Դուկաս կայսերը առաջարկում է իր ծառայությունը: Իսկ կայսրը Ապլղարիպին պարգևում է Տարսոն քաղաքը՝ շրջակա գավառներով: Ապլղարիպ Արծրունին Պապեռոնը պահում է իրեն, իսկ Լամբրոնի բերդը տալիս է իր հավատարիմ իշխան Օշին Ա-ին:

Օշին Ա-ն և իր յուրային Ապլղարիպ Արծրունին, կայսրից ստանալով Կիլիկիայի վերոնշյալ տարածքները, 1076 թ. գալիս են Կիլիկիա²: Ապլղարիպ Արծրունու բարեհաճ վերաբերմունքը Օշին Ա-ի նկատմամբ պետք է բացատրել նաև այն հանգամանքով, որ Ապլղարիպի դուստրերից մեկը ամուսնացած էր Օշին Ա-ի հետ: Ինչպէս տեսանք, Սամուել Անեցու շարունակողի երկում նշվում էր, որ Օշին Ա-ի հետ Կիլիկիա էր գաղթել «գամուսինն իւր», այստեղից պետք է կարծել, որ Օշին Ա-ն կնոջ մահվանից հետո նորից էր ամուսնացել կամ նոր միջավայրում Ապլղարիպ Արծրունու նման հզոր պաշտպան ունենալու համար ընտրել էր նրա դստերը: Իրեն վերապահված Լամբրոնի բերդը Օշին Ա-ն նորոգում և այստեղ հիմք է դնում Հեթումյան գերդաստանին: Ղ. Ալիշանը գտնում է, որ գերդաստանը Հեթումյան է կոչվել ի պատիվ Օշին Ա-ի հոր՝ Հեթումի³: Հաստատվելով Կիլիկիայում և ձևականորեն ընդունելով կայսեր հպատակությունը՝ Օշին Ա-ն և Ապլղարիպ Արծրունին, բնականաբար, վայելում էին այդ ժամանակ (1072-1090 թթ.) հայության շրջանում գերակա դիրքի հասած և իր անկախ իշխանապետությունը ստեղծած Փիլարտոս (Վահրամ) Վարաժնունու հովանավորությունը⁴:

¹ Յովսէփյան Գ., նշվ. աշխ., էջ 551-552:

² Տե՛ս Ալիսէան Ն., Ներսէս Լամբրոնացի, նշվ. աշխ., էջ 413:

³ Տե՛ս Ալիշան Ղ., Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 414:

⁴ Տե՛ս Բռննագյան Ս., Հայաստանը և սելջուկները 11-12-րդ դդ., Երևան, 1980, էջ 188: Նմուս. Պապիկյան Ս., Հայերը և խաչակիրները, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1960, յուլիս-սեպտեմբեր, թիւ 7-9, էջ 397-398:

Ապլղարիպ Արծրունու մահից հետո՝ 1080 թ., նրա զինվորականներից Մոնաստրասը, ով Օշին Ա-ի փեսան էր, փոխարինում է նրան¹: Հաստատվելով Լամբրոնում՝ Օշին Ա-ն կարողացավ ոչ միայն իր իշխանանիստը պահպանել սելջուկների 1093 թ. արշավանքից², այլև, լինելով հմուտ ռազմավար, կարողացավ ճիշտ կողմնորոշվել, և ինչպես վերևում նշեցինք, իր օգնությունը բերեց խաչակիրների Անտիոքի պաշարման ժամանակ: Օշին Ա-ին հաջողվեց Լամբրոնում ստեղծել կենտրոնաձիգ մի իշխանություն, որը ի զորու դարձավ դիմակայելու արտաքին վտանգներին:

Ըստ Մ. Չամչեանցի՝ Օշին Ա-ն մահացել է 1110 թ.³: Քանի որ Մ. Չամչեանցի աշխատությունում նույնացում կար Ասպետեսի և Օշին Ա-ի միջև, ենթադրելի է, որ նշյալ թվականը վերաբերում է Ասպետեսին: Մեզ առավել հավանական է թվում Ժ. Դեդեյանի աշխատությունում նշվող 1112 թ.⁴: Օշին Ա-ն թաղվել է Լամբրոնին մերձակա Սկևռայի վանքում⁵:

Քանալի բառեր - նվաճողական արշավանքներ, Մայրաց ջուրք, Օշին Ա, Սկևռայի վանք, բյուզանդական կառավարիչ, Վահանավանք, Ասպետես, պաշարում, Հալկամ

Արարատ Ստեփանյան, Օշին Գանձակեցու գաղթը Կիլիկիա 1073 թ. - Այսպիսով, Օշին Ա-ն, խուսափելով սելջուկ-թուրքերի նվաճողական արշավանքներից, գաղթեց Կիլիկիա և իր դաշնակից Ապլղարիպ Արծրունու հետ համագործակցելով, կայսրությունից ստացավ առանձնաշնորհումներ տեր դարձավ Լամբրոնի բերդին որտեղ և հիմք դրեց Հեթումյանների նշանավոր տոհմին: Հեթումյանների իշխանական տոհմը հետագայում լուրջ դերակատարություն էր ունենալու Կիլիկյան Հայաստանի թագավորության համար:

Арарат Степаян , Миграция Ошина Гандзекци в Киликию в 1073г. – Ошин А, избегнув завоевательных походов турков-сельджуков, мигрировал в Киликию, и в сотрудничестве со своим союзником Аплхарипом Арцруни, получил привилегии от Империи, и стал владельцем крепости Ламброн, где основал знаменитой династии Хетумянов. Императорская династия Хетумянов, в последствии должна была сыграть серьезную роль в пометической жизни Киликийской Армении.

¹Տե՛ս **Ակինեան Ն.**, Ներսէս Լամբրոնացի, նշվ. աշխ., էջ 415: Ապլղարիպ Արծրունուն փոխարինողի անունը Մ. Չամչեանցը գրում է Սահակ, տես **Չամչեանց Մ.**, Պատմութիւն Հայոց , նշվ. աշխ., էջ 10: Մինչդեռ Ն. Ակինյանը քննադատում է Մ. Չամչեանցին պատմական անունը խեղաթյուրելու համար:

²Տե՛ս **Ակինեան Ն.**, Ներսէս Լամբրոնացի, նշվ. աշխ., էջ 415:

³Տե՛ս **Չամչեանց Մ.**, Պատմութիւն Հայոց, նշվ. աշխ., էջ 88:

⁴Տե՛ս **Dédéyan G.**, նշվ. աշխ., էջ 660:

⁵Տե՛ս **Ոսկյան Հ.**, Սկևռայի վանքը (1150-1200), «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1954, յունուար-յունիս, թիւ 1-6, էջ 80-81:

Ararat Stepanyan, Migration of Oshin Gandzektsi to Cilicia in 1073g. - Oshin A, avoiding the aggressive campaigns of Seljuk Turks, migrated to Cilicia and in cooperation with his ally Aplekharip Artsruni, received privileges of the Empire, and became the owner of the fortress of Lambron, where he became the founder of the famous Khetumyan dynasty. The imperial dynasty of Khetumyan, in consequence, had to play a serious role for Cilician Armenia.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1991-1994 ԹԹ.

ՆԺՂԵՀ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հայաստանի Հանրապետության միջկուսակցական հարաբերությունների պատմության ուրույն շրջան է 1991-94թթ., որ նշանավորվեց ՀՀ անկախության հաստատմամբ ու հասարակական-քաղաքական կյանքի նորովի ձևակերպմամբ: Այս շրջափուլը համընկավ ինչպես նոր պետական ինստիտուտների ստեղծմանն ու ԼՂ-ում լայնածավալ պատերազմին, այնպես էլ Հայաստանում իշխանության համար մղվող սուր և ոչ միօրինակ պայքարին: Քաղաքական իշխանությանը հավակնելու ու դրա միջոցով սեփական ծրագրերը իրականություն դարձնելու պայքարում միջկուսակցական հարաբերությունների ընթացքը լի էր հակասականությամբ ու վայրիվերումներով:

1991-94թթ. միջկուսակցական հարաբերությունները ավելի ստույգ կարելի է բնորոշել որպես ապիմետրիկ՝ ընդդիմությունից իշխանություն և հակառակ անցումներով: Թե՛ ընդդիմադիր, թե՛ իշխանությանը հարող կուսակցությունների միջև հարաբերությունները հաճախ հանգում էին դրանց կարգավորման քաղաքական գործիքների վերասեռմանը՝ անհանդուրժողականության կոնկրետ դրսևորումներով: Տեսական և գաղափարաբանական բանավեճը անխուսափելիորեն իր արտացոլումն էր գտնում միջկուսակցական գործնական հարաբերություններում՝ իշխանության համար պայքարի տրամաբանության շրջանակներում: Միաժամանակ հարկ է նկատել, որ 1991-94թթ. միջկուսակցական պայքարում կենտրոնական նշանակություն էին ստացել ՀՀԾ-ի և ՀՅԴ-ի հարաբերությունները, որոնց շուրջ կառուցվում էր միջկուսակցական ստատուս-քվո:

Հանրապետության բնույթի կտրուկ վերափոխման առանցքում անկարելի է թերագնահատել ընդունված մի շարք օրենքների նշանակությունը, որպիսի օրինակ էր բազմակուսակցական համակարգի ներդրումն ազդարարող «ՀՀ հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքը:¹ Բազմակուսակցական համակարգի արմատավորման գործընթացի մեկնարկը շեփոահարվեց 1990թ. մայիսի 20-ի ԳԽ ընտրություններով, երբ առաջին անգամ երկրում ծավալվեց իրական քաղաքական պայքար՝ անմիջական հետևանքում թուլացնելով Կոմկուսի դիրքերը: Այդ ընտրություններն անցան երկկուսակցական կամ ավելի ստույգ՝ երկու հակադիր արժեքներ դավանող քաղաքական խմբավորումների պայքարի տրամաբանությամբ: Իսկ դրա արդյունքում ձևավորված խորհրդարանի ներսում առաջացան բազմապիսի քաղաքական հոսանքներ, կուսակցա-

¹ Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1990-1995), էջ 115-118:

կան խմբակցություններ ու պատգամավորական խմբեր: Առաջին անգամ Կոմկուսի պատգամավորների քանակական մեծամասնությունը հաղթահարվեց ՀՀԾ-ի կազմած կոալիցիայի ներկայացուցչների թվով:¹

Բազմակուսակցական համակարգի փաստացի հաստատմանը, անշուշտ, պետք է հաջորդեր դրա իրավական ամրագրումը: Տարբեր կուսակցությունների անդամակցող և անհատ պատգամավորների աշխատանքի արդյունքն էլ դարձավ 1991թ. փետրվարի 26-ին ընդունված «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը: Բաղկացած լինելով սուկ 8 հոդվածներից՝ այն համապարփակորեն սահմանում էր Հանրապետությունում գործող հասարակական-քաղաքական կազմակերպությունների գործունեության շրջանակը: Օրենքի ընդունումից անմիջապես հետո մեկնարկեց փաստացի գործող քաղաքական կուսակցությունների իրավական գրանցման գործընթացը: Միայն 1991թ. ընթացքում ՀՀ-ում պաշտոնապես գրանցվել ու քաղաքական գործունեությանն են ձեռնամուխ եղել շուրջ 22 քաղաքական կազմակերպություններ:² Այդ կազմակերպությունների թվում էին Հայոց համագգային շարժումը (ՀՀՇ), Ազգային ինքնորոշում միավորումը (ԱԻՄ), Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), Հայաստանի քրիստոնեո-դեմոկրատական միությունը (ՀՔԴՄ), Հայ յեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ), Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը (ՀԴԿ), Հայաստանի ռամկավար ազատական կուսակցությունը (ՀՌԱԿ) և այլն, որոնք պիտի անմիջապես ներգրավվեին քաղաքական պայքարին, որի առաջին առիթը դարձավ 1991թ. հոկտեմբերի 16-ի նախագահի ընտրությունը:

Դրան մասնակցեցին Հայաստանի բոլոր ակտիվ հասարակական-քաղաքական կազմակերպությունները: ՀՀԾ-ն առաջադրեց ՀՀ ԳԽ նախագահ, կուսակցության առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանի թեկնածությունը, որին, ի դեպ, սատարեց նաև ՀՌԱԿ-ը:³ ԱԻՄ-ը, առաջադրել էր կուսակցության նախագահ Պարույր Հայրիկյանի թեկնածությունը, իսկ որպես փոխնախագահ՝ ՀՔԴՄ նախագահ Ազատ Արշակյանին:⁴ Նախագահի ընտրությանն իր մասնակցությունը բերեց նաև ավանդական կուսակցություններից ՀՅԴ-ն՝ նախագահի թեկնածու առաջադրելով դերասան Սոս Սարգսյանին, փոխնախագահի՝ ՀՅԴ ԿԿ անդամ Վահան Հովհաննիսյանին:⁵ Նախագահական ընտրություններին առաջադրվեց ՀՀԿ առաջնորդ Աշոտ Նավասարդյանին, իսկ որպես փոխնախագահ՝ ՄԻՄ նա-

¹ Լիպարիտյան Ժ., Պետականության մարտահրավերները. Հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր: Թարգմ. Հ. Հարությունյան, «Արմատ» ԺՔՀԶԿ, Երևան, Նաիրի, 1999, էջ 18:

² Աբրահամյան Հ., Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները: Եր., ԵՊՀ հրատ., 2009, էջ 62:

³ Մանրամասն տես՝ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1183, ց. 1, գ. 53:

⁴ Մանրամասն տես՝ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1183, ց. 1, գ. 58:

⁵ «Երկիր», 27 օգոստոսի 1991

խազահ Հրանտ Խաչատրյանը:¹ 1991թ. հոկտեմբերի 16-ին կայացած նախագահական առաջին ընտրություններում քվեարկողների ավելի քան 83 տոկոսի աջակցությունը ստացավ ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը:²

Այս ընտրությունները բազմակուսակցական համակարգի առաջին քննությունն էին, որին մասնակցող և 1-3-րդ հորիզոնականները զբաղեցրած թեկնածուները ներկայացնում էին քաղաքական բեմի ազդեցիկ կուսակցությունները՝ ՀՀԸ, ԱԻՄ, ՀՅԴ: Միևնույն ժամանակ, օրինաչափ ու սուբյեկտիվ բազմաժանր գործոններով պայմանավորված՝ այդ նույն համակարգին չհաջողվեց երաշխավորել միջկուսակցական ներդաշնակ, համերաշխ հարաբերություններ: Բազմակուսակցականության պատմությունը դրսևորվեց իր ոչ միանշանակությամբ, որ հարկ է բաժանել երկու փուլի՝ 1990-94 և դրանից հետո³: Առաջին փուլում միջկուսակցական պայքարը համեմատաբար ընդունված կանոնների համատեքստում էր, իսկ արդեն 1994թ. ՀՅԴ կասեցումից հետո կարելի է գնահատել որպես ժողովրդավարության ճգնաժամ:⁴

Այլ կերպ ասած, միջկուսակցական հարաբերությունների լարվածությունն առանձին դեպքերում հնարավոր չեղավ հաղթահարել առանց արմատական լուծումների, ինչն էլ իր բացասական դրոշմը թողեց կուսակցությունների միջև փոխվստահության կարծր համակարգ հաստատելու վրա: Բացասական գործոնների վերհանման տեսանկյունից հիշարժան է, որ հայաստանցիների մեծ մասը այդպես էլ չհաղթահարեց ինչ-որ առումով ենթագիտակցական անվստահությունը քաղաքական կուսակցությունների նկատմամբ, որ գալիս էր Կոմկուսի փորձառությունից:⁵ Բացի այս, բազմակուսակցական համակարգի ձևավորման ուշացմանը լրջապես խանգարեց ԼԴ-ի հակամարտությունը:⁶

1990-ական թթ. սկզբին Հայաստանում ռեսուրսներով, մասշտաբայնությամբ և ազդեցությամբ առաջատար կուսակցությունը ՀՀԸ-ն էր, որի ներսում ակնառու առաջին տեղաշարժերը սկսվեցին շարժումից կուսակցություն վերածվելու ճանապարհին: Լիովին բնական էր, որ հրապարակից դահլիճ տեղափոխվելով՝ միավորը պիտի սեղմվեր, սիկ ոմանք պիտի հեռանային և ինքնուրույն գոր-

¹ Մանրամասն տես՝ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1183, ց. 1, գ. 55:

² Ամբողջական պատկերը, կից արձանագրություններով և համապատասխան այլ փաստաթղթերով՝ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1183, ց. 1, գ. 52:

³ Մինասյան Է., Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն: Եր., ԵՊՀ հրատարակչություն, 2013, էջ 265:

⁴ Նույն տեղում:

⁵ Լիպարիտյան Ժ., նշվ. աշխ., էջ 34:

⁶ Թորոսյան Տ., Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա: Եր., «Գիտություն», 2006, էջ 150:

ծունեություն ծավալելին:¹ Տարաձայնությունները խորացան իշխանության լծակները ստանալուց հետո, երբ արդեն 1991թ. գարուն-ամառ ժամանակահատվածում հակասություններ ի հայտ եկան ՀՀ-ի ու նրա նշանակաժողովարության միջև: ՀՀ-ից առանձնանալու նկրտումներ ցուցաբերող մի շարք գործիչներ համախմբվեցին ՀՀ առաջին նախագահ ու 1990-91թթ. ՀՀ վարչապետ Վազգեն Մանուկյանի շուրջը՝ 1991թ. ամռանը ստեղծելով «Ազգային ժողովրդավարական միություն» հասարակական-քաղաքական կազմակերպությունը:² Առանձնանալով և ինքնուրույն քաղաքական կազմակերպություն դառնալու ուղին բնելով՝ ԱԺՄ-ն հանգրվանեց արմատական ընդդիմության բևեռում:

ՀՀ-ն երկրորդ բաժանումն ապրեց արդեն 1994թ. հուլիսին, երբ մի խումբ գործիչներ՝ Ալբերտ Բաղդասարյանի գլխավորությամբ, հեռացան՝ մնացողներին մեղադրելով կուսակցության ժողովրդավարացման քայլերին խոչընդոտելու մեջ: Հեռացողները իրենց հերթին ստեղծեցին «Ազգային առաջադիմություն» կուսակցությունը:³ Իսկ ահա մասնատման երրորդ ալիքը Էդուարդ Եգորյանի ու նրա գաղափարակիցների հեռանալն էր 1997թ., որը ստեղծեց «Հայրենիք» խումբը, ապա «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցությունը:⁴

Անկախության ձեռք բերման շրջանում ՀՀ-ն թերևս ամենից ջերմ և համագործակցային հարաբերություններն ուներ Սփյուռքի հայ ավանդական կուսակցություններից ՀՌԱԿ-ի հետ, որը 1991թ. ամռանը համագործակցության ձեռք մեկնեց ՀՀ-ին՝ ի նպաստ նորանկախ պետության ամրապնդմանը: Անկախության հարցի շուրջ բեղմնավոր համագործակցությունը, սակայն, որոշ ժամանակ անց խափանվեց և ՀՌԱԿ-ը 1992-94թթ. հանգրվանեց ընդդիմադիր դաշտում: Ինչպես հայաստանյան մյուս քաղաքական կազմակերպությունները, ՀՌԱԿ-ը նույնպես չկարողացավ խուսափել պառակտումներից: Նախ 1994թ. կուսակցությունից հեռացան Վիգեն Խաչատրյանն ու նրա գաղափարակիցները՝ հիմնելով Ռամկավար ազատական լիբերալ դեմոկրատական կուսակցությունը (ՌԱԼԴԿ): 1995թ. խորհրդարանական ընտրություններից հետո կուսակցությունը կրկին բաժանվեց մասերի՝ միմյանց մեղադրելով կուսակցությունը պառակտելու մեջ:⁵

Իշխանությունից գրկվելով հանդերձ՝ ՀԿԿ-ն պահպանեց իր տեղը քաղաքական կյանքում: Բազմակուսակցական համակարգը սահմանող օրենքի դրույթներին համապատասխան այն պետական գրանցման արժանացավ 1991թ. հուլի-

¹ Սիրադեղյան Վ., Առաջին և վերջին քայլը ազատության ճանապարհին: Որն է մեր ճանապարհը, կգմ. Ա. Բլեյան, Ե., 1990, էջ 86-92:

² Քեռյան Գ., Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013, էջ. 37-40:

³ «Երկիր» 26 հուլիսի 1994:

⁴ Աբրահամյան Հ., նշվ. աշխ., Հավելված 1:

⁵ «Առավոտ», 26 սեպտեմբերի 1995:

սի 29-ին:¹ Բայց և հաշվի առնելով ԽՄԿԿ-ից հարկադիր անջատումն ու նոր պայմաններին հարմարվելու դժվարությունները՝ տարօրինակ չէր, որ Կոմկուսի ներսում պիտի լուրջ տարաձայնություններ առաջանային կուսակցության հետագա գործունեության և նպատակի շուրջ: Ներկուսակցական տարաձայնությունների արդյունքում 1991թ. սեպտեմբերի 7-ին 29-րդ համագումարը որոշեց դադարեցնել ՀԿԿ-ի գործունեությունը:² 1991-94թթ. ՀԿԿ-ի փաստացի գործունեությունն իրականացնում էր Գերագույն խորհրդի համանուն խմբակցությունը, որը հանդես էր գալիս իշխանության ակտիվ քննադատի դերում: Միաժամանակ շեշտելի է, որ ՀԿԿ-ն պահպանեց հավատարիմ աջակիցների կորիզը և 1995թ. խորհրդարանական ընտրություններին տպավորիչ արդյունքներ արձանագրեց:

Սփյուռքում գործող հայ ավանդական կուսակցություններից ամենաազդեցիկը թերևս ՀՅԴ-ն էր, որը 1990թ. օգոստոսին հայտարարեց Հայաստանում իր գործունեության վերականգնման մասին:³ Այս պատմափուլում ՀՅԴ-ՀՀՀ փոխհարաբերությունները հավանաբար ամենախճճվածն էին հայաստանյան միջկուսակցական պայքարում: Երկու կուսակցությունների միջև համաձայնություններն ու թշնամությունները տեղ-տեղ հանգեցին բռնության, թեպետ սկզբնական շրջանում ՀՀԸ-ն ու ՀՅԴ-ն գտնվում էին հորիզոնական հարաբերություններում: Դրա մասին են վկայում երկու կուսակցությունների ղեկավարների քանիցս կայացած հանդիպումներն ու քննարկումները պետության առջև ծառացած հիմնահարցերի շուրջ: Այսպես, 1990թ. օգոստոսի 11-ին ՀՀ ԳԽ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը և ՄԽ նախագահ Վազգեն Մանուկյանը հանդիպում էին ունեցել ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչներ Հրայր Մարուխյանի ու Հրաչ Տասնապետյանի հետ: Իսկ 1991թ. Հայաստանի անկախության հասնելու գործում միջոցների ընտրության հարցում ունեցած եռանդուն բանավեճի առկայությամբ հանդերձ՝ երկու կուսակցությունները սեպտեմբերի 21-ին ընդառաջ անկախությանն «այո» ասելու միասնական կոչով էին հանդես եկել:⁴ 1992թ. մարտի 5-ին էլ կայացել էր ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի և ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հրայր Մարուխյանի հանդիպումը:⁵ Նույն թվականի ապրիլին Հունաստան կատարած այցելության ժամանակ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին դիմավորել էին ՀՅԴ Հունաստանի կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչներն ու Հ. Մարուխյանը:⁶

Դժբախտաբար, կարճ ժամանակ անց ՀՀԸ-ՀՅԴ հակասությունների հաղթահարումն իր տեղը զիջեց հարաբերությունների ավելի կոշտացմանը, որի ա-

¹ «Ազատամարտ» 13-20 մարտի 1992, թ. 12:

² ՀՀ Հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական արխիվ (ՀՀ ՀՔԿՓԿՊԱ), ֆ. 1, ց. 84, գ. 1, թ. 68-69, ինչպես նաև՝ ֆ. 1, ց. 128, գ. 3, թ. 1:

³ Մանրամասն տե՛ս՝ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 207, ց. 64, գ. 240:

⁴ «Երկիր» 20 սեպտեմբերի 1991:

⁵ «Ազատամարտ» 13-20 մարտի 1992, թ. 12:

⁶ «Ազատամարտ» 10-16 ապրիլի 1992:

ռաջին արարը տեղի ունեցավ 1992թ. հունիսի 29-ին: Այդ օրը հեռուստատեսությամբ ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց, որ միջկուսակցական պայքարը այլևս սպառնում էր խարխիլել նորանկախ հանրապետության հիմքերը: Ընդդիմությանը, մասնավորապես՝ ՀՅԴ-ին, նախագահը մեղադրում էր Արցախում ծավալած գործողությունների միջոցով պետության ապակայունացմանը նպաստելու մեջ՝ միաժամանակ առանձնացնելով Հ. Մարությանի դերակատարությունը:¹ Հաջորդ օրը՝ 1992թ. հունիսի 30-ին, Երևանում կայացավ ՀՅԴ 25-րդ Ընդհանուր ժողովը, որ անցավ իշխանությունների նկատմամբ սուր քննադատական մթնոլորտում: Շուրջ 70 տարվա ընդմիջումից հետո կուսակցությունն առաջին ընդհանուր ժողովն էր հրավիրում Հայաստանում, որը, փաստորեն, չճառայեց իր հիմնական նպատակին՝ ամբողջապես կենտրոնացած լինելով նախագահի՝ նախօրեին հնչած ելույթին պատասխանելու վրա:²

ՀՀԾ-ՀՅԴ հարաբերությունների այս դրվագը առանձնացնելի չէ 1992թ. ամռանը ողջ հանրապետությունը համակած քաղաքական ճգնաժամից: Արժվաշենի անկումն ու Արցախում տիրող ընդհանուր իրավիճակը, երկրում առկա ծանր սոցիալ-տնտեսական դրությունը միավորել էին մի շարք ընդդիմադիր կուսակցությունների (ՀՅԴ, ԱԺՄ, ՀՈՒԱԿ, ՀՔԴՄ, ՀՀԿ, ՄԻՄ), որոնք նախաձեռնեցին ակտիվ հանրահավաքային շարժում՝ պահանջելով նախագահի ու կառավարության հրաժարականը:³ Հռչակված նպատակների իրագործման համար կուսակցությունները 1992թ. օգոստոսին ձևավորեցին ընդդիմադիր «Ազգային դաշինքը», որը, սակայն, երկար կյանք չունեցավ: Քայքայման պատճառ դարձավ դաշինքի ղեկավարներից Վ. Մանուկյանի որոշումը՝ ընդունել ՀՀ նախագահի առաջարկը և ստանձնել հանրապետության պաշտպանությանն առնչվող հարցերի գծով պետնախարարի պաշտոնը:⁴ Դրանից անմիջապես հետո ՀՈՒԱԿ-ը և ՀՅԴ-ն նույնպես լքեցին միավորումը:

Արցախում արդեն կանոնավոր դարձած պատերազմը լիովին իր ազդեցությունն էր տարածել Հայաստանի քաղաքական կյանքի վրա՝ ուղղորդելով միջկուսակցական հարաբերությունների զարգացման ընթացքը: 1993թ. միջկուսակցական հարաբերությունների կենտրոնում կրկին Արցախյան հակամարտությունն էր, ինչին գումարվում էր այն հանգամանքը, որ ՀՅԴ-ն Արցախում ստեղծում էր իր կազմակերպական կառույցները, իսկ Արցախի իշխանության մեջ շատերը հարում էին հենց այս կուսակցությանը: ՀՀԾ-ն Արցախում պաշտոնապես կա-

¹ «Հայք» 30 հունիսի 1992:

² Մարության Հ., Մեր պատասխանը Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին: Երևան, 1992, էջ 54:

³ ՀՀ Հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական արխիվ (ՀՀ ՀՔԿՓԿՊԱ), ֆ. 1688, ց. 1, գ. 1, թթ. 54-56:

⁴ Մանուկյան Վ., Հայկական երազանքը գոյատևման փակուղում (Ելույթների և հոդվածների ժողովածու), «Վ.Ի.Վ. Այսօր և վաղը», Եր., 2002, էջ. 196-197:

ռույցներ չունեն և որպես կուսակցություն այնտեղ ներկայացված չէր: Հայաստանում՝ ՀՀԾ-ի, Արցախում՝ ՀՅԴ-ի ազդեցությունը օրինաչափորեն հանգում էր նրանց միջև պայքարի նոր ալիքին:¹

1994թ. մայիսին Արցախյան ճակատում ռազմական գործողությունների ավարտը հայաստանյան միջկուսակցական հարաբերությունները վերադարձրեց ներքաղաքական հակասությունների հորձանուտը: Համաձայնելի է, որ պատերազմը կլանել էր հասարակական ողջ կյանքը և դրա դադարեցումը թույլ տվեց որոշակիորեն կենտրոնանալ ներքին քաղաքական հարաբերությունների ձևակերպման վրա:² 1994թ. գարնան-ամռան ամիսներին հակասությունների կենտրոնում հայտնվեց Սահմանադրության ընդունման հիմնախնդիրը, իսկ արդեն նույն թվականի աշնանը մշակվեց ընդդիմադիր կուսակցությունների միասնական օրակարգը՝ ազգային համաձայնության կառավարության ձևավորման միջոցով երկրում բարեփոխումներ անցկացնելու մասին: Այդ կապակցությամբ Հայաստանի ընդդիմադիր կուսակցությունները՝ ԱԺՄ, ՀՅԴ, ԱԲՄ, ՀՂԿ, ՍԴՄ, 1994թ. հոկտեմբերի 6-ին հերթական անգամ միաբանվեցին «Ազգային համաձայնության դաշինքի» շրջանակներում: Դաշինքն իր առջև խնդիր էր դրել հասնել իշխանափոխության ու ձևավորել ազգային համաձայնության կառավարություն:³ Ընդդիմադիր կուսակցությունները այդպիսի պահանջներով հանրահավաքներ կազմակերպեցին ՀՀ մի շարք քաղաքներում:

Իշխանություն-ընդդիմություն պայքարի պայմաններում 1994թ. դեկտեմբերի 28-ին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հրամանագիր ստորագրեց, որով ժամանակավորապես կասեցվում էր «Հայ հեղափոխական դաշնակցություն» հասարակական-քաղաքական կազմակերպության գործունեությունը:⁴ Հրամանագրում նշվում էր, որ ՀՅԴ-ի ներսում գործել էր զինվորական կառուցվածքով և ճյուղավորված ցանցով գաղտնի հետախուզական «ԴԲՈ» ծառայությունը, որը, Հայաստանում զբաղվելով ազգային անվտանգությանն առնչվող ռազմա-տնտեսական բնույթի հետախուզությամբ, դրամաշորթությամբ, կազմավորել էր մարտական խմբեր, որոնց միջոցով էլ իրականացրել էր քաղաքական սպանություններ ու ծրագրել ահաբեկչական գործողություններ: Տեր-Պետրոսյանը բացատրում էր, որ խումբը, ստեղծված լինելով ՀՅԴ բյուրոյի որոշմամբ և ունենալով բյուրոյի ընդհանուր համաձայնությունը, ինքնուրույնացել էր:⁵ Ըստ այդմ՝ կուսակցությունը բաժանվել էր երկու ճյուղի՝ գաղտնի կազմակերպություն և պաշտոնական կա-

¹ Հակոբյան Թ., Կանաչ ու սև. Արցախյան օրագիր: Եր., «Անտարես», 2011, էջ. 181:

² Լիպարիտյան Ժ, նշվ. աշխ., էջ 21:

³ «Ազատամարտ» 14-20 հոկտեմբերի 1994, թ. 41:

⁴ ՀՀ Նախագահի հրամանագիրը «Հայ հեղափոխական դաշնակցություն» հասարակական-քաղաքական կազմակերպության գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին, 28.12.1994, Երևան, ՆՀ-405:

⁵ «Հայաստանի Հանրապետություն», 30 դեկտեմբերի 1994:

ռույց: Ըստ նախագահի՝ ՀՅԴ կազմակերպության անդամների ճնշող մեծամասնությունը նույնիսկ տեղյակ էլ չէր նման կառույցի գոյության մասին: Դրա հետ մեկտեղ, Տեր-Պետրոսյանը ՀՅԴ-ի իրական էությունը համարում էր հենց այդ գաղտնի կազմակերպությունը, այլ ոչ թե ծավալած հրապարակային քաղաքական գործունեությունը:¹

Նախագահի հրամանագրի հրապարկումից անմիջապես հետո խուզարկության ենթարկվեց ՀՅԴ կենտրոնական կոմիտեի երևանյան գրասենյակը, մարզային կառույցները, ձեռքակալվեցին մի շարք կուսակցական գործիչներ: Դադարեցվեցին կուսակցության պաշտոնական խոսափող համարվող «Երկիր» և «Ազատամարտ» թերթերի լույս ընծայումը, ինչպես նաև կասեցվեց «Հայլուր» լրատվական գործակալության գործունեությունը: ՀՅԴ-ին հարելու պատճառաբանությամբ ընդհատվել էր նաև «Առագաստ» և «Մունետիկ» թերթերի գործունեությունը: Արձագանքելով իրավիճակին՝ ՀՅԴ խմբակցությունը կուսակցության ժամանակավոր կասեցման մասին նախագահի հրամանագիրը որակում էր «ապօրինի»:² Շեշտվում էր, որ դրանով խախտվել էր «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, որովհետև կազմակերպությունը կասեցնելու կամ դրա գործունեությունը դադարեցնելու մասին որոշում կարող էր ընդունել միայն ՀՀ Գերագույն դատարանը: Կուսակցությունը նախագահին մեղադրում էր իշխանության դատական թևի գործառույթներ ստանձնելու և անմեղության կանխավարկածը խախտելու մեջ:³ Բնականաբար, ՀՅԴ Հայաստանի կենտրոնական կոմիտեն նույնպես նախագահի հրամանագրի նկատմամբ պիտի հակադիր կեցվածք որդեգրեր: Իր դեմ իշխանությունների պայքարը կուսակցությունը գնահատում էր դուրս ժողովրդավարության ու օրինականության սահմաններից: ՀՅԴ-ն ընդունում էր «ԴԴՈ» կառույցի առնչությունը այնքանով, որքանով դրա մի շարք անդամներ դաշնակցականներ էին և՛ ոչինչ ավելին: Կուսակցությունը համոզված էր, որ այն, իր էությամբ, հակադաշնակցական խմբավորում էր, որ գործում էր հենց ՀՅԴ-ի դեմ:⁴

«Ազգային համաձայնության դաշինքը» սատարեց կանգնեց ՀՅԴ-ին: Ընդդիմադիր կուսակցությունները «հակաժողովրդավարական» գործողությունների համար մեղադրում էին ՀՀԾ-ին ու ողջ պետական կառույցին: Ըստ ԱՀԴ ներկայացուցիչների՝ ազդեցիկ մրցակիցներին չեզոքացնելով՝ ՀՀԾ-ն ու իր դաշնակիցները հնարավորություն էին ստանում պահպանել իշխանությունը:⁵ ԱՀԴ անդամները իշխանության գործողություններին արձագանքում էին տարաբնույթ քայլերով, այդ թվում՝ մամուլի ասուլիսներ հրավիրում, պաշտոնական դատապարտող

¹ Նույն տեղում:

² «Ազգ», 30 դեկտեմբերի 1994:

³ Նույն տեղում

⁴ «Այժմ» 26 հունիսի – 2 հուլիսի 1996:

⁵ «Իրավունք» 10-17 հունվարի 1995:

հայտարարություններ տարածում, քննարկումներ ունենում օտարերկրյա դիվանագիտների հետ, մայրաքաղաքում բողոքի ակցիաներ կազմակերպում:¹

ՀՅԴ-ին, փոխարենը, դատապարտեցին ՀՀԾ-ն ու նրա հետ դաշինք կազմած կուսակցությունները: Դեռ 1994թ. դեկտեմբերի 29-ին նախագահ Տեր-Պետրոսյանը հանդիպեց ՀՀԾ, ՀՀԿ, ՀՌԱԿ, ՌԱԼԴԿ, ՍԴՀԿ, ՀՔԴՄ կուսակցություններին ու «Մտավորական Հայաստան» միության ներկայացուցիչներին: Կուսակցությունների հետ նախագահի հանդիպման ժամանակ քննարկվել էին ներքաղաքական խնդիրները, ինչպես նաև կարևորվել էին ահաբեկչության դեմ իշխանության ձեռնարկած միջոցառումները:² Հանդիպումից ստացված տեղեկատվության հիման վրա էլ դեկտեմբերի 31-ին վերոնշյալ կուսակցությունները հայտարարությամբ պաշտպանեցին ՀՀ նախագահի հրամանագիրն ու ձեռնարկած միջոցառումները:³

Կուսակցության կասեցման որոշման հարցում դատարանի համար «ԴՐՈ»-ի գոյությունը որպես հիմնավորող ապացույց չընդունվեց՝ պատճառաբանելով այդ հարցով դատարանի վճռի բացակայությունը: Փոխարենը ՀՀ Գերագույն դատարանը բավարարեց ՀՀ արդարադատության նախարարության այն հիմնավորումը, որ ՀՅԴ կուսակցության ղեկավարությունն իրականացվել էր օտարերկրյա քաղաքացիների կողմից: Այդ հիմքով էլ 1995թ. հունվարի 13-ին դատարանը բավարարեց ՀՀ ԱՆ միջնորդությունը՝ Հայաստանում ՀՅԴ գործունեությունը 6 ամսով կասեցնելու մասին վճիռ կայացնելով:⁴

Հատկանշական է, որ «ԴՐՈ-ի» և ապա «31-ի» գործերով դատավարությունների ժամանակ ՀՅԴ-ն բողոքի ակցիաներով հանդես չեկավ՝ մտադրված լինելով ուղիներ որոնել կուսակցության գործունեության վերականգնման համար և իշխանությունների հետ փոխզիջման գնալով: Քաղաքական կյանքում դրսևորած իր պասիվությունը ՀՅԴ-ն մեկնաբանում էր հենց իշխանությունների հետ կամուրջները վերջնականապես չայրելու միտումով:⁵ ՀՅԴ-ի կասեցումն ու մեկուկուսացումը քաղաքական կյանքից բացասական ազդեցություն ունեցավ ժողովրդավարական փոփոխությունների վրա:⁶ Այնուամենայնիվ, կուսակցության կասեցմամբ հանդերձ՝ ՀՅԴ-ի բազմաթիվ գործիչներ (Ռ. Հակոբյան, Հ. Կարապետյան, Ս. Բարսեղյան և այլն) մասնակցում էին հրապարակային քաղաքական պայքարին, հրավիրում հանրահավաքներ ու քննադատություն հնչեցնում իշխանությունների հասցեին: Այսինքն՝ անվերապահորեն պնդել կուսակցության կամ

¹ Նույն տեղում:

² «Հայաստանի Հանրապետություն», 30 դեկտեմբերի 1994:

³ ՀՀ Հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական արխիվ (ՀՀ ՀՔԿՓԿՊԱ), ֆ. 1688, ց. 1, գ. 1, թ. 89:

⁴ «Հայաստանի Հանրապետություն», 14 հունվարի 1995:

⁵ «Այժմ» 1-7 մայիսի 1995:

⁶ Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 264:

ՀՅԴ գործիչների գործունեության բացարձակ արգելքի մասին, չէր կարելի: Ի վերջո, 1996թ. դեկտեմբերի 13-ին ՀՀ վարչապետ Արմեն Սարգսյանը հանդիպել էր ՀՅԴ-ի ներկայացուցիչների հետ և քննարկել կառավարության ներկայացրած նոր ծրագիրը:¹ Նույնպես և 1997թ. վարչապետ Ռոբերտ Քոչարյանն էր հանդիպել ՀՅԴ գործիչներին ու նույնաբովանդակ զրույց ունեցել: Ակնհայտ է, որ իշխանությունները ՀՅԴ-ի հետ հարաբերությունների կարգավորման տարբերակներ էին որոնում՝ հանգուցալուծելու կուսակցության՝ կասեցված լինելու լիովին աննպաստ իրավիճակը:

Այս առումով էլ հետաքրքրական են 1996-97թթ. ՀՅԴ-ի ու Հայաստանի իշխանությունների միջև կայացած բանակցությունները՝ կուսակցության գործունեությունը Հայաստանում օրինականացնելու ու վերաբացելու նպատակով:² Թեպետ դրանք ընթացան մի քանի փուլերով ու իրենց վերջնական տրամաբանական հանգրվանին չհասան, սակայն 1998թ. փետրվարին Հայաստանում տեղի ունեցավ իշխանափոխություն և արդեն փետրվարի 9-ին ՀՅԴ-ն պաշտոնապես վերագրանցվեց ՀՀ արդարադատության նախարարության կողմից: Նկատելի է, որ ՀՅԴ-ի վերականգնումը արդեն իսկ հասունացած անհրաժեշտություն էր, որի մասին 1997թ. խոսում էին նաև մրցակից կուսակցությունների՝ ՀՀԿ-ի ու ՀՀԸ-ի ղեկավարները:³ ՀՅԴ գործունեությունը 1998թ. այլևս համապատասխանեցված էր ՀՀ օրենսդրությանը, ուստի կասեցման շարունակման համար իրավական հիմք էլ չկար:

Այսպիսով, 1991-94թթ. ՀՀ միջկուսակցական հարաբերությունների զարգացումը միանշանակ չեղավ՝ ուղեկցված հակասականությամբ և ինչ-որ պահի՝ անգամ բռնությամբ: Այդ հարաբերությունները պտտվում էին ՀՀԸ-ՀՅԴ առանցքի շուրջ, որոնցից յուրաքանչյուրին ներդաշնակում էին հասարակական-քաղաքական կյանքի ակտիվ մյուս կուսակցությունները: Ըստ այդմ՝ ՀՀԸ-ՀՅԴ հարաբերությունները դրսևորվում էին ոչ միայն զուտ միջկուսակցական, այլև իշխանություն-ընդդիմություն մակարդակում՝ պարառելով ինչպես գաղափարաբանական տարակարծությունները, այնպես էլ պրակտիկ քաղաքական հակադրությունները: Քաղաքական երկխոսային մշակույթի զարգացումը, սակայն, խաթարվեց 1994թ., և ի հակառակ երկուստեք որոշ փորձերի՝ այդպես էլ չվերականգնվեց: Բայց և այնպես, ի հեճուկս հաջորդ շրջափուլերի՝ 1991-94թթ. միջկուսակցական հարաբերությունները, դրսևորվելով հանդերձ քառտիկ բնույթով, առանձնացան իրենց գաղափարականությամբ:

¹ «Հայաստանի Հանրապետություն», 14 դեկտեմբերի 1996:

² Տեր-Պետրոսյան Լ., Վերադարձ, Եր., 2009, էջ 203:

³ Անդրանիկ Մարգարյանի ելույթը ՀՀԿ 4-րդ համագումարում, 20 դեկտեմբերի 1997:

Բանալի բառեր - կուսակցություններ, միջկուսակցական հարաբերություններ, բազմակուսակցական համակարգ, գաղափարախոսություն, իշխանություն, ընդդիմություն, Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, հասարակական-քաղաքական կյանք, ՀՀՇ, ՀՅԴ

Նժդեհ Հովսեփյան, Հայաստանի Հանրապետության կուսակցությունների հարաբերությունները 1991-1994 թթ. - Հայաստանի Հանրապետության կուսակցությունների ու նրանց հարաբերությունների պատմության ուրույն շրջան է 1991-94թթ. ընդգրկող փուլը, որը նշանավորվեց ՀՀ անկախության հաստատմամբ ու հասարակական-քաղաքական կյանքի նորովի ձևավորմամբ: Այդ շրջանի միջկուսակցական հարաբերությունները ավելի ստույգ կարելի է բնորոշել որպես սիմետրիկ՝ ընդդիմությունից իշխանություն և հակառակ անցումներով: Դրանք պտտվում էին ՀՀՇ-ՀՅԴ առանցքի շուրջ, որոնցից յուրաքանչյուրին ներդաշնակում էին հասարակական-քաղաքական կյանքի ակտիվ մյուս կուսակցությունները: 1991-94թթ. միջկուսակցական հարաբերությունները, դրսևորվելով հանդերձ քառսիկ բնույթով, առանձնացան իրենց գաղափարականությամբ:

Нждэ Овсемян, Отношения политических партий Республики Армении 1991-1994 гг. - Исторический период 1991-1994 гг. является уникальным этапом развития отношений между политическими партиями Республики Армения. Отношения между партиями, в новой реальности, создавшиеся после провозглашения независимости, можно назвать ассиметричными прыжками партий с оппозиции в правительство и наоборот. Эти отношения развивались в круг орбиты АОД-АРФ, а другие партии примыкали к ним. К тому же, межпартийные отношения, не смотря общую хаотичность, отличались идеологичностью.

Nzhdeh Hovsepyan, Relations between political parties of the Republic of Armenia in 1991-1994 - 1991-1994 is a unique historical period of relations between political parties of Armenia, which emerged right after the independence and developed a path completely new for post-soviet reality. These relations may be labeled as “asymmetric” considering the movement of parties from opposition to government and vice-versa. However, the relations advanced around the orbit of ANM-ARF, while other parties aligned themselves with one or the other. Despite their chaotic character, inter-party relations in 1991-1994 were based on principles of political ideological differences compared to following periods.

**ԹԻՖԼԻՍՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ՀԱՅ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱԽՈՒՇՏԻ ԱՐՔԱՅԱԶՆԻ «ՎՐԱՑԱԿԱՆ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ» ԵՐԿՈՒՄ**

ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Վրաստանում քաղաքային կյանքի զարգացման համար պայմանները նպաստավոր չէին, բացի այդ վրացիները հակված չէին քաղաքային կյանքով ապրելուն¹։ Որպես արդյունք, Վրաստանում չէր առաջանում քաղաքային դաս։ Վրացական քաղաքները հիմնականում հիշեցնում էին ամրոցատիպ լեռնային ավաններ, որոնցում մարդիկ կենտրոնանում էին զուտ պաշտպանական նկատառումներից ելնելով։ Սակայն հանդիպում էին նաև բացառություններ, երբ մարդկանց կենտրոնացում առաջանում էր ինքնաբերաբար, առևտրական նպատակներով։ Այս բնակավայրերի բնակիչները հիմնականում հայեր ու հրեաներ էին²։ Նման քաղաքների թվին պետք է դասել Թիֆլիսը։

Թիֆլիսը վերակառուցել է Վախթանգ Գորգասալը, սակայն մայրաքաղաքի տեղափոխումը Մցխեթից Թիֆլիս իրականացրել է նրա որդին և հաջորդը՝ Դաչին³։

Թիֆլիսում հայերը կազմել են քաղաքային դասի հիմնական մասը և համարվել են քաղաքացի՝ մոքալակե (მოქალაქე)⁴։ Նրանք հանդիսանում էին այն հայերի սերունդները, ում Վախթանգ Գորգասալ արքան կանչեց ու բնակեցրեց նոր կառուցված քաղաքում, որը հետագայում մայրաքաղաք էր դառնալու, և նրանց քաղաքի հետ ամուր կապելու համար տրամադրեց մի շարք արտոնություններ⁵։ 12-րդ դարի սկզբին վերակառուցված Գորիում առևտրի և արհեստների զարգացման նպատակով Դավիթ Շինարար (1089-1125 թթ.) արքան մեծ թվով հայերի բնակեցնում է այնտեղ։ Այս շրջանում մեծաթիվ հայեր հաստատվում են նաև Թիֆլիսում⁶։ Հետագայում Թիֆլիսի հայ բնակչության թիվը ավելի մեծացավ Թամար թագուհու կողմից քաղաքում հայերի բնակեցման նոր փուլից հետո։

¹ Տե՛ս. Бакрадзе Д., Тифлисы в историческом и этнографическом отношении, СПб, 1870, стр. 87

² Տե՛ս նույն տեղում։

³ Տե՛ս ქართლის ცხოვრება, ტომი 1, თბილისი, 1955, გვ. 205

⁴ 16-17-րդ դարերում այս եզրույթի բովանդակության մեջ տեղի են ունենում փոփոխություններ։ Մասնավորապես մոքալակ կարող էին լինել միայն Թիֆլիսի այն բնիկները, ովքեր հանդիսանում էին արքայահպատակ, սակայն, ոչ բոլոր արքայահպատակ տեղաբնիկները կարող էին համարվել մոքալակե, այն միայն այն քաղաքացիները, ովքեր կարող էին կատարել բոլոր այն պարտականությունները, որոնք դրված էին մոքալակի վրա, այն է՝ գանձարանին որոշակի գումարի նվիրաբերում։ Սա ինքնին ենթադրում էր, որ մոքալակե կարող էին դառնալ միայն որոշակի ունեցվածքային ցենզ ունեցողները (Տե՛ս Месхиа. III. А., Города и городской строй в феодальной Грузии в 16-18 веках, Тбилиси 1959, стр. 171-172)։

⁵ Տե՛ս. Бакрадзе Д., Тифлисы в историческом и этнографическом отношении, СПб, 1870, стр. 88

⁶ Տե՛ս Месхиа. III. А., Города и городской строй в феодальной Грузии в 16-18 веках, Тбилиси 1959, стр.43-45.

Թիֆլիսում մեծաթիվ հայազգի բնակչություն հաստատվում է 14-րդ դարում:¹ Թիֆլիսում ապրող հայերի մասին հիշատակություններ է պահպանել Մարկո Պոլոն:² Դեպի Վրաստան հայ բնակչության հոսքը առավել մեծ ծավալներ ընդունեց 15-18-րդ դարերի ընթացքում: Դրան նպաստում էր վրացական թագավորական իշխանության վարած քաղաքականությունը, որի նպատակն էր ի հաշիվ հայ բնակչության ակտիվացնել Վրաստանի տնտեսական կյանքը³:

Սկսած 16-րդ դարի երկրորդ կեսից, պայմանավորված եվրոպական երկրներում Վրաստանի և Հայաստանի նկատմամբ հետաքրքրության աճով, մեծ ծավալ են ընդունում դեպի Հարավային Կովկաս եվրոպական միսիոներների առաքելությունները: Բացի այդ մեծ թիվ էին կազմում առևտրական ու հետախուզական ուղևորությունները: Այդ առաքելությունների անդամները հաճախ վարում էին օրագրեր, որոնցում մանրամասն ներկայացնում են ներկայացնում են իրենց այցելած երկրները: Այդ հիշատակությունները հաճախ չլինելով գիտական աշխատանքներ, հսկայական փաստական նյութ են պարունակում քաղաքական և տնտեսական իրավիճակի, էթնիկ կազմի մասին: Եզակի տեղեկություններ պարունակելուց բացի այդ աշխատանքները աչքի են ընկնում նաև օբյեկտիվությամբ և հնարավորություն են տալիս վերականգնել ժամանակի քաղաքական, սոցիալ-տնտեսական, էթնիկ պատկերը: Այդ աշխատանքների օբյեկտիվությունը հաստատում է նաև այն, որ այդ արևմտյան արշավախմբերը առևտրական, կրոնական գործունեության քողի տակ հաճախ իրականացնում էին հետախուզական գործունեություն:

Ուսումնասիրվող ժամանակշրջանի համար կարևորագույն սկզբնաղբյուր է Ժան Շարդենի⁴ աշխատանքը⁵: Այն վերաբերում է 17-րդ դարի վերջին քառորդին, և բազմաթիվ տեղեկություններ է պարունակում Վրաստանի, Հայաստանի, Պարսկաստանի մասին: Հեղինակը այցելել է նաև Թիֆլիս և մանրամասն անձրադարձել է քաղաքի ճարտարապետությանը, բնակչության կազմին, ավանդույթներին, ինչպես նաև փորձ է կատարել իր լսածի հիման վրա ներկայացնել քաղաքի համառոտ պատմությունը:

¹ St' u Н. Г. Волкова. Этнические процессы в Закавказье в XIX—XX вв. / Отв. ред. В. К. Гарданов. — Кавказский этнографический сборник. — Наука, 1969. Стр. 4.

² St' u Путешествие Марко Поло, перевод И. Минаева, СПб, 1873, стр. 30

³ St' u Шота Тетвадзе, Оtar Тетвадзе, АРМЯНЕ В ГРУЗИИ (с древних времён до сегодняшнего дня), Тбилиси, 2008, стр. 11-12.

⁴ (1643-1713 թթ.), 17-րդ դարի հայտնի ճանապարհորդ, այցելել է Թիֆլիս 1673 թ-ին, նրան է պատկանում 17-րդ դարի Թիֆլիսի լավագույն նկարագրություններից մեկը: Հեղինակը բազմաթիվ սխալներ և անճշտություններ է թույլ տվել կապված քաղաքի պատմության ներկայացման և որոշ տեղանունների բացատրությունների մեջ, սակայն ընդհանուր առմամբ նրա աշխատանքը հանդիսանում է կարևորագույն աղբյուր քաղաքի պատմության ուսումնասիրության համար:

⁵ St' u Жан Шарден, Путешествие Шардена по Закавказью в 1672-1673 гг., Тифлиси 1902 г..

Թիֆլիսի մասին Ժան Շարդենը վկայում է. «Թիֆլիսը խիտ է բնակեցված: Այնտեղ, ավելի քան ամենուր կան օտարերկրացիներ, որոնք առևտրով են զբաղվում: Իշխանի արքունիքը, ինչպես և հարիր է իշխանության կենտրոնի, բաղկացած է մեծաթիվ մեծատոհմիկներից»¹:

Շարդենը չի կարողացել իմանալ, թե երբ է հիմնադրվել քաղաքը: Նա նշում է, որ կարծիք կար, որ դա հենց նույն հնագույն Արտաքսարտա քաղաքն էր, սակայն ինքն էլ ժխտում է այդ տեսակետը², քանի որ դա քիչ հավանական է համարում: Շարդենի աշխատանքում շատ ավելի կարևոր են բնակչության կենցաղի, էթնիկ կազմի, սովորույթների մասին տեղեկությունները: Բացի այդ Շարդենը ներկայացնում է Թիֆլիսի համայնապատկերը³, որը հնարավորություն է տալիս վերականգնել քաղաքի ընդհանուր տեսքը: Հավելենք, որ Թիֆլիսի բնակչության մասին Շարդենը նշում է. «Այնտեղ օտարերկրացիները ավելի շատ են քան որևէ այլ տեղում և մեծ առևտրով են զբաղված»: Դժվար չէ ենթադրել, որ Շարդենի նշած օտարերկրացիները հիմնականում հայեր են, քանի որ քաղաքի հայ բնակչությունը նկարագրելիս հեղինակը նշում է. «Հայերը չեն զբաղեցնում վրացիների նման բարձր պաշտոններ, սակայն անհամարմատ ավելի հարուստ են ի հաշիվ նրանց վարած մեծ առևտրի»⁴:

Հիշարժան է նաև ֆրանսիացի բուսաբան Ժ. Թուրնեֆորը⁵, ով Թիֆլիսում եղել է Շարդենից մոտ 30 տարի անց՝ 1701 թվականին⁶: Նա ևս կարևորագույն տեղեկություններ է հաղորդում քաղաքի մասին: Այդ տեղեկությունների մեջ հատկապես կարևոր է Թիֆլիսի բնակչության թվի ու կազմի ներկայացումը:

Քաղաքի մասին նա գրում է. «Թիֆլիսը բավականին մեծ է և խիտ է բնակեցված: Տները այստեղ բավականին ցածր են և վատ լուսավորված: Դրանք հիմնականում կառուցված են քարից աղյուսից ու կավից: Քաղաքը շրջապատող պարիսպները իրենց բարձրությամբ հիշեցնում են այգու պարիսպ, փողոցները վատ են զծված: Միջնաբերդը գտնվում է քաղաքը հսկող բարձունքի վրա, սակայն գրեթե ավերված է և պաշտպանված է միայն մի քանի թույլ աշտարակներով: Միջնաբերդի կայազորը փոքրաթիվ է, կազմված է մահմեդականներից, որոնք զենքին վատ են տիրապետում: Միջնաբերդի դիմաց գտնվող հրապարակը ծա-

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 204:

² Տե՛ս նույն տեղում, էջ 205:

³ Տե՛ս նույն տեղում էջ 224-225, Հմմտ. Кобяков Д. Краткий исторический очерк города Тифлиса, Тифлиς, 1880, карта вкладыш между страницами 12 и 13:

⁴ Տե՛ս Жан Шарден, Путешествие Шардена по Закавказью в 1672-1673 гг., Тифлиς 1902 г.. стр. 204.

⁵ Ժոզեֆ Փիթոն Թուրնեֆոր (1656-1708), ֆրանսիացի բուսաբան, ով կատարել է ճանապարհորդություն դեպի Հունաստան Թուրքիա, Կովկաս, Լյուդովիկոս 14-րդի հանձնարարությամբ: Այդ ճանապարհորդության նկարագրությունը առաջին անգամ լույս է տեսել ֆրանսերենով 1717թ-ին: Այն աչքի է ընկնում ճշգրտությամբ, չհաշված որոշ թերություններ կապված քաղաքի ճարտարապետության հետ:

⁶ Տե՛ս Кобяков Д. Краткий исторический очерк города Тифлиса, Тифлиς, 1880, стр. 24.

ռայում է ոչ միայն զորավարությունների համար, այլ նաև որպես շուկա: Միջաբերողը գտնվում է Սպահանից եկող ճանապարհի և քաղաքի մյուս ելքի միջև»¹:

Հեղինակը հավելում է. «Թիֆլիսի առևտրի հիմնական ճյուղը մորթիների առևտուրն է, որը այստեղից ուղարկվում է Պարսկաստան կամ Էրզրումով Կոնստանդինուպոլիս: Տեղական մետաքսը Թիֆլիսով չեն փոխադրում մաքսատուրքերից խուսափելու համար: Տեղի հայերը այն գնում են արտադրվելու վայրերում և միանգամից տեղափոխում Զմյոռնիա և Միջերկրական ծովի այլ նավահանգիստներ ֆրանսիացիներին վաճառելու համար»²:

Թիֆլիսի բնակչությունը ըստ Թուրնեֆորի եղել է մոտ 20 հազար, որից՝ հայերը 14 հազար, մահմեդականներ՝ 3 հազար, վրացիներ՝ 2 հազար և հռոմեական կաթոլիկներ 5 հարյուր, որոնք ևս հայեր են, սակայն լուրջ տարաձայնություններ ունեն մյուս հայերի հետ³: Թիֆլիսի բնակչության թվի և էթնիկ կազմի հիշատակումը Թուրնեֆորի աշխատանքում խիստ կարևոր է, քանի որ ժամանակաշրջանի հեղինակները և մյուս ճանապարհորդները լրում են քաղաքի բնակչության թվաքանակի և էթնիկ կազմի մասին: Միաժամանակ պետք է նշենք, որ Թուրնեֆորի բերած թվական տվյալները անուղղակիորեն հաստատվում են ավելի ուշ շրջանի հեղինակների մոտ: Մասնավորապես Յոհաննես Գյուլդենշտադտը 1771 այցելելով Թիֆլիս նշում է, որ այն ունի քսան հազար բնակչություն⁴: Նույնպիսի թվեր ենք հանդիպում նաև 1817 թվականին կազմված Ալեքսանդր Նեգրի դեսպանության օրագրում, որում նա նշում է, որ Թիֆլիսը ունի քսան հազար բնակչություն, իսկ քաղաքում կա 2000 տուն, որոնցից վրացիներին են պատկանում միայն 150-200-ը, մնացածը պատկանում են հայերին⁵: Այստեղից կարելի է ենթադրել, որ դեռ Թուրնեֆորի բերած բնակչության թվական հարաբերակցությունը համապատասխանում է իրականությանը և պահպանվել է բավականին երկար ժամանակ:

Այս երկու հեղինակների հաղորդած տեղեկությունների համադրումը Վախուշտիի վկայությունների հետ հնարավորություն է տալիս վերականգնել քաղաքի էթնիկ պատկերը խնդրո առակա ժամանակահիշրջանում:

Թիֆլիսի առավել հանգամանակից նկարագրությունը պատկանում է արքայազն Վախուշտի Բագրատիոնիին⁶, ով երկար ժամանակ ապրելով ու գործու-

¹ Տե՛ս М. Полиектов, Г. Натадзе, Старый Тифлис, Тбилиси, 1929, стр 30.

² Եթե հաշվի առնենք, որ Թուրնեֆորը հավելում է, որ Թիֆլիսում բնակչության հիմնական եկամտաբեր զբաղմունքը հենց մետաքսի ու մորթիների առևտուրն էր, իսկ այն, ինչպես վերը նշվեց, հիմնականում հայերի մենաշնորհն էր, կարող ենք վստահորեն պնդել, որ քննարկվող ժամանակաշրջանում հայերը Թիֆլիսում ունեցել են գերիշխող առևտրական դիրք:

³ Տե՛ս Relation d'un voyage du Levant, tome troisieme, Lyon, MDCCXVII, p. 167.

⁴ Տե՛ս Պարույր Մուրադյան, Հին Թիֆլիսի Հայոց եկեղեցիները, Էջմիածին 2009, էջ 320

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 323:

⁶ Այս շրջանի խոշորագույն վրացի գիտնականներից էր Վախուշտի Բագրատիոնին (մոտավորապես 1696-1757): Նա վրաց Վախթանգ 6-րդ արքայի արտամուսական որդին էր:

նություն ծավալելով Թիֆլիսում, առավել իրագեկված էր քաղաքի անցուղարձե-
րին ու այնտեղ կատարվող իրադարձություններին:

Թիֆլիսի մասին Վախուշտին վկայում է. «Թիֆլիսը ձևավորում են 3 քա-
ղաքները՝ Թբիլիսին, Կալան¹ և Իսանի²,...միջնաբերդում բնակվում են պարսիկ-
ները, իսկ քաղաքում մեծամասամբ հայեր ու փոքր թվով վրացիներ... »:³

Բացի քաղաքի մանրամասն նկարագրությունից Վախուշտին թողել է նաև քաղաքի հատակագիծը⁴: Հեղինակը ներկայացնում է նաև քաղաքի ճարտա-
րապետությունը, եկեղեցիները, բնական պայմանները: Ներկայացված եկեղեցի-
ների մեծ մասին, ըստ Վախուշտիի, տիրում են հայերը, սակայն դրանց պատկա-
նելիությանը վերաբերող հարցերը չենք քննարկի, քանի որ դրանք մանրամաս-
նորեն քննված են թե՛ հայ և թե՛ վրացի հեղինակների՝ մասնավորապես Պլատոն
Իոսելիանիի⁵, Պարույր Մուրադյանի⁶ և այլոց աշխատանքներում:

Թիֆլիսի հայ բնակչությունը նաև նշանակալի դեր ուներ քաղաքի կառա-
վարման գործում: Վախուշտին հիշատակում է Թիֆլիսի մեկիք Աշխարհաբեկին,
ով հատկապես ազդեցիկ էր թուրքական տիրապետության շրջանում, ու նույ-
նիսկ հրաժարվել էր ընդունել վրացական ազնվականներին, երբ նրանք ցանկա-
ցել էին տեսակցել նրան:⁷ Վախուշտիի կողմից մեջբերված հատվածում հեղինա-
կը, թեև բնակչության թիվ չի նշում, սակայն արձանագրում է, որ հայերը քաղաքի
բնակչության մեծամասնություն են կազմել: Վախուշտի Բագրատիոնիի կողմից
Թիֆլիսի նկարագրությունը հիմնականում օբյեկտիվ է, ինչը կարող է զարմանա-
լի թվալ հաշվի առնելով Թիֆլիսի գրեթե ողջ գոյության ընթացքում եղած հայ-
վրացական հակասությունները, որոնք նկատել են նույնիսկ շատ քիչ ժամանա-
կով քաղաքում եղած ճանապարհորդները⁸: Սակայն, եթե առավել հանգամանա-
լից ուսումնասիրենք այդ հակամարտությունների պատճառները ամեն ինչ առա-
վել պարզ կդառնա: Այդ հակասության երկու բևեռներում հայ առևտրականութ-
յունն ու վրացական ֆեոդալական ավագանին էին: Ուստի արձանագրենք, որ
Վախուշտին, լինելով վրացական կենտրոնացված պետության կողմնակից և թա-

Ակտիվորեն զբաղվում էր քաղաքականությամբ հոր գահակալման տարիներին: Այնուհետև
Վախթանգի հետ տեղափոխվեց Ռուսաստան ու և՛ ձեռնամուխ եղավ ակտիվ գիտական գործու-
նեության: Վախուշտին վրացական պատմագրությունը հասցրեց լրիվ նոր՝ գիտական,
մակարդակի: Անուրանալի է նրա դերը նաև Վրաստանի և ողջ տարածաշրջանի պատմական
աշխարհագրության ուսումնասիրության գործում:

¹ Տե՛ս *Ջորտոկոս Երեմյանի Գեորգի Գեորգիևի Լեյբնիցի, Թբիլիսի, 2013, թ. 275-278.*

² Թաղամաս Թբիլիսում, հետագայում Հավլաբար, տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս Ջորտոկոս Երեմյանի, Գեորգ 4, Զատնոմցվոլի Վախուշտի Երեմյանի Սամբուկա Սամբուկոս, Թբիլիսի, 1973, թ. 333-340.

⁴ Տե՛ս Кобяков Д. Краткий исторический очерк города Тифлиса, Тифлиς, 1880, стр. 22-23.

⁵ Տե՛ս Иоселиани Платон, Описание древностей города Тифлиса, Тифлиς 1866.

⁶ Տե՛ս Պարույր Մուրադյան, Հին Թիֆլիսի Հայոց եկեղեցիները, Էջմիածին 2009:

⁷ Տե՛ս Ջորտոկոս Երեմյանի, Գեորգ 4, թ. 518.

⁸ Տե՛ս Жан Шарден, Путешествие Шардена по Закавказью в 1672-1673 гг., Тифлиς 1902 г.. стр. 204.

Դավիթ Կարապետյան, Թիֆլիսում բնակվող հայ բնակչությանը վերաբերող տեղեկությունները Վախուշտի Արքայագնի «Վրացական թագավորության նկարագրությունը» երկում - Հոդվածի նպատակն է վերհանել Վախուշտի Արքայագնի աշխատանքում առկա, Թիֆլիսի հայ բնակչության վերաբերյալ տեղեկություններ, այլ աղբյուրների օգտագործմամբ ճշտել և լրացնել այդ տեղեկությունները: Դա հնարավորություն է տալիս պարզել հայ բնակչության մոտավոր թվաքանակը Քարթլիի թագավորության մայրաքաղաքում, բնակչության էթնիկ կազմը, Թիֆլիսի հայ բնակչության ներգրավվածությունը քաղաքի կառավարման մեջ, առևտրում, ինչպես նաև պարզաբանել հայ-վրացական հարաբերությունների ուղղ առանձնահատկություններ խնդրո առարկա ժամանակաշրջանում:

Давид Карапетян, Информация об армянском населении, проживающем в Тбилиси, в труде принца Вахушти «Описании грузинского царства», - Цель статьи – выявить и заполнить информацию об армянском населении Тифлиса, используя труд Принца Вахушти. Сопоставить этот труд с другими историческими источниками с целью уточнения примерного количества армянского населения города, этнического состава населения Тифлиса, роли армянского населения, роль армян в управлении городом и в торговле, также, уточнить некоторые аспекты армяно-грузинских взаимоотношений в изучаемый период.

David Karapetyan, Information on the Armenian population residing in Tbilisi, in the work of Prince Wakhusht „Description of the Kingdom of Georgia” - The purpose of the article is to reveal and fill in information about the Armenian population of Tiflis, using the work of Prince Wakhusht. To compare this work with other historical sources in order to clarify the approximate number of the Armenian population of the city, the ethnic composition of the Tiflis population, the role of Armenians in city management and trade, and also to clarify some aspects of the Armenian-Georgian relationship in the period under study.

**ՊԱՐՄԿԱ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ VI
ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ**

ԱՐՄԵՆ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ

565 թ. Հուստինիանոս կայսեր մահից հետո Բյուզանդիան կանգնած էր սնանկության եզրին, թե՛ նյութական և թե՛ հոգևոր տեսակետից: Կայսեր մահից հետո, գահը անցավ նրա քրոջորդի Հուստինոս II-ին (565-578)¹: Միաբնակ եկեղեցին Հուստինիանոս I-ի մահից հետո ցանկանում էր քաղկեդոնականներին իր հետևից տանել, և մեծ հույսով ակնկալում էր Հուստինոս II-ի աջակցությունը: Կոստանդնուպոլսի միաբնակները ի տարբերություն կայսրության արևելյան գավառներում գործունեություն ծավալած միաբնակների, հանդես էին գալիս վերնախավի շահերի պաշտպանությամբ, և Հուստինոս II-ը ուզում էր նրանց միջոցով ամրացնել իր թուլացող դիրքերը կայսրության հեռավոր շրջաններում: Սա միաբնակների միջև երկպառակտության մի նոր առիթ դարձավ, որը թուլացրեց նրանց դիրքերը կայսրության ներսում: Այս երկպառակտությունից օգտվելով, կայսրն ու նրա համախոհները որոշեցին վերացնել միաբնակ խմբակցությունները, սակայն այս գործողությունները արդյունք չտվեցին. կայսրը չկարողացավ երկրի մեջ հաստատել եկեղեցու միասնությունը, և հակաբյուզանդական տրամադրություններն ավելի սուր բնույթ ստացան²:

Իչնպես հայտնի է, 562 թ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև 50 ամյա հաշտության պայմանագիր կնքվեց, ըստ որի Հայաստանը շարունակում էր բաժանված մնալ երկու պետությունների միջև: Բյուզանդիայի դեմ մղած պատերազմի ավարտից հետո Խոսրով Անուշիրվան (531-579) արքան սկսեց կրոնական հալածանքների ենթարկել հայերին, աղվաններին ու վրացիներին: Պարսկական արքունիքի հարկային, վարչական ու կրոնական ճնշումները բորբոքում են հայ հասարակության բոլոր խավերի՝ շինականների, ազնվականության ու հոգևորականության դժգոհությունը, նպաստում Հայաստանում նոր ազատագրական շարժման ծավալմանը: Ապստամբությունը կազմակերպում և զլխավորում են Հովհաննես Գաբեղենացի կաթողիկոսը և սպարապետ Վարդան Մամիկոնյանը: Ապստամբները օգնություն են խնդրում Վրաց աշխարհից և Աղվանքից, որոնք այդ ժամանակ նույնպես նախապատրաստվում էին ապստամբության: Հայերը դիմում են նաև Բյուզանդիայի օգնությանը: 570 թ. աշնանը կնքվում է հայ-բյուզանդական դաշինք, որի համաձայն մարզպանական Հայաստանը ապստամ-

¹ St' u Успенский Ф , История Византийской империи, т. I, СПб., 1913, с. 608.

² St' u «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ. 8, «Ատրական աղբյուրներ Ա», թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Գ. Մելքոնյանի, (այսուհետև՝ Ատրական աղբյուրներ), Երևան, 1976, էջ 340-344:

բության հաղթանակի դեպքում, դուրս էր գալու Պարսկաստանի տիրապետությաննից և մտնելու էր Բյուզանդիայի գերիշխանության տակ: Հայերն ազատորեն կատարելու էին իրենց եկեղեցական ծեսերը, նաև կայսրությունը երեք տարով նրանց ազատելու էր ամեն տեսակ հարկերից¹: Բյուզանդիան, փաստորեն, պարսիկների դեմ օգտագործեց Մարզպանական Հայաստանը և այնտեղ տեղի ունեցող իրադարձությունները²:

572 թ. հոկտեմբերի 2-ին հայերը Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ հանկարծակի հարձակվեցին և սպանեցին Դվինում գտնվող պարսիկներին, այդ թվում նաև Սուրեն մարզպանին³: Մարզպանական Հայաստանում ծագած ապստամբությունը դառնում է մի նոր պարսկա-բյուզանդական պատերազմի առիթ, որը տևում է մինչև 591 թ.:

Շուտով հայկական ապստամբությունը սկսեց արագ թուլանալ, որովհետև հենց այդ միջոցին անհամաձայնություններ ու գծություններ ծագեցին նախարարների միջև: Վարդան Մամիկոնյանն ու իր կողմնակիցները վերցրին իրենց ընտանիքներն ու Հովհաննես կաթողիկոսի հետ միասին գնացին Կոստանդնուպոլիս:

Հուստինոս II-ը Կոստանդնուպոլիս ժամանած հայերից պահանջում է քաղկեդոնականություն ընդունել, և հայ-բյուզանդական եկեղեցական միաբանությանը պաշտոնական բնույթ տալու նպատակով, Կոստանդնուպոլսում շուտով գումարում է եկեղեցական ժողով, որտեղ հայերը պաշտոնապես ընդունում են քաղկեդոնականությունը⁴: *Narratio de rebus Armeniae*-ում հետևյալ կերպ են նկարագրված այս դեպքերը «Երկար ժամանակ անց ոմն Վարդան իշխան սպանեց պարսիկ բռնակալ Սուրենին և ապստամբելով՝ Հայաստանից փախչում է Կոստանդնուպոլիս՝ Խոսրովի Խ (40) տարում, և սուրբ Սոֆիան կառուցող Հուստինիանոսի Լ (30) տարում: Կոստանդնուպոլսում կայացավ մեծ ժողով, որին անվանում են հինգերորդ ժողով, ընդդեմ աղանդավոր ոմանց և միաբանելով, հրավիրեցին Վարդանին և նրա հետևորդներին սուրբ Սոֆիայի մի դուռը, որը մինչև օրս կոչվում է Հայոց Դուռ և այն ժամանակ նգովեցին Օրիգենեսին, Եվագրիոսին, Դիդիմոսին, նեստորականներին, հակոբիկներին, հուլիանականներին, գայանոսականներին և ընդհանրապես Եվտիքեսի և Դիոսկորոսի աղանդի կողմնակիցներին: Վերադառնալով Հայաստան, նրանց մասը սիրով ընդունեց միությունը, իսկ

¹Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն» /ՀՄՄՀ ԳԱ Պատմության ինստիտուտ/, հ. II, «Հայաստանը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում», (այսուհետև՝ ՀԺՊ, հ. II), Եր., 1984, էջ 254-256:

²Տե՛ս Իսկանյան Վ., Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VII դդ., Եր., 1991, էջ 249-250, 252:

³Տե՛ս Սեբեոս, Պատմություն, քննական բնագիրը՝ Գ Աբգարյանի, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Գ Խաչատրյանի և Վ Եղիազարյանի, (այսուհետև՝ Սեբեոս), Երևան, 2005, էջ 49:

⁴Տե՛ս «ՀԺՊ, հ II», էջ 258:

մյուս մասը Հովհաննես կաթողիկոսի ժամանակ պոռնկացավ (իմա. հերետիկոսացավ)»¹:

Երբ դավանական միաբանության մասին լուրը հասնում է Հայաստան, այստեղի հոգևորականությունն ու ազնվականները խիստ բովանդակությամբ նամակ են գրում կաթողիկոսին՝ դատապարտելով նրա եկեղեցական գործարքը, որը հակասում էր ազգային եկեղեցու ավանդույթներին: Հովհան Եփեսացին նշում է «Երբ եղածն իմացան իրենց երկրում, բարկացան նրանց վրա եպիսկոպոսներն ու բոլոր բնակիչները և խիստ նամակ գրեցին նրանց, այնպիսի խոսքեր, որոնց մասին ավելի լավ է առայժմ լռել»²: Վարդան Մամիկոնյանն ու նախարարներից շատերը Կոստանդնուպոլսում չմնացին, այլ կայսերական օժանդակ գործի հետ միասին վերադարձան Հայաստան և իրենց հայկական գնդերով, բյուզանդական ուժերի հետ համագործակցած, մասնակցեցին պարսիկների դեմ ուղղված հետագա պատերազմական գործողություններին³:

Հուստինոս II կայսեր առողջական վիճակը շատ վատ էր, այդ պատճառով 574 թ. կայսրը իրեն գահակից նշանակեց, Տիբերիոսին, որին որդեգրել էր: Տիբերիոսը Սոֆիա թագուհու հետ կառավարեց մինչև Հուստինոս կայսեր մահը 578 թ. ապա դարձավ կայսրության միանձնյա տիրակալը: Տիբերիոսի կարևոր քաղաքական քայլերից մեկն այն էր, որ պարսիկների հետ պատերազմում բյուզանդական զորքերի հրամանատար նշանակեց Մավրիկիոսին, որը հետագայում դարձավ կայսեր փեսան և ժառանգորդը⁴:

Հայերի վիճակը ծանրացավ 576 թ., երբ Հայաստան արշավեց անձամբ Խոսրով արքան: Վերջինս շարժվում է դեպի Փոքր Հայք, այնուհետև նրա բանակը շարժվում է դեպի Կապադովկիական Կեսարիա: Այստեղ պարսից զորքը հանդիպում է բյուզանդացիների լուրջ դիմադրությանը և ստիպված շարժվում է դեպի Մեբաստիա-Մելիտենե քաղաքների ու Եփրատ գետի ուղղությամբ: Պարսիկները այստեղի ճակատամարտում պարտվում են և հեռանում Պարսկաստան: Հայկական և բյուզանդական միացյալ բանակն առաջ է շարժվում մինչև Սյունիք, Ադվանք և Ատրպատական: Ողջ Հայաստանն անցնում է բյուզանդական տիրապետության տակ⁵: Խոսրով Անուշիրվանը կայսրությանը առաջարկում է զինադադար: Բանակցությունները դեռ չէին ավարտվել, երբ 577 թ. աշնանը պարսից զո-

¹Բարթիկյան Հ, «Narratio de rebus Armeniae», հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկե-դոնական սկզբնաղբյուր, Բանբեր Մատենադարանի, № 6, (այսուհետև՝ Narratio de rebus Armeniae), Եր., 1962, էջ 465:

²«Ասորական աղբյուրներ», էջ 392:

³Տե՛ս Բսկանյան Վ., նշվ. աշխ., էջ 295-296:

⁴Տե՛ս Успенский Ф., указ соч., с. 609.

⁵Տե՛ս «ՀԺՊ, հ II», էջ 260-261:

րավար Տամ-Խոսրովը 30 000-անոց զորքով մտնում է Հայաստան ու պարտության մատնում Հուստինիանոս զորավարի 120 000-անոց զորքին¹:

577-578 թթ ձմռանը Հուստինիանոսի փոխարեն բյուզանդական արևելյան բանակի գլխավոր հրամանատար է նշանակվում և Հայաստան ուղարկվում Մավրիկիոսը (Մորիկը): Մորիկը սկսեց եռանդով հարձակումներ գործել Արծն գավառում, որտեղ և փայլուն հաղթանակներ ունեցավ: Միմյանց հետևից բյուզանդացիների ձեռքն էին անցնում սահմանագլխի կարևոր նահանգները: Մորիկը Միջագետք էր մտցրել իր զորքերը և առաջանում էր մեծ թափով: Նրան միայն կանգնեցրեց Հուստինոս II կայսեր մահը²: Տիբերիոսը փորձեց հաշտություն կնքել պարսիկների հետ, սակայն մեկ տարի անց մահացավ նաև պարսից արքա Խոսրով Անուշիրվանը, որին հաջորդեց նրա որդի Որմիզդ IV-ը (579-590):

Տիբերիոս կայսեր մահից հետո Բյուզանդական գահը անցավ Մավրիկիոսին (582-602): Մորիկը խիստ բացասական ազդեցություն է ունեցել հայ ազգի ճակատագրի վրա:

586 թ. պարսկական և բյուզանդական զորքերը բախվում են միմյանց Միջագետքում, որտեղ պարսկական զորքերը պարտություն են կրում: Այս ճակատամարտում աչքի է ընկնում նաև Փիլիպիկի օգնական Հերակլը (ապագա կայսր Հերակլ I-ի հայրը), որին և տրվում է գերագույն հրամանատարությունը պարսկական սահմանին: Հերակլը հենակետ է դարձնում Ամիդը և մի շարք հաղթական հարձակումներ է ձեռնարկում Հարավային Հայաստանում: Դեպքերի հետագա զարգացման մեջ որոշիչ դեր խաղացին Պարսկաստանում ծագած ներքին խնդիրները, որոնք պատերազմի բախտը որոշեցին ի օգուտ Բյուզանդիայի³: 589-590 թթ. թուրքական խաքան Շաքան 300 000 զորքով արշավում է Պարսկաստանի վրա: 590 թ. սկզբին պարսից նշանավոր զորավար Վահրամ Չուբինը ջախջախելով խաքանին՝ ձեռք է բերում հարուստ ռազմավար, բայց շուտով ապստամբելով Որմիզդ թագավորի դեմ, զորքով շարժվում է Տիգրոն: Այս ապստամբության առիթ է հանդիսանում Վահրամ Չուբինի պարտությունը բյուզանդական զորավար Ռոմանից: Չորքերի բախումը տեղի է ունենում Արաքս գետի ափին: Պարսկական զորքը ջախջախվում է և փախուստի է դիմում⁴:

Վահրամի գլխավորած ապստամբությունը փոխում է 20-ամյա պատերազմի ընթացքը հոգուտ Բյուզանդիայի: Սասանյան արքունիքում միաժամանակ կազմակերպվում է դավադրություն Որմիզդ արքայի կնոջ եղբայրների՝ Վնդոյի և Վս-

¹Տե՛ս Սեբեոս, էջ 55 : Տե՛ս նաև Իսկանյան Վ., նշվ. աշխ., էջ 308-309 :

²Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հատոր Բ, Երևան, 1967, էջ 207-208:

³Տե՛ս Успенский Ф., указ соч., с. 628.

⁴Տե՛ս Дмитриев В. «Всадник в сверкающе броне»: Военное дело сасанидского Ирана и история римско-персидских войн, СПб, 2008, с. 307-308.

տամի¹ գլխավորությամբ: Որմիզդը արքան պալատական հեղաշրջման զոհ է դառնում: Նրան բանտարկում են և կուրացնում: Գահակալում է Որմիզդի որդի Խոսրով Փարվեզը (590-628):

Մծբինի մոտ տեղի ունեցավ ճակատամարտ, որում արքայական զորքերը պարտություն կրեցին Վահրամ Չուբինից, որն էլ իրեն թագավոր հռչակեց Տիգրանում: Բայց իբրև թագավոր՝ ժողովրդականություն չունեցավ, որովհետև Սասանյան ծագում չունեք, իսկ Սասանյան տոհմն արդեն վաղուց նվիրական էր դարձել ժողովրդի աչքում²:

Մորիկ կայսրը պաշտպանեց գահի օրիանական ժառանգ Խոսրով II Փարվեզին և նրան տրամադրեց բյուզանդական, հայկական, վրացական և ադվանական զորամասեր: Այս զորքերի հրամանատար է նշանակվում բյուզանդական արևելյան ուժերի գլխավոր հրամանատար Կոմենեցիոլը, որին շուտով փոխարինում է հայազգի Ներսեսը: Հայաստանի բյուզանդական զորքի հրամանատարն էր Հովհան Մյուսթաքունը, իսկ հայ նախարարական զորագնդերինը՝ Մուշեղ Մամիկոնյանը³: Մավրիկիոսը, օգնելով Խոսրովին, ավելի էր թուլացնում Պարսկաստանին, քանի որ Խոսրովի և Վահրամի պայքարը ընդհանուր առմամբ ջլատում էր պարսից ուժերը⁴:

Տեսնելով իր դեմ շարժվող բանակները, Վահրամ Չուբինը մի նամակ ուղարկեց Մուշեղ Մամիկոնյանին: Պարսից թագավորը առաջարկում էր Մուշեղին թողնել բյուզանդական բանակը և միանալ իրեն: Սակայն հայ նախարարները այս նամակը անպատասխան թողեցին: Հայերից պատասխան չստանալով Վահրամը մի նոր նամակ ուղարկեց, որի մեջ արդեն սպառնում էր հաշվեհարդար տեսնել նաև հայերի հետ: Այս նամակին Մուշեղ Մամիկոնյանը պատասխանեց հետևյալ կերպ «Առ աստուածոյ է թագաւորութիւնն, և ում կամեցաւ՝ ետ. բայց դու պարտիս յանձն քո պաշաւել և ոչ ի մեզ: Եւ ծանեայ զքեզ այր պոռոքաբան և ոչ խրախուսես յԱստուած, այլ ի քաջութիւն և ի փղաց զարութիւն. այլ ես ասեմ քեզ. եթէ Աստուած կամեսցի՝ վաղիւ պատելոց է զքն պատերազմ քաջաց, և ճայթեսցեն ի վերայ քո և ի վերայ բազմութեան փղացդ իբրև զամպս երկնից զազանագոյնս քան զամենեսեան»⁵:

Շուտով Վահրամի կողմնակիցներից շատերը, ականատես լինելով Մավրիկիոսի օգնությանը Խոսրովին և Վահրամ Չուբինի ապստամբության ուժի թուլացմանը, նետվեցին Խոսրովի կողմը: Վճռական ճակատամարտը նրանց միջև

¹Նեոլոքեբեն տալիս է Բինդոյե (Bindoe) և Վստամ (Bistam, Vistahm) ձևերը: Տե՛ս Նեոլոքեբ Թ., Պատմութիւն Սասանեան Տերութեան, Վաղարշապատ, 1896, էջ 69:

²Տե՛ս Լեո, նշվ. աշխ., էջ 212-213:

³Տե՛ս «ՀԺՊ, հ II», էջ 262-263:

⁴Տե՛ս Դանիելյան Է., Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ առաքելական եկեղեցին (VI-VII դարեր), Երևան, 2000, էջ 11-12:

⁵Սեբեոս, էջ 72:

տեղի ունեցավ Ատրպատականում 591 թ. սեպտեմբերին: Ապստամբների գորքը ջախջախվեց, իսկ Վահրամը ապաստանեց Բահլ Շահաստանում, «ուր եւ ի բանէն Խոսրովայ սպանաւ»¹:

Վահրամի փախուստից հետո Խոսրով Փարվեզը վերահաստատվեց պարսից գահին: Ըստ Մեքեռսի, Վահրամի փախուստի կազմակերպումը պարսից արքունիքը վերագրում է Մուշեղ Մամիկոնյանին: Այս ամենը լսելով, Խոսրովը կարգադրում է իր մոտ կանչել հայ սպարապետին: Մուշեղը արքայից սառը ընդունելություն ստացավ, և շրջվելով հեռացավ: Արքան մարդ ուղարկեց նրա հետևից, որպեսզի ետ կանչեն, սակայն սպարապետը առհամարհեց Խոսրովի հրամանը և շարունակեց իր ճանապարհը: Սպարապետը այս լուրը պատմեց Հովհան պատրիկին: Հովհանը և ամբողջ գորքը շատ զայրացան, նրանք Մորիկ կայսեր համար մեծաքանակ ռազմավար պատրաստեցին և 400 զինվորների հետ ուղարկեցին Բյուզանդիա: Կայսրը ընդունում է այդ պարզները, շնորհակալական նամակ է ուղարկում և հրամայում է հրաժարվել պարսից թագավորին չարախոսող մտքից: Նա նամակ է ուղարկում նաև պարսից թագավորին, որում ասվում էր. «գոհութեամբ արձակել զամենեսեան»²:

591 թ. Մորիկ կայսեր և Խոսրով Փարվեզի միջև կնքվում է հաշտության պայմանագիր, որով վերջ է դրվում շուրջ 20 տարի շարունակվող պարսկա-բյուզանդական պատերազմին: Կայսրության արևելյան սահմանին շուրջ 10 տարի խաղաղություն էր տիրում³:

Հայաստանում գծվում է երկու տերությունների նոր սահմանագիծ, որը հյուսիսից հարավ անցնում էր հետևյալ ուղղությամբ. «Տիֆլիս (Թբիլիսի)-Թռեղքի լեռներ (Թրիա-լեթիի լեռներ)-Խոնավ լեռներ-Բագումի լեռներ՝ մինչև Աղստև գետի հետ հատվելը-Գեղամա լեռներ-Ազատ գետ-Արաքս գետ՝ Ազատ գետի գետաբերանից մինչև Մասսի դիմաց-Մակու-Առեստավան (Վանա լճի հյուսիս-արևելյան ափին)-Ընծաքիսար գագաթը՝ Վանա լճի հարավային ափին Մծբին»⁴:

Խոսրով Փարվեզին տրված բյուզանդական օգնությունը, հնարավոր է, որ ի սկզբանե պայմանավորված լիներ Պարսկաստանի քրիստոնյաներին տրվելիք հետագա առավելություններով: Ինչպես հայտնի է Պարսկաստանի տարածքում բնակվող քրիստոնյաների մեծ մասը նեստորականներ էին, որոնց դեռ Խոսրովից առաջ հովանավորում էր նրա հայր Ռրմիզդը: Հետագայում նեստորականներից բացի Պարսկաստանում հովանավորչություն ստացան նաև միաբնակները, որովհետև Խոսրով արքան կնության վերցրեց Մորիկ կայսեր դստեր՝ Մարիային

¹Դանիելյան Է., նշվ. աշխ., էջ 13-14:

²Մեքեռս, էջ 80-85:

³Տե՛ս Успенский Ф., указ соч., с. 628-629.

⁴Իսկանյան Վ., նշվ. աշխ., էջ 326:

և Շիրին թագուհուն: Այս ամուսնությունները ավելի ամրապնդեցին քրիստոնեության դիրքերը Պարսկաստանում¹:

Այժմ խոսենք 591 թ, բաժանումից հետո Հայաստանում Մորիկ կայսեր վարած քաղաքականություն մասին: Այս քաղաքականությունը կարելի է բաժանել երեք մասերի՝ վարչական, եկեղեցական, և ռազմական: Սկսենք առաջինը:

Մորիկ կայսեր կողմից Հայաստանում իրականացրած վարչական փոփոխությունների մասին մեզ շատ կարևոր տեղեկություն է հայտնում Հովհաննես Դրասխանակերտցին. «նախ զԱրմենին գայն, որ Առաջին Հայքն անուանիւր՝ Երկրորդ Հայք գնա Մորիկ կոչեաց, յորում մայրաքաղաք է Սևաստիայ: Իսկ զԿապադովկիայ, յորում մայրաքաղաքն է Կեսարիայ՝ և Երկրորդ Հայք նախ անուանիւր, կոչէ գնա Երրորդ Հայք և առնէ գնա Եպարքի: Իսկ զՄելիտենէ, որ ունի գիւմարնուն իւր գաւառս՝ է և Երրորդ Հայք կոչէ գնա Առաջին Հայք: Իսկ զՊոնտոս, յորում մայրաքաղաք է Տրապիզոն՝ կոչէ գնա Մասն մեծ Հայոց և Չորրորդն կոչեցեալ Հայք, յորում մայրաքաղաք է Մարտիրոսացայօլիս, այսինքն՝ Նփրկերտ, Յուստիանունիստ, գնա գրէ ի դիւան արքունի: Դարձեալ զաշխարհն Կարնայ, յորում մայրաքաղաք է Թեոդոսուպօլիս՝ անուանէ գնա Մեծ մասն Մեծ Հայոց: Եւ որ ի Մեծն Հայոց մասն ինչ մնացեալ էր ի ձեռս Հռոմոց կողմանց անտի ի Բասենոյ մինչև ի սահմանս Ասորեստանի Մեծ Հայք գնա կոչէ իսկ զկողմանս Տայոց սահմանօք իւրովք հանդերձ՝ Խորագոյն Հայք, և զկողմն Դվին քաղաքի՝ Ներքսագոյն Հայք»²:

Սակայն պատմիչի ներկայացրած որոշ փաստեր չեն համապատասխանում իրականությանը: Առաջին անճշտությունը վերաբերվում է Առաջին Հայքին, որը Մորիկը վերանվանել է Երկրորդ: Սակայն Առաջին Հայքը Երկրորդ է վերանվանել ոչ թե Մորիկը, այլ Հուստինիանոս I-ը 536 թ. արձակած իր նովելայով: Երկրորդ անճշտությունը վերաբերվում է Կապադովկիան Երկրորդ Հայք կոչելու մասին: IV դարում Երկրորդ Հայք կոչվել է այն վարչական միավորը, որի մեջ մտել են Մելիտինե, Արկա, Կոկիսոն, Արքիսոս, Արիարաթե և Կոմանա քաղաքները: Իսկ Հուստինիանոսի կազմած Երկրորդ Հայքի մեջ՝ Մեքաստիա, Մեքաստուպոլիս, Կոմանա, Ջելա և Բերիսա քաղաքները, տարածքներ, որոնք գտնվել են Կապադովկիայից շատ ավելի արևելք և ոչ մի առնչություն չեն ունեցել նրա հետ: Այնուհետև ըստ Դրասխանակերտցու Մորիկ կայսրը Պոնտոսը՝ Տրապիզոն կենտրոնով, անվանում է «Մասն մեծ Հայոց»: Սակայն Հուստինիանոսի 536 թ. նովելայով կազմվել էր Ներքին կամ Առաջին Հայք (Հուստինիանուպոլիսկենտրոնով), որի մեջ ընդգրկվել էին Թեոդոսուպոլիս, Սատաղ, Նիկոպոլիս, Կոլոնիա քաղաքները, որոնք վերցվել էին Առաջին Հայքից, նաև Տրապիզոնը և Կերասուսը՝ նախ-

¹Տե՛ս Լյուկոնին В., Древний и раннесредневековый Иран, Москва, 1987, с. 183-184.

²Տե՛ս Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ Պատմութիւն Հայոց, (այսուհետև՝ Հովհաննես Դրասխանակերտցի), Երևան, 1996, էջ 70:

կին Պոլեմոնյան Պոնտոսից: Հուստինիանոսից հետո ոչ թե «Մասն մեծ Հայոց», այլ «Մեծ Հայք» անունով կազմված վարչական միավորի մեջ են մտել Տրապիզոնը, Հուստինիանուպոլիսը (Եկեղյաց գավառ), Կոլոնիան, Նիկոպոլիսը, Սատաղը և Կերասուրը: Պատմիչը այնուհետև նշում է, որ Կարին «Աշխարհը» Թեոդոսուպոլիս կենտրոնով Մորիկ կայսրն անվանում է «Մեծ մասն Մեծ Հայոց»: Այս վկայությունը ևս ճիշտ չէ: Հուստինիանոսի 536 թ. նովելայով կազմված Ներքին կամ Առաջին Հայքի մեջ է մտել նաև Թեոդոսուպոլիսը (Կարին) իր գավառի հետ միասին¹: Այս ռեֆորմները ուղված են եղել նախարարական կարգը ոչնչացնելու և երկիրը վարչականորեն կայսրությանը ձուլելու համար:

Եկեղեցական քաղաքականություն: Հետևելով նախորդ կայսրերի օրինակներին, Մորիկը ևս փորձում էր Հայաստանում քաղկեդոնականություն տարածել և Հայոց եկեղեցին միացնել Բյուզանդականին: Եթե նրա վարչական բարեփոխումները նպատակ ունեին երկիրը ձուլելու կայսրությանը, ապա եկեղեցական քաղաքականությունը՝ նախապատրաստելու էր հայերի էթնիկական խառնասերումը հունական տարրի մեջ: Ըստ քաղկեդոնական աղբյուր Narratio-ի, զորավար Մուշեղ Մամիկոնյանը գնալով Պարսկաստան և հաղթանակ տանելով, հաստատեց Խոսրովին գահի վրա: Խոսրովը Մուշեղին ուղարկեց Մավրիկիոսի մոտ: Ժամանելով Կոստանդնուպոլիս, պատվական խաչի մեծ տոնի օրը, Մուշեղն իր ուղեկիցների հետ հրաժարվեց հաղորդությունից: Կայսրը նամակներով հրաման ուղարկեց, որպեսզի Հայոց բոլոր եպիսկոպոսները և Մովսես կաթողիկոսն իր դպիրների հետ միասին ներկայանան Կոստանդնուպոլիս: Սակայն Մովսես Բ Եղվարդեցի կաթողիկոսը (574-604) հրաժարվեց ենթարկվել կայսեր հրամանին, ասելով. «Ես չեմ անցնի ազատ գետը, չեմ ուտի փռան հացը և չեմ խմի ջրախառն տաք զինի»²:

Կասպուրականի եպիսկոպոսները և նրանք ովքեր գտնվում էին Պարսից տիրապետության տակ նույնպես չցանկացան մեկնել Կոստանդնուպոլիս: Իսկ Տարոնի եպիսկոպոսները, և ովքեր, որ գտնվում էին բյուզանդացիների տիրապետության տակ, գնացին: Երբ նրանք վերադարձան Հայաստան, Մովսես կաթողիկոսը և եպիսկոպոսները չնդունեցին նրանց: Նրանք իրենց կաթողիկոս ձեռնադրեցին Հովհաննեսին՝ Կոգովիտի Բագարան գյուղից: ԺԴ (14) տարի, մինչև Մավրիկիոս կայսեր վախճանը, նրանց միջև հարաբերությունները սրված էին՝ Քրիստոսի երկու բնությունների և Քաղկեդոնի ժողովի հարցում³:

Այլ էր դրությունը Բյուզանդիայում, որտեղ եկեղեցին քրիստոնեական էր: Կայսրը կարծում էր, որ եթե կաթողիկոսաբանը փոխադրի երկրի բյուզանդական բաժին, այն կթուլանա և դյուրին կլինի նրա ենթարկումը Կոստանդնուպոլսի

¹Տե՛ս Բսկանյան Վ., նշվ. աշխ., էջ 354-357, 359:

² Narratio de rebus Armeniae, էջ 466-467:

³Տե՛ս Նույն տեղում:

պատրիարքին: Ուստի նա Հայաստանի Բյուզանդական մասում կաթողիկոս է դարձնում Հովհաննես եպիսկոպոսին, որի աթոռանիստն է դառնում Ավան գյուղաքաղաքը: Մեքենոսն այս մասին գրում է «Բաժանեցաւ ապա և աթոռ կաթողիկոսութեանն յերկրուս. անուն միոյն Մովսէս, և միւսոյն՝ Յովհան: Մովսէս ի պարսից կոռմանէ, և Յովհանն՝ Յունաց»¹:

Սակայն Մորիկի այդ գաղափարը լիապես չիրականացավ: Եթե մինչ այս Հայաստանը կրոնական հակամարտության մեջ էր հեթանոսության դեմ, այժմ բորբոքվում էր ներքին դավանական երկպառակություն, որն ավելի վատթար էր քան արտաքինը: Սա առաջին եկեղեցական երկպառակությունն էր հայերի մեջ: Այս թշնամանքի մասին մեզ տեղեկություն է հասել նաև «Գիրք Թղթոց»-ից, որտեղ ներկայացված է Հայաստանի գորավար Սորմենի և Դվինի կաթողիկոսական աթոռի տեղապահ Վրթանես Քերթողի միջև տեղի ունեցած նամակագրությունը²:

Ռազմական քաղաքականություն: Հայաստանում Մորիկ կայսեր անցկացրած ռազմական միջոցառումներից ամենակործանարարը հայ զինական ուժը երկրից պարբերաբար դուրս բերելու և այն կանխամտածված կերպով ոչնչացնելու նենգ ծրագիրն էր: Մորիկի բանակում ծառայում էին նաև հռոմեր, լանգոբարդներ, բուլղարներ, սակայն գերակշռողը եղել են հայերը: Պարսկաստանի հետ հաշտություն կնքելուց հետո կայսրությունն իր արևելյան գործառններն անմիջապես տեղափոխում է Բալկաններ: Այստեղ շարունակվող արյունահեղ մարտերը, որոնք մարդկային հսկայական զոհեր էին պահանջում, նպաստավոր պայմաններ էին ստեղծել հայ զինական ուժը բնաջնջելու Մորիկի նենգ ծրագրի իրագործման համար: Մորիկն, իր նախորդների նման, գտնում էր, որ Հայաստանում բյուզանդական տիրապետությունը հաստատուն լինել չի կարող, քանի դեռ այնտեղ պահպանվում են հայ նախարարական զինվորական ուժերը³: Կայսեր հրամանով Բալկաններ են ուղարկվում նախարարական հետևակ և հեծյալ գնդեր: Մորիկ կայսրը խնդիր է դնում բնաջնջել հայ զինվորական ուժը և դրանով զրկել հայերին այն դերից, որ նրանք խաղում էին պարսկաբյուզանդական հարաբերությունների մեջ:

Հայաստանի զինվորական ուժի ոչնչացման գործում Մորիկից ետ չէր մնում Խոսրով արքան, որը նույնպես իրեն ենթակա նախարարների հեծյալ ու հետևակ գնդերը հավաքում և ուղարկում է Մարաստանի ու Բալտրիայի կողմերը: Այս ամենին զուգահեռ երկրում ուժեղանում է նաև հարկային ճնշումը, որը բյուզանդական կեղեքման անբաժան ուղեկիցն էր⁴:

¹Մեքենոս, էջ 100:

²Տե՛ս «Գիրք Թղթոց, Մատենագրութիւն նախնեաց», Թիֆլիս, 1901, էջ 90-98:

³Տե՛ս Բսկանյան Վ., նշվ. աշխ., էջ 361-363:

⁴Տե՛ս «ՀԺՊ, հ II», էջ 269:

VI դարի վերջին Արևմտյան Հայաստանում բյուզանդական տիրապետության դեմ կրկին ծավալվում է ազատագրական շարժում, որը կազմակերպում ու ղեկավարում է Սմբատ Բագրատունին: Նրա գործունեությունը կարելի է բաժանել երկու շրջանի.

ա) Բյուզանդական և Արևմտյան Հայաստանում

բ) Պարսկաստանում և Մարգպանական Հայաստանում:

Հայաստանում հերթական գորահավաքները անցկացնելիս կայսրը հայերից պա-հանջում է 2000-անոց հեծելազոր: Սմբատ Բագրատունին փորձում է ըմբոստանալ կայսրի դեմ: Այդ երկու հազարանոց հեծելազորից հազարը անցնում է Սմբատ Բագրատունու ղեկավարության տակ, իսկ մյուս կեսը ենթարկվում է Սահակ Մամիկոնյանին: Ինչպես նշում է Սեբեոսը, Սահակն իր զորքով անցնում է Սեբաստիայով և ներկայանում է կայսրի պալատ, իսկ Սմբատը Խաղտիք գավառ հասնելով, ըմբոստանում է և իր զորքով հրաժարվում է ծառայել կայսրությանը: Կայսրը, ընծաներով կարողանում է հանդարտեցնել հայերի այդ ըմբոստությունը: Երբ Սմբատի զորքը հասնում է կայսրի մոտ, վերջինս ուղարկում է նրանց Թրակիա, իսկ Սմբատին ետ է ուղարկում Հայաստան: Հայրենիքում քաջ զորավարը հավաքում է նախարարներին և նախապատրաստում մի նոր հակաբյուզանդական ելույթ:

Սակայն կայսրը Հայաստան ուղարկեց պետական սինկլիտոսի ամենանշանավոր անդամներից մեկին՝ Դոմենդիոլոսին: Սա վերջ տվեց սկսված ընդվզմանը, իսկ պարագլուխ Սմբատին շղթայակապ տարավ Կոստանդնուպոլիս: Դատարանը Սմբատին դատապարտեց մահվան՝ կրկեսում նետել տալու գազանների առջև: Ըստ Սեբեոսի Սմբատը կարողացավ հաղթել բոլոր կենդանիներին, ինչի արդյունքում ներում ստացավ կայսրի կողմից և ուղարկվեց Աֆրիկա ծառայության¹: Նա հետագայում Աֆրիկայից տեղափոխվեց Պարսկաստան, և այնտեղ ծառայության անցավ:

Խոսքով Փարվեզը ամուրի հաստատվելով գահին, 10 տարի սպասելուց հետո ցանկացավ հաշվեհարդար տեսնել իր հորը սպանողների հետ: Նախ նա որոշեց սպանել իր քեռիներին՝ Վնդոյին և Վստամին²: Սեբեոսը գրում է, որ սկզբում արքան կարգադրեց ձերբակալել ու սպանել Վնդոյին, ապա սպասում էր Վստամի վերադարձին, (որը ինչ-ինչ պատճառներով արքունիքում չէր) որպեսզի նրան ևս սպանի: Սակայն Վստամը իմանում է արքայի այդ ծրագրի մասին և զորքեր ժողովելով փախչում է Գեղմա³ երկիր⁴:

¹Տե՛ս Սեբեոս, էջ 105-107:

²Տե՛ս Луконин В., указ. соч., с. 179.

³Խոսքը գնում է ներկայիս Գիլանի լեռների մասին:

⁴Տե՛ս Սեբեոս, էջ 109:

Պարսկաստանի արևելյան մասերում Վստամին էին միացել նաև հայ նախարարները: Այս ժամանակ Պարսկաստանի ներքին վիճակը շատ ծանր էր: Վերնախավի անհուսալիության պայմաններում՝ Խոսրով II-ը սկսում է վստահել Հայաստանից տեղահանված ազգային ռազմական ուժերը գլխավորող հայ ազնվականությանը: Հաշվի առնելով այն փաստը, որ Պարսկաստանի արևելքում բնակվում էին բազմաթիվ քրիստոնյաներ, Խոսրով արքան արևելյան հարցերի կարգավորումը հանձնարարում է Սմբատ Բագրատունուն: Սմբատը դեմ էր դուրս եկել Բյուզանդական կայսրությանը և ծառայության էր անցել պարսից արքայի մոտ, ուստի նա վայելում էր արքայի վստահությունը: Խոսրովը Սմբատին Վրկան¹ աշխարհի մարզպանի կարգավիճակով ուղարկում է տերության արևելյան մարզերը՝ նրան շնորհելով ռազմա-վարչական բացառիկ իրավագործություն: Սմբատ Բագրատունու հակաբյուզանդական դիրքորոշումը պետք է բացառեր տերության այդ մասում Բյուզանդիայի կողմից հալածական նեստորականների հարելուն ապստամբած մարզերի բնակչությանը²:

Սեբեոսը մեզ հաղորդում է, որ Խոսրով արքան Սմբատին Վրկանի մարզպան նշանակելուց բացի, նրան է տալիս նաև իր հոր՝ Որմիզդի գոտին և սուսերը. «Տայ նմա զկամարն և գուսներն լեալ հաւր իւրոյ Որմզդի. գումարէ ի ձեռս նորա զաւրս պարսիկս և զՀայաստանեայս և հրամայէ գնալ յերկիր իշխանութեանն իւրոյ»³:

Կայսրությունը հետևողականորեն շարունակում է իր հայադավ քաղաքականությունը: Հայ նախարարները Թրակիայում և այլուր ապստամբում են կայսեր դեմ և իրենց ենթակա զորքով անցնում մարզպանական Հայաստան: Շարժման մասնակիցները 591 թ. նոր պայմանագրով կայսրությանը անցած Հայաստանի պարսկական բաժնի նախարարներն էին: Ապստամբությանը մասնակցում էին Ատատ Խորխոռունի, Սամվել Վահևունի, Սահակ Մամիկոնյան, Ստեփանոս Սյունի, Կոտիտ Ամատունի, Թեոդորոս Տրպատունի ու այլ նախարարներ՝ 2000 հեծելազորով: Հույս չունենալով հաղթանակի հասնել իրենց սեփական ուժերով, նախարարները նպատակ էին դրել պարսկական ու բյուզանդական տիրապետությունից ազատվել հոների հետ դաշնակցելու միջոցով: Սկզբում Խոսրով արքան նախարարներին ընդունելով իր թագավորության սահմաններում, փորձում էր սիրաշահել նրանց: Սակայն հետո տեսնելով, որ նախարարները կամենում են անկախանալ և թագավորություն ստեղծել, Խոսրովը կտրուկ փոխում է իր քաղաքականությունը և դուրս է գալիս նրանց դեմ: Նա նույնիսկ օգնություն է խնդրում Մորիկից: Բյուզանդական զորքը Հերակլի գլխավորությամբ Նախճավանի մոտ

¹Պատմական այս մարզը գտնվում էր Կասպից ծովի հարավ-արևելյան ափին: Ներկայիս Իրանի Մազանդարան օսթանի հյուսիս-արևելյան հատվածը:

²Տե՛ս Ղազարյան Վ. , Հայ Առաքելական Եկեղեցին Միջին Ասիայում Ե-ԺԵ դարերում, Երևան, 2008, էջ 39-40:

³Սեբեոս, էջ 112:

միանում է պարսկական գորքին, և միասին շարժվում են ապստամբների դեմ: Նրանք երկուսն էլ պատգամավորություն են ուղարկում նախարարների մոտ, հորդորելով առանց արյունահեղության վերջ դնել այդ շարժմանը: Այդ բանակ-
ցությունները տալիս են իրենց արդյունքը, և նախարարներից ոմանք ենթարկ-
վում են Պարսկաստանին: Իսկ Ատատ Խորխոռունին ու Սամվել Վահևունին ի-
րենց գորքերով շարժվում են Աղվանք, սակայն հոներից ոչ մի օգնություն չստա-
նալով, ի վերջո ենթարկվում են կայսրությանը¹: Այս ապստամբությունը ավարտ-
վեց առանց արդյունքի, քանի որ պարսկաբյուզանդական բանակի դեմ անհնար
էր պայքարել փոքրաքանակ գորքով:

Հետագայում նորից են տեղի ունենում ընդվզումներ հայ նախարարների
կողմից: Ատատ Խորխոռունին, որը ծառայության անցնելով բյուզանդական
բանակում, ստացել էր պատրիկի կոչում, հրաժարվում է ծառայել կայսրին և իր
մարդկանց հետ փախնում է Հայաստան, որտեղ բյուզանդացիների հետ բազմա-
թիվ բախումներից հետո ստանում է Խոսրով արքայի աջակցությունը և հովանա-
վորությունը: Այս դեպքերը տեղի են ունեցել 601 թ., քանի որ Սեբեոսը գրում է «Եւ-
եղն զկնի ամի միոյ մեռանել Մարկայ, և թագաւորել Փոկասայ: Արկ սա ի միտս
իւր ապստամբել և գնալ առ թագաւորն Յունաց: Սկսաւ պատրաստել երիվարս
տաճիկս և կազմել սպառազինութիւն, յանկուցանէ յինքն արս սրիկայս: Լուր
եհաս ի լսելիս արքային բանն, հրաման ետ կապել զնա ոտիւք և ձեռաւք, և բրաւք
սպանանել»²:

Մեկ այլ ապստամբություն է տեղի ունենում կայսրության կործանարար
քաղաքա-կանության դեմ: Այս անգամ զենքի են դիմում Վահևունի սեպուհները՝
Սամվելը, Սարգիսը, Վարազ-Ներսեհը, Ներսեսը, Վահրամը և Թեոդորոս Տրպա-
տունին: Այս ապստամբությունը ևս անհաջող ավարտ ունեցավ: Կայսրությունը
այս անգամ մի կողմ դրեց բանակցությունների իր քաղաքականությունը և ապս-
տամբներին ճնշեց զենքի ուժով: Նախարարներից ոմանք զոհվեցին բյուզանդա-
ցիների դեմ մղած մարտում, իսկ մյուսները մահապատժի ենթարկվեցին³:

Սակայն Մորիկը չգիտեր, որ ինքն էլ էր դատապարտված մահվան: Կոս-
տանդնուպոլսում դժգոհ էին նրա կառավարումից, և արդյունքն եղավ այն, որ
մայրաքաղաքում ապստամբություն տեղի ունեցավ: 602 թ. Մավրիկիոսն իր ըն-
տանիքի և հարազատների հետ միասին սպանվեց, և Բյուզանդական գահին տի-
րեց դաժանաբար Փոկասը (602-610):

Ինչպես տեսանք, VI դարի 2-րդ կեսին Բյուզանդիայի և Պարսկաստանի
վարած քաղաքականությունը մեծ չափերի վնասներ հասցրին Հայաստանին: Մի
քանի տասնամյակ երկրում դադարեցին ազատագրական շարժումներն ընդդեմ

¹Տե՛ս «ՀԺՊ, հ II», էջ 274:

²Սեբեոս, էջ 130:

³Տե՛ս նույն տեղում, էջ 95, 97:

Պարսկաստանի ու Բյուզանդիայի: Նախարարական զորագնդերի գաղթեցման և ոչնչացման միջոցով, վնաս հասցվեց ոչ միայն Հայաստանին, այլև կայսրությանը և Պարսկաստանին, քանի որ հայերը միշտ էլ մեծ դեր են ունեցել այդ պետությունների անվտանգությունն ապահովելու գործում:

Բանալի բառեր - Հուստինոս II, Խոսրով Անուշիրվան, Բյուզանդիա, Պարսկաստան, Կոստանդնուպոլիս, Տիրեքիոս, Ումիզդ, Սորիկ, Խոսրով Փարվեզ, Վնդո, Վստամ, Վահրամ Չուբին, Մուշեղ Մամիկոնյան, Թրակիա, Սմբատ Բագրատունի, Վրկան:

Արմեն Տեր-Գրիգորյան, Պարսկա-բյուզանդական քաղաքականությունը Հայաստանում VI դարի երկրորդ կեսին - Հուստինիանոս I-ի մահից հետո կրկին պատերազմ ծագեց Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև, որի պատճառ հանդիսացավ Հայաստանում ծագած ապստամբությունը: 591թ. նրանց միջև հաշտության պայմանագիր կնքվեց, որով Հայաստանը բաժանվեց Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև: Այս երկու երկրները սկսեցին Հայաստանի քաղաքականություն իրականացնել: Բյուզանդիայի Մավրիկիոս կայսեր վարչական, կրոնական և ռազմական ռեֆորմները այնքան թուլացրին հայ նախարարների ուժերը, որ Հայաստանում տասնամյակներով դադարեցին ապստամբական շարժումները:

Армен Тер-Григорян, Ирано-византийская политика в Армении во второй половине VI века - После смерти императора Юстиниана I, вновь разразилась война между Византией и Персией, причиной которой стало восстание в Армении. В 591 году между ними был подписан мирный договор, по которому Армения разделилась между Персией и Византией. Эти две страны начали проводить политику разоружения Армении. Административные, религиозные и военные реформы византийского императора Маврикия так ослабили силы армянских нахараров, что в Армении на десятилетия прекратились повстанческие движения.

Armen Ter-Grigoryan, Persian and Byzantine policy in Armenia in the second half of VI century - After the death of Emperor Justinian the First a war broke out again between the Byzantine Empire and the Persian Empir. In 591 a treaty of conciliation is signed between them by Armenia is divided between Persia and Byzantium for the second time. These two states started Armenia's disarmament policy. Byzantine Emperor Maurice's administrative, religious and military reforms ruined Armenian ministerial forces in a way, that liberation movements in Armenia have ceased for decades.

ԵԿԵՂԵՑԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿԻՆԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ ՍԱՀԱԿ Բ ԽԱՊԱՅԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԵՐՈՒՍԱՂԵՍՅԱՆ ՇՐՋԱՆԸ

ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Առաջին աշխարհամարտի տարիներին թուրքական կառավարության կողմից Հայ Առաքելական եկեղեցու նվիրապետության դեմ կատարված ոճրագործություններից ամենասարսափելին թերևս «Կանոնագիր Հայոց Կաթողիկոսութեան եւ Պատրիարքութեանն օրինագիծն էր¹, որը թվագրված է 19 հուլիսի/1 օգոստոսի 1916 թ., («2 հունիսի 1334 թ.») ստորագրված Մեմեդ Բեշատի կողմից և հաստատված թուրքական հայատյաց կառավարության ղեկավար անձանց ստորագրություններով²:

Կանոնագրի հիմնական նպատակը արևմտահայոց հոգևոր իրավակարգի ձևախեղումն էր, ըստ որի պիտի չեղարկվեր 1863 թ. արևմտահայերի ազգային Սահմանադրությունը, պիտի վերանար Կ.Պոլսի հայոց պարիարքությունը, Սսի կաթողիկոսական աթոռը պիտի տեղափոխվեր Երուսաղեմ, արևմտահայության հոգևոր կենտրոն պիտի հռչակվեր Երուսաղեմի Հայոց վանքը, որտեղ իր աթոռը պիտի ստանձներ «Կաթողիկոս-Պատրիարք Թիրքիոյ Հայոցըն-ը և կաթողիկոս-պատրիարքի իրավասության տակ պիտի դրվեին Աղթամարի կաթողիկոսությունը, Կ.Պոլսի և Երուսաղեմի պատրիարքությունները: Այս ծրագրի հետին, բայց ակնհայտ նպատակը արևմտահայության և ռուսական ազդեցության գոտում գտնվող Էջմիածնի կաթողիկոսության իրավական և վարչական հաստատությունների հետ կապերի խզումն էր:

Ելնելով կայսերական կանոնագրի իրագործման առաջնահերթությունից 1916 թ. հուլիսի 29-ին Օսմանյան Թուրքիայի Արդարադատության և կրոնի նախարարությունը հեռագիր-նամակով տեղեկացնում է 1915 թ. հոկտեմբերի 31-ից Երուսաղեմ աքսորված Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ Խապայանին, որ Սսի և Աղթամարի կաթողիկոսությունները, ինչպես նաև Երուսաղեմի ու Կ.Պոլսի պատրիարքությունները պետք է միավորվեին և ենթարկվեին նախարարությանը³:

Կանոնագրի հաստատումից և իրագեկումից հետո իշխանություններն անմիջապես ձեռնամուխ եղան դրա իրագործմանը:

¹ Տե՛ս Հրամանաւ Տ.Տ. Սահակայ Սրբազնագոյն կաթողիկոսի Հայոց Թուրքիոյ եւ Պատրիարքի Ս. Երուսաղեմի և Կ.Պոլսոյ, Երուսաղեմ, 1917:

² Տե՛ս **Բաբգէն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ**, Պատմութիւն կաթողիկոսացԿիլիկիոյ (1441 էն մինչեւ մեր օրերը), Անթիլիաս-Լիբանան, 1939, էջ 948:

³ Տե՛ս Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, գիրք Դ, Սահակ Բ Խապայեան կաթողիկոս Կիլիկիոյ 1891-1940 թթ., կազմեցՍանդրո Բեհբույան,Երևան, 1997, էջ 227, Հմմտ.՝ **Քէլէշեան Մ.**, Սիս-Մատեն. Պատմական, բանասիրական, տեղեկագրական, ազգագրական եւ յարակից պարագաներ, Պէյրուք, 1949, էջ 278-279:

Կանոնագրի որոշումներն ի կատար ածելու համար Կ.Պոլսի պատրիարքարան են գալիս ոստիկանական տեսուչ Ահմետ Բեյը, Կրոնի տեսուչ Բեհա Բեյը և հիվանդ ու ծեր պատրիարք Ջավեն արք. Տեր-Եղիայանին հանձնում Արդարադատության և կրոնի նախարարության կողմից պատրաստված այն գրությունը, ըստ որի վերջինս դադարում էր Կ. Պոլսի պատրիարքը լինելուց, իսկ պատրիարքությունը Երուսաղեմի պատրիարքության և Աղթամարի կաթողիկոսության հետ միասին միացվելու էր Կիլիկիո կաթողիկոսությանը: Բացի այդ, պատրիարքարանի գույքը պետք է գրանցվեր և հանձնվեր նոր նշանակվելիք փոխանորդին¹:

1916 թ. հուլիսի 30-ին Սահակ կաթողիկոսը Երուսաղեմի ս.Մինաս պատրիարքարանում ժողով է հրավիրում, ժողովի ատենապետի միջոցով միաբանության անդամներին կառավարության նոր որոշման մասին իրազեկելու և եպիսկոպոսների կարծիքը հարցնելու համար: Նշենք, որ խորհրդակցությանը չէր հրավիրվել Երուսաղեմի պատրիարքության գործերի վարիչ, Կ.Պոլսի նախկին պատրիարք Մ. արք. Օրմանյանը², որը վանքի ֆինանսական խնդիրները կարգավորելու նպատակով, որպես լիազոր-պատվիրակ, Երուսաղեմում էր գտնվում 1914 թ. մայիսից: Այդ առիթով նա իր «Խոհք և խօսք» աշխատության մեջ հիշում է. «Միւս օր յուլիս 30/12 օգոստոսին միաբանութիւնը ժողովի կը հրաւիրէ, հեռագիրը և հրամանը, նոր կազմակերպութիւնը և իւր պատրիարքութիւնը կը հաղորդէ Չիլիկիրեանի ձեռքով, որ Միաբանական Ժողովներուն վերջին տարւոյն ատենապետը գտնուած էր. թեպէտ նոր գումարումը նոր դիւանով պետք էր բացուէր: Ես բոլորովին անգիտակ` միաբաններուն երթուղարձէն կը հետաքրքրուիմ, և իրողութիւնը կը լսեմ, և միաբաններուն շնորհաւորութեան համար Խապայեանի մօտ երթալէն և դառնալէն ետքը ես ալ կ'երթամ ցաւ յայտնելու որ ինէ գաղտնի պահել ուզած էր, և գիտնալով ալ որ վարիչը ես եմ, զիս զանց ըրած, և դիմած էր մեկու մը, որ բնաւ կերպարան և պաշտօն չունէր: Բայց շատ յառաէլ չուզեցի, երբ ինքն յայտարարեց թէ սխալմունք մըն էր եղաւ: Հարկաւ կամաւոր է սխալմունքը, զիս իբրեւ հակառակորդ ենթադրելով, և արգելք մը հանել կրնալէս խիթալով»³:

Ժողովի ժամանակ կաթողիկոս-պատրիարքը մասնակիցներին տեղեկացնում է, որ. «...ես ուրախ չեմ, այս նոր և անակնկալ պաշտօնիս վերայ, որովհետև փառք մը չեմ համարիր, այլ պարտաւորութիւն մը ծանրագոյն, հոգեկան և նիւթական ուժերէս վեր: Եթէ սովորական վիճակի մէջ ըլլայինք, անտարակոյս չէի համակերպիր բարձրագոյն հրամանին, քանի որ նոյն իսկ Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն, իբրև բողոք, տարիներով հրաժարեալ կստորագրէի..., սակայն ներկայ տագնապներուն մէջ, նոր և մեծագոյն տագնապի մը առիթ չըլլալու համար...

¹ Քիլէշեան Մ., Միւս-Մատեան, էջ 191-192:

² Տե՛ս Օրմանեան Մ. արքեպս., Խոհք եւ խօսք իր կեանքին վերջին շրջանին մէջ, Երուսաղեմ, 1929, էջ 317:

³ Օրմանեան Մ. արքեպս., Խոհք եւ խօսք իր կեանքին վերջին շրջանին մէջ, էջ 343:

կամայ, ակամայ խոնարհեցայ նոր խաչին տակ: Եղէք կիւրենացիներ, իւրաքան-
չիւրնիդ վանական և եկեղեցական պաշտաման մէջ խղճի մտօք ծառայելով և այ-
դու թեթևացնելով խաչիս ծանրութիւնը»¹:

Սսի միաբանությունը կաթողիկոսին խորհուրդ է տալիս առերես ընդու-
նել իշխանությունների կողմից առաջադրված նոր նշանակումը՝ հանուն գաղ-
թական հայ ժողովրդի խաղաղ կյանքի և սպասել այնքան, մինչև, որ նոր առավոտ
կբացվի հայ ազգի ու եկեղեցու համար:

Օսմանյան կայսրության հրամանով «կաթողիկոս-պատրիարք»-ի աստի-
ճանի բարձրացված Սահակ Բ կաթողիկոսի վերաբերյալ ժամանակին եղել են
թեր և դեմ կարծիքներ: Բերենք դրանցից միայն մեկը: Երբ Արդարադատության և
կրոնի նախարարության պաշտոնական հեռագիրը հասնում է Երուսաղեմ և
գուժում կաթողիկոս-պատրիարքի նոր կարգավիճակի մասին, Սահակ Բ Խապա-
յանը շտապում է իր շնորհակալությունը հայտնել իշխանություններին՝ ա-
ռանց տեղյակ լինելու իր նոր պաշտոնի բովանդակությանը, քանի որ նրան
դեռևս չէր տրվել ոչ մի լուսաբանություն, կամ բացատրություն այդ մասին: Պաշ-
տոնական հեռագիրը ստանալուց մի քանի օր անց միայն Երուսաղեմի տեղական
իշխանությունների կողմից կաթողիկոսին է հանձնվում «Կանոնագիր հայոց կա-
թողիկոսութեան եւ պատրիարքութեան» խորագիրը կրող փաստաթուղթը²:

Մեր եկեղեցու աչքի ընկնող գիտնական-եկեղեցականներից Մ. արք. Օր-
մանյանը, որպես դեպքերի ականատես, հաստատում է, որ Սահակ Բ Խապա-
յանն «խկոյն իւր շնորհակալութիւնը կը հեռագրէ և առանց վարանման, առանց
խորհրդակցութեան, առանց բացատրութիւն պահանջելու» հանձնառու է լինում
իր պաշտոնին³:

Փաստորեն, ինչքան էլ Սսի կաթողիկոսության հմուտ գիտականեր Բաբ-
կեն եպս. Կյուլեսերյանը և Բյուզանդ Եղիայանը աշխատում են ներկայացնել այն-
պես, որ իբր Սահակ կաթողիկոսը չի ցանկացել ստանձնել իր նոր պաշտոնը, այլ
ուղղակի համաձայնվել է և համակերպվել հանուն հայ ժողովրդի սիրուն, Մ. արք.
Օրմանյանի այս վկայությունը գալիս է հավաստելու, որ դա այնքան էլ այդպես
չէ: Այդ առիթով Կ. Պոլսի նախկին պատրիարքն ավելին է մատնանշում. «...Ծանր
կասկածներ յայտնուած են նոյն ինքն Խապայեանի ալ այդ գործին մէջ դեր ուեն-
ցած ըլլալուն վրա, որոնք ծագած են մէկ քանի անգամ երկուքին առանձինն տե-
սակցութեանց վրայ տարածուած շշուկներէն... ստոյգ է, որ ոգնին կ'աշխատէր և
ամէն միջոցներ կը գործածէր Երուսաղեմի թափուր Աթոռը գրաւելու, որ երիտա-

¹ Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, գիրք Դ, Սահակ Բ Խապայեան կաթողիկոս Կիլիկիոյ
1891-1940 թթ., էջ 227-228:

² Ատանայի հայոց պատմություն, Անթիլիաս-Լիբանան, 1970, էջ 371:

³ Օրմանեան Մ. արքեպս., Խոնք եւ խօսք իր կեանքին վերջին շրջանին մէջ, էջ 342:

սարդութենէն ի վեր իր երազն էր եղած, գուցէ աթոռներու ձուլման կետը իւր նպատակին մէջ...յարակից պայման՝ սիրով ընդունած կ'ըլլայ»¹:

Մահակ Բ Խապայանի փութկոտ շնորհակալությունը գալիս է կասկածներ առաջացնելու նրա՝ այդ նոր նշանակման մեջ ունեցած հավանական մասնակցության մասին: Այս առիթով նա բավականին կծու, սակայն իրավացի քննադատության է արժանանում Մ. Օրմանյանի կողմից: Վերջինս նրան հանդիմանում է, որ եթէ նա նախապէս չսպասեց պայմաններին ծանոթանալու համար, գոնէ զգույշ լինի, որ «...լարծուն գետնի վրայ չսահի, իւր անունը ատելի չդարձնէ, ազգին մէջ վատ յիշատակ մը չթողու, ... և հոգ տանի, որ եկեղեցական իրաւունքները և ազգային եկեղեցւոյմիութիւնը չտուժեն...»²:

Բացի այդ, Մահակ կաթողիկոսը չի համբերում, թէ երբ պետք է մտնի պատրիարքարան և բազմի կաթողիկոսական գահին: Մ.արք.Օրմանյանը պախարակում է նրա շտապողականությունը պատճառաբանելով, որ պատրիարքարանը մաքրելու և հարդարելու կարիք է զգում, իսկ Աթոռ բարձրանալն էլ պատշաճ է, որ կատարվի եկեղեցական արարողությամբ:

Այս բոլոր միջոցառումների կատարումն իր ուսերի վրա է վերցնում Մաղաքիա արք.Օրմանյանը, որն էլ 1916 թ. օգոստոսի 6-ին՝ կիրակնամտի երեկոյան, հանդիսավոր թափորով և «Հրաշափառ»ի ուղեկցությամբ, եկեղեցի է առաջնորդում կաթողիկոսին և եկեղեցական արարողությամբ նրան նստեցնում թուրքերի կողմից նշանակված «պատրիարք-կաթողիկոս»-ի աթոռին: Իսկ Մ. Օրմանյանն էլ հաջորդ օրը նորից քաշվում է Յորենաթաղում գտնվող Կիրակոս պատրիարքի կառուցած հարկաբաժինը, որտեղ, որ նա ապրում էր՝ խուսափելով պաշտոնական որևէ միջամտությունից:

Նշանակված «կաթողիկոս-պատրիարք»-ի առաջին հրամանը լինում է պատրիարքական աթոռը եկեղեցական դասից հանել տալը: Սակայն լուսարարապետի խնդրանքով և անմիջական միջամտությամբ հնարավոր է լինում մի փոքրիկ աթոռ գետեղել դասում՝ Մաղաքիա Սրբազանի համար³:

Թուրքական իշխանությունները չբավարարվելով Կ.Պոլսի պատրիարքության վերացման մասին որոշմամբ, Կ.Պոլսի պատրիարք Զավեն արք. Տեր-Եղիայանի պաշտոնանկության 7-րդ օրը, այսինքն՝ օգոստոսի 5-ին, նրա մոտ են ուղարկում մի ոստիկան և ոստիկանության տեսուչ Ահմետ բեյի անունից նրան հրավիրում ոստիկանատուն:

Այնտեղ նրան տեղեկացնում են, որ «...կառավարութիւնը յարմար չի տեսներ Ձեր Պոլսի բնակութիւնը, ուստի պետք է քանի մը օրէն մեկնիք Պաղտատ

¹ Օրմանեան Մ. արքեպս., Խոհք եւ խօսք իր կեանքին վերջին շրջանին մէջ, էջ 342:

² Օրմանեան Մ. արքեպս., Խոհք եւ խօսք իր կեանքին վերջին շրջանին մէջ, էջ 343:

³ Օրմանեան Մ. արքեպս., Խոհք եւ խօսք իր կեանքին վերջին շրջանին մէջ, էջ 344:

Ձեր հայրենիքը, ինքնաբերաբար երթալու ձեռով, առանց աղմուկի»¹: Արդյունքը լինում է այն, որ 1916 թ. օգոստոսի 10-ին ոստիկանությունը փակում է պատ-րիարքությունը²:

Կանոնագրի 24-րդ հոդվածի համաձայն Սահակ Բ Խապայանին հանձ-նարարվում է նշանակել Կ.Պոլսի պատրիարքի փոխանորդ, որի պարտակա-նությունները կաթողիկոսական 1916 թ. օգոստոսի 14-ի կոնդակով ստանձնում է Գաբրիել արք. Ճևահիրճյանը³, որն էլ կրոնի տեսուչ Բեհա Բեյի հետ ժամանում է Կ.Պոլիս⁴: Ջավեն պատրիարքը շնորհավորելով նոր փոխանորդին, նրան է հանձնում պատրիարքարանի բանալիները և կնիքները, ցավ հայտնելով, սա-կայն, որ «ոչ Ճելահիրճեան եպիսկոպոսի եւ ո՛չ ալ պաշտոնէութեան կողմէ ցա-ւակցական բառ մը» չլսեց իր պաշտոնի դադարեցման և երկրից աքսորվելու առի-թով⁵: Ի վերջո Ջավեն պատրիարքը օգոստոսի 22-ին գաղտնի ոստիկան Հիդայե-թի ուղեկցությամբ Կ.Պոլսից տեղափոխվում է նախ Հալեպ, ապա Բաղդադ⁶:

Օգտագործելով «Կաթողիկոս-պատրիարք»-ի համար կազմված և գոր-ծադրության մեջ դրված նոր կանոնագիրը և անտեսելով իրենց իսկ կողմից նշա-նակված կաթողիկոսի հեղինակությունը, Արդարադատության և կրոնի նախա-րարությունը կանոնագրի տառի և ոգո համաձայն 1916 թ. օգոստոսի 8/21-ին հրամա է արձակում նաև Երուսաղեմի պատրիարքության մասին, որով Երու-սաղեմի գործերի կառավարիչ Մադաքիա սրբազանն առանց պատճառի պար-տավորվում էր երեք օրվա ընթացքում լքել Երուսաղեմը և հաստատվել Դամաս-կոսում⁷:

Իր «Խոհք եւ խօսք»-ում Մ. Օրմանյանը տալիս է այս շրջանի դեպքերի մանրամասները. «Դիպուած մը տեղի չէր ունեցած, կազմակերպական փոփո-խութիւնը շատ մօտ էր, ուրեմն կանխաւ կարգադրուած տնօրէնութիւն էր»⁸:

Խնդրի առաջ կանգնում է Սահակ կաթողիկոսը, ով ուշացումով օգոստո-սի 24-ին հեռագրով դիմում է Պաղեստինյան ռազմաճակատի ընդհանուր հրա-մանատար Ջեմալ փաշային և խնդրում, որ նա թույլ տա Մ. Օրմանյանին մնալ Երուսաղեմում: Մ. Օրմանյանն էլ իր հերթին հեռագրում է Ներքին գործերի նա-խարար Մ. Թալեաթին և Ջեմալին ու բացատրում, որ «...գործէ քաշուած էւ

¹ Քէլեշեան Մ., Սիւս-Մատեան, էջ 198:

² Օհանջանյան Ա., 1915 թվական. անհերքելի վկայություններ (Ավստրիական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին), Երևան, 1997, էջ 118:

³ Օհանջանյան Ա., 1915 թվական. անհերքելի վկայություններ (Ավստրիական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին), էջ 64:

⁴ Ատանայի հայոց պատմություն, էջ 369:

⁵ Եղիայեան Զ. արք. Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 200:

⁶ Եղիայեան Բ., Ժամանակակից պատմություն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս-Լիբանան, 1975, էջ 64:

⁷ Եղիայեան Բ., Ժամանակակից պատմություն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, էջ 63:

⁸ Օրմանեան Մ. արքեպս., Խոհք եւ խօսք իր կեանքին վերջին շրջանին մեջ, էջ 344:

միայն եկեղեցական ու գրական զբաղմանց մեջ փակուած, իմ սիրած առանձնական կեանքին նուիրուած եմ...»¹:

Արդյունքում, իր օգոստոսի 30-ի հեռագրում Ջեմալն ընդառաջում է Ս.Օրմանյանի Երուսաղեմում մնալու խնդրանքը²:

Թուրքական քաղաքականության շրջանակներում Երուսաղեմ են տեղափոխվում նաև Կ.Պոլսի Բեզագյան վարժարանում պատուպարված Արմաշի դպրանների սաները՝ Երվանդ վրդ. Փերտահճյանի գլխավորությամբ³:

Այս ամենից հետո Սահակ կաթողիկոսն անցնում է իր՝ «պատրիարք-կաթողիկոս»-ի բուն պարտականությունների կատարմանը: Նա կաթողիկոսական փոխանորդ է նշանակում Գյուտ եպս. Մխիթարյանին⁴ և ձեռնամուխ լինում վանքի ֆինանսատնտեսական գործերի կարգավորմանը: Առանց միաբանության կարծիքը հաշվի առնելու նա դիմում է թուրքական իշխանություններին և իր կողմնակից հոգևորականներից մեկին՝ Ղևոնդ վրդ. Մագսուրյանին Բեյրութից տեղափոխում է Երուսաղեմ և նշանակում պատրիարք-կաթողիկոսի վարչական ու տնտեսական խորհրդատու: Ճիշտ է, այս նշանակման համար ոչ ոք չի համարձակվում հանդիմանել կաթողիկոսին, սակայն պատասխանատու այդ պաշտոնում տարիներ առաջ դատապարտված հոգևորականի նշանակումն առանց նրա անցյալի դատապարտելի գործերը հաշվի առնելու, այնքան էլ ճիշտ չէր:

Երուսաղեմի վանքի հաշվետու մարմների մեջ կար Ղևոնդ վարդապետի անունով բացված երկու հաշիվ: Առաջինում նշված էին նրա կողմից ապօրինաբար յուրացված գումարները, որոնք նա պարտավորվել էր հետ վերադարձնել վանքին, իսկ երկրորդում ներկայացված էին դրամական այն հաշիվները, որոնք գոյացել էին նրա կալվածքների հասույթներից և, որոնք նա իրավունք ուներ ստանալ միայն այն ժամանակ, երբ կվերադարձներ պարտքերը: Սակայն, երբ նա ստանձնեց իր նոր պաշտոնը, առանց նախկին պարտքերը մարելու, սկսում է գանձել իր հասանելիքը՝ վաճառելով վանքապատկական երկու-երեք եկամտաբեր կալվածքներ⁵:

Այս հարցում իր անկողմնակալ վերաբերմունքն է արտահայտում նույնիսկ Բաբկեն աթոռակից- կաթողիկոս Կյուլեսերյանը, երբ նշում է, որ «սխալ էր Ղևոնդ Վարդապետի կրկին Ելեւմտից Տեսչութեան կոչուիլը, սխալ էր անոր անիրաւ պահանջին գոհացում տրուիլը...»⁶:

¹ Օրմանեան Ս. արքեպս., Խոհք և խօսք իր կեանքին վերջին շրջանին մեջ, էջ 345:

² Եղիայեան Բ., Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, էջ 63:

³ Եղիայեան Բ., Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, էջ 64:

⁴ Տե՛ս Վավերագրերիայ եկեղեցուպատմության, գիրքԴ, Սահակ Բ Խապայեան կաթողիկոս Կիլիկիոյ 1891-1940թթ., էջ 227-231: Հմմտ.՝ Քէլէշեան Մ., Միս-մատեան, էջ 281:

⁵ Դոկտ. Արզումանեան Ջ.Ա. քննյ., Ազգապատում, Դ հատոր, Ա գիրք (1910-1930), Նիւ Եորք, 1995, էջ 138-139:

⁶ Բաբգէն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441 էն մինչէւ մեր օրերը), էջ 930:

Սահակ Բ Խապայանի երուսաղեմյան շրջանի կարևորագույն գործերից մեկը Հոգևոր ժողովի (Միևնոյի) ստեղծումն էր: Կանոնագրի 6-րդ հոդվածին համաձայն «կաթողիկոս-պատրիարքը ժողով է գումարում և ձեռնամուխ լինում Հոգևոր ժողովի կազմությանը, որը պետք է բաղկացած լիներ 12 եպիսկոպոսներից: Եվ քանի որ եպիսկոպոսների մեծամասնությունն արդեն նահատակվել էր, նա ստեղծում է վեց անդամներից բաղկացած վարչական մի մարմին՝ վանքի գործերը կառավարելու համար: Նա իր կողմից անդամներ է նշանակում՝ 1. Ստեփանոս արք. Հովակիմյանին (Նիկոմիդիա), 2. Պետոս եպս. Սարաճյանին (Հաճն), 3. Կարապետ եպս. Մազլումյանին (Պանտրմա), 4. Մովսես վրդ. Ոսկերիչյանին (Անտիոք), 5. Գարեգին ծայր. վրդ. Խաչատուրյանին (Գոնիա), 6. Եղիշե եպս. Չիլինգիրյանին (Բաղեշ)՝:

Միաժամանակ, սեպտեմբերի 4-ին հաստատվեցին ժողովի վեց նորընտիր անդամները՝ 1. Գյուտ եպս. Մխիթարյանը, 2. Մաղաքիա եպս. Տերունյանը, 3. Մեսրոպ եպս. Նարոյանը, 4. Տրդատ եպս. Պալյանը, 5. Դավիթ ծ. վրդ. Տերտերյանը, 6. Գրիգոր վրդ. Պոյաջյանը: Սակայն առաջին երեք թեկնածուները չուզեցին մեկնել Երուսաղեմ և Հոգևոր ժողովը կազմվեց միայն ինը անդամներով²:

1916թ. հոկտեմբերի 17-ին՝ տեղի ունեցավ Հոգևոր ժողովի անդրանիկ նիստը:

Ինչ վերաբերում է Խառը ժողովին, ապա հաջողվում է հաստատել տալ նրա աշխարհական նորանշանակ ութ անդամներին: Սակայն նրանցից միայն երկուսը՝ Հարություն Թերզյանը և Վարդան Փիրանյանն են գնում Երուսաղեմ, և ժողով չի կազմվում³:

Մի բան ակնհայտ էր, որ ժողովականները այդքան էլ լուրջ չէին վերաբերվում այս ժողովներին: Բաբկեն Ա. Աթոռակից կաթողիկոսը վկայում է, որ «...ժողովականները քմիծաղով մը ժողովի կ'երթային, գիտնալով, որ այս ամենը խիստ առ ժամանակեայ է և ապօրինի»⁴:

Իր հերթին թուրքական կառավարությունը, հակառակ այն բանին, որ ինքն էր հաստատել այս կանոնադրությունը, ամեն կերպ խոչընդոտում էր, որպեսզի կանոնադրությունը չգործեր: Օրինակ, երբ ընտրվում էին Հոգևոր և Խառը ժողովների անդամները, նրանց հաստատման համար արված դիմումները շատ հաճախ մերժվում էին պետության կողմից, որից էլ արհեստական բարդություններ էին առաջանում:

¹ Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, գիրք Դ, Սահակ Բ Խապայանի կաթողիկոս Կիլիկիոյ 1891-1940թթ., էջ 229:

² **Եղիայեան Բ.**, Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, էջ 64:

³ Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, գիրք Դ, Սահակ Բ Խապայանի կաթողիկոս Կիլիկիոյ 1891-1940 թթ., էջ 227-231:

⁴ **Բաբկեն Ա. Աթոռակից կաթողիկոս, Մեծի Տանն Կիլիկիոյ**, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441 էն մինչեւ մեր օրերը), էջ 949:

Առաջնահերթ խնդիրներից էր նաև հայ տարագիրների օգնության հարցը: Կարոտյալներին նպաստ բաշխելու նպատակով կաթողիկոսի կողմից հաջորդաբար բազմաթիվ դիմումներ են ուղարկվում Արդարադատության և կրոնի նախարարությանը, ըստ որի էլ Նախարարների խորհուրդը որոշում է 2500 ոսկի գումար հատկացնել այդ առիթով: Սակայն կաթողիկոսը հաշվի առնելով Երուսաղեմի վանքի նյութական ծայրահեղ ծանր պայմաններն այդ գումարից 1500-ը հատկացնում է վանքի առաջին անհրաժեշտության պետքերը հոգալու համար, իսկ մնացած 1000-ը տրամադրում է նպաստին: Բացի դրանից, կաթողիկոսին հաջողվում է ևս 2000 ոսկու չափով գումար հայթայթել ամերիկյան հյուպատոսարանի միջոցով, որով փոքր ինչ կարգավորվում է նպաստների բաշխման գործը՝ մինչև Սահակ Բ-ի Երուսաղեմից մեկնելը: Նպաստների բաժան ման ընթացքում առաջնությունը տրվում էր համեմատաբար ավելի հեռու գտնվող գաղթականներին, որոնք, ապրուստի որևէ միջոց չունենալով, մատնվել էին ծայրահեղ աղքատության և թշվառության, մինչդեռ քաղաքներում, կամ կենտրոնական շրջաններում գտնվողները, թեև նույնպես ոչ երանելի վիճակում էին, բայց վերջիններիս տարբերությունն ակնհայտ էր: :

Սահակ Բ Խապայանը հուսահատ դիմումներ էր հղում դեպի աշխարհի տարբեր անկյուններ, բայց ցավ ի սիրտ պետք է ասել, որ նրա բոլոր ջանքերն ապարդյուն են անցնում: Դժբախտաբար, առկա գումարների բացակայության և արտաքին կապերի խզման հետևանքով անկարելի դարձավ դրսից նպաստների ստացումը, որի հետևանքը եղավ այն, որ կաթողիկոսը չկարողացավ բավարարություն տալ օրնիբուն ստվարացող և օգնություն հայցող գաղթականների սրտահույզ խնդրանքներին և նա ստիպված է լինում սահմանապակվել իր հնարավորությունների սահմաններում:

Չնայած նրան, որ Սահակ Խապայանին բազմաթիվ խոստումներ էին տրվել թե՛ թուրքական կառավարության և թե՛ Ջեմալ փաշայի կողմից, այդուհանդերձ, դրանք մնում են չկատարված:

Հայերի նկատմամբ նորից շարունակվում էին բռնությունները: Կաթողիկոսը ստույգ տեղեկություններ ուներ, որ Սիրիայի և Անդրհորդանանի գյուղերում և քաղաքներում գտնվող տարագիր հայերը, պետության հատուկ հրամանի համաձայն, ենթարկվում էին բռնի իսլամացման, իսկ Սալթիի կողմերում գտնվող քահանաները, որոնք չէին ցանկացել հավատափոխ լինել, ենթարկվել էին տանջանքների և չարչարանքների¹: Սահակ Խապայանը կանոնագրի 2-րդ հոդվածի համաձայն մի ծավալուն բողոքագիր է ներկայացնում Արդարադատության գործոց նախարարությանը և դրա մեջ հիշատակում է նաև Ջեմալ Փաշայի բերանացի խոստումներն այն մասին, որ կառավարությունը թե՛ նյութական և թե՛ բարոյա-

¹ «Հասկ», Անտիլիաս, 1939թ., նոյեմբեր-դեկտեմբեր, թիւ 11-12, էջ 148:

կան տեսանկյունից պարտավոր էր ամեն կերպ աջակցել հայ ժողովրդին: Արդարադատության նախարարության պատասխան նամակն ուղարկվում է Ջեմալ փաշայի անունից, ով նախօրոք համաձայնեցնելով Սահակ Խապայանի հետ իր մոտ Դամասկոս էր հրավիրել կաթողիկոսի վստահելի անձանցից մեկին՝ Գյուտ եպիսկոպոսին: Ջեմալ փաշան մտերմաբար ընդունելով կաթողիկոսի նվիրակին, նրան է փոխանցում իր նամակը և հայտնում. «Ես խնդրոյն մարդասիրական տեսակետով կը նայիմ, թողէք այս խեղճ ժողովուրդին օձիքը, մինչեւ պատերազմի վերջաւորութիւնը ինքզինքը ապրեցնելու համար կ'ուզէ իսլամ ըլլայ, կ'ուզէ հրեայ ըլլայ, կ'ուզէ կեաւուր ըլլայ, կ'ուզէ կապիկ ըլլայ, նոյն իսկ էջու ձեւին մտնէ, բաւական է որ ինքզինքը ապրեցնէ, հասկցար, գնա Կաթողիկոսիդ այսպէս ըսէ»¹: Հետագայում, երբ Ջեմալը մեկնում է Երուսաղեմ, Սահակ Բ Խապայանն այցելում է նրան և՛ ցավ հայտնում, որ կառավարությունն անհրաժեշտ աջակցություն չի ցուցաբերել կիլիկիահայությանը, որին ի տրիտուր Ջեմալը պատասխանում է. «Յարդ ինչ որ ըրած եմ ոչ թէ իբր ծովային նախարար և բանակի հրամանատար ճեմալ փաշա ըրած եմ, այլ կաթողիկոսին անձնական բարեկամ ճեմալի հանգամանքով ըրած եմ...»²:

Ոչ միայն այս, այլև ընդհանրապես կառավարությանն ուղղված կաթողիկոսի մյուս դիմումներն ու բողոքներն այնքան էլ լուրջ ուշադրության չէին արժանանում:

Շուտով քաղաքական իրավիճակը փոխվեց ի նպաստ հայերի: 1917 թ. հոկտեմբերի վերջին անգլիական բանակը Սուեզի ջրանցքով առաջանում է դեպի Երուսաղեմ, գրավում Քեբրոնը և Հոպպեն, իսկ թուրքերը սկսում են աստիճանաբար նահանջել: Թնդանոթների որոտներն արդեն լսելի էին Երուսաղեմում, երբ թուրքական կառավարությունը, կենտրոնից ստացած հրամանի համաձայն, Երուսաղեմի հունական և լատինաց պատրիարքներին, ինչպես նաև Սահակ կաթողիկոսին տեղեկացնում է, որ Երուսաղեմից տեղափոխվեն Դամասկոս: 1917 թ. նոյեմբերի 6/19 Սահակ կաթողիկոսը, Մ.Օրմանյան սրբազանը, ինչպես նաև հունական պատրիարքն իր Սինոդի եպիսկոպոսներով Երուսաղեմից մեկնում են Դամասկոս³:

Սահակ կաթողիկոսի պաշտոնավարության Երուսաղեմյան անփառունակ շրջանը տևում է 1916 թ. օգոստոսի 6-ից մինչև 1917 թ. նոյեմբերի 6-ը՝ ընդամենը 15 ամիս: Այդ ընթացքում նա իր կոնդակներում իրեն կոչում է «Յիսուսի Քրիստոսի Ծառայ Տէր Սահակ Կաթողիկոս Հայոց Ընդհանուր Թիրքիոյ եւ Պատ-

¹ Մանրամասնությունը տե՛ս **Մխիթարեան Գ.**, Յուշեր և վերլիշումներ (1918-1935), Անթիլիաս, Լիբանան, 1937, էջ 74:

² **Մխիթարեան Գ.**, Յուշեր և վերլիշումներ, (1918-1935), էջ 76:

³ «Հասկ», Անթիլիաս, 1939 թ., թիւ 11-12, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 148:

րիարք Ս. Երուսաղեմի եւ Կ.Պոլսոյ» և ստորագրում՝ «կաթողիկոս-պատրիարք Սահակ»¹:

Թուրքական որոշումով նշանակված և 15 ամիս կյանք ունեցած «կաթողիկոս-պատրիարք»-ի գործունեության գնահատականն ավարտուն կերպով ամփոփում է մեծն Մ.արք.Օրմանյանը, որը նշում է, որ. «...որոշմանց մէջ վարանոտ, յարաբերութեանց մէջ երկչոտ, ձեռնարկներու մէջ անգործ կեանք մըն էր գոր անցուց, Երուսաղեմի մէջ բաւականանալով և գոհունակութիւն զգալով, Երուսաղեմի ըղձացեալ Աթոռին տիրապետած, պատուոյ արտաքին նշաններով փառաւորուած...»²:

Սահակ Բ Խապայանի կենսագիր Բաբկեն Կյուլեսերյան Աթոռակից կաթողիկոսն ևս բավարար չի համարում Սահակ Կաթողիկոսի պաշտոնավարության այս շրջանը նկատելով, որ. «Սահակ Կաթողիկոսը աչքառու, վանքին, կամ ժողովուրդին օգտակար գործ մը չէ կատարած»³:

Իր գահակալության Երուսաղեմյան շրջանի վերջում Սահակ կաթողիկոսը զղջում է իր ստանձնած պաշտոնի համար, որովհետև ինքը մեծ հույսեր էր կապել կանոնագրի դրույթների իրագործման հետ, ըստ որի ժողովուրդը պիտի չհալածվեր, իսկ աղերսագրերին էլ պիտի ընթացք տրվեին, մինչդեռ այդ հույսերը չիրականացան, իսկ կանոնագիրն էլ ոչ մի էական փոփոխություն չմտցրեց ոչ եկեղեցու ոչ էլ ժողովրդի կյանքում:

Բանալի բառեր - կանոնագիր, կաթողիկոս-պատրիարք, Երուսաղեմ, Միս, Սահակ Բ Խապայան, հոգևոր ժողով, Կ.Պոլսի պատրիարքարան, Զավեն պատրիարք:

Վահագն Հարությունյան, Կիլիկիո կաթողիկոս-պատրիարք Սահակ Բ Խապայանի պաշտոնավարման երուսաղեմյան շրջանը - Առաջին աշխարհամարտի տարիներին թուրքական կառավարության կողմից Հայ Առաքելական եկեղեցու նվիրապետության դեմ կատարված ոճրագործություններից ամենասարսափելին թերևս «Կանոնագիր Հայոց Կաթողիկոսութեան եւ Պատրիարքութեան» օրինագիծն էր, որը թվագրված է 19 հուլիսի / 1 օգոստոսի 1916 թ.:

Կանոնագրի հիմնական նպատակն էր վերացնել Կ.Պոլսի հայոց պարիարքությունը, Սսի կաթողիկոսական աթոռը տեղափոխվել Երուսաղեմ, արևմտահայության հոգևոր կենտրոն պիտի հռչակվեր Երուսաղեմի Հայոց վանքը, որտեղ իր աթոռը պիտի ստանձներ «Կաթողիկոս-Պատրիարք Թիւրքիոյ Հայոցը»-ը և կաթողիկոս-պատրիարքի իրավասության տակ պիտի դրվեին Աղթամարի կաթողիկոսությունը, Կ.Պոլսի և Երուսաղեմի պատրիարքությունները: Հոդվածում քննարկվում է Կիլիկիո կաթողիկոս

¹ Ատանայի հայոց պատմություն, էջ 371:

² Օրմանեան Մ. արքեպս., Խոհք և խօսք իր կեանքին վերջին շրջանին մէջ, էջ 348-349:

³ Բաբգեն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441 էն մինչեւ մեր օրերը), էջ 954:

Սահակ Բ-ի պաշտոնավարման երուսաղեմյան շրջանը, որը տևել է 1916 թ. օգոստոսի 6-ից մինչև 1917 թ. նոյեմբերի 6-ը:

Ваагн Арутюнян, Иерусалимский период правления католикос-патриарха Саак 2 Хапаяна - В годы Первой мировой войны среди самых ужасающих преступлений турецкого правительства против духовенства Армянской Апостольской церкви был законопроект «Положение о Католикосате и Патриархате Армении» от 19 июля 1914 года. Основной целью законопроекта была профанация духовных порядков в Западной Армении, согласно которой национальная конституция западных армян, датированная 1863 годом, должна была быть распущена, Константинопольский Патриархат должен был быть ликвидирован, трон Католикоса Сис должен был быть перенесен в Иерусалим, духовным центром Западной Армении должна была стать Армянская церковь Иерусалима, а Католикос-Патриарх должен был взять на себя юрисдикцию над Католикосатом Ахтамар, а также над патриархатами Константинополя и Иерусалима. В статье рассматривается Иерусалимский период правления Киликийского армянского католикоса Саак 2 Хапаяна (6 августа 1916 г. по 6 ноября 1917 г.).

Vahagn Harutunyan, The Jerusalem governing period of the catholicos-patriarch Sahak 2 Khapayan - During the years of the First World War among the most terrifying crimes of the Turkish government against the clergy of the Armenian Apostolic Church was the bill on "The Statute of the Armenian Catholicosate and Patriarchy", which dated July 19, 1914. The main purpose of the Bill was the profanation of the spiritual order in Western Armenia, according to which the national Constitution of Western Armenians, dated 1863, was to be dissolved, the Armenian Patriarchy of Constantinople was to be eliminated, the throne of the Catholicos of Sis was to be replaced to Jerusalem, the spiritual centre of Western Armenia was to become the Armenian Church of Jerusalem and the Catholicos-Patriarch was to undertake the jurisdiction over Akhtamar Catholicosate, as well as over the patriarchates of Constantinople and Jerusalem. In the article is discussing the Jerusalem governing period of the catholicos-patriarch Sahak 2 Khapayan.

**ԵԿԵՂԵՑԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԱՐԾՐՈՒՆՅԱՑ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ**

ԱՐՇԱԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Հայ միջնադարյան մշակույթի կարևոր բաղադրամասն է կազմում եկեղեցաշինությունը, որովհետև եկեղեցիներն են հանդիսացել հայոց քրիստոնեական հավատի կենտրոններն ու պահապանները:

Պետականությունների առկայության դեպքում եկեղեցաշինությունը ծաղկում էր, որովհետև **ցանկացած պետություն ամուր է իրեն պահող գաղափարախոսությամբ**: Հայ առաքելական եկեղեցու գաղափարախոսությունն ընկած էր նաև պետական գաղափարախոսության հիմքում, որով նաև պետք է պայմանավորել այդ գաղափարախոսության կենտրոնների՝ եկեղեցիների կառուցման անհրաժեշտությունը: Հայոց միջնադարյան պատմության զարգացման ընթացքում պարզ երևում են ճարտարապետության զարգացման երկու միտումներ: **Երբ պետություններ չկան՝ ճարտարապետությունը հիմնականում սահմանափակվում է եկեղեցաշինությամբ, իսկ երբ կան՝ այն տալիս է նմուշներ՝ քաղաքացիական և եկեղեցական շինությունների առումներով միաժամանակ**:

Վասպուրականի Արծրունյաց թագավորության ճարտարապետական նոր որոնումների արդյունքում ստեղծված գլուխգործոցների նախագծողը Մանուելն էր, որի ստեղծագործական հանճարի վկայությունն է նախ և առաջ Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին, որը ճարտարապետական մշակույթի համաշխարհային նշանակության գլուխգործոց է:

Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին կառուցվել է 915-921 թթ. Գագիկ Արծրունու օրոք: Ըստ մի տեղեկության՝ Աղթամարը հին դարերում հավանաբար միացած է եղել ցամաքին և հետո նոր է բաժանվել՝ ջրերի հարվածներից նույնիսկ փոքրանալով¹:

Անանունը տեղեկացնում է, որ Ս. Խաչ եկեղեցին Գագիկ Արծրունին կառուցել է տվել Աղձնիքից բերած քարերով: Նա հետևյալն է գրում. «Եւ տեսեալ մերձ ի դրունս Ասորեստանի ամրոց մի յիշխանատանն Աղձնեաց ի գեօղն Կոտում կոչեցեալ (գյուղ Տուրուբերանի Երևարք գավառում, Վանա լճի հարավ-արևմտյան մերձափնյա շրջանում- Ա. Ն.), լինելով սեփհականաբար Զարափիկ կոչեցեալ ազգի՝ սպառ սպուռ կորուսեալ ջնջել զազգն և զշինածս ամրոցին ի հիմանց տապալեալ՝ զքարինս նորա բարձեալ բերէ ի վերա, մկանաց ծովուն, ընծայելով ի

¹ << Բյուզանդիոն >>, թիվ 1505, Կ. Պոլիս, 1901:

նիւթ շինութեան սրբոյ եկեղեցոյն, կանգնելով փոխանակ թագնաձև պղծալից յարկացն գտաճար փառաց¹»:

Իր ամբողջութեան մէջ Ս. Խաչ եկեղեցին ճարտարապետական մշակույթի առումով նորություն է, առաջիններից է, որ աչքի է ընկնում ոչ միայն աստվածաշնչյան, այլև՝ աշխարհիկ թեմաներով և դրանք մեկը մյուսին լրացնում են: Ահա այդ մասին Անանունի վկայությունը. «Ստեղծագործեալ ջոկադրէ և ի կարգս եկեղեցոյն զհոլովս երէոց և զերամսհաւուց, միանգամայն և զդասս գազանաց, խոզից առիւծուց, ցլուց և արջոց, ընդդէմ միմեանց զարդարեալ, զկենդանականին նոցա յուշ առնելով զմարտ, որ է յոյժ ըղձալի իմաստնոց և շրջապատ պարունակ մի պանծալի մանրամասն հատուածովք յօրինեալ, կերպագրեալ որթս խաղողաբերս այգեգործովք և գազանովք և սողվնովք հանդերձ համակրեալք. որոց և կերպարանքն այլ ևայլ զանազանութեամբք ըստ իւրաքանչիւր մասին առբերան գտեսակս²»:

Այս մեջբերումը մղում է կարևոր եզրակացության. որմնաշարերի վրայի պատկերները հուշում էին, որ ապրել նշանակում է պայքարել, հատկապես օտար բռնակալների դէմ:

Եկեղեցու չորս կողմերում, սուրբ խորանների վերևում, չորս ավետարանիչների պատկերներն են, «որք և արժանավորապես իսկ են պսակ ուրախութեան սրբոյ եկեղեցվոյ և վերագոյն քան զամենայնս սուրբ³»:

Արևմտյան խորանի կամարների մոտ Փրկիչն է խաչի վրա, իսկ նրա դիմաց Գազիկի պատկերը, «որ մեծապարծ հավատով բարձեալ ունի զեկեղեցին ի վերայ բազկացն իբրև զսափորն ոսկի լի մանանախին և իբրև զտուփ մի ոսկի անուշահոտութեամբ լցեալ կայ առաջի տեառն, կերպագրեալ այնպէս, որպէս թէ զթողութիւն խնդրեսցէ մեղաց⁴»:

Եկեղեցու հյուսիսային պատի վրա պատկերված է մի անգն պատանի, որը մենամարտում է առյուծի հետ: Հովսեփ Օրբելու կարծիքով այն արտացոլում է «Սասնա ծռեր» էպոսի հերոսներից Մեծ Միերի մենամարտն առյուծի հետ⁵:

Տաճարի հարավային կողմում, մուտքի վերևում կառուցված է նաև հատուկ օթյակ՝ արքայի համար, «որպէս զի ից իցէ տեղի աղօթից թագաւորին զուսպ և զերծ ի մարդկանէ, որով ի միտս իւր եկեալ անգբաղապէս ընդ Աստուծոյ խօսեսցի⁶»:

Ս. Խաչ վանքի նկարագրությունը մանրամասնորեն տվել է դոկտ. Համազասպ Ոսկյանը, որին ծանոթանալով համոզվում ես, թէ ինչպիսի ինքնօրինակ

¹ Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1985, էջ 460:

² Թովմա Արծրունի և Անանուն, էջ 462:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

⁵ Орбели И., Избранные труды, т. 1, Москва, 1968, стр. 108-110:

⁶ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 462:

ու աննախադեպ մի կոթող է և ոչ միայն հայ միջնադարյան ճարտարապետության մեջ: Ըստ նրա՝ Ս. Խաչ եկեղեցին, որը կառուցված է սրբատաշ կարմիր քարերով (բերված Կոտոմ գյուղից), խաչաձև է և անսյուն, պսակված է տասնվեց կողմանի զմբեթով և կոնաձև կաթուղիներով: Եկեղեցու առանձնահատկությունը կայանում է նրանում «որ չորս պատերն իրարու հետ ուղղակի չեն միանար, այլ մեկական մետրաչափ հեռու կը մնան եւ հնգանկյինանի աշտարակաձև ուրիշ պատով մը իրարու կը կցուին յառաջ բերելով (ներքուստ) կիսաբոլոր խորշեր: Նմանապես եկեղեցւոյն խաչի ձեւ տալու համար հարաւային եւ հիւսիսային պատերն երկու կողմէ թեքուածներ ունի: Արևելեան եւ արեւմտեան թեւերը կողքերու թեւերէն ավելի երկար են¹»:

Արևելյան և Արևմտյան պատերի մեջ կան «երկուական կամարակապ ներսանկուածներ, արեւելեանն երեքական, իսկ արեւմտեանը միայն մեկական եռանկյինաձեւ որմնասիւններով զարդարուած: Իւրաքանչիւր պատի մեջ տեղը՝ կայ երկար եւ նեղ պատուհան մը: Այս չորս պատուհաններէ զատ շինուած են դեռ 12 պատուհաններ²»:

Եկեղեցու վերին եզրերը պատված են քիվով, որի տակ կան զանազան կենդանիների փոքրիկ բարձրաքանդակներ: Այս բարձրաքանդակներից մեկ մետր ներքև, ամբողջ եկեղեցին բոլորվում է մի երիզով, բայց այն սուկ պարզ երիզ չէ, այլ՝ համաձայն նաև Անանունի վերևում մեր մեջբերած վկայության, խաղողի ողկույզների, մանրաքանդակների մի ամբողջություն: Սրանից էլ ներքև, «պատին գրեթե մեջ տեղէն ամբողջ եկեղեցւոյ շուրջը ցցուած են այլ և այլ կենդանիներու կիսարձաններ: Ապա կու գայ ուրիշ երիզ մը եւ այս ու նախորդ երիզին միջեւ կան հին ու նոր կտակարաններու սրբերու բազմաթիւ բարձրաքանդակներ եւ տեսարաններ անոնց կեանքէն³»:

Եկեղեցու չորս ճակատներն էլ զարդարված են ավետարանիչների մարդաչափ բարձրաքանդակներով: Այն ընդհանրապես հարուստ է բարձրաքանդակներով, որոնցից ամենանշանավորն է Գագիկ Արծրունու բարձրաքանդակը՝ եկեղեցու արևմտյան պատի վրա: Բացի դրանից՝ Գագիկն ունի մեկ այլ բարձրաքանդակ ևս՝ եկեղեցու արևելյան պատի վրա: Ավելացնենք, որ Ս. Խաչ եկեղեցու զմբեթը ունի տասնվեց անկյուն և ութը պատուհան, երկարությունն է 15.40 մետր, լայնությունը՝ մոտ 20 մետր⁴: Պետք է նշել, որ եկեղեցուն կից շատ շինություններ կատարվել են հետագայում:

¹ ԴԿՏ. Ն. Համազասպ Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Ա. Մաս, Վիեննա, 1940, էջ 86:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 90:

⁴ Նույն տեղում, էջ 99:

Վասպուրականի Արծրունյաց թագավորության բարգավաճմամբ և Գագիկ Ա-ի փառասիրական ձգտումներով պետք է պայմանավորել այն, որ նրա գահակալության շրջանում, Աղթամարը դառնում է կաթողիկոսական նստավայր:

Իսկ Գագիկի մահից հետո, 943 թ-ին արդեն Ամենայն հայոց կաթողիկոսը տեղափոխվում է Կարս, ապա՝ Արգինա:

Աղթամարը կաթողիկոսական աթոռանիստ է դարձել 928-ից 943-ին, ընդամենը 15 տարի: Հետագայում այն բավական երկար ժամանակ գործում է որպես ինքնուրույն կաթողիկոսություն (1113-1895 թթ.), սակայն անշուշտ Ամենայն հայոց կաթողիկոսի գերակայությամբ:

Այն հանգամանքը, որ թեկուզ և կարճատև ընթացքում Վասպուրականում է եղել հայոց կաթողիկոսանիստը, վկայում է տեղի հոգևոր-մշակութային կյանքի զարգացման մասին:

Խոսելով Արծրունյաց թագավորության շրջանի եկեղեցաշինության մասին, անհրաժեշտ է առանձնացնել եկեղեցիներ, որոնք Մ. Խաչի նման նոր են կառուցվում և որոնք վերաշինվում են:

Թովմա Արծրունին հիշատակում է Ռշտունյաց գավառի Մահռաշտ գյուղում Գագիկ Արծրունու կառուցած մի եկեղեցու մասին ևս: Ըստ այդ հիշատակության նա նախ՝ նույն վայրում կառուցում է իր ձեռակերտը, որ նայում էր Ռշտունյաց Ոստանին: Այստեղ նախկինում գտնվել էր Վարդ Ռշտունի պատրիկի պարսպավոր ապարանքը: Գագիկ Արծրունին այնուհետև «Շինե՛ անդ՝ եկեղեցի վայելչապէս պայծառութեամբ և անուանե՛ զնա յանուն սուրբ Պետրոսի առաքելոյն անպարտելի դժոխական առաջնորդի¹»:

Այնուհետև Գագիկը՝ բանակ կրոնաւորաց կարգեց, և հաւատաց զառաջնորդութիւնն նախասացեալ քահանային (Հովհաննէսին- Ա. Ն.), որ էր այր հեզ, ցածուն և պատուական վարուք և պատշաճագոյն յոր կոչեցան և զատուցունէ՛ զօրավարն վանիցն գեօղս բավական առ ընկալումն հիրոցն և ի տեսչութիւն աղքատացն»:

Ինչպես համոզվում ենք, Մ. Պետրոսի եկեղեցին հանդիսացել է հոգևորական կարևոր հաստատություն :

Նույն Թովմա Արծրունու տեղեկությունների համաձայն՝ Գագիկի եղբայր Գուրգենը մի եկեղեցի է կառուցում Մեծ Աղբակում՝ Աղամակերտ քաղաքում: Նա այն կատարում է Գագիկի կողմից Օձ ձորի գլխին Գագկակերտ ձեռակերտի կառուցմանը զուգընթաց: Թովմա Արծրունին հետևյալն է գրում. «Դարձեալ շինե՛ զօրավարն Գագիկ ի գլուխս Օձ ձորոյ ,որ վասն խրստութեանն սաստկաշունչ դառնալիք մահաճին հողմոյն շնչելոյ այսպէս անուաներ , փոխե՛ անդ՝ գեօղս և շինե՛

¹ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 394, նաև՝ Համագասպ Ոսկեան, նշվ. աշխ. , էջ 187:

գրլորն, որ տեղի բանակի դաշիկ առնելոյ էր տանն Արծրունեաց և անուանեաց յանուն իւր զձեռակերտն Գագկակերտ:

Եւ դարձոյց անդ զսահմանս անդր փոխելոյ գեողիցն: Զուգակշիռ հաւասարութեամբ մարգպանն հայոց Գուրգէն հրաշագան յօրինուածով շինէ զեկեղեցին ի քաղաքին Հաղամակերտ ի Մեծն Աղբակ, ի բուն իշխանական սեպհակաւնութեանն իշխանութեան զարմին Արծրունեաց¹:

Համաձայն պատմիչի՝ եկեղեցին հիմնելու համար տաշած քարերը տեղափոխում են երեք ազգարեզ հեռվից՝ սայլերով: Իր հերթին Գագիկը Մանավազյան նահանգից Վանա ծովով բերում է տաշած քարեր «հոլովեալ ի նիւթ եկեղեցվոյն»:

«Մապէս և Գուրգէն կատարելագործեալ բարձրաւանդակ ի սարաւանդակ տեղուոյն բարեձևագունի վայելչացուցեալ զհրաշակերտ յաջմէ և յահեկէ սեղանոյն երկուս ևս եկեղեցեօք: Զոր հրաշագարդեալ մեծագանձ սպասիւք, ոսկեկերտ խաչադրոշեալ ընդելուզեալ մարգարտով և ակամբք պատուականօք հրաշագործեալ²»:

Այսպիսով, Գուրգէնը ևս փաստորեն կառուցում է եկեղեցիներ:

Պատմական տեղեկությունները վկայում են ,որ եկեղեցաշինությունն ընթացել է Վասպուրականի Արծրունյաց թագավորության գոյության ողջ ընթացքում :Նույնիսկ վերջին՝ Մենքերիմ թագավորի օրոք, երբ թագավորության դիրքերը բավականին թուլացել էին, դարձյալ շինարարական աշխատանքներ են տեղի ունենում: Նրա օրոք է, որ կառուցվում Վարագի Ս. Աստվածածին եկեղեցին: Վարագա վանքը Վասպուրականի պաշտելի սրբավայրն էր: Կարելի է համաձայնվել Հ. Ոսկյանի հետևյալ տողերի հետ. «Չեմ կարծեր, որ Վասպուրականի բնակչությունը այնքան ոգևորուած է Աղթամարով, որքան Վարագով: Վարագ անոր սրտին ու մտքին ավելի կը խոսէր քան Աղթամար, մանավանդ վերջին շրջաններուն Վարագի մեջ եղած կեանքն ու տիրած գործունեութիւնը ժողովրդական խաւերուն ավելի մերձ էր, ծանօթ եւ գնահատուած: Աղթամար ճոխութիւն էր, Վարագ սէր ու համակրանք³»:

Այս հանգամանքն ավելի էր բարձրացնում Վարագա վանքի դերը: Լեոն Մենքերիմի մասին գրում է. «Այս թագավորի մասին մենք մի քանի աղքատ տեղեկություններ միայն ունենք, որոնք, սակայն, կասկած չեն թողնում, թե դա մի բարեպաշտ և շինարար մարդ էր, բայց ամեննին գուրկ զինվորական ընդունակություններից, նույնիսկ և վախկոտ...: **Նա էլ, ուրիշ շատերի նման, իր հոգու փրկության համար շինություններ շինեց:** Այսպէս էր Վարագա վանքի շինությունը կամ ավելի ճիշտը՝ վերաշինությունը ⁴»:

¹ Նույն տեղում, էջ 396

² Նույն տեղում :

³ Համագասպ Ոսկեան, նշվ. աշխ. , էջ 270

⁴ Լեո, Երկերի ժողովածու, երկրորդ հատոր, էջ 629-630:

Սակայն, Սենեքերիմը հնարավոր է, որ վերաշինական աշխատանքներ կատարած լինի Վարագա երկու վանքերում, որոնք գտնվում էին Վան քաղաքից դեպի հարավ-արևելք, հինգ կմ հեռավորության վրա բարձրացող Վարագա լեռան վրա: Այդ վանքերը կոչվում էին Վերին Վարագ և Ներքին (ստորին) Վարագ¹:

Ներքին Վարագը կոչվում էր նաև Ս. Նշան, որն այդպես էր կոչվում «յանուն Խաչափայտի, որը իբր թե կախել է կրծքի վրայ Հոփսիմե նահատակը, որ տարածում է Վարագա լեռան արեւմտ. կրծքի վրա, ջրաշատ, դալարավետ եւ բազմաթիւ ծառատունկներով շրջապատուած գեղեցիկ ձորակի մէջ²»:

Ներքին Վարագը կամ Ս. Նշանը բաղկացած էր իրար կից յոթը եկեղեցիներից և այդ պատճառով թուրքերն այս կոչում էին Ետի Քիլիսե³: Դրանք էին Ս. Աստվածածնի, Ս. Գևորգի, Ս. Նշանի, Ս. Խաչի, Ս. Սիոնի, Ս. Հովհաննեսի և Ս. Սոֆիայի եկեղեցիները:

Մրանցից Ս. Աստվածածնի հեղինակն է Սենեքերիմ թագավորը:

Ս.Աստվածածին եկեղեցին հատկապես շատ գեղեցիկ կառույց է եղել: Այն նման է եղել Աղթամարի Ս.Խաչին:Ահա նրա նկարագրությունը. «Կառուցված է անտաշ ու մեծ քարերով –միայն կաթուղիկեն թրծված է աղիւսով:Զարդարված է տասներկու անկիւնեան զմբերով եւ բրգաձեւ կաթուղիկէով:Ունի այն առանձնահատկութիւնը,որ չորս պատերըոչ թէ անմիջապէս կը միանան,այլ անկիւններու մէջ խորշեր կը կազմեն,որոնց մէջէն մէկական դռներ կը բացվուին դէպի խորանները:Դէպի խորանները բացուող արեւմտեան կողմի դռները փակուած են,որովհետեւ այս խորշերէն մին Արծրունի գահակալին եւ միւսը անոր ամուսինին իբր աղօթատեղի յարմարցուած են եղեր: Եկեղեցվոյ բոլոր կամարները պայտաձեւ են,միայն չորս նեղ ու փոքր պատուհաններ լույս կը կը սփռեն:Պատերը սպիտակացուցուած են,բայց հաւանօրէն յառաջագոյն նկարներով զարդարուած եւ արձանագրութիւններով օժտուած ըլլալու էին⁴»:

Ինչպես համոզվում ենք,այս եկեղեցին իսկապես նմանություններ ուներ Աղթամարի Ս.Խաչին: Դա պատահական չէր,որովհետև այդպիսին էին ժամանակի ճարտարապետության առանձնահատկությունները:Մեջբերված նկարագրությունը վերաբերվում է ավելի ուշ շրջանի,իսկ վերջին նախադասությունը վկայում է,որ պատերը զարդարված են եղել որմնանկարներով:

Եկեղեցաշինության ասպարեզում Սենեքերիմ Արծրունուն զորավիգ էր կիներ՝ Գագիկ Ա Բագրատունի արքայի դուստր Խուշուշը: Ըստ երևույթին նրա նախաձեռնությամբ է կառուցվել Վարագի Ս. Սոֆիա եկեղեցին, մեկը հիշատակված յոթը եկեղեցիներից:

¹ Տես Համագասպ Ոսկեան, նշվ. աշխ., էջ 270:

² << Մուրճ >>,թիւ 8, 1903, էջ 34-37:

³ Նույն տեղում:

⁴ Համագասպ Ոսկեան,նշվ.աշխ.,էջ 271-272:

Եկեղեցու արևմտյան պատին եղել է մի խոշորատառ արձանագրություն հետևյալ բովանդակությամբ. «Նէ (981) թուին ես Խուշուշ խաթունս դուստր Գագկայ յագգէն Բագրատունեաց կենակից Մենեքերիմ ար(քայի), սուրբ տաճա-րացս յիշեցեք ի մաքուր¹»:

Նույն Հ. Ոսկեանը վկայում է, որ այս եկեղեցին նույնպես կառուցված է ե-ղել անտաշ և մեծ քարերով, կոչվել է Բերդավոր, «գուցէ պատերազմի ու վտանգի առթիւ հոն պատսպարվելու եւ պաշտպանուելու յարմարութիւն ունենալուն հա-մար: Կոզակը կիսաբոլոր է, կողքերուն ունի մէկական խորան եւ արեւմտեան կողմը մէկական խորշ²»:

Ամենայն հավանականությամբ Մենեքերիմ թագավորի կողմից է կառուց-վել նաև Ռշտունյաց գավառի ամենանշանավոր վանքերից մեկը՝ Կապուտկողա Ս.Հակոբի վանքը,որը նվիրված էր Հակոբ Մծբնա հայրապետին:Վանքն այդպես է կոչվել,որովհետև գտնվել է Կապուտկող լեռան վրա:Հայտնի է եղել նաև Ընձաքա-սարի կամ Ընձաքարի վանք անունով,որովհետև Կապուտկողի լեռը իրեն մերձա-կա Ընձակ գյուղի անունով կոչվել է նաև Ընձաքասար³:

Ս.Հակոբա համալիրը բաղկացած էր մի եկեղեցուց և երեք մատուռից ու պարսպապատված էր:Տաճարը այդ անունն է ստացել այն պատճառով,որ այն-տեղ սկզբնական շրջանում պահվել է Հակոբ հայրապետի ճկույթը,որն հետո տե-ղափոխվել է Նարեկա վանք:Եկեղեցին կաղուցված էր անտաշ քարերից,խաչաձև էր,ունէր ռոմանական ոճի կամարներ, ութանկյունանի կաթողիկե և չորս խո-րան:Իսկ երեք մատուռներից առաջինը նվիրված էր Սուրբ Աստվածածնին, երկ-րորդը՝ Ս.Հովհաննէսին իսկ երրորդը՝ Երից Մանկանց: Մատուռները փոքր էին և դարձյալ շինված անտաշ քարերով:

Ս.Հակոբի եկեղեցին նույնպես հանդիսացել է ժամանակի նշանավոր հոգևոր հաստատություններից մեկը:

Վասպուրականի Արծրունյաց շրջանի եկեղեցաշինությունն ուսումնասի-րելիս ուշադրություն է գրավում մի կարևոր հանգամանք: **Նշանավոր եկեղեցիները միաժամանակ հանդիսացել են Արծրունի թագավորների գահանիստները:**

Սա շատ կարևոր եզրակացության տեղիք է տալիս, այն է՝ **Վասպուրա-կանում հոգևոր և աշխարհիկ իշխանություններն եղել են միաձույլ,քան երբև: Աշ-խարհիկ և հոգևոր իշխանությունների ներդաշնակումը պարզ երևում է եկեղեցա-քանդակներից, ուր աստվածաշնչյան տեսարանները ներկայացված են աշխար-հիկ պատկերների գուգորդությամբ:** Հայոց եկեղեցիների պատերի վրա մինչև այդ անհնար էր տեսնել հայոց թագավորների պատկերներ:

¹ Նույն տեղում, էջ 276, նայն՝, <<Ազգագրական հանդես>>, 1911 էջ 66:

² Նույն տեղում, էջ 276-277:

³ Սարգիսեան Հ.Ն.,Տեղագրութիւնք ի Փոքր և Մեծ Հայս,Վենետիկ,1864,էջ 251:

Թերևս կարելի է պնդել, որ 10-րդ դարում է կառուցվել նաև Նարեկա հռչակավոր վանքը, որը կոչվել է նաև Ս. Սանդուխտի վանք: Հետևյալ մեջբերումը լիարժեք պատկերացում է տալիս վանքի դիրքի նկատմամբ. «Վանի ծովից մի ժամաչափ դեպի հարավ մի բլրադաշտի վրայ գտնվում է Նարեկ գիւղը, որի մեջտեղում բարձրացած է հռչակաւոր վանքի երկնամասն տաճարի բարձրաբերդ գմբեթը¹»:

Վանքը շինվել է «թել քարերով, պարսպապատ էր և բաղկացած սրբուհի Սանդուխտի, Ս. Ասվածածնի տաճարներից և մի զանգակատնից:

Հ. Սարգսյանը գրում է. «Եկեղեցի նորա հայակապ յերիս բաժանի կից ընդ միմեանս, միջինն Աստուածածին կոչի չորիւք քառակուսի սեամբք, աջակողմեանն անսին սուրբ Սանդուխտ, յորոյ աջմէ առ ի ներքս յետոյ խորանին կայ մատուռն, ուր գերեզմանն է սրբոյն, իսկ ձախակողմեան դարձեալ յանունն Աստուածածնի նմանաձէ միւսոյ կողմանն²»:

Ս. Սանդուխտի եկեղեցին արտաքուստ ունեցել է քառակուսի տեսք, իսկ ներքուստ խաչաձև և ունեցել է չորս խորան: Ըստ մեկ տեղեկության Նարեկա վանքի անունը ծագել է Նար կամ Նար-եկ գյուղից ուր ծնվել է Նարեկացին: Վերջինս իր ազգատոհմով այս վանքում է հաստատվում, որով վանքին տրվում է Նարեկ-Նարեն եկած անունը³:

Գագիկ Ա Արծրունու կողմից Վանա ծովի հարավ-արևելյան կողմում ծառախիտ մի ձորակի մեջ կառուցվել է նաև Կարմրակ Ս. Աստվածածին կամ Միանձն և Անեն կոչված վանքը: Սարգիսյանը վկայում է, որ նրա որմնադիր Գագիկ արքան իր կողակցի հետ զարնան երեք ամիսները այստեղ է անցկացրել⁴:

Գագիկ Արծրունու նշանավոր եկեղեցական կառույցներից պետք է առանձնացնել Ռշտունյաց Իլու կամ Քառասուն Խորան Ս.Աստվածածնի վանքը: Այն գտնվում է Ռշտունիքի Իլու գյուղում, հարթավայրի վրա, Արտոս լեռան հյուսիսային ստորոտում⁵:

Վանքը բաղկացած է եղել երկու միմյանց կից տաճարներից՝ հյուսիսային և հարավային: Հյուսիսային տաճարը շինված էր անտաշ քարով, զարդարված ռոմանական կամարներով և ութանկյունի գմբեթով՝ բրգաձև կաթոլիկեով պսակված: Այս տաճարի առանձնահատկությունը նրանում է, որ «նախնական եկեղեցիների նման ունի չորս աւանդատուն, արեւելեան եւ արեւմտեան կողմերուն երկուական եւ սրանց վրայ դարձեալ չորս այլ աւանդատուն, որոնց դռները դրսից են, բաւական բարձր: Միւս տաճարը, որ հաղորդակցւում է առաջնի հետ մի դռնով, կիսաւեր է, ձեղունն ամբողջովին քանդուած. Երեսուր են ներքին չորս աւանդատ-

¹ Նույն տեղում, էջ 190 :

² Սարգսյան Հ. Ն., Տեղագրությունք ի Փոքր և Մեծ Հայս, էջ 253:

³ << Բյուզանդիոն>>, 1903, թիւ 2031, էջ, 1903:

⁴ Սարգիսեան Հ. Ն. , նշվ. աշխ. , էջ 252:

⁵ << Բիւզանդիոն>>, թիւ 1191, 1900:

ները, որոնց վրայ դարձեալ եղել են ասանդատներ, որը ժողովուրդը չափազանց-ներով Քառասուն խորան է կոչել վանքը¹»:

Ըստ Աղթամարի կոնդակագրի այս վանքը հիմնադրել է Գագիկ Արծրունին, Աղթամարի շինությունից հետո: Ինչպեց նշում է Հ. Ոսկեանը՝ «Վանքիս հոյակապ շինուածքը մեծամեծ ծախսերու պատճառ եղած է ու միայն թագապսակ իշխան մը կրնար գանոնք հայթայթել եւ իր անուան անմոռաց յիշատակ կանգնել: Իսկ անոր ամուր ու գեղեցկակերտ կառուցուածքը ենթադրել կուտայ թէ՝ անոր ճարտարապետը շատ կարող ու հմուտ մէկն եղած ըլլայ: Գուցէ թէ նա ինքն Աղթամարի ճարտարապետը՝ Մանուէլ²»:

Դժբախտաբար այս ճոխ կառույցից այսօր ավերակներ են մնում:

Բազմաթիւ եկեղեցիներ են գործել՝ Արծրունիների թագավորության շրջանում Վասպուրականում, բայց շատերի հիմնադրման վերաբերյալ տեղեկություններ դժվար է գտնել: Մի բան ակնհայտ է, որ կառուցվել են նորերը և գործել են հները (որոշ տեղեկությունների համաձայն Վասպուրականում գործել են 115 եկեղեցիներ):

Հաշվի առնելով այն պարզ ճշմարտությունը, որ եկեղեցաշինություն ոչ միայն նշանակում է ճարտարապետական կառույցի հորինում, այլ՝ նրանում հոգևոր սպասարկուների առկայություն, ապա՝ պետք է շեշտել, որ Վասպուրականի թագավորության շրջանում որպէս հայ քրիստոնեական հավատի կենտրոններ նորովի էին գործում ավելի հնօրյա եկեղեցիները, որոնցից հասկապէս հարկ է հիշատակել Լիմ և Առտեր կղզիների կառույցները (Ս. Գևորգ և Ս. Կարապետ): Տեղին է անդրադառնալ այս հոգևոր հաստատություններին ևս:

Լիմը Վանա ծովի ամենամեծ կղզին է: Գտնվում է նրա հյուսիս-արևելյան մասում, ապառաժոտ է և ավազուտներով հարուստ: Մեծամասամբ ունի տափակ մակերևույթ: Հնում բաժանված էր վարելահողերի, արոտավայրերի, այգիների և պարտեզների: Ահա այս կղզու, որն հաճախ կոչվում էր Լիմ անապատ, վրա էր գտնվում հայ քրիստոնեական հավատի հնօրյա կենտրոններից մեկը՝ Ս. Գևորգի եկեղեցին: Այն ուներ մի քանի կառույցներ: Բացի Ս. Գևորգին նվիրված տաճարից, ուր ամփոփված էին գորավարի մասունքները, կային բազմաթիվ սենյակներ, որոնք կոչվում էին ներքին Լիմ: Կար և «Դրսի տուն» կոչված կառույցը, որը շինված էր լճի հարավային ափին: Տաճարի պատերը «պարզ են, միապաղաղ, գմբեթը ցած էւ կոնաձեւ կաթուղիկէով, բայց և այնպէս գեղեցիկ եւ վայելուչ է տաճարը³»:

Եկեղեցին ուներ երկու ավանդատուն և արևմտյան կողմում երկու խորշ՝ արևմտյան պատին կից «եւ անոնց մօտ՝ երկու մետր հեռու մէկ ու կէս մետր

¹ << Ազգագրական հանդես >>, Հ Ա, 1911, էջ 48-49:

² Համագասպ Ոսկեան, նշվ. աշխ., էջ 159-160:

³ Նույն տեղում., էջ 5:

րաչափ յառաջացած որմնասիւններու եւ ասոնց վրայ բոլորուող ռոմանական կամարներու շնորհիվ¹»:

Մյուս կամարները, որոնց վրա հանգչում է գմբեթը, պայտաձև էին: Պայտաձև էր նաև կոզակը, որն ուներ նույն տիպի մի կամար և մի փոքրիկ լուսամուտ: Արևմտյան կողմում կար մի դուռ, որը զարդարված էր համակենտրոն կամարներով և պատված էր բարձրաքանդակ լայն երիզով: Չորս քառակուսի սյուների և ութ նույնապիսի որմնասյուների վրա ամբողջանում էին իրենց մեջ կիսաբոլոր ձեղուններ կրող պայտաձև կամարները: Եկեղեցու սյուներն ու պատերը մերկ չէին, այլ զարդարված էին պատկերներով և լուսավորվում էին իննը փոքրիկ պատուհաններով: Պատմական աղբյուրներում կղզու անունը հիշատակվում է երկու ձևով՝ Լիմն կամ Լիմ: Ըստ Շ. Ղ. Ինձիճյանի՝ այս անունը ծագում է հունարեն Լիմնի (Լիմնես) բառից, որը նշանակում է լիճ²:

Մինչդեռ Շ. Ոսկյանն այն կարծիքն է հայտնում, որ կղզու անունը ծագել է դարձյալ հունարեն Լիմին կամ Լիմեն բառից, «որ կը նշանակէ նաւահանգիստ՝ ապաստարան, եւ ստուգիւ այս կղզին ապաստարան եղած է թշնամիներէ և աշխարհի փոթորիկներէ՝ հոն խուսափողներու և միանձնէրու³»:

Ըստ ավանդության Լիմ անապատի հիմնադիրն է հանդիսացել Գրիգոր Լուսավորիչը: Մակայն, չի բացառվում նաև, որ նրանից շատ հետո է հիմնադրվել այս հաստատությունը: Մենք այն կարծիքին ենք, որ այն լինելով հնօրյա՝ դարերի ընթացքում համալրվել է նոր կառույցներով: Լիմի միաբանները դարեր ի վեր ապրել են շատ ժուժկալ կյանքով: Նրանց գլխավոր գործն եղել է հոգու փրկությունը, որի պատճառով շատ չեն հետաքրքրվել ազգային կյանքով և գիտությամբ:

Մյուս նշանավոր մենաստանը գտնվում էր Կտուց կղզում: Այն կոչվում էր Ս. Կարապետի վանք, քանի որ այնտեղ ըստ ավանդության պահվում էին սուրբ Կարապետի մասունքներից: Տաճարը քառանկյուն էր և ուներ երկու ամբողջական և վեց կիսասյուներ, որոնց վրա ամբողջանաձևում էին պայտաձև կամարները: Վերջիններիս վրա նստած էր ութանկյուն ունեցող գմբեթը՝ պսակված կոնաձև կաթողիկեով: Սյուները քառակուսի էին, կոզակը կամարակապ և պայտաձև կամարով: Արծրունիների թագավորության շրջանում պատերը զարդարված էին պատկերներով: Կտուց անապատի հիմնադիրը նույնպես ըստ ավանդության հանդիսացել է Գրիգոր Լուսավորիչը: Նա Հռոմից վերադառնալով՝ իր հետ բերում Կենաց փայտից մի մաս և յոթ սրբերի նշխարհներ: Երբ հասնում է Կտուց կղզի՝ լսում է մի ձայն՝ «Զմեզ հոս ամփոփէ»: Լուսավորիչը հնազանդվելով կոչին և նշխարները յոթը տեղ գետեղելով՝ նրանց վրա յոթը եկեղեցիներ է կառու-

¹ Նույն տեղում:

² Տես Ինձիճեան Շ. Ղ., Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի կամ Նոր Հայաստան, Վենետիկ, 1806, էջ 155:

³ Համազասպ Ոսկեան, նշվ. աշխ., էջ 4:

ցում¹: Այս մենաստանի միաբանները նույնպես իրենց զոհաբերել են Աստծուն և քչերն են տարվել գիտությամբ:

Արծրունիների թագավորության շրջանում գործող հայտնի եկեղեցիներից էր Առտերի Ս.Աստվածածին վանքը, որի հիմնադրությունը նույնպես կապվում է Գրիգոր Լուսավորչի հետ:

Փակելով Վասպուրականի Արծրունյաց թագավորության շրջանում ծավալված եկեղեցաշինությանը նվիրված ենթագլուխը, կարելի է կատարել հետևյալ ընդհանրացումները .

Առաջին. եկեղեցաշինությունը լայն ծավալ էր ընդունել՝ իր հետ բերելով ճարտարապետական նոր և ինքնատիպ լուծումներ :

Երկրորդ. աշխարհիկ և հոգևոր իշխանությունների միջև եղել է խորը ընդհանրություն , որի վկայությունն է այն, որ Արծրունյաց շատ արքաների համար եկեղեցիները հանդիսացել են նաև նստավայրեր :

Երրորդ. Իշխանության և եկեղեցու սերտ համագործակցության վկայությունն է եկեղեցական մանրաքանդակներում աստվածաշնչյան պատկերների զուգահեռ աշխարհիկ թեմաներով պատկերների առկայությունը: Թերևս հայոց պամության մեջ հազվադեպ անգամ արքաների պատկերները հայտնվել են եկեղեցիների որմնանկարներում և քանդակներում;

Բանալի բառեր – Հայ միջնադարյան մշակույթ, Վասպուրական, Արծրունյաց թագավորություն, եկեղեցաշինություն, վանքեր, եկեղեցիներ, ճարտարապետություն, քանդակներ, որմնանկարներ, հոգևոր իշխանություն, աշխարհիկ իշխանություն, կաթողիկոսություն, Աղթամար, Գագիկ 1-ին, Գուրգեն, Սենեքերիմ, միաձուլում:

Արշակ Ներսիսյան, Եկեղեցաշինությունը Վասպուրականի Արծրունյաց թագավորության շրջանում - Վասպուրականի Արշրունիների թագավորության շրջանում(908 – 1022թթ.) մշակույթն ապրում է վերելքային շրջան: Հասկապես բարձր զարգացում է ապրում եկեղեցաշինությունը, որը յուրահատուկ լուծումներով և ճարտարապետական լուծումների բազմազանությամբ առաջ է անցնում հայ միջնադարյան եկեղեցաշինությունից: Կարևոր է նաև, որ հոգևոր և աշխարհիկ իշխանությունները դառնում են միաձույլ, որի վկայությունն են եկեղեցիների վրա արքաների կամ իշխանների քանդակները:

Аршак Нерсисян, Церковное строительство в период Арцруни Королевство Васпуракан - в период Арцруни Королевство Васпуракан (908-1022) культура была на подъеме. В частности, церковное строительство с уникальными решениями и разнообразием архитектурных решений было более развито, чем средневековое Армянское церковное строительство. Важно также то, что духовные

¹ «Ազգագրական հանդես», 1911, էջ 88-98:

и мирские власти стали монолитными, свидетельством чему являются скульптуры царей или князей на церквях.

Arshak Nersisyan, Church building in the period of Artsruni Kingdom of Vaspurakan – During the Kingdom of Vaspurakan ruled by the Artsruni dynasty (908-1022) culture was in the period of rising. In particular, with its specific solutions and diversity of architectural solutions the Church building was more developed than the medieval Armenian Church building. It is also important that spiritual and secular authorities became monolithic and the evidence of it was the sculptures of kings or princes on the buildings of churches.

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿԵՐՊԱՐԱԿԵՐՏՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ս. ԽԱՆՁԱՂՅԱՆԻ
«ԽՈՍԵ՛Ք, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՌՆԵՐ» ՊԱՏՄԱՎԵՊՈՒՄ

ՎԱՀԱՆ ԱՂԱԲԱՅԱՆ, ՄԵՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Նորագույն շրջանի հայ գրականության մեջ Հայոց մեծ եղեռնի թեմայով գրված լավագույն ստեղծագործություններից մեկը Ս. Խանզաղյանի «Խոսե՛ք, Հայաստանի լեռներ» պատմավեպն է: Ներկայացնելով Մեծ եղեռնի ահասարսուռ դեպքերը, Ս. Խանզաղյանը բացահայտում է Օսմանյան կայսրության իրական դեմքը և կենտրոնանում է այն իրողության վրա, որ եղերական ժամանակներում լիակատար ոչնչացումից փրկվել են հայության այն հատվածները, որոնք կազմակերպված դիմադրություն են ցույց տվել թշնամուն: Այստեղից էլ հեղինակային եզրահանգումը՝ թուրք ջարդարարների դեմ ժողովրդական ընդվզումն ու պայքարն այդ հատվածներում կրել է կազմակերպված բնույթ, որին որդեգրված են եղել հասարակության բոլոր խավերը՝ անկախ իրենց հասարակական դիրքից ու կուսակցական պատկանելիությունից:

Եղեռնի թեմայի խանզաղյանական մեկնաբանությունը բնութագրվում է ն՝ գաղափարական հագեցվածությամբ, քանի որ իր մեջ է առնում ներկայացված իրադարձություններին առնչվող բոլոր առանցքային գաղափարական ասպեկտները, և՛ հուզագգացմունքային բազմապիսի դրսևորումներով, որտեղ կա լաց ու մեղադրանք, արցունք ու պայքար: Գաղափարականի և հուզականի հետաքրքիր ներհյուսմամբ երկը դառնում է տարբերվող ու հիշարժան:

Սերո Խանզաղյանի «Խոսե՛ք, Հայաստանի լեռներ» պատմավեպը ոչ միայն հայ ժողովրդի կենսագրքի ամենասև Էջի ցավոտ արձագանքն է, այլև նրա բազմադարյան ճիչը՝ մշտապես խեղդված, անտեսված ու անհույս, լի անտարբեր աշխարհի հանդեպ ցավաշատ զարմանքով ու հարատևման հաստատական որոշմամբ: Անկումների ու կորուստների կործանիչ անդունդի խորքից բարձրանում է հայը, որ լույս է փնտրում անանց խավարում, ջերմության նշույլ՝ ձյան մեջ, հարսանիք անում մահվան ճիրաններում և ապրելու տենչով հաղթում մահվանն ու մահաբեր թուրքին:

Վեպը բաղկացած է երկու մասից, որոնցից առաջինն ամփոփում է արյունատենչ և տմարդի թշնամու, հայասեր մահվան ու հայասոյաց ճակատագրի դեմ հայի կենսածին, տարերային պայքարի ծնունդն ու ծավալումը, երկրորդը՝ նրա դժվարին ընթացքը անմար հույսի ճանապարհով: Իսկ ավելի ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ սա հայի հազարամյա ընթացքն է պատմության ճանապար-

հով միննույն օրինաչափությամբ, պայքարն է միննույն մրցակցի՝ մահվան դեմ, հաղթանակն է՝ պսակված միշտ նույն մրցանակով՝ կյանքով:

Հայկական շեն գյուղը պատմավեպի սկզբում ներկայացվում է խաղաղ կյանքի համապատկերում: Կաթակնում գերիշխող գույներն էին սպիտակն ու կարմիրը: Մպիտակը պատերին քսած կիրն էր, կարմիրը՝ կղմինդրե տանիքները: Ջարդերի օրերին ևս կաթակնեցիներին ամենուր այդ գույներն էին ուղեկցում. սպիտակը ձյան գույնն էր, որ սառնամանիքներով ու բքերով շրջափակել էր կաթակնեցիներին, իսկ կարմիրը՝ այնտեղ թափվող անմեղ արյան: Հողի ու թարմ հացի բույրերի սովոր կաթակնեցին սկսում է վարժվել վառոդահոտին ու ահավոր կրակոցներին: Խանգաղյանը ինքնատիպորեն է վրձնում վերափոխված գյուղի պատկերը. «Պաշարված Կաթակնը վեհ էր ծերունի Ղլյմա Օհանի պես: Ջորապետի մարտական դիտանոցը բարձր էր եկեղեցու խաչից անգամ: Կաթակնը վիրավոր, գերված էր Աղավնու նման, բայց և նրա նման հպարտ էր ինքն իր մաքրությամբ և ապրելու հավատով, որ ամուր էր գերեզմանատան քարերի պես՝ հազար հինգ հարյուր տարվա գրերով, մեկի վրա Ջիլ Ջաքարի, մյուսին՝ Խորեն աղայի ապուպապերի անունները»¹:

Վեպում եղեռնն արտացոլվել է և՛ ուղղակիորեն՝ ջարդերի ու աքսորի օրերի նկարագրությամբ, և՛ անուղղակիորեն՝ մարդկային կյանքի ու հոգեբանության վրա ունեցած ազդեցությամբ:

Պատմավեպի կերպարային համակարգը գունագեղ է, որ հնարավորություն է տալիս վեր հանելու ժամանակաշրջանի համապարփակ նկարագիրը: Հիմնականում ազգային պատկանելությամբ հայ և թուրք կերպարներ ստեղծելով ու նրանց վիպական գործողությունների մեջ դնելով՝ Խանգաղյանն իր ստեղծագործության մեջ արտացոլել է դարասկզբին հատուկ տազնապահարույց անորոշությունը, կենսական տարաբնույթ գաղափարների ու քաղաքական հայացքների բախումները, ազգային շահի ու միասնականության անհրաժեշտության թերգիտակցումն ու դրա անդառնալի հետևանքները: Պատմավեպի էջերում կենդանանում են ժամանակի անձնվեր ու համարձակ մարտիկը, զգուշավոր հոգևորականը, որդեկորույս մայրը, մարդակուլ քառսում մոլորված որբը և, վերջապես, թուրք սրիկան ու մարդասպանը:

Ցեղասպանության թեման յուրովի է բեկված վեպում գործող յուրաքանչյուր կերպարի մեջ: Նրանցից յուրաքանչյուրը կրում է ցեղասպանության օրերի գեղարվեստական ինքնատիպ արտացոլման մի մասնիկը՝ դառնալով կարևոր օղակ վեպի գաղափարական ամբողջացման համար:

¹ Խանգաղյան Ս., Երկերի ժողովածուն, վեց հատորով, հատոր չորրորդ, Խոսեք, Հայաստանի լեռներ, Եր., 1982, էջ 211: Այսուհետև մեջբերումները կկատարենք նշված գրքից՝ փակագծերում նշելով էջը:

Պատմավեպի գլխավոր հերոսը Երզնկայի ինքնապաշտպանական մարտերի առաջամարտիկ Ներսես Չավուշն է՝ թուրքական բանակի մինքաշի (հազարապետ), որ պայքարի ու թշնամու հետ զենքի լեզվով խոսելու գաղափարախոսության կրողն է: Նա եղել էր Էնվերի ու նրա գաղափարակիցների «լուսաբեր» հեղաշրջմանը հավատացողներից մեկը, սակայն իրականության քողագերծումը դառնում է ուղղորդիչ փարոս իր ու ազգի կյանքում սահմանված դերը վերջապես գտնելու համար: Ներսեհը դառնում է նախ իր ժողովրդի գլխին ճոճվող մահաբեր ու կործանիչ վտանգի դեմ մաքառող վեհ մարտիկ, ապա՝ ազգի մնացյալ ու սրբացյալ բեկորների անձնագոհ պաշտպան:

Ներսեհ Չավուշը ընդամենը երեսունվեց տարեկան էր, սակայն անդարձ գլորված տարիները չէին տվել ջերմ հուշեր, քաղցր կյանքի զգացում օտար, թշնամական հողում ու անցանկալի միջավայրում, իսկ պայքարի տարիները կարծես ժամանակից շուտ ծերացրել էին նրան՝ ջահել պահելով մարտիկի ոգին ու ուժը: Նա այդպես էլ չունեցավ իր «բույնը», որ հյուսված էր պատկերացում միայն հայրենի հողում, իր գլխավորած պայքարի օրերին իբրև հայ փորձելով փրկել հնարավորինս շատերի՝ զրկվեց շատերից. կինն ու դեռ չծնված զավակն իր դեմ մոլեգնած թուրքերի վրեժխնդրության զոհը դարձան, կորցրեց ընկեր ու հարազատ, ստիպեց իրեն սրտում Հեղինեի հանդեպ ծնվող սերը կյանքի բիրտ պահանջների թելադրանքով վերափոխել հավատարիմ ու նվիրական զինակցության ու ջերմ ընկերության:

Կաթակնեցի հերոսը վեպի տարբեր դրվագներում դրսևորվում է որպես հմուտ ռազմագետ ու հիմնալի առաջնորդ՝ քաջատեղյակ թուրքական խարդավանքների ու ստերի խճճված սարդոստայնին: Նրա ռազմական խորամանկությամբ փոքրաթիվ հայկական ինքնապաշտպանական ուժերը Կաթակնի ու Աղու գետի կռիվներում թուրքական բանակին տալիս են քսանհինգ հազար զոհ: Նա, գիտակցելով առժամանակ հայրենիքում մնալու վտանգավորությունը, մոտ տասնյոթ հազար փրկվածների ռուսական նավերով մեծագույն դժվարությամբ ճանապարհում է դեպի ապահով ափեր, ապա վերադառնում՝ դեռևս մահվան դեմ պայքարողներին փրկելու. «Նա մնում է երկրում, ինչպես հայ ժողովրդական էպոսի հերոսն է մնում քարափում փակված՝ սպասելով այն օրվան, երբ վերջնականապես կազատագրվի սիրելի հող հայրենին և սրբազան Եփրատը նորից կխոսի հայերեն»¹:

Ներսեհ Չավուշն իր զինակից ընկերների հետ անհաղթ պայքարով հյուսում է ցեղասպանության տարիների հայկական ինքնապաշտպանական գոյակռիվն անմահացնող հերոսապատում, որի յուրաքանչյուր հերոս հասարակ հայ է՝ զինված ազգին ու զենքին ունեցած նվիրվածությամբ: «Խանգաղյանի վեպի գլխա-

¹ Պետրոսյան Թ., Սերո Խանգաղյանի պատմական արձակը, Եր., 1986, էջ 110:

վոր խնդիրներից մեկն է ցույց տալ անհավասար կռվում հայ մարդու ցուցաբերած հերոսությունը, հայրենիքի համար նրա կռվելու և մեռնելու պատրաստակամությունը:

Կաթակնի գյուղապետ Խորեն աղան դառնում է ինքնապաշտպանական պայքարի առաջամարտիկներից մեկը, նրա որդին՝ Բենիամինը, որ վիպական գործողություններին զուգընթաց տանսվեցամյա անփորձ պատանուց դառնում է հասուն ու խիզախ մարտիկ, ջահել կնոջից ու նորածին զավակից ինքնակամ բաժանվելով՝ մնում հայրենի հողում՝ փրկելու և պաշտպանելու վտանգի երախում մնացած հայերին: Գերասիմը քահանա չունեցող կաթակնեցիների պահանջով վարժապետից վերածվում է հոգևորականի և սկսում «Ցանկ բեկորաց հայոց» կոչվող մատյանում գրանցել ողջ մնացած հայերի անունները: Նրա որդին՝ Գեղամը, Բենիամինի, Փափագի ու մյուս հասակակից պատանիների պես իր կյանքի լավագույն տարիները նվիրում է ազգակիցների փրկությանը: Եղեռնի հարվածի ազդեցությամբ վեպի հերոսները ազգային հզոր ինքնագիտակցությամբ նվիրվում են հայրենյաց փրկության գործին՝ ամենից վեր դասելով ազգի շարունակական ընթացքը հետագա դարերում:

Առասպելածին հերոսի հատկանիշներով էր օժտված Զիլ Զաքարը, որ իր մականունն ստացել էր ցլի ուժ ունենալու պատճառով: Զաքարը ֆիզիկական հզորությունից բացի ուներ նաև մեր էպոսի հսկային հատուկ բարեսրտություն. պատմավեպի դրվագներից մեկում նա ճանապարհին հանդիպած մի քանի թուրք ոստիկանի կյանք է խնայում՝ հուսալով, որ դրանից հետո արյուն թափելու փոխարեն բարի գործով կզբաղվեն, բայց մարտի դաշտում յուրաքանչյուր թուրքի համար մահաբեր էր նրա առաջ հայտնվելը: Զարմանալի լավատեսությամբ ապրող հերոսը իրեն ու հայրենակիցներին պատուհասած ցավերը լուր տանում էր հոգում: Քաջ հսկան անկեղծ միամտությամբ զարմանում էր, թե ինչու են հազարավոր հայեր ծառայում օտար ազգերի բանակներում: Զաքարից թշնամին վախենում էր անգամ նրա մահվանից հետո՝ հավատալով իր իսկ հյուսած առասպելին, ըստ որի՝ Զաքարը գերմարդկային ուժերով օժտված «ջին» էր, որ սպանվելուց հետո միշտ վերակենդանանում էր:

Հերոս Զաքարի մահը նույնպես հերոսական էր. նա սպանվում է փոքրաթիվ ֆիդայական ուժերով քրդական հեծելազորի դեմ սկսած հրաձգությունից, քանի որ չէր կարող հանդուրժել հայ կանանց ստորացումը, որոնց քրդերը ստիպում էին մերկ պարել իրենց կազմած օղակում. «Հայերը սոսկումով էին նայում վանքի բակում կատարվող վայրենի իրարանցմանը: Քրդերը ոռնում էին, քրքջում, երևի արյան հաճույքից: Մերկ մարմինների պարը խելահեղ էր: Ձուռնայի ծղրտոցն ու թմբուկի աղմուկը կարծես ճեղքում էին երկինքը» (396): Նմանատիպ տեսարանի հանդիպում ենք նաև Խանգաղյանին նախորդող շրջանի հայ գրողների գործերում: Բաֆֆու «Ջալալեդդինի» գլխավոր հերոս Սարհատը զինա-

կիցների հետ ականտես է լինում նման տեսարանի. «Նավթի մեջ թաթախած ցնցոտիքը բոցավառվում էին և իրանց ծիրանի շառավիղներով լուսավորում էին պարող կանանց գունաթափված երեսները: Ջահերի մոտ, բոլորակի միջնավայրում, նստած էին տղամարդիկ և դժոխային ոգևորությամբ նայում էին կանանց մերկ շրթայակապի վրա, որ անդադար շրջում էի նրանց շուրջը: Երևում էր, որ այդ ողորմելի արարածները ակամա և ստիպմամբ հանձն էին առել այդ խայտառակ պարահանդեսը»¹: Մարիստը ևս չի կարողանում հանդուրժել քրդերի անարգանքը հայ կանանց նկատմամբ և փոքրաթիվ ուժերով հարձակվում է թշնամու վրա՝ անտեսելով մահվան վտանգը: Նման տեսարանի լավագույն գեղարվեստական արձագանքը Սիամանթոյի «Պարը» ստեղծագործությունն է՝ ներկայացված այդ սարսափելի պատկերին ականատես գերմանուհու աչքերով, առավել դաժան իրողություններով, քան նախորդ գրողների գործերում.

Քսան հարսներն գեղադեմ, գետին ինկան պարտասած...

«Ոտքի՛ ելեք», գոռացին, մերկ սուրերնին օձերու պես շարժելով...

Հետո մեկը սափորով մը քարյուղ բերավ խուժանին...

Ով մարդկային արդարություն, թո՛ղ ես թքնեմ քու ճակատիդ...

Քսան հարսներն շտապով այդ հեղուկովն օժեցին...

«Պե՛տք է պարեք», որոտաց, ահավասի՛կ ձեզի բուրմունք մը, որ

Արաբիան իսկ չունի...»,

Հետո ջահով մը բռնկցուցին մերկ մարմինները հարսներուն:

Եվ ածխացած դիակները պարին մեջեն դեպի մահը գլորեցան²...

Ակնհայտ է Խանզադյանի պատկերած տեսարանի նմանությունը իրեն նախորդած գրողների պատկերած համանման տեսարաններին: Գրողը հավանաբար ազդվել է իր նախորդներից՝ թշնամու պարտադրանքով հայ կանանց պարի տեսարանը ներկայացնելով յուրովի և հարմարեցնելով այն իր պատմավեպի գաղափարախոսությանը:

Ներսեհի հերոս զինակիցներն ընկնում են՝ մինչև վերջին շունչը անգիջում պայքար մղելով եղեռնը սանձազերծած ու ամենայն պատասխանատվությամբ իրագործած թշնամիների դեմ: Նրանք իրենց մահով ավելի թանկ են դարձնում Ներսեհի գլխավորած պայքարն ու այն փրկությունը, որի գալստյանը հավատում էին ողջ հոգով: Վիպական գործողությունները ծավալվում են թուրքերի ջարդերի ու հայերի ինքնապաշտպանական մարտերի զուգակցմամբ. մեկի նպատակը սպանելն էր, մյուսինը՝ ապրելը:

Պատմավեպում հանդիպող ոչ բոլոր հայերն էին Ներսեհի ու նրա համախոհների պես կոզմ թուրքի դեմ համարձակ ըմբոստությանը՝ դեռևս միամիտ հավատ ունենալով թուրքերի քաղցր խոստումների ու անասելի վախ՝ նրանց

¹ Բաֆֆի, Ջալալեդդին, Խենթը, Եր., 1982, էջ 26:

² Սիամանթո, Երկեր, Եր., 1979, էջ 135:

սպառնալիքների հանդեպ: Միսաք աղան Քեմալ բեյի մտերիմն ու բարեկամն էր, կողմ էր ստրկական հնազանդությանը, սակայն զավակների սպանությունից հետո գիտակցում է սխալն ու զղջում:

Վեպում բավական հետաքրքիր զարգացման է ենթարկվում Հաջի Բարսեղ Էֆենդու՝ գավառի ամենահայտնի դեղագործի կերպարը, որ ի սկզբանե հավատում էր թուրքական իշխանությունների սփոփիչ խոսքերին, բայց հետո սթափվելով գտնում է իր առաքելությունը. Բարսեղը առերես մահմեդական է դառնում, խնայում սեփական կյանքը՝ այն նվիրելով ստրկացած որբուկների փրկությանը, ինքնապաշտպանական ուժերի հովանավորմանը: Բարսեղի ու Ներսեհի նպատակները նույնն էին, տարբեր էին դրան հասնելու համար ընտրված ուղիները. մեկինը ծածուկ ու զգուշավոր էր, մյուսինը՝ բաց ու համարձակ:

Վեպում վրիժառու, անձնվեր ու հերոսական հայրենասերի մարմնավորումն է Գուրբան Ալի Մանուկը, որ հսկայական ջանքերի գնով աննկարագրելի դեր է խաղում Երզնկայի հայության փրկության գործում: Նա թուրքերի կողմից ջրաղացում մորթված հոտաղի զավակ էր, որ գոյատևելու համար մահմեդականացել էր՝ հայի քրիստոնյա հոգին իր մեջ անմեռ պահելով: Ի տարբերություն Ներսեհի, որի քայլերն ու գաղափարները էջ առ էջ պարզվում ու իրագործվում են, Գուրբան Ալի Մանուկին ընթերցողը հանդիպում է վեպի տարբեր դրվագներում՝ անընդհատ փրկարար դեր կատարելիս. նա մերթ Ներսեհին է օգնության հասնում, մերթ դառնում Բարսեղի գործակիցը, աշխատում է իբրև հայի հուսալից հասնել ամեն տեղ, օգնել ուժերի ներածին չափով: Ներսեհը հիանում էր նրանով. «Նստել է՝ այս թաց հողագնդի ցավերն իր ուսերին: Թեև նրա դեմքը կտրտված է դաշույնով, թեև կապույտ սպիները վանող են, սակայն Մանուկի երեսից կարծես լույս է ճառագում, լույս՝ սպիներից» (113): Մանուկը երկարատև ինքնապաշտպանական պայքարին ու հայության փրկության գործին հնարավորինս աջակցելուց հետո ծառայության է անցնում ռուսական կարմիր բանակում: Վեպի վերջում հենց նրա՝ արդարություն պահանջող ձեռքով են իրենց մահը գտնում Կուրտ ֆոն Շուլցն ու Էնվերը, որ իր կյանքը խնայելու խնդրանքի դիմաց նրանից լսում է. «Բարի՛, սակայն ասա, Էնվե՛ր փաշա, ես ի՞նչ պատասխան տամ մեկուկես միլիոն արյունակիցներիս անթաղ ոսկորներին, որ դու քո ատամներով կրծոտելով կոտորեցիր: Ի՞նչ պատասխան տամ քո ձեռքով խոշտանգված Հայաստան հայրենիքիս, պղծված Եփրատին: Եթե քո մեջ մարդ ասած մասունքից թեկուզ մի փշուր կա, ապա նման առաջարկ չպիտի անես ինձ» (453): Ներսեհը, հավատալով փրկության մոտավուտ գալստյանը, վերադառնում է վտանգաշատ հայրենիք, Մանուկը՝ անցնում ռուսաց սահման, բայց երկուսի հոգում էլ շարունակում է ապրել նույն երազը՝ վաստակած ապահով ու խաղաղ կյանք հայրենի լեռների գրկում:

Վեպում հերոսական կերպավորում է ստացել հայ կինը, որ դարեր շարունակ կանգնել է հայորդիների կողքին՝ նրանց հավասար պայքար մղելով հանուն ազգի գոյապահպանման ու հաղթանակի: Ռուսական նավերի օգնությամբ փրկվածների մեծ մասին ապահով ամեր հեռացնելուց հետո մի խումբ ֆիդայիների հետ մնում ու հերոսական պայքարը շարունակում են նրանց կանայք՝ Մարթան, Մարգարիտը, Աղավնին. «Մրանք ևս ֆիդայիներ են՝ տղամարդու հագուստով, զենքով և մնալու հաստատակամությամբ» (347): Նրանց այդպիսին է դարձրել կյանքը՝ ամեն քայլի կորուստ ու մահ նյութող:

Խանգադյանը հակասական գույներով է վրձնել Աղավնու կերպարը, որ վիպական գործողությունների ծավալմամբ վերաճում է հայի անմեղության ու մաքրության խորհրդանիշի՝ եղենի օրերի ահավորության մեջ հալածված ու վերափոխված: Պատմավեպի սկզբնամասում պատկերվում է հետևյալ տեսարանը. «Եկեղեցու գմբեթին աղավնի թռեց: Էնվերը կրծոտեց պարարտ շրթունքը. չհանի՞ ատրճանակն ու զարկի աղավնու: Երկուսն էլ հայ են՝ աղավնին ու խաչը» (4): Մեկը խորհրդաշում էր հայի անմեղությունը, մյուսը՝ հավատը: Թե՛ մեկը, թե՛ մյուսը տրորվում են Էնվերի զինվորների սմբակների տակ: Վեպում աղավնու նոր կերպավորումը դառնում է Աղավնին, ում թևերը կտրվում են ամենակուլ քառսի միջով անցնելուց հետո: Հայրը՝ Հաջի Բարսեղ Էֆենդին, աղջկան փրկելու համար համաձայնում է նրան ամուսնացնել Էնվերի կնոջ եղբոր հետ, սակայն փաշան, տարվելով Աղավնու գեղեցկությամբ, զավթում է նրան: Ու թեև Ներսեհին հաջողվում է հետ բերել սիրելի Աղավնուն, սակայն իր ու ազգի հետ կատարվածը անձանաչելիորեն փոխում է նրան, դարձնում անտարբեր՝ ցնորված ցավից ու սոսկումից: «Մի հեռավոր ձայն անեծքի նման հետևում էր Աղավնուն: «Ժպտա՛, սիրելի՛ս, ժպտա՛»: Աղավնին փախչել էր ուզում այդ դիվական աղերսանքից» (202): Սա ոչ միայն հոր հորդորն էր դժբախտ Աղավնուն, այլև անտարբեր աշխարհի միակ անօգուտ ու զարմանալի խորհուրդը՝ սպանվող հայությանը: Թուրքերը սպանում են Աղավնուն և այն անմեղ կյանքին, որ նոր պիտի ծնվեր նրանից իբրև ազգի հերոսական արյան շարունակություն:

Այլ էր Հեղինեն, որին կատարվող դեպքերը միայն կոփում են ու դարձնում մարտիկ: Միամիտ աղջնակը, որ ապրում էր ամերիկյան օգնությամբ փրկվելու հույսով իրեն նետում է Եփրատի կամրջից, ազատվում, ապա գերեվարվելուց ու փրկվելուց հետո գաղափարապես հասունանում է, սթափվում բոլոր պատիր խոստումներից ու հեքիաթներից, գտնում իր առաքելությունը կյանքում. «Ես էլ քեզ նման ֆիդայի եմ, - ասում էր նա եղբորը: - Եվ կյանքն ինձ համար օժանելիքի դատարկ սրվակ է այլևս: Եթե կամենամ, դեն կնետեմ: Որևէ մեկի հոգատարությունը վիրավորում է ինձ» (359): Նա դառնում է Ներսեհի հավատարիմ զինակիցն ու ապավենը:

Պատմավեպում հանդիպում ենք նաև թուրք կանանց կերպարների: Անհոգ Շուխ Իլդիզը, Ներսեհի ցավին անտեղյակ, նրան հիշեցնում է. «Ապրելը աստվածային պարզև ու հաճույք է, բե՛յա: Ապրել է պետք» (137): Ապահով ու կյանքի հաճույքները վայելող թրքուհին անտեղյակ էր նրան, որ հայի համար այդ աստվածային պարզևր դարձել է ցավ ու տանջանք: Եթե Շուխ Իլդիզը ապրել ասելով հասկանում էր ապրած ակնթարթները երանություններով քաղցրացնելը, ապա Ներսեհի ու յուրաքանչյուր հայի համար ապրելը ողջ մնալն ու ազգը պահպանելն էր. սրանք են աշխարհի ու մարդկության անարդար պատկերը պարզող մարդկային կյանքի երկու բևեռները: Թրքուհի Մեքին, որ սպանել էր Թաթուլի սիրած աղջկան, իր մեջ խտացնում է թուրքի բարբարոս ու վայրենի էությունը:

Ս. Խանգադյանը վեպում ներկայացնում է նաև թուրք իշխող վերնախավը: Եռապետության փառանքները հսկայական կարողություն էին դիզել և նույնպիսի ախորժակով մտածում էին ռազմաքաղաքական նոր նվաճումների մասին, մինչդեռ թուրքական գորքերը խղճուկ ու աղետալի վիճակում էին՝ կիսամերկ ու կիսաքաղց: Էջ առ էջ առավել ակնբախ է դառնում Էնվերի հրեշային էությունը: Նրա հոգում արթնացել էր անասելի բռնկում՝ վերացնելու այն, ինչ հայկական էր, թեկուզ՝ սուրբ ու անմեղ: Վեպի սկզբում հրեշի ոտքերը կրնկահարում էին «Որբք Կարնո» գրվածքով գորգը, վեպի ընթացքում նրա զինվորները՝ իր նախաձեռնությամբ որբացածներին: Էնվերն ատելի էր անգամ թուրքերին, քանի որ ակնհայտ երևում էր Թուրքիայի խաբվելը կայսերական Գերմանիայից: Նրա համար հպարտություն էր իր նախնի Արփ Ասլանի ահավոր արարքների հիշատակումը, որոնցից էր երեք հազար անեցի երեխաների արյամբ լողանք ընդունելը: Հայերի ջարդի ժամանակ նա անգամ չի խնայում Հովհաննես հարյուրապետին, որը, Սարիղամիշի մարտերի ժամանակ կյանքը վտանգելով, փրկել էր իրեն մահվան ճիւղաններից: Նա մի դիվական հոգի է, «ինքը՝ ամենակատարյալ կեղծիքն ու խաբեբան»: Երիտթուրքական մյուս առաջնորդները՝ Նազըմը, Բեհաեդդին Շաքիրը, Շուքրի բեյը, Ջեմալը, Ջևդեթը, Թալեաթը, վեպում պարզապես հիշատակվում կամ երբեմն ուրվագծվում են:

Իրենց առաջնորդների պես գիշատիչ ու թալանչի էին նաև մյուս թուրք պաշտոնյաները: Նրանցից էր Էնվերին ստրկական վախով կապված Մամուր Ֆեյզադը՝ Երզնկայի գավառապետը, որ սպանողի ժամանակ չի խնայում իր մոր հիշատակին քարե աղբյուր կառուցած Միսաք աղայի ընտանիքի կյանքը, ունեցվածք է կուտակում հայերի հարստությունից՝ սուտ խոստանալով նրանց փրկել համատարած կոտորածից և վերջապես, անկեղծորեն զարմանում էր, թե ինչու են հայերը դիմադրում ու չեն կոտորվում «մեջը սև ցավ ընկած ոչխարի հոտի պես»: Այդպիսին էր և Օսման Օնբաշին, որ համաձայնում է մի քանի ոսկու դիմաց կազմակերպել հայ զինվորների փախուստը, ապերախտ, որ մինչ ջարդը անընդհատ «գյուղի գործերով» այցելում էր Խորեն աղայի տուն, իսկ ջարդի օրերին մոռանա-

լով հաց ու հյուրընկալում՝ խաբեությամբ ծուղակն է գցում նրան, խոշտանգում ընտանիքին: Հենց Օսման Օսբաշու «հանճարեղ» գլխում է ծնվում հանցագործներին ազատ արձակելու և զինվորագրելու, հայերի դեմ ուղարկելու գաղափարը: Իսկ գավառի ոստիկանապետ Քեմալ բեյը ոչ միայն էնվերի գաղափարների, այլև քմահաճույքների ստրուկն էր, որ հավաքույթների ժամանակ սիրով իր «հանրամին» զիջում էր նրան ու ծիծաղում միայն նրա հանգով: Նա ևս մյուսների պես ոսկու տենդով էր տառապում, որ օրհասական պահերին հաճախ հայերն աշխատեցնում էին ի նպաստ իրենց. «Քեմալ բեյին կաշառեցին ու ճամփու դրին: Ջենք չկա,- ասացին: -Չունենք, չկա: Ջենք չկա, ոսկի կա, կճարվի: Իսկ Քեմալ բեյի համար ինչ փույթ, թե արևը որտեղից է ծագում: Նրա արևը դեղին ոսկին է՝ մի-մի փոքրիկ արևներ: Լցրեց գրպանն ու գնաց» (88): Քեմալի համար անհասկանալի էին ոչ միայն բարոյականության սահմաններն, այլև՝ բարոյանականությունը. նա առանգում է Աղավնուն, որ իր կնոջ եղբոր հարսնացուն էր: Իսկ երբ հայերի գոյապայքարը դառնում է անհաղթահարելի խոչընդոտ, գայլի ախորժակով Քեմալը աղվես դարձած փորձում է սիրաշահել հայերին՝ հիշելով թուրք նահանգապետի հորդորը. «Հայը միամիտ է: Հային խոստացիր վերադարձնել իր հողն ու տունը՝ դանակը փեշիդ տակ պահած, և նա դանակը մոռացած՝ քո պատրանքին կհնազանդվի: Հային խաբելը նո՞ր պիտի սովորենք: Խաբեցե՛ք» (291):

Թուրքերի մեջ առանձնանում էր Ալի Մյունիր բեյը, որ ընդամենը «մի զուլալ կաթիլ էր պղտոր ճահճում»: Նա դեմ էր երիտթուրքական իշխանության ստոր քաղաքականությանը: «Ներսես Զավուշի և Ալի Մյունիր բեյի կերպարների առնչությամբ վիպասանը բարձրացնում է մարդու ճակատագրի համար մարդու պատասխանատվության պրոբլեմը»¹, որ կոպտորեն անտեսված էր ժամանակի մարդկային հասարակության կողմից: Հերոսները վեպում այս հարցին անդրադառնում են սուր քննադատական շեշտով՝ մարդկությանը մեղադրելով մի ողջ ազգի ծրագրված սպանող համառորեն անտեսելու համար:

Ալի Մյունիրը չի կարողանում ի կատար ածել թուրք գորապետերին տրված հրամանը՝ վերացնել թուրքական բանակում ծառայող հայ զինվորներին, ավելին, զգուշացնում է նրանց սպասվող վտանգի մասին՝ օգնելով փախչել: Տեսնելով Թաթուլ հարյուրապետ արարքը, որ իր շապիկից պատրույգ էր սարքել իր աղային լույս տալու համար, Ալի Մյունիրը, հուզմունքից խեղդվելով, ասում է. «Այդքան բարի մի՛ լինիք, հայե՛ր: Ասածս ականջներիդ օ՞ղ արեք: Այդքան քաղցր մի՛ լինեք, քաղցրին կուլ են տալիս» (145):

Ազգայնամոլական ախտն ու այն ուժգնացնող ավարառության հրապուրանքը վարակել էր հասարակ թուրքին: Այս հարցում ոչ պակաս կարևոր էր նաև թուրք հոգևորականության ազդեցությունը: Ազգային ինքնագիտակցության, աշ-

¹ Պետրոսյան Թ., նշվ. աշխ., էջ 123:

խարհայացքի ու արժեհամակարգի ձևավորման գործում կրոնն ունի անփոխարինելի նշանակություն: Վեպում հայ ու թուրք հոգևորականության գաղափարական զուգադրումն ու հակադրումն ավելի քան խոսում է: Պատերազմի լուրից ոգևորված ու զինավորված մոլլաները, կողոպուտի ու արյան ծարավ լինելով, ամբոխին տանում էին «սուրբ» պայքարի: Իսկ նրանց հոգևոր առաջնորդ Ուլու Իսլամ Ջադը Խալիսը ցինիկորեն ժխտում էր իր կողմից հրահրվող սպանողն ու հասնում հայկական գերեզմանատների պղծմանն ու ոչնչացմանը՝ ստեր տարածելով, թե հայերը հանգուցյալների հետ գանձեր են թաղել: Մինչդեռ հայ հոգևորականները անհեռատեսորեն հրաժարվում էին անգամ եզները վաճառելուց ու դրա փոխարեն գենք գնելուց: Իսկ Գրիգորիս եպիսկոպոսն Ուլու Իսլամի հակապատկերն էր. անելանելի ու ողբալի դրությունից առաջնորդական գահին փլված հեկեկում էր, օգնություն էր հայցում վաղուց մեռած Հովհաննես Պլուզի շիրմից, համակերպվում մահվան անխուսափելիությանն ու ամեն ինչ համարում «ունայնություն ունայնությանց»: Նման գաղափարայնությունն ու վարքագիծը Ներսեհին միայն դառնացնում էին մռայլ մտորումներով: Լացը վահան երբեք չէր կարող դառնալ, եպիսկոպոսը կրկնում էր իր նախորդների՝ դարեր շարունակ չուղղված ու չգիտակցված սխալը. «Հազարապետը երկյուղեց: Եպիսկոպոսը ողբ է շնչում՝ տաճարի սառը քարերի ու սառը սրբապատկերների անգոր ճիչով: Ներսեհը խոսելու հրավիրեց իր մեջ թմրած բարկությունը.

-Ողբամա՛յր եք, սրբազա՛ն» (60):

Սա սերունդների՝ այլևս լուրջություն չհանդուրժող ըմբոստացումն է՝ անօգուտ ողբի ու հնազանդ վարքագծի վնասակարության հստակ գիտակցմամբ:

Պատմավեպում հանդես են գալիս տարբեր ազգի կերպարներ՝ եղեռնի մասին ունեցած տարբեր մոտեցումներով: Չերքեզ Շեհեբեդդին բեյը, որ առևտրական գործերով կապված էր հայ առևտրականների հետ, համակրանքով չի վերաբերվում էնվեր փաշայի հակահայ ձեռնարկումներին, մինչդեռ քրդական Հայդար ցեղապետը պաշտպանում է երիտթուրք կառավարության քաղաքականությունը՝ տրամադրելով քրդական տասնհինգհազարանոց հեծելազոր՝ «ուռուս թագավորի դեմ»¹: Ներկայացվում են նաև հույն ու ռուս ազգի շատ ներկայացուցիչներ՝ հայերի պես տուժած թուրքական վայրենություններից:

Հեղինեի հույսը Ամերիկայի օգնությունն էր: Նա կարծում էր, որ կաթոլիկություն ընդունելով հնարավոր է ստանալ ամերիկյան հովանավորություն ու փրկվել: Բայց աղետի ժամանակ աղջկա հուսաբեկ աղաչանքը ակնթարթային ազդեցություն իսկ չի գործում միսիոների վրա, որից ստացած միակ օգնությունը դառնում է սպիտակ լաթը, որ անկարող էր ապահովել իր խորհրդանշած խաղաղությունը: «Դռներն ամուր են փակել մեր ցավի առջև» (113) Մանուկի այս ձևա-

¹ Տե՛ս Պետրոսյան Թ., Սերո Խանգաղյանի պատմական արձակը, Եր., 1986, էջ 121:

կերպումը ամերիկյան միսիոներների վերաբերմունքի մասին ասես խտացնում է իր մեջ ժամանակների սրբագործած ճշմարտությունը. մեր ցավը միայն մերն է, օտարը երբեք չի հասկացել և չի էլ փորձել հասկանալ այն:

Սպասվող աղետի լուրն առնելով՝ Եվրոպան, իր դրոշները քարշ տալով, փախչում է թուրքերի երկրից: Ներսես Զավուշի մտորումներով հեղինակն արձանագրում է մեր պատմության մի ճշմարիտ օրինաչափություն. «Ա՛խ, այդ Եվրոպա՛ն: Հենց որ Հայաստանի համար փրկության ինչ-որ հույս է ծագում, այդ Եվրոպան իսկույն իր ճանկերը մեկնում է դեպի Արևելք...» (89):

Քաղաքակիրթ ու քրիստոնյա գերմանացիները վարժեցնում էին թուրքական կանոնավոր բանակներ ու համիդիե կոչվող գնդեր, նրանց զենք ու զրահով էին ապահովված թուրք զինվորները: Վեպում գործող գերմանացի պաշտոնյաները՝ Կուրտ ֆոն Շուլցը, Ֆոն Բիբերտեյնը, Լիման ֆոն Սանդերսը պարզում են գերմանացիների խաղացած մեծ դերը թուրքերի հայաջնջման քաղաքականության մեջ: Էնվերի անձնական խորհրդական, գնդապետ Կուրտ ֆոն Շուլցը ստրկորեն ծառայում էր փաշային՝ հետագայում մեծ օգուտ ստանալու ակնկալիքով: Չերքեզ Շեհբեդդին Բեյը կատակով Խորեն աղային ասում է. «Տեսա՞ր գերմանացի գնդապետին: Էնվերի «նոքարն» է, նրա երևալը բարի չէ: Նա իր կնկանն էլ կնվիրի նրան: Հի՛, հի՛...» (9): Վեպի ընթացքում, սակայն, պարզվում է, որ չերքեզի երգիծական ենթադրությունը հավաստի իրողություն էր: Մարշալ ֆոն Բիբերշտեյնը Շուլցին «ծրագրավորել էր», որ վերջինս էլ Էնվերին «ծրագրավորեր»՝ թուրքական զինուժը գերմանական նպատակներին ծառայեցնելու: Ինչպես թուրք, այնպես էլ գերմանացի պաշտոնյաներն ունեին նաև իրենց անձնական շահերը, որ քողարկում էին անմնացորդ հայրենասիրության քողի տակ: Էնվերը հաջողության դեպքում Ապշերոնի նավթերի կեսն էր խոստացել իր հավատարիմ խորհրդականին, որ անհամբեր սպասում էր, թե երբ են «Բաքվի նավթաջրերը բուժելու իր հողացավերը»: Շուլցի կույր շահասիրությամբ է Խանգաղյանը զարդարել նրա սպանության տեսարանը, երբ Գուրբան Ալի Մանուկի կրակոցից գնդապետն ընկնում է՝ Էնվերի նվիրած «արծաթե տուփը ամուր բռնած ձեռքերի մեջ» (449):

Գեներալ Լիման ֆոն Սանդերսն իր դավանած համոզմունքներով ամբողջական պատկերացում է տալիս գերմանական քաղաքականության ու հաստատված դիրքորոշումների մասին:

Իհարկե, Եվրոպայի և Ամերիկայի անտարբերությունն ու գերմանացիների վնասակար գործունեությունը խտացված գույներով ներկայացնելը պայմանավորված էր նաև հեղինակի ապրած ժամանակաշրջանում իշխող գաղափարախոսությամբ, սակայն անժխտելի է նաև նշված իրողությունների պատմական հավաստիությունը:

Խանգաղյանի ապրած ժամանակաշրջանում իշխող քաղաքական հայացքերի դրսևորումներ վեպում կարելի է համարել ժողովրդի ռուսական կողմնորոշ-

ման արտացոլումը, որ գրականագետ Գ. Հայրյանը համարում է պատմավեպի գաղափարական հիմքերից մեկը¹, հասարակ ժողովրդի՝ աշխատավոր մարդկանց հերոսականացումը, որով Խանգաղյանը կարծես նաև շարունակում է դեմիքճյանական պատմահայեցողության սկզբունքները, ըստ որի՝ ժողովրդի դերը հզոր է ժողովրդի պատմության կերտման ճանապարհին: Գրողը փորձում է ցույց տալ ժողովուրդ-պատմություն, ժողովուրդ-անհատ, անհատ-պատմություն հարաբերությունների խաչաձևումները ժողովրդի պատմական ճանապարհի հոլովոյթում²:

Օտարագզիների համար կարևորը սեփական անձի ու ազգի շահն ու ապահովությունն էր: Ոչ ոք հայի անունն անգամ տալ չէր ուզում՝ դրա տակ թաքնված վտանգը տեսնելով: Աշխարհը դարձավ կույր, խուլ ու համր հայի ցավի հանդեպ՝ չփորձելով անգամ օգնության ձեռք մեկնել մի ազգի, որ հուսահատությունից խնդրում և պահանջում էր խոսել լեռներին, մինչդեռ լեռների լռությունը, ի տարբերություն աշխարհի, կարելի էր արդարացնել չարենցյան հետևյալ ձևակերպմամբ.

Նայում էին մեզ լեռները պարթև,
Կոչումն է նրանց հավիտյա՛ն նայել³:

Լեռների կոչումը նայելն է, մինչդեռ աշխարհը անտարբեր նայելուց բացի պարտավոր է խոսել այն մասին, ինչն արժանի չէ լռության: Հայոց մեծ ցավը մատնվեց աշխարհի լռությանը՝ մինչ այսօր սպասելով արդարացի բարձրաձայնման ու դատապարտման խոսքին:

Բանալի բառեր- Եղեռնի անդրադարձներ, Ս. Խանգաղյան, նորագույն շրջանի հայ գրականություն, պատմավեպ, կերպարակերտման առանձնահատկություններ, կերպարային համակարգ:

Վահան Աղաբաբյան, Մերի ի Սարգսյան, Կերպարակերտման առանձնահատկությունները Ս. Խանգաղյանի «Խոսե՛ք, Հայաստանի լեռներ» պատմավեպում - Ս. Խանգաղյանի «Խոսե՛ք, Հայաստանի լեռներ» պատմավեպը Հայոց մեծ եղեռնի թեմայով գրված լավագույն ստեղծագործություններից մեկն է նորագույն շրջանի հայ գրականության մեջ: Վեպը բաղկացած է երկու մասից, որոնցից առաջինն ամփոփում է արյունատենչ և տմարդի թշնամու, հայասեր մահվան ու հայատյաց ճակատագրի դեմ հայի կենսածին, տարերային պայքարի ծնունդն ու ծավալումը, երկրորդը՝ նրա դժվարին ընթացքը անմար հույսի ճանապարհով: Իսկ ավելի ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ սա հայի հազարամյա ընթացքն է պատմության ճանապարհով միևնույն օրինաչափությամբ, պայքարն է

¹ Հայրյան Գ., Մերո Խանգաղյան, Եր., 1979, էջ 158-159:

² Մերո Խանգաղյան-100, նշվ. աշխ., Արգումանյան Ա., «Հայոց լինելիության խորհուրդը Մերո Խանգաղյանի «Խոսե՛ք, Հայաստանի լեռներ» վեպում», էջ 54:

³ Չարենց Ե., Երկեր, Եր., 1983, էջ 113:

միևնույն մրցակցի՝ մահվան դեմ, հաղթանակն է՝ պսակված միշտ նույն մրցանակով՝ կյանքով:

Ваган Агабабян, Мери Саргсян, Особенности создания образов в историческом романе С. Ханзадяна «Говорите, горы Армении» - Исторический роман С. Ханзадяна «Говорите, горы Армении»- одно из лучших произведений армянской литературы новейшего периода, написанных на тему Геноцида армян. Роман состоит из двух частей, первая из которых включает в себя рождение и усиление стихийной борьбы армянского народа против бесчеловечного врага, смерти и горькой судьбы, вторая-тяжелое течение этой борьбы по пути неугасающей надежды. А обобщая еще больше, мы можем сказать, что это тысячелетнее движение армян по историческому пути с одной и той же закономерностью, борьба с одним и тем же соперником- со смертью, победа, увенчанная одной и той же наградой- жизнью.

Vahan Aghababayan, Mery Sargsyan, The Peculiarities of Character Creating in Sero Khanzadayan's "Speak, Mountains of Armenia" historical novel - Sero Khanzadayan's historical novel "Speak, Mountains of Armenia" is one of the best works on Armenian Genocide in Modern Armenian Literature. The novel consists of two parts: the first part summarizes the birth and expansion of elemental and vital Armenian struggle against the blood thirsty and inhumane enemy and cruel Armenian fate, and the second part represents their difficult path through eternal hope. Generalizing, we may say that it is the millennial life of Armenians through history with the same pattern: it is the struggle against the same rival - Death, and it is the same victory awarded with the same prize- Life.

ՄԻՇԵԼ ՈՒԵԼԲԵՔԻ «ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ» ՎԵՊԸ ԹԱՐԳՄԱՆՉԻ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

ՌՈՒԶԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ

Անվիճելի փաստ է, որ համաշխարհային գրականությունը ստեղծվել է, գոյություն ունի, զարգանում է շնորհիվ բազում գեղարվեստական երկերի թարգմանության, որի իրականացման շնորհիվ հանճարեղ ստեղծագործողներն ու նրանց ստեղծագործությունները ճանաչում են ձեռք բերել և հասանելի են դարձել տարբեր լեզվակիրներին ու նրանց մշակույթին, միաժամանակ հարստացնելով թիրախ լեզուն և մշակույթը: Գաղտնիք չէ, որ ցանկացած գրող ձգտում է նվաճել ոչ միայն հայրենի լսարանն, այլև՝ համաշխարհայինը, որում նրան օժանդակում է գեղարվեստական թարգմանությունը: Սակայն հարկ է ընդունել, որ նույնիսկ հանճարեղ երկը կարող է ընթերցողին անտարբեր թողնել, եթե թարգմանությունը կատարվել է ոչ հավուր պատշաճի: Գեղարվեստական թարգմանության ժամանակ առաջնային խնդիրը բնագրի իմաստի, բովանդակության փոխանցումն է թիրախ լեզու: Գեղարվեստական գրականության թարգմանության առանձնահատկությունը և յուրահատկությունը պայմանավորված է թարգմանվող տեքստի գեղարվեստական առանձնահատկությամբ, որով այն տարբերվում է այլ բնույթի տեքստերից: Գեղարվեստական թարգմանությունը ստեղծագործական բարդ գործունեություն է: Գեղարվեստական տեքստերը պարունակում են մեծաքանակ տարբեր արտահայտչամիջոցներ, որոնք թիրախ լեզու փոխանցելու համար թարգմանչից պահանջվում է մեծ երևակայություն ու վարպետություն: Գեղարվեստական թարգմանություն կատարելիս թարգմանիչը ոչ միայն պետք է շատ լավ տիրապետի աղբյուր լեզվի նրբություններին, այլև օժտված լինի ստեղծագործելու կարողությամբ:

Թարգմանելիս շատ կարևոր է *համարժեք թարգմանություն* հասկացության կիրառումը, որը ենթադրում է հեղինակի մտքերի, գաղափարների, կերտած կերպարների, ստեղծագործության գեղարվեստա-գեղագիտական ուղղվածության, ինչպես նաև հեղինակի կողմից կիրառված լեզվի առանձնահատկությունների հնարավորինս լիարժեք փոխանցում թիրախ լեզու:

Այսպես, համարժեք թարգմանությունն իր մեջ ներառում է՝

- ա) բնագրի բովանդակության ճշգրիտ փոխանցումը,
- բ) բնագրի լեզվի փոխանցումը թիրախ լեզու:
- գ) բնագրի ոգու փոխանցումը թիրախ լեզու:

Միշել Ուելբեքի «Հնազանդություն» վեպը թարգմանելիս փորձել ենք հնարավորինս հետևել համարժեք թարգմանության վերոնշյալ սկզբունքներին:

Նախ, փորձենք համառոտ ներկայացնել Միշել Ուելբեքին, որը ներկայիս

Ֆրանսիական գրականության մեջ ամենահետաքրքիր, ամենաընթերցված, ամենատաղանդավոր ու ինքնատիպ, ինչ-որ չափով առեղծվածային հեղինակներից է: Ազատություն տալ կրքերին, զգացմունքներին, ներկայացնել բանավեճեր, մատը դնել վերքի վրա: Այսպես կարելի է բնութագրել Միշել Ուելբեքին, որը ծնվել է 1958 թվականին Ֆրանսիային պատկանող Հնդկական օվկիանոսում գտնվող Ռեունիոն կղզում (ծննդականում նշված է 1956 թվականը, քանի որ մայրը ցանկանում էր ընդգծել նրա անսովոր խելացիությունը): Գրական գործունեությունը սկսել է որպես բանաստեղծ, բայց հայտնի է դարձել իր վեպերով, հատկապես *Պայքարի տարածքի ընդլայնում* (1994), որտեղ արտահայտում է իր թերահավատությունն արևմտյան հասարակության լիբերալության հանդեպ: Քննադատության թիրախ է դարձնում սեքսուալ ազատությունը, որն, ըստ հեղինակի, ժամանակակից մարդու հերթական թակարդն է: Գաղափար, որն իր շարունակությունն է գտնում նրա հաջորդ՝ *Տարրական մասնիկներ* (1998) վեպում, որտեղ վերլուծում է արևմտյան հասարակության անցած ճանապարհը, սկսած անցյալ դարի վաթսուհակն թվականների սեքսուալ հեղափոխությունից և հանգում է տխուր եզրակացության՝ այդ հասարակությունը դատապարտված է: Նա համարվում է կանխագուշակող, մարգարեկան վիպասան և նույն գնահատականին է արժանանում նաև իր վերջին՝ *Հնազանդություն*, վեպի դեպքում, որը ֆրանսիացի գրաքննադատների կողմից որակվում է որպես մարգարեական: Իհարկե, այդ մարգարեությունը՝ Ֆրանսիայի իսլամացումը և 2022 թվականի նախագահական ընտրություններում մուսուլման նախագահի ընտրությունը, Ուելբեքի վարկածն է, բայց հասկանալի է, որ այս վեպը ահագանգ է, սթափվելու կոչ, քանի որ Արևմտյան Եվրոպայի երկրների իսլամացումն արդեն սկսվել է և ընթանում է առանց նկատելի խոչընդոտի հասարակության բոլոր շերտերի կողմից: Մ Ուելբեքի հայացքը միշտ ուղղված է դեպի ապագան, նրան կարելի է նույնիսկ պայծառատես համարել: Անհավատալի է, բայց *Հնազանդություն* վեպը լույս է տեսել Charlie Hebdo-ի ողբերգական սպանոյի օրը: Ի դեպ, Net կայքում շրջանառվել է *Հնազանդությունից* մի կեղծ հատված, ուր ներկայացված է, որ վեպը կանխագուշակում է իսլամիստական ուժերի հարձակում ինչ-որ խմբագրության վրա: Ստեղծագործության մասին կարծիքները տարբեր են, իրարամերժ: Էմանուել Վալսը վեպի լույս տեսնելուց անմիջապես հետո հայտարարեց, որ Ուելբեքը Ֆրանսիան չէ: Վեպը կարդալիս, առավել ևս թարգմանելիս, պարզ է դառնում, թե ինչ խորքային ուսումնասիրություններ է կատարել հեղինակը քրիստոնեության անցած ճանապարհի, հատկապես միջնադարում նրա հզոր դերի և նշանակության մասին, որը դրսևորվում է վեպի գլխավոր հերոսի՝ Սորբոնում դասավանդող, տասնիններորդ դարի ֆրանսիացի գրող՝ Հյուսմանսի, նշանավոր մասնագետի Ռոկամադուրում գտնվող Աստվածամոր մատուռի այցելության ժամանակ:

« սովորություն էի դարձրել ամեն օր գնալ Աստվածամոր մատուռ և մի

քանի թույլ են ստեղծվում Սուրբ Կույսի սև արձանի առջև, նույն այն Կույսի, որ հազարավոր տարիներ այնքան ուխտագնացների է ոգեշնչել, որի առջև ծնկի են իջել այնքան սրբեր և արքաներ: Տարօրինակ մի արձան էր, որը վկան էր ամբողջությամբ անհետացած մի աշխարհի: Կույսը նստած էր ուղիղ դիրքով, փակ աչքերով, թագով պսակված նրա դեմքն այնքան հեռավոր էր, որ աներկրային էր թվում: Մանուկ Քրիստոսը, որն, ի դեպ, ամեննին մանկական դիմագծեր չուներ, ավելի շուտ՝ չափահասի, նույնիսկ ծերունու էր նման, նույնպես ուղիղ էր նստած Կույսի ծնկներին, աչքերը նույնպես փակ էին, իսկ սուր, իմաստուն, հզոր դեմքը ևս թագով էր պսակված: Նրանց կեցվածքում ոչ մի գործվածք, մայրական ոչ մի ինքնամոռացում չկար: Դա մանուկ Քրիստոսը չէր, այլ արդեն աշխարհի տիրակալը: Հանդարտությունը, հոգևոր հզորությունը, անխախտ ուժը, որ ճառագում էր նրանից գրեթե սարսափ էր առաջացնում» (Ուելքեթ, 166) :

Խոսելով քրիստոնեության մասին, որը գրեթե մեկ հազարամյակ արվեստում, քաղաքականության մեջ և վերջապես կենցաղում, ապրելաձևում, մտածելակերպում դրսևորվել է որպես ահեղի ուժ, հասնում է մինչև 20-21-րդ դարի Եվրոպա, որտեղ մարդը կորցրել է իր երբեմնի հավատն առ Աստված և ապրում է միմիայն իր եսի կողմից թելադրված ցանկությունների իրականացման ու բավարարման համար՝ կորցնելով հոգևոր շատ արժեքներ, ընդհուպ մինչև սերը հայրենիքի և մեծագույն անտարբերությունը նրա ապագայի հանդեպ: Ավելի ընդգծելու համար այդ գործընթացի խորն արմատները հեղինակը ընտրում է Սորբոնի հայտնի համալսարանի անվանի դասավանդողների միջավայրը, ինչպես նաև հատուկ ծառայությունները: Բարձրագույն մտավորականներն ու երկրի անվտանգությունն ապահովող կառույցները լռելյայն հետևում են, թե ինչպես են իսլամական ուժերը նվաճում Ֆրանսիան և բավարարվում են նրանց կողմից իրենց սոցիալական վիճակի բարելավմամբ: Հայտնի է Մ Ուելքեթի քննադատական վերաբերմունքն իսլամի հանդեպ որպես կրոնի, նրա կիրառման, նրա տարածման, նկրտումների, թողած հետևանքների և վերջապես նպատակների շուրջ: «Իսլամն ամբողջությամբ քաղաքականություն է»: Այաթոլլա Հոմեյնիի այս մեջբերումով է սկսում վեպի հինգերորդ գլուխը, որտեղ ստեղծագործության գաղափարախոսության հիմնական ներկայացուցիչ նախկին քրիստոնյա, բայց հետագայում կամովին իսլամ ընդունած, Սորբոնի իսլամացումից հետո նրա ռեկտոր դարձած, գիտնական Ռեդիջերը հիմնավորում է իր հավատափոխությունը:

-Այն Եվրոպան, որ եղել է քաղաքակրթության գագաթը, մի քանի տասնամյակի ընթացքում ինքնասպան եղավ,- շարունակեց Ռեդիջերը: -Ամբողջ Եվրոպայով եղան անարխիստական և նիհիլիստական շարժումներ, բռնության, ցանկացած բարոյական օրենքի ժխտման կոչեր: Այնուհետև, մի քանի տարի անց, ամեն ինչ ավարտվեց Առաջին համաշխարհային պատերազմի աններելի խենթությամբ: Ֆրեյդն այդ հարցում չէր սխալվում, Թոմաս Մանն՝ առավել ևս էթե

Ֆրանսիան և Գերմանիան՝ աշխարհի երկու ամենաառաջավոր, քաղաքակիրթ ազգերը կարող էին տրվել այդ անիմաստ սպանդին, դա նշանակում էր, որ Եվրոպան մահացել էր: (Ուելքեք, 256) :

Ինչպես նաև գնահատելով քրիստոնեության դերը շարունակում է

«Զլիններ քրիստոնեությունը՝ եվրոպական ազգերը միայն անհոգի մարմիններ էին այլևս, զոմբիներ» (Ուելքեք, 255) և իր խորին թերահավատությունն է արտահայտում

«Սակայն քրիստոնեությունն ի վիճակի՞ էր վերածնվելու» (Ուելքեք, 255):

Ներկայացնում է իսլամի նպատակները՝ Հռոմեական կայսրությունից ավելի ընդարձակ կայսրություն ստեղծելու իդձը, քանի որ քրիստոնեության կրողը «Եվրոպան արդեն իրականցրել է իր ինքնասպանությունը» (Ուելքեք, 256): Եվ վերջապես արտահայտում է վեպի գաղափարը՝ հնազանդություն առ Աստված: Գաղտնիք չէ, թե որքան նախանձախնդրությամբ, երբեմն դժվարությամբ է ընտրվում ստեղծագործության վերնագիրը, քանի որ այն կոչված է արտահայտելու ստեղծագործության հիմնական նպատակը, բովանդակությունը, գաղափարը: Գիտակցելով դա թարգմանիչի համար էլ նույնքան կարևորվում է վերնագրի թարգմանությունը: Այս վեպը բացառություն չէ: Ընտրվել է *Հնազանդություն* վերնագիրը: Ինչու՞: Հեղինակը վեպի վերնագրի համար ընտրել է *Soumission* բառը, որը հայերեն ունի հետևյալ նշանակությունները՝ հպատակություն, ենթարկվածություն, հնազանդություն: Մենք ընտրել ենք վերջինը, քանի որ վեպի 261-րդ էջում Ռեդիջերը արտահայտում է հետևյալ միտքը և կարծում ենք դա է ստեղծագործության գլխավոր գաղափարը և, ըստ հերոսի, երջանկության աղբյուրը

«Մարդկային երջանկության գագաթնակետը բացարձակ հնազանդության մեջ է՝ ես կապ եմ տեսնում տղամարդուն կնոջ բացարձակ հնազանդվելուն, և Աստծուն տղամարդու հնազանդության միջև՝ ինչպես դիտարկում է իսլամը: Ինչ է իրականում Ղուրանը, եթե ոչ միստիկ փառաբանման հսկայական մի պոեմ: Փառաբանություն է Արարչին և հնազանդություն նրա օրենքներին» (Ուելքեք, 261) :

Հայտնի է, որ թարգմանությունը ստեղծագործության մեկնաբանությունն է թարգմանչի կողմից: Շարունակելով համառոտակի ներկայացնել Մ Ուելքեքի մեծ աղմուկ հանած ստեղծագործության հիմնական ուղղվածությունները, ցանկանում ենք բացի Եվրոպայի իսլամացման վտանգի խնդրի բազմակողմանի արծարծումից, որը սակայն մեկ հոդվածում անհնար է լայնորեն ներկայացնել, նաև անդրադարձ կատարել վեպում առկա գլխավոր նպատակին հարակից այլ թեմաներին, ինչպիսիք են՝

ա հայրենասիրությունը

«Արդեն նրա ժամանակաշրջանում (1940) հայրենասիրությունը մի փոքր արժեզրկված գաղափար էր, կարելի է ասել, որ դրա սկիզբը դրվել է 1792-ին Վալ-

միրում և սկսել է մարել 1917-ին Վերդնի խրամատներում» (Ուելքեք, 159) :

բ մտավորականության պասիվությունը երկրի առջև ծագած խնդիրների պատասխանատվության նկատմամբ և լուծմանը մասնակցելու հարցում

«Համալսարանական դասախոսների նույնիսկ միահամուռ բողոքը կարող էր գրեթե ամբողջովին աննկատ անցնել, բայց Սառույան Արաբիայում, ըստ երևույթին, այդ մասին տեղյակ չէին: Ըստ էության նրանք դեռ հավատում էին մտավորական վերնախավի իշխանությանը. դա գրեթե հուզիչ էր» (Ուելքեք, 180) :

« Ֆրանսիացի մտավորականները չէին ցանկանում պատասխանատու լինել, դա նրանց նկարագրի մասը չէր կազմում» (Ուելքեք, 271) :

գ ընտանեկան երջանկությունը, որի մասին վեպի գլխավոր հերոսը սկսում է մտածել և գիտակցել միայն քառասուն տարեկանում, քսան տարի անց Հյուսմանսի ստեղծագործությունների կրկնակի, խորագնին վերլուծությունից հետո

«Հյուսմանսի միակ իրական թեման բուրժուական երջանկությունն էր, մի երջանկություն, որը ցավալիորեն անհասանելի է ամուրիներին: Նրա համար երջանկությունը ծովաբողկի ստուսով պորտոֆյո ճաշն էր՝ «պարզ» գինով, արվեստագետ-ընկերների ընկերակցությամբ, այնուհետև սալորոդու և ծխախոտի վայելքը բուխարու առջև, այն ժամանակ, երբ ձմեռային հողմը հեծեծում էր Մեն Սյուպլիսի աշտարակներին» (Ուելքեք, 283) :

դ սեռական ազատությունը, որով փորձում են լցնել այն դատարկություններ, որը լցվում է միայն իսկական, ոչ սպառողական սիրո դեպքում:

ե սպառողական սկզբունքով ընտրված սիրո և ընտանիքի գաղափարը, որով առաջնորդվում են մուսուլմանները

«Կանանց թիվը հիմնականում կախված է աշխատավարձի չափից: Ըստ իսլամի կանայք պետք է հավասար պայմաններում ապրեն, ինչն էլ արդեն որոշակի անհարմարություններ է ստեղծում, թեկուզ բնակարանի հարցում: Ինչ վերաբերում է ձեզ՝ դուք կարող եք երեք կին ունենալ, բայց պարտադիր չէ» (Ուելքեք, 294) :

Ցանկացած թարգմանություն կատարելուց առաջ թարգմանչի կարևորագույն խնդիրներից է նաև հեղինակի գրելաոճի, գործածած լեզվի ճիշտ ընկալումն ու փոխանցումը թիրախ լեզու, քանի որ լեզուն ինքնին մտածողություն է: Մ Ուելքեքը տաղանդավոր, բարդ, համարձակ ստեղծագործող է և նրա մտածելակերպի բարդությունը դրսևորվում է լեզվի և գրելաոճի մեջ: Դժվար է մեկ բառով բնութագրել Մ. Ուելքեքի ոճը, այն բազմաթիվ ոճերի խառնուրդ է, որը կարելի է, թերևս, անվանել քսանմեկերորդ դարի գրելաոճ՝ սկիզբ առած Մելինից: Մեր դիտարկումով նրան հաջողվել է ստեղծել վերամբարձ ոճի և գրեհիկ իրականության նկարագրության հակադրություն ու նմանը չունեցող վիպական գեղագիտություն՝ չմոռանալով հեգնական ոճի մասին: Գրվածքում մշտապես առկա է ո-

ճային տարբեր ռեգիստրներին անցումը, որի ընթացքում նրան հաջողվում է տարօրինակ, երբեմն անհասկանալի ցուցադրականություն ստեղծել՝ երբեք չվարանելով գործածել գոեհիկ խոսվածքը: Մեջբերենք նրա խոսքերն իր իսկ ոճի մասին

«Հաճախ եմ ինքս ինձ համար կրկնում Շոպենհաուերի հետևյալ խոսքերը Առաջին և գործնականորեն միակ պայմանը լավ ոճ ունենալու համար դա ասելիք ունենալն է: -Այս սկզբունքով եմ ստեղծում իմ գրքերը»: <https://fr.wikipedia.org/wiki/MichelHouellebecq>

Հայտնի է, որ թարգմանության որակը մեծապես կախված է այն նպատակից կամ նպատակներից, որոնք իր առջև դնում է թարգմանիչը: Հիմնականում դրանք կարելի է բաժանել մի քանի խմբի

ա) ընթերցողին հնարավորություն ընձեռել ծանոթանալ անծանոթ հեղինակի, նրա ստեղծագործական առանձնահատկությունների, գրելաոճի հետ, քանի որ նա չգիտի սկզբնաղբյուր լեզուն,

բ) ընթերցողին հնարավորություն տալ ծանոթանալ սկզբնաղբյուր լեզվի ժողովրդի մշակույթի, ապրելակերպի հետ,

գ) ընթերցողին հնարավորություն տալ ծանոթանալ գրքի բովանդակությանը:

Առաջին նպատակի իրականացման դեպքում թարգմանիչը ջանում է ստեղծել նույն միջավայրը և ընթերցողի վրա թողնել նույն տպավորությունն ինչ բնօրինակը: Դրան հասնելու համար թարգմանիչը մերձեցնում է որոշակի ազգային-մշակութային տարբերությունները և ուշադրությամբ հետևում է, որպեսզի թարգմանված տեքստը ընթերցողի կողմից ընկալվի մայրենիի նման՝ չկենտրոնացնելով նրա ուշադրությունն իրեն անծանոթ իրականությունների վրա: Նման մոտեցման դեպքում թարգմանված երկի ընթերցողը բավականին լավ պատկերացում կկազմի գրողի ստեղծագործության, նրա անհատական ոճի մասին, բայց լիարժեք պատկերացում չի ունենա մշակույթի մասին, որը ներկայացնում է ստեղծագործողն իր երկում:

Որպես նպատակ ունենալով երկրորդ մոտեցումը, թարգմանիչը ջանում է հնարավորինս հարազատ մնալ բնագրին, ընթերցողին ներկայացնել բոլոր իրականությունները, որոնք հեղինակի կողմից կիրառվել են ստեղծագործության մեջ, ինչպես նաև մշակութային բոլոր առանձնահատկությունները, որոնք բնորոշ են բնագրի ժողովրդին: Նման մոտեցման դեպքում թարգմանված երկն իր մեջ բավականին մեծ տեղեկատվություն կպարունակի և, թերևս, ընթերցանության հաճույքը լիարժեք չի լինի:

Փորձելով լուծել երրորդ խնդիրը, թարգմանիչը չի ջանում ստեղծել հեղինակի կողմից կիրառված որոշակի արտահայտչամիջոցների գործառական նմանակները՝ անտեսելով ազգային-մշակութային առանձնահատկությունները,

ամբողջությամբ կենտրոնանալով գեղարվեստական ստեղծագործության բովանդակության փոխադրության վրա: Այդպիսի թարգմանությունը, կարծում ենք, դժվար կլինի գեղարվեստական անվանել:

Մ Ուելբեքի «Հնազանդություն» վեպը թարգմանելիս փորձել ենք հետևել վերոնշյալ սկզբունքներին ամբողջության մեջ, ծանրության կենտրոն չունենալով կետերից որևիցե մեկը, որպեսզի հայ ընթերցողին հնարավորություն տրվի ամբողջապես ճանաչել այդ ինքնատիպ ստեղծագործողին՝ վեպում առկա մշակութային, կենցաղային իրականությունները ներկայացնելով հիմնականում հղումների տեսքով, ինչպես նաև փորձելով հարազատ մնալ նրա կողմից կիրառված ոճերին:

Գրականության ցանկ

1. Միշել Ուելբեք, Հնազանդություն, Անտարես, Երևան, 2017
2. Michel Houellebecq, Soumission, Flammarion, Paris, 2015
3. Mathieu Guidère, Introduction à la traductologie, Bruxelles, 2004
4. https://fr.wikipedia.org/wiki/Michel_Houellebecq
5. [https://fr.wikipedia.org/wiki/Soumission_\(roman\)](https://fr.wikipedia.org/wiki/Soumission_(roman))

Բանալի բառեր - Թարգմանաբանություն, թիրախ լեզու, գրելաոճ, լեզվի ռեգիստր, գոեհիկ խոսվածք:

Ռուզան Միրզոյան, Միշել Ուելբեքի «Հնազանդություն» վեպը թարգմանչի մեկնաբանությամբ - Հոդվածում փորձել ենք ներկայացնել ֆրանսիացի ժամանակակից ամենաինքնատիպ, ամենատաղանդավոր գրողներից մեկի՝ Մ Ուելբեքի, «Հնազանդություն» վեպի գրականագիտական համառոտ վերլուծությունը, ինչպես նաև ներկայացնել կիրառված թարգմանաբանական մոտեցումները՝ փորձելով հարազատ մնալ հեղինակի մտքերին, դատողություններին, ինչպես նաև գրելաոճին: Գրվածքում մշտապես առկա է լեզվի տարբեր ռեգիստրների անցումը, որի ընթացքում հեղինակին հաջողվում է ստեղծել տարօրինակ ցուցադրականություն՝ երբեք չերկմտելով դիմել գոեհիկ խոսվածքին:

Ружан Мирзоян , Роман Мишеля Уэльбека «Покорность» по трактовке переводчика - В данной статье предпринята попытка сделать краткий литературный анализ романа «Покорность» одного из современных, талантливых и оригинальных, французских писателей Мишеля Уэльбека. Внимание концентрируется на переводческих подходах, используемых в процессе перевода, одновременно оставаясь верным мыслям, суждениям, а так же стилю автора. В романе постоянно соблюдается переход на разные языковые регистры, тем самым, автору удается создать оригинальные и, в некоторой степени, странные высказывания, используя литературные вульгаризмы.

Ruzan Mirzoyan, Interpretation of “Submission” by Michel Houellebecq - The present article touches upon the brief literary analysis of the novel “Submission” by M.

Houellebecq, one of the unique and most talented modern French writers. It also dwells upon the translation approaches which have been used while doing the translation at the same time trying to be faithful to the writer's ideas, judgments, as well as his writing style. The writing is a blend of different language registers with which the writer creates a strange demonstration with the vulgar speech he applies in it.

COMPLIMENTING IN ENGLISH AND IN ARMENIAN CULTURES

NARINE GASPARYAN

Speech act theory says talking is not just semantics but acting and meaning-making. This theory holds that the meaning of linguistic expressions can be explained in terms of the rules governing their use in performing various speech acts (e.g., commanding, exclaiming, promising, requesting, warning, complimenting).

It is worth distinguishing between compliment and praise or admiration. Sometimes praise is confused with compliment or they are considered to be the same speech act because both phenomena evaluate things and express an opinion on a particular thing. But scientists suggest considering praise as a wider category in which compliments should be included.

Although these two speech acts demand positive judgments, complimenting has to apply to the addressee. When we say something pleasant to a person, who is absent, it is rather praise or admiration than a compliment.

In modern life, more and more attention is paid to the impact of the speech acts and in this case complimenting is the most important tool of speech influence and optimization of speech communication in general. Among many acts that we comply every day through speech, complimenting is one of the main speech act that helps us establish good interpersonal relationships with others. Compliments are a part of the etiquette of communication because they are involved in the procedure of dating, greeting, saying good-bye and so on. Compliments are also included in the official business and friendly communications, and also they are a part of a more complex speech genre which is the declaration of love. In all cases, compliments promote communicative rapprochement, they establish friendly and confidential relations between the addresser and the addressee. We also can say that in modern communication it appears to be a unifying element in the development of positive interpersonal relationships as well as strengthening social relations. It contributes to the harmonization of interaction between people. Here we can see that the speaker does not pay any direct compliment to his/her interlocutor, but the latter implies the idea and the goal of the complimenter.

Compliment is quite an appropriate speech act to examine when we comprise two cultures, because compliment is like a window through which we can view what is important and valued in that particular culture. Compliment is a speech act that often happens in daily conversations and which is an integral part of the speech etiquette. Compliments can be described informally as “both direct and indirect utterances expressing the speaker’s positive opinion about the addressee’s outward appearance,

work, personality traits, possessions, and about third parties closely related to the addressee (e.g. children)” (Jaworski 1995: 64).

It is worth mentioning that a lot of researches have been done referring to English compliments throughout the world, about their functions, purposes, responses as well as about their frequency and structure. As for Armenian compliments, they are not thoroughly studied yet. For that very reason a local investigation has been conducted by us to find specifications and characteristics of Armenian compliments.

There are both important similarities and differences between Armenian and English compliments and these differences mainly depend on shared beliefs and values of the speech community and thus cannot be interpreted apart from social and cultural contexts. In English society people usually widely use compliments, and that compliments play an important role in communication. Using compliments become a custom just like thanks and apology. In English society, people encourage some admirable actions with compliments. For example, mother will cheer her son up saying *“Well done my dear, you are really studying hard”*. People also build and keep social relation with compliments and usually use them saying *“That’s a delicious dinner”*. When two companies or friends who have not seen each other for a long time meet again, they compliment each other firstly instead of regards. Compliments play the same role in Armenia. Compliment can improve one’s relationship with others. When Armenians meet their old friends they greet each other with the words *“You look younger than before”*. Sometimes after having dinner in a friend’s house, people will pay compliments to the housewife for making such kind of tasty dish. Both in Armenian and English cultures the principle is to compliment and make others feel better. So people should pay attention to the words that are used to compliment others.

Although both in Armenian and in English languages speech behaviour states that the appropriate response to the compliment is to say *“Thank you”*, speakers often ignore the compliment or return it to the complimenter.

Speaking about English compliments, two famous linguists Nessa Wolfson and Johan Manes (Manes and Wolfson 1981:115, Wolfson and Manes 1980:402-404) many times have noted that “the most striking feature of compliments in English is their total lack of originality”: They have mentioned that 80% of English compliments consist of adjectives and nearly two-thirds of all adjectival compliments made use of 5 adjectives. Those adjectives are: *good, nice, great, beautiful, pretty, wonderful*.

According to these linguists there are also 5 verbs in English which are used for compiling semantically positive verbs: *like, love, be impressed by, enjoy, admire*. From these 5 verbs *love* and *like* account for 86% of the positively evaluative verbs. At the syntactic level more astonishing evidence of formulaicity in English compliments is found. The function of compliment becomes more and more important, so the

compliment language becomes standardized. Wolfson and Manes studied the data of compliments and found out that more than a half of them displays a single syntactic pattern.

As for Armenian compliments, our investigation showed that there are an infinite number of words that can be used in paying compliments. However in their everyday conversation Armenians use restricted expressions and phrases in order to avoid misunderstanding. The aim of complimenting in Armenian culture is to make the addressee happy, praised or satisfied. During our inquiry we found out that most of the respondents avoid paying creative compliments in formal meetings or during interacting with distant relatives. However, most of the respondents confess that while interacting with their close friend, family members or beloved they use a lot of creative compliments. Among them are such kinds of expressions such as “*You are a life*” or “*You are a gem*”. Anyhow there are some adjectives which are mostly used while paying compliment. These are: *Գեղեցիկ, սքանչելի, աննսան, լավ, հրաշալի, հոյակապ, հիանալի*.

One of the characteristics of the Armenian compliments is the type of compliment, when one is compared with the *sun, life, treasure, gold, king*, etc. Sometimes men are compared with *rocks and mountains* for demonstrating their strength and power. Women or girls are often compared with a *flower, deer or angel*. Sometimes it can be considered a compliment when a woman is compared with a man for emphasizing her strength and masculine features. It is worth mentioning, that a lot of interjections, such as *վա՛յ, օ՛յ* are used while paying a compliment. As for the word order in the sentence, there is relatively free word order in Armenian compliments compared with the fixedness of English word order.

As we know English culture is taking individualism as a main orientation, and here compliment language is extremely important. Unlike English culture, Armenian culture is taking groups, relation, and others as orientation; the cultural differences are caused by two society's structures of traditional culture. In Armenia, a nation with modesty as virtue, everyone should respect the old and cherish the young. In English culture everybody is deep-rooted with the minds of “Everyone is equal”, and pursues that. The individualism of English makes people incline to express the view and opinion from the self-angle even more, in using compliment language, they like to use the structure of the first person very much. Armenian group or others' orientation makes people try one's best to narrow oneself in communication; the utilization of the first person in compliment language is not frequent. (Feilin L. 2005:71-72)

According to Herbert, women prefer more personalized forms, such as 1st or 2nd person focus, while men proffer impersonal focus (3rd one).

1st person focus: *I like your bag!*

2nd person focus: *Your rings beautiful!*

3rd person focus: *Nice earrings!*

Another linguist Linglin Wu (2008: 26) mentions that females compliment with more flexibility and they just want to express their feelings and emotions paying less attention to the form. For females, complimenting form is not important while giving and receiving compliments are everyday occurrences.

As for the 2nd point we can mention that in both languages it has nearly the same index. It may seem natural, because the definition of a compliment is a confirmation of appreciation for some skills, achievements, victories and so on concerning to the addressee or things related to the addressee. One of the interesting things is that nearly all of the second person structures focus on addressee's possessions, *egg. "You have very beautiful earrings."* This is mainly used when one notices that their friend or relative has acquired a new possession. In Armenian culture too it is like an obligation to notice the new possession or the new appearance of your relative/friend and pay a compliment on it. (*For example: New hairstyle, new shoes, loss or gain of weight and so on*). According to Manes (1983: 99) appearance is the most frequent focus for complimenting. Of course there are a lot of topics for complimenting but the enormous part of the compliments refers to some topics. Homels (1987-1988: 449- 454) distinguishes 4 main topics in English language complimenting. They are: appearance, possessions, ability/performance, personality/friendship. According to her examinations, most of the women give and receive compliments on their appearance. 56,7 % of all the compliments related to the aspects of women's appearance. In contrast to this, men receive only 36 % of the compliments related to the appearance. Complimenting on someone's appearance is a positively affective speech act and it is the expression of harmony and solidarity. Women particularly use this compliment topic for this positive function. However in some cultures complimenting on the appearance can be considered an inappropriate or irreverent and sometimes they can show both intimacy and vulnerability.

As for Armenian complimenting topics we can mention that like in English speaking countries in Armenia also the prevailing topic for complimenting is appearance, *egg. «How charming you are!»*, The noticeable difference is referred to the personality topics. It is known that there are two types of compliment: explicit and implicit. Complimenting on someone's personality can be ascribed as an implicit compliment. You pay compliment on your addressee's personality and in that way you secretly pay compliment on the addressee. For implicit compliments are often used such tropes as hyperbole, comparisons, Gricean maxims. As we have noticed complimenting on personality in English culture forms about 5% whereas in Armenian culture it is 18%.

In Armenian culture it is accepted to pay compliment to the addressee's friends, relatives and children. Armenians strongly respect family values, they are very affectionate of their children they maintain strong family ties and mutual respect. So in this respect it would be very pleasant for Armenian mother or father to listen a compliment about their child. For example people in Armenia often praise children for making their parents feel proud, evaluated and happy: «*You are great! We are proud of you!*». Mainly it comes from Armenian values and mentality because in our culture family has a leading role in the society.

As for possessions we can see that in English culture it is used more than Armenian culture. Complimenting on possessions is not very rare but it is used in some situations. For example when your friend bought new glasses you can pay compliment to him/her for pleasing your friend or just for expressing your admiration: «*Oh, they are really gorgeous!*». And the problem, how you pay a compliment to your friend, depends on circumstances and mainly on his/her gender. Homels (1987-1988: 449- 454) made an investigation to find out whether man or women often receive and pay compliments in English speaking cultures. In Armenian culture complimenting behaviour appears to be much more used by women than men. As our investigation showed, Armenian women give and receive considerable amount of compliments. But in English speaking cultures women pay compliments to men more than in Armenian culture. A male speaker has to be very careful to compliment a female so as to avoid the inappropriateness or even rudeness.

Sometimes Armenians express compliments by humbling themselves to compliment others which is a polite way of keeping good relationship with each other. Armenian people (especially elder generation) are also reported to hardly accept compliments. But the particular compliment to their talent is always well appreciated.

Generally in Armenian we can come across direct speech acts more often than in English. This implies that in Armenian directness is considered as a positive cultural value and the use of direct speech acts may often indicate that the interlocutors are on quiet intimate and close relations. In English, on the contrary, the speakers try to be more indirect and not to threaten the hearer's face. Clearly, one factor responsible for this difference is the principle of "polite pessimism", characteristic of Anglo-Saxon culture, but absent from Armenian culture.

So examining the differences and similarities in Armenian and English cultures we made sure once again that culture is one of the main and inseparable part of the language. People could learn the whole culture during learning and using language. As language learners we must therefore deepen our understanding of contexts of language use.

References

- Herbert Robert, K., *Sex-Based Differences in Compliment behavior*, Amsterdam, 1998.
- Holmes J, *Paying compliments. A sex-preferential politeness strategy*, Journal of Pragmatics 12, 1988.
- Holmes, J., *Compliments and compliment responses in New Zealand English*, Anthropological Linguistics 28:, 1986.
- Jaworski, A., *This is not an empty compliment!, Polish compliments and the expression of solidarity*, International Journal of Applied Linguistics 5/1, 1995.
- Lewandowska-Tomaszczyk, B., *Praising and complimenting*, in W. Oleksy, New York, 1989.
- Linglin W., *Gender-Based Differences in Compliments*, London, 2008.
- Lubecka, A., *Requests, Invitations, Apologies and Compliments in American English and Polish. A Cross-cultural Communication Perspective*, Poland, 2000.
- Manes J., *Compliments: A mirror of cultural values*, Korean University, 1983.
- Manes J., Wolfson N. *The compliment formula*, In: Florian Coulmas (ed.). *Conversational Routine. Explorations in Standardized Communication Situations and Prepatterned Speech*, The Hague, 1981.
- Manes J., Wolfson N, *The compliment as a Social Strategy*, Japan, 1980.
- Wolfson, N., *Rules of speaking in J. Richards and R. Schmidt (eds.) Language and Communication*, Holland, 1983.

Key words - speech act, compliment, culture, speakers, communication.

Narine Gasparyan, Complimenting in English and Armenian cultures - Complimenting is considered as a positive evaluative speech act and part of negotiating strategy of the conversation. The article is devoted to the analysis of the speech act of complimenting in English and in Armenian cultures. There are both important similarities and differences between Armenian and English compliments and these differences mainly depend on shared beliefs and values of the speech community. The article studies pragmatic, semantic and lexical peculiarities of complimenting in English and in Armenian cultures.

Նարինե Գասպարյան, Հաճոյախոսելը անգլիական և հայկական լեզվամշակույթներում - Հաճոյախոսելը համարվում է դրական գնահատողական խոսքային ակտ և հաղորդակցության բանակցային ռազմավարության մի մաս: Հոդվածում վերլուծվում են հաճոյախոսության խոսքային ակտի նմանություններն ու տարբերությունները անգլիական և հայկական լեզվամշակույթներում: Հոդվածում ուսումնասիրվում են հաճոյախոսության գործաբանական, իմաստային և բառապաշարային առանձնահատկությունները այս երկու մշակույթների մեջ:

Нарине Гаспарян, Комплименты в английской и армянской лингвокультурах – Комплимент положительно-оценочный речевой акт, являющийся частью стратегии переговорного процесса общения. В статье анализируются сходства и различия комплиментов в английской и армянской лингвокультурах. Также в статье рассматриваются прагматические, семантические и лексические различия в двух названных культурах.

ՀՈՒՑԶԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՑԹՈՒՄ ՆԵԼԼԻ ԱՅՎԱԶՑԱՆ

Որքան էլ լեզվաբանության մեջ զգացմունքները գիտականորեն ուսումնասիրության նոր հոդ են, այնուամենայնիվ, դեռևս անտիկ դարաշրջանի փիլիսոփաներն իրենց աշխատություններում անդրադարձ են կատարել զգացմունքներին:

Արիստոտելն իր «Հռետորություն» աշխատության մեջ, խոսելով զգացմունքների մասին, դրանց մի փոքր այլ կերպ է անվանում՝ **“passion”**, որ թարգմանաբար նշանակում է **կիրք**:

«[...]Կիրքը մի գործոն է, որ, փոփոխելով մեզ, տարբերակում է մտցնում մեր դատողություններում, օրինակ՝ զայրույթը, վախը, խղճահարությունը, նույնատիպ կամ դրանց հակադիր այլ զգացմունքները: [...]»¹

Հանրության առջև ելույթի նպատակներից մեկը լսարանին ինչ-որ բանում համոզելն է: Ըստ Արիստոտելի, համոզման գործընթացը երեք բնորոշիչներից է բաղկացած՝

Ethos (արժանահավատություն)- Խոսքը վերաբերում է համոզման միջոցներին, որ խոսողի կամ հռետորի անհատականության հետևանք են: Հանրության առաջ արտահայտվելիս առանցքային խնդիրներից մեկը կայանում է նրանում, որ խոսողը պետք է ստեղծի տպավորություն, որ արժի իրեն լսել: Այլ կերպ ասած, դառնալ անքննելի հեղինակություն այն թեմայում, ինչի մասին խոսում է կամ համոզում:

Pathos (հուզականություն)- Այն միջոցներն են, որոնք, ծառայեցնելով զգացմունքներն ու հույզերը, հանրությանը տանում են համոզման: Այս բնորոշիչի դերը կայանում է նրանում, որ պետք է հայցել լսարանի համակրանքն ու աշխատել վերջինիս երևակայության վրա: Բայց պաթոսի կիրառումը չի ենթադրում միայն լսարանից հուզական ֆոնի «հայցում»։ պաթոսի ճիշտ կիրառությունը պետք է թույլ տա, որ հանրությունն ինքն իրեն ճանաչի և գտնի հռետորի փաստարկներում: Այս պարագայում պաթոսը դառնում է ունակություն, որը ստիպում է լսարանին երևակայորեն վերգծալ հռետորի զգացական և հուզական ֆոնը:

Logos (տրամաբանություն)- Համոզումը տեղի է ունենում դատողության միջոցով:

20-րդ դարի առաջին կեսերին շվեցարացի լեզվաբան Շարլ Բալլին էր, որ սկսեց ոճագիտության տեսանկյունից գիտական հետաքրքրություն դրսևորել հույզերի, զգացմունքների և արտահայտչականության լեզվաբանական դրսևորման մեխանիզմի նկատմամբ: Առաջին աշխատությունը «Ֆրանսերեն ոճագի-

¹ Aristote, *Rhétorique*, livre 2, texte établi et traduit par : Médéric DUFOUR, Paris, 1960.

տության տրակտատն» է՝ 1909թ.: «Ֆրանսերեն ոճագիտության տրակտատը» կարևոր տեղ է զբաղեցնում Բալլիի այն աշխատությունների մեջ, որոնք լեզվաբանության մեջ առաջարկում են ուսումնասիրման նոր օբյեկտ և նոր մեթոդաբանություն: Բալլին, խոսելով հույզերի և լեզվի փոխհարաբերության մասին, օգտագործում է մի փոքր այլ եզրույթ՝ **արտահայտչականություն**: Եզրույթն առաջին անգամ օգտագործում է «Լեզվաբանական արտահայտչականության մեխանիզմը» հոդվածում, որ տեղ է գտել «Խոսք և Կյանք» ժողովածուի 1926 թվականի երկրորդ հրատարակության մեջ:

Բալլին իր ուսումնասիրությունները սկսում է նախ տարբերակում դնելով **մտավոր և զգացական** տարրերի միջև, որ կիրառվում են մտքերի լեզվական արտահայտման մեջ:

«Այն (լեզուն) մեր մտքի, ասել է թե մեր գաղափարների և զգացմունքների, արտահայտումն է, իսկ մտավոր և զգացական տարրերը, համարյա միշտ, բայց փոփոխվող չափաբաժնով, միավորված են մտքի այդ կազմավորման մեջ:»¹

Զգացմունքների լեզվաբանական դրսևորումների ուսումնասիրման համար ընտրված տեսակյունները կարող են լինել տարբեր. կարող են ուսումնասիրվել դրանց բառային արտահայտության առանձնահատկությունները, իմաստային կողմը, մշակութային նախադրյալը:

Քաղաքական խոսույթն իրենով բավական հետաքրքաշարժ դաշտ է զգացմունքների արտահայտման համար. գործիչները պատրաստ են դիմելու ամենատարբեր միջոցների՝ համոզելու, ներգործելու, հուզելու, հանրության ուշադրությունը հրավիրելու որևէ երևույթի կամ փաստի վրա: Նպատակները շատ են, բազմազան են նաև դրանց հասնելու հուզաարտահայտչական միջոցները: Քաղաքական հաղորդակցումը, որ տեղի է ունենում հանրայնորեն ելույթի տեսքով, հիմնականում ելույթ ունեցողի ինքնահաստատումն է: «Ես խոսում եմ, ուրեմն, ես կամ, գոյություն ունեմ» բանաձևը գործուն է այլոց հետ ցանկացած հաղորդակցման ժամանակ, հատկապես, երբ խոսքը քաղաքական խոսույթին է վերաբերում, որտեղ խոսքի և արարքի միջև տարբերակումը հատուկ խնդիր է համարվում:

Թվում է՝ քաղաքական ելույթի հուզական բովանդակությունը հասնում է նվազագույնի, բայց իրականում հակառակն է, քանի որ այս գործընթացն իրականանում է այնպիսի հոգեբանական հասկացությունների շնորհիվ, ինչպիսիք են օրինականության և առավելության դրսևորումը:² Առհասարակ, քաղաքական կարծիքի, վերլուծության կամ պրոպագանդայի՝ քարոզի, ցանկացած արտահայ-

¹ Bally, Ch. *Traité de Stylistique française*. Genève-Paris, 1909/1951, 3e édition.

² Braude Ph.; *Petit traité des émotions, sentiments et passions politiques*. Paris: Armand Colin. 2007, p.49.

տում տեղավորվում է քաղաքական դաշտում ամենահաճախ արծարծվող 3 թեմաներից մեկի սահմաններում: Որո՞նք են այդ թեմաները:

1.Փորձագետի կարծիք. Խոսողն այնպիսի հարթակի վրա է գտնվում, որ ասես հատուկ գիտելիքի և առանձնահատուկ տեղեկատվության է տիրապետում: «Ես ձեզ կբացատրեմ...»: Խոսողը լինի տառացիորեն փորձագետ, թե քաղաքական գործիչ, նման բառապաշար որդեգրելով, նա չի բավարարվում միայն բացահայտ վերլուծություններ առաջ քաշելով, նա դիմում է տեղեկատվական առավելություն ունեցող գերակա անձնավորության մետալեզվի կամ բառապաշարի, որը երևում է կիրառվող տոնայնությունից, թվերի փաստարկներից, տրամաբանության և բանականության վրա հիմնված լեզվից և ցանկացած տարրից, որ խոսողին էլ ավելի մոտեցնում է ճշմարտությանը: Այն ճշմարտությանը, որը ցանկանում է լսել ընտրող հանրությունը:

2. Տեսակետը ներկայացնողի կարծիք. Այս դեպքում ելույթը հիմնվում է հարցումներով պայմանավորված ճշգրտության վրա, և խոսողն իրեն իրավունք է վերապահում ցույց տալու այն ճանապարհը, որով օրինակ իր ընտրազանգվածը պետք է գնա պաշտպանելու համար ձեռքբերումները, առճակատվելու սպառնալիքների հետ, հստակեցնելու այն ուղղությունը, որով պետք է շարժվեն հավաքական գործունեության ժամանակ: Հաճախ կարող ենք նմանատիպ ելույթներում գտնել հետևյալ արտահայտությունները՝ «Ահա՝ ինչ են մտածում նրանք, ում տեսակետն ու շահերը ներկայացնում եմ ես: Ահա նրանց ձգտումներն ու նկրտումները... Ահա ինչ միջոցներ պետք է ձեռք առնել բարելավելու համար պայմանները...»

3.Որոշակի արժեհամակարգ դավանողի կարծիք.Քաղաքական գործիչների մեծամասնությունը շատ հաճախ հղումներ է կատարում որոշակի արժեքներին՝ արդարացնելու համար իր ընտրությունն ու բարոյական համոզմունքները: Հաճախ նրանց խոսքում կարելի է հանդիպել, որ իրենք պայքարում են հանուն հավասարության, արդարության, համերաշխության, ազատության, հայրենիքի ու հանրապետության, համընդհանուր բարօրության: Միանգամից հասկանալի է, որ այս տեսակ արժեքները գուր չեն հիշատակվում. չէ՞ որ բարոյականություն և քաղաքավարություն են արտացոլում: Ուղղակի կամ անուղղակի կերպով այս մեթոդը որոշակի բարոյական կերպար է ստեղծում: Այս փաստը, որ նրանք հանրայնորեն ասում ու կրկնում են, որ որոշակի արժեքների ջատագովն ու պաշտպանն են, հենց իրենց ու իրենց համախոհների աչքերում ևս մեկ անգամ ինքնահաստատման միջոց է: Եւ ինքնահաստատման ցանկացած փորձ, առավել ևս որ կատարվում է մի փոքր ավելի վտանգավոր և հանդուգն կերպով, կոչված է նորից առաջացնելու պատասխան ագրեսիա: Իսկ եթե խոսքը քաղաքական ելույթի մասին է, ապա այդ ագրեսիան ընդհանուր կանոնի բնույթ է կրում: Ելույթում կարելի է հանդիպել նաև հռետորական այնպիսի տարրերի, որոնք նպատակ ունեն

կառավարելու և հարկ եղած դեպքում նաև մեղմելու ու հարթելու կոնֆլիկտային պահերը: Այն հանրության դիմաց, ում շահերը ներկայացվում են, թեկնածուն կամ քաղաքական գործիչն անընդհատ կարիք է զգում հասնել ավելի բարենպաստ դիրքերի և այդ հանրությանը միշտ պահել այն զգացման մեջ, որ շահերը ներկայացնելու համար ճիշտ թեկնածու է ընտրվել: Այս երկու գործընթացը ապահովում են վստահության մթնոլորտ երկու կողմերի միջև: Թեկնածուն պետք է կարողնա գտնել այն միջոցներն ու ուղիները, որոնք կօգնեն «շոյել» պոտենցիալ ընտրողի համոզմունքները, զգացմունքներն ու սպասելիքները: Հատկապես այս վերացական մտերմությունը ստեղծելիս է, որ ելույթի մեջ օգտագործվում են հետևյալ արտահայտությունները. «Ես գիտեմ ձեր խնդիրները...», «Ես անցել եմ այն նույն դժվարությունների միջով, ինչ դուք...»: Այս արտահայտությունները կոչված են հղում կատարելու համընդհանուր ողջախոհությանը և այնպիսի համոզմունքների, որոնք կիսում են թե՛ ընտրողները, թե՛ ընտրվողները:

Քաղաքական ճառը կառուցելիս հուզական ֆոն ստեղծելու համար ամենադասական և հաճախ կիրառելի մեթոդներից է **նաև հավաքական (կոլեկտիվ) հուզական ֆոն ստեղծելը**: Իրականում այս միջոցը ղեկավարների և քաղաքական այլ գործիչների ելույթների գերիշխող ռեսուրսն է կազմում, անկախ այն փաստից, թե քաղաքական ինչ վարչակարգ է իշխում կամ ինչ ընտրություններ են՝ նախագահական, թե օրենսդիր:

Կախված ընտրված նպատակներից, այն թիրախային հանրությունից, ում ուղղված է ելույթը, սահմանվում է նաև դրանում օգտագործվող բառապաշարը: Մարիոն Բալլեն, ուսումնասիրելով 1981-2007 թթ. նախագահական ընտրությունների քարոզարշավի ժամանակ թեկնածուների կողմից օգտագործված ելույթները, առաջարկում է դրանցում կիրառված բառապաշարի հետևյալ տեսակները¹.

Վախի գործոնն ակտիվացնող բառապաշար. Շարլ դը Գոլն էր, որ ընտրագնացվածին առաջարկեց հետևյալ ելքով բանաձևը՝ *Ես կամ քսոսը*: Մենք կարող ենք նկատել, որ հետագայում հանդես եկած այլ կարևոր թեկնածուներն ու հատկապես հետո նախագահ ընտրվածներն իրենց ելույթներում իրարից շատ քիչ տարբերվող այլ արտահայտություններով պտտվել են անկայունության, անկանոնության կամ տնտեսական ճգնաժամի վախի թեմայի շուրջ և ձգտել են իրենց ելույթի, իսկ հետո նաև ողջ ընտրարշավի ելքի հիմնական հաղթաթուղթն ու խաղաղդրույթը դարձնել հենց այս թեման: Երբեմն խոսողը փորձում է իր հովանավորության տակ վերցնել արդեն գոյություն ունեցող վախերը, երբեմն դրանք դիտավորյալ չափազանցվում են ու նույնիսկ ինքը խոսողն է վախի պատճառներ ստեղծում, որպեսզի ավելի լավ իրեն վերագրի այն անձնավորության դերը, ով

¹ Ballet, M. *Peur, espoir, compassion, indignation. L'appel aux émotions dans les campagnes présidentielles (1981-2007)*. Paris : Dalloz, 2012, p 5-6..

պետք է ցրի այդ վախերը: Իսկ վախն ու դրա պատճառները միշտ կան՝ անկախ տիրող վարչակարգից: Եթե զուտ քաղաքական օգուտից ելնելով վախի մթնոլորտի սրումը միակ հոետորական միջոցն է, որ թեկնածուն կարողանում է բանեցնել, և եթե նրան սատարող կուսակցությունը ծայրահեղական կողնորոշումներով տոգորված չէ, որդեգրած ռազմավարությունը, հատկապես պահպանողական կուսակցությունների համար, դառնում է մի փոքր վտանգավոր: Առհասարակ վախը տարածվող, վարակիչ, ինքնասնմանը հակված և վերահսկողությունից շուտ դուրս գալու սովորություն ունեցող զգացմունք է և մի ակնթարթում հոետորական միջոցից կարող է վերափոխվել այն կիրառողի դեմ օգտագործվող զենքի: Այսպիսով, նախքան վախի մթնոլորտ ստեղծող ճառի կազմելը, քաղաքական գործիչը պետք է վստահ լինի, որ այդ քայլը արդարացված է, և հակառակորդ ուժերի համար բարենպաստ պոտոր ջուր չի ստեղծվի:

Փոփոխությունների մասին ազդարարող բառապաշար. Փոփոխությունը շատ տարածված լոզունգ է քաղաքական բոլոր ծրագրերում, նույնիսկ եթե այդ փոփոխությունն ուղղված է պահպանելու այն, ինչ արդեն ձեռք է բերված: Հենց փոփոխությունների մասին խոսող կուսակցություններն են, որ իրենք իրենց «կնքում են» «հեղափոխական » անվանմամբ, մի կախարդական բառ, որ իր ետևից այնպիսի քաղաքական շարժումներ կարող է առաջ քաշել, ինչպիսին էին պրոլետարական հեղափոխությունը, աջերի մոտ ֆաշիստական հեղափոխությունը:

Ջայրույթ և արհամարհանք արտահայտող բառապաշար. Ընդունված է համարել, որ զայրույթն ու արհամարհանքն ուղեկցող զգացմունքներ են հատկապես ծայրահեղական հայացքներ ունեցող կուսակցությունների թեկնածուների ճառերում: Այս փաստը երկու բացատրություն և պատճառ ունի՝ նախ այս երկու զգացմունքների միջոցով քաղաքական ուժը հայտարարում է իր այլախոհ հայացքների մասին ընդդեմ այլ քաղաքական ուժերի, ապա, լինելով փոքրամասնություն, փորձում է աղմուկ ստեղծել իր շուրջ՝ ավելի լսելի դառնալու համար: Այնուամենայնիվ, կուսակցությունների գաղափարախոսության մեջ եղած զայրույթն ու արհամարհանքն ուղղված են անարդարության, լայն արձագանք գտած, աղմկահարույց սկանդալների, բռնությունների, խտրականության դեմ:

Ամփոփելով նշենք, որ պետք չէ թերագնահատել լեզվաբանական այն ճյուղը, որը համեմատած մյուսներին, նոր մոտեցում է ցուցաբերում խոսույթներին (մասնավորապես քաղաքական), դիտարկելով դրանց զգացական ֆոնը: Այս ուղղությամբ կատարված ուսումնասիրությունները, հատկապես հետպատերազմյան շրջանի Եվրոպայում և հատկապես Ֆրանսիայում, նկատելի զարգացում են գրանցել: Ի տարբերություն նախկինում քաղաքական ելույթների ընկալման ձևերին, այսօր այդ ընալումը փոփոխվել է: Նկատվում է միտում անձնականացնելու և խոսողի հետ նույնականացնելու ելույթը, հատկապես երբ խոսքը

ընտրարշավին մասնակցող թեկնածուի մասին է: Թեկնածուն կա այնքանով, որ-
քանով որ իր ելույթն է: Այս միտումն իր բացատրությունն ունի. զարգացում է
ապրել հասարակության ճաշակը կապված քաղաքական հոետորության հետ:
Ճոռում, հրամայական և երբեմն պարտադրական ոճը հանրության համար կորց-
րել է իր հետաքրքրությունն ու, ինչո՞ւ ոչ, նաև գրավչությունը: Այս տեսակ ելույթ-
ները պատկանում էին այն հասարակությանը, որտեղ խոր անդունդ կար նրանց
միջև, ովքեր քաղաքական դաշտում էին ու հանդես էին գալիս իբրև «գիտականեր»,
և նրանց, ովքեր թույլ էին տալիս «կառավարվել ու դաստիարակվել»: Հասարա-
կական տարբեր խավերի զարգացումը, օրեցօր ավելացող տեղեկացվածությունն
ու կրթվածությունը հանգեցրել են այն էվոլյուցիային, որ կա քաղաքական ե-
լույթների և դրանց լեզվաբանական ուսումնասիրման դաշտում: Երկու կողմերի
միջև այդ հեռավորության կրճատումը, որ հիրավի ակներև է, նպաստել է առա-
վել ջերմ, պայմանականություններից դուրս և մտերմիկ քաղաքական ոճի ի
հայտ գալուն:

Գրականության ցանկ

1. **Aristote**, (1960), *Rhétorique*, livre 2, texte établi et traduit par: Médéric DUFOUR, Paris.
2. **Bally, Ch.**, (1909/1951), *Traité de Stylistique française*. Genève-Paris, 3e édition.
3. **Ballet, M.** (2012). *Peur, espoir, compassion, indignation. L'appel aux émotions dans les campagnes présidentielles (1981-2007)*. Paris : Dalloz.
4. **Braud, P.** (2007). *Petit traité des émotions, sentiments et passions politiques*. Paris : Armand Colin.
5. **Charaudeau, P.** (2005). *Le discours politique. Les masques du pouvoir*. Paris : Vuibert.
6. **Damasio, A.** (1995). *L'erreur de Descartes*, (trad.). Paris : Odile Jacob.
7. **Edelman, M.** (1977). *Political Language. Words That Succeed and Politics That Fail*. New York : Academic Press.
8. **Gougou, F., Tiberj, V., Laplanche-Servigne, S., & Peugny, C.** (2007). *Les mots des présidentielles*. Paris : Presses de Sciences Po.
9. **Ibarra, P., & Kitsuse, J.** (1993). *Vernacular Constituents of Moral Discourse*. Dans G.
10. **Miller & J. Holstein (Éd.)**, *Constructionist Controversies. Issues in Social Problems Theory* (pp. 21-54). New York : Aldin de Gruyter.
11. **Le Bart, C.** (1998). *Le discours politique*. Paris : PUF.
12. **Lutz, C., & Abu-Lughod, L. (Éd.)**. (1990). *Language and the Politics of Emotion*. Cambridge : Cambridge University Press.

13. **Marcus, G.** (2008). *Le citoyen sentimental. Emotions et politique en démocratie* (trad.) Paris : Presses de Sciences Po.

Բանալի բառեր - քաղաքական խոսույթ, լեզվաբանական արտահայտչականություն, զգացմունքների լեզվաբանական դրսևորում, մտավոր տարրեր , զգացական տարրեր, քաղաքական հաղորդակցում:

Նելլի Այվազյան, Հույզերի լեզվական դրսևորումները քաղաքական խոսույթում - Հատկապես վերջին 20-30 տարիներին է, ինչ զգացմունքը բացահայտ կերպով սկսել է ուսումնասիրվել լեզվաբանների կողմից, մինչդեռ փիլիսոփաները, մարդաբանները և հատկապես հոգեբաններն ու նյարդահոգեբանները շատ վաղուց է, ինչ զարգացնում են իրենց ուսումնասիրություններն այս ուղղությամբ և արդեն կան հաստատված և ամրապնդված տեսություններ այն բանի շուրջ, թե ինչ ազդեցություն կարող են ունենալ հույզերն ու զգացմունքները ճանաչողության, վարքի և միջոցառումային հարաբերությունների վրա:

Քաղաքական խոսույթն իրենով բավական հետաքրքրաշարժ դաշտ է զգացմունքների արտահայտման համար. գործիչները պատրաստ են դիմելու ամենատարբեր միջոցների՝ համոզելու, ներգործելու, հուզելու, հանրության ուշադրությունը հրավիրելու որևէ երևույթի կամ փաստի վրա: Նպատակները շատ են, բազմազան են նաև դրանց հասնելու հուզաարտահայտչական միջոցները:

Нелли Айвазян, Лингвистическое проявление эмоций в политическом дискурсе - Особенно в последние 20-30 лет эмоции стали предметом изучения лингвистов, хотя философы, антропологи и особенно психологи и невропсихологи давно развивают свои исследования в этом направлении и есть уже утвержденные теории относительно того, как могут влиять эмоции на познание, поведение и на межсоциальные отношения. Политический дискурс представляет собой интересное пространство для проявления эмоций: политики готовы к любым средствам, чтобы убедить, повлиять, взволновать, чтобы привлечь внимание общества на то или иное явление и факт. Целей много, и есть множество эмоционально-выразительных способов для их достижений.

Nelli Ayvazyan, Linguistic expression of emotions in political discourse - It is especially over the past 20-30 years, that the emotions have become object of research for the linguists, whereas the philosophers, the anthropologists and particularly the psychologists and neuropsychologists develop their researches in this direction for a long time and there are already confirmed theories about the impact that the emotions can have on cognition, behavior and on social relations.

Political discourse is a quite interesting field for expression of emotions: the politicians are ready to use whatever means to convince, to affect and agitate, to attract public attention to any phenomenon and fact. The objects are diverse and the means of emotion, that serve to achieve these objects, are also numerous.

ՆԵՐԱԿԱ ԳՆԱՀԱՏՈՂԱԿԱՆ ԱՍՈՒՅԹՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԽՈՍՔԱՅԻՆ ԱԿՏԵՐ

ՆԱՐԻՆԵ ԳԱՍՊԱՐՑԱՆ

Ուղղակի կարծրացած ասույթներից գատ, գոյություն ունեն խրախուսական նշանակությամբ ակտերի անուղղակի փոխանցման անսահման հնարավորություններ: Ակտն ուղղակի է այն դեպքում, երբ խոսողն ասում է այն, ինչ նա նկատի ունի, օրինակ՝ “You are very beautiful today.” Սակայն, ինչպես նշում է Ջ. Մերլը, միշտ չէ, որ նախադասության իմաստից կարելի է դատել, թե ինչ է ուզում ասել խոսողը: Ակտն անուղղակի է այն դեպքում, երբ մի իլլուկուտիվ ակտն իրականացվում է մեկ այլ իլլուկուտիվ ակտի միջոցով (Серп 1986:196): Անուղղակի խոսքային ակտում առկա են նպատակի անուղղակի արտահայտման որոշակի կայուն ձևեր, այսինքն այնպիսի լեզվական արտահայտություններ, որոնք, պահպանելով իրենց առաջնային ուղղակի նշանակությունը, պարբերաբար կիրառվում են նաև մի երկրորդ նպատակ արտահայտելու համար: Գոյություն ունի անուղղակի խոսքային ակտերի մի մեծ շարք, որոնց իլլուկուտիվ նպատակը քողարկված ձևով է հանդես գալիս և հասցեստիքոջ կողմից դուրս է բերվում նրա հաղորդակցական հմտության և իրազեկության շնորհիվ:

Անուղղակի խոսքային ակտի իլլուկուտիվ մտադրությունը արտաբերված ասույթի լեզվական կառուցվածքի մեջ ուղղակի արտացոլում չի ստանում: Նման ակտում ասույթի գործաբանական իմաստը չի համընկնում նրա բուն՝ իրական իմաստի հետ: Անուղղակի խոսքային ակտը խոսքային բազմիմաստության երևույթ է այն դեպքում, երբ տեղի է ունենում՝ հաջողության էական պայմանի խախտում (Кодошева 1988:39): Այսպիսով, կարելի է գալ այն եզրակացության, որ անուղղակի խոսքային ակտերը ներիմաստ պարունակող ակտեր են: Գնահատողական ասույթը արտահայտում է ռեֆերենցիայի վերաբերության հաղորդակցական նպատակը: Այն իր մեջ ներառում է հասցեստիքոջ գործոնը և կոնկրետ խոսքային ակտի հաղորդակցական նպատակը (Апутьюнова 1984):

Գնահատումը մեծ դեր է խաղում անմիջական հաղորդակցության մեջ, որտեղ, որպես կանոն, շոշափվում են մասնակիցների շահերը: Գնահատումը կարող է ուղղված լինել սեփական անձին և այլ անհատների. դրանով հանդերձ՝ հեղինակային դատողությունը ցանկացած որևէ անհատի կամ իրականության երևույթի մասին ավելի հաճախ չի համընկնում նույն օբյեկտների վերաբերյալ գրուցակցի հայացքների հետ: Դրա համար էլ ընդունված է համարել, որ գնահատումը միշտ սուբյեկտիվ է:

Գնահատողական ասույթի կառուցվածքում առանձնացվում են հետևյալ բաղադրիչները.

1. գնահատման սուբյեկտը (գնահատումը իրականացնող անձը),
2. գնահատման օբյեկտը (այն ամենը, ինչը ենթարկվում է գնահատման՝ առարկան, երևույթը, իրադարձությունը, զգացմունքը, վիճակը և այլն),
3. գնահատման հիմքը (այն տեսակետը, որի միջոցով իրականացվում է գնահատումը),
4. գնահատման բնույթը (գնահատման համար ընտրվող միջոցները) (Болыф 1985):

Այն ասույթները, որոնցում հայտնաբերվում է գնահատողական բաղադրիչ, բավականին տարատեսակ են ոչ միայն ըստ կառուցվածքային, այլ նաև իմաստա-յին բնութագրի: Դրանք կարող են լինել ասույթներ, որոնք անմիջականորեն պարունակում են գնահատողական բառեր (Есенина 1989): Գնահատողական ասույթների մյուս տարածված տեսակը ասույթներն են, որոնք ներառում են բառեր ու արտահայտություններ, որոնք իրենց նշանակության մեջ ունեն ընդունված գնահատողական իմույթ: Ասույթների երրորդ տեսակը չի պարունակում արտակա գնահատողական տարրեր ոչ՝ բառերի տեսքով, ոչ՝ էլ առանձին բառերում իմույթի տեսքով, այնուհանդերձ, գնահատողական նշանակությունը ձևավորվում է կարծրատիպերի հիման վրա, որոնք գոյություն ունեն տվյալ հասարակության համար՝ աշխարհի ընդհանուր պատկերում (Болыф 1985:13): Այսպիսով, գնահատումը կարող է ունենալ ակնհայտ բնույթ՝ արտահայտվել գնահատողական բառերի կամ գնահատողական նշանակությունների տեսքով, ինչպես նաև թաքնված լինել՝ ներակա կերպով կամ ենթագիտակցաբար պարունակվել ասույթներում: Գնահատականը արտահայտվում է ուղղակիորեն, բացահայտ կերպով՝ գնահատողական իմույթի կազմում, ինչպես նաև ոչ բացահայտ կերպով՝ հանդիսանալով որպես նկարագրողական ասույթների ներակա իմաստ (Болыф 1985:16):

Ընդունելի է այն կարծիքը, որ գնահատողականությունը այս կամ այն կերպով առկա է ցանկացած տեքստում: Ըստ Վոլֆի՝ գնահատողական իմաստներն ի հայտ են գալիս այն ժամանակ, երբ գնահատման օբյեկտը ինչ-որ կերպ կապված է մարդու, նրա դեմքի հետ, քանի որ դեմքի ցանկացած հատկանիշ կարող է գնահատական ենթադրել (Болыф 1985:29):

Ներակա գնահատողական տարրեր պարունակող ասույթները ամբողջապես կախված են համատեքստից: Տեղեկատվության հեղինակը՝ հասցեագրողը, կողմնորոշվելով կոնկրետ հասցեատիրոջ հարցում, հույս ունի, որ վերջինս իր հենքային գիտելիքների շնորհիվ ընդունակ է ըմբռնելու այն տեղեկատվությունը, որը չի արտահայտվել բացահայտ՝ արտակա կերպով: Հասցեագրողը կարող է բաց թողնել ինչ-որ մաս, համարելով, որ այդ ներակա տեղեկատվությունը հասկանալի է զրուցակցի համար: Ներակա ասույթները համարվում են հաղորդակցական որոշակի խնդիրների լուծման միջոց:

“You with your smile! One can refuse you nothing. (Bennett A., The Old Wives’ Tale).

Անուղղակի խոսողական ակտերի լայն կիրառությունը բացատրվում է այն հանգամանքով, որ դրանցում պահպանվում են քաղաքավարության կանոնները: Բրաունը և Լեվինսոնը նշում են, որ այդ ակտերում՝ քաղաքավարությունը ռացիոնալ շփումից շեղվելու աղբյուրներից մեկն է, սակայն նման դեպքերում պոստուլատների ազդեցությունը շարունակվում է ավելի խորը մակարդակով. խոսակցը ստիպված է փնտրել ասույթի թաքնված իմաստը՝ ներիմաստը և առկա շեղումների պատճառը՝ (Brown, Levinson 1978:100):

“You’re not going to canvass for Labour, Michael – canvassing’s so silly. If anyone canvasses me, I should vote the other way at once.”

“Yes, darling, but you’re not the average elector.”

Fleur looked at him. Very sweetly put! (Galsworthy J., The Forsyte Saga)

Ներակա ասույթների ուսումնասիրությունը՝ համատեքստի հետ նրանց սերտ կապի մեջ, հիմնվում է Ի.Վ. Արնոլդի և Գ.Վ. Կոլշանսկու կողմից առաջադրված դրույթների վրա: Նրանց կարծիքով՝ ‘ասույթը չի ձևավորվում որպես բառերի և դրանց նշանակությունների պարզ գումար’ (Колшанский 1979:52), տեքստի տարրերը նշանակալի են ոչ միայն իրենք իրենցով, այլ նաև այլ տարրերի հետ դրանց հարաբերությամբ, այդ թվում և տեքստից դուրս տարրերի հետ, որոնք իրենց արտահայտությունը գտնում են խոսքային և ոչ խոսքային մակարդակներում: Նախադասության իմաստն ասույթի իմաստը չէ: Ասույթը զգալիորեն ավելի շատ տեղեկատվություն է տալիս: Ներակա ասույթի նշանակությունը որոշվում է համատեքստով պայմանավորված իրադրությունում, որը սահմանում է հաղորդակցության տեղեկատվական-իմաստային բովանդակությունը: Դրա նշանակությունը որոշվում է խոսողի մտադրությամբ. ‘...գերիշխողը ասույթի բովանդակության համար ամբողջական իմաստն է և ոչ թե մեկ նախադասության մեջ բառերի և բառակապակցությունների ձևավորման ալգորիթմը’ (Колшанский 1979: 153):

Ներակա ասույթների իլլուկուտիվ գործառույթը իրականցվում է միայն որոշակի համատեքստում և բացահայտվում է ասույթների ամբողջական հաղորդակցական շղթայով, որոնցում արտացոլվում է խոսողի մտադրության քայլ առ քայլ կողավորումը, որոնք միննույն ձևով պետք է ապակողավորի լսողը: Համատեքստից անուղղակի խոսողական ակտերի կախվածության աստիճանի մեկնաբանությունը կախված է ելակետային նախադասության նախադրությային բովանդակության մեջ ենթադրվող ներակա ասույթի նախադրությային տարրերի ներկայացվածությունից/ չներկայացվածությունից:

Ըստ ասույթի մեջ դրական գնահատողական իմույթի ներկայացվածության ու դրա անուղղակիության աստիճանի՝ առանձնացնում ենք անուղղակի ակտե-

րի հետևյալ տեսակը. խոսողական ակտեր, որոնք պարունակում են ներակա գնահատողական ասույթներ:

Առանձնացնենք ներակա գնահատման արտահայտման հետևյալ միջոցները.

Ա) Նկարագրողականություն: Որոշ նկարագրողական ածականներ, օրինակ՝ big, thin, little, new և այլն արտահայտություններում կարող են ձեռք բերել գնահատողական իմաստ՝ thin body, new ring, little creature, big eyes: Համատեքստից դուրս, առանձին վերցրած, նշված ածականները մնում են նկարագրողական, սակայն ասույթներում հանդես են գալիս գնահատողական իմաստով՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն կորցնելով իրենց դեմոտատիվ՝ իրական իմաստը և ասույթին հաղորդելով հուզականություն ու արտահայտչականություն.

1. “You are a very brave little woman” (Mitchel M., Gone with the Wind).

2. “I love your dark hair, your dark, dark eyes, your lips, so full, your skin, so smooth” (Graham M., A Fragment of Time).

Ինչպես տեսնում ենք վերջին օրինակից, նույնիսկ գունային երանգներ արտահայտող ածականները կարող են գնահատողական իմաստ ունենալ:

Հաջորդ օրինակում գնահատականը վերաբերում է տղամարդու ձեռքերին, որտեղ red ածականը ձեռք է բերել դրական գնահատողական իմաստ: Այն վկայում է տղամարդու ձեռքերի ուժի, առողջության մասին:

“They are beautiful. Big, red and brutal” (Braine J., Room at the Top).

Բ) Փոխաբերականություն և համեմատականություն. Փոխաբերություններն ասույթին տալիս են հուզական-գնահատողական ներիմաստ և կարևոր դեր ունեն խոսողի հաղորդակցական նպատակների իրականացման գործում:

Հետևյալ օրինակը դրա վառ ապացույցն է.

“Would it please you if I said that your eyes were twin goldfish bowls filled to the brim with the clearest green water and that when the fish swim to the top, as they are doing now, you are devilishly charming?” (Mitchel M., Gone with the Wind).

Ըստ Վոլֆի բավականին արտահատված գնահատողական իմաստ ունեն կենդանիների անուններ պարունակող փոխաբերությունները (Волф 1985)

1. “Thou art a very pleasant little rabbit” (Hemingway J., For Whom the Bell Tolls).

2. “You are such a swan in this light” (Fitzgerald F. Scott, Selected Short Stories).

Բնությունը միշտ համարվել է հրաշալի փոխաբերական համակցությունների ստեղծման անսպառ աղբյուր: Օրինակ՝

1. “You look perfectly lovely, Paula. Like a bit of spring sky” (Taylor Bradford B., A Woman of Substance).

2. “You are so beautiful and sweet that I can hardly believe it. You make me think of spring flower” (Braine J., Room at the Top).

Գնահատողական ասույթներ պարունակող փոխաբերությունները կարող են նաև վերաբերել թանկարժեք քարերի՝

Apollodorus: Cleopatra grows more womanly beautiful from week to week.

Cleopatra: Truth, Apollodorus?

Apollodorus: Friend Rufio threw a pearl into the sea. Caesar fished up a diamond (Shaw B., Caesar and Cleopatra).

Գ) Անձնանունների կիրառում. Ներակա գնահատում արտահայտելու համար հաճախ օգտագործվում են անձնանուններ՝ հայտնի մարդկանց անուններ պարունակող ասույթներ: Այս դեպքում ստեղծվում է դրական ազդեցություն, որը հիմնվում է անձնանունների գնահատողական հարուստ ներիմաստների վրա.

“You were fantastic. A hundred-million-times better than Elvis Prestley or Cliff Richard” (Sheringham S., Cockoo in the Nest).

Դ) Շրջասություն. Ներակա գնահատում արտահայտելու միջոցներից է նաև շրջասությունը, որը ավելի արտահայտիչ է դարձնում ասույթը՝

“Time has stood still with you” (Shaw B., The Man of Destiny).

Այս ասույթով հասցեագրողը ցանկանում է արտահայտել իր հիացմունքը հասցեատիրոջ նկատմամբ: Նա կարող էր գնահատել խոսակցի երտասարդ տեսքը You are young արտակա ասույթով:

Այսպիսով, գնահատումը ասույթներում կարող է արտահայտվել ներակա կերպով: Նրա ճիշտ ըմբռնումը պահանջում է համատեքստի, ինչպես նաև դեպքերի ու փաստերի լրացուցիչ վերլուծություն: Ասույթի ներակա կամ արտակա գնահատման ընտրությունը կախված է ոչ միայն սոցիալ-հոգեբանական, զգացմունքային գործոններից, այլ նաև խոսողի հաղորդակցական նպատակներից:

Գրականության ցանկ

1. Brown P., Levinson S. Universals in Language Usage: Politeness Phenomena // Questions and Politeness / Ed. by E.N. Goody. Cambridge: Cambridge University Press, 1978, p. 56-310

2. Арутюнова Н. Д. Аксиология в механизмах жизни и языка / Н. Д. Арутюнова // Проблемы структурной лингвистики. М.: Наука, 1984, с.5-23

3. Вольф Е.М. Функциональная семантика оценки. М.: Наука, 1985, 279 с.

4. Есенина О.А. О некоторых конструкциях экспрессивной оценки в современном английском языке. М.: Московский государственный педагогический институт. Деп.в ИНИОН РАН 4.01.90, № 40707.1989.

5. Кобозева И.М. Русские модальные частицы и их согласование с иллокутивной функцией высказывания // Linguistische Arbeitsberichte, B. 70, 1988, 38-47с.

6. Колшанский Г. В. Проблемы коммуникативной лингвистики //Вопр. языкозн., №6, 1979, с 51-62.

7. Падучева Е.В. Высказывание и его отношение к действительности. М Наука, 1985, 271 с.

8. Серль Дж. Р. Косвенные речевые акты / Дж.Р. Серль // Новое в зарубежной лингвистике. - Вып.17: Теория речевых актов. М.: Прогресс, 1986, с.195-222.

Բանալի բառեր - գնահատում, ներակա, անուղղակի, խոսքային ակտ, գնահատողական ասույթ, ներհմաստ, հաղորդակցական նպատակ, համատեքստ

Նարինե Գասպարյան, Ներակա գնահատողական ասույթներ պարունակող խոսքային ակտեր - Հոդվածը նվիրված է ներակա գնահատողական ասույթներ պարունակող խոսքային ակտերի ուսումնասիրությանը: Գնահատումը կարող է ունենալ ակնհայտ բնույթ՝ արտահայտվել բացահայտ կերպով գնահատողական բառերի տեսքով, ինչպես նաև թաքնված լինել՝ ներակա կերպով, այսինքն ոչ բացահայտ կերպով կամ ենթագիտակցաբար պարունակվել ասույթներում՝ հանդիսանալով որպես նկարագրողական ասույթների ներակա իմաստ: Ներակա ասույթների իլլոկուտիվ գործառույթը իրականացվում է միայն որոշակի համատեքստում և բացահայտվում է ասույթների ամբողջական հաղորդակցական շղթայով: Ասույթի ներակա կամ արտակա գնահատման ընտրությունը կախված է ոչ միայն սոցիալ-հոգեբանական, այլ նաև խոսողի հաղորդակցական նպատակներից: Հոդվածում առանձնացրել ենք ներակա գնահատման արտահայտման մի շարք միջոցներ:

Нарине Гаспарян, Речевые акты содержащие имплицитные оценочные высказывания - Статья посвящена изучению речевых актов содержащие имплицитные оценочные высказывания. Оценка может носить экцплицитный характер, выражаясь эксплицитно, с помощью оценочных слов, а также имплицитно, то есть скрыто, с помощью оценочных высказывании, включающих скрытный смысл. Имплицитные оценочные высказывания не обладают четко обозначенной коммуникативной интенцией, автор придаёт им дополнительный смысл. Иллокутивная функция имплицитных высказывании реализуется только в определенном контексте и выявляется только в коммуникативной цепи этих высказывании. Выбор эксплицитности или имплицитности высказывания зависит не только от социально-психологических факторов, но и от коммуникативных целей говорящего. В статье нами выделены несколько способов имплицитного выражения оценки.

Narine Gasparyan, Speech acts conveying implicit evaluative utterances - The article is devoted to the study of speech acts conveying implicit utterances. The term “indirect speech act” is used to name every utterance that conveys its illocutionary force in an implicit way. The paper discusses implicit evaluative utterances as types of

indirect encouraging acts. Implicit evaluative utterances do not have clearly explicated communicative intention, the author assigns them some additional meaning or illocutionary force to fulfill his/her communicative intention. In indirect speech acts the basic illocutionary force is neutralized by the secondary illocutionary force. Basic illocutionary force turns out inadequate for the communicative situation, which makes the listener seek for and decode the true meaning of the utterance. In the article we have discussed several ways of implicit evaluation.

L'EXPRESSION DES ACTES DE REMERCIEMENT DANS LE FRANÇAIS

SVÉTA OHANIAN

Le remerciement est un acte par lequel un locuteur accuse réception d'un «cadeau» quelconque, en témoignant de sa reconnaissance envers le responsable de ce cadeau.

«Parmi les comportements verbaux qui sont susceptibles d'entraîner une réaction de remerciement, mentionnons:

- les expressions vatives:

Bon appétit!-Merci.

- les compliments:

Tu as drôlement bonne mine!-Merci!

- l'apport d'une information utile:

Quelle heure est-il?-Deux heures-Merci!,¹

Ainsi que certaines questions, valorisantes pour le destinataire en ce qu'elle manifeste une certaine sollicitude de locuteur à son égard:

Ça s'est bien passé cet examen?-Très bien, merci.

Il arrive qu'un participant hésite sur la question de savoir s'il y a vraiment eu offense ou cadeau, donc s'il est opportun de s'excuser ou de remercier.

Le remerciement ici pèse sur le cadeau, en particulier lorsqu'il accompagne une requête:

Par ex.:

- en fin de lettre, après la formulation de la requête:

En vous remerciant par avance...

- dans la structure: merci de + infinitif, le remerciement

précédant lors de la formulation de la requête:

Merci de vous patienter quelques instants.

Les formules de remerciement peuvent dans certaines circonstances être le point de départ d'un mécanisme de dérivation illocutoire. Ces valeurs indirectes peuvent être mises en relation avec telle ou telle des conditions de réussite du remerciement.

- Dans le cas de la requête indirecte: condition voulant que pour que l'excuse ou le remerciement soient justifiés, il faut que se réalise une offense ou un cadeau.
- Dans le cas du congédiement indirect: condition de placement dans l'interaction.

¹Searle J. R., Les actes de langage, Paris, Hermann, 1972, p. 29

Si les formules de remerciement peuvent dans certaines circonstances être utilisées pour réaliser un autre acte de langage, à l'inverse, l'acte de remerciement peut s'effectuer indirectement par le biais d'autres types d'énoncés.

«L'excuse et le remerciement appellent souvent une réaction. Ces deux actes constituent donc le noyau central d'une séquence constituée de trois éléments:

offense - excuse - réaction à l'excuse

cadeau - remerciement - réaction au remerciement"¹

Les réalisations de l'excuse et du remerciement les pragmaticiens anglo-saxons appellent «speech act set» l'ensemble des formules et structures qui permettent de réaliser un même acte de langage. S'agissant de l'excuse et du remerciement, cet ensemble est remarquablement fourni: outre les formulations indirectes plus ou moins conventionnelles.

Le remerciement peut se réaliser à travers diverses tournures assertives, dont les plus conventionnellement utilisées sont les suivantes:

- assertion focalisée sur le remerciement: expression d'un sentiment approprié (gratitude, plaisir, joie...)

Par ex.:

- Madame, vous avez été pour moi plus qu'une mère et je n'aurais jamais assez de mots pour **vous exprimer ma reconnaissance**, mon affection pour vous et pour vos fils... (G.-Magitot)

- assertion focalisée sur le remercié: éloge.

Par ex.:

- **Merci, vous êtes bonne**, disait Genevieve: Ah, je ne suis pas grosse, n'est-ce pas? (Zola).

Remerciement performatif:

Je te/vous remercie

Par ex.:

- Monsieur, je ne puis pas... **Je vous remercie** de tout de même, mais j'ai trouvé ailleurs (Zola).

ou elliptique:

Merci!

Par ex.:

- Je dissimulement «Grand bien te fasse»! dit George.
- **Merci!** (Heinesen).

¹Kerbrat-Orecchioni C., Les interactions verbales, Paris, A. Colin, 1993, p. 131

Toutes les formes de l'hyperbole sont exploitées par le remerciement: elle peut s'appliquer aux formulations explicites aussi bien qu'implicites:

- les formules explicites:

Un grand merci pour...

Merci beaucoup/mille fois/ infiniment

Je ne pourrai jamais vous remercier assez etc.

Par ex.:

- **Grand merci pour** l'argent, Kristan! dit-elle.

- Tu n'as rien à me remercier, Anna! répondit-elle (Heinesen).

- Les formules implicites:

Vous ne pouvez pas savoir à quel point je suis ravi/je suis aux anges

C'est vraiment délicieux/ superbe/ extra

Tu es vraiment adorable/ un ange/ un amour etc.

Il existe aussi d'autres formules du remerciement, c'est un échange de bénédictions-salutations:

Que Dieu te garde!

Que Dieu te donne la santé

Dieu merci etc

Par ex.:

- Ah! **Dieu merci!** Murmura Mouret, vous êtes mieux ce matin, seulement ce sont encore ces diables de mères! (Zola)

et bénédiction – remerciement:

Dieu vous garde

Dieu soit loué

Que la bénédiction de Dieu soit sur vous

La paix soit avec toi

Que Dieu te protège

Que tu aies ma bénédiction (vœu- remerciement utilisé par les personnes âgées envers les plus jeunes) etc.

Comme nous avons déjà dit, théoriquement la réaction peut être négative ou positive. Mais il convient d'abord de signaler que cette distinction ne repose qu'en partie sur la structure grammaticale de l'enchaînement à laquelle on ne peut pas toujours se fier.

«Réaction négative: un enchaînement négatif ni l'existence préalable d'une offense et d'un cadeau et met en cause l'opportunité du remerciement.

Par ex.:

Je voulais te remercier pour ce délicieux repas- **Mais non**, c'est Lucie qui a tout préparé!

Réaction positive: la réaction positive du remerciement peut prendre la forme d'un «*Je vous en prie*» (formule par laquelle le locuteur déclare avoir effectué de bon cœur, étant au service d'autrui, l'action bienfaisante), ou quand la situation s'y prête, celle d'un renvoi du remerciement (*Merci à vous*-variante québécoise: *Merci pareillement*). Mais la réalisation la plus commune de la réaction au remerciement consiste, comme pour l'excuse, en une minimisation, voire une dénégation du cadeau pour lequel on est remercié.

Mais c'est bien normal/ c'est la moindre des choses

Ben pas de grand-chose

*C'en est rien / de rien / y a pas de quoi etc.*¹

Ainsi nous avons étudié que le remerciement, comme l'excuse, se réalise explicitement et implicitement. Ce tacte aussi peut être négatif et positif. Il est à noter que la réaction négative au remerciement semble encore plus rare que la réaction négative à l'excuse

Littérature

a. Kerbrat-Orecchioni C., Les interactions verbales, Paris, A. Colin, 1993

b. Searle J. R., Les actes de langage, Paris, Hermann, 1972

c. Austin J. L., Quand dire, c'est faire, Paris, Seuil, 1962

Mots-clés-remerciement, offense, requête, compliment, excuse.

Sveta Ohanian- L'expression des actes de remerciement dans le français- Dans cet article on analyse les actes de remerciement dans le français. L'excuse et le remerciement appellent souvent une réaction. Ces deux actes constituent donc le noyau central d'une séquence constituée de trois éléments:

offense - excuse - réaction à l'excuse

cadeau - remerciement - réaction au remerciement

Սվետա Օհանյան, Շնորհակալություն հայտնելու արտահայտման ձևերը- Սույն հոդվածում վերեն լուծվում շնորհակալություն հայտնելու արտահայտման տարբեր ձևերը ֆրանսերենում: Շնորհակալություն կարող ենք հայտնել խոսողի խնդրանքից կամ պահանջից առաջ կամ հետո: Ներողություն խնդրելը և շնորհակալություն հայտնելը հաճախ առաջ են բերում տարատեսակ արձագանքներ ունկնդրի մոտ, հետևապես կարող ենք ունենալ հետևյալ սխեմատիկ պատկերը.

Վիրավորանք-ներողություն-ներողությանը հաջորդող արձագանք

¹Austin J. L., Quand dire, c'est faire, Paris, Seuil, 1962, p. 47

Հաճոյախոսություն-շնորհակալություն-շնորհակալությանը հաջորդող արձագանք:

Sveta Ohanyan, Means of speech acts of gratitude in French - In this article different means of expressing gratitude are analyzed. Gratitude may be expressed before and after request. Expressing excuse and gratitude sometimes may arise different reaction to the interlocuter. Thus there may be the following semantic structure:

Offense- excuse- the reaction of the interlocuter following the excuse.

Compliment-excuse-the reaction of the interlocuter following the gratitude.

ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՄԻՋԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԾԱՏՏՐՅԱՆ

Քաղաքական տեխնոլոգիաներ ուսումնասիրողների և քաղաքական խորհրդատվության մասնագետների համար կարևոր բաղադրիչներից մեկը քաղաքական իմիջի (անգլերեն՝ political image) ստեղծում է, ինչը հնարավորություն է տալիս զարգացնել նախապես լավ մշակված մարտավարական ծրագիրը՝ օգնելով քաղաքական գործիչներին հաղթանակի հասնել ընտրությունների արդյունքում: Ընտրությունների արդյունքի վրա քաղաքական իմիջն ազդեցություն ունենում է, քանի որ ընտրողները մեծապես առաջնորդվում են ոչ այնքան քաղաքական գործչի կամ կուսակցությունների ներկայացրած նախընտրական ծրագրով, որքան նրանց շուրջ ստեղծված քաղաքական իմիջի արդյունքում:

Հարկ է առանձնացնել, որ քաղաքական իմիջը ներկայացվում է որպես դրական կամ էլ նույնիսկ բացասական վերաբերմունք քաղաքականության, քաղաքական ծրագրի կամ կուսակցության դեկավարի վերաբերյալ, որը հաճախ քաղաքական կուսակցությունները ստեղծում են իրենց ընտրողների շրջանում: Քաղաքական իմիջ եզրույթն առաջին անգամ օգտագործվել է 20-րդ դարում անգլիացի քաղաքագետ Գրեհեմ Վոլեսի կողմից: Վերջինս մարդկանց կոլեկտիվ և զանգվածային պահվածքն ուսումնասիրելուց հետո ապացուցել էր, որ ընտրողների միտքը նման է «դանդաղեցված ֆոտոժապավենի»¹. այն արտացոլում է ավելի շուտ համընդհանուր ու երկարատև ընկալում, դիրքորոշում և գնահատական տվյալ քաղաքական գործչի, կուսակցության ու ծրագրի մասին, քան թե դրսևորում է իրատեսական մոտեցում քաղաքականության մեջ միայնաց հետ պայքարող կուսակցությունների նկատմամբ¹:

Գրեհեմ Վոլեսի կատարած «Մարդու բնույթը քաղաքականության մեջ» հետազոտության արդյունքում քաղաքական իմիջ եզրույթն սկսվեց լայնորեն օգտագործվել ընտրողների վարքը հետազոտելու ժամանակ, և եզրույթը վերագրվեց այն քաղաքական ակտորներին, որոնք զանազան միջոցների կիրառմամբ գիտակցաբար գնում են իրենց բնորոշող իմիջի ձևավորմանը, այդ թվում, մասնագիտակցված կազմակերպությունների միջոցով գովազդ են պատվիրում: Այսօր քաղաքական գովազդն ամենուր է, հիմնականում հեռարձակվում է հեռուստա-

¹ *Wallas G., Human Nature in Politics, London School of Economics and Political Science, Clare Market, London, W.C., 1909, pp. 11-18*

տեսությամբ, տեղադրվում է համացանցում կամ հայտնվում է հանրային վայրերում՝ խոշոր պաստառների տեսքով: Քաղաքական ուժերը համագործակցում են PR գործակալությունների հետ՝ ակնկալելով դրական վերաբերմունքի կամ ճանաչման հասնել հասարակության շրջանում:

Քաղաքագիտական բառարաններում իմիջը (անգլերեն՝ image) ներկայացվում է որպես քաղաքական ղեկավարի, առաջնորդի, գործչի, կուսակցության ինքնատիպ տեսակ, որը տեղավորվում է հանրության մեջ որպես կարծիք և գիտակցություն՝ ազդելով վերջինիս հեղինակության և ազդեցության, ինչպես նաև վարկանիշի ձևավորմանը: Քաղաքական իմիջը կարող է ձևավորվել անհատի (կամ խմբի) կողմից, կամ էլ հատուկ միջոցների օժանդակությամբ տարբերաբուն, առանց ինչ-որ ուժեր ու ջանքեր գործադրելու, որոնք առկա են իմիջի ձևավորմամբ զբաղվող մասնագետների (իմիջմեյքերների) զինանոցում: Քաղաքական իմիջը հասարակական կարծիքի ինքնատիպ արտահայտումն է տարբեր ոլորտներում՝ թե՛ ռացիոնալ (ինչ-որ ծրագրի, ելույթի, կամ գուցե փաստարկվածության ազդեցությամբ), թե՛ էմոցիոնալ ֆոնի (ինչքանով է կարողանում քաղաքական ղեկավարը (խումբը) մոբիլիզացնել հասարակության հոգեբանական մոտիվացիան), թե՛ զգայական համակարգի միջոցով (արտաքին տեսք, վարվելաձև, պահվածք)¹:

Ի՞նչ դեր ունի այսօր հեռուստատեսությունը քաղաքական իմիջի կերտման հարցում: Այս հարցի պատասխանը ձևակերպելն ամեննին հեշտ գործ չէ: Հեռուստատեսության դերը քաղաքական իմիջի ձևավորման գործում քննարկվել է բազում տեսաբանների կողմից ու մինչև այսօր էլ շարունակում է գիտական հետաքրքրություն ներկայացնել:

Խնդիրն առօրեական է այժմ, քանի որ էլեկտրոնային (առցանց) տեղեկատվամիջոցների արագ աճը կարող է ստվեր նետել հեռուստատեսության մինչև այսօր ունեցած կարևոր, առանձնահատուկ դերին, որը տասնյակ տարիներ շարունակ ձևավորվել ու մշակվել է հանրահայտ իմիջմեյքերների կողմից: Անգամ խիստ հատուկ ուշադրություն է դարձվում կադրին, որում հայտնվում է քաղաքական գործիչը:

Որպես կանոն, քաղաքական իմիջն ընդհանուր և ամբողջական առումով ամբողջովին համապատասխանում է տվյալ հասարակության մեջ առկա առաջնահերթ կարիքներին ու պահանջներին՝ ներկայացնելով երկրի բնակչությանը քաղաքական գործչի կարևոր դերակատարումը և ընդգծելով անհատականությունը: Ամենից հաճախ քաղաքական իմիջը ձևավորելու գործառույթն իրենց ուսերին են կրում ՁԼՄ-ները (20-րդ դարի կեսից այդ առաքելությունն իրականաց-

¹ Коновалов В.Н., Политология. Словарь, РГУ, 2010г.

նում է բացառապես հեռուստատեսությունը¹⁾, որոնց շնորհիվ ստեղծված իմիջը հետագայում ավելի ամրանա հասարակության մեջ և ներխուժի նրա գիտակցության մեջ:

Քաղաքական տեխնոլոգիաների գործիքակազմում կարևոր դեր ունեցող քաղաքական իմիջը միատեսակ չէ: Քաղաքական իմիջմեյքերները ստեղծվում են հասարակական գիտակցության մեջ ներթափանցելու համար կերպարներ, որոնք տարբեր են, հաճախ էլ կախված են կոնկրետ քաղաքական իրադրությունից: Քաղաքական գործիչը կարող է հանդես գալ որպես «ամբոխից մեկը», «ինտելեկտուալ», «ապստամբ», «ամուր մարտիկ», «հզոր տանտեր», «գործնական-պրոֆեսիոնալ», «սովորեցնող»: Այս բոլոր տեսակները փոփոխական են և ավելի հաճախ հանդես են գալիս ոչ որպես մաքուր ձևեր (ավելի հաճախ խառը տիպի են լինում. քաղաքական գործիչը կարող է ունենալ երկու և ավելի տիպի իմիջ, որոնք ոչ թե իրար հակասող են, այլ փոխլրացնող):

Եթե նախորդ դարում հեռուստատեսությունը փոխեց մարդկանց պատկերացումները ինֆորմացիայի մատուցման առումով, ապա 21-րդ դարում հեռուստատեսության դերի հակիրճ քննությունը թույլ է տալիս հասկանալ, որ ընտրությունների ժամանակ և դրան նախորդած ժամանակահատվածում այն անմիջական ազդեցություն ունի քաղաքական իմիջի ստեղծման համատեքստում, չէ՞ որ այսօր հեռուստացույցներ կան գրեթե բոլորի բնակարաններում: Բայց արդյո՞ք միայն հեռուստատեսությունն ունի քաղաքական իմիջ ձևավորելու մենաշնորհ:

20-րդ դարում հեռուստատեսության արագ զարգացումը թույլ տվեց, որ ԱՄՆ-ում մի շարք երիտասարդ քաղաքական գործիչներ հասնեն իրենց քաղաքական կարիերայի գագաթնակետին՝ զբաղեցնելով բարձր պաշտոններ: Այդ ամենի պատճառը մեկն էր. հեռուստատեսությունը մեծապես խթանում էր քաղաքական գործչի իմիջի արագ ձևավորմանը՝ օգնելով հավելյալ քվեներ ստանալ քաղաքացիներից:

Պոտենցիալ քաղաքական թեկնածուները գրեթե ամեն օր հարցազրույցներ էին տալիս՝ փորձելով հնարավորինս մոտ գտնվել հանրությանը՝ պոտենցիալ ընտրողին: 20-րդ դարի մարդուն հեռուստատեսությունը ցույց տվեց, որ քաղաքական գործիչները ևս իրենց պես մարդիկ են՝ աշխատող և արարող: Վաղուց ապացուցված է, որ պատկերի և ձայնի համադրությունն ավելի է զրավում մարդուն, օգնում վերջինիս առավել լավ հասկանալ զրուցակցին, իսկ հեռուստատեսությունը 20-րդ դարում տեղեկատվադաշտ մտավ ունենալով հենց այդ առանձնահատկությունը: Թեկնածուների կողմից ընտրողի՝ հանրության հասցեին հե-

¹ Keating J.P., Latané B., Politicians on TV: The Image Is the Message, Journal of Social Issues, №32, 1976, pp. 116-132

ռուստատեսության միջոցով ուղարկված կարևոր ուղերձները, հաղորդագրությունները դարձան առավել դյուրին կալ¹:

Քաղաքական գործչի (խմբերի) իմիջի ձևավորման կարևորությունն առաջանում է հատկապես նախընտրական քարոզարշավի ժամանակաշրջանում: Դա մեծապես բնորոշ է այն հասարակություններին, որտեղ կա քաղաքական մշակույթ՝ ուղղված բնականոն, զգացական-էմոցիոնալ գիտակցության և քաղաքական իմիջի կրողի սուբյեկտիվ հատկությունների վրա, որն ուղղված է քաղաքացուն:

Քաղաքական իմիջը կարող է իրապես համապատասխանել քաղաքական գործչի (խմբի) ներքին բովանդակությանը կամ լինել դիմակավորված որակների և գծերի միասնություն, որոնք հրապարակայնության ու գովազդի կարիք այլևս չունեն: Քաղաքական իմիջի տեսաբան Մյուրեյ Էդելմանը պնդում է, որ առավել կարևոր է բնական իմիջը, որն ի ծնե տրված է մարդուն, իսկ արհեստականը կարող է մի օր բացահայտվել, ինչը կբերի քաղաքական գործչի կարիերայի ավարտին²:

Քաղաքական իմիջի ստեղծման և զանգվածային գիտակցության մեջ գործադրման իրողությունը հիմնականում ենթարկվում է քաղաքական գովազդի արդի կանոններին, համաձայն որի՝ այն ուղղված է քաղաքական գործչի (խմբի) հանրային հայտնիության ձեռքբերմանը: Քաղաքական իմիջի ստեղծումն ունի մի շարք նպատակներ.

ա) օգնել ընտրական գործընթացներում իմիջ կրողին հասնելու հաղթանակի,

բ) սեփական ծրագրի իրականացման համար ստանալ հանրության աջակցությունը,

գ) հասարակության համախմբմամբ հասնել սոցիալական խնդիրների լուծմանը³:

Քաղաքական տեխնոլոգիաների մասնագետներն իմիջը ձևավորում են ոչ թե մարդուն վերափոխելու միջոցով, ով հանդես է գալիս որպես նախընտրական թեկնածու, այլ այդ մարդու մասին հանրային պատկերացումները «ճիշտ հունի մեջ դնելն» են կիրառում: Այդ նպատակին հասնելու առաջնահերթ ու կարևոր գործիք առաջին հերթին ի հայտ է գալիս հեռուստատեսություն դերը:

Վերոնշյալ պատկերացումների ձևավորման համար առաջին հերթին թեկնածուին օգնության է գալիս հեռուստատեսությունը, որը, ինչպես հայտնի է, կարող է պատկերի միջոցով «հրաշքներ» գործել: Այս դեպքում տեղեկատվամիջոցի հենց

¹ Տե՛ս նույն տեղում:

² *Edelman M.*, From Art to Politics: How Artistic Creations Shape Political Conceptions, University of Chicago Press, 1996, pp. 15-34

³ *Андреевский В.*, Политический имидж кандидата, Psyfactor.org, հրապարակվել է՝ հունվարի 28, 2008թ., հասանելի է՝ [<http://psyfactor.org/lib/image2.htm>]

այս տեսակն առավել արդյունավետ է դառնում, քան բուն թեկնածուն: Եթե պետք է հաղթել գալիք ընտրություններում, ապա հարկավոր է դառնալ, իրոք, կա՛մ միֆի կրող, կա՛մ լեգենդ: Հեռուստատեսությունն էլ կարճ ժամանակում կարող է ձևավորել ցանկացած միֆ: Համաշխարհային քաղաքականության հարուստ փորձը ցույց է տվել, որ ավելի հաճախ ընտրությունների ժամանակ հաղթել է ոչ թե բուն թեկնածուն, այլ նրա մասին ստեղծված միֆը, որը մարդկանց, տվյալ պարագայում ընտրողի գիտակցության մեջ տվյալ անհատի հզոր արտացոլանքն է¹:

Ժամանակակից տեսաբան Գեորգի Պոչեպցովը գտնում է, որ հեռուստատեսությունը արդեն իսկ կրթել է մի քանի սերունդների, և ներկայիս հանրության մտածելակերպը զգալիորեն տարբերվում է մինչհեռուստատեսային դարաշրջանի մարդկանց ունեցած պատկերացումներից ու հայացքներից:

«Շատերի համար հեռուստատեսությունը վաղուց գուցե լավ բիզնես է, ոմանց համար զվարճանքի աղբյուր, իսկ մյուսների համար աշխատանքի հիմնական թիրախ: Այսօր հեռուստատեսությունն իրականացնում է հստակ քաղաքական, սոցիալական, անգամ ռազմական առաջադրանքներ», - պնդում է Գ. Պոչեպցովը²:

20-րդ դարի վերջինում և արդեն 21-րդ դարում հեռուստատեսությունն այնքան խորն է ներթափանցել հանրային կյանքի մեջ, որ իրադարձությունները կարող են անտեսվել ու չհամարվել իրադարձություն, եթե դրանք չեն լուսաբանվում հեռուստատեսության կողմից: Ցանկացած քաղաքական գործիչ (խումբ) ամեն բան անում է իր վրա սևեռելու հեռուստատեսության ուշադրությունը, քանի որ հանրայնությունն այսօր մարդկանց կյանքի բաղկացուցիչ մասն է³:

2001 թ-ի սեպտեմբերի 11-ը ևս մեկ անգամ ապացուցեց, որ հեռուստատեսությունը ոչ թե սոսկ իրադարձությունների լուսաբանողն է, այլ ինքն է ստեղծում իրադարձությունը: Սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում ստեղծվեց Ուսամա Բեն Լադեն միջազգային ահաբեկիչը, ում իմիջը, մեղմ ասած, նախևառաջ հեռուստատեսային լուրերի և հեռարձակումների արդյունքում ձևավորվեց: Հանրային գիտակցության մեջ նա մտավ հեռուստատեսային թոք-շոունների և լրատվական թողարկումների միջոցով: Մարդիկ նրան ճանաչում էին միմիայն հեռուստատեսությամբ: Ահա և 21-րդ դարի հեռուստատեսությունը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ պարզ է դառնում, թե ինչու են քաղաքական գործիչները մշտապես ձգտում դեպի հեռուստատեսությունը, որը ստեղծում է ոչ միայն իրական, այլ նաև անիրական իրականություն, որքան էլ որ այս միտքը պարադոքսալ կհնչի: Բերենք մեկ շատ պարզ օրինակ, առավել լավ հասկանալու քաղաքական իմիջի ստեղծման հեռուստատեսային բանաձևը: Ուկրաինայի

¹ Տե՛ս նույն տեղում:

² *Почепцов Г.Г., Чукут С.А., Информационная политика, Телевидение в системе социальных коммуникаций общества*, հասանելի է՝ https://uchebnikionline.com/politologia/informatsiyna_politika_-_pocheptsov_gg/tebachennya_sistemi_sotsialnih_komunikatsiy_suspilstva.htm

³ Տե՛ս նույն տեղում:

նախկին վարչապետ Յուլիա Տիմոշենկոն հետաքրքիր քաղաքական իմիջ ունի. այդ մասին անգամ Ուկրաինայից դուրս գիտեն: Դարասկզբին՝ 2001 թ-ին Տիմոշենկոն վառ շեկ իր ազգային ծամը որոշեց ամբողջովին փոփոխել: Ոճային փոփոխություններին լրացրին նաև ճաշակով ընտրված տոնական կոստյումները, որոնք հաճախ պատվերով էին կարվում, ունեին բաց գույն ու հաճախ ընդգրկում էին ազգային տարրեր: Այս նոր կերպարը շատ արագ մտավ հանրային գիտակցության մեջ: Հետագա տարիներին հանրությունն ընտրությունների գնալիս լավ «հիշում էր» ազգային ոճի կրող քաղաքական գործչին և քվեարկում էր նրա օգտին իբրև ազգային քաղաքական գործչի: Չնայած իր քաղաքական հաջողություններին՝ 2010 թ-ին Յ. Տիմոշենկոն անսպասելի փոխեց իր մազերի ոճը՝ ծամը պտտելով գլխին: Սա իր ազդեցությունն ունեցավ: Շատ հեռուստաընկերություններ անվճար ժամանակ գտան անդրադառնալու Տիմոշենկոյին, շատերն իրենց «փորձագիտական» տեսակետներն առաջ բերեցին այսպիսի փոփոխությանը: Ումանք էլ սկսեցին «փնտրել» նարնջագույն հեղափոխության գլխավոր խորհրդանիշներից մեկին: Ու եթե նախկինում պետք էր ֆինանսական հսկայական միջոցներ ծախսել համապատասխան քաղաքական գովազդ պատվիրելու համար, ապա այս քայլն ապահովեց անվճար հանրայնացում:

Քաղաքական տեխնոլոգիաների կիրառման գործընթացում հեռուստատեսության դերը կարևորում է ևս մեկ արևմտյան տեսաբան՝ Քենեթ Է. Բոլդինգը: Վերջինս գտնում է, որ քաղաքական իմիջի ձևավորումը և զարգացումը հեռուստատեսությամբ առավել արագ է ընթանում ու ավելի մեծ հնարավորություններ է ստեղծում քաղաքական գործիչների համար: Հեռուստատեսությունը թույլ է տալիս քաղաքական գործչին առավել հանրային կերպարներ ձևեղել և փոխել ու հայտնի դառնալ: «Հեռուստատեսությունը հանդես է գալիս որպես հանրային կարծիք ձևավորող ու քաղաքական օրակարգ թելադրող մեխանիզմ: Քաղաքական իմիջը հենց հեռուստատեսությունն էլ ստեղծում է», - գրել էր Քենեթ Է. Բոլդինգը դեռևս 1960-ական թվականներին¹:

Քաղաքական իմիջի ձևավորման գործընթացում մեծ դերակատարում ունեն այնպիսի գործոնները, ինչպիսիք են քաղաքական գործչի արտաքին տեսքը, հստակ ու կիրթ վարվելաձևը, վստահությունը, խոսելու՝ հոետորական արվեստին արհեստավարժ տիրապետումը, ինչպես նաև խարիզմայի առկայությունը: Վերոնշյալ տվյալների առկայությունը ստեղծում է քաղաքական գործչի մարտավարական կերպար, որի հետ աշխատանքը սկսվում է գործնական հագուստի ընտրությունից մինչև անգամ գործչի համբավին համապատասխան հեռուստաընկերության նախապատվություն:

¹ Boulding K.E., The Image: Knowledge in Life and Society, University of Michigan Press, 1961, pp. 97-117.

Ի վերջո, այսօր առաջատար հեռուստաընկերությունները կարող են առավել արագ քաղաքական իմիջ ստեղծել, քան ցանկացած այլ տեղեկատվամիջոց՝ տպագիր մամուլ, ռադիո (իսկ համացանցի մասին մինչև այժմ որոշակի վերապահում կա, քանի որ այն դեռևս շատերի համար վստահելիության համբավ ձեռք չի բերել): Հեռուստատեսության թանկ «ծառայություններից» այսօր շատերն են օգտվում, իսկ քաղաքական գործիչները հեռուստատեսությունը ծառայեցնում են սեփական քաղաքական իմիջի կերտմանը:

Փորձելով ամբողջացնել հեռուստատեսության դերի վերաբերյալ պատկերացումները քաղաքական իմիջ ստեղծելիս՝ նշենք, որ բավականաչափ բարդ գործընթացը հաճախ նմանեցվում է մարդկային նոր տեսքի պատկերմանը. թվում է, թե ամբողջովին նոր կերպար է կազմվում: Ինքն իրեն իմիջը միայն մարդու սոցիալական «ես»-ը չէ: Այն կա՛մ դրական, կա՛մ բացասական ընկալումն է՝ ԶԼՄ-ների միջոցով ձևավորված: Այս դեպքում արդեն հեռուստատեսությունն ամեննին էլ հետին պլանում չէ, չէ՞ որ այն համարվում է ամենից առաջատար ու հասանելի տեղեկատվամիջոցը:

Տարիներ առաջ մեդիատեսաբան Մարշալ ՄըքԼյուհենը գտնում էր, որ գրավոր գործունեությունը մարդու մոտ ստեղծել է մտածելու նոր համակարգ: Հետագայում էլ նույնը եղավ նաև հեռուստատեսության դեպքում: Այսօր մի նոր մշակույթ է ձևավորվում ի դեմս համացանցի: 2001 թ-ի սեպտեմբերի 11-ից հետո հասկանալի դարձավ, որ համացանցը ոչ թե պասիվ հաղորդակցման գործիք է, այլ բավականին ակտիվ:

Այսօր արդեն մարդիկ կարող են իրենց ցանկալի ինֆորմացիան փնտրել ու գտնել, ոչ թե սպասել հեռուստատեսային հաղորդմանը, ինչը նվազեցրել է հեռուստալսարանը: Այս ամենի համատեքստում հեռուստատեսությունը որոշակի փոփոխություններ է կրում՝ փորձելով դառնալ առավել հարմարավետ տեղեկատվամիջոց, որը դեռևս շարունակում է գերիշխող դեր ունենալ ԶԼՄ-ների մեջ:

Փորձելով մի փոքր առաջ նայել՝ կայնդենք, որ հեռուստատեսությունն այժմ փորձում է հաշվի առնել նոր «տեսակի» մարդու պահանջմունքը՝ դառնալով ոչ թե զվարճալի-տեղեկատվական գործառույթ իրականացնող հաղորդակցային միջոց, այլ մարտավարական հանձնարարություններ իրականացնող: Ժամանակակից հեռուստատեսություն ասվածը ներկայացնում է փորձ հանրությանը տալու այն, ինչ ինքն է ցանկանում, այլ ոչ թե հանրության պահանջն է հաշվի առնվում: Հայաստանյան հեռուստադաշտն այս ամենի վառ օրինակն է:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գրքեր

- K. E. Boulding, The Image: Knowledge in Life and Society, University of Michigan Press, 1961
- M. Edelman, From Art to Politics: How Artistic Creations Shape Political Conceptions, University of Chicago Press, 1996
- В.Н. Коновалов, Политология. Словарь, РГУ, 2010г.
- Г.Г. Почепцов, С.А. Чукут, Информационная политика, М 1 - М: УАДУ, 2002г.
- Д. Джери, Дж. Джери, Большой толковый социологический словарь, М., АСТ, 1999г.

Հոդվածներ

- J.P. Keating, B. Latané, Politicians on TV: The Image Is the Message, Journal of Social Issues, №32, 1976
- В. Андриевский, Политический имидж кандидата, Psyfactor.org

Բանալի բաներ - քաղաքական տեխնոլոգիաներ, հեռուստատեսություն, քաղաքական իմիջ, քաղաքականություն, ընտրություններ, թեկնածու, մեդիա-դաշտ

Հարություն Մատրյան, Հեռուստատեսության դերը քաղաքական իմիջի ձևավորման գործում - Քաղաքական իմիջի ստեղծման տեսանկյունից հեռուստատեսությունը շարունակում է առաջամարտիկը մնալ ժամանակակից ՋԼՄ-ների համակարգում: Իմիջմեյքերները փորձում են ամեն ինչ անել, որպեսզի իրենց գործատուները՝ քաղաքական գործիչները, հնարավորինս ճիշտ ներկայացվեն հեռուստատեսությամբ, բացի այդ ակտիվորեն փորձ է արվում հեռուստաթերը ծառայեցնել քաղաքական տեխնոլոգիաների գործիքակազմի կարևոր բաղադրիչներից մեկի՝ քաղաքական իմիջի ձևավորման համար: Ֆինանսական ռեսուրսների մեծ մասն այսօր ուղղված է հեռուստատեսությամբ գովազդների պատվեր տալուն, որտեղ բովանդակության համար պատասխանատուն քաղաքական գործիչն է:

Арутюн Цатрян, Роль телевидения в формирование политического имиджа - С точки зрения формирования политического имиджа телевидение продолжает оставаться лидером в современной системе средств массовой информации. Имиджмейкеры пытаются сделать все возможное, чтобы предоставить своих работодателей-политиков максимально возможный совокупный охват аудитории. Более того, они также активно пытаются использовать эфирное время для развития политического имиджа одним из ключевых элементов инструментария политических технологий. Большинство финансовых ресурсов в настоящее время ориентированы на телевизионные

политические рекламные ролики, где ответственным за контент является только политический деятель.

Harutyun Tsatryan, The role of television in shaping the political image - From the point of view of formation a political image, television continues to be a leader in the modern mass media system. Image-makers are trying to do their best to provide their employers, e.g. politicians with the best possible TV coverage. Moreover, they are also actively trying to use the TV airtime for developing political image one of the key elements of the political technology toolkit. Most of the financial resources are now targeted on TV political commercials, where the responsible of the content is only the political actor.

ТЕЛЕОЧЕРК – КАК ОДИН ИЗ КЛЮЧЕВЫХ ФОРМАТОВ ТЕЛЕВИЗИОННОГО ДОКУМЕНТАЛЬНОГО КИНО АРМЕНИИ

АЙК СТЕПАНЯН

Современное телевидение, являясь «живым организмом», находится в непрерывном процессе развития. Сегодня, в период очередной информационной революции, развитие и распространение информационных, цифровых технологий и интернета привели к трансформации традиционных жанров СМИ. Из-за увеличения количества инфопотоков и скорости передачи информации граница между традиционными жанрами ТВ размыта. В современном телевидении практически невозможно встретить жанры в чистом виде. Информационные, аналитические и художественно-публицистические жанры ТВ все чаще обмениваются элементами, чтобы обеспечить многослойную (мультимедийную) структуру и оперативность передачи информации.

В контексте сближения идеалов жанров тележурналистики отдельные специалисты к группам традиционных жанров добавляют еще одну, назвав ее документальной. По своей природе это синтетическая группа. В нее могут быть включены отдельные виды всех предыдущих групп, сопровождаемые разными требованиями, уникальными фактами и документацией¹. Иными словами, документальный жанр не есть сепаратный, он объединяет различные передачи традиционных жанров с документальной основой. Причиной рассмотрения документалистики как отдельного жанра ТВ в том, что это явление уникальное. Поле документального – это пересечение художественной и нехудожественной сфер, искусства и журналистики, факта и вымысла, хроникальности и драматургии². Документальное телевизионное кино невозможно приобщить к одному из традиционных жанров, т.к оно содержит в себе и информационные, и аналитические, и художественные элементы. Наличие документального жанра дает возможность классифицировать и изучить форматное разнообразие, особенности и функции документального кино – одного из ключевых блоков современного телевидения.

Одним из ведущих форматов телевизионного документального кино, которое можно отнести как к художественно-публицистическим, так и к доку-

¹ **Երիցյան Ս.Ս.** Հեռուստատեսային տեղբիւնների և հասկացութիւնների տեղեկատու բառարան.: Ե. Էդիթ Պրինտ, 2008, էջ 214

² **Манскова Е. А.** Современная телевизионная документалистика: особенности языка и эстетики // Средства массовой информации в современном мире. Молодые исследователи: Материалы VII межвузовской научно-практической конференции студентов и аспирантов.: Спб., 2008, С. 96–98

ментальным жанрам – телеочерк. В рамках телевидения Армении телеочерк имеет свое важнейшее место в ТВ программе, выполняя ряд особенных функций.

Телеочерк — телевизионное документально-сюжетное произведение, развивающееся в соответствии с литературным сценарием, предусматривающим композиционное построение на основе драматургии события, факта, судьбы человека¹.

Жанр очерка сложился вне рамок журналистского творчества. Он был ассимилирован журналистикой в процессе ее развития из недр культуры благодаря участию в создании массовых информационных потоков талантливых писателей, заявивших о себе как крупные общественные деятели². В армянской литературе высокохудожественные очерки написали Микаел Налбандян (*некоторые главы «Дневника»*), Раффи (*«Крепость Ахтамара», «Путешествие в Персию»*), Акоб Паронян (*«Прогулка по кварталам Стамбула»*), Вртанес Папазян (*«Из дневника туриста»*) и другие.

Конечно, определение литературного очерка «документальный» несет в себе условный характер, так как автор в художественной форме *описывает, рассказывает* о реальных событиях, явлениях и о людях. Но если в классическом очерке конкретный, документальный факт отходит на задний план, уступая место впечатлению автора от факта, его оценке, авторской мысли³, то в случае телевидения документальность имеет важнейшее место, которое укреплено *фиксированными* фактами и документацией (запечатленными аудио-визуальными технологиями). Обращаясь к классическому очерку, мы имеем дело с литературным языком. Авторы используют различные художественные средства (пейзаж, портрет, диалог, авторское вмешательство), а также конкретные данные, цифры, факты, биографические отрывки⁴.

Телевизионный очерк, в свою очередь, использует телеязык, который представляет собой комплексное слияние звуко-зрительских средств выразительности и монтажа.

Он рождается в результате взаимодействия документальных элементов (факта, события, явление, человека), художественного телеобраза и постулата (мировоззренческая позиция среды). Телеочерк многослоен. Наличие точно найденных и акцентированных деталей может стать гарантией реалистичного, убедительного

¹ Шестеркина Л. П., Т. Д. Николаева. Методика телевизионной журналистики. М.:Аспект Пресс, 2012, С.128

² Г. В. Лазутина, С. С. Распопова. Жанры журналистского творчества.: М.Аспект Пресс, 2011. С.105.

³ Кенжегулова Н. Художественно-публицистические жанры журналистики: Электронный курс журналистики «Массовая коммуникация». 2001-2002 гг, URL: http://old.unesco.kz/massmedia/pages/4_3.htm

⁴ Երիցյան Ս.Ս. Հեռուստատեսային տերմինների և հասկացությունների տեղեկատու բառարան - Ե.: Էդիթ Պրինտ, 2008, էջ 16

изображения и заменить его полным описанием¹. Иногда кажущиеся несущественные детали: взгляд, движения рук, тембр голоса, паузы в речи могут быть самым типичным и характерным для героя и стать наилучшим способом правильного описания образа что поможет воспринять увиденное и почувствовать невидимое.

Как уже было сказано выше, телеочерк имеет свое неотъемлемое место в программах современного телевидения Армении. Сегодня в эфире таких телеканалов как «Общественное телевидение», «Шогагат», «Ар», «Еркир Медиа», «Шант», «Армения ТВ» и т.д. можно регулярно встретить различные портретные и путевые телеочерки. Такая популярность связана не только с тем, что у Армении есть богатый опыт и интерес к данному формату как к фламану художественно-публицистических жанров, но и теми уникальными функциями, которые они выполняют в рамках армянского телевидения.

Говоря о современных портретных телеочерках Армении, можно констатировать, что видна тенденция «упрощения» художественных образов. Это некий акцент времени, где минимализм становится образом жизни. В различных сферах идет процесс комертизации. Современные технологии упрощают жизнь, в искусстве идет процесс упрощения языка и т.д.

Упрощение художественных образов в портретных телеочерках направлено на восприятие современного телезрителя, который привык к простому и доступному языку. Тем не менее, современные портретные телеочерки имеют четкую структуру и являются результатом синтеза художественных и документальных средств выразительности. Цель портретного очерка состоит в том, чтобы показать человека в процессе его самораскрытия, подчеркнуть самые яркие аспекты его жизни и деятельности, максимально правдиво представить человека таким, каким он есть в реальной жизни². Иными словами, используя художественные средства выразительности и инструментария журналистики (интервью, журналистское расследование и т.д.), создать образ человека-индивидуума на основе документа (где термин «документ» принимает широкое значение).

Поподробнее рассмотрим примеры портретных телеочерков в эфире телеканалов Армении, подчеркивая их роль и выполняемые функции. Одним из примеров современных портретных телеочерков Армении – цикл передач «Женщина с судьбой» и «Судьбы» (автор - Анна Аванесян, «Общ. тел..»). Героини проекта «Женщина с судьбой» знаменитые женщины, достигшие успехов в области культуры, науки, бизнеса, социально-политических и других сфер,

¹ **Արթուրյան Ա.** Հեռուստատեսային ակնարկի գեղարվեստաարտահայտչական առանձնահատկությունների հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 3, 2009, ԵՊՀ հրատ. Էջ. 203-209

² **Երիցյան Ս.Ս.** Հեռուստատեսային տեղմինների և հասկացությունների տեղեկատու բառարան.: Ե. Էդիթ Պրինտ, 2008, էջ 64

имеющих богатую биографию и яркую индивидуальность. Это пример биографического портретного очерка, где автор пытается представить современный образ армянской женщины на основе рассказов друзей, родных и коллег, архивных материалов и личных воспоминаний героини, раскрывающих ее с разных сторон как личности, достигшей успехов в профессии и в личной жизни. В проекте «Судьбы» используется такой же подход. Подобные биографические портретные телеочерки выполняют культурно-просветительские функции. С помощью очерковых жанров журналистика получает возможность нести обществу эмоциональное, интеллектуальное, нравственное обогащение, расширяя опыт отдельного человека до опыта многих, в предельном случае — всех. В определенном смысле это проявление воспитательного воздействия журналистики, если, конечно, под воспитанием понимать не морализаторство, не навязывание определенных ценностей и определенных стереотипов, а ориентацию человека на самостоятельный выбор линии поведения через сопоставление собственного жизненного опыта с жизненным опытом других¹.

В контексте армянского общества, ее истории и систему ценностей, телеочерк иногда обретает некий иной смысл. Подобных примеров множество – «Армяне по происхождению» (автор Манана Акобян, «Армения ТВ»), «Армяне мира» (автор Артем Еркянян, «Шант»), «Наши» (автор Рафаел Оганнисян, «Общест. Телев.»), «Судьбы, по ту сторону океана» (автор Анна Аванисян «Общест. телев.»), «К дому» (автор Мери Саапян, «Шогакат»), «Армянский след» (автор Рузанна Казарян, «Еркир Медиа») и другие портретные телеочерки выполняют как культурно-просветительские, так и в некотором смысле, всеобще-объединительные функции. Идея целостности армянского народа строится не только вокруг Армении как колыбели для всех армян мира, но и вокруг крепкого союза Армении – Арцаха – Спюрка. В основе вышеуказанных телеочерков лежит лейтмотив чужбины, где, по вынужденным причинам, когда-то оказались армяне. Герои передач «Армяне мира» и «Армяне по происхождению» – успешные деятели культуры, бизнеса, науки, политики и других сфер, у которых есть армянские корни. Передача «Наши» под одной крышей собирает людей из разных областей Армении, Спюрка и Арцаха. Передачи «к Дому» и «Судьбы, по ту сторону океана» – рассказывает о героях, которые по тем или иным причинам оказались на чужбине, но нашли дорогу домой. Телепроект «Армянский след» представляет из себя цикл портретных и путевых телеочерков, где автор по всему свету ищет «армянский след»,

раскрывая роль армян в мире и особенности армянских общин.

¹ Лазутина Г. В., Распопова С. С. Жанры журналистского творчества.: М. Аспект Пресс, 2011, С. 118

Путевые телеочерки (которые направлены на создание географического, исторического образа страны, на художественное описание народа, его обычаев и мировоззрение) в рамках телевидения Армении также выполняют не только познавательные, но и всеобще-объединительные функции.

Самыми яркими примерами подобных путевых телеочерков - ряд передач Серго Ерицяна, посвященным армянским общинами, проект Рафаела Оганнисяна «На чуждой, пустынной дороге», который дает возможность не только познать историко-архитектурные памятники и увидеть достопримечательности разных стран, но и познакомиться с местными армянами и их вкладом в культуру и в экономическую жизнь другой страны, цикл передач Артура Григоряна «В Арцах», который по-новому открывает Арцах армянскому телезрителю, его историю, проблемы, людей и т.д.

Авторы армянских путевых телеочерков подчеркивают идею национального единства, не только раскрывая географическую карту Спюрка, но и самой Армении – знакомя телезрителя с ее историей, культурой, достопримечательностями, традициями и с людьми.

Примерами таких передач являются «По дорогам Армении» (автор Рафаел Оганнисян, «Общ. Тел.»), «Дорога» (автор Инна Саакян, «Общ. Тел.»), «Наиряновские приключения» (авторы Нуне Ензулян, Катя Товмасян, «АрмНюз»), «Церковь нашей деревни» (автор Арпине Симонян, «Шогакат») и т.д.

Таким образом, рассматривая телеочерки в рамках телевидения Армении, можно подчеркнуть ту особенность, которая характерна исключительно армянскому документальному телевизионному кино: в контексте истории, систему ценностей и мировоззрение армянского народа, портретные и путевые телеочерки могут обрести некие эмоционально-познавательные свойства, которые позволяют выполнять так называемую, всеобще-объединительную функцию. Подобные качества не только превращает телеочерк в один из ключевых форматов армянского телевизионного документального кино, но и укрепляет важнейший союз: Армения – Арцах – Спюрк.

Ключевые слова - телеочерк, портретный очерк, путевой очерк, телевидение Армении, функции журналистики, документальное кино

Айк Степанян, Телеочерк – как один из ключевых форматов телевизионного документального кино Армении - Данная статья посвящена рассмотрению телеочерка как одного из ведущих форматов современного армянского телевизионного документального кино. Изучая примеры портретных и путевых телеочерков Армении, автор выделяет особенности, ключевые характеристики, уникальные свойства и функции современного документального телевизионного кино.

Հայկ Ստեփանյան, Հեռուստասկնարկն՝ իբրև Հայաստանի հեռուստատեսային վավերագրական կինոյի գլխավոր ձևաչափերից մեկը- Հոդվածը հիմքում ընկած է հեռուստասկնարի դիտարկումն՝ իբրև հեռուստատեսային վավերագրական կինոյի կարևորագույն ձևաչափ: Ուսումնասիրելով Հայաստանի դիմանկարային և ճամփորդական հեռուստասկնարկները, հեղինակն ընդգծում է ժամանակակից հեռուստատեսային վավերագրական կինոյի առանձնահատկությունները, գլխավոր հատկանիշները, յուրահատկություններն ու գործառնությունները:

Hayk Stepanyan , TV documentary shots as one of the basic formats of documentary production in Armenia- This article provides a basic overview of TV documentary shots as one of the leading formats of Armenian contemporary TV documentary production. Studying examples of portrait and travel documentary shots created in Armenia the author outlines the features, key characteristics, unique properties and functions of today's Armenian TV documentary films.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԶԼՄ-ՆԵՐԸ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄՈՒՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԾԱՏՐՅԱԼ

20-րդ դարում հաղորդակցության տեսության հեղինակ, կանադացի անվանի փիլիսոփա Մարշալ Մաքլուենն առանձնահատուկ դեր և կարևորություն էր տալիս զանգվածային հաղորդակցության միջոցներին՝ լրատվության հաղորդման ալիքները համարելով հանրային ազդեցության գործիքներ: Սոցիոլոգ Դևիդ Ռիսմենն էլ ապացուցեց, որ հեռուստատեսության գերակայությունը հանրային կարծիքի ձևավորման գործում ստեղծել է նորագույն «գլխավոր հերոսներ»՝ ստիպելով քաղաքական գործիչներին ենթարկվել վարվելաձև նոր կանոններին: «Քաղաքական գործիչների վարքը դարձել է դերասանական», - պնդում էր սոցիոլոգը¹: Եթե տպագիր լրատվամիջոցների համար առաջնահերթ էր բովանդակությունը և միտքը, ապա հեռուստատեսությունը ստիպեց ուշադրություն դարձնել ոչ միայն բովանդակության, այլև ներկայացման ձևին, վարվելակերպին: Տարիների ընթացքում ամենն ավելի ազդեցիկ դարձավ քաղաքական գործընթացները լուսաբանելու համատեքստում:

Ժողովրդավարության պայմաններում նկատելիորեն ուժեղացել են ԶԼՄ-ները, դրանց հանրային ազդեցությունը հաճախ խիստ արտահայտված է: Բացի այդ, ԶԼՄ-ները բերում են նաև որոշ չափով քաղաքական կողմնորոշումների արտահայտման բազմազանություն: Նշյալը հիմք է հանդիսանում, որպեսզի քաղաքական պայքարի նոր մշակույթ ձևավորվի: Քաղաքական ոլորտ են մտնում այսպես կոչված շատ «ընդունելի և պահանջվող որակներ», որոնք ներկայացվում են ընտրողների տարբեր խմբերի՝ ցանկալի ներգործություն ապահովելու նկատառումով: Այս որակների շուրջ մինչև այսօր շարունակվում է գիտական բանավեճը, քանի որ մի դեպքում այն կարող արդյունք ապահովել, մեկ այլ դեպքում՝ տանել քաղաքական գործչին տապալման ու ձախողման:

Ժամանակակից քաղաքական տեխնոլոգիաների գործիքակազմում ընդգրկված տարրերն այսօր ընտրողների ձայների համար պայքարում հաղթանակի հասնելու գլխավոր ուղղորդիչներն են, քանի որ քաղաքական թեկնածուների միջև առկա է ազատ մրցակցություն. դաժան, թեժ պայքարում հաղթելու համար քաղաքական գործիչներն օգտագործում են ձեռքի տակ առկա բոլոր ռեսուրսները: Այս դեպքում խիստ ընդգծվում, առաջնային դերակատարում է ստանձնում արդի մեդիադաշտը: Քաղաքական գործչի՝ հանրույթի վրա ազդեցության ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված միջոցներն ու նախապես

¹ Ольшанский Д.В., Политический PR, Питер, 2003, стр. 77

ծրագրված միջոցառումներն հանդիսանում են քաղաքական PR ռազմավարության ուղղության էությունը: Որպես առաջնային ու արդյունավետ գործիք է ծառայում քաղաքական գովազդը, որը քաղաքական PR ռազմավարության և քաղաքական հաղորդակցության կարևոր տարրն է: Հասարակության կարծիքի ուսումնասիրմամբ, ապա նաև քաղաքականություն մուտք գործող անձի համապատասխան «փաթեթավորմամբ» և վաճառքով զբաղվելու համար պետք է մանրակրկիտ ու ամբողջականորեն ուսումնասիրել ՁԼՄ-ների ժամանակակից դաշտը, ինչպես և գերազանց տիրապետել արդյունավետ հաղորդակցություն իրականացնելու արդիականացված ու նոր մեթոդներին, նորագույն հաղորդակցման ուղիներ փնտրելուն և այն ճիշտ կիրառելուն՝ հաշվի առնելով գերազդեցիկ գլոբալ՝ միջազգային ՁԼՄ-ների առկայությունը 21-րդ դարում: Որոշակիորեն այլ է սոցիալական մեդիայի դերը, որը սույն աշխատանքի քննարկման թեման չէ:

Ապրելով ներկայիս տեխնոլոգիապես գերծանրաբեռնված հասարակության մեջ, մենք չենք կարող ինքնըստիներյան գերծ մնալ զանգվածային լրատվության միջոցների ազդեցությունից, եթե նույնիսկ շատ ցանկանանք: Պատճառը պարզ է. ՁԼՄ-ները կլանել են հասարակությունը: Կարող ենք ասել, որ նրանք մոռացել են իրենց հիմնական գործառույթը՝ մատուցել տեղեկատվություն և քիչ թե շատ արտացոլել հասարակական կյանքը: Քիչ չեն դեպքերը, երբ ՁԼՄ-ներն իրենք են ստեղծում ինչ-որ իրադարձություններ. նրանք ինչ-որ տեղ վերածվել են նոր իրականություն ստեղծողների, որի հետ համեմատվում է շրջապատող աշխարհը: Աշխարհը, որը տեսնում են, պատկերում ՁԼՄ-ները, որոշ մարդկանց համար ավելի իրական է դարձել, քան կյանքը:

Քաղաքական խորհրդատվությամբ զբաղվող կենտրոններում ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՁԼՄ-ների ազդեցությունը հասարակության վրա հսկայական է: Հաշվի առնելով նաև այն, որ ինֆորմացիոն տեխնոլոգիաները մշտապես զարգանում են՝ ընդգրկելով ավելի ու ավելի շատ կիրառություն մարդկանց կողմից, կարելի է ենթադրել, որ քաղաքական դաշտ մուտք գործող կամ իշխանության համար պայքարող ժամանակակից քաղաքական դերակատարները՝ թեկնածուներ, կուսակցություններ, քաղաքական գործիչներ, կրնդունեն մեդիայի անհրաժեշտությունը հետագայում դրա միջոցով ավելի արդյունավետ հանրության վրա ազդելու, քաղաքական տեխնոլոգիաների արդի գործիքակազմը վարպետորեն կիրառելու, հաղթանակի հասնելու համար: Այսպիսի պայմաններում քաղաքական PR-ը, ըստ էության, դառնում է քաղաքականության արտացոլմանն ուղղված քայլերի ամբողջականության, այն միավորում է քաղաքական ծրագրերի տարրերը, նոր գաղափարները, քաղաքական գործիչների անձնային որակները, հաստատում նաև նոր «խաղի կանոններ»՝ դրանով նպաստելով քաղաքականության ընկալման դյուրինացմանը: Քաղաքական PR արշավներն այլևս մեծ նշանակություն չունեն, եթե այդ ամենի համատեքստում չկարևորվի ՁԼՄ-ների

ազդեցիկ դերը, մարդկանց որոշումների վրա ներգործող առանձնահատկությունը: Առանց լրատվամիջոցների հետ հաշվի նստելու՝ ներկայում խրթին է դարձել իշխահանության համար պայքարելը:

Քաղաքական գործիչները շատ արագ են հարմարվում նոր տեխնոլոգիաներին՝ դրանք կիրառելով իրենց գործունեության առաջնական համար: Եթե տասնամյակներ առաջ ֆենոմենալ երևույթ էր, որ քաղաքական թեկնածուն՝ Հարի թրումանը, ընդամենը վեց շաբաթում կարողացավ ելույթ ունենալ 6 մլն մարդու համար, ապա նախորդ դարավերջին Բիլ Քլինթոնը հեշտությամբ՝ հեռուստատեսության ամենահասության միջնորդությամբ «մտավ» ԱՄՆ բնակչության բնակարանները¹: Բարաք Օբամայի նախընտրական արշավն աչքի ընկավ համացանցի առաջարկած գործիքակազմի կիրառմամբ: Այս դեպքում լսարանը տասնյակ անգամ ավելի մեծ էր, ազդեցության ոլորտները՝ բազմազան:

ԶԼՄ-ների ուժեղացումը փոխեց հանրային ընկալումները: Օրինակ՝ ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնի և Սպիտակ տան 22-ամյա փորձնակ Մոնիկա Լեինսկիի հետ կապված աղմկալի սեքս-սկանդալի ժամանակ ԶԼՄ-ների այդչափ ուշադրությունից կարելի էր նույնիսկ ենթադրել, որ կա՛մ Մոնիկա անունը կդառնա այնքան հայտնի, որ տարիներ անց ԱՄՆ-ում բոլորն իրենց աղջիկներին այդպես կանվանեն, կա՛մ այդ անունը կստանա բացասական երանգ՝ արթնացնելով վատ հիշողություն: Այս օրինակը վկայում է, որ լրատվություն սպառողների մոտ նախապես ձևավորվում է կանխակալ կարծիք ստացված ինֆորմացիայի մասին, և ըստ այդմ՝ նաև որոշակի վարքագիծ: Այս ամենը թույլ է տալիս ենթադրել, որ ինչպես ոտնձուռյանն ու բռնությանը վերաբերող տեղեկատվությունը, այնպես էլ հանրությանը ներկայացվող քաղաքական գործընթացների, քաղաքական գործիչների մասին ԶԼՄ-ների հաղորդած ինֆորմացիան խիստ ազդեցություն է ունենում մեղիասպառողի հոգեվիճակի վրա, հետագա վարքի ու գործողությունների վրա:

Չնայած արդի ԶԼՄ-ների խայտաբղետությանը՝ հեռուստատեսությունը դեռևս շարունակում է մնալ կարծիքի ձևավորման ու ընտրողների վրա հոգեբանական ազդեցություն թողնող լրատվամիջոցը: Հետևաբար հարց է ծագում, թե արդյո՞ք նմանատիպ նյութերը հեռուստադիտողի մոտ վարքաձև չեն առաջացնում: Վերջին տարիներին քաղաքական գործիչները դրսևորում են խիստ ագրեսիվ վարք՝ իրենց հանրային ելույթներով հաճախ քարոզելով բռնություն: 2016 թվականի ԱՄՆ նախագահական ընտրությունների ժամանակ սա բացահայտ նկատելի էր²: Հիմնական մրցակիցների պայքարում թե՛ Հիլարի Քլինթոնը, թե՛

¹ Почепцов Г.Г., Паблик рилейшнз для профессионалов. – М.: Рефл-бук, К.: Ваклер, 2001, стр. 276-278

² Butler B., About that viral video of Donald Trump talking about ‘the good old days’, The Washington Post, հրապարակվել է՝ հոկտեմբերի 14, 2016թ., հասանելի է՝ <https://www.washingtonpost.com/news>

Դոնալդ Թրամփն աչքի էին ընկնում ագրեսիվ, հաճախ խիստ վիրավորական ելույթներով՝ փորձելով հանրությանը մոբիլիզացնել իրենց առաջարկած ծրագրերի շուրջ:

Ակտիվացնում է արդյոք բռնության կոչը, քարոզն ագրեսիվ մտքեր, որոնք ի սկզբանե արդեն կան հեռուստադիտողի մոտ, կամ ազդում են քաղաքական ագրեսիվ ելույթները հեռուստադիտողների վրա՝ զանազան ասոցիացիաներ առաջացնելով ընտրողների շրջանում: Բռնություն կատարելու հանրային ցանկության առաջացման վրա քաղաքական գործիչները կարողանում են ներգործել: Նման տիպի հարցերը ՋԼՄ-ների սոցիալական ազդեցության հետազոտությունների հիմքում են¹:

Նախ անհրաժեշտ է հասկանալ՝ արդյոք միմիայն ագրեսիայի միջոցով են քաղաքական գործիչները փորձում ներկայում մոբիլիզացնել հասարակությանը: Ըստ ագրեսիայի դասական հետազոտող Լեոնարդ Բերկովիցի՝ մարդու վարքի ցանկացած դրսևորում, որը նպատակ ունի ֆիզիկական կամ հոգեբանական վնաս հասցնել որևէ մեկին, ագրեսիա է²: Այս դեպքում ագրեսիան կարող է ուղղակի նոր մղիչ լինել, որը հոգեբանորեն ազդում է ընտրողների վրա՝ նրանց տանելով դեպի այնպիսի գործողություններ, որոնք նախկինում չէին կատարվի:

Լրատվամիջոցների ազդեցությամբ ագրեսիայի դրսևորումների առաջացման դեպքեր դեռ 19-րդ դարի վերջում նկատել էր ֆրանսիացի սոցիոլոգ Գաբրիել Թարդը: Նա նշում էր, որ խոշոր հանցագործությունների հանրային լայն լուսաբանումները առաջացնում են նմանատիպ այլ հանցագործությունների կրկնօրինակում³: Եթե քաղաքական գործիչների կամ թեկնածուների կողմից հնչեցված ագրեսիան ազդեցիկ չլիներ, ապա չէին լինի բախումները, որոնք ԱՄՆ վերջին նախագահական ընտրությունների անբաժանելի մասն էին⁴:

Ուսումնասիրությունները տարիներ առաջ են ապացուցել, որ հեռուստատեսության, մեդիայի առջև ժամեր անցկացնելն ուղիղ համեմատական է հանցագործությունների հաճախականությանը⁵: Այս համատեքստում քաղաքական գործիչները, լավ գիտակցելով մեդիայի ազդեցության ներկա չափն ու ոլորտները, այն օգտագործում են իրենց ցանկանալի մոբիլությունն ապահովելու համար: ՋԼՄ-ների ազդեցությունը հատկապես մեծ է երեխաների և երիտասարդների վրա: Երիտասարդությունն է համարվում հասարակության ամենաակտիվ մասը,

/arts-and-entertainment/wp/2016/10/14/about-that-viral-video-of-donald-trump-talking-about-the-good-old-days/?utm_term=.b2256eefc020]

¹ Браунт Д., Томпсон С., Основы воздействия СМИ, Москва • Санкт-Петербург • Киев, 2004, стр. 101

² Майерс Д., Социальная психология, Москва, Питер, 2009, стр. 443

³ Берковиц Л., Агрессия. Причины, последствия и контроль, Прайм-Еврознак, Москва, 2001, стр. 242

⁴ Logan B., Protester kicked, punched while being escorted out of a Donald Trump campaign rally in Arizona, հրապարակվել է՝ մարտի 19, 2016թ., հասանելի է՝ [http://www.businessinsider.com/protester-video-donald-trump-punched-kicked-2016-3]

⁵ Միրաքյան Վ., Ագրեսիվ հեռուստատեսության հետրանքները, Երևան, 2012, էջ 27

որը միշտ ընդհանուր տոնուս է տալիս հասարակական զարգացմանը: Քաղաքական PR-ով զբաղվող մասնագետները մշակել են ՁԼՄ-ների կողմից երիտասարդության վրա ազդեցության երկու տիպ: Մի դեպքում ստեղծում են դրական վերաբերմունք իրենց հովանավորյալ թեկնածուի ու կուսակցության հանդեպ, մեկ այլ դեպքում զարգացնում են բացասական ազդեցություն՝ մրցակցի գործողությունները համապատասխանաբար շրջանակավորելով:

Այսօր ՁԼՄ-ները ոչ միայն տեղեկացնում են տեղի ունեցող իրադարձությունների մասին, այդ կերպ հազեցնելով «տեղեկատվական քաղցր», բարձրացնում են հասարակության ընդհանուր, այդ թվում նաև քաղաքական մշակույթի մակարդակը, ապահովում կապը բնակչության և իշխանությունների միջև, հանում սոցիալական լարվածությունը, այլև համարվում են իշխանության համար պայքարի կարևոր գործիք: Պատահական չէ, որ ընտրական գործընթացներից առաջ տարեցտարի ավելանում է ՁԼՄ-ների քանակը¹:

Տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացմանը զուգահեռ՝ ՁԼՄ-ների որոշ տեսակներ ավելի քիչ ազդեցություն են սկսում ունենալ, քան մյուսները: Հեռուստատեսային ազդեցությունն շարունակում է ավելի ընդգրկուն լինել²: Մինչև այժմ, հեռուստատեսությունը հասարակության վրա ազդեցության հզոր գործիքներից է, և ներգործությունն աստիճանաբար ավելի է մեծանում՝ ընդգրկելով թե արբանյակային և թվային, թե համացանցային հեռուստատեսության զարգացումը: Համացանցից հետո հեռուստատեսությունն ամենաանձնավորված հաղորդակցության միջոցն է, որը հեռուստադիտողի մեջ կարող է տպավորություն առաջացնել, թե հաղորդավարը հենց իր հետ է գրուցում: Որոշ տեսաբաններ արդի հեռուստատեսությունը նույնիսկ համարում են նոր սերնդին դաստիարակող երրորդ ծնող³:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գոյություն ունի ՁԼՄ-ների ինչպես երկարաժամկետ, այնպես էլ կարճաժամկետ ազդեցություն: Կարճ ժամանակում առաջացրած մեդիաազդեցության մոդելներից մեկը Լ. Բերկովիցն անվանում է պրայմինգի (priming) էֆեկտ կամ մարդկանց գաղափարներով վարակելու գործընթաց⁴: Բերկովիցն իր հետազոտությունը մեծ մասամբ կապում էր ագրեսիվ հասարակություն ձևավորելու հետ, սակայն պրայմինգը ներկայում դիտարկվում է որպես քայլերի կատարմանը, գաղափարների առաջացման (այս դեպքում՝ գործողությունների) ազդակ հաղորդող տեղեկատվություն:

¹ Halbrooks G., How Politicians Use Media to Win Elections, հրապարակվել է՝ նոյեմբերի 9, 2017թ., հասանելի է՝ [<https://www.thebalance.com/how-politicians-use-media-to-win-elections-2315204>]

² Protest D., McCombs M.E., Agenda Setting: Readings on Media, Public Opinion, and Policymaking, Routledge, Taylor & Francis Group, London, New York, 2016, pp. 17-25

³ Միրաթյան Վ., Լրատվամիջոցների ազդեցության հնարավորությունները, 2010թ., էջեր 39-43

⁴ Берковиц Л., Агрессия. Причины, последствия и контроль, Прайм-Еврознак, Москва, 2001, стр. 250-252

Պրայմինգ երևույթի ուսումնասիրման ժամանակ ապացուցվել է նաև, որ քաղաքականության վրա գերկենտրոնացում ունեցող հեռուստատեսային և ռադիո նյութերը, ինչպես նաև թեկնածուների գործողությունների նկարագրություն պարունակող հոդվածները թերթում ընտրողին «վարակում են», զինում են նոր գաղափարներով: Նման ազդեցություն դեր ունեն նույնիսկ թերթային հատուկ բառակապակցությունները¹:

Քաղաքական խորհուրդատուները, հասկանալով ժամանակակից ՁԼՄ-ների ազդեցիկ ու կարևոր դերակատարումը հանրային կարծիքի ձևավորման վրա, ամեն կերպ փորձում են մեղիայի հաղորդագրությունների միջոցով ակտիվացնել հանրության մոտ ձևավորված մտքերը, գիտելիքները, որոնք որոշակի ձևով կապված են այդ նյութերում ներկայացված քաղաքական գործիչների հետ: Գոյանում է շատ մեծ հավանականություն, որ հասարակության մտքերը, ասոցիացիաներն ու հիշողությունները «կապված» են լինելու ստացած ինֆորմացիայի բովանդակության հետ, իսկ երբեմն էլ սպասելի է, որ ձևավորվելու է հաստատուն կապ մեղիահաղորդագրության, իսկ մյուս կողմից քաղաքացուն հարազատ մտքերի և հիշողությունների հետ:

Մեղիայի ազդեցության ժամանակակից ուսումնասիրություններն ամբողջությամբ ապացուցեցին՝ կարճաժամկետ հատվածում լրատվամիջոցների կարող են չափազանց մեծ ազդեցությունը ունենալ ընտրողների վարքի վրա: Այս դեպքում լրատվամիջոցները, իբր նպատակ ունենալով զվարճացնել կամ լուր հաղորդել, հանրային առանձին շերտերի մոտ արդեն գոյություն ունեցող սոցիալական դիրքորոշումների արագ ակտիվացման և քաղաքական վարքի դրդման գործոն են հանդիսանում:

Մեղիասպառողի հետաքրքրությունը և վերաբերմունքը ՁԼՄ-ների հաղորդագրություններին բավականաչափ կապված է վերջինիս գիտելիքներից ու փորձից: Ավելի վաղ ունեցած հիշողություններն արագ որոշում են վերաբերմունք լրատվամիջոցի հաղորդագրությանը, և արդյունքում առաջանում է պրայմինգի էֆեկտ: Մեղիայի ազդեցության տեսություններն ուսումնասիրող մասնագետները պրայմինգը դիտարկում են ոչ միայն քաղաքականության ազդեցության գործիք, այլև առանձին ճյուղ, որ ուսումնասիրում է ճանաչողական կառուցվածքները օգտագործվող ինֆորմացիայի մշակման գործընթացում:

Ամփոփելով՝ հանգում ենք եզրակացության, որ ներկայում հսկայական է ՁԼՄ-ների դերը առանձին անհատի և հասարակական գիտակցության վրա: Նրա ազդեցությունից անհնարին է խուսափել: Քաղաքական գործընթացներում հանրային աջակցություն ստանալու համար չափազանց շատ է կիրառվում ՁԼՄ-ների միջոցով հասարակությանը մոբիլիզացնելու, գործողությունների ուղղորդելը:

¹ Брайант Д., Томпсон С., Основы воздействия СМИ, Москва • Санкт-Петербург • Киев, 2004, стр. 251

ԶԼՄ-ների կողմից հասարակությանը մատուցված ինֆորմացիան մարդկանց կողմից ընկալվում է որպես նոր իրականություն:

Կարելի է, սակայն, խուսափել կիրառվող ներագդման մեթոդներից: Եթե տեսածը կամ կարդացածը չընկալվի որպես անհերքելի ճշմարտություն, փորձ արվի վերլուծել ստացածը, կարելի է գերծ մնալ ուղղակի ազդեցությունից: Նաև ավելի քիչ ժամանակ անցկացնելով քաղաքական բովանդակություն պարունակող ինֆորմացիա փնտրելու ու ստանալու վրա՝ հնարավոր է չենթարկվել հոգեբանական ներագդման: Մարդիկ տեղեկատվությունն ընկալում են իրենց գիտելիքների պրիզմայի միջով, և որքան կրթված է անհատը, այնքան բացասական ազդեցությունների ենթարկվելու հավանականությունն ավելի փոքր է: Կրթվածության մակարդակը որոշում է մարդկանց հետաքրքրությունների շրջանակը: Չնայած, չի կարելի բացառել նաև, որ բռնության և ագրեսիայի, տեղեկացվածության նկատմամբ հակվածությունը կարող է գենետիկայի կամ դաստարակության արդյունք լինել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Միրաքյան Վ., «Ագրեսիվ հեռուստատեսության հետևանքները», Երևան, 2012
2. Միրաքյան Վ., « Հեռուստատեսության ազդեցության հնարավորությունները», Երևան, 2010
3. Брайант Д., Томпсон С., Основы воздействия СМИ, Москва • Санкт-Петербург • Киев, 2004
4. Берковиц Л., Агрессия. Причины, последствия и контроль, Прайм-Еврознак, Москва, 2001
5. Майерс Д., Социальная психология, Москва, 2009
6. Ольшевский Д.В., Политический PR, Питер, 2003
7. Почепцов Г.Г., Паблик рилейшнз для профессионалов. – М.: Рефл-бук, К.: Ваклер, 2001
8. Proress D., McCombs M.E., Agenda Setting: Readings on Media, Public Opinion, and Policymaking, Routledge, Taylor & Francis Group, London, New York, 2016
9. The Washington Post ամերիկյան օրաթերթի պաշտոնական կայք
10. Business Insider լրատվական-վերլուծական կայք
11. The Balance լրատվական-վերլուծական կայք

Բանալի բառեր - քաղաքական տեխնոլոգիաներ, լրատվամիջոց, ԶԼՄ-ներ, ռադիո, թերթեր, հեռուստատեսություն, առցանց մեդիադաշտ, քաղաքականություն, լուսաբանում, մեդիայի ազդեցություն, հանրային, պրայմինգ

Հարություն Ծատրյան, Ժամանակակից ԶԼՄ-ները՝ քաղաքական տեխնոլոգիաների գործիքակազմում - Վերջին տասնամյակների ընթացքում նկատելիո-

րեն մեծացել է ՋԼՄ-ների ազդեցության ոլորտը քաղաքական գործընթացների համատեքստում: Ժամանակակից մեդիայի ուժեղ հանրային ազդեցությունը հաճախ ընդգծված է, արտահայտված: 21-րդ դարում ՋԼՄ-ները քաղաքական կողմնորոշումների արտահայտման բազմազանություն են ապահովում: Արդյունքում քաղաքական պայքարի նոր մշակույթ է ձևավորվել. քաղաքական գործիչներն ամեն ինչ անում են արժանանալու դրական վերաբերմունքի և հնարավորինս ընդգրկուն լուսաբանման՝ փորձելով այդ կերպ ազդել նաև հանրույթի վրա՝ դրդելով վերջինիս ցանկալի գործողությունների:

Арутюн Цатрян, Место современных СМИ в инструментарии политических технологий - В последние десятилетия влияние СМИ резко возросло в контексте политических процессов. Часто подчеркивается сильное общественное воздействие современных СМИ. В XXI веке средства массовой информации обеспечивают разнообразие политических ориентаций. В результате была сформирована новая культура политической борьбы: политики делают возможное, чтобы максимально позитивно были представлены и освещались в СМИ, пытаются влиять на публику, направляя им к желаемым действиям.

Harutyun Tsatryan, The place of modern mass media in toolkit of political technologies -

In the last decades, media influence has grown dramatically in the context of political processes. The strong public impact of contemporary media is often underlined. In the 21st century, the media provides a diversity of political orientations. As a result, a new culture of political struggle has been formed: politicians do their best to receive positive attitudes and media coverage as much as possible, trying to influence the public by guiding them to the desired actions.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ


ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ՆՈՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Զբոսաշրջային ծառայությունների զարգացման ՀՀ-ում վերջին տասնամյակում լուրջ ուշադրություն է դարձվում, թե պետական մակարդակով, և թե մասնավոր բիզնեսի կողմից: Հատկապես հանրապետությունում ականառու է դարձել ներգնա զբոսաշրջիկների այցելության դինամիկ աճը (տես գծապատկեր 1), երբ զբոսաշրջիկների 68.6%-ի կողմից որպես Հայաստան հանգստի նպատակով այցելության հիմնական պատճառ է համարվում հայոց բնաշխարհը: Այցելուների 59.3%-ի կողմից այլ հիմնական պատճառների շարքում դասվում են նաև պատմության և մշակույթի գրավչությունը: Հայկական ավանդույթները (18.6%) և արկածային/էկոտուրիզմը (12.4%) ևս նշվել են որպես այցելության պատճառներ՝ Հայաստան ժամանած զգալի թվով զբոսաշրջիկների կողմից:¹

Սակայն, դեռևս զբոսաշրջային ծառայությունների ոչ բոլոր տեսակներն են աճի արագնեաց տեմպեր դրսևորում, որոնցից է համարվում ագրոտուրիզմը: Ընդհանուր բնորոշմամբ, ագրոտուրիզմը զբոսաշրջիկի հանգստի կազմակերպումն է գյուղական վայրում: Հանգստի այս ձևը այցելուներին, հատկապես քաղաքաբնակներին, թույլ է տալիս գիտելիքներ ձեռք բերել ագրոտնտեսության վարման մասին, ծանոթանալ գյուղատնտեսական մթերքների արտադրությանը, ճաշակել բնական, թարմ և առողջարար սննդամթերք, ինչպես և օգտվել ոչ սովորական պայմաններում ժամանցի հնարավորությունից:

Մյուս կողմից, զբոսաշրջային ծառայությունների այս տեսակը իր դրական ազդեցությունն է դրսևորում գյուղական ազգաբնակչության սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Ագրոտուրիզմը հնարավորություն է տալիս տնտեսությունը կամ գյուղմթերքների շուկան դարձնելու մրցակցային: Յուրաքանչյուր գյուղաբնակի հնարավորություն է տրվում տնտեսությունը բիզնեսը դարձնել ավելի բազմազան, ընդարձակել այն, որպեսզի հաճախորդներ ավելացնելու միջոցով ավելացնի եկամուտը:

¹ Հայաստան միջազգային այցելուների հետազոտության 2007 թվ. հաշվետվություն, USAID, էջ 13



Գծապատկեր 1

ՀՀ զբոսաշրջության ոլորտի ցուցանիշների դինամիկան¹

Ագրոտուրիզմը հնարավորություններ է ստեղծում ներկայացնել գյուղատնտեսական բիզնեսի առանձնահատուկ ճյուղերը (գինեգործարաններ, պանրի և կաթի արտադրություններ, պտղատու այգիներ, չորանոցներ), գյուղաշխարհի գեղեցկությունը, որակյալ մթերքների բնական միջավայրը: Շփվելու ունակությունը, բարեկամական ու բարեհամբույր վերաբերմունքը, ջերմ հյուրասիրությունն ու նպաստավոր այլ պայմանները՝ որպես ագրոտուրիզմի կազմակերպման կարևոր նախապայմաններ, առկա են ՀՀ գյուղական համայնքներում:

Ներկայումս ագրոտուրիզմը դարձել է ժամանակակից զբոսաշրջային արդյունաբերության կարևորագույն հատվածներից մեկը: Զբոսաշրջության էլիտար, արկածային, արշավային և այլ ձևերի համեմատությամբ, ագրոտուրիզմն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք նպաստում են այս ձևի արագ զարգացմանը:

Առաջին, ագրոտուրիզմը մատչելի է բնակչության գրեթե բոլոր խավերի համար, քանի որ համեմատաբար նվազ ծախսատար է: Օրինակ՝ ներկայումս ձևավորված գների պայմաններում Հայաստանի գյուղական բնակավայրերում հանգիստը մեկ մարդ-օրվա հաշվով կազմում է 5-7 հազար դրամ: Մինչդեռ սովորական հանգստյան տներում հանգստանալու համար 2-3 անգամ ավելի գումար

¹ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պաշտոնական կայք, <http://www.mineconomy.am/hy/89>

ՀՀ ԱՊՕ տարեգիրք, 2017 թ., էջ 361, <http://www.armstat.am>

է պահանջվում: Ընտանիքով հանգստանալու դեպքում ագրոտուրիստի ծախսերը պակասում են 35-40 տոկոսով:

Երկրորդ, ագրոտուրիզմը, որպես կանոն , ընտանեկան տուրիզմ է, որը հնարավորություն է ընձեռում հատկապես երեխաների բարոյահոգեբանական և աշխատանքային դաստիարակության համար: Որպես կանոն, գյուղական տուրիզմը, զբոսաշրջիկի ցանկության դեպքում գյուղատնտեսական աշխատանքներին մասնակցելու և գյուղական կենցաղին հաղորդակցվելու լավագույն հնարավորություններ է ստեղծում:

Երրորդ, ագրոտուրիզմի կազմակերպումը մեծածավալ ներդրումներ չի պահանջում: Այստեղ, որպես հիմնական ներդրող, հանդես է գալիս գյուղական բնակչության համեմատաբար ունևոր խավը: Ուստի գյուղական զբոսաշրջության զարգացումն ինքնին կարևոր ազդակ է դառնում նաև գյուղատնտեսության զարգացման համար:

Եվ վերջապես, ագրոտուրիզմի զարգացումը նպաստում է նաև գյուղական կյանքի աշխուժացմանը, գյուղում սոցիալական ենթակառուցվածքների և մշակույթի զարգացմանը¹

Հետևաբար, գյուղական համայնքների զարգացման կարևորագույն ուղղությունը զբոսաշրջությունն է, որը լինելով Հայաստանի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից մեկը և գերակա ճյուղ, կարող է նպաստել տարածքային համաչափ զարգացմանը: Այդ նպատակով անհրաժեշտ է օգտագործել ՀՀ տարածքում գտնվող ողջ զբոսաշրջային ներուժը և զարգացնել նշված ոլորտը: Այս առումով մեծ կարևորություն են ներկայացնում մարզերի պատմաճարտարապետական հուշարձանները, բնական տեսարժան վայրերը՝ սարերը, լեռները, կիրճերը, լճերը, որոնք բարձրացնում են գյուղական համայնքների արժեքը տուրիստական գրավչության տեսանկյունից:

Սակայն հարկ է նշել, որ առանց համապատասխան գովազդի, ինչպես նաև անհրաժեշտ ենթակառուցվածքների և ժամանցի հարակից հնարավորությունների առկայության, դրանց արդյունավետությունը բավականին ցածր է: Այդ պատճառով պետք է իրականացնել համալիր միջոցառումներ և կիրառել զբոսաշրջության զարգացման նոր մոտեցումներ՝ շոշափելի արդյունքների հասնելու համար: Վերջինս իրականացնելու համար անհրաժեշտ են մեծածավալ ներդրումներ, պետական և մասնավոր հատվածի համագործակցություն և միմյանց աջակցելու կարողություն, հատկապես՝ հետևյալ միջոցառումների ուղղությամբ՝ պատմական վայրերի վերականգնում և նորովի մեկնաբանում, բնության բնության գրավչությունների ստեղծում, արկածային, Էկո և ագրոզբոսաշրջության ակտիվացում, ծառայությունների որակի բարձրացում, ենթակառուցվածքների բարելավում և նորերի ստեղծում, այդ թվում՝ առողջարանային կենտրոնների հիմնում, նոր հյուրանոցների և կոնֆերանս կենտրոնների կառուցում, թեմատիկ եր-

¹ AgroWeb, Armenia, <http://geggharkunik.agro.am/index.php?id=3418>

թուղիների և արահետների հզորացված ցանցերի ստեղծում, նոր զբոսաշրջային արդյունքի մշակում և այլն:

Իրականացվող միջոցառումների հետ մեկտեղ անհրաժեշտ է կիրառել ագրոտուրիզմի ակտիվ մարքեթինգային քաղաքականություն, այսինքն՝ նոր մոտեցումներով մեկնաբանել Հայաստանը միջազգային զբոսաշրջային շուկաներում, ստեղծել ներկայացուցչություններ արտասահմանյան երկրներում առավել ակտիվ մասնակցել միջազգային ցուցահանդեսներին և մուտք գործել նոր զբոսաշրջային շուկաներ:

Վերոնշյալ միջոցառումները կհանգեցնեն նոր աշխատատեղերի ստեղծմանը, գյուղական համայնքներում կենսամակարդակի բարձրացմանը, սոցիալ-տնտեսական համաչափ զարգացմանը, սոցիալական բնեռացման թուլացմանը, միգրացիոն հոսքերի նվազեցմանը, աղքատության հաղթահարմանը և ի վերջո նաև տնտեսության զարգացմանը:

Ներկայումս, ՀՀ-ում դեռևս զբոսաշրջության գործարարությունը հիմնականում կենտրոնացված է Երևանում, և արդյունքում, զբոսաշրջիները մայրաքաղաքից մեկ օրվա ընթացքում մեկնում և վերադառնում են մարզերից, որը բավականին ծախսատար և հոգնեցուցիչ է այցելուների համար: Այս պատճառով, զբոսաշրջային փաթեթներում անհրաժեշտ ենք համարում ներառելու երկու-երեք օր տևողությամբ ագրոտուրիզմի տուրեր: Այդ ճանապարհով զբոսաշրջիկները հնարավորություն կունենան նաև վայելելու էկո տուրիզմի առավելությունները:

Բանալի բառեր - ծառայությունների ոլորտ, զբոսաշրջություն, ագրոտուրիզմ, ներգնա զբոսաշրջություն, գյուղական մարզերի զարգացում:

Նոնա Խաչատրյան, Զբոսաշրջության ծառայությունների մատուցման հիմնախնդիրները ՀՀ-ում - Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ չնայած զբոսաշրջային ծառայությունների արագընթաց աճին, դեռևս ՀՀ-ում ագրոտուրիզմի ընդլայնումը բախվում է մարքեթինգային, ոչ բավարար ենթակառուցվածքների առկայության, գյուղաբնակների զբոսաշրջային ծառայությունների մատուցման հմտությունների պակասի հիմնախնդիրներին: Ներկայումս, ՀՀ-ում զբոսաշրջային գործակալությունների ծառայությունների մատուցման ծավալների անկում է արձանագրվում, որն իր հերթին բացասաբար է ազդում ագրոտուրիզմի զարգացման վրա: Այս առումով կարևորվում է զբոսաշրջային ծառայություններին պետության կողմից հարկային արտոնությունների տրամադրումը, երբ գործակալությունները կգործեն նոր զարգացող զբոսաշրջության ծառայությունների համակարգում:

Нона Хачатрян, Проблемы представления туристических услуг в РА - Несмотря на существенный рост туристических услуг, расширение разновидности туризма в Армении по-прежнему сталкивается с отсутствием маркетинга, недостаточной инфраструктурой. В настоящее время объем услуг туристических агентств

в Армении снижается, что в свою очередь, отрицательно сказывается на диверсификации туристических. В этой связи становится важным представить налоговые льготы на развивающихся туристических услуг.

Nonna Khachatryan, Issues of Tourism Service Supplying in RA - In the face of the rapid growth of tourism services, the expansion of tourism different types in Armenia still faces the lack of marketing, insufficient infrastructure. At present, the number of tourism agencies' services in the Republic of Armenia declines, which in turn, has a negative impact on the diversification tourism services. Incidentally, it is important to provide tax privileges to tourism services, when the appropriate agencies operate in the non developed spheres.

**ԼԻԶԵՆԳԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

ԱՐՓԻՆԵ ԵԳԱՆՅԱՆ

Աշխարհի բազմաթիվ երկրներում լիզինգն ունի լայն տարածում և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ֆինանսավորման առավել նպատահարմար եղանակներից է: Մեր երկրում, սակայն, դեռևս նոր են ձևավորվում ֆինանսական վարձակալության սկզբունքները և տնտեսության մեջ նրա զարգացման ձևերը:

Լիզինգի տնտեսական էությունը միանշանակ չէ, և երկար ժամանակ է՝ հանդիսանում է վիճելի: Լիզինգն, ըստ էության, ֆինանսավորման ոչ ավանդական ձև է, որում գործում են փոխառվական հարաբերությունները, պարտքային պարտավորությունների դիմաց վճարումները և ֆինանսական այլ մեխանիզմներ: Լիզինգը գույքային և դրամական հարաբերությունների ամբողջություն է, որ ձևավորվում են լիզինգային գործառնության մասնակիցների միջև: Որոշ հեղինակներ դիտարկում են լիզինգը որպես ձեռնարկատիրական գործունեություն, ումանք այն նույնացնում են երկարաժամկետ վարձակալության հետ կամ համարում են նրա ձևերից մեկը, երրորդները լիզինգը համարում են արտադրական միջոցների առքուվաճառքի ձև կամ ուրիշի գույքն օգտագործելու իրավունք, չորրորդները մեկնաբանում են լիզինգի էությունը որպես ուրիշի գույքի հավատարմագրային կառավարում:¹ Այլ տնտեսագետների կարծիքով՝ լիզինգը որպես տնտեսաիրավական կարգ, գործունեության հատուկ ձև է՝ ուղղված ժամանակավոր կամ ներգրավված ֆինանսական միջոցների ներդրմանը, երբ ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով վարձատուն (լիզինգատուն) պարտավորվում է կոնկրետ վաճառողից որպես սեփականություն ձեռքբերել պայմանագրում նշված գույքը և այդ գույքը գործառնական նպատակներով ժամանակավոր օգտագործման տրամադրել վարձակալին (լիզինգատուին) որոշակի վարձավճարի դիմաց:² Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի. «Ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով՝ վարձատուն պարտավորվում է վարձակալի նշած գույքը սեփականության իրավունքով ձեռք բերել վարձակալի կողմից որոշած վաճառողից եւ վճարի դիմաց հանձնել վարձակալի ժամանակավոր տիրապետմանը»:³ Այդ դեպքում վարձատուն պատասխանատվություն չի կրում վարձակալության առարկայի եւ վաճառողի ընտրության համար: Ֆինան-

¹Осипов Ю.М. Основы предпринимательского дела.-1992. С. 179, Шптлер Х.И, Пралтилеский лисинг –М. 1991. С. 7.

²Hatel H. Leasing in Industry N.Y. National Industrial Conference Boards:Montreal Conference in Canada 1968, P. 22

³ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի Գլուխ 35, Հոդված 677


սական վարձակալության պայմանագրով կարող է նախատեսվել, որ վարձակալված գույքը, վարձակալության ժամկետի ավարտից հետո կամ մինչև դրա ավարտը, անցնում է վարձակալի սեփականությանը՝ վարձակալի կողմից պայմանագրով նախատեսված գինը վճարելու պայմանով:

ՀՀ լիզինգային ծառայությունների շուկան ներկայանում է որպես երկարաժամկետ ռազմավարական հետաքրքրություն ինչպես հայկական, այնպես էլ ռուսական և արևմտյան ընկերությունների համար: Արտադրության համար անբավարար ռեսուրսների պայմաններում լիզինգային սխեմաների կիրառությունը դառնում է առավել գործածական՝ բարձրացնելով ընկերությունների արտադրականությունը: Հաշվի առնելով այն փաստը, որ լիզինգի յուրացումը որպես ֆինանսական ներդրումների լծակ Հայաստանում տեղի է ունենում ցածր արտադրական և տեխնոլոգիական ակտիվության ժամանակաշրջանում, անհրաժեշտ է ընդլայնել լիզինգային ծառայությունների գործունեության ոլորտը:

ՀՀ լիզինգային շուկան գտնվում է զարգացման ցածր մակարդակում. 2018թ. ՀՀ-ում լիզինգային ծառայություններ են տրամադրում 10 կազմակերպություն, գործող 17 առևտրային բանկերից 5-ը (30%-ը) և 36 վարկային կազմակերպություններից 5-ը (14%-ը), այն դեպքում երբ արտասահմանյան փորձը վկայում է, որ նպատակահարմար է լիզինգային գործարքները ընդգրկել բանկերի գործունեության մեջ: Բանկային ծառայությունների շուկայում մրցակցության սրման պայմաններում լիզինգային գործարքների իրականացումը կարող է լուրջ մրցակցային առավելություն հանդիսանալ: Ընդ որում, բանկերի լիզինգային գործարքների զարգացման վերլուծությունը վկայում է նրանց աշխարհագրության ընդլայնման մասին: Հարկ է նշել, որ լիզինգային գործարքները դեռևս չեն դարձել բանկերի համար ավանդական ոլորտ, իսկ նրանց մասշտաբները անհամադրելի են պոտենցիալ հնարավորություններին:

ՀՀ լիզինգային գործարքների 80%-ը բաժին է ընկնում «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի վարկային կազմակերպությանը, որի լիզինգային պորտֆելը հիմնականում միտված է արդյունաբերության (31%), շինարարության (13%) և առևտրի (13%) ոլորտների ֆինանսավորմանը:

Գր.1. «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի լիզինգային պորտֆելն՝ ըստ տնտեսության ճյուղերի¹



ՀՀ լիզինգային շուկայի առաջատարի պորտֆելն ըստ լիզինգի առարկաների ուղղված է հիմնականում ձեռնարկությունների համար նախատեսված ավտոմեքենաների ձեռքբերմանը (2015թ կազմել է ընդհանուր պորտֆելի 21.9%-ը, 2016թ.՝ 25.07 %) շինարարական և հանքարդյունաբերության և մեքենաշինության ոլորտներում իրականացվող գործարքների ֆինանսավորմանը:

ՀՀ-ում լիզինգային հարաբերությունների զարգացման համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է նորացնել հարաբերությունները արտասահմանյան գործակալությունների հետ տեխնիկայի և սարքավորումների մատակարարման արդյունավետ փոխհարաբերություններ ստեղծելու նպատակով: Ընդ որում անհրաժեշտ է հաշվի առնել տնտեսական իրական հատվածի որոշակի վերելքի գործոնը, ինչը տանում է պոտենցիալ լիզինգառուների ֆինանսական:


Սակայն ծառայությունների այս հատվածը ՀՀ-ում բախվում է մի շարք սահմանափակումների հետ: ՀՀ-ում որպես լիզինգի զարգացման հիմնական խնդիր կարելի է ներկայացնել հետևյալները.

- սկզբնական կապիտալի անբավարարություն և լիզինգային ընկերությունների ֆինանսական թուլություն,
- լիզինգի էության, նրա հնարավորությունների անբավարար ճանաչողություն,
- լիզինգի շուկայի ենթակառուցվածքի բացակայություն,
- լիզինգի մասին տեղեկատվության ապահովման համակարգի բացակայություն,

¹ Տվյալներն՝ ըստ «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի կայքի՝ <http://www.acbaleasing.am>

- լիզինգային ընկերությունների համար որակյալ և փորձառու կադրերի անբավարարություն,
- ազգային վարկային ռուրսների բարձր արժեք,
- հարկային, մաքսային, արժույթային կարգավորման անբավարար պայմաններ,
- սարքավորումների երկրորդային շուկայի բացակայություն,
- երաշխիքների և խոշոր կանխաճարների անհրաժեշտություն,
- գործընկերների վարկունակության որոշման խնդիրներ:

Գր. 2. . «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի լիզինգային պորտֆելն՝ ըստ լիզինգի առարկայի ¹



Սակայն, չնայած նշված դժվարություններին, ՀՀ-ում լիզինգային գործունեության զարգացումը հաստատվել է որպես հիմնական կապիտալի ձեռքբերման արդյունավետ ձև, իսկ լիզինգային ծառայությունների նկատմամբ պահանջարկը գերազանցում է նրա առաջարկը:

Այսօր լիզինգի զարգացմանը խոչընդոտող կարևոր գործոններից են.

1. Արտասահմանում «լիզինգ» տերմինով բնութագրում են ֆինանսական վարձակալությունը երեք տարի և ավել ժամանակով: Մեզ մոտ առայժմ չեն ստեղծվել բարենպաստ պայմաններ երկարաժամկետ ներդրումներ կատարելու համար: ՀՀ-ում լիզինգային ներդրումները տրամադրվում են 1-5 տարի ժամանակահատվածով, հազվադեպ՝ մինչև 10 տարի ժամկետով:

2. Լիզինգային շուկայի ենթակառուցների թերզարգացածություն:

3. Լիզինգային ընկերությունների համար որակավորված կադրերի անբավարարություն:

Չնայած օրենսդրական բազայի կատարելագործման ձեռքբերումներին, գոյություն ունեցող իրավական, կարգավորվող և հարկային համակարգերը չեն նպաստում արդյունավետ շուկայի զարգացմանը:

¹ Ըստ «Ալբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ 2015թ. և 2016թ. տարեկան հաշվետվությունների

Փաստացի լիզինգային գործառնությունների զարգացումը առայժմ անհրաժեշտ ընդհանրացում չի ստացել, ինչը բավականին խոչընդոտում է հիմնական ֆոնդերի նորացման գործում ներդրումային գործունեության զարգացմանը: Լիզինգի ժամանակ կարևոր նշանակություն է ձեռք բերում նաև ֆինանսական երաշխիքների ապահովումը, ինչը անմիջականորեն կապված է կոնկրետ գործարքի ընդհանուր առևտրային ռիսկի հետ: Դրա հետ կապված էլ լիզինգի պայմանագրերում հատուկ տեղ է հատկացվում լիզինգային գույքի ապահովագրմանը: Այդ իսկ պատճառով հարկավոր է իրականացնել լիզինգային հարաբերությունների իրավական կարգավորման վերափոխումներ, որտեղ պետք է հստակ սահմանվի դրամական գումարների գանձման իրավունքը, ինչպես նաև նշվեն այն դեպքերը, երբ լիզինգատուն իրավունք ունի վերադարձնել գումարը կամ լիզինգի օբյեկտը: Լիզինգային օրենսդրության մեջ պետք է սահմանվի լիզինգային գործարքների կառուցվածքը, որը ենթադրում է երեք սուբյեկտների մասնակցություն և համապատասխանաբար դրանց իրավունքներն ու պարտականությունները:

Լիզինգային գործունեությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտերը չունեն հիմնավորված տեսական բազա, լիզինգային գործառնությունների կարգավորման մեթոդներ և միջոցներ: Դրանք արտացոլում են լիզինգային գործունեության սկզբունքային դրույթները՝ լիզինգի իրավական հիմքը, պատահական վնասի ռիսկը, ծախսերը, լիզինգային գույքի վնասվելն ու փչանալը, լիզինգատուի և լիզինգատուի իրավունքներն ու պարտավորությունները: Պետությունը խթանում է լիզինգի զարգացումը տնտեսական մեթոդներով՝ ստեղծելով իրավիճակ, որը խթանում է ներդրումային գործունեության զարգացումը, որն ապահովում է գործունեության այդ ոլորտի նվազագույն ռիսկեր, սահմանում է երաշխիքներ, ապահովում է պարտականությունների ավերապահ կատարում և այլն:

Օրենսդրական դաշտում որոշ ճշգրտումների կամ առանձին օրենսդրական նորմերի ներդրումը կարող է նպաստել լիզինգային գործառնությունների ծավալի աճին: Լիզինգային շուկայի մասնակիցների գործունեությունը հիմնականում կարգավորվում է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով և «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, որտեղ լիզինգային կազմակերպություններին հատկացվում է առանձին տեղ: Մակայն գործող օրենսդրությունը և դրույթները արգելում են այսօր տնտեսվարող սուբյեկտներին կիրառել արագացված ամորտիզացիայի մեթոդներ, ինչը բավականին տարածված է միջազգային պրակտիկայում: Իսկ այս առավելությունը ավելացնում է ընկերության ֆինանսական արդյունքը և խթանիչ ազդեցություն է ունենում լիզինգի զարգացման վրա: Այսօր ձեռնարկություններում հիմնական միջոցների ամորտի-

զացիան իրականացնում են գծային եղանակով, ինչը լիզինգն անմրցունակ է դարձնում վարկի նկատմամբ:

Լիզինգի զարգացմանը խոչընդոտում է նաև այն, որ լիզինգավճարները չեն ներառվում ընկերության շահույթի և վնասի մասին հաշվետվության ծախսումների մեջ: Ծախսային հոդվածներին դասվում է միայն լիզինգային գույքի թանկացման տոկոսը:

Հայաստանում լիզինգի զարգացմանը խանգարում է առաջին հերթին բավականին թերի հարկային օրենսդրությունը: Այդ պատճառով ներկայիս լիզինգը չի համապատասխանում ֆինանսական վարձակալության դասական հասկացությանը, ինչի շնորհիվ զարգացած տնտեսություն ունեցող երկրներում նորացվում են տեխնոլոգիաները, այլ ավելի նման է տարրական ցածր արդյունավետ ապրանքային վարկին:

Կատարված վերլուծությունները թույլ են տալիս կատարել մի շարք տեսական և պրակտիկ բնույթի եզրակացություններ: Առավել էական եզրակացությունների և առաջարկությունների շարքին կարելի է դասել հետևյալները.

1. որպես գործունեության նոր ձև լիզինգը ունի հետևյալ առավելությունները

- վարձակալության համեմատությամբ մեծ առավելություններ, ինչը մեծ թվով հաճախորդներ է ներգրավում,

- փոխառված և ներդրումային ռեսուրսների ներգրավման հնարավորություն է տալիս,

2. սարքավորումների ձեռքբերման մյուս ձևերի համեմատությամբ ևս լիզինգը ունի առավելություններ,

- իրացվելի միջոցների սահմանափակության խնդիրը մեղմացվում է և ծախսերը կատարում են պայմանա՝րի գործողության ողջ ժամկետի ընթացքում,

- չի ներգրավվում փոխառված կապիտալ

- վարձակալական վճարները կատարվում են սարքավորումները տեղադրելուց, հարմարեցնելուց և շահահոսքի հանձնելուց հետո,

- թույլ է տալիս վարձակալողին պարբերաբար նորացնել բարոյապես մաշված սարքավորումները:

3. լիզինգի զարգացումը ՀՀ-ում պետք է հիմնվի առաջին հերթին լիզինգի գործարքի սուբյեկտների բազմակողմ պետական աջակցության վրա:

Լիզինգի ամենաէական առավելություններից մեկը կարող է դառնալ օրենսդրական հարկային արտոնությունների օրենսդրական փաթեթը, որն ապահովում է լիզինգային գործարքների արդյունավետ իրականացում: Ոլորտու կարգավորող օրենքի բացակայությունը ոչ միայն դանդաղեցնում է զարգացման գործընթացը, այլև մեծացնում է ներդրումային ռիսկը և ընդհանուր առմամբ վատացնում ներդրումային միջավայրը:

Առանձնակի ուշադրության է արժանի լիզինգի զարգացումը մանր ձեռնարկատիրության ոլորտում:

4. Լիզինգային գործարքների առավելագույն արդյունավետության համար լիզինգային ընկերությունների համար հարկ է կիրառել մի շարք սկզբունքներ, մասնավորապես լիզինգային գործարքի կազմակերպման ժամանակ լիզինգային ընկերությունը պետք է ընդգրկի բոլոր խնդիրների համալիր լուծումը՝ սկսած բիզնես պլանավորումից և ֆինանսական ռեսուրսների փնտրումից, մինչև գույքի և աշխատանքի մատուցում լիզինգառուին: Լիզինգային ընկերությունները պետք է պահպանեն հստակ ճյուղային առաջնայնության սկզբունքը: Այս սկզբունքները ընդամենը ընդգծում են լիզինգային ընկերությունների առավել ակտիվ աշխատանքի անհրաժեշտությունը:

Բանալի բառեր - Ֆինանսական ներդրումներ, ֆինանսական վարձակալություն, լիզինգային շուկա, վարկային շուկա, վարկավորման պայմաններ

Արփինե Եգանյան, Լիզինգային շուկայի զարգացման ինստիտուցիոնալ հիմնախնդիրները - Աշխարհի բազմաթիվ երկրներում լիզինգն ունի լայն տարածում և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ֆինանսավորման առավել նպատահարմար եղանակներից է: Մեր երկրում, սակայն, դեռևս նոր են ձևավորվում ֆինանսական վարձակալության սկզբունքները և տնտեսության մեջ նրա զարգացման ձևերը: Հոդվածում ներկայացված է ՀՀ-ում լիզինգային շուկայի զարգացման անհրաժեշտությունը տնտեսության զարգացման նպատակով և փորձ է արվել բացահայտելու դինամիկական վարձակալության զարգացման խնդիրները մեր երկրում:

Արпине Егаян, Институциональные проблемы развития лизингового рынка в Армении - Во многих странах мира лизинг имеет широкое распространение и является одним из самых доступных способов финансирования бизнеса. Однако в нашей стране принципы финансового лизинга и способы его развития в экономике по-прежнему новы. В статье рассматривается необходимость развития лизингового рынка в Армении для развития экономики, и была предпринята попытка определить проблемы развития финансового лизинга в Армении.

Arpine Yeganyan, Institutional problems of leasing market development in Armenia - In many countries of the world leasing is widely used and is one of the most accessible ways of financing business. However, in our country the principles of financial leasing and the ways of its development in the economy are still new. The article discusses the necessity of developing a leasing market in Armenia for economic development, and an attempt was made to identify the problems of development of financial leasing in Armenia.

ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԲԱՆԻՄԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՈՐԱԿՆԵՐԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ԱՆԻ ԽԱՉԱՏՏՐՅԱՆ

Արդի սոցիալ-տնտեսական, քաղաքական պայմաններում հատուկ պահանջներ են ներկայացվում կառավարչական գործունեություն իրականացնողին: Այդ պահանջներն առնչվում են ոչ միայն նրա մասնագիտական գիտելիքներին, կարողություններին, հմտություններին, այլ նաև մասնագիտական կարևոր հոգեբանական որակներին: Բազմաթիվ ուսումնասիրություններում առանձնացվում է այդ որակների համախումբը, որոնք կարևորվում են գործունեության արդյունավետ իրականացման տեսանկյունից: Մեր կողմից ընդգծվում է կառավարչի մասնագիտական կարևոր հոգեբանական որակների նկատմամբ համալիր մոտեցումը, այդ որակների համակարգային դրսևորման կարևորությունը: Տեսական և փորձարարական մի շարք ուսումնասիրությունների արդյունքում դուրս է բերվել կառավարիչների մասնագիտական կարևոր որակների համախումբը: Ուսումնասիրելով տարբեր հեղինակների կողմից ներկայացվող հոգեբանական կարևոր որակները՝ մեր կողմից առանձնացվել են հետևյալները՝

- Հուզական ինտելեկտ,
- Մտածողության ճկունություն, ինքնատիպություն,
- Հաղորդակցման հմտություններ, սոցիալ-հաղորդակցման բանիմացություն,
- Մթերեսակայունություն,
- Կամային ինքնակարգավորման առանձնահատկություններ¹:

Ակնհայտ է, որ կառավարչական գործունեություն իրականացնող անձի մասնագիտական կարևոր հոգեբանական որակների շարքում կարևորվում է կառավարչի հաղորդակցման բանիմացությունը: Այն ենթադրում է հստակ, պարզ, կենդանի խոսք, անձի հաղորդակցման հմտություններ: Հաղորդակցման բանիմացությունն իրենից ներկայացնում է հետևյալ կարողություններն ու հմտությունները՝ նախաձեռնել և կոնտակտ հաստատել, ստեղծել բարենպաստ մթնոլորտ, հարցադրումներ կատարել և պատասխանել, խրախուսել, որպեսզի զրուցակիցը պարզաբանի իր դիրքորոշումները, արտահայտությունները, լսել և հասկանալ այն, ինչ նկատի ունի զրուցակիցը, ապահովել հետադարձ կապ, կառավարել սեփական արտահայտչամիջոցները շփման գործընթացում և այլն²: Մոյն աշխատանքում մենք նպատակ ենք ունեցել բացահայտել ապագա կառա-

¹ Աղուզումյան Ռ., Պետրոսյան Լ., Պողոսյան Ս., Խաչատրյան Ա., Կառավարչական գործունեության առանձնահատկությունների հոգեբանական նկարագիրը, Եր., 2015թ., 232 էջ, էջ 95

² Бюндюгова Т. В., Личность руководителя, Учебно-методическое пособие, Таганрог, РГСУ, 2012, 91 с.

վարիչների սոցիալ-հաղորդակցման բանիմացության փոխկապվածությունը նրանց մտածողության տիպերի, կամային ինքնակարգավորման և սթրեսակայունության հետ: Այդ փոխկապվածությունների դուրսբերման նպատակով մեր կողմից իրականացվել է կորեյացիոն վերլուծություն, կիրառվել է Պիրսոնի՝ կորեյացիոն գործակցի բացահայտման բանաձևը:

Այս առանձնահատկությունների արտահայտվածությունն ուսումնասիրվել է մագիստրոսական ուսուցման գործընթացում: Հետազոտական խմբում ընդգրկվել են ՀՀ պետական կառավարման ակադեմիայի տարբեր մասնագիտությունների 100 ապագա կառավարիչներ: Սոցիալ-հաղորդակցական բանիմացությունը բացահայտելու համար մենք նպատակահարմար ենք գտել կիրառել Ե. Ի. Ռոգովի սոցիալ-հաղորդակցական բանիմացության գնահատման մեթոդիկան: Սոցիալ-հաղորդակցական բանիմացություն ասելով սովորաբար հասկանում են այլ մարդկանց հետ շփում հաստատելու և պահպանելու ընդունակությունը: Բանիմացության մեջ մտնում է այն գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամբողջությունը, որոնք ապահովում են արդյունավետ շփում: Սոցիալ-հաղորդակցական բանիմացությունը մարդկանց միջև զարգացող և մեծ մասամբ գիտակցվող շփման փորձն է, որը ձևավորվում է անմիջական փոխազդեցության պայմաններում¹: Այս որակի արտահայտվածության աստիճանի որոշման համար մեր կողմից կիրառված մեթոդիկան նախատեսված է անձի սոցիալ-հաղորդակցական բանիմացությունը գնահատելու համար: Այն ունի 6 սանդղակ՝ սոցիալ-հաղորդակցական ապաշնորհություն, անորոշության հանդեպ անհամբերություն, կոնֆորմիզմի ծայրահեղ ձգտում, կարգավիճակի բարձրացված ձգտում, անհաջողություններից խուսափելու ձգտում, ֆրուստրացիոն անհանդուրժողականություն²: Տվյալ մեթոդիկայի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ այն ընդգրկում է գործոնների լայն շրջանակ, իսկ կատարված ուսումնասիրության արդյունքում հնարավորություն է ստեղծվում համակարգային մոտեցում ցուցաբերել հետազոտվողի սոցիալ-հաղորդակցական ընդունակությունների նկատմամբ: Սույն հետազոտության շրջանակներում մեր կողմից կիրառվել է նաև Ջ. Բրուների «Մտածողության տիպը և կրեատիվության մակարդակը չափող հարցարան»-ը, Ա. Գ. Ջվերկովի և Ե. Վ. Էյդմանի «Կամային ինքնակարգավորման հետազոտման մեթոդիկա»-ն և Դեյթոյի սթրեսակայունության թեստը:

¹ Барабанщикова Т. А., Рыжкова А. Н., Психологические методики изучения личности: Практикум, Под ред. проф. А. Ф. Ануфриева. М., Ось-89, 2007, 304 с.

² Барабанщикова Т. А., Рыжкова А. Н., Психологические методики изучения личности: Практикум, Под ред. проф. А. Ф. Ануфриева. М., Ось-89, 2007, 304 с.

Իրականացված հետազոտության միջին արժեքների վերլուծությունները մեր կողմից արդեն ներկայացվել են տարբեր հրապարակումների տեսքով¹։ Այստեղ մենք նպատակահարմար ենք գտնում ներկայացնել կորելյացիոն վերլուծության արդյունքները։ Ստորև ներկայացվում են բացահայտված նշանակալի համահարաբերակցական կապերի վերլուծությունները։ Հարկ ենք համարում նշել, որ փոխկապվածությունների վերլուծությունն իրականացվել է ոչ թե սոցիալ-հաղորդակցման բանիմացության գումարային ցուցանիշի հետ, այլ սոցիալ-հաղորդակցման բանիմացության բաղադրիչների հետ փոխկապվածությունների բացահայտման ուղով։

Մագիստրանտների սոցիալ-հաղորդակցական ապաշնորհության և նշանային մտածողության միջև առկա է բացասական կապ ($r=-0.551$, $P<0,001$)։ Սա նշանակում է, որ միջանձնային փոխհարաբերություններ դժվարությամբ հաստատելը, անսպասելի շփում պահանջող իրավիճակներում դժվարությամբ կողմնորոշվելն ուղեկցվում է մագիստրանտների նշանային մտածողության թույլ զարգացվածությամբ։ Այս դեպքում նրանք տեղեկատվությունը չեն վերափոխում մտահանգումների օգնությամբ։ Առկա է բացասական կապ նաև սոցիալ-հաղորդակցական ապաշնորհության և պատկերավոր մտածողության միջև ($r=-0.350$, $P<0,01$), ուստի կարող ենք ասել, որ հաղորդակցման ընդունակության թույլ զարգացվածությունն ուղեկցվում է պատկերավոր մտածողության նույնանման զարգացվածությամբ։ Հարկ է նշել, որ պատկերավոր մտածողությունը բնորոշ է գեղարվեստական միտք ունեցող մարդկանց։ Միջանձնային փոխհարաբերությունների հաստատման ապաշնորհության և կամային ինքնակարգավորման ցուցանիշների միջև նույնպես առկա է բացասական կապ (համառություն՝ $r=-0.437$, $P<0,001$, ինքնատիրապետում՝ $r=-0.395$, $P<0,01$)։ Սոցիալ-հաղորդակցական կոմպետենտության բացակայությունն ուղեկցվում է կամքի ինքնակարգավորման

¹Խաչատրյան Ա.Ռ., Կառավարիչների սոցիալ-հաղորդակցական բանիմացության հետազոտում, Արդի հոգեբանություն, «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» VI միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2017թ., էջ 120-125,


Хачатрян А.Р., Исследование особенностей мышления управленца, Публичное управление, научный журнал, Ереван, 2017, N3-4, с. 333-338,

Хачатрян А.Р., Особенности проявления эмоционального интеллекта в процессе профессионального обучения управленцев, Развитие личности в контексте стандартизации образования: обновление смыслов: сборник научных статей по итогам проведения международного круглого стола, 19 апреля 2017 г. – Белгород: ООО «Эпицентр», 2017. – 244 с., с. 139-144,

Խաչատրյան Ա.Ռ., Կառավարիչների սթրեսակայունության դրսևորման առանձնահատկությունները, Արդիականության մարտահրավերները. Փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրներ։ ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 50-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու. – Եր.։ ԵՊՀ հրատ., 2014. -492 էջ։ 401-404


ընդունակության բացակայությամբ կամ թույլ արտահայտվածությամբ: Սոցիալ-հաղորդակցական ապաշնորհության և սթրեսի ցուցանիշի միջև առկա է դրական կապ ($r=0.405$, $P<0,001$), ինչը վկայում է այն մասին, որ հաղորդակցման բանիմացության թույլ զարգացվածությունն ուղեկցվում է սթրեսի հակվածությամբ, իսկ հաղորդակցման կոմպետենտության դեպքում դրսևորվում է սթրեսակայունության հակվածություն: Հետաքրքրական է անորոշության հանդեպ անհամբերության և կամային ինքնակարգավորման բաղադրիչների միջև առկա բացասական կապը (համառություն՝ $r=-0.630$, $P<0,001$, ինքնատիրապետում՝ $r=-0.652$, $P<0,001$): Անորոշության հանդեպ անհամբերությունն ուղեկցվում է կամային ինքնակարգավորման ցածր արտահայտվածությամբ, ինչը կարող է դրսևորվել բնկվողականության և մտադրությունների անկայունության տեսքով: Սոցիալ-հաղորդակցական բանիմացության մյուս բաղադրիչների՝ անհաջողություններից խուսափելու ձգտման և ֆրուստրացիոն անհանդուրժողականության ու կամային ինքնակարգավորման բաղադրիչների միջև ևս առկա է բացասական կապ, որը ներկայացված է գծանկար 1-ում: Ըստ էության, կարող ենք ասել, որ սոցիալ-հաղորդակցական բանիմացության և կամային ինքնակարգավորման միջև առկա է դրական փոխկապվածություն, ինչը ենթադրում է, որ մագիստրանտների մոտ մի որակի զարգացումը կարող է ուղեկցվել մյուսի զարգացմամբ: Հաղորդակցման բանիմացությունը ենթադրում է կամային ինքնակարգավորման ընդունակություն, և՛ հակառակը: Այս ընդհանրացումը կարևոր է հաշվի առնել ապագա կառավարիչների մասնագիտական կրթության, ինչպես նաև նրանց անձի նպատակաուղղված զարգացման ծրագրերի մշակման գործընթացում:

Գծանկար 1.



Սոցիալ-հաղորդակցական բանիմացության բաղադրիչների դրական և բացասական կոռելյացիոն կապերի գծանկար

Ծանուցում.



Այսպիսով՝ իրականացված համահարաբերակցական վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ ապագա կառավարիչների սոցիալ-հաղորդակցական բանիմացության, սթրեսակայունության և կամային ինքնակարգավորման միջև առկա են որոշակի կապեր, որոնց իմացությունն ու գործնական կիրառումը հնարավորություն են տալիս համակարգային մոտեցում ցուցաբերել կառավարիչների պատրաստման և վերապատրաստման գործընթացում նրանց մասնագիտական կարևոր որակների զարգացմանը: Այդ որակների զարգացումը մասնագիտական կրթության գործընթացում հնարավորություն է տալիս ապագա մասնագետին առավելագույնս պատրաստել գործունեությանը, զինել նրան ոչ միայն գիտելիքներով, կարողություններով, հմտություններով, այլ նաև տվյալ մասնագիտական գործունեության համար կարևոր որակներով: Մասնագիտական կարևոր հոգեբանական որակների զարգացումը ժամանակակից կրթության կարևորագույն գործառնություններից մեկը պետք է հանդիսանա, ինչի արդյունքում աշխատաշուկա կմտնեն և՛ մասնագիտական գիտելիքներով, և՛ անհրաժեշտ հոգեբանական որակներով օժտված անձինք՝ հնարավորություն ունենալով արդյունավետ գործունեություն ծավալելու:

Բանալի բառեր - Կառավարչական գործունեություն, մասնագիտական կարևոր որակներ, հաղորդակցման բանիմացություն, սթրեսակայունություն, կամային ինքնակարգավորում, գործունեության արդյունավետություն:

Անի Խաչատրյան, Կառավարիչների սոցիալ-հաղորդակցական բանիմացության և մասնագիտական կարևոր որակների փոխկապվածությունը - Սույն հոդվածում ներկայացվում են ապագա կառավարիչների հաղորդակցման բանիմացության և մասնագիտական կարևոր որակների կապերի հարաբերակցության հետազոտության արդյունքները: Իրականացված հետազոտության արդյունքների վերլուծությունից ակնհայտ դարձավ, որ հաղորդակցման բանիմացության և կամային ինքնակարգավորման, սթրեսակայունության, մտածողության տիպերի միջև առկա են որոշակի փոխկապվածություններ, որոնց իմացությունն ու կիրառությունը կարող է հիմք հանդիսանալ կառավարիչների պատրաստման և վերապատրաստման գործընթացների արդյունավետ կազմակերպման համար:

Ани Хачатрян, Взаимосвязь социально-коммуникативной компетентности и профессионально важных качеств управленцев - В статье представлены

результаты исследования взаимосвязи коммуникативной компетентности и профессионально важных качеств будущих управленцев. Анализ результатов исследования показал, что существует некоторая взаимосвязь между коммуникативной компетентностью и волевой саморегуляцией, стрессоустойчивостью и типами мышления, знание и применение которых могут служить основой для эффективной организации процессов подготовки и переподготовки управленцев.

Ani Khachatryan, Communication of socia-communicative competence and professionally important qualities of managers - The article presents the results of the study of the relationship between communicative competence and professionally important qualities of future managers. Analysis of the research results showed that there is some correlation between communicative competence and volitional self-regulation, stress resistance and types of thinking, knowledge and application of which can serve as the basis for effective organization of the processes of training and retraining managers.

**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԵՎ
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՐԴԱՇԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ
ԼԵՈՆԱՅԻՆ և ԲԱՐՁՐ ԼԵՈՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ**

ՎԱՀԱՆ ՊՈՏՈՍՅԱՆ

ՀՀ-ում 181 բնակավայր ունեն լեռնայինի կարգավիճակ, որից 175-ը՝ գյուղական, 6-ը՝ քաղաքային [1]: Դրանց բաժին է ընկնում ՀՀ բնակավայրերի ընդհանուր թվի 18,1 և բնակչության՝ 7,7%-ը (ՀՀ գյուղական բնակչության 14,5 և քաղաքային բնակչության՝ 3,8%-ը): Բարձր լեռնային բնակավայրերի ընդհանուր թիվը 178 է, որից 171-ը՝ գյուղական, 7-ը՝ քաղաքային [1]: Դրանց բաժին է ընկնում ՀՀ բնակչության ընդհանուր թվի 9,9%-ը (ՀՀ գյուղական բնակչության՝ 19,8 և քաղաքային բնակչության՝ 4,2%-ը) [հաշվարկներն ըստ թիվ 2 սկզբնաղբյուրի]:

Եթե հանրապետության լեռնային և բարձր լեռնային տարածքներում բնակավայրի թիվը գրեթե հավասար է, ապա բնակչության թվի առումով բարձր լեռնային տարածքները լեռնայիններին գերազանցում են ավելի քան 68 հազարով (ընդհանուր թվում 56,5% և 43,5% հարաբերակցությամբ): Վերջինս նախևառաջ պայմանավորված է բարձր լեռնային շրջաններում (առավելապես 2000-2200մ բարձրություններում) մշտական բնակության համար պիտանի սևահողային առավել ընդարձակ տարածքների, խոտհարքների և արոտավայրերի առկայությամբ:

Աղ. 1

ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածքներում բնակչության և
բնակավայրերի բաշխվածությունն ըստ մարզերի (2017թ.)¹

Մարզեր	Գյուղական				Քաղաքային		Ընդհանուր	
	Լեռնային		Բարձր լեռնային		Քաղաքային		Ընդամենը	
	ա	բ	ա	բ	ա	բ	Ա	բ
Արագածոտն	25	21792	39	28436	1	6165	65	56393
Արարատ	6	2889	0	0	-	-	6	2889
Գեղարքունիք	8	11056	75	157785	5	68373	88	237214
Լոռի	30	34700	0	0	-	-	30	34700
Կոտայք	18	24452	5	3831	2	42024	25	70307
Շիրակ	45	43314	36	20623	2	23876	83	87813
Սյունիք	28	13276	10	2273	2	7348	40	22897
Վայոց ձոր	14	5916	7	2237	1	4324	22	12477
ՀՀ-ում	174	157395	172	215185	13	152110	359	524690

ա/ բնակավայրերի թիվը, բ/ բնակչության թիվը

¹ Աղյուսակը կազմված է թիվ 2 սկզբնաղբյուրի տվյալների հիման վրա

Արմավիրից և Տավուշից բացի լեռնային և բարձր լեռնային բնակավայրեր կան ՀՀ մնացած բոլոր մարզերում: Արարատի և Լոռու մարզերում չկան բարձր լեռնային, իսկ մնացած վեց մարզն ունեն ինչպես լեռնային, այնպես էլ բարձր լեռնային բնակավայրեր:

2017թ. դրությամբ ՀՀ լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի բնակչության 45,2%-ը բաժին էր ընկնում Գեղարքունիքի մարզին: Այստեղ են գտնվում ՀՀ նմանատիպ տարածքների 13 քաղաքից 5-ը (38%-ը): Դրանց բաժին է ընկնում ՀՀ այդպիսի տարածքների քաղաքային բնակչության 44,9%-ը: Մարզը հանրապետության լեռնային և բարձր լեռնային տարածքներում ամենախտաբնակներից է, ինչպես ընդհանուր տարածքի, այնպես էլ գյուղատնտեսական հողատարածքների հաշվով (աղ. 2): Դա պայմանավորված է մարզի Սևանի մերձլճային հարթություններում գյուղատնտեսության զարգացման համար առավել բարենպաստ պայմանների առկայությամբ և խոշոր գյուղերի ձևավորմամբ, ինչպես նաև տարածաշրջանում ավանդաբար նկատվող բնակչության բարձր բնական աճով:

Հայաստանի նման լեռնային երկրներում բնակեցված տարածքի մեջ է մտցվում գյուղական բնակավայրերի բուն տարածքը, վարելահողերը, բազմամյա տնկարկները և բնակավայրերին անմիջապես հարող տնտեսական այլ հողատեսքերը: Բնակեցված տարածքից դուրս են մնում անտառային զանգվածները, սեզոնային արոտները, լեռնային խոտհարքերը, ինչպես նաև չօգտագործվող հողերը [3, 4]: Այս իմաստով լեռնային և բարձր լեռնային տարածքներում բնակչության խտության հաշվարկն ըստ վարելահողերի կարող է ավելի իրական կերպով արտահայտել այդպիսի տարածքների բնակեցվածության պատկերը [3]: Հաշվարկները ցույց են տալիս, որ Գեղարքունիքի մարզի լեռնային և բարձր լեռնային տարածքներում գյուղական բնակչության խտությունն ըստ վարելահողերի կազմում է ավելի քան 246, իսկ գյուղատնտեսական հողատարածքների հաշվով 67 մարդ/կմ²:

Շիրակում լեռնային և բարձր լեռնային բնակավայրեր կան մարզի բոլոր տարածաշրջաններում, սակայն դրանց մոտ 78%-ը գտնվում են Ամասիայի, Աշոցքի և Արթիկի տարածաշրջաններում: Ընդ որում, առաջին երկու տարածաշրջաններում այդպիսիք են բոլոր 47 գյուղերը: Մարզի նշված տարածքներում բնակչության խտության բոլոր կարգի ցուցանիշները փոքր են ՀՀ նմանատիպ տարածքների համապատասխան միջին ցուցանիշներից (տես աղ. 2), ինչը վկայում է Շիրակի լեռնային և բարձր լեռնային տարածքների համեմատաբար թույլ բնակեցվածության մասին: Դա առավելապես վերաբերվում է մարզի Աշոցքի և Ամասիայի տարածաշրջաններին, որտեղ բնակավայրերի մեծ մասն ունեն փոքր մարդաբանակ:

Արագածոտնի մարզում լեռնային և բարձր լեռնային բնակավայրերը

տեղաբաշխված են հիմնականում Արագածի, Ապարանի և Թալինի տարածաշրջաններում: Արագածի և Ապարանի տարածաշրջանների բոլոր գյուղերը և Ապարան քաղաքն ունեն այդպիսի կարգավիճակ: Մարզի նշված տարածքներում բնակչության խտության ցուցանիշներն ընդհանուր տարածքի և գյուղատնտեսական հողատարածքների հաշվով 2-3 կետով գերազանցում են ՀՀ համապատասխան միջին ցուցանիշներին, իսկ գյուղական բնակչության խտությունն ըստ գյուղատնտեսական հողատարածքների և վարելահողերի կազմում է համապատասխանաբար 59 և 177 մարդ/կմ²:

Կոտայքի մարզը երրորդն է ՀՀ-ում այդպիսի տարածքներում բնակչության քանակով, քանի որ այստեղ է գտնվում բնակչության թվով ամենամեծ քաղաքային բնակավայրը՝ Հրազդանը: Մարզի լեռնային և բարձր լեռնային տարածքների գյուղական բնակչությունը և բնակավայրերը հիմնականում գտնվում են Հրազդանի և Կոտայքի տարածաշրջաններում: Մարզի նշված տարածքների բնակչության բոլոր կարգի ցուցանիշները (բացառությամբ վարելահողերի հաշվով գյուղական բնակչության խտության) գերազանցում են ՀՀ նմանատիպ տարածքների միջին ցուցանիշներին [աղ. 2]:

Լոռու մարզի լեռնային բնակավայրերի կեսից ավելին (16-ը) գտնվում են Սպիտակի, մնացածը՝ Գուգարքի և Տաշիրի տարածաշրջաններում: Սպիտակի տարածաշրջանում է կենտրոնացված մարզի լեռնային բնակավայրերի բնակչության շուրջ 68%-ը: Մարզի լեռնային տարածքներն ՀՀ-ում առանձնանում են վարելահողերի հաշվով գյուղական բնակչության ամենամեծ խտությամբ (312 մարդ/կմ²):

Հանրապետության լեռնային և բարձր լեռնային տարածքների բնակավայրերի ընդհանուր թվի 11 և բնակչության 4,4%-ը բաժին է ընկնում Սյունիքին: Այստեղ գյուղական բնակավայրերի 66 և բնակչության ավելի քան 78%-ը կենտրոնացած է Սիսիանի տարածաշրջանում: Մարզի նշված տարածքները բնակչության խտության բոլոր կարգի ցուցանիշներով ՀՀ-ում զբաղեցնում են վերջին տեղերից մեկը, ինչը վկայում է մարզի այդպիսի տարածքների թույլ բնակեցվածության մասին [տես աղ. 2]:

Վայոց ձորում նման կարգավիճակ ունեն 20 գյուղ և Ջերմուկ քաղաքը, որոնց միասին բաժին է ընկնում ՀՀ այդպիսի տարածքների բնակչության ընդամենը 2,4%-ը: Մարզում այդ կարգի բնակավայրերը հավասարաչափ բաշխված են Վայքի և Եղեգնաձորի տարածաշրջաններում, իսկ բնակչության խտության բոլոր կարգի ցուցանիշները մի քանի անգամ (բացառությամբ վարելահողերի հաշվով գյուղական բնակչության խտության ցուցանիշի) փոքր են ՀՀ միջին ցուցանիշներից [աղ.2]:

Հանրապետության նմանատիպ տարածքների բնակչության ընդամենը 0,6%-ը բաժին է ընկնում Արարատի մարզի լեռնային 6 գյուղի: Այստեղ ևս բնակ-

չության խտության բոլոր կարգի ցուցանիշները բարձր չեն և իրենց մեծությամբ բավական մոտ են Սյունիքի և Վայոց ձորի համապատասխան ցուցանիշներին [աղ. 2]:

Բացի բնակչության խտությունից հանրապետության լեռնային և բարձր լեռնային տարածքների բնակեցվածության աստիճանը բնութագրող կարևոր ցուցանիշներից է նաև գյուղական բնակավայրերի խտությունը կամ մեկ բնակավայրին բաժին ընկնող տարածքի չափը: Այն արտահայտվում է $100կմ^2$ տարածքին կամ գյուղատնտեսական հողատարածքին բաժին ընկնող գյուղերի թվով: ՀՀ նշված տարածքներում գյուղական բնակավայրերի միջին խտությունը ընդհանուր տարածքի հաշվով կազմում է 3 գյուղ $100կմ^2$ -ուն (որը գրեթե հավասար է ՀՀ միջին ցուցանիշին), իսկ գյուղատնտեսական հողատարածքների հաշվով՝ 3,6: Վերջինս ՀՀ համապատասխան միջին ցուցանիշից փոքր է 1,8 անգամ: Դա բացատրվում է հանրապետության լեռնային և բարձր լեռնային տարածքներում գյուղատնտեսական հողատարածքների համեմատաբար բարձր տեսակարար կշռով (մասնավորապես՝ արոտավայրերի և խոտհարքերի): ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածքներում գյուղական բնակավայրերի խտությունն ընդհանուր տարածքի և գյուղատնտեսական հողատարածքների հաշվով առավել մեծ է Արագածոտնի և Շիրակի, փոքր՝ Վայոց ձորի, Սյունիքի և Արարատի մարզերում [աղ. 3]:

Աղյուսակ 2

ՀՀ մարզերի լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի հողային ֆոնդի կառուցվածքը և բնակչության խտությունը (2017թ.)¹

Մարզերը	Վարչական տարածքը (կմ ²)		Գյուղատնտեսական հողատարածքների մակերեսը (կմ ²)	Վարելահողերի և բազմամյա տնկարկների մակերեսը (կմ ²)	Արոտավայրերի և խոտհարքերի (կմ ²) մակերեսը	Բնակչության խտությունը (մարդ/կմ ²)		Գյուղական բնակչության խտությունը (մարդ/կմ ²)	
	Գյուղական	Քաղաքային				Ընդհանուր տարածքի հաշվով	Գյուղատնտ. հողատարածքների հաշվով	Վարելահողերի հաշվով	Գյուղատնտեսական հողատարածքների հաշվով
Արագածոտն	1219,8	28,2	850,7	283,8	566,9	45,0	66,0	177,0	59,0
Արարատ	268,1	0	219,6	19,3	200,3	11,0	13,0	146,0	13,0
Գեղարքունիք	3428,5	384,4	2533,9	685,7	1848,2	62,0	94,0	246,0	67,0
Լոռի	997,4	0	620,0	111,1	508,9	35,0	56,0	312,0	56,0
Կոտայք	979,4	168,9	704,7	123,1	581,6	61,0	100,0	230,0	40,0
Շիրակ	1801,7	78,5	1510,3	432,4	1077,9	47,0	58,0	148,0	42,0
Սյունիք	1864,4	62,0	1047,2	198,9	848,3	12,0	22,0	78,0	15,0
Վայոց ձոր	1166,7	13,7	698,5	75,9	622,6	11,0	18,0	107,0	12,0
Ընդամենը	11726,3	735,7	8184,9	1930,3	6254,7	42,0	64,0	193,0	46,0

¹ Աղյուսակը կազմված է ՀՀ համայնքների (բնակավայրերի) վարչական տարածքների և հողային ֆոնդի վերաբերյալ ՀՀ Կադաստրի պետական կոմիտեի և «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով-2017» վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածքներում գյուղական բնակավայրերի խտությունը¹

Մարզեր	Գյուղական բնակավայրերի խտությունը (բնակավայր/100կմ ²)		
	Ընդհանուր տարածքի հաշվով	Գյուղատնտեսական հողատարածքների հաշվով	Վարելահողերի հաշվով
Արագածոտն	5,2	6,8	22,7
Արարատ	2,2	2,4	31,4
Գեղարքունիք	2,4	2,8	12,1
Լոռի	3,0	4,3	27,1
Կոտայք	2,3	2,8	18,9
Շիրակ	4,5	5,0	18,7
Սյունիք	2,0	2,6	19,2
Վայոց ձոր	1,8	2,2	28,7
ՀՀ	3,0	3,6	18,0

¹ Աղյուսակը կազմված է ՀՀ համայնքների (բնակավայրերի) վարչական տարածքների և հողային ֆոնդի վերաբերյալ ՀՀ Կադաստրի պետական կոմիտեի և «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով-2017» վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

Ցանկացած տարածաշրջանի տարաբնակեցման համակարգի բնութագրման կարևոր գծերից է գյուղական բնակավայրերի մարդաշատությունը, որն օբյեկտիվորեն արտացոլում է մի շարք գործոնների գումարային ազդեցությունը գյուղական տարածքների ու բնակավայրերի զարգացման վրա:

ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածքներում գյուղական բնակավայրերն ըստ մարդաքանակի ունեն խիստ մեծ տարբերություններ: Նշված տարածքներում կան գյուղեր, որոնց բնակչության թիվը չի անցնում մեկ տասնյակից և գյուղեր, որոնք ոչ միայն լեռնային և բարձր լեռնային տարածքների, այլ նաև հանրապետության մասշտաբով պատկանում են գերխոշորների թվին: ՀՀ նշված տարածքներում գյուղական բնակավայրերի միջին մարդաքանակը կազմում է 1077 մարդ, որը 2017թ. ՀՀ միջին ցուցանիշից (1355) պակաս է 278-ով: Սակայն ըստ մարզերի այդ ցուցանիշն ունի զգալիորեն մեծ տարբերություններ [աղ. 4]:

ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածքներում գյուղական բնակավայրերի և բնակչության թվի բաշխումն ըստ գյուղերի մարդաքանակի (2017թ.)¹

Գյուղերի խմբերն ըստ մարդաքանակի (մարդ)	Գյուղերի թիվը	Գյուղերի մասնաբաժինն ընդհանուրից (%)	Բնակչության բաշխումն ըստ բնակավայրերի խմբերի (%)	Գյուղերի միջին մարդաքանակը խմբում
Մինչև 50	16	4,6	0,1	26
51-100	10	2,9	0,2	71
101-200	38	11,0	1,5	145
201-500	96	27,7	8,5	331
501-1000	72	20,8	13,4	695
1001-2000	59	17,1	21,2	1337
2001-3000	25	7,2	16,3	2425
3001-5000	20	5,8	20,9	3886
5000-ից ավելի	10	2,9	17,9	6687
Ընդամենը	346	100,0	100,0	1077

ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածքների գյուղերի ընդհանուր թվաքանակում առավել մեծ բաժին ունեն փոքր (201-500 մարդ) և միջին (501-1000 մարդ) մեծության գյուղերը: Դրանց բաժին է

¹Աղյուսակը կազմված է «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով», Երևան 2017 ժողովածուի տվյալների հիման վրա

ընկնում այդպիսի գյուղերի թվի 48,5 և բնակչության թվի 21,9%-ը: ՀՀ-ում 201-1000 բնակիչ ունեցող գյուղերը կազմում են ընդհանուր թվաքանակի 36,3%-ը և դրանց բաժին է ընկնում ՀՀ գյուղական բնակչության ընդամենը 14,5%-ը [6]: Դա նշանակում է, որ ՀՀ-ի համեմատությամբ լեռնային և բարձր լեռնային տարածքների տարաբնակեցման համակարգում փոքր ու միջին մեծության գյուղերն ավելի մեծ դեր ունեն:

Եթե ՀՀ տարաբնակեցման համակարգում իրենց թվաքանակով (312 գյուղ) և բնակչության մասնաբաժնով (45%) առանձնահատուկ տեղ ունեն 1001-3000 բնակիչ ունեցող գյուղերը [6], ապա լեռնային և բարձր լեռնային տարածքներում այդպիսի գյուղերի մասնաբաժինը ՀՀ համապատասխան ցուցանիշից (33%) պակաս է 8,7, իսկ բնակչության մասնաբաժինը՝ 7,5 տոկոսային կետով [աղ.4]: Հարկ է նկատել, որ հանրապետությունում առանցքային դերակատարություն ունեցող բնակավայրերի այս խմբի լեռնային և բարձր լեռնային տարածքներում գյուղերի թվի և բնակչության քանակի տոկոսային համեմատաբար ցածր ցուցանիշներ ունենալը պետք համարել լուրջ խնդիր, քանի որ գյուղերի այդ խումբը ինչպես ժողովրդագրական, այնպես էլ սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյունից ունեն ավելի մեծ ներուժ և կայուն տեղ են զբաղեցնում ՀՀ գյուղական տարածքների և տարաբնակեցման համակարգում:

Թեև նշված տարածքներում խոշոր և գերխոշոր գյուղերի տեսակարար կշիռը գյուղերի ընդհանուր թվաքանակում հանրապետության համապատասխան ցուցանիշից (11,2%) պակաս է տոկոսային 2,5 կետով, սակայն բնակչության մասնաբաժնի տեսակետից այդ ցուցանիշները գրեթե հավասար են (39,3 և 38,8%): Վերջինս բացատրվում է հատկապես Գեղարքունիքի մարզի լեռնային և բարձր լեռնային տարածքներում խոշոր և գերխոշոր գյուղերի կենտրոնացվածությամբ:

Հանրապետության լեռնային և բարձր լեռնային տարածքներում գյուղերի ընդհանուր քանակում մեծ թիվ (160 գյուղ, 46%) են կազմում փոքր և մանր գյուղերը (մինչև 500 բնակիչ ունեցող) և դրանց բաժին է ընկնում նշված շրջանների գյուղական բնակչության ընդամենը 10,3%-ը: Հարկ է նաև նկատել, որ մինչև 500 բնակիչ ունեցող գյուղերը ՀՀ-ում 2015թ. դրությամբ կազմել են մշտական բնակչություն ունեցող գյուղերի ընդհանուր թվի 34,8%-ը, որոնց բաժին էր ընկնում ՀՀ գյուղական բնակչության ընդհանուր թվի 5,6%-ը [6]: Բացի այդ, հանրապետության լեռնային և բարձր լեռնային գյուղական բնակավայրերի մեջ թվաքանակով ամենաշատը (96 գյուղ, 27,7%) փոքր (201-500 բնակիչ) գյուղերն են, սակայն դրանց բաժին է ընկնում նշված տարածքների գյուղական բնակչության ընդամենը 8,5%-ը (լեռնային և բարձր լեռնային տարածքներում են գտնվում 201-500 բնակիչ ունեցող ՀՀ գյուղերի ավելի քան 57%-ը):

Ինչպես ՀՀ-ում, այնպես էլ լեռնային և բարձր լեռնային տարածքներում առանձնակի կարևորություն և նշանակություն ունեն մինչև 200 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերը: ՀՀ-ում այդպիսիք կազմում են գյուղերի ընդհանուր թվի 16,6%-ը (151 գյուղ) և դրանց բաժին է ընկնում ՀՀ գյուղական բնակչության 1,3 %-ը [6], իսկ լեռնային և բարձր լեռնային տարածքներում այդ ցուցանիշները կազմում են համապատասխանաբար 18,5 և 1,8%: Գյուղական բնակավայրերի այս խմբի մեջ ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական և հեռանկարային զարգացման առումով առավել խոցելի համարվող մինչև 50 բնակիչ ունեցող ՀՀ 26 գյուղերից 16-ը (61,5%) գտնվում են լեռնային և բարձր լեռնային տարածքներում, հիմնականում Շիրակի ու Սյունիքի մարզերում [աղ.5]:

ՀՀ մարզերի լեռնային և բարձր լեռնային տարածքներում գյուղական բնակավայրերի և բնակչության թվի բաշխվածությունն ըստ գյուղերի մարդաքանակի (2017թ.)¹

Մարզերը	Գյուղական բնակչության բաշխումն ըստ մարդաշատության խմբերի (մարդ)																		Ընդամենը բնակչության թվով	Գյուղերի միջին մարդաքանակ
	Մինչև 50		51-100		101-200		201-500		501-1000		1001-2000		2001-3000		3001-5000		5000-ից ավելի			
	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ		
Արագածոտն	1	9	2	163	3	412	16	5474	27	18236	10	12488	4	9499	1	3947	-	-	50228	785
Արարատ	-	-	-	-	-	-	4	880	1	679	1	1330	-	-	-	-	-	-	2889	481
Գեղարքունիք	-	-	1	81	7	1060	17	5899	15	9484	13	16486	8	19985	12	48976	10	66870	168841	2034
Լոռի	1	36	-	-	5	694	6	2184	2	1882	10	13758	4	8811	2	7335	-	-	34700	1157
Կոտայք	-	-	-	-	2	272	6	2186	3	1924	7	9046	4	10578	1	4277	-	-	28283	1230
Շիրակ	6	109	3	195	11	1547	25	7964	13	9389	14	19794	5	11744	4	13195	-	-	63937	789
Սյունիք	6	184	3	211	7	955	13	4605	5	3585	4	6009	-	-	-	-	-	-	15549	409
Վայոց ձոր	2	77	1	65	3	581	9	2589	6	4841	-	-	-	-	-	-	-	-	8153	388
ՀՀ-ում	16	415	10	715	38	5521	96	31781	72	50020	59	78911	25	60617	20	77730	10	66870	372580	1077

¹ Աղյուսակը կազմված է «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով-2017» վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

ՀՀ մարզերի լեռնային և բարձր լեռնային տարածքներում գյուղական բնակավայրերի թվի բաշխվածությունն ըստ մարդաքանակի առանձնանում է տարածքային (տարածաշրջանային) նկատելի տարբերություններով, որի մասին հանգամանակից պատկերացում են տալիս թիվ 5 աղյուսակում բերված տվյալները:

ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածքներում գյուղական բնակավայրերի և բնակչության բաշխվածության ուսումնասիրությունն ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության ցույց է տալիս, որ գյուղերի 42 և բնակչության 52,6%-ը տեղաբաշխված է 1801-2000մ բարձրության գոտում: Ավելի ցածրադիր՝ մինչև 1800մ բարձրության գոտում են գտնվում գյուղական բնակավայրերի 31 և բնակչության 29%-ը, մնացածը (գյուղերի 27 և բնակչության 18,4%-ը)՝ 2000մ-ից բարձր շրջաններում: Նշված տարածքներում ամենացածրադիր (Կոտայքի մարզի Զովք գյուղը) և ամենաբարձրադիր (Գեղարքունիքի մարզի Վերին Շորժա գյուղը) գյուղերի միջև հարաբերական բարձրությունը կազմում է 985 մետր: ՀՀ-ում 2200մ-ից բարձր տարածքներում կա մշտական բնակչություն ունեցող 4 գյուղ, որոնք 2017թ. դրությամբ ունեին 1769 բնակիչ: Գյուղերի միջին մարդաքանակն առավել բարձր է 1801-2000մ բարձրության գոտում (1352 մարդ, որը գրեթե հավասար է ՀՀ միջին ցուցանիշին), ցածր՝ 2000մ-ից բարձր շրջաններում (728 մարդ) [աղ. 6]:

Աղ. 6

ՀՀ մարզերի լեռնային և բարձր լեռնային տարածքներում գյուղական բնակավայրերի և բնակչության թվի բաշխվածությունն ըստ բարձրության գոտիների (մետր)¹

Մարզերը	Մինչև 1800			1801-2000			2000-ից բարձր			Ընդամենը		
	ա	բ	գ	ա	բ	գ		բ	գ	ա	բ	գ
Արագածոտն	10	9289	929	27	22482	833	7	18457	684	64	50228	785
Արարատ	3	1780	593	3	1109	370		-	-	6	2889	482
Գեղարքունիք	5	6553	1311	44	120989	2750	4	41299	1215	83	168841	2034
Լոռի	26	29695	1142	4	5005	1251		-	-	30	34700	1157
Կոտայք	16	22922	1433	5	4590	918		771	257	24	28283	1178
Շիրակ	20	23170	1158	37	34518	933	4	6249	260	81	63937	789
Սյունիք	19	10427	549	16	3783	236		1339	446	38	15549	409
Վայոց ձոր	9	4211	468	9	3612	401		330	110	21	8153	388
ՀՀ	108	108047	1000	145	196088	1352	4	68445	728	347	372580	1074

¹ Աղյուսակը կազմված է «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով-2017» վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

ա) բնակավայրերի թիվը բարձրության գոտում, բ) բնակչության թիվը

բարձրության գոտում,

գ) գյուղերի միջին մարդաքանակը բարձրության գոտում

Այսպիսով, վերը բերված վերլուծության արդյունքների ամփոփումը և ընդհանրացումը թույլ է տալիս եզրակացնել, որ.

- 1) ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածքներում բնակչության և բնակավայրերի տեղաբաշխումն առանձնանում է տարածքային (տարածաշրջանային) խիստ անհամամասնությամբ՝ բնակավայրերի 66 և բնակչության մոտ 73%-ը բաժին է ընկնում Գեղարքունիքի, Շիրակի և Արագածոտնի մարզերին, իսկ Սյունիքի և Վայոց ձորի մարզերին, որոնք զբաղեցնում են ՀՀ նմանատիպ տարածքների 24,9%-ը, բաժին է ընկնում բնակավայրերի 17,3 և բնակչության ընդամենը 6,7%-ը:
- 2) ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածքներն առանձնանում են ոչ միայն բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման, այլ նաև բնակեցվածության (բնակչության և բնակավայրերի խտության) զգալիորեն մեծ տարբերություններով: Ընդհանուր բնակչության խտությունն համեմատաբար բարձր է Գեղարքունիքի, Կոտայքի, Արագածոտնի և Շիրակի մարզերում, մնացած մարզերում՝ զգալիորեն ցածր: Գյուղական բնակչության խտության առավել բարձր ցուցանիշներ ունեն Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, և Արագածոտնի, ցածր՝ Սյունիքի, Վայոց ձորի, Արարատի և Շիրակի մարզերը:
- 3) Հանրապետության լեռնային և բարձր լեռնային տարածքներում գյուղական բնակավայրերն ունեն մարդաքանակի խիստ մեծ տարբերություններ, որի հետևանքով առկա է ըստ գերակշռող մարդաքանակի գյուղական բնակչության բաշխվածության բևեռացում: Գյուղերի ընդհանուր թվաքանակի ավելի քան 46%-ին (մինչև 500 բնակիչ ունեցող գյուղերին) բաժին է ընկնում ՀՀ այդպիսի տարածքների գյուղական բնակչության ընդամենը 10,3%-ը, 2000-ից ավելի բնակիչ ունեցող 55 գյուղի (16%-ին)՝ ավելի քան 55%-ը:
- 4) Բացառությամբ Գեղարքունիքի, Լոռու և Կոտայքի մարզերի, որոնք գյուղերի միջին մարդաքանակով գերազանցում են լեռնային և բարձր լեռնային տարածքների համապատասխան միջին ցուցանիշին, մնացած մարզերում այդ ցուցանիշը նկատելիորեն փոքր է:
- 5) ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածքներում գյուղական բնակավայրերի բաշխվածությունն ըստ մարդաքանակի ունի տարածաշրջանային մեծ տարբերություններ: 201-1000 բնակիչ ունեցող գյուղեր կան բոլոր մարզերում, առավել մեծ թվով՝ Արագածոտնում, Շիրակում և Գեղարքունիքում: Մինչև 200 բնակիչ ունեցող գյուղերի խմբում առավել մեծ բաժին ունեն Շիրակի և Սյունիքի մարզերը: Խոշոր և գերխոշոր գյուղերի ավելի քան 73%-ը գտնվում են Գեղարքունիքի լեռնային և բարձր լեռնային տարածքներում, իսկ 1001-3000 բնակիչ ունեցող գյուղերի խմբում առավել մեծ բաժին ունեն Գեղարքունիքի,

Շիրակի, Արագածոտնի և Լոռու մարզերը: Սյունիքի, Վայոց ձորի և Արարատի մարզերի նմանատիպ տարածքներում չկա 2000-ից ավելի բնակիչ ունեցող ոչ մի գյուղ:

ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածքներում բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման և բնակավայրերի մարդաքանակի տարածքային տարբերությունների և առանձնահատկությունների վերը բերված վերլուծության արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի, տարածաշրջանային քաղաքականության, տարաբնակեցման հիմնախնդիրների, առանձին մարզերի և տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի կազմման աշխատանքներում:

Գրականություն

- 1) ՀՀ կառավարության որոշումը բնակավայրերն ըստ բարձունքային նիշերի դասակարգելու մասին, նոյեմբերի 27 1998թ. N 756, ք. Երևան:
- 2) Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2017, <http://www.armstat.am/am/?nid=82&id=1975> :
- 3) Գ.Ե. Ավագյան, Հայկական ՄՍՀ բնակչությունը, Ե. 1975:
- 4) В.Ш. Джаошвили, Некоторые вопросы территориального размещения населения горных стран (на примере Грузинской ССР), сб. «География населения и населенных пунктов СССР», изд. «Наука», Л., 1967.
- 5) ՀՀ համայնքների (բնակավայրերի) վարչական տարածքների և հողային ֆոնդի վերաբերյալ Կադաստրի պետական կոմիտեի տվյալներ:
- 6) Պոտոսյան Ա. – Հայաստանի Հանրապետության գյուղական բնակչությունը և բնակավայրերը, Ե. 2017:

Բանալի բառեր - Լեռնային և բարձր լեռնային տարածքներ, բնակավայրեր, բնակչության և բնակավայրերի խտություն, բնակեցվածություն, գյուղական բնակավայրերի մարդաքանակ, տարածաշրջանային առանձնահատկություններ:

Վահան Պոտոսյան, Բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման և բնակավայրերի մարդաշատության առանձնահատկությունները ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածքներում - Հայաստանի Հանրապետության տարաբնակեցման համակարգում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում լեռնային և բարձր լեռնային բնակավայրերը, որոնք կազմում են ՀՀ մշտական բնակչություն ունեցող բնակավայրերի ավելի քան 37%-ը, դրանցում 2017 թ. տարեսկզբի դրությամբ ապրում էր ՀՀ բնակչության 17.6%-ը (քաղաքային բնակչության՝ 8, գյուղական բնակչության՝ 34.3%-ը): Հռոկվածում վիճակագրական տվյալների վերլուծության, ամփոփման և ընդհանրացման հիման վրա տրված է ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածքներում բնակչության ու բնակավայրերի տեղա-

բաշխման, գյուղական բնակչության՝ ըստ բնակավայրերի մարդաբանակի բաշխվածության տարածաշրջանային առանձնահատկություններն ու հիմնախնդիրները:

Ваган Потосян, Закономерности размещения населения и людности поселений в горных и высокогорных районах РА - В системе расселения Республики Армения особое место занимают горные и высокогорные поселения, которые составляют более 37% поселений, имеющих постоянное население и где проживает по состоянию на начало 2017г. 17,6% населения страны, в том числе 8% городского и 34,3% сельского.

В статье на основе анализа и обобщений статистических данных представлены региональные особенности и проблемы размещения населения и поселений в горных и высокогорных районах Республики Армения. Кроме этого в этом аспекте рассмотрены вопросы распределения сельского населения по людности поселений.

Vahan Potosyan, The population and settlements distributyion and settlements population number features in the RA mountainous and high mountainous areas - Mountainous and high mountainous settlements have a special role in the RA settlement system, which are more than 37% of the RA settlements with permanent population. At the beginning of the year 2017 17,6% of the RA poplation lived in them (8% of urban and 34,3% of rural population): Based on the analysis, summary and generalization of statistical data the features and problems of population and settlements distribution, rural population distribution by settlements population number in the RA mountainous and high mountainous territories have been given in the article.

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԻԳՐԱՑԻՈՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

ՆԱՐԵԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Անկախություն հռչակելուց հետո շատ կարճ ժամանակահատվածում Հայաստանը, դիվանագիտական հարաբերություններ հաստատելով տարբեր երկրների հետ ու անդամակցելով բազմաթիվ հեղինակավոր միջազգային կազմակերպությունների, սկսեց իր առաջին քայլերը կատարել ժամանակակից ինտեգրացիոն գործընթացներում՝ որպես միջազգային հարաբերությունների ինքնուրույն սուբյեկտ: Չնսեմացնելով այնպիսի պետությունների հետ համագործակցության նշանակությունը, ինչպիսիք են ՌԴ-ը, ԱՄՆ-ը, ՉԺՀ-ը և Իրանը, և չանտեսելով ԵԱՏՄ-ի շրջանակներում ստանձնած պարտավորություններն ու հանձնառությունները, պետք է փաստել, որ արդի ժամանակաշրջանում Հայաստանի արտաքին քաղաքականության կարևոր վեկտորներից է եվրոպական ուղղությունը և հարաբերությունները ԵՄ-ի հետ: Ըստ ՀՀ «Ազգային անվտանգության ռազմավարության»՝ ԵՄ-ի և նրա անդամ երկրների հետ հարաբերությունների զարգացումն ու ամրապնդումը ՀՀ արտաքին քաղաքականության առաջնային ուղղություններից է:⁴⁶⁴ Դրա վառ ապացույցն է վերջերս ԵՄ և ՀՀ միջև կնքված «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը» (ՀԸԳՀ), որը ի թիվս այլ հարցերի անդրադառնում է նաև կողմերի միջև միգրացիայի, ապաստանի տրամադրման և սահմանների կառավարման խնդիրների շուրջ համագործակցությանը:⁴⁶⁵ Սա ՀՀ և ԵՄ հարաբերությունները կարգավորող վերջին ամենաթարմ փաստաթուղթն է, բայց ո՛չ առաջինը, որն անդրադառնում է նաև միգրացիոն հիմնախնդիրներին:

Միգրացիայի հետ կապված հարցերի քննարկումը ՀՀ-ԵՄ հարաբերություններում անկյունաքարային են եղել դեռևս «Գործընկերության և համագործակցության համաձայնագրով»⁴⁶⁶ (ԳՀՀ), որը կնքվել էր 1996 թ. և ուժի մեջ մտել 1999 թ.: Այդ ժամանակից ի վեր ԳՀՀ-ը ապահովել է ԵՄ-Հայաստան երկկողմանի հարաբերությունների համար իրավական շրջանակ, ինչպես նաև հիմք է ծառայել քաղաքական երկխոսության, առևտրի, ներդրումների, տնտեսության, օրենսդրական և

⁴⁶⁴ Տե՛ս ՀՀ Նախագահի՝ 2007թ. փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագիր <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31189>:

⁴⁶⁵ The Comprehensive & Enhanced Partnership Agreement between the European Union & Armenia, 24 Nov. 2017, Bruxelles, art. 14:

⁴⁶⁶ The Partnership & Cooperation Agreement between the European Communities and their Member States & the Republic of Armenia, 22 April, 1996, Luxembourg, art. 72:

մշակույթի ոլորտներում բազմաբնույթ համագործակցության համար: Նշված համագործակցության շրջանակներում ԵՄ ֆինանսավորմամբ և աջակցությամբ Հայաստանում իրականացվել են միգրացիոն օրենսդրության և պրակտիկայի բարելավման մի շարք ծրագրեր, հրատարակվել են զեկույցներ և խորհրդատվական փաստաթղթեր:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում համաշխարհային մակարդակում միգրացիայի ոլորտում ձևավորվել են մի շարք իրողություններ, որոնք ԵՄ-ին մղեցին քայլեր ձեռնարկել այդ ուղղությամբ երրորդ երկրների հետ համագործակցությունն ավելի բարձր մակարդակի հասցնելու ուղղությամբ: Այն գաղափարը, որ միգրացիոն հոսքերը դեպի ԵՄ չեն կարող դադարեցվել, ԵՄ-ին մղեց տարաբնույթ կոնկրետ գործողություններ առաջարկել, որոնց նպատակն էր «միգրացիան հնարավորինս ի շահ բոլոր շահագրգիռ պետությունների ծառայեցնելու» շղարշի ներքո ապահովագրվել անկանոն միգրացիոն հոսքերից: ԵՄ-ի համար պարզ դարձավ, որ իր իսկ անվտանգության նկատառումներից ելնելով՝ անհրաժեշտ է հզորացնել արտաքին միգրացիոն քաղաքականությունը՝ ոչ ԵՄ երկրների հետ գործընկերություններ հաստատելով, որոնց միջոցով կհասցեագրվեն միգրացիային ու շարժունակությանը վերաբերող հիմնախնդիրներն այնպես, որ դրանք փոխշահավետ լինեն երկու կողմերի համար էլ: Այդպիսի կոնկրետ գործողություններից մեկը միգրացիայի նկատմամբ ԵՄ-ի գլոբալ մոտեցման ձևավորումն էր, որը հաստատվել է 2005թ. և վերանայվել 2011թ.:⁴⁶⁷ Արդյունքում միգրացիայի ոլորտի տիրույթին ավելացավ նաև շարժունակությունը, քանի որ երրորդ երկրի քաղաքացիների շարժունակությունը ԵՄ արտաքին սահմանների ներսում ռազմավարական նշանակություն ունի թե՛ ԵՄ-ի, թե՛ երրորդ երկրների համար: Միգրացիայի նկատմամբ ԵՄ-ի գլոբալ մոտեցման հիմքում ընկած է ոչ ԵՄ երկրների հետ փոխշահավետ գործընկերությունը, այն միգրացիայի ու շարժունակության խնդիրները հասցեագրում է ավելի համապարփակ ու հավասարակշռված կերպով:⁴⁶⁸

Այս նպատակով 2003թ. ԵՄ-ի կողմից մշակվեց Եվրոպական հարևանության քաղաքականությունը (ԵՀՔ), որի ներքո 2009թ. ձևավորվեց Արևելյան գործընկերությունը (Ա.Գ):⁴⁶⁹ Վերջինիս նպատակն է ԵՄ-ի և շրջապատող երկրների միջև երկխոսության և համագործակցության ընդլայնումը, ի թիվս այլոց նաև՝ միգրացիոն հարցերի շուրջ: Հայաստանն իր մասնակցությունը բերեց ինչպես Եվրոպա-

⁴⁶⁷ «ԵՄ-ի հետ միգրացիայի ոլորտում համագործակցության ընդլայնման խորացման հնարավորությունները», ԵՄ-ի խորհրդատվական խումբ Հայաստանում, խորհրդատվական փաստաթուղթ, հուլիս, 2012թ.:

⁴⁶⁸ "Handbook on the European Union", **Zoltan Horvath**, Budapest, 2011, pp 559-593

⁴⁶⁹ Պրահայի Արևելյան գործընկերության գագաթաժողովի համատեղ հռչակագիր, 7 մայիսի 2009 թ. Եվրոպական Միության հանձնաժողովի փաստաթուղթ 8435/09 (Presse 78):

կան հարևանության քաղաքականությանը, այնպես էլ Արևելյան գործընկերությանը:

Այսպես, 2006թ. նոյեմբերին ԵՄ-Հայաստան գագաթաժողովում ընդունվեց և գործողության մեջ դրվեց ԵՀՔ-ի գործողությունների ծրագիրը (ԳԾ), որտեղ կարևորվեցին նաև հետընդունման և վիզայի հետ կապված հարցերը:⁴⁷⁰ Այդ համատեքստում՝ որպես Հայաստանի միգրացիոն քաղաքականության առաջնային նպատակ նախանշվել է ԵՄ-ի հետ՝ Հայաստանից միգրացիոն հոսքերի առնչությամբ համագործակցության խորացումը՝ ներառյալ միգրացիայի վերաբերյալ օրենսդրության և ինստիտուցիոնալ դաշտի ներդաշնակեցումը՝ միանալով Շարժունակության շուրջ գործընկերության ծրագրին⁴⁷¹ և համագործակցություն հաստատելով Եվրոպական միության անդամ պետությունների արտաքին սահմանների մոտ աշխատանքային համագործակցության կառավարման գրասենյակի հետ (Ֆրոնտեքս): «Շարժունակության շուրջ գործընկերության մասին» համատեղ հռչակագրում կողմերը որոշել են միգրացիայի հետ կապված հարցերի շուրջ առաջնորդվել փոխադարձության սկզբունքով՝ նպատակ ունենալով առավել արդյունավետորեն կառավարել օրինական ու աշխատանքային միգրացիան:⁴⁷²

ԵՀՔ ԳԾ-ը հիմք հանդիսացավ Հայաստանի միգրացիոն կառավարման համակարգը օրենսդրական և ինստիտուցիոնալ առումներով ԵՄ համակարգին համահունչ դարձնելու ուղղությամբ: Որոշակի քայլեր ձեռնարկվեցին ԵՄ և աշխարհի այլ երկրների հետ օրինական միգրացիայի հենքով համագործակցության և ապօրինի (անօրինական) միգրացիայի դեմ պայքարի ու դրա կանխարգելման հարցերում: Առանձնակի ջանքեր են գործադրվել Հայաստանի քաղաքացիների վերադարձին աջակցող մեխանիզմների ստեղծման և նրանց վերաինտեգրման, Հայաստան ժամանող փախստականների (հատկապես սիրիահայերի) և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանության, նրանց ինտեգրման գործում: Մասնավորապես, ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքը, ինչպես նաև՝ դրա կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերը, որոնցով ՀՀ-ում ապաստան հայցողներ

⁴⁷⁰ **‘ENP EU-Armenia Action Plan’**, 14 Nov, 2006, Bruxelles

⁴⁷¹ Ընդհանուր առմամբ, շարժունակության շուրջ գործընկերության նպատակը Հայաստանի և ԵՄ-ի միջև միգրացիոն հոսքերի նկատմամբ հսկողությունն է, անօրինական միգրացիայի դեմ պայքարը և ՀՀ քաղաքացիների համար օրինական մուտքի համար գանձվող վճարների կարգավորումը: Հայաստանի և ԵՄ-ի միջև «Շարժունակության շուրջ գործընկերության մասին համատեղ հռչակագիրը» ստորագրվել 2011 թ. հոկտեմբերին: Առավել մանրամասն տե՛ս **«Joint Declaration on a Mobility Partnership between the European Union and Armenia»**, Oct. 27, 2011, Luxembourg http://www.consilium.europa.eu/uedocs/cms_data/docs/pressdata/en/jha/125698.pdf

⁴⁷² Տե՛ս նույն տեղը

րի և փախստականների իրավունքները մոտարկվել և ներդաշնակեցվել են միջազգային, մասնավորապես՝ եվրոպական չափանիշներին:⁴⁷³

Միգրացիայի ոլորտում Եվրոպական միության հետ համագործակցության շրջանակներում Հայաստանում ներդրվել է «Աջակցություն Հայաստանին միգրացիայի և սահմանների կառավարման ոլորտներում» (ՄԻԲՄԱ) ծրագիրը, որի նպատակն է աջակցել և սատարել Հայաստանի Հանրապետության կողմից միգրացիայի և սահմանների կառավարման ոլորտներում գործադրվող ջանքերին: Ծրագրի ընդհանուր նպատակը ԵՄ չափանիշներին համահունչ ՀՀ միգրացիայի և սահմանների կառավարման համակարգերի հզորացումն ու կատարելագործումն է՝ հանուն անվտանգության ամրապնդման, առևտրի խթանման, ինչպես նաև ԵՄ և ՀՀ միջև վիզային ռեժիմի հնարավոր ազատականացմանն ուղղված երկխոսությանը նպաստելու: Ծրագիրը նախատեսված է 2016թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր ժամանակահատվածի համար և ֆինանսավորվում է Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի (ԵՀԳՀ) կողմից:⁴⁷⁴

Ծրագրի թիրախային խմբերն են միգրացիայի և պետական սահմանի կառավարման ոլորտների ՀՀ պետական մարմինները, այդ թվում՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը, ՀՀ ազգային անվտանգության խորհուրդը, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ գործերը, ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը և ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը:

Ստորև բերված աղյուսակ 1-ից երևում է, որ ԵՄ և ՀՀ միջև կնքված «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» (ՀԸԳՀ) արդյունավետ իրականացումն ապահովելու համար 2017-2020 թթ. ԵՄ-ի կողմից Հայաստանին տրամադրվող 160 մլն եվրոյի 15%-ը ուղղվելու է մարդկանց շարժունակության ոլորտի բարեփոխմանը:⁴⁷⁵ Այդ ֆինանսական աջակցության շրջանակներում Երևան քաղաքի մերձակայքում նախատեսվում է միջազգային չափանիշներին համապատասխան ապաստան հայցողների համար ժամանակավոր տեղավորման կենտրոնի ստեղծման նախագծային-նախահաշվային փաստաթղթերի պատ-

⁴⁷³ Տե՛ս «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքը, 17 դեկտեմբերի, 2015թ. <http://www.irtek.am/views/act.aspx?aid=83298&m=%27%27&sc=%20>

⁴⁷⁴ «Աջակցություն Հայաստանին միգրացիայի և սահմանների կառավարման ոլորտներում» (ՄԻԲՄԱ) ծրագրի պաշտոնական ինտերնետային կայք <https://www.mibma.eu/hy/about-the-project/over view>

⁴⁷⁵ Աղյուսակ 1-ի տվյալները՝ Հայաստանում Եվրոպական միության պաշտոնական կայքից https://eeas.europa.eu/delegations/armenia_hy/10743/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%20%D5%B8%D6%82%20%D4%B5%D5%84

րաստում:⁴⁷⁶ Դա նշանակում է, որ առաջիկայում ևս միգրացիոն ոլորտի կարգավորումները շարունակելու են առաջնային մնալ ՀՀ-ԵՄ քաղաքական հարաբերությունների համատեքստում:

Աղյուսակ 1

ԵՄ-ի կողմից Հայաստանին տրամադրվող 160 մլն եվրոյի ֆինանսական օժանդակությունն ըստ ոլորտների և դրույքաչափերի (2017-2020 թվականների համար)

Տնտեսական զարգացում և շուկայի հնարավորություններ	35 %
Ինստիտուտների ամրապնդում և լավ կառավարում	15 %
Միակցվածություն, էներգետիկ արդյունավետություն, շրջակա միջավայր և կլիմայի փոփոխություն	15%
Շարժունակություն և միջանձնային շփումներ	15 %
Լրացուցիչ աջակցություն ունակությունների հզորացմանը/ինստիտուցիոնալ կառուցմանը և ռազմավարական հաղորդակցությանը	15 %
Լրացուցիչ աջակցություն քաղաքացիական հասարակության զարգացմանը	5 %

Իր հերթին, հայկական կողմը ևս բազմիցս նշել է, որ ԵՄ-ի հետ փոխգործակցության առաջնահերթությունների շարքում է շարժունակությունը, միգրացիայի ոլորտի կարգավորումը և մարդկային շփումների զարգացումը: Մասնավորապես, դեռևս 2015թ. հունվարին Բրյուսելում Էդվարդ Նալբանդյանը, ԵՄ-ի հետ համագործակցության օրակարգում կարևորելով Հայաստանի միգրացիոն հիմնախնդիրները կարգավորելու հարցը, առանձնացրեց 2014թ. հունվարից ուժի մեջ մտած Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզաների տրամադրումը դուրացնելու մասին համաձայնագիրը⁴⁷⁷ և Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագիրը⁴⁷⁸, որոնք ճանա-

⁴⁷⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության 2017-2021 թթ. ռազմավարությունը, ՀՀ կառավարության 2017թ. մարտի 23 N12 արձանագրայի որոշում
⁴⁷⁷ Agreement between the European Union and the Republic of Armenia on the facilitation of the issuance of visas, 23 Oct., 2013 [http://eur-lex.europa.eu/legal-content/EN/ALL/?uri=CELEX:22013A1031\(01\)](http://eur-lex.europa.eu/legal-content/EN/ALL/?uri=CELEX:22013A1031(01))

⁴⁷⁸ Agreement between the European Union and the Republic of Armenia on the readmission of persons residing without authorisation, 19 Apr., 2013, [http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:22013A1031\(02\)](http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:22013A1031(02))

պարհ են հարթում դեպի մուտքի արտոնագրային ռեժիմի ազատականացման վերաբերյալ գործընթացի մեկնարկը:⁴⁷⁹

Կրթության ոլորտում ևս Հայաստանը ձգտում է հանդես գալ որպես որակյալ կրթական ծառայություններ տրամադրող երկիր և մասնակցում է ԵՄ-ի Erasmus Mundus, Tempus ծրագրերին՝ նպատակ ունենալով բարձրացնել դեպի Հայաստան ուղղվող գիտակրթական շարժունակության մակարդակը: Ըստ «Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության 2017-2021թթ. ռազմավարության»՝ կրթություն ստանալու նպատակով Հայաստան ժամանած իմիգրանտները կազմում են ընդհանուր իմիգրանտների մոտ 41%-ը:⁴⁸⁰ Հայաստանի ուսումնական հաստատություններում օտարերկրացիների մեծ թվով ներգրավումը ապահովում է ինչպես ֆինանսական մուտքեր, այնպես էլ խթան է հանդիսանում բարելավելու ուսուցման ծրագրերն ու ընդլայնելու կրթական ենթակառուցվածքները: Կրթական համակարգի միջազգայնացումն իր հերթին մեծապես կախված է երկրում՝ համարժեք վարվող միգրացիոն քաղաքականությունից: Մինևույն ժամանակ, ուսանողների և գիտահետազոտական աշխատանք կատարողների ընդունման համար ՀՀ միգրացիոն օրենսդրական կարգավորիչ դաշտը խիստ սահմանափակ է: Ուսման նպատակով կացության կարգավիճակի թույլտվություն ստանալու համար հստակ պայմաններ ու չափանիշներ սահմանված չեն: Բացակայում են գիտահետազոտական աշխատանք կատարողների, ուսանողների, դպրոցական փոխանակման ծրագրերում ընդգրկված աշակերտների, չվարձատրվող վերապատրաստողների և կամավորների համար կացության թույլտվության տրամադրման պայմանները:

Այնուամենայնիվ, պետք է արձանագրել, որ չնայած ԵՄ-ի ուղղակի ոլորտային աջակցությանը, ՀՀ ներկայիս միգրացիոն իրավիճակն ընդհանուր առմամբ մնում է խնդրահարույց, որի պատճառը կարելի է համարել մարդկային կայուն զարգացման և ազգային անվտանգության պահանջներին համապատասխանող միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության բացթողումները: Այդպիսի բացթողումներով քաղաքականության պայմաններում ոչ հեռու ապագայում Հայաստանը ժողովրդագրության ոլորտում կարող է ունենալ խիստ անցանկալի և պայթյունավտանգ իրավիճակ: Վերջին շրջանում աշխատանքային հայ միգրանտների համար բնութագրական է դարձել այսպես կոչված «հեռավորության վրա ձևավորված ընտանիք» պահելու հասկացությունը: Այս երևույթը պարունակում է մեծ ռիսկեր, որոնք ազգային անվտանգության տեսակետից խնդրահարույց են, մասնավորապես ընտանիքի ինստիտուտի փոխակերպումնե-

⁴⁷⁹ ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի խոսքը 2015թ. հունվարի 20-ին Բրյուսելում կայացած Հայաստան – Եվրոպական միություն համագործակցության խորհրդի 15-րդ նիստում: Տե՛ս http://mfa.am/hy/press-releases/item/2015/01/20/min_eu_coop/:

⁴⁸⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության 2017-2021 թթ. ռազմավարությունը, ՀՀ կառավարության 2017թ. մարտի 23 N12 արձանագրայի որոշում

րի գործընթացի անվերահսկողությունը կարող է հանգեցնել ընտանիքի՝ որպես սոցիալական միավորի թուլացմանը, որն էլ ուղղակի սպառնալիք է հայ ինքնության պահպանմանն ու վերարտադրությանը:⁴⁸¹

Ներկայումս ակնհայտ է դարձել, որ համաշխարհային տնտեսության գլոբալացման պայմաններում տնտեսական ռեսուրսների, տեղեկատվության ու տեխնոլոգիաների միջազգային փոխանցումը մեծապես խթանում, արագացնում և ուժգնացնում է նաև աշխատուժի միգրացիայի գործընթացները: Ժամանակակից պայմաններում աշխատանքային միգրացիայի ռիսկերը ոչ թե չեզոքանում, այլ, ընդհակառակը՝ բազմապատկվում են: Վերջիններս առավել մեծ չափերով դրսևորվում են աշխատանքային ռեսուրսների տարածաշրջանային և միջազգային շարժի մեջ՝ տարբեր երկրներում միանգամայն տարբեր ներազդեցություն ունենալով մարդկային կապիտալի վերարտադրության բնույթի, բովանդակության ու առանձին դրսևորումների վրա:⁴⁸² Ասել է թե՛ հայկական իրականության առանձնահատկությունները հաշվի առնելով՝ ՀՀ կառավարությունը պետք է միգրացիոն կարգավորումների ոլորտում վարի առավելագույն դինամիկ և գլոբալ փոփոխություններին պատրաստ քաղաքականություն:

Արդի ժամանակաշրջանում միգրացիայի կարգավորման խնդիրը Հայաստանում ակնհայտորեն շրջադարձային փուլում է, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ վաղուց արդեն ժամանակն է արձանագրել ժողովրդագրական միտումների գերվտանգավորությունը երկրի համար: Դա է նաև պատճառը, որ խնդիրն առաջնային է համարվել երկրի կարևորագույն անկյունաքարային երկու փաստաթղթերում. այսպես 2007թ. ընդունված «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության» մեջ նշված է, որ Հայաստանի Հանրապետությունը որպես իր ազգային անվտանգության սպառնալիք է դիտում ցածր ծնելիությունը, հիվանդացության և մահացության դեռևս ոչ ցածր և կյանքի միջին տևողության ու որակի ոչ բավարար ցուցանիշները, չկառավարվող և անօրինական արտագաղթը, հատկապես կրթական, գիտական ու մշակութային ներուժի արտահոսքը:⁴⁸³ 2007թ. ընդունված մեկ այլ անկյունաքարային փաստաթղթում՝ ՀՀ ռազմական դոկտրինում, ամրագրված է, որ ՀՀ ռազմական անվտանգության ներքին սպառնալիքներից են ժողովրդագրական բացասական միտումները, հատկապես՝ սահմանամերձ շրջաններում, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների արտագաղթը, դրանք խթանող գործողություններն ու գործոնները:⁴⁸⁴ Մեր կարծիքով, նշված եր-

⁴⁸¹ Տե՛ս «Հայկական միգրացիոն ցանցերի ձևավորման և գործառնման որոշ հարցեր», **Մկրտչյան Ա., Թումանյան Գ., Աթանեսյան Ա., Զատլավսկայա Մ.** – Երևան, 2015 թ., էջ 31:

⁴⁸² <<Overcrowded World? Global Population and International Migration», **Rainer Munz, Albert Reiterer**, Frankfurt, 2009, pp. 126-164

⁴⁸³ Տե՛ս ՀՀ Նախագահի՝ 2007թ. փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագիր <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31189>:

⁴⁸⁴ Տե՛ս ՀՀ Նախագահի՝ 2007թ. դեկտեմբերի 25-ի ՆՀ-308-Ն հրամանագիր:

կու փաստաթղթերն էլ արդիականացման և վերանայման կարիք ունեն՝ հատկապես ժողովրդագրության ոլորտում նոր իրողություններին ու մարտահրավերներին համապատասխան արձագանքելու մասով:

Վաղուց արդեն փաստ է, որ միջազգային չափանիշներով Հայաստանի Հանրապետության բնակչությունը ժողովրդագրական առումով համարվում է ծերացող, որի հետևանքներից հնարավոր չէ խուսափել:⁴⁸⁵ Ոլորտի հիմնախնդիրները լուծելու եղանակների հիմքում պետք է դնել երկու կարևոր հանգամանք՝ հայաստանյան ազգային առանձնահատկություններն ու միջազգային լավագույն փորձը: Միննույն ժամանակ պետք է նաև նկատի ունենալ, որ ամենամեծ ցանկության դեպքում անգամ հայրենի կառավարությանը քննարկվող հիմնախնդիրը լուծելու ուղղությամբ տարվող քաղաքականության մեջ դրական և ցանկալի արդյունք ապահովելն ամենևին դյուրին չի լինելու: Մասնավորապես, ԵՄ չափանիշներին համապատասխան միգրացիայի կառավարման համակարգի ձևավորումը իրավամբ դժվար է և ռեսուրսատար: Այսպես, օրինակ, պարզեցված վիզային ռեժիմի նախապայմաններից մեկը ԵՄ չափանիշներին համապատասխան բիոմետրիկ անձնագրերի համակարգի ներդրումն է, որի տեխնիկական խնդիրները բնավ հեշտ չեն: Ավելի՛ն, այդ չափանիշներն իրենք բավականին դինամիկ են և մոտ ապագայում կարող են փոփոխություններ կրել՝ համակարգի միասնականացման նպատակով: Ուստի միգրացիոն համակարգի կառավարման ճիշտ տարբերակի ընտրության տեսանկյունից արժեք պարզապես «թարգմանել» ԵՄ օրենսդրությունը (EU aquis), իսկ ինստիտուցիոնալ համակարգը զարգացնել Հայաստանի իրավիճակին առավել մոտ արևելաեվրոպական կամ բալթյան ԵՄ անդամ երկրների լավագույն փորձի հիման վրա: Անվիճելի է, որ միգրացիայի ոլորտում ԵՄ-ի հետ համագործակցության համատեքստում Հայաստանին անհրաժեշտ է քաղաքականության իրականացման կենտրոնացված մարմին կամ ինստիտուտ, որն այս կարևորագույն և դժվարին ժամանակաշրջանում կապահովի խնդրի արդյունավետ լուծումը: Միգրացիայի կարգավորման քաղաքականությունը պիտի համահունչ լինի ՀՀ ազգային շահերին, առանձին ոլորտներում և բնագավառներում վարվող պետական քաղաքականության գերակայություններին, ինչպես նաև այս ոլորտում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին և, առաջին հերթին՝ ԵՀԲ հանձնառություններին:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ միգրացիայի ոլորտում Եվրոպական միության հետ համագործակցության օրակարգում Հայաստանին անհրա-

<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=41116>:

⁴⁸⁵ Տե՛ս ՀՀ Ազգային ժողովի լուսմները «ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2016-2018 թթ. ազգային ծրագրի և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» թեմայով, 4 մարտի, 2016թ: http://www.parliament.am/committee_docs/5/Helth/04_03.2016/sumneriTema.pdf

Ժեշտ է լավագույնս օգտվել եվրոպական լավագույն փորձից՝ ներդաշնակորեն կիրառելով միգրացիայի և ապաստանի հիմնախնդիրների կարգավորման հիմնական միջոցները՝ օրենսդրության կատարելագործումը, ինստիտուցիոնալ բարեփոխումները, քաղաքացիական հասարակության մասնակցությունը և հանրային քարոզչությունը: Ինստիտուցիոնալ առումով հարկ է ապահովել ԵՄ-ի չափանիշներին համապատասխան միգրացիայի քաղաքականության մշակման, համակարգման և իրականացման համար պատասխանատու մարմինների արդյունավետ և համակարգված գործունեությունը, հիմնականում՝ դրանց գործառույթների տարանջատման, արդյունավետ համագործակցության ապահովման, մասնագիտական կարողությունների զարգացման, տեղեկատվության կառավարման և վերլուծության միջոցով: Անհրաժեշտ է նաև ապահովել միգրացիայի կարգավորման քաղաքականության պարբերական վերանայումն ու ճշգրտումը շարունակական մոնիտորինգի և կանոնավոր գնահատման միջոցով:

Բանալի բառեր – Եվրոպական միություն, միգրացիոն հիմնախնդիրներ, միգրացիոն քաղաքականություն, միգրացիոն կարգավորումներ, եվրոպական չափանիշներ

Նարեկ Գրիգորյան, Միգրացիոն հիմնախնդիրները Հայաստան-Եվրոպական միություն համագործակցության օրակարգում - Հայաստանում միգրացիոն քաղաքականության մշակման և իրականացման, միգրացիոն կարգավորումների ներդրման և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման գործում մեծ է միջազգային կազմակերպությունների, մասնավորապես ԵՄ-ի մշտական օժանդակության դերը: Այդուամենայնիվ, ստիպված ենք արձանագրել անցանկալի մի իրողություն. այն է՝ բնակչության միգրացիոն հոսքերի ինտենսիվացումը: ՀՀ ազգային անվտանգության շահերին համապատասխանող միգրացիոն ցուցանիշներ ապահովելու համար անհրաժեշտ են ոչ միայն լրջագույն սոցիալ-տնտեսական բարեփոխումներ, այլև ԵՄ-ի լավագույն փորձի և օժանդակության արդյունավետ կիրառում:

Нарек Григорян, Основополагающие вопросы миграции в повестке сотрудничества Армении и Европейского союза - Важна роль поддержки со стороны международных организаций, в частности, ЕС, для разработки и реализации миграционной политики, внедрения миграционных установок и развития институциональных способностей в Армении. Однако, вынуждены отметить нежелательную действительность - повышение интенсивности миграционных потоков населения. Для обеспечения показателей, соответствующих Национальной безопасности РА, необходимы не только серьезные социально-экономические реформы, но и эффективное использование передового опыта и помощи ЕС.

Narek Grigoryan, Migration Issues on the Armenia-European Union Cooperation Agenda - International organizations, particularly the EU, have a big effect

on the development and implementation of migration policy introduction of migration regimes and institutional capacities in Armenia. Nevertheless, we have to record an undesirable reality which is intensified migration flows of population. With a view to ensure migration indicators in the line of the national security interests we need not only serious social and economic reforms but also the effective application of EU best practice and support.

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՁԵՎԱԿՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ
(1922-1938թթ.)**

ԱՐՄԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայիեղկոմի և Ժողկոմխորհի ղեկրեւներն ու որոշումները, որոնք միտված էին երկրի տնտեսական, սոցիալական, կրթամշակութային, կենցաղային և այլ ոլորտների զարգացմանն ու փոփոխությանը, բնականաբար իրենցից ներկայացնում էին նաև իրավական հիմք ստեղծող փաստաթղթեր և հիմնականում ունեին օրենքի կամ իրավական ակտերի նշանակություն: Սակայն, Խորհրդային Հայաստանի գլխավոր իրավական հիմքը, անշուշտ սահմանադրությունն էր, քանի որ այն պետք է մատնանշեր երկրի քաղաքական և տնտեսական համակարգերի ձևավորման հիմնական ուղղությունները, ազգաբնակչության հիմնական իրավունքներն ու պարտականությունները:

1922թ. հունվարի 30-ից փետրվարի 4-ը Երևանում տեղի է ունենում Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների խորհուրդների առաջին համագումարը, որին մասնակցում էին 252 պատգամավորներ՝ վճռական ձայնի իրավունքով՝ 239, իսկ խորհրդակցական ձայն իրավունքով՝ 13 հոգի: 218-ը կամ կոմունիստական կուսակցության անդամներ էին կամ էլ անդամության թեկնածուներ: Ներկայացված էին ինչպես սոցիալական շերտերի տարբեր ներկայացուցիչներ, այնպես էլ այլազգիներ՝ 154 գյուղացի, 40 բանվոր, 34 կարմիրբանակային, որոնցից 212-ը հայեր, 21-ը ռուսներ, 14-ն ադրբեջանցիներ, 2-ը քրդեր, 1-ն ասորի, 1-ը լեհ և 1-ը հույն: Պատգամավոր կանանց թիվը հասնում էր 17-ի⁴⁸⁶:

Համագումարում կառավարության մեկ տարվա գործունեության մասին հաշվետվությամբ հանդես է գալիս Ժողկոմխորհի նախագահ Ալ.Սյասնիկյանը: Համագումարի կարևորագույն խնդիրն էր քննարկել և հաստատել Խորհրդային Հայաստանի առաջին սահմանադրությունը կամ հիմնական օրենքը, որը և տեղի ունեցավ: Նրա մասին զեկուցումով հանդես եկավ Ա.Մռավյանը: ՀԽՍՀ սահմանադրությունը մշակվել էր Վ.Ի.Լենինի «Աշխատավոր ու շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիայի» հիմնադրությունների և ՌՍՖՍՀ 1918թ. հուլիսին ընդունած սահմանադրության սկզբունքների հիման վրա:

Արձանագրության մեջ կարդում ենք. «Հայաստանի ապստամբ բանվորների և աշխատավոր գյուղացիների կամքով Հայաստանը 1920թ. նոյեմբերի 29-ին հայտարարված է սոցիալիստական խորհրդային հանրապետություն:

⁴⁸⁶ՀՄԽՀ բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորական խորհուրդների առաջին համագումարի արձանագրությունը (1922թ. հունվարի 30 – փետրվարի 4), Երևան, 1922, էջ 128:

Ամբողջ իշխանությունը կենտրոնում և տեղերում պատկանում է բանվորների, գյուղացիների կարմիր զինվորների պատգամավորական խորհուրդներին»⁴⁸⁷:

Այնուհետև նշվում է, որ հանրապետության բոլոր աշխատավորներն, անկախ ազգությունից և դավանանքից, ունեն հավասար իրավունքներ, աշխատանքը բոլորի համար պարտադիր է և «ով չի աշխատում, նա չի ուտում»:

Հողը, նրա ընդերքը, անտառները, բանկերը, երկաթուղիներն ու խոշոր արդյունաբերությունը հայտարարվում էին սոցիալիստական սեփականություն: Բոլորի համար սահմանվում էր ձրի կրթություն⁴⁸⁸:

Չքննարկելով այն հարցը, որ բանվորների և գյուղացիների կամքով է Հայաստանը դարձել խորհրդային, քանի որ հայտնի ճշմարտություն է, որ այնտեղ խորհրդային կարգեր հաստատվել են պարտադրանքով, փորձենք միայն վերլուծել երկու դրույթ, որոնք քաղաքական և տնտեսական համակարգերի ձևավորման իրավական հիմքերն էին: Սահմանադրության մեջ նշվում է, որ հողը, նրա ընդերքը, անտառները, բանկերը, երկաթուղիներն ու խոշոր արդյունաբերությունը համարվում են սոցիալիստական սեփականություն: Սա նշանակում է, որ երկրի տնտեսական հիմքն արտադրության միջոցների համաժողովրդական սեփականությունն է, որն անկախ մանր կամ միջին սեփականատիրական ձեռնարկությունների ՆԷՊ-ի համաձայն զարգացման խրախուսման փաստի առկայությունից, նշանակում է, որ ազատ շուկայական հարաբերությունները բացառվում են, որն, ի վերջո, հակադարձ համեմատական էր դառնալու նույն ՆԷՊ-ին: Այստեղից հետևությունը մեկն է՝ մանր ու միջին ձեռնարկատիրական գործունեությունը երկար ժամանակ չէր կարող լինել հանդուրժելի, իսկ հանդուրժելի լինելու դեպքում էլ՝ արդյունավետ, քանի որ դրա զարգացման հիմքերը՝ հողը, ընդերքը, բանկերը և այլն, պետական սեփականություն էին: Սա նշանակում է, որ սոցիալական առումով կտրուկ զարգացում անհնար էր ակնկալել: Սահմանադրությունը տալիս էր նոր սոցիալ-տնտեսական զարգացման իրավական այնպիսի հիմքեր, որոնք տվյալ փուլում իրար հետ հակասական իրավիճակ էին ստեղծում: Պարզապես հավասարության սկզբունքը բերելու էր տնտեսական միանգամայն նոր կացության:

Երկրորդ, պետության քաղաքական հիմքը հանդիսանում էին բանվորների, գյուղացիների և զինվորների դեպուտատների խորհուրդները: Այլ հարց է, որ ազատությունների, ցույցերի, երթերի, ազատ խոսքի և այլ իրավունքները տրվում էին ծիսականորեն, քանի որ ամբողջատիրական համակարգերի համար դրանք միշտ էլ անհանդուրժելի են, բայց և այնպես պետական կառավարման մարմիններում ընտրվելու հնարավորություն էին ստանում բոլոր խավերի ներկայացուցիչ-

⁴⁸⁷Նույն տեղում, էջ 133:

⁴⁸⁸Նույն տեղում:

ները, որը նույնպես գյուղացու և աշխատավորի համար բերում էր միանգամայն նոր քաղաքական, տնտեսական և սոցիալական կարգավիճակ: Հարկավ, այդ կարգավիճակի փոփոխությանը նպաստելու էր նաև ձրի կրթության, բուժման իրավունքը, որը տրվում էր սահմանադրությամբ:

Հասկանալի է, որ «ով չի աշխատում, նա չի ուտում» կարգախոսը նախ և առաջ ուղղված էր այսպես կոչված կապիտալիստական խավի ներկայացուցիչներին, որոնք, ըստ բոլշևիկների՝ հարստանում էին աշխատավորների շահագործման միջոցով: Բայց դրանով հանդերձ, այս կարգախոսը հնարավորություն էր ընձեռում աշխատելու բոլորին իրենց համար և իրենց աշխատանքի համար. նրանք վարձատրվելու էին ոչ կապիտալիստական մեթոդներով, այլ՝ համաձայն նախորդված չափի, պետության կողմից: Անկախ այն հանգամանքից, բավարար էր լինելու վճարումը, թե ոչ, աշխատել ցանկացողը կարող էր աշխատել, քանի որ տրվում էր այդ հնարավորությունը: Կապիտալիստն էլ, բնականաբար, վճարում էր նախորդված չափով, բայց ազատ շուկայական հարաբերությունների երկրներում, վճարման համակարգը պետությունը չէ, որ կարգավորում էր: Ահա սա էր տարբերությունը:

Այս ամենով հանդերձ, երբ բոլորն ունեին աշխատանքի իրավունք, անհրաժեշտ էին աշխատատեղիներ, որոնց ստեղծելը քայքայված տնտեսությամբ Հայաստանում ոչ թե օրերի, այլ տարիների հարց էր: Ուստի և, կամա-ակամա պետությունը պետք է զինվեր երկրի ինդուստրացման աշխատանքների համար:

Այսպիսով, ՀՄԽՀ առաջին սահմանադրությամբ օրենքի ուժ էր ստանում սոցիալական հավասարության սկզբունքը: Վերանում էր շահագործումը և մարդիկ ազատ էին՝ օգտվելու հավասար չափով այն իրավունքներից, որոնք տրվում էին իրենց սոցիալական առումով: Քաղաքական հնարավորությունները ձևական էին, ինչպես և ձևական էր պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրան, քանզի իրականում գոյություն ուներ կուսակցական դիկտատուրա: Սա է պատմական ճշմարտությունը:

Հայաստանն արդեն 1922թ. մարտից Ադրբեյջանի և Վրաստանի հետ մեկտեղ մտնում էր Անդրֆեդերացիայի՝ Անդրկովկասի Ֆեդերատիվ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ: Միության նախագահության կազմում ընտրվեցին Ն. Նարիմանովը, Ալ. Մյասնիկյանը և Բ. Մդիվանին: Հարկավ, այս միության կայացման գործընթացը հեշտ չընթացավ, այլ՝ տևեց մինչև տարեվերջ: Դրա մանրամասներից խուսափելով, նշենք, որ կարելի է համաձայնվել Անդրկովկասյան Դաշնությանը Վլ.Լազախեցյանի տված հետևյալ բնութագրման հետ. «Անդրկովկասի հանրապետությունների դաշնային միությունը դաշնության (ֆեդերացիայի) այն ձևն էր, որն իր անդամ հանրապետություններից վերցրել էր նրանց գործառույթների միայն մի քանի, չնայած կարևոր, բնագավառ-

ները, մնացած հարցերում պահպանելով նրանց ինքնուրույնությունը և ինքնիշխանությունը»⁴⁸⁹:

1922թ. դեկտեմբերին Անդրկովկասի Դաշնությունը մաս կազմեց ԽՍՀՄ-ին: Ինչպես ընդունված էր շեշտել խորհրդային և, բնականաբար, խորհրդահայ հասարակագետների կողմից, 1930-ական թթ. կեսերը ԽՍՀՄ-ում սոցիալիզմի համար մղվող պայքարը հաղթանակով ավարտվեց: Ոչ ոք չի կարող պնդել, թե այստեղ ճշմարտություն չկա. **այն սոցիալիզմը, որը նախատեսել էին բոլշևիկները Ստալինի գլխավորությամբ վարչահրամայական մեթոդներով կյանքի կոչվեց:** Սոցիալիզմի հաղթանակ հասկացողության տակ պետք է հասկանալ երկրի ինդուստրիացումը, գյուղատնտեսության կոլեկտիվացումը և մշակութային հեղափոխությունը: Հարկավ, սոցիալիզմի կառուցումը ներկայացվում էր գունազարդված, բայց անկախ դրա կառուցման ճանապարհին որդեգրված մեթոդներից, այն իր հետ բերեց սոցիալ-կենցաղային առավել նպաստավոր պայմաններ: Նոր հասարակարգի կառուցումը և ապա այն առավել ամրապնդելու և զարգացնելու նպատակադրումները պետք է հստակեցվեին նոր հիմնական օրենքով, այսինքն՝ նոր սահմանադրությամբ: Դրանում անպայմանորեն ամրագրվելու էին պետության քաղաքական և տնտեսական համակարգերի իրավական հիմքերը:

Մի բան ակնհայտ է, որ Խորհրդային Միությունում արդեն մնացել էր երեք դասակարգ՝ բանվոր դասակարգը, գյուղացիությունը և մտավորականությունը: Իսկ նրա առաջին սահմանադրության դրույթներն արդեն չէին համապատասխանում հասարակական կյանքում տեղի ունեցած փոփոխություններին: Եվ ահա 1935թ. փետրվարի 1-ին ՀամԿ(Բ)կ Կենտկոմի պլենումը որոշում է սահմանադրության մեջ մի շարք փոփոխություններ մտցնել, որը պետք է իրականացներ խորհուրդների 7-րդ համագումարը: Փետրվարի 6-ին համագումարը որոշեց կազմել ԽՍՀՄ նոր սահմանադրությունը՝ հաշվի առնելով երկրի կյանքում տեղի ունեցած նոր փոփոխությունները: 1936թ. փետրվարի հունիսի 12-ին նոր սահմանադրության նախագիծը հրատարակվեց մամուլում՝ համաժողովրդական քննարկման համար, որը տևեց 5,5 ամիս: Այս ընթացքում արվեցին բազմաթիվ առաջարկություններ: 1936թ. Մոսկվայում բացվեց ԽՍՀՄ խորհուրդների 8-րդ արտակարգ համագումարը, որը քննարկեց նոր սահմանադրության նախագիծը՝ ընդունելով այն որպես հիմք: ԽՍՀՄ նոր սահմանադրությունն ընդունվեց դեկտեմբերի 5-ին:

Տեսականորեն այս սահմանադրությունն ամենադեմոկրատականն էր: Այն հաստատեց «Յուրաքանչյուրից ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ աշխատանքի» սկզբունքը: Այս սկզբունքն իսկապես դեմոկրատական էր, որովհետև ներշնչում էր այն համոզմունքը, որ անկախ սոցիալական կարգավիճակից, յուրաքանչյուր ոք վճարվելու էր ըստ աշխատանքի: Սա նպաստելու էր աշխա-

⁴⁸⁹ Վլադիմիր Ղազախեցյան, Հայաստանը 1920-1940թթ., Երևան, 2006, էջ 238:

տանքով շահագրգռվածությանը, որովհետև այն համոզմունքն էր ներշնչում, որ կբավարարվեն անձնական շահերը, որում առաջնահերթությունը պետք է տալ սոցիալ-տնտեսական դրության բարելավման ձգտմանը:

Խոսելով ԽՍՀՄ նոր սահմանադրության մասին, անհրաժեշտ է նրանից գատել ծիսականն ու կեղծը և գնահատել իրականը: Ծիսականն ու կեղծն այն էր, որ սահմանադրությամբ ԽՍՀՄ քաղաքական հիմքը հանդիսանում էին աշխատավորների դեպուտատների խորհուրդները, որոնց պատկանում էր իշխանությունը: Սակայն, ակնհայտ է, որ իրական իշխանությունը Կոմկուսի ձեռքում էր և նա էր թելադրողը:

Կեղծ էր նաև այն կարգախոսը, որ ԽՍՀՄ-ը ժողովուրդների կամավոր սկզբունքներով ստեղծված կազմավորում էր, որը մերժում էր ամեն տեսակ ռասայական խտրականություն կամ ազգային բացառիկություն: Ակնհայտ է, որ այն ստեղծված էր հարկադրանքով:

Այնտեղ մատնանշվում է, որ սահմանադրությունը բոլոր քաղաքացիներին տալիս է աշխատանքի, հանգստի, կրթության, բուժապասարկումից օգտվելու և թոշակավորվելու իրավունք: Հատկապես կարևոր էր այն, որ սահմանադրությամբ արգելվում էր մարդու շահագործումը մարդու կողմից⁴⁹⁰:

ԽՍՀՄ խորհուրդների 8-րդ արտակարգ համագումարի որոշմամբ վերացվեց Անդրֆեդերացիան և ստեղծվեցին Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի խորհրդային սոցիալիստական հանրապետությունները: Այսպիսով, Հայաստանը ԽՍՀՄ կազմի մեջ մտավ որպես միութենական հանրապետություն: Այս առիթով անհրաժեշտ էր, որ նա ունենար իր նոր սահմանադրությունը:

1936թ. հունիսին, ԽՍՀՄ նոր սահմանադրության նախագծի հրապարակումից անմիջապես հետո, ՀԽՍՀ Կենտգործկոմի նստաշրջանի որոշմամբ ստեղծվեց հանձնաժողով Ա.Խանջյանի նախագահությամբ, որը մշակեց Խորհրդային Հայաստանի սահմանադրության նախագիծը, և որը հոկտեմբերին հրապարակվեց մամուլում՝ քննարկման համար: 1937թ. փետրվարի 22-ին ՀԽՍՀ Կենտգործկոմը հավանություն տվեց սահմանադրության նախագծին: Այստեղ հարկ ենք համարում շեշտել, որ մամուլի էջերում հանդիպող այն գրությունները, որոնցում բանվորները կամ այլ ծառայողները գոհունակություն են հայտնում նախագծի վերաբերյալ, գտնելով, որ «դա աշխարհի ամենադեմոկրատական սահմանադրությունն է»⁴⁹¹ և այլն, կրում էին ծիսական բնույթ: Ծիսական բնույթ էին կրում նաև ժողովներն ու միտինգները, քանզի ամեն ինչ վերսններում որոշված էր: ՀԽՍՀ նոր

⁴⁹⁰ Տե՛ս Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրություն (հիմնականօրենք), Երևան, 1937:

⁴⁹¹ «Խորհրդային Հայաստան», թիվ 47, 1937:

սահմանադրությունն ընդունվեց Հայաստանի խորհուրդների 9-րդ արտակարգ համագումարի կողմից 1937թ. մարտի 23-ին⁴⁹²:

Միանգամայն ճիշտ էր սահմանադրության այն մատնանշումը, որ Հայաստանում վերացել էր մարդու կողմից մարդու շահագործումը և դրա հնարավորությունները: Ամենակարևոր հիմնավորումն այն էր, որ ինչպես ԽՍՀՄ-ի, այնպես էլ ՀԽՍՀ-ի տնտեսական հիմքը հանդիսանում էր արտադրության միջոցների սոցիալիստական սեփականությունը: Սա նշանակում է, որ միտվածություն կար ստեղծելու սոցիալական պետություն, որն առաջին հերթին ենթադրում էր սոցիալական եթե ոչ բարձր, ապա՝ դրական կարգավիճակ և սոցիալական հավասարություն: Իսկ դա նշանակում էր՝ 1) քաղաքացիների աշխատանքի իրավունք, աշխատանքի ընդունակ բոլոր քաղաքացիները երաշխավորվում էին ապահովվելու աշխատանքով, աշխատանքի այնպիսի պայմանների ստեղծումով, որոնք կապահովեին աշխատավորների նյութական բարեկեցությունն ու առողջապահական պայմանները, 2) օրենքն աշխատավորության համար ստեղծում էր սոցիալական ապահովության լայն համակարգ, այն է՝ ձրի բժշկական օգնություն առողջապահական բազմաթիվ հիմնարկների՝ հիվանդանոցների, առողջարանների, հանգստյան տների միջոցով, 3) ծերության և անաշխատունակության դեպքում նյութական միջոցներով ապահովում՝ կենսաթոշակների միջոցով, 4) պետության միջոցներով բնակարաններով ապահովում, կոմունալ-կենցաղային պայմանների բարելավում, 5) ձրի կրթություն⁴⁹³:

Այսպիսով եզրակացությունները հետևյալներն են.

Առաջին. 1922թ. սկսած ձևավորվում են Խորհրդային Հայաստանի տնտեսական և քաղաքական համակարգերի իրավական հիմքերը:

Երկրորդ. Այդ իրավական հիմքերը մատնանշված էին ԽՍՀՄ առաջին երկու սահմանադրությունների դրույթներով, որոնք, բնականաբար, մինչև երկրորդի ընդունումն էվոլյուցիա էին ապրում:

Երրորդ. ՀԽՍՀ քաղաքական համակարգն ամբողջատիրական էր, որովհետև այնտեղ քաղաքական այլախոհությունը մերժված էր և բացառված էին ժողովրդի այլընտրանքային քաղաքական կամարտահայտությունները:

Չորրորդ. ՀԽՍՀ տնտեսական համակարգը պարունակում էր ժողովրդավարական տարրեր այնքանով, որքանով միտված էր սոցիալական արդարության, բայց մրցակցության մերժումը, մասնավորապես 1920-ական թթ. երկրորդ կեսից, նշանակում էր տնտեսության միայն պետական կարգավորում, որն ինքնին ենթադրում էր մարդու տնտեսական ազատ գործունեության իրավունքների սահմանափակում:

⁴⁹²Տես Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրությունը (հիմնական օրենք), Երևան, 1937:

⁴⁹³Հայ ժողովրդի պատմություն, ՀԽՍՀ ԳԱ հրատ, հ. 7, էջ 381 – 382:

Քաղաքական համակարգ - Քաղաքական համակարգ, տնտեսական համակարգ, սահմանադրություն, իրավական հիմքեր, ժողովրդավարություն, իրավունքներ, քաղաքական հիմք, տնտեսական հիմք, ՀԽՍՀ:

Արման Սարգսյան, Խորհրդային Հայաստանի քաղաքական և տնտեսական համակարգերի իրավական հիմքերի ձևավորման գործընթացը (1922-1938թթ.) - Հոդվածը նվիրված է ՀԽՍՀ տնտեսական և քաղաքական համակարգերի իրավական հիմքերի ձևավորման գործընթացին՝ 1922-1938թթ. ընթացքում: Այդ իրավական հիմքերը մատնանշված էին ԽՍՀՄ առաջին երկու սահմանադրությունների դրույթներով, որոնք, բնականաբար, մինչև երկրորդ սահմանադրության ընդունումն էվոյուցիա էին ապրում: ՀԽՍՀ քաղաքական համակարգն ամբողջատիրական էր, որովհետև այնտեղ քաղաքական այլախոհությունը մերժված էր և բացառված էին ժողովրդի այլընտրանքային քաղաքական կամարտահայտությունները: ՀԽՍՀ տնտեսական համակարգը պարունակում էր ժողովրդավարական տարրեր այնքանով, որքանով միտված էր սոցիալական արդարության, բայց մրցակցության մերժումը նշանակում էր տնտեսության միայն պետական կարգավորում, որն ինքնին ենթադրում էր մարդու տնտեսական ազատ գործունեության իրավունքների սահմանափակում: ԽՍՀՄ, ինչպես նաև ՀԽՍՀ քաղաքական և տնտեսական համակարգերի իրավական հիմքերը ձևավորվում էին ամբողջատիրական վարչակարգի հաստատման անհրաժեշտության թելադրությամբ:

Арман Саргсян, Процесс формирования правовых основ политической и экономической систем Советской Армении - Статья посвящена процессу формирования правовых основ экономической и политической систем АССР в 1922-1938 гг. Эти правовые основы были сформированы основными положениями обеих конституций АССР, которые до принятия третьей конституции пережили определенную эволюцию. Политическая система АССР являлась тоталитарной, поскольку исключались политическое инакомыслие и альтернативное политическое волеизъявление народа. Экономическая система АССР включала определенные демократические элементы, так как была ориентирована на социальную справедливость. Однако исключение конкуренции означало только государственное регулирование экономики, что само по себе предполагало ограничение свободной экономической деятельности человека. Правовые основы политической и экономической систем как СССР, так и АССР формировались в силу необходимости установления тоталитарного режима.

Arman Sargsyan, The legal basis formation of Soviet Armenian's political and economic systems - The paper is devoted to the formation of legal basis for political and economic systems of ASSR in 1922-1938. The above mentioned basis was developed upon the main layouts of both constitutions of ASSR which underwent some evolution will the adoption of the third constitution. The political system of ASSR was totalitarian.

The economic system of ASSR contained several democratic elements as it was aimed at social justice. However, the exclusion of economic competition meant only state regulation of the economy which itself implied the restriction of free economic activities of people. The legal basis of political and economic systems of both USSR and ASSR used to develop with the necessity of the establishment of totalitarian regime.

**1992-1993 ԹԹ ՎՐԱՑ-ԱԲԽԱԶԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԹՈՒՐԶԷԱՅԻ ՎԱՐԱՄ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՎԱՐԴԱՆ ՂԱՓԼԱՆՅԱՆ

Սառը պատերազմի ավարտը Թուրքիայի համար նոր հնարավորություններ առաջ բերեց: Անկարան հնարավորություն ստացավ գործընկերային հարաբերություններ հաստատել Մոսկվայի հետ տարբեր ոլորտներում: Այս հարաբերությունների ամրապնդման էին ուղղված Թուրքիայի նախագահ Թ. Օզալի և Մ. Գարբաշովի միջև կայացած հանդիպումը Մոսկվայում, որի արդյունքում մարտի 16-ին 2 երկրների միջև կնքվեց «Ընկերության, հարևանության և համագործակցության մասին պայմանագիրը»⁴⁹⁴: Հարաբերությունների նման զարգացումները Թուրքիային հնարավորություն տվեցին արդեն իսկ ԽՍՀՄ գոյության տարիներին մեծացնել իր տնտեսական ներկայությունը Հարավային Կովկասում՝ մասնակցելով տարբեր ծրագրերի: Արխագիայում թուրքական ընկերության կողմից 1980-ականների վերջին կառուցվում է մինչև այժմ գործող Պիցունդայի «Սամշիտովայա Ռոշչա» հայտնի հյուրանոցը, որը բացվում է վրաց-արխագական պատերազմի նախաշեմին⁴⁹⁵:

ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիայի իշխանությունները ձեռնամուխ եղան արդեն ամուր հարաբերություններ հաստատել Հարավային Կովկասի առանձին պետությունների հետ: Դրանով է պայմանավորված, որ Թուրքիայի նախագահ Թ. Օզալը առաջ է քաշում տարածաշրջանային տնտեսական մարմին (Սնծովյան տնտեսական համագործակցության կազմակերպություն) ստեղծելու գաղափարը: 1992 թվականին Ստամբուլում կայացած գագաթնաժողովի 11 երկրների թվում էին թվում էին նաև Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը: Հանդիպման արդյունքում կայացվում է Սնծովյան տնտեսական համագործակցության կազմակերպություն ստեղծելու որոշումը, ինչպես նաև պայմանավորվածություններ են ձեռք բերվում՝ նպաստել անդամ երկրների միջև առևտրաապրանքաշրջանառության ծավալների մեծացմանը և խաղաղության պահմանմանը⁴⁹⁶: Այս նախաձեռնությամբ Թուրքիան փորձում էր կանխել նորանկախ պետությունների շրջանում տնտեսական բեռնացումը դեպի Ռուսաստան՝ միաժամանակ մեծացնելով իր ազ-

⁴⁹⁴ Պայմանագրի ռուսերեն տարբերակը տե՛ս Ռուսաստանի ԱԳՆ պաշտոնական կայքում http://www.mid.ru/foreign_policy/international_contracts/2_contract/-/storage-viewer/bilateral/page-357/48855

⁴⁹⁵ St u Burcu Gültekin-Punsmann, <<Questioning The Embargo On Abkhazia: Turkey's Role In Integrating Into The Black Sea Region", Turkish Policy Quarterly Vol 8 No 4, Winter 2009, p. 77

⁴⁹⁶ Սնծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության մասին ավելի մանրամասն տե՛ս կազմակերպության պաշտոնական կայքում (<https://goo.gl/Exx74u>)

դեցությունը և դերը: Հաշվի առնելով Արցախյան շարժման և Հայոց Ցեղասպանության հետ կապված լարված հարաբերությունները Հայաստանի հետ, թուրքական կողմի համար կարևոր էր սերտ կապեր հաստատել Ադրբեջանի և Վրաստանի հետ: Առաջինը դիտարկվում էր, որպես էներգետիկ բնական պաշարների աղբյուր և Թուրքիայի թիվ մեկ դաշնակիցը տարածաշրջանում, իսկ Վրաստանը՝ պետք է դառնար Ադրբեջանը և Թուրքիան կապող կարևորագույն օղակը: Նորանկախ պետությունները Թուրքիային դիտարկում էին որպես այլընտրանք Ռուսաստանին, որը կարող էր նպաստել արևմտյան երկրների հետ սերտ կապերի հաստատմանը:

Թերևս դրանով է պայմանավորված, որ Թուրքիան ձգտում էր տարածաշրջանում պահպանել խաղաղություն և նպաստել նոր թափ ստացած ազգամիջյան հակամարտությունների կարգավորմանը: Դրա համար Անկարան որդեգրում է «տարածաշրջանային հակամարտություններում միջնորդի, խաղաղարարի դերը»⁴⁹⁷: Իր անկողմնակալ միջնորդի դերը ավելի ամրապնդելու համար Թուրքիան տնտեսական ծրագրերից զատ փորձում է նաև օգտագործել տարածաշրջանի տարբեր ժողովուրդների հետ ունեցած պատմական մշակութային և կրոնական կապերը:

Վրաց-աբխազական հակամարտությունում մի կողմից Անկարան Վրաստանում ուներ հեռանկարային տնտեսական շահեր, իսկ մյուս կողմից՝ Թուրքիայի տարածքում բնակվում էր բազմաքանակ աբխազական համայնք, որի համար ԽՍՀՄ փլուզումից և վրաց-աբխազական պատերազմից հետո առաջնային նպատակներից էր դարձել անկախ, ազգային պետություն ստեղծելու գաղափարը: Թուրքիայի քաղաքականությունը հասկանալու համար անհրաժեշտ է առանձին-առանձին դիտարկել հակամարտության տարբեր կողմերի հետ հարաբերություններում առկա առանձնահատկությունները, ինչպես նաև վրաց-աբխազական պատերազմի տարիներին որդեգրած քաղաքականությունը:

Վրաստան: ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիան դարձավ առաջին պետություններից մեկը, որը ճանաչեց Վրաստանի անկախությունը (1991թ. դեկտեմբերի 16): Վրաց-թուրքական հարաբերությունների զարգացումը կարելի է ուսումնասիրել տնտեսական և ռազմական ոլորտներում առկա համագործակցության համատեքստում: Երկու դեպքում էլ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ երկկողմանի հարաբերություններում սերտացումը սկսվեց նկատվել միայն 1994 թվականից հետո: Այս փաստը կարելի է կապել նրա հետ, որ միայն 1994 թվականին տարածաշրջանում ավարտվեցին բոլոր ազգամիջյան զինված բախումները,

⁴⁹⁷ Հարավային Կովկասում Թուրքիայի արտաքին քաղաքականության մասին տե՛ս Թուրքիայի ԱԳՆ պաշտոնական կայքում (<https://goo.gl/wE8hY2>)

իսկ տարածաշրջանի երկրները թևակոխեցին հարաբերական խաղաղության ժամանակաշրջան:

Վրաստանի հետ տնտեսական հարաբերություններում Թուրքիայի համար առաջնային դեր է կատարում ադրբեջանական էներգակիրների հետ կապված ծրագրերը: 1994 թվականից հետո Վրաստանը Անկարայի կողմից սկսեց դիտարկվել որպես Կասպից ծովի ավազանի նավթի և գազի պաշարները Թուրքիայի հետ կապող միջանկյալ ուղի: Էներգակիրների տարանցիկ ճանապարհի շրջանակներում նշանակալից էին Դեմիրելի նախաձեռնությամբ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղը կառուցելու ծրագրերի մեկնարկը⁴⁹⁸: Նման համագործակցությունը Թուրքիային հնարավորություն էր տալիս ստեղծել նոր էներգետիկ հանգույցը, որը ոչ միայն կբավարարեր երկրի ներքին պահանջների զգալի մասը, այլ նաև Եվրոպայի համար այլընտրանք կդառնար ռուսականին: Էներգետիկ ոլորտում համագործակցության միջոցով Թուրքիան ձգտում էր իր ներկայությունը մեծացնել վրացական տնտեսության այլ ոլորտներում՝ շինարարությունից մինչև զբոսաշրջություն, գյուղատնտեսությունից մինչև առևտուր: Այս ամենով է պայմանավորված, որ սկսած 1992 թվականից երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը զգալի աճ է գրանցել⁴⁹⁹:

Վրաց-թուրքական համագործակցության մյուս կարևոր ուղղությունը ռազմական ոլորտում համագործակցությունն է: Թուրքիան՝ լինելով ՆԱՏՕ-ի անդամ պետություն, վրացական իշխանությունների կողմից դիտարկվում էր որպես կապող օղակ ՆԱՏՕ-Վրաստան հարաբերություններում: Թուրք-վրացական համագործակցությունը ռազմական ոլորտում նպատակ ուներ հետագայում ամրապնդել Թբիլիսիի կապերը Արևմուտքի և ՆԱՏՕ-ի անդամ պետությունների հետ՝ միաժամանակ նպաստելով ռուսական ազդեցության նվազեցմանը⁵⁰⁰:

Արխագիա: Պաշտոնական մակարդակում Թուրքիան չի ճանաչում Աբխազիայի անկախությունը և վրաց-աբխազական հարաբերություններում հանդես է գալիս Վրաստանի տարածքային ամբողջականության շահերից, սակայն մեծաքանակ աբխազական համայնքի գոյությունը Թուրքիայում, ինչպես նաև Սև ծովի ափամերձ շրջանների տնտեսական շահերը չէին կարող չնպաստել ոչ-պաշտոնական հարաբերությունների զարգացմանը: Թուրք-աբխազական հարաբերությունների զարգացմանը նպաստում էին հիմնականում 2 գործոններ:

Առաջինը մեծաքանակ աբխազական սփյուռքն էր Թուրքիայում, որը ձևավորվել էր դեռևս XVIII-XIX-րդ դարերում «Սոհաջիրական շարժման» տարիներին⁵⁰¹: ԽՍՀՄ փլուզումից հետո և վրաց-աբխազական հակամարտության սրաց-

⁴⁹⁸ St' u Vindimian M., Evolution of Turkish Foreign Policy towards Georgia, ISPI N196 Sep., 2010, p. 3

⁴⁹⁹ St' u Վրաստանի վիճակագրական ծառայության պաշտոնական կայքում (<https://goo.gl/CzgT3X>)

⁵⁰⁰ St' u Vindimian M., Evolution of Turkish Foreign Policy towards Georgia, ISPI N196 Sep., 2010, p. 3-4

⁵⁰¹ St' u Owen EL., Abkhazia's Diaspora: Dreaming of Home, Eurasianet.org
<http://www.eurasianet.org/departments/insightb/articles/eav030909b.shtml>

ման տարիներին աբխազական համայնքը փորձում էր հնարավոր բոլոր միջոցներով աջակցել իրենց պատմական հայրենիքին՝ Թուրքիայում խորհրդարանային լսումներ կազմակերպելուց մինչև Աբխազիա նյութական և մարդկային օգնություն ուղարկելով⁵⁰²։ Աբխազիայում տեղի ունեցող զարգացումներով էր պայմանավորված շուրջ 3000 թուրքաբնակ գործարարների վերահաստատումը Սուխումում⁵⁰³։ Աբխազիայում բնակություն հաստատած գործարարների զգալի մասը ուներ աբխազական ծագում։

Մյուս գործոնը Թուրքիայի Սևծովյան քաղաքների բնակչության տնտեսական շահերն էին Աբխազիայում։ ԽՍՀՄ փլուզումից և վրաց-աբխազական պատերազմից հետո Աբխազիայի շրջափակման հետևանքով փաստացիորեն անկախ պետությունում առաջացան բացեր տնտեսության տարբեր ոլորտներում։ Աբխազիայում գործունեությունը նաև հնարավորություն էր տալիս դուրս գալ Ռուսաստանի հարավ-արևելյան շրջանների շուկա։

Թուրք-աբխազական ոչ-պաշտոնական հարաբերությունների զարգացման էր նպաստում նաև Տրապիզոնի և Սուխումի միջև առկա ծովային հաղորդակցությունը։ «Ռիցա» լաստանավը շաբաթական երկու անգամ ուղևորվում էր Տրապիզոնից Սուխում և հակառակը⁵⁰⁴։ Ծովային հաղորդակցությունը 2 երկրների միջև գործում էր մինչև 1996 թվականը, երբ Թուրքիան միացավ ԱՊՀ անդամ երկրների ղեկավարների Խորհրդի կողմից Աբխազիայի նկատմամբ հայտարարված շրջափակմանը⁵⁰⁵։ Չնայած նրան, որ թուրքական կողմի նման որոշումները զգալի հարված հասցրեցին երկկողմանի հարաբերություններին, սակայն ոչ-պաշտոնական համագործակցությունը Թուրքիայի և Աբխազիայի միջև շարունակվում էր։ Թուրքական իշխանությունները գիտակցում էին, որ թուրքական կապիտալի ներհոսքը դեպի Աբխազիա այլընտրանք էր ստեղծում ռուսական կողմի ազդեցության մեծացմանը։

1992-93թթ պատերազմը Աբխազիայում։ ԽՍՀՄ փլուզումից հետո Հարավային Կովկասում իր քաղաքականությունում Թուրքիան առաջնորդվում էր «սպասել և տեսնելու» քաղաքականությամբ⁵⁰⁶։ Այս կերպ Թուրքիան տարածաշրջանում առկա ազգամիջյան բախումների համատեքստում խուսափում էր որևէ

⁵⁰² St' u Ergun Ozgur, The North Caucasian and Abkhaz Diasporas; Their Lobbying Activities in Turkey, CAUCASUS STUDIES: Migration, Society and Language Papers from the conference, Malmö University, November 28-30 2008

⁵⁰³ St' u Burcu Gültekin-Punsmann, <<Questioning The Embargo On Abkhazia: Turkey's Role In Integrating Into The Black Sea Region", Turkish Policy Quarterly Vol 8 No 4, Winter 2009, p. 77

⁵⁰⁴ St' u նույն տեղում, էջ 78

⁵⁰⁵ 1996 թվականի հունվարի 19-ին ԱՊՀ անդամ երկրների ղեկավարների Խորհուրդը ընդունեց «Վրաստանում/Աբխազիայում հակամարտության կարգավորման միջոցների» մասին բանաձևը, որով նախատեսվում էր տնտեսական պատժամիջոցներ կիրառել Աբխազիայի նկատմամբ

⁵⁰⁶ St' u M. ÇELIKPALA, From A Failed State to a Weak One? Georgia and Turkish-Georgian Relations, in «The Turkish Yearbook of International Relations», no. 36, 2005, p. 170

նախաձեռնողական և ակտիվ քաղաքականությունից՝ սպասելով դեպքերի հետագա զարգացմանը: Վրաստանի և Աբխազիայի պարագայում նման քաղաքականությունը պայմանավորված էր նաև 1992 թվականին սկսված պատերազմի փոփոխական ընթացքով և արդյունքների անկախատեսելիությամբ:

Այս քաղաքականությամբ էր պայմանավորված, որ թուրքական իշխանությունները՝ չնայած նրան, որ պաշտպանում էին Վրաստանի տարածքային ամբողջականությունը, որևէ բարձրաստիճան ամբիոնից գնահատական չէին տալիս վրաց-աբխազական պատերազմի վերաբերյալ⁵⁰⁷: Ավելին թուրքական իշխանությունները չէին խոչընդոտում երկրի տարածքում գործող աբխազական համայնքի լոբիստական գործունեությանը, ինչի մասին են խոսում երկրի խորհրդարանում կայացած լսումները վրաց-աբխազական պատերազմի մասին⁵⁰⁸:

Փաստացիորեն իր այս չեզոքության քաղաքականությամբ Անկարան փորձում էր իրեն ժամանակավորապես դիրքավորել դիտորդի դերում, որը պետք է մշակեր իր տարածաշրջային քաղաքականությունը՝ հիմնվելով նոր իրականության վրա, որը պետք է ձևավորվեր տարածաշրջանում ընթացող ազգամիջյան զինված բախումների արդյունքում:

Ամփոփելով վերոշարադրյալը, անհրաժեշտ է նշել, որ 1992-93թթ. վրաց-աբխազական պատերազմը հետխորհրդային շրջանում ծագած ազգամիջյան ամենաարյունոտ հակամարտություններից մեկն էր որի հետևանքով գրանցվել են շուրջ 15.000 մարդկային զոհեր, իսկ գրեթե 250.000 մարդ ստիպված է եղել լքել իրենց բնակության վայրերը: Դրան զուգահեռ վրաց-աբխազական զինված բախումները առաջ բերեցին տարածաշրջանային նոր իրողություններ, որոնց արձագանքները զգացվում են մինչ այժմ:

Անկարային հաջողվեց կառուցողական հարաբերություններ ձևավորել հակամարտության կողմերի հետ՝ օգտագործելով իր տրամադրության տակ ունեցած ազդեցության լծակները: Աբխազիայի պարագայում Թուրքիան սկսեց գործել բացառապես անհատների մակարդակում՝ աստիճանաբար մեծացնելով թուրքական կապիտալի մասնաբաժինը աբխազական տնտեսությունում: Իսկ Վրաստանի պարագայում թուրքական կողմին հաջողվեց իրեն դիրքավորել, որպես Արևմուտքի հետ կապող օղակի և տնտեսական ծրագրերում վստահելի գործընկերոջ: Դրան էր նպաստում Ռուսաստանի կողմից Աբխազիայի նկատմամբ քաղաքականության հետևանքով Վրաստանի ղեկավար օղակներում ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների բարելավմանը ձգտող ուժերի առաջ գալը:

⁵⁰⁷ Աբխազիայի հարցում Թուրքիայի դիրքորոշումը տե՛ս Թուրքիայի Հանրապետության ԱԳՆ պաշտոնական կայքում <http://www.mfa.gov.tr/turkiye-gurcistan-siyasi-iliskileri.tr.mfa>

⁵⁰⁸ St'e u Orkhan Gafarli, The Role of North Caucasus Diaspora in Turkey-Russia relations, Turkish policy quarterly, Spring 2014, Volume 13, number 1

Վրաց-աբխազական պատերազմից հետո Թուրքիայի առաջ քաշած Վրաստանի և Ադրբեջանի հետ համատեղ տնտեսական ծրագրերը նպաստեցին վերոնշյալ երկրներում իր քաղաքական և տնտեսական կշռի կտրուկ ավելացմանը, ինչը հնարավորություն տվեց թուրքական կողմին դառնալ տարածաշրջանային հիմնական և ակտիվ դերակատարներից մեկը:

Գրականության ցանկ

1. Welt C., «A Fateful Moment: Ethnic Autonomy and Revolutionary violence in the Democratic Republic of Georgia (1918–1921)», Jones Stephen F., «The Making of Modern Georgia, 1918 – 2012: The first Georgian Republic and its successors», New York City, Routledge, 2012
2. Lakoba S , “Abkhazia is Abkhazia”, Central Asian Survey, 14 (1), 1995
3. Zverev Al “Ethnic Conflicts in the Caucasus 1988-1994”, Bruno Coppieters (խմբ) “Contested Borders in the Caucasus”, Brussels, Vubpress, 1996
4. Kaufman S.J., Modern Hatreds: The Symbolic Politics of Ethnic War, Ithica, New York: Cornell University Press, 2001
5. Zurcher Ch. , “Georgia’s Time of Troubles, 1989-1993”, Bruno Coppieters և Robert Legvold (խմբ) “Statehood and Security: Georgia after the Rose Revolution”, London, The MIT Pres
6. Աբխազիայի Գերագույն Խորհրդի Վրաստանի Հանրապետության քաղխորհրդին ուղղած ուղերձը, Սուխում, 1992թ <http://www.abkhazia.com/book23-111.html>
7. “Georgia/Abkhazia: Violations of the Laws of War and Russia's Role in the Conflict: Acts of Lawlessness During the First Two Months of Fighting, August to September 1992”. Human Rights Watch Reports. 7 (7). 1995 <https://www.hrw.org/reports/1995/Georgia2.htm>
8. «АБХАЗИЯ:1992—1993 годы: Хроника Отечественной Войны», Москва, 1995
9. Human Rights Watch. Georgia/Abkhazia: Violations Of The Laws Of War And Russia’s Role In The Conflict, vol 7/7, 1995 <https://www.hrw.org/reports/pdfs/g/georgia/georgia953.pdf>
10. Burcu Gültekin-Punsmann, et al., “Abkhazia for the Integration of the Black Sea,” Center for Middle Eastern Studies and Economic Policy Research Foundation of Turkey, December 2009
11. Vindimian M., Evolution of Turkish Foreign Policy towards Georgia, ISPI No 196 Sep., 2010
12. Ergun Ozgur, The North Caucasian and Abkhaz Diasporas; Their Lobbying Activities in Turkey, CAUCASUS STUDIES: Migration, Society and Language Papers from the conference, Malmö University, November 28-30 2008

13. Chervonnaya Sv , “Conflict in the Caucasus: Georgia, Abkhazia and the Russian Shadow”, Glastonbury: Gothic Image, 1994

14. Derluguian G M., “The Tale of Two Resorts: Abkhazia and Ajaria Before and Since the Soviet Collapse”, Beverly Crawford and Ronnie D Lipschutz (խմբ.), “The Myth of ‘Ethnic Conflict’: Politics, Economics, and Cultural Violence”, Berkeley, University of California, 1998

15. Ռուսաստանի Դաշնության ԱԳՆ պաշտոնական կայք www.mid.ru

16. Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության պաշտոնական կայք www.bsec-organization.org

17. Թուրքիայի Հանրապետության ԱԳՆ պաշտոնական կայք www.mfa.gov.tr

18. Վրաստանի վիճակագրական ծառայության պաշտոնական կայք

http://www.geostat.ge/index.php?action=page&p_id=134&lang=eng

Բանալի բառեր - Աբխազիա, Վրաստան, Թուրքիա, աբխազական պատերազմ, Հարավային Կովկաս, շրջափակում, տարածաշրջանային քաղաքականություն

Վարդան Ղափլանյան, 1992-1993թթ. վրաց-աբխազական պատերազմի տարիներին հակամարտության կողմերի նկատմամբ Թուրքիայի վարած քաղաքականության առանձնահատկությունները - Հոդվածը նպատակ ունի ուսումնասիրել Անկարայի որդեգրած քաղաքականության առանձնահատկությունները 1992-1993 թվականների վրաց-աբխազական պատերազմի տարիներին, ինչպես նաև հասկանալ նման քաղաքականության դրդապատճառները և առկա արտաքին ու ներքին գործոնները: Վրաստանի և Աբխազիայի հետ ձևավորված հարաբերությունների վերլուծությունը հնարավորություն կտա հասկանալ թուրքական կողմի տարածաշրջանային գործունեության հիմնական շարժառիթները և նպատակները:

Вардан Капланян, Особенности Турции по отношению сторон в грузино-абхазской войне (1992-1993) - Целью статьи является изучение особенностей политики Анкары в период грузино-абхазской войны 1992-1993 годов, а также мотивов такой политики и внешних и внутренних факторов. Анализ отношений с Грузией и Абхазией позволит понять основные мотивы и цели региональной деятельности турецкой стороны

Vardan Ghaplanyan, Peculiarities of Turkey's policy on parties of georgia-abkhazian war (1992-1993) - The article aims to explore the peculiarities of Ankara's policy during the 1992-1993 Georgian-Abkhazian war, as well as the motives for such policies and the external and internal factors. Analysis of relations with Georgia and Abkhazia will enable to understand the main motives and goals of the Turkish regional activities.

ПРАВО ПРИОБРЕТЕНИЯ ДОЛИ В СТРОЯЩЕМСЯ ЗДАНИИ КАК ОГРАНИЧЕННОЕ ВЕЩНОЕ ПРАВО В РА

ЕВГЕНИЯ ГЯНДЖУМЯН

На сегодняшний день в гражданско-правовой науке и практике наблюдается тенденция исследования проблемы установления правового статуса субъекта, который владеет вещью, с намерением приобретения права собственности в дальнейшем. Возникновение подобных “ожидаемых” прав возможно, например, в случае, когда сохранение права собственности за продавцом предусмотрено договором купли-продажи до исполнения покупателем определенных требований либо при приобретении доли в строящемся здании.

Поскольку у потенциального приобретателя формируется некий лиминальный статус, а также возникает необходимость определить объем его прав и обязанностей относительно имущества, отношения с собственником, выбора способ защиты права. Важно отметить, что отсутствие четкой регламентации возникающих правовых отношений и анализа правовой природы данной категории влечет к случаям злоупотребления права.

Как известно, 19-ого июня 2015 года в ГК РА были внесены дополнения⁵⁰⁹, в частности, в перечень ограниченных вещных прав было включено также право покупки недвижимости в строящемся здании, что свидетельствует о направленности законодателя на разрешение затруднений в сфере защиты прав долевых участников при строительстве жилья (статья 170 ГК РА).

Так, в соответствии законодательными преобразованиями части 4 ст. 224 ГК РА будущая квартира в строящихся многоквартирных и подразделенных зданиях или нежилое помещение могут быть обременены правом покупки недвижимого имущества в строящемся здании. Кроме того, договор права покупки недвижимого имущества в строящемся здании подлежит нотариальному заверению, право покупки недвижимого имущества в строящемся здании – государственной регистрации. Право покупки недвижимого имущества в строящемся здании распространяется также на соответствующую долевую часть земельного участка и помещений общего использования.

Согласно части 5 ст. 224 ГК РА в строящихся многоквартирных и подразделенных зданиях обособленные единицы (квартиры и нежилые помещения) вместе с долей в земельном участке и помещениях общего

⁵⁰⁹ О внесении в Гражданский кодекс РА дополнений и изменений // www.parliament.am/legislation.php?sel=show&ID=5294&lang=arm

использования становятся объектом оборота после государственной регистрации завершенного здания.

Более того, статья ст. 224 ГК РА была дополнена 7 и 8 частями. В частности, согласно части 7 ст. 224 ГК РА в срок, установленный договором, но не позднее, чем 6 месяцев, после государственной регистрации завершения строительства многоквартирного или подразделенного здания застройщик представляет лицу, обладающему правом покупки недвижимого имущества в строящемся здании акт о передаче недвижимого имущества в строящемся здании на праве собственности и расчетный документ или в случаях, предусмотренных законом, налоговый счет. В то же время, часть 8 ст. 224 ГК РА устанавливает, что акт о передаче недвижимого имущества в строящемся здании на праве собственности подлежит нотариальному заверению, а возникающее из него право – государственной регистрации. Квартира, нежилое помещение, в том числе их соответствующая долевая часть в земельном участке и помещениях общего использования, в построенном многоквартирном и подразделенном здании считаются переданными лицу, обладающему правом покупки недвижимого имущества в строящемся здании с момента государственной регистрации акта о передаче недвижимого имущества в строящемся здании на праве собственности.

Из системного анализа вышеотмеченных законодательных преобразований можно прийти к следующим выводам:

1. право покупки недвижимости в строящемся здании приобрело статус ограниченного вещного права,
2. объектом права покупки недвижимости в строящемся здании может быть только недвижимость в строящемся здании,
3. основанием возникновения данного права является договор, который подлежит нотариальному заверению, а само право – государственной регистрации.

В качестве преимущества признания “права покупки недвижимости в строящемся здании” можно выделить следующие аспекты:

1. предоставляет лицу стабильное, абсолютное, определенное и публичное право,
2. предоставляемое управомоченному лицу право не влечет уменьшению имущественной ценности обособленных единиц в строящихся многоквартирных и подразделенных зданиях,
3. наделяет “будущего собственника” вещно-правовой защитой, что предоставляет возможность восстановления нарушенного владения, правомочия следования и наделяет защитой приобретателя;

4. устанавливает необходимость регистрации, что нацелено на обеспечение охраны интересов приобретателя, а также третьих лиц – потенциальных участников гражданско-правовых отношений.

Однако данная категория имеет более широкое применение в зарубежной практике. Если изначально право ожидания рассматривали в качестве рычага для развития кредитных отношений, то сегодня с данным институтом связывают обеспечение реальными гарантиями требований кредиторов, что является более чем актуальным в настоящее время, когда жесткая конкуренция, подкрепленная мировой финансовой и экономической нестабильностью, вынуждает профессиональных субъектов гражданского оборота заключать алеаторные сделки с передачей товаров приобретателю до момента их полной оплаты.

Необходимо подчеркнуть, что установление правовой природы права ожидания (*Anwartschaftsrecht*⁵¹⁰) рассматривается в качестве одного из наиболее спорных вопросов в правовых доктринах развитых правовых порядков. Так, правоведы рассматривают право ожидания в качестве вещного, которое наделяет обладателя правом владеть, пользоваться и распоряжаться вещью, приобретать право собственности с преимущественным правом, а также в случае нарушений пользоваться вещно-правовой защитой.

Относительно категории “ожидаемое право”, распространенной в германской доктрине и судебной практике, но пока не нашедшей прямого отражения в законе, в литературе ведется дискуссия. Наряду с преобладающей позицией признания его особым вещным правом высказан и более осторожный подход, согласно которому речь идет о завершающей стадии (или предварительной ступени) приобретения полного вещного права, которая сама по себе имеет известное гражданско-правовое значение: таково, например, право приобретателя недвижимости в случае заключения и исполнения договора ее купли-продажи до момента его государственной регистрации (*Medicus D. Burgerliches Recht. 19 Aufl. Köln; Berlin; Bonn; München, 2002. S. 292 - 293*)⁵¹¹.

Важно отметить, что в широком понимании право ожидания в цивилистике является родовым понятием для всех возникающих при наличии законных оснований юридических конструкций. Так, данный институт можно встретить в наследственном праве, в договорном праве, в сфере защиты интеллектуальной

⁵¹⁰ Е. А. Суханов переводит данный термин как <<ожидаемое право” (Суханов Е. А. О видах сделок в германском и в российском гражданском праве // Суханов Е. А. Гражданское право России – частное право / Отв. ред. В. С. Ем. – М.: Статут, 2008. С. 515; Л. Ю. Василевская переводит данный термин как <<приобретение права собственности в будущем” (Василевская Л. Ю. Учение о вещных сделках по германскому праву. – М.: «Статут», 2004. С. 217)

⁵¹¹ Суханов Е. А. О видах сделок в германском и в российском гражданском праве // Суханов Е. А. Гражданское право России – частное право / Отв. ред. В. С. Ем. – М.: Статут, 2008.

собственности. Одновременно, наибольшее распространение данный институт получил в отношениях по обороту движимых вещей в качестве средства обеспечения товара. Однако в немецкой доктрине не все вышеотмеченные права рассматриваются вещными. Так, в виду наиболее точного проявления признаков вещного права вещными признаются права ожидания на недвижимое имущество (абсолютный характер, определенность, публичность).

Обратившись к гражданскому праву РА, следует отметить, что первоначально отечественный законодатель не рассматривал правомочия приобретателя в отношении вещи в качестве элементов самостоятельного субъективного права на данную вещь. Сегодня же эти объемы правомочий преимущественно охвачены содержанием правоотношений, вытекающих из договоров. Тем не менее, считаем, что расширение прав потенциальных собственников вещи при вступлении во владение в сферах пользования, распоряжения и защиты необходимо.

Так, статус обладателя вещи рассматривается преимущественно в качестве привязки, что не позволяет оценивать приобретателя в виде носителя самостоятельного права, а также без учета специфики правового регулирования отношений, связанных с оборотом недвижимого имущества. В частности, в статьях 504, 505, 507 ГК РА установлены лишь общие положения, распространяющиеся на продажу товаров, не учитывая деление на движимое и недвижимое имущество, средства защиты продавца при нарушении обязательств покупателем и не определяя статус приобретателя при передаче вещи до перехода права собственности.

В целом, можно выделить два направления разрешения данной ситуации. Так, возможно создать юридическую конструкцию, при которой положение обладателя будет рассматриваться в качестве непорочного владения, что предполагает признание за будущим собственником посессорной защиты. Однако для претворения в жизнь данной конструкции необходимо осуществление принципиальных преобразований в гражданское законодательство, в частности, посредством внедрения института владения и, соответственно, предусмотрев способы владельческой защиты. Кроме того, наделение посессорной защитой приобретателя не разрешит проблему латентности “правоождающего” состояния, в особенности в сфере оборота недвижимого имущества. Второй же путь предполагает рассмотрение приобретателя в виде субъекта вещного права.

С учетом законодательных преобразований, считаем, что применимым является вышеотмеченный второй способ, при котором право будущего собственника оформляется в вещно-правовую оболочку, в случаях, прямо указанных в законе.

Заслуживает внимания то обстоятельство, что законодатель охватывает только случай покупки недвижимости в строящемся здании, в то время как, существует возможность посредством того же механизма предоставить гарантированное право ожидания субъектам гражданско-правовых отношений. В частности, при заключении сделки с отлагательным условием, т.е. если стороны поставили возникновение прав и обязанностей в зависимость от обстоятельства, относительно которого неизвестно, наступит оно или не наступит (пункт 1 статьи 293 ГК РФ); при заключении договора относительно вещи, которая будет создана в будущем (пункт 2 ст. 471 ГК РФ); при договоре купле-продажи до выполнения покупателем определенных условий с сохранением права собственности за продавцом, в том числе по оплате (статья 507 ГК РФ); при договоре дарения вещи в будущем (пункт 2 статьи 594 ГК РФ) и т.д.

Таким образом, можно говорить о том, что появление в гражданском праве РФ категории “право покупки недвижимости в строящемся здании” является следствием “влияния” рассмотренной ранее категории права ожидания. Более того, покрытие прав кредиторов в правовую конструкцию ограниченного вещного права позволяет последним использовать всю палитру правовых возможностей, в том числе применять вещно-правовые способы защиты. Следует подчеркнуть, что реализация правовых рычагов при признании данного права обязательственным не предоставляет подобных гарантий.

Исходя из вышеотмеченного, можно прийти к следующим выводам.

1. внедрение в гражданское право РФ категории “право покупки недвижимости в строящемся здании” является следствием воздействия института права ожидания, которое рассматривается в качестве ограниченного вещного права,
2. право покупки недвижимости в строящемся здании обеспечивает защиты интересов прав приобретателей, предоставляя возможность обращения к вещно-правовым способам защиты, и в виду публичности сведений существенно сокращает допустимость махинаций с недвижимым имуществом,
3. данная правовая конструкция в дальнейшем может найти более широкое применение при регламентации гражданско-правовых отношений, поскольку имеется ряд иных схожих ситуаций, в рамках которых права “будущего приобретателя” могли бы быть охарактеризованы как вещные права.

Литература

1. Василевская Л. Ю. Учение о вещных сделках по германскому праву, М.: «Статут», 2004
2. Гражданский кодекс РА от 05.05.1998 года // www.arlis.am
3. Закон РА “О внесении в Гражданский кодекс РА дополнений и изменений” // www.parliament.am
4. Суханов Е. А. О видах сделок в германском и в российском гражданском праве // Суханов Е. А. Гражданское право России – частное право / Отв. ред. В. С. Ем. М.: Статут, 2008.

Ключевые слова: приобретение доли в строящемся здании, вещное право, ограниченное вещное право

Евгения Гянджумян, Право приобретения доли в строящемся здании как ограниченное вещное право в РА - Данная статья посвящена проблеме определения сущности права приобретения доли в строящемся здании как ограниченного вещного права. В работе анализируется современный аспект данной проблемы с точки зрения преобразования гражданского законодательства. Рассматриваются основные признаки данного права и определены отдельные направления совершенствования законодательства об этом правовом институте.

Եվգենիա Գյանջումյան, Կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքն որպես սահմանափակ իրային իրավունք ՀՀ-ում - Այս հոդվածը նվիրված է կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի որպես սահմանափակ իրային իրավունքի էության բացահայտմանը: Աշխատանքում վերլուծվում է տվյալ խնդրի ժամանակակից կողմը՝ քաղաքացիական օրենսդրության բարեփոխման տեսանկյունից: Ուսումնասիրվում են այս իրավունքի հիմնական առանձնահատկություններն ու որոշվում են տվյալ իրավական ինստիտուտի վերաբերյալ օրենսդրության կատարելագործման առանձին ուղղությունները:

Yevgenia Gyanjuman, The right of acquisition of share in a newly built building as limited property right in the Republic of Armenia - This article is dedicated to the problem of determination of the essence of the right of acquisition of share in a newly built building as limited property right. Modern aspect of this problem is analyzed from new position of reformation of civil legislation. Main signs and characteristics of this right are considered and determined some direction of improvement legal regulation about this legal institute.

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՏԻՎԱՅԻՄՅԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

ՎԼԱԴԻՄԻՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ, ԼՈՒՄԻՆԵ ԿՏԻԿՑԱՆ

Քաղաքական և սոցիալական հոգեբանության բնագավառում, իշխանության ձգտման մեխանիզմների ուսումնասիրությունը միշտ եղել է արդիական գիտության և հասարակության համար: Իշխանությանը ձգտման սոցիալական բնույթը ակնհայտ է, քանի որ իշխանությունը համարվում է սոցիալական երևույթ: Իշխանության ձգտման երևույթը հասկանալի է ամեն մարդու համար և նման դիրքորոշումները միշտ նորմալ են ընկալվել հասարակության կողմից: Նման մոտեցումը բնորոշ է նաև գիտնականների մեծամասնությանը: Այդպես է կարծում նաև ռուս հետազոտող Դ. Վինտերը: Ըստ նրա՝ իշխանության ձգտումը, համարվելով սոցիալական մոտիվ, ծրագրավորում է անձի վարքը:⁵¹² Իսկ քանի որ իշխանության ձգտումը ծրագրավորում է վարքը, ապա ակնհայտ է, որ իշխանությունը կարող է դիտարկվել նաև որպես միջանձնային հարաբերությունների ձևավորման գործոն: Իշխանությունը ունի սոցիալ-հոգեբանական բնութագրումներ, որոնց մեջ կարելի է առանձնացնել սոցիալական դիստանցիան, մանիպուլյացիաների հնարավորությունը, դերային ինքնահաստատումը: Հանդիսանալով սոցիալական երևույթ, իշխանությունը թույլ է տալիս ունենալ բարձր ինքնագնահատական, չնայած շատ հաճախ դա ուղղակի թվացյալ է, և ինքնագնահատականը, ըստ էության, չի բարձրանում, եթե այն անընդհատ գտնվում է սոցիալական կարգավիճակից կախվածության մեջ: Ինքնագնահատականը չի կարող արհեստականորեն բարձրանալ սոցիալական կարգավիճակի շնորհիվ՝ առանց հաշվի առնելու անձի սեփական որակները և անձնային ձեռքբերումները: Իշխանության ինստիտուտը ի սկզբանե օժտված է դրական արժեքային բնութագրիչներով: Եվ իշխանության, սոցիալական կարգավիճակի հետ նույնականացումը իր մեջ պարունակում է վտանգ ինքնության զարգացման համար: Իրեն սոցիալական կարգավիճակի հետ նույնականացնող անձը կարող է կորցնել սեփական նույնականությունը, կորցնել այն, ինչը գտնվում է այդ դերի դիմակի տակ: Չնայած իշխանության ինստիտուտի հանդեպ քննադատական մոտեցմանը, այն համարվում է հասարակության մեջ ամենաբարձր արժեք ունեցող սոցիալական ինստիտուտ: Հենց այդ պատճառով էլ իշխանությանը չհասած մարդիկ սկսում են քննադատել իշխանություն ունեցողներին և հենց իշխանության ինստիտուտը: Անկասկած, գերիշխող սոցիալական

⁵¹² Гозман Л.Я., Шестопал Е.Б. Психология власти, Психология господства и подчинения, Хрестоматия, Мн: Харвест, 1998, с.17-92.

խմբի քննադատության մեջ կարող են պարունակվել լիովին հիմնավորված մեղադրանքներ. եականը դա չէ: Հարցը նրանումն է, որ հաճախ ընդդիմությունը, քննադատելով իշխանությանը, քննադատում է կոնկրետ անձանց, այլ ոչ թե իշխանության ինստիտուտը, որին նա ոչ պակաս է ձգտում, քան իշխանություն ունեցողները: Այդ քննադատության մեջ հստակ նկատվում է ռացիոնալիզացիայի մեխանիզմը՝ իշխանությունը արժեզրկելու միջոց, քանի որ անհնար է դրան հասնել: Ընդ որում մենք կցանկանայինք ընդգծել մի շատ հետաքրքիր օրինաչափություն: իշխանություն ունեցողներին խիստ քննադատողները մյուս կողմից փորձում են իրենց հետ կապեր ստեղծել, դրանով իսկ սիմվոլիկ կերպով մոտենալ իշխանությանը: **Ընդդիմության մեջ լինելը իշխանության հասնելու փորձն է՝ քննադատության օգնությամբ իշխանավորներին մոտենալու փորձ:** Դիտարկենք իշխանության ձգտման սոցիալ-հոգեբանական գործոնները: Վերը նշվածներից դիտարկենք սոցիալական դիստանցիայի հասկացությունը: Հոգեբանական վերլուծության համատեքստում իշխանավորների սոցիալական դիստանցիան նախ և առաջ նշանակում է սոցիալական անհասանելիություն: Իշխանությանը ձգտող և իր վարքը այդ նպատակով ուղղորդող քաղաքական գործիչը հենվում է հասարակության վրա: Միայն հասարակությունը կարող է բերել մարդուն իշխանության հարթակին: Ընդ որում ինքը՝ հասարակությունը, իշխանության չի տիրապետում: Հենց այդ իրավիճակը առաջ է քաշում օրինաչափ մի հարց. ինչու՞ է հասարակությունը դրդում մարդկանց իշխանության: «Արդյո՞ք ազատության հանդեպ բնածին ձգտումից բացի գոյություն ունի նաև ենթարկվելու բնագոյ: Եթե ոչ, ապա ինչպես բացատրել այն ձգողականությունը, որը այսօր շատերը ունեն առաջնորդին ենթարկվելու հարցում»:⁵¹³ Էականը ենթարկվելու պահանջմունքի մերժումը չէ, կարևորն այն է, թե ենթարկվելու որ ձևերի մասին մենք կարող ենք դատել: Ենթարկվելու երևույթը բնական է, հաշվի առնելով այն, որ ընտանեկան սոսիալականացման ընթացքում մեզանից յուրաքանչյուրը փոքր տարիքից յուրացնում է ենթարկվելու սովորությունը: Տանելով անձին դեպի իշխանության ինստիտուտ, հասարակությունը շատ լավ հասկանում է, որ ձեռք բերելով իշխանություն, այդ անձը հասարակության համար դառնալու է անհասանելի: Այդպիսի իրավիճակում ձևավորվում է սոցիալական դիստանցիա, որը ընդունում է հենց այդ հասարակությունը, չնայած որ քննադատում է ներգործության այդ ձևը: Քարոզելով իր սեփական լիդերի համար, պայքարելով դեմոկրատական ազատության համար՝ հասարակությունը արդեն իսկ իրեն ենթարկվողի դերում է դնում: Ցանկացած հասարակություն ենթարկվողի դիրքում է հայտնվում և ընդունում է իշխանավորների գերիշխանությունը, ինչպես նաև ցանկացած հասարակություն ինքն է ցանկանում տեսնել սոցիալական դիստանցիա իր և իշխանության ինստիտուտի միջև: Եվ ինչ-

⁵¹³ Психология господства и подчинения, Минск, 1998, с.4

քան շատ է այդ սոցիալական դիստանցիան, այնքան ավելի շատ է հասարակության մոտ ձևավորվում համոզմունք իշխանավորների՝ ընտրյալ լինելու վերաբերյալ: Հասարակությունը իր համար ստեղծում է քաղաքական կուռքերի, դաժանորեն քննադատում է նրանց, բայց ցանկանում է միշտ ունենալ նրանց հետ սոցիալական դիստանցիա: Իշխանության ձգտումը երբեք չէր լինի, եթե չլինեք ենթարկվելու ձգտումը: Իսկ գերիշխելու և ենթարկվելու հարաբերություններում անխուսափելի է սոցիալական դիստանցիան: **Գոյություն ունի մի շատ դժվար բացատրելի հոգեբանական ճշմարտություն, որը արդարացնում է իշխանության ինստիտուտի և հասարակության միջև սոցիալական դիստանցիան. Հասարակությունը իր շարքերից է ընտրում լիդերին և միաժամանակ չի ցանկանում, որպեսզի լիդերը լինի ժողովրդից մեկը:** Այդ պատճառով էլ սոցիալական դիստանցիան համարվում է **անհրաժեշտ գործոն իշխանություն-հասարակություն հարաբերությունների մեջ:** Սակայն իշխանությունը որպես սոցիալական ինստիտուտ ունի ոչ միայն ուղղահայաց, այլ նաև հորիզոնական մակարդակ: Իշխանության երևույթը չի կարելի տեսնել միայն գործող քաղաքական իշխանությունների ինստիտուտներում: Գոյություն ունեն սոցիալականացման մի քանի ինստիտուտներ, որտեղ իշխանության երևույթը ունի իր գերիշխող նշանակությունը: Առանց այդ սոցիալականացման ինստիտուտների մարդու մոտ չէր ձևավորվի իշխանության ցանկություն, քաղաքական իշխանության մոտիվացիա: Ընտանեկան, դպրոցական, համալսարանական սոցիալականացումը, ինչպես նաև զինվորական ծառայության ժամանակ իրականացվող սոցիալականացումը, - այս բոլոր ինստիտուտները իրենց մեջ ներառում են իշխելու-ենթարկվելու հարաբերություններ: Նույնիսկ դասարանում աշակերտների փոխհարաբերությունների մակարդակով գոյություն ունի հորիզոնական իշխանության երևույթը և ուղղահայաց իշխանություն աշակերտների և ուսուցիչների միջև: «Այսպիսով, ճիշտ չէր լինի կարծել, որ իշխանությունը կենտրոնացած է հասարակության և պետության բարձր շերտերի վրա: Այն տարածված է սոցիալական հիերարխիայի բոլոր մակարդակներով: Միննույն հոգեբանական օրինաչափությունները կարող են հայտնվել նաև քաղաքականության մեջ և շարքային քաղաքացիների հարաբերությունների մեջ»⁵¹⁴ Այդպիսով իշխանության մոտիվացիան ձևավորվում է արդեն ոչ հորիզոնական մակարդակով: Ինչպես հայտնի է, ըստ Ա. Ադլերի և Գ. Լասսուելլի, իշխանության ձգտման մոտիվներից մեկը համարվում է տրավմայի ենթարկված ինքնագնահատականի փոխհատուցման փորձ: Իհարկե դա համընդհանուր եզրույթ չէ, քանի որ գոյություն ունեին և ունեն քաղաքական լիդերներ, որոնք չեն տառապում դրական ինքնագնահատականի պակասով: Ոչ միշտ է ինքնահաստատման մոտիվը համարվում իշխանության մոտիվացիայի կենտրոնական գործոնը: Չնայած ինքն իրենով

⁵¹⁴ Гозман Л.Я., Шестопал Е.Б. Психология власти, Хрестоматия, Мн: Харвест, 1998, с.12

Психология господства и подчинения,

ինքնահաստատման պահանջումները չի բնութագրվում բացառապես բացասական գնահատականներով: Սակայն քաղաքական իշխանության արդյունավետության տեսանկյունից արժեքային է համարվում ոչ թե ինքնահաստատման մոտիվը, այլ ուրիշ այլ սոցիալական մոտիվները: «Աղեկվատ ինքնագնահատականով լիդերները քաղաքական դաշտում իրենցից ներկայացնում են գործընկերների լավագույն օրինակը: Նրանց ներքին և արտաքին քաղաքականությունը մոտիվացված չէ ինքնահաստատման ձգտմամբ: Որպես կանոն, ինքնագնահատականի հարցում ներդրողի բաղադրիչի բացակայությունը բերում է նաև դրա բացակայությանը քաղաքական վարքում:»⁵¹⁵ Ե. Շեստոպալի հետազոտությունների համաձայն՝ իշխանության ձգտումը կարող է ներկայացված լինել հետևյալ գործոններով՝ նվաճումների պահանջումներ, աֆֆիլյացիայի պահանջումներ, այսինքն՝ որոշակի խմբին պատկանելու պահանջումներ, իրավիճակների և մարդկանց վերահսկելու պահանջումներ և տրավմատիկ ինքնագնահատականով պայմանավորված ինքնահաստատման մոտիվ: «Այդ անձնային արժեքները կամ պահանջումները կարող են դիտարկվել որպես քաղաքական լիդերի մոտիվացիոն կառուցվածքի կարևորագույն մաս:»⁵¹⁶ Իշխանության պահանջումները որպես անձի անձնային և ներդրողի կողմերի փոխհատուցում իրենից ներկայացնում է բացառապես բացասական սոցիալ-հոգեբանական երևույթ: Այդ դեպքում կարևոր է հասկանալ թե անձի ինչպիսի վնասված և տրավմատիկ կողմերը կարող են արտահայտվել կամ փոխհատուցվել նրա քաղաքական գործունեության մեջ: Իշխանությունը ինքը որպես սոցիալական ինստիտուտ իրենից ներկայացնում է նմանատիպ փոխհատուցումների համար անփոխարինելի դաշտ: «Տվյալ գործունեության ոլորտում փոխհատուցման ձեռքբերումը անձի համար ստեղծում է մի դաշտ, որտեղ քաղաքական լիդերը գործում է բավական արդյունավետ և ինքնավար, հնարավոր է նաև ագրեսիվ անձնային հավասարակշռության հասնելու համար:»⁵¹⁷ Իշխանության ձգտման սոցիալ-հոգեբանական գործոնները չեն կարող արհեստականորեն կտրված լինեն անձնային գործոններից: Այդ պատճառով էլ մենք կարծում ենք, որ իշխանության մոտիվացիայի համար կարևոր և ճիշտ է հաշվի առնել վերլուծվող երևույթի ամբողջական պատկերը: Եթե մենք վերցնենք այնպիսի գործոններ ինչպիսիք են միջանձնային հարաբերություններում գերիշխելը կամ մարդկանց մանիպուլյացիայի ենթարկելու պահանջումները կամ նվաճման պահանջումները, ապա դրանք հանդիսանում են սոցիալ-հոգեբանական երևույթներ: Սակայն այդ գործոնները ինքնավար չեն, դրանք բնածին չեն և համարվում են անձնային կյան-

⁵¹⁵ Гозман Л.Я., Шестопап Е.Б. Психология власти, Психология господства и подчинения, Хрестоматия, Мн: Харвест, 1998, с.18

⁵¹⁶ Гозман Л.Я., Шестопап Е.Б. Психология власти, Психология господства и подчинения, Хрестоматия, Мн: Харвест, 1998, с.20

⁵¹⁷ Гозман Л.Я., Шестопап Е.Б. Психология власти, Психология господства и подчинения, Хрестоматия, Мн: Харвест, 1998, с.21

քի պատմության հետևանք, անձի սոցիալականացման հետևանք: Այնպիսի սոցիալ-հոգեբանական գործոն ինչպիսին է քաղաքական գործչի պահանջմունքը ուրիշներին և իրավիճակին վերահսկելու պահանջմունքը, լիովին կարող է պայմանավորված լինել քաղաքական գործունեության յուրատիպությամբ: Այնուամենայնիվ, այդ պահանջմունքը ձևավորվում է որպես կանոն դեռևս ընտանեկան ինստիտուտում սոցիալականացման ժամանակ: «Այդ պահանջմունքը համարվում է քաղաքական գործունեության մեջ մարդկային բազային պահանջմունքի արտահայտում»⁵¹⁸ **Մեկ այլ սոցիալ-հոգեբանական գործոն՝ նվաճման պահանջմունքը, շատ հետազոտողների մոտ ընդունվում է որպես մոտիվացիոն էներգիա:** Ե. Շեստոպալը ընդգծում է, որ «նվաճում» հասկացությունը հաճախ ներկայացվում է ոչ ճիշտ՝ դրա տակ հասկանալով կոնկրետ նպատակների նվաճում: Այնուամենայնիվ, քաղաքական մոտիվացիայում այդ հասկացությունը ավելի լայն է: «Մեզ համար հատուկ հետաքրքրություն է ներկայացնում հետազոտողների կողմից ներկայացվող նվաճման հասկացությունը, քանի որ ոչ հաճախ գրականության մեջ կարելի է տեսնել այդ հասկացության սահմանափակումը մինչև սեփական նպատակների նվաճումը: Հեղինակների կարծիքով նվաճման պահանջմունքը կապ ունի վարպետության, մանիպուլյացիայի, ֆիզիկական և սոցիալական շրջապատի կազմակերպության, խոչընդոտների հաղթահարման, աշխատանքների բարձր ստանդարտների ձևակերպման, մրցակցության, հաղթանակի հետ: Ինչպես տեսնում ենք սա «նվաճում» հասկացության բավականին լայն ձևակերպում է և այս կերպ այն կարող է ավելի շատ համապատասխանել քաղաքական լիդերի մոտիվացիային:»⁵¹⁹ Քաղաքական ոլորտում նվաճման մոտիվացիան պայմանավորված է ոչ այնքան դրված նպատակներով, որքան անձի ինքնահաստատման պահանջմունքով: Այդ պատճառով էլ հաճախ անձի քաղաքական ակտիվության մեջ կարևոր է ոչ այնքան նպատակը, որքան ինքնահաստատումը նպատակների իրականացման օգնությամբ: Այդ փաստով կարելի է բացատրել ընդդիմության քաղաքական գործունեությունը՝ հաճախ ցուցադրելով, հայտարարելով օբյեկտիվորեն անիրականացվող նպատակները: «Սեփական նպատակներին հասնելը շատերի համար համարվում է իրենց քաղաքական կարիերայի հիմքը: Երբ քաղաքական գործիչը դառնում է պետության զեկավարը, ապա թվում է, որ հիմնական նպատակին հասել է: Սակայն, արտաքին քաղաքական ոլորտը իրեն հնարավորություն է ընձեռնում իր առջև դնել բազմաթիվ դժվար հասանելի նպատակներ, որոնց հասնելը նրան տալիս են որոշակի հոգեբանական բավարարվածություն:»⁵²⁰

⁵¹⁸ Гозман Л.Я., Шестопап Е.Б. Психология власти, Психология господства и подчинения, Хрестоматия, Мн: Харвест, 1998, с.22

⁵¹⁹ Гозман Л.Я., Шестопап Е.Б. Психология власти, Психология господства и подчинения, Хрестоматия, Мн: Харвест, 1998, с.24

⁵²⁰ Гозман Л.Я., Шестопап Е.Б. Психология власти, Психология господства и подчинения, Хрестоматия, Мн: Харвест, 1998, с.25

Հաջորդ սոցիալ-հոգեբանական գործոնը քաղաքական գործչի աֆֆիլյացիայի պահանջմունքն է: Ավելի հստակ ասելով, աֆֆիլյացիան կարող է վերափոխվել որպես կարևոր սոցիալական խմբերի կողմից ընդունված լինելու պահանջմունք: Մյուս կողմից դա նաև անվտանգության ապահովում է, քանի որ հավանությունը ենթադրում է հոգեբանական պաշտպանվածություն: Իշխանությանը հասած քաղաքական գործիչը իր շուրջն է համախմբում այն մարդկանց, որոնք կարող են բավարարել նրա աֆֆիլյացիայի պահանջմունքը: Այդ պատճառով էլ զարմանալի չէ, որ հաճախ քաղաքական կարևոր պաշտոնների են նշանակվում անձիք, որոնց իրազեկության մակարդակը չի համապատասխանում հավակնությունների մակարդակին: Այդ դեպքում ընտրությունը թելադրված է ոչ թե քաղաքական կամ մասնագիտական անհրաժեշտությամբ, այլ սոցիալ-հոգեբանական գործոններով:

Այդ փաստը մեզ հիմք է տալիս կարծել, որ իշխանության ինստիտուտի սոցիալ-հոգեբանական վերլուծությունը հաճախ գործ ունի սուբյեկտիվ կողմերի, քան երևույթի օբյեկտիվ պատկերի հետ: «Հոգեբանական վերլուծության առարկա են հանդիսանում ոչ թե իշխանավոր հարաբերությունները որպես այդպիսին, այլ դրանց սուբյեկտիվ կողմերը՝ իշխանության ինստիտուտի ընկալումը, իշխանավոր անձանց հանդեպ դիրքորոշումները, իշխանության կրողների հանդեպ կախվածության մակարդակի գիտակցման մակարդակը և այլն»:⁵²¹ Ընդհանուր առմամբ իշխանության՝ որպես մարդու բնածին ձգտման տեսակետին էին հարում Ս. Հոբբսը և այլ հետազոտողներ: Ս. Հոբբսը կարծում էր, որ մարդուն միշտ բնորոշ է «անընդհատ և հավերժական ցանկությունը ավելի ու ավելի շատ իշխանության և այդ ցանկությունը դադարում է միայն մահից հետո»:⁵²² Ս. Հոբբսը միակ գիտնականը չէ, ով դիտարկում է իշխանության ձգտումը որպես մարդկային հոգեկանի բնածին մեխանիզմ: Ժամանակակից հետազոտող Ն. Մոնախովը կարծում է, որ իշխանության մոտիվը մարդու բնագոյային հիմքի վրա է կառուցված: Այն իր տեսակով վարքի բնածին կարգավորիչ է: Ինչպես մենք գիտենք այդ հասկացությունը բնորոշում է կենդանիների վարքը: «Իհարկե կենդանիները ևս ունեն վարքի բնածին կարգավորիչներ, այդ թվում նաև բնագոյներ: Սակայն դրանց դերը լիովին տարբեր է, կենսաբանական բնույթով պայամանավորված մոլումները չնայած որ մարդկանց մոտ «ենթարկվողական դիրք են գրավում», մնում են կենսագործունեության հիմքը, բայց չեն կազմում մարդկային մոտիվացիայի կառուցվածքի հիմքը»:⁵²³ Իհարկե այդ մտքի մեջ ամեն բան տրամաբանական չէ: Եթե վարքի բնածին կարգավորիչները, տվյալ դեպքում իշխանության ձգտումը, համարվում են մարդկային կենսագործունեության հիմքը, ապա ինչպե՞ս նրանք չեն մտնում մոտիվացիայի կառույցի մեջ: Ն. Մոնախովը կարծում էր, որ մարդը ունի գերիշխելու

⁵²¹ Политическая психология. Академический проект, 2001, с.406.

⁵²² Политическая психология. Академический проект, 2001, с.407.

⁵²³ Политическая психология. Академический проект, 2001, с.408.

ձգտումը, քանի որ այդ ձգտումն ունի բնագոյային կարգավիճակ: «Մարդկային հասարակությունում տվյալ բնագործ կորցրել է իր առաջնային գործառնությունը, սակայն պահպանել է իր էներգետիկ նշանակությունը և կարող է գործի դրվել տարբեր սոցիալական պայմանավորվածություն ունեցող մեխանիզմների ազդեցության տակ»:⁵²⁴ Այս տեսակետը բավական հին է և բացի այդ այդպիսի բնագործ գոյության ապացուցման համար չկան իրական գիտական հիմքեր: Մենք գործ ունենք մարդկային կենսագործունեության վրա ազդող վերափոխված կենդանական վարքի օրինաչափությունների հետ, որոնք իսկապես ունեն գերիշխելու բնագործ: Իշխանության ձգտումը, ինչպես մենք արդեն նշել էինք մեր հետազոտության սկզբում, կարող է պայմանավորված լինել անձի փոխհատուցման ակտիվությամբ, տրամալի ենթարկված ինքնագնահատականի փոխհատուցման պահանջմունքով: Փոխհատուցման այդ տեսությունը, սկսած Ա.Ադլերի ժամանակներից մինչ օրս չի կորցրել իր արդիականությունը: Գերիշխանության ձգտումը, որպես անպատասխան ինքնագնահատականի փոխհատուցման արդյունք իսկապես իր նշանակությունը ունի: Սակայն, սա իշխանության մոտիվացիայի բացատրման միակ տեսությունը չէ: Ավելին, որոշ ժամանակակից տեսություններ ոչ միայն չեն աջակցում, այլև հաճախ հերքում են մոտիվացիայի փոխհատուցման տեսությունը: Դ. Բարբերի, Վ. Ստոունի և Գ. Բերելի հետազոտությունները բերում են մեզ լրիվ այլ պատկերացումների և հայացքների: Այդ հեղինակների հետազոտություններում ակնառու չէ ցածր ինքնագնահատականի և իշխանության ձգտման միջև կապը: Համաձայն Վ. Ստոունի՝ ցածր ինքնագնահատականի փոխհատուցումը կարող է իր տեղը ունենալ անձի այլ կենսագործունեության ոլորտներում, այլ ոչ թե միայն քաղաքականության մեջ: Բացի դա, իշխանավոր քաղաքական գործիչների ինքնագնահատականի մակարդակը, համաձայն իրականացված փորձարարական հետազոտությունների, ոչ մի կերպ չի տարբերվում ստուգիչ խմբերի ինքնագնահատականի մակարդակից: Ստոունի փորձարկման մեջ այդպիսի խումբ եղել է համալսարանի ուսանողները: ⁵²⁵

«Ընդ որում հայտնաբերվում է այնպիսի մի փաստ, ըստ որի քաղաքական գործունեության հաջողությունը սահմանվում է ոչ միայն ինքնագնահատականի տեսակով, այլև անձնային այլ հատկանիշների հետ նրա համադրությամբ»:⁵²⁶ Իշխանության ձգտումը պարտադիր չէ, որ բավարարվի քաղաքական գործունեության մեջ: Իշխանությունը, որպես գերիշխելու պահանջմունք հեշտությամբ բավարարվում է ցանկացած այլ գործունեության մեջ, օրինակ՝ բանակում, սպորտում: Գերիշխելու պահանջմունքը բորոշ է նաև բազմաթիվ բռնակալ ծնողների: Ինչ վերա-

⁵²⁴ Политическая психология. Академический проект, 2001, с.408.

⁵²⁵ Stone W. The psychology of politik.-N.Y.: The Free Press, 1974., Watts D. Political Communication Today.- Manchester, 1997, McAdams D.P. Power, Intivacy and the Life Story.-N.Y. L., 1998

⁵²⁶ Политическая психология. Академический проект, 2001, с.409.

բերվում է հենց քաղաքական իշխանությանը, ապա այս հարցում անհրաժեշտ են որոշ հստակեցումներ: Գ. Լասսուելլը ընդգծում է, որ գերիշխելու պահանջումները քաղաքական գործունեության մեջ ավելի հստակորեն է արտահայտվում այնպիսի անձանց մոտ, ովքեր քաղաքական իշխանության դրական փորձ ունեն: Մենք կավելացնենք նաև այն, որ քաղաքական իշխանության ձգտումը ավելի հաճախ արտահայտվում է այն երեխաների մոտ, ում ծնողները աշխատում են իշխանական կառույցներում: Դրան նպաստում է ծնողների կերպարի հետ նույնականացումը: Բացի դա, իշխանության պահանջումները կարող է նաև բացատրվել ուղղակի հարստություն ունենալու ցանկությամբ: Մակայն քաղաքական իշխանությունը բացի հարստության ունենալը ապահովում է նաև այդ հարստության անվտանգությունը: Դրանից բացի, «իշխանություն» և «քաղաքականություն» հասկացությունները սոցիալական աշխարհում դիտարկվում և ընկալվում են միասնական իմաստային դաշտում: Կենցաղային գիտակցության մակարդակում իշխանության հասկացությունը միշտ զուգորդվում է քաղաքականության հետ: Գերմանացի հոգեբան Է. Շպրանգերը առաջարկում է «անձի քաղաքական տեսակ» հասկացությունը: Է. Շպրանգերի համար այդ նոր հասկացության էությունը նրանումն է, որ իշխանություն և քաղաքականություն հասկացությունները դիտարկվում են որպես նույնական: «Մարդիկ, որոնց գլխավոր արժեքը իշխանությունն է, մենք կկոչենք քաղաքական, նույնիսկ եթե հարաբերությունները, որում նրանք ընդգրկված են, չեն հանդիսանում քաղաքական ուղիղ իմաստով»:⁵²⁷ Ըստ էության նույն տեսակետն ունի նաև Գ. Լասսուելլը, ով կարծում էր, որ քաղաքական մարդու հիմնական տարբերությունը համարվում է «իշխանության վրա կենտրոնացվածությունը, այլ արժեքների համեմատությամբ իշխանության նախընտրությունը»:⁵²⁸ Գ. Լասսուելլի կողմից այսպես կոչված Homo politicus (քաղաքական մարդուն) վերագրած որակները ունեն հետևյալ տեսքը՝ 1) իշխանության հանդեպ անհագ ծարավը, 2) այլ մարդկանց և արժեքների օգտագործումը որպես իշխանության նվաճման միջոց, 3) ցանկությունը ինչ-որ բան անել միայն սեփական անձի համար, իշխանության տեխնոլոգիային տիրապետելը:⁵²⁹ «Կենտրոնանալով իշխանության վերլուծության վերաբերյալ նշված և այլ մոտեցումների վրա, հնարավորություն է ընձեռնվում հետևել դրա հոգեբանական առանձնահատկություններին, հատկապես դիտարկել իշխանությունը և որպես ինքնարժեք, որտեղ որպես հիմնական մեխանիզմ հանդես է գալիս մոտիվացիան, և որպես անձի դեֆորմացիայի վրա ազդող իշխանություն, և որպես նպատակի հասնելու միջոց, և որպես իշխանավոր հարաբերությունների համակարգ, և ընդհանուր առմամբ որպես inqnatip երևույթ»:⁵³⁰ Իշխա-

⁵²⁷ Шпрангер Э. Основные идеальные типы индивидуальности, Психология личности.- М. ,1982 г, с. 59.

⁵²⁸ Laswell H. The theory of Political Propaganda, Public Opinion, 1996, p.22.

⁵²⁹ Laswell H. The theory of Political Propaganda, Public Opinion, 1996, p.54-56.

⁵³⁰ Политическая психология. Академический проект, 2001, с.412.

նության մոտիվացիայի խնդիրը հարյուրամյակներ շարունակ մնում է սոցիալական գիտությունների ուշադրության կենտրոնում: Իշխանության մոտիվացիայի խնդրի ուսումնասիրման մեջ անհրաժեշտ է ընդունել յուրաքանչյուր մոտեցում, բայց ընդունել վերլուծության կոնկրետ դաշտում և ոչ թե դիտարկել մեկ ընդհանուր մոտեցումը որպես համընդհանուր: Իշխանության մոտիվացիայի խնդրի և ոչ մի մոտեցում չի բացառում մեկ այլ մոտեցում, իսկ դա նշանակում է, որ այդ խնդրի հասկացման համար պետք է օգտագործել հնարավորինս ամբողջական մոտեցում: Սոցիալ-հոգեբանական վերլուծությունը թույլ է տալիս պահպանել այդ ամբողջականությունը:

Բանալի բառեր - իշխանության ինստիտուտը, իշխանության մոտիվացիա, արժեքային բնութագրիչ, սոցիալ-հոգեբանական վերլուծությունը:

Վլադիմիր Միքայելյան, Լուսինե Կտիկյան, Իշխանության մոտիվացիայի սոցիալ-հոգեբանական գործոնները - Քաղաքական և սոցիալական հոգեբանության բնագավառում, իշխանության ձգտման մեխանիզմների ուսումնասիրությունը միշտ եղել է արդիական գիտության և հասարակության համար: Իշխանությանը ձգտման սոցիալական բնույթը ակնհայտ է, քանի որ իշխանությունը համարվում է սոցիալական երևույթ: Իշխանության ձգտման երևույթը հասկանալի է ամեն մարդու համար և նման դիրքորոշումները միշտ նորմալ են ընկալվել հասարակության կողմից: Նման մոտեցումը բնորոշ է նաև գիտնականների մեծամասնությանը: Իշխանության ինստիտուտը ի սկզբանե օժտված է դրական արժեքային բնութագրիչներով: Եվ իշխանության, սոցիալական կարգավիճակի հետ նույնականացումը իր մեջ պարունակում է վտանգ ինքնության զարգացման համար:

Владимир Микаелян, Лусине Ктикян, Социально-психологические факторы мотивации власти - Власть представляется во многом как потребность, которая практически не может быть до конца удовлетворена. Именно поэтому отказ от власти сопровождается тяжелым психологическим состоянием. Стремление к власти, согласно социальным представлениям, с одной стороны вызывает позитивное отношение, с другой стороны, слишком сильное акцентирование этого стремления вызывает противоположное отношение. Поэтому очень часто, сильное стремление к власти рационализируется, преподносится в качестве альтруистической позиции в жизни. Негативное отношение к лицам, демонстрирующим подчеркнутое стремление к власти, объясняется известным механизмом проекции.

Vladimir Mikaelyan, Lusine Ktikyan, Socio-psychological factors of power motivation - Power is in many ways a need that can not be fully satisfied. That is why the rejection of power is accompanied by a severe psychological state. The desire for power, according to social ideas, on the one hand causes a positive attitude, on the other hand, too strong accentuation of this desire causes the opposite attitude. Therefore, very often, a strong desire for power is rationalized, presented as an altruistic position in life.

Negative attitude towards persons demonstrating the stressed desire for power is explained by the known mechanism of projection.

**ՕԺՏՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻՆ ԲՆՈՐՈՇ ԱՆՁՆԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐՄԵՎՈՐՈՒՄԸ ՀՈՒՋԱԿԱՆ
ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԲԵՎԵՈՒԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

ՄԱՂԵՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Օժտված պատանիների (սույն հետազոտության մեջ՝ 16-18 տարեկան աղ-
ջիկներ և տղաներ) անձնային որակների ուսումնասիրությունը մշտապես եղել է
այս ուղղությամբ հետազոտողների հետաքրքրության առարկա՝ որպես հոգեբա-
նական դիագնոստիկ և կանխարգելիչ աշխատանքների, ուսուցման և կոմունիկա-
ցիայի համար կարևոր գործոններ:

Համաձայն տարածված սահմանումներից մեկի, օժտվածությունը՝ «Անհամա-
չափ զարգացում է, որում զարգացած ճանաչողական ընդունակությունները և
բարձր ինտենսիվությունը միավորվում են, որպեսզի ստեղծեն ներքին փորձ և գի-
տակցում, ինչը որակապես տարբերվում է նորմայից: Այս անհամաչափությունը
մեծանում է բարձ ինտելեկտուալ ընդունակություններով պայմանավորված: Օժտ-
վածների յուրօրինակությունը նրանց խոցելի է դարձնում և պահանջում է դաս-
տիարակության ոճի փոփոխություն, ուսուցում և խորհրդատվություն նրանց բա-
րենպաստ (օպտիմալ) զարգացման համար⁵³¹»:

Ըստ մի շարք հետազոտողների⁵³²՝ օժտված անհատները դժվարություններ
ունեն իրենց հուզականության կարգավորման հարցում: Լովեցկին⁵³³ (1992) նշում
է, որ կոգնիտիվ կարողությունները, որոնք ունեն օժտված անձինք, կարող են
հանդես գալ որպես ռիսկի գործոն: Արագ, ինտենսիվ և տարբերվող մտածողու-
թյունը՝ համադրվելով ներքին մղման հետ, կարող է խոչընդոտել կենտրոնացմանը,
նույնիսկ առաջացնել կաշուկություն, ռեֆլեքսիայի և լիցքաթափման դժվարու-
թյուններ, անքնություն: Հուզական զգայունակությունը, համադրվելով ընկալունա-
կության հետ, կարող է հանգեցնել վշտի, վախերի, պերֆեկցիոնիզմի, անարդա-
րության զգացման, էքզիստենցիալ ճգնաժամի և անինքնավստահության ու կաս-
կաժների: Մասնավորապես, դեպրեսիան, տագնապայնությունը, օբսեսիվ-կոմ-
պուլսիվ, սնման խանգարումները բնորոշ են օժտված անհատներին: ԱՄՆ 112 մի-
ջին դպրոցականների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ 87.5% ունեն պերֆեկ-

⁵³¹ Առաքելյան Մ., Օժտված երեխաների հոգեբանական դիագնոստիկա, Երևան, Հեղ. հրատ.-
Printinfo, 2017.-160 էջ

⁵³² Aimee Yermish, Cheetahs on the couch: Issues affecting the therapeutic working alliance with clients
who are cognitively gifted, Massachusetts school of professional psychology, 2010, p. 74-75, p. 275

⁵³³ Տե՛ս նույն տեղում, Aimee Yermish, Cheetahs on the couch: Issues affecting the therapeutic working
alliance with clients who are cognitively gifted, Massachusetts school of professional psychology, 2010, p.
74-75, p. 275

ցիոնիզմ, իսկ 29.5% ներքոտիկ մակարդակի (Schuler, 2000)⁵³⁴: Օժտված երիտասարդների մեկուսացման և ամոթի զգացումները հանգեցնում են դեպրեսիվ վիճակների, ինչը նրանք թաքցնում են նույնիսկ մոտ հարազատներից⁵³⁵:

Հիմք ընդունելով հետազոտողների բազմաթիվ տվյալները՝ անհրաժեշտ համարեցինք ուսումնասիրել մեր երկրում օժտված պատանիների անձնային առանձնահատկությունները, անձնային կայուն գծերը, որոնք կարող են խոչընդոտել այս անհատականությունների հոգեբանական համաչափ զարգացմանը:

Տվյալ հետազոտությունը ուղղված է ինտելեկտուալ ընդունակությունների ոլորտի՝ ինտելեկտուալ օժտված պատանիների ուսումնասիրությանը: Հետազոտությունը անց է կացվել Երևանի մի շարք դպրոցներում, որոնցից են՝ «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթահամալիր, «Քվանտ» վարժարան, Կարեն Դեմիրճյանի անվան Վ139 ավագ դպրոց, Բենիամին Ժամկոչյանի անվան Վ119 ավագ դպրոց: Դպրոցներից երկուսը՝ «Շիրակացու ճեմարան» գիտակրթահամալիրը և «Քվանտ» վարժարանը ընտրվել են որպես թիրախային դպրոցներ՝ բարձր ինտելեկտուալ ընդունակություններ ունեցող երեխաների կրթօջախներ: Հետազոտվել են ավագ դպրոցի ավելի քան 500 դպրոցականներ, տարիքային խումբը՝ 16-18: Տարիքային դասակարգումը ներկայացված է Գ. Կրայգի⁵³⁶ «Զարգացման հոգեբանություն» ֆունդամենտալ աշխատության մեջ բերված սխեմայի համաձայն՝ ըստ որի 12-19 տարեկանը համարվում է դեռահասության և վերին շերտ՝ պատանեկության տարիք: Ենթադրվում է, որ այս տարիքում արդեն կայուն կերպով դրսևորվում են անձի հոգեբանական այն հիմնական գծերը, որոնք կազմելու են անձի դիմագիծը:

Հետազոտությունը սկսվել է ավագ դպրոցականների հետ հոգեբանական դիագնոստիկ աշխատանքներից՝ դուրս բերելու ինտելեկտուալ բարձր ընդունակություններով՝ օժտված պատանիներին: Կիրառել ենք Ջ. Ռենգուլիի մոդելը, ըստ որի գնահատվել են պատանիների ինտելեկտուալ ընդունակությունները, կրեատիվությունը (ստեղծարարություն) և ուսումնական մոտիվացիան: Ջ. Ռենգուլիի մոդելը օժտված երեխաների հոգեբանական դիագնոստիկայի ընդունված և մեծ տարածում գտած հայեցակարգերից է⁵³⁷: Ինտելեկտուալ ընդունակությունները գնահատելու համար կիրառել ենք Կետտելի «Մշակույթից անկախ» ինտելեկտի

⁵³⁴ Տ'ես նաև նույն տեղում, Aimee Yermish, Cheatahs on the couch: Issues affecting the therapeutic working alliance with clients who are cognitively gifted, Massachusetts school of professional psychology, 2010, p. 74-75, p. 275

⁵³⁵ Տես նույն տեղում

⁵³⁶ Крайг Г., Бокум Д., Психология развития. — 9-е изд. — СПб.: Питер, 2005. — 940 с: ил. — Серия «Мастера психологии»

⁵³⁷ Robert J. Sternberg, Linda Jarvin, Elena L. Grigorenko, Explorations in Giftedness, Cambridge University press, 301p., 2011.

թեստը⁵³⁸⁵³⁹, կրեատիվությունը որոշելու համար կիրառվել է Պոլ Թորենսի Ստեղծագործական մտածողության գնահատման մեթոդիկան՝ «Ավարտիր նկարը» ենթաթեստը⁵⁴⁰ և ուսումնական մոտիվացիայի ուսումնասիրման համար՝ Մ.Ի. Լուկյանովայի, Ն.Վ. Կալինինայի⁵⁴¹ մեթոդիկան։ Թեստային բարձր արդյունքներ ունեցող պատանիները դուրս են բերվել որպես օժտվածներ, որոնք թվով 35 են, IQ կտրվածքը եղել է 130-144⁵⁴²։

Այսպիսով, հետազոտությանը մասնակցել են ընտրված 35 օժտված և ստուգիչ խմբի 35 միջին ընդունակություններով պատանիներ, ընդհանուր՝ 70 հոգի։ 35 օժտված պատանիներից 14 եղել են իգական, 21 արական սեռի ներկայացուցիչներ։ Ստուգիչ խմբի միջին ընդունակություններով պատանիներից 24 իգական, 11 արական սեռի ներկայացուցիչներ։ Օժտվածության վերաբերյալ հետազոտություններում հատուկ ուշադրություն է հատկացվում տղաների և աղջիկների քանակական հարաբերակցությանը։ Նշվում են ինչպես արտաքին՝ ծնողների, դպրոցի, հասարակության կողմից ձեռքբերումները սահմանափակող կարծրատիպերը, այնպես էլ ներքին խոչընդոտները՝ տարիքին զուգընթաց ցածրացող ինքնագնահատականը, պերֆեկցիոնիզմը, խմբում հարմարված լինելու նախընտրությունը՝ ի վնաս սեփական ընդունակությունների արտահայտման և մրցակցության, ներքին կոնֆլիկտը՝ կանացիության դրսևորման սեփական պատկերացումների, արժեքների և հասարակության մեջ ընդունված կարծրատիպերի, նորմերի միջև և այլն։⁵⁴³

Անձի հոգեբանական կերպարի դուրսբերման համար կիրառվել է «Մեծ հինգյակ» հարցարանը (Big Five)։ Սա Կետտելի 16 գործոնային հարցարանի ձևափոխված տարբերակն է, ստեղծվել է Ռ. Մակկրաեի և Պ. Կոստայի կողմից։ Այն ավելի կարճ է, անձնային կերպարը դուրս է բերվում առավել ընդհանրացված, ինչպես նաև մշակույթից կախվածությունը համեմատաբար փոքր է՝ ի տարբերություն մյուս թեստերի, քանի որ ընդգրկված են առավելապես կայուն անձնային գործոններ։ Հարցարանը կազմված է 75 ծայրահեղ երկբևեռներով ներկայացված դատողություններից, դուրս է բերում հետևյալ հինգ գործոնները, որոնք իրենց հերթին կազմված են հինգ անձնային գծերից.

- էքստրավերսիա, ինտրովերսիա,
- կապվածություն-օտարվածություն/անկախություն,
- ինքնակառավարում- խմբակախություն,

⁵³⁸ Денисов А. Ф., Дорофеев Е. Д. Культурно свободный тест интеллекта Р. Кеттелла (Руководство по использованию). – СПб.: Иматон, 1996. [http:// psyberia.ru/work/diagnost](http://psyberia.ru/work/diagnost)

⁵³⁹ Новые тесты IQ: Сост. Кошелева М.А., Ростов н/Д: «Феникс», 2003. – 352с.

⁵⁴⁰ Туник Е.Е. Лучшие тесты на креативность. Диагностика творческого мышления, СПб.: Питер, 2013, 320

⁵⁴¹ Лукьянова М.И., Н.В. Калинина; Психолого-педагогические показатели деятельности школы: Критерии и диагностика. М., ТЦ Сфера, 2004.-208с.

⁵⁴² Miraca U.M. Gross, Exceptionally gifted children, London, 310p. 2004

⁵⁴³ Щебланова Е.И., Неуспешные одаренные школьники, Москва, Обнинск: ИГ-СОЦИН 2008, 212с.

- հուզական անկայունություն-հուզական կայունություն,
- էքսպրեսիվություն-գործնականություն:

Սույն հոդվածում ներկայացված է օժտված պատանիների մոտ հուզական անկայունություն - հուզական կայունություն բևեռայնությամբ դրսևորվող ֆակտորի հինգ անձնային գծերի դրսևորումը:

Աղյուսակ 1-ում ներկայացված են՝ տազնապայնություն-անհոգություն, լարվածություն-թուլացում, դեպրեսիվություն- հուզական հարմարավետություն, ինքնաքննադատություն-ինքնաբավություն, հուզական լաբիլություն-հուզական կայունություն անձային գծերի նշանակալի (>0.05) տարբերությունները օժտված և ստուգիչ խմբի պատանիների միջև՝ SPSS վիճակագրական փաթեթի T-test վերլուծության միջոցով:

Օժտված պատանիների մոտ՝ ի տարբերություն ստուգիչ խմբի պատանիների, նշանակալի տարբերություններ կան հետևյալ սանդղակներում՝ *հուզական անկայունություն (.001)*, *տազնապայնություն (.001)*, *ինքնաքննադատություն (.003)*, *հուզական լաբիլություն (.002)*: Այս խմբերը էական տարբերություններ չունեն *լարվածություն (.480)* և *դեպրեսիվություն (.051)* սանդղակների ցուցանիշներում, չնայած, որ վերջին սանդղակում տարբերությունը շատ փոքր է:

Աղյուսակ 1

Independent Samples Test										
		Levene's Test for Equality of Variances		t-test for Equality of Means						
		F	Sig.	T	df	Sig. (2-tailed)	Mean Difference	Std. Error Difference	95% Confidence Interval of the Difference	
									Lower	Upper
NEUROTICISM	Equal variances assumed	9.175	.003	3.502	68	.001	7.686	2.195	3.306	12.065
	Equal variances not assumed			3.502	60.426	.001	7.686	2.195	3.296	12.075
Anxiety	Equal variances assumed	6.327	.014	3.385	68	.001	2.314	.684	.950	3.678
	Equal variances not assumed			3.385	63.398	.001	2.314	.684	.948	3.680
Tension	Equal variances assumed	.209	.649	-.710	68	.480	-.486	.684	-1.851	.879
	Equal variances not assumed			-.710	66.859	.480	-.486	.684	-1.851	.880
Depressiveness	Equal variances assumed	.004	.950	1.987	68	.051	1.286	.647	-.006	2.577
	Equal variances not assumed			1.987	68.000	.051	1.286	.647	-.006	2.577
SelfCriticism	Equal variances assumed	3.026	.086	3.030	68	.003	2.571	.849	.878	4.265
	Equal variances not assumed			3.030	66.782	.003	2.571	.849	.878	4.265
Lability	Equal variances assumed	.106	.746	3.287	68	.002	2.000	.608	.786	3.214
	Equal variances not assumed			3.287	67.910	.002	2.000	.608	.786	3.214

Ելնելով ներկայացված արդյունքներից՝ կարող ենք ասել, որ օժտված պատանիները տարբերվում են իրենց ինքնաքննադատության բարձր մակարդակով, ինչը կարող է կապված լինել բարձր մակարդակի, նաև ներքին պերֆեկցիոնիզմի հետ, որն էլ իր հերթին կարող է հանգեցնել տագնապային վարքի: Թվարկված անձնային գծերը հանգեցնում են հուզական անկայունության, ինչը կարող է պայմանավորել ցածր սթրեսակայունությունը, ցածր ինքնագնահատականը, հանգեցնել դեպրեսիաների:

Հուզական անկայունության բարձր արդյունքները բնութագրում են այն մարդկանց, որոնք դժվարանում են կառավարել սեփական հույզերը և իմպուլսիվ մղումները: Այսպիսի մարդիկ իրենց զգում են անօգնական, կյանքի խոչընդոտները դժվարությամբ են հաղթահարում: Տագնապով են արձագանքում տհաճություններին, անհաջողությունների դեպքում արագ են հուսահատվում: Այսպիսի մարդիկ դժվարությամբ են աշխատում սթրեսային իրավիճակներում, որում ունենում են հոգեբանական լարվածություն:

Ներկայացված անձնային գծերի նման բնեռականությունը կարող է պատճառ դառնալ շփման դժվարությունների, հոգեբանական հարմարման խնդիրներ առաջացնել: Ինչպես նաև, դեպրեսիվության բարձր մակարդակը կարող է հանգեցնել սոսիցիալ փորձերի և վարքի, ինչպես նշվում է մի շարք հետազոտություններում⁵⁴⁴:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ օժտվածությունը ինքնին ենթադրում է որոշակի հոգեբանական ռիսկ հուզական հավասարակշռության, հարմարավետության, կայունության տեսանկյունից: Միանգամայն անհրաժեշտություն է դպրոցներում նման աշակերտների հետ ինքնաճանաչման դասընթացների անցկացումը, դրական քոֆինգ ռազմավարությունների, հմտությունների ձևավորումը սթրեսային իրավիճակները հաղթահարելու համար, սովորեցնել տագնապը նվազեցնելու, հուզական կայունությունը պահպանելու հոգեբանական հմտություններ քննություններից առաջ, կոնֆլիկտային իրավիճակներում և այլն: Կարևոր է ծնողների, ուսուցիչների համար լուսավորչական աշխատանքների իրականացումը, հոգեբանների շարունակական աշխատանքները օժտվածության հիմնախնդրի շուրջ:

Բանալի բառեր - օժտված պատանիներ, անձնային գծեր, հուզական անկայունություն, հուզական լարվածություն, տագնապայնություն, ինքնաքննադատականություն, դեպրեսիվություն

Մաղենա Առաքելյան, Օժտված պատանիներին բնորոշ անձնային առանձնահատկությունների դրսևորումը հուզական կայունությունից անկայու-

⁵⁴⁴ Aimee Yermish, Cheetahs on the couch: Issues affecting the therapeutic working alliance with clients who are cognitively gifted, Massachusetts school of professional psychology, 2010, p. 74-75, p. 275

նություն բևեռականության մեջ - Սույն աշխատանքը վերաբերում է օժտված պատանիների անձնային առանձնահատկությունների ուսումնասիրությանը՝ մասնավորապես գործոնային տեսության ներքո հուզական կայունություն-անկայունություն բևեռականության մեջ անձնային գծերի դրսևորմանը: Հետազոտության արդյունքները փաստում են օժտված պատանիների մոտ հուզական անկայունությանը նպաստող անձնային գծերի առկայությունը՝ ի տարբերություն միջին ընդունակություններով երիտասարդների, ինչը կարող է հանգեցնել ցածր սթրեսակայունության, խոչընդոտել հոգեբանական հարմարմանը, շփմանը, պատճառ դառնալ հոգեւսմաստիկ խնդիրների և այլն:

Мадлена Аракелян, Проявление личностных характеристик присущих одаренной молодежи в полярности эмоциональной стабильности – нестабильности. В работе изучаются личностные характеристики одаренной молодежи в свете факторной теории и проявление личностных черт в полярности эмоциональной стабильности и нестабильности. Результаты исследования показывают наличие способствующих личностных черт эмоциональной нестабильности у одаренных по сравнению с контрольной группой, что может привести к снижению стрессаустойчивости, препятствовать психологической адаптации, общению, вызвать психосоматические проблемы и т. д.

Madlena Arakelyan, The manifestation of the personal characteristics of the gifted youngsters in the polarity of emotional stability – instability. This work studies personal characteristics of gifted youngsters in the light of factor theory and the manifestation of personal traits in the polarity of emotional stability and instability. The research results show the presence of personality traits which leads to emotional instability in youngsters in comparison with control group. It decreases stress resistance, impede psychological adaptation, communication and causes psychosomatic disorders, etc.

**ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ՓՈԽԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՆԱԻՐԱ ՍԱՐՀԱՏՅԱՆ

Ժամանակակից հայկական ընտանիքը հաճախ է հայտնվում ճգնաժամային զարգացման իրավիճակում: Երիտասարդ ընտանիքում ճգնաժամային իրավիճակը, մեծամասամբ, բացատրվում է սոցիալ-տնտեսական գործոններով: Որքան ցածր է հասարակության սոցիալական և նյութական բարեկեցությունը, այնքան երիտասարդ ընտանիքներն ավելի հակված են ճգնաժամերի և քայքայման: Երիտասարդ ընտանիքներում ամուսնական կոնֆլիկտների վերլուծությունը, մեծամասամբ, բացատրվում է այս գործոնով: Մենք չենք պատրաստվում բաց թողնել այս կարևորագույն բաղադրատարրը, սակայն, այնուամենայնիվ, կանգ առնենք ամուսնական կոնֆլիկտների սոցիալ-հոգեբանական գործոնների և ճգնաժամային իրավիճակների վրա: Ամուսնական կոնֆլիկտներն անխուսափելի են. այս ունիվերսալ դրույթը կասկածի տակ չեն դնում ընտանեկան հոգեբաններից շատերը: Այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ այդ անխուսափելիությունը պետք է անխուս ընդունելի լինի: Էությունը ամուսնական կոնֆլիկտների վտանգավոր լինելը ժխտելը չէ, այլ այդ կոնֆլիկտները նվազագույնի հասցնելն է: Երիտասարդ ընտանիքներում ճգնաժամային շրջանների գիտական իմաստավորումը թույլ կտա գործնական նշանակություն և արժեքներ ներմուծել երիտասարդ ընտանեկան ինստիտուտի կյանք: Ինչպես մենք արդեն նշեցինք, երիտասարդ ընտանիքներում ընտանեկան ճգնաժամերի և կոնֆլիկտների խնդիրներին նվիրված են բազմաթիվ հետազոտություններ, ինպես հայրենական, այնպես էլ ռուսական և արևմտյան ընտանեկան հոգեբանության մեջ: Ընտանիքը, որպես սոցիալական ինստիտուտ իր կայացման և զարգացման գործընթացում ապրում է օրինաչափ ճգնաժամեր: Գնաժամերի վտանգավորությունը կայանում է նրանում, որ նրանք ամուսինների մջն հրահրում են կոնֆլիկտներ, և հաճախ, հենց իրենք՝ ամուսիններն են փորձում օգտվել ճգնաժամերից՝ կոնֆլիկտների ստեղծման համար: Երիտասարդ ընտանիքների կայացման և զարգացման ընթացքում ճգնաժամային ժամանակահատվածների վերլուծությունը չի կարող հաշվի չառնել հասարակության զարգացման սոցիալական և տնտեսական բոլոր համակարգերի ճգնաժամային վիճակը, արժեքային կողմնորոշումների փոփոխությունները, նոր հասարակությունում էթնիկական և իրավական նորմերի փոխազդեցության որոշակի վերանայումները: Սոցիալական նոր աշխարհիկացքը չի կարող չազդել ընտանիքի, երիտասարդ զույգի փոխհարաբերությունների վրա: Անխուս, հսկայական կարևորություն են ձեռք բերում մինչամուսնական հարաբերություննորում առկա մշակութային և էթնիկա-

կան գործոնները և հաճախ այս գործոններն ունեն որոշակի նշանակություն: Ժամանակակից երիտասարդ ընտանիքը բախվում է նոր խնդիրների հետ, որոնք ձեռք են բերում ողբերգական բնույթ՝ ծնելիության անկումը, անպտղության խնդիրը, ամուսնալուծությունների աճը, արտամուսնական կապերի լայնամաստաբ փորձը և ամուսնական դավաճանությունները, երիտասարդ ընտանիքի սոցիալ-տնտեսական բարդ վիճակը: Բոլոր այս գործոնները միանշանակ կործանարար ազդեցություն են ունենում ժամանակակից երիտասարդ ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա՝ թուլացնելով ամուսնության կայունությունը: Հասարակության սոցիալ-հոգեբանական կայուն իրավիճակում ընտանիքի ստատուսը ձեռք է բերում որոշակի դրական և կանխատեսելի բնութագիր: Ընդհանուր առմամբ, կարելի է ենթադրել, որ մեր հասարակությունում սոցիալ-հոգեբանական կարգերի փոփոխումը, ընտանիքը բարեհաջող կերպով գործել է ավանդույթների սահմաններում: Անձնական հարաբերությունները, անխոս, իրենց տեղն ունեն, սակայն, ընտանիքի բարեկեցությունը հաճախ կառուցվել է հետևելով էթնիկական ավանդույթներին՝ ենթարկվելով հազարամյակներով ստեղծված ավանդական մոտեցումների և էթնիկական պատկերացումների փիլիսոփայությանը: Այսինքն, առաջ ընտանիքը գործում էր ֆորմալ գործոնների սահմաններում, որոնք էին՝ ավանդույթները, հասարակական կարծիքը, էթնիկական և մշակութային սովորույթները: Հին սոցիալական և արժեքային դիրքորոշումների կոտրումը օրինաչափորեն երիտասարդ ընտանեկան ինստիտուտին կանգնեցրել է նոր ճգնաժամային իրավիճակների շարքերի առջև: Ընտանիքում, ինչպես հայելու մեջ, արտացոլվում են հասարակության սոցիալական փոփոխությունները, ավելին, դատել հասարակության բարեկեցության մասին կարելի է հիմնվել ընտանիքի բարեկեցության կամ անբարեկեցության վերլուծության վրա: Հենց այս կարևոր դրույթը կարելի է հանդիպել այնպիսի հետազոտողների մոտ, ինչպիսիք են **Յու. Ե. Ալեշինսան, Վ. Ն. Դրուժինինը, Ս.Վ. Կովալյովը, Ա.Ս. Քոչարյանը, Գ. Ա. Քոչարյանը, Ա. Ս. Սպիվա-կովսկայան, Ն. Պեզեշկյանը, Է.Գ. Էյդեմիլլերը** և այլոք: Ընտանիքի սոցիալական ինստիտուտը սոցիալ հասարակության արտացոլումն է: Սոցիալ - հոգեբանական վերլուծության համատեքստում մեզ համար արդիական է դառնում երիտասարդ ընտանիքի վերլուծությունը կամ ընտանիքի նախնական զարգացման շրջանը: Այս խնդրի հատուկ կարևորությունն ընդգծում են **Ե. Վ. Անտոնյուկի, Ի. Ֆ. Գրեբենիկովայի, Ի. Ֆ. Դեմենտևայի, Ա.Կ. Դմիտրիենկոյի, Օ. Վ. Զուսկովայի, Ս. Կրասոխիլիի, Վ. Պ. Լևկովիչի, Ա. Գ. Լիդերեի, Մ. Ս. Մացկովսկիի, Վ. Պ. Մենշյուտի-նի, Գ. Նավայտիսի, Ռ. Ռիչարդսոնի, Վ. Ա. Սիսենկոյի, Տ. Մ. Տրապեզնիկովայի, Յու. Ն. Օլեյնիկի, Գ. Գ. Ֆիլիպովայի, Ա. Գ. Խարչևայի, Ե. Բուրգեսի** և այլոց կատա-րած հետազոտությունները:

Ընտանիքի զարգացման այդ նախնական շրջանի կարևորությունը պայմա-նավորված է այնպիսի գործոններով, ինչպիսիք են՝ ամուսնական ադապտացիան,

նոր սեռային և սոցիալական դերերին հարմարեցումը, ամուսինների միջև կոնֆլիկտները: Երկարատև ժամանակ կոնֆլիկտների և ճգնաժամային շրջանների խնդիրը, երիտասարդ ընտանիքի զարգացման գործընթացում, գործնականում չի մշակվել և անհրաժեշտ գիտական հոգեբանական վերլուծություն չի անցկացվել: Երիտասարդ ընտանիքի կայացման ճգնաժամային շրջանները ժամանակակից հայկական սոցիալական հոգեբանության մեջ հանդիսանում են հանապազօրյա սոցիալ-հոգեբանական խնդիր: Երիտասարդ ընտանիքներում ճգնաժամերի սոցիալ-հոգեբանական վերլուծության խնդիրը մեզ հանգեցնում է մի քանի եզրակյության. Առաջին հերթին՝ ճգնաժամը չի կարող դիատրկվել բացառապես նեգատիվ բնույթով, ինչպես և յուրաքանչյուր սոցիալ-հոգեբանական երևույթ, ճգնաժամը օժտված է թաքնված դրական պոտենցյալով: Ամուսնական կոնֆլիկտի դրական զարգացման դեպքում ձևավորվում է նոր, ամուսնական հարաբերությունների ավելի ադապտիվ տարբերակ: Հենց ինքը, ճգնաժամ հասկացությունը (հունարեն κρίσις – լուծում; շրջադարձային կետ) նշանակում է հեղաշրջում, անցումային վիճակի ժամանակահատված, կոտրում, վիճակ, որի դեպքում նպատակին հասնելու համար գոյություն ունեցող միջոցները դառնում են ոչ ադեկվատ: Ճգնաժամային իրավիճակի դրական զարգացման դեպքում գալիս է անկումը. Այսինքն, հարաբերությունների խնդրային հանգույցի լուծումը:

Երկրորդ դեպքում՝ ճգնաժամային իրավիճակից դուրս գալը նպաստում է անձի հարմարման հնարավորությունների հարստացմանը և այս դեպքում ակտիվացնում է անձի անհատական զարգացման գործընթացը: Մի շարք հետազոտություններ տարբերակում են ընտանեկան ճգնաժամի ժամանակ ամուսինների պաշտպանական մարտավարությունների երկու ձևեր. Հարմարվող և չհարմարվող վարքային մարտավարությունները: Անխոս, ընդհանուր ձևով այս տարբերակվածությունը իր տեղն ունի, սակայն, այն շատ բանալ և աբստրակտ է: Ամուսինների վարքային մարտավարությունները անմիջականորեն կարող են պայմանավորված լինել ամուսնությունից բավարարվածության մակարդակով: Այդ պատճառով, մեր հետազոտության մեջ այդ ցուցիչին փորձարարական տեղ ենք հատկացնում: Ճգնաժամային իրավիճակների լուծման մեջ հսկայական նշանակություն ունեն ամուսինների ծնողական ընտանիքների ազդեցությունը, նմանատիպ ճգնաժամային իրավիճակներում ծնողների վարքային մոդելները: Այդպիսով, մենք մոտենում ենք «ամուսնական ճգնաժամ» հասկացության սահմանման անհրաժեշտությանը: Ինքնին հասկացությունն, անխոս, բազմաշերտ է: Ընդհանուր առմամբ, «ամուսնական ճգնաժամը» կարելի է սահմանել, որպես հարաբերությունների զարգացման որոշակի հանգուցային կետ, որի դեպքում փոխադարձ ադապտացիայի նախկին մարտավարությունները կորցնում են իրենց արդյունավետությունները: Ամուսնական ճգնաժամը համառորեն պահանջում է հանգուցալուծում, ինչպես նաև ամուսնական փոխհարաբերությունների որոշակի վերանա-

յում և սեռադերային նոր արդյունավետ վարքային մարտավարությունների ձևավորում: Երիտասարդ ընտանիքներում ճգնաժամը առավել ցավալի կերպով է ընթանում, քանզի վերջիններս դեռ գտնվում են ընտանեկան կյանքի փորձի ձեռքբերման գործընթացում և չեն տիրապետում սեփական կոնստրուկտիվ մարտավարությունների: Ճգնաժամերին արձագանքման ձևերի ընտրությունը հաճախ պայմանավորված է լինում, նմանատիպ ճգնաժամային իրավիճակներում, իրենց ծնողների կողմից ցուցադրված վարքային մոդելներով: Այդուհանդերձ նշենք, որ ոչ բոլոր հետաքրքրությունների բախումները և ամուսինների ընդվզումները կարող են՝ որպես ամուսնական ճգնաժամ գնահատվել: «Ճգնաժամ» հասկացությունը նմանատիպ հասկացություններիվ տարբերվում է նրանով, որ այս դեպքում նոր վարքային մարտավարությունների ստեղծման անհրաժեշտություն է ձևավորվում: Առօրյա հետաքրքրությունների բախումների դեպքում վարքային մարտավարությունների այդպիսի վերակառուցման կարիք չի ստեղծվում: Սակայն, ճգնաժամի ամենաեական տարբերությունը մասնավոր հակադիր հետաքրքրություններից այն է, որ ճգնաժամային վիճակը անհնար է դարձնում նախկին վարքային սահմաններում առկա փոխհարաբերությունները: Բացի դրանից, գոյություն ունեն միանգամայն օրինաչափ նորմատիվ ճգնաժամեր, որոնք նույնպես ադապտիվ վարքի նոր ձևեր են պահանջում: Նորմատիվ ճգնաժամերի թվին հետազոտողները դասում են ընտանիքի կառուցվածքի փոփոխությունը, ընտանիքի անդամներից մեկի մահը, սեռական վարքի հետ կապված խնդիրները: Նորմատիվ ճգնաժամերը, այն ճգնաժամերն են, որոնք հատուկ են երիտասարդ ընտանիքների մեծամասնությանը և որոնց հանգուցալուծման բացակայությունը ամուսինների փոխհարաբերությունները կանգնեցնում է քայքայման վտանգի առջև: Այս ճգնաժամերը նորմատիվ են նաև այն իմաստով, որ նրանք անխուսափելի են և հանդիսանում են երիտասարդ ընտանիքի զարգացման անբաժանելի մասը: Այլ է դառնում նորմատիվ ճգնաժամերի խնդիրների հետ փոխկապակցված պատճառների հարցը, որը բերում է ամուսնական լարված փոխհարաբերությունների: Ելնելով նրանից, որ ճգնաժամը ամուսնական հարաբերությունների անբաժանելի մասն են, կարելի է ենթադրել, որ ճգնաժամերի պատճառները կրում են համատարած բնույթ և հաճախ իրենց բովանդակությամբ միանման են: Ամուսնական կոնֆլիկտների ձևավորմանը նպաստող պատճառների թվում, որպես կանոն, առանձնացնում են՝ ամուսնական սպասումների անհամապատասխանությունը, ամուսնության տարբեր մոտիվացիաները, ամուսնության վերաբերյալ պատկերացումների տարբերությունները, որոնք հիմնված են ծնողական ընտանիքներում վարքային մոդելների վրա, լիդերության պայքարը, երեխայի ծնունդը: Բոլոր այս պատճառները, միասին կամ առանձին վերցրած, երիտասարդ ամուսինների առջև են քաշում նոր ադապտացիայի պահանջ: Այսպես, թե անպես ճգնաժամերը երիտասարդ ընտանիքում նորմատիվ են, և ամուսնության յուրաքանչյուր փուլի հատուկ են որոշակի

ճգնաժամեր: Երիտասարդ ընտանիքում ճգնաժամերն ունեն իրենց յուրահատուկ գծերը, որոնցով տարբերվում են երկարատև միասնական կյանքի փորձ ունեցող ընտանիքի ճգնաժամերից: Վերլուծելով երիտասարդ ընտանիքում ճգնաժամերի թեմատիկ ուղղվածությունը՝ կարելի է առանձնացնել որոշ կրկնվող կոնֆլիկտներ: Մասնավորապես, երիտասարդ ընտանիքներին հատուկ են ամուսնական կոնֆլիկտներում արտահայտվող հետևյալ ճգնաժամերը. լիդերության ճգնաժամ, պատասխանատվության ճգնաժամ, ծնողական ընտանիքների միջամտության ճգնաժամ, սեռական ադապտացիայի ճգնաժամ, տնտեսական ճգնաժամ: Ըստ էության, սրանք հիմնական խնդիրներն են, որոնք դիպչում են հայկական երիտասարդ ընտանիքներին: Ինքն իրենով ճգնաժամն ունի թաքնված դրական ուժ, այն ակտիվացնում է անձի անհատական զարգացումը, բերում է ամուսինների հարաբերությունների անհրաժեշտ հասունացմանը: Ճգնաժամի էությունը չի կայանում ադեկվատ վարքային մոդելների ձևավորման անհրաժեշտության մեջ, որոնք թույլ են տալիս հարմարվել կենսագործունեության նոր պայմաններին: Ադապտացիայի նոր կառուցողական մոդելների ձևավորումը ամուսնական ճգնաժամերի ժամանակ պայմանավորված է ամուսինների աշխարհայացքի մոտեցումների համընկմամբ, նրանց հոգեբանական հասունության մակարդակով միևնույն կամ նման մոտիվացիայով: Ընտանեկան ճգնաժամերը ունեն որոշակի հաճախականություն, որն ընդունված է տարբեր հոգեբանական դպրոցների գործնական հետազոտություններում: Հետազոտությունների մեծամասնությունն ընդգծում են երեք ճգնաժամային շրջաններ ընտանեկան ինստիտուտի զարգացման մեջ: Առաջին շրջան՝ երիտասարդ ամուսինների նոր փոխհարաբերությունների ձևերի հարմարման շրջան: Յուրաքանչյուր ճգնաժամային շրջան բերում է իրեն յուրահատուկ կոնֆլիկտներ, սակայն գոյություն ունեն կոնֆլիկտներ, որոնք կրկնվում են տարբեր ճգնաժամային շրջաններում: Որպես կանոն, առաջին ճգնաժամային շրջանը ներառում է ամուսնության սկզբից մինչև երեխայի ծնունդն ընկած ժամանակահատվածը: Յուրաքանչյուր ճգնաժամային շրջան ունի իրեն բնորոշ կոնֆլիկտներ: Այս շրջանում կոնֆլիկտների պատճառներն են. սեռական հիպոթափությունը, տնտեսական դժվարությունները, արժեքային կոդմոդընչների վերանայումը, պատասխանատվությունից հրաժարումը, հուզական կյանքում էյֆորիայի մարումը, դերային սպասումների փլուզումը, ծնողական ընտանիքների ազդեցությունը երիտասարդ ամուսինների փոխհարաբերությունների վրա: Այս հիմնական պատճառները ակնառու կերպով արտացոլում են երիտասարդ ընտանիքի առաջին ճգնաժամը: Ամուսնությունից հետո երիտասարդ ամուսինները հայտնվում են հոգեբանական նոր իրադրությունում, որի դեպքում իրենք դեռ չունեն սեփական համապատասխան հարմարվողական վարքային մոդելներ: Ամուսնական փոխհարաբերությունները այս շրջանում սկսում են գործել ծնողական ընտանիքների ադապտացիայի մոդելները: Այդ պատճառով ճգնաժամային շրջանը մենք կարող

ենք սահմանել որպես ամուսնական կյանքի սեփական ադապտացիայի մոդելների որոնման շրջան: Ծնողական վարքային մոդելները կամ արձագանքման ավանդական ձևերը կյանքի նոր սցենարում, որպես կանոն, ինչ որ ժամանակ պահպանում են իրենց ադապտացիոն արդյունավետությունը: Սակայն, ժամանակի ընթացքում, անհրաժեշտություն է առաջանում ձևավորել սեփական անհատական վարքաձևեր՝ նոր սոցիալական պայմաններում գործելու համար: Առաջին ճգնաժամային շրջանը բնութագրվում է նրանով, որ ծնողական ավանդական մոդելներն ալևս անհրաժեշտ արդյունավետություն չունեն, իսկ սեփական մարտավարությունները դեռ չեն ձևավորվել: Հարաբերությունների այդ անհասությունը բնութագրում է առաջին ճգնաժամային շրջանի էությունը: Հուզական բուռն արտահայտումները, որոնք բնորոշ են մինչամուսնական սիրահետման շրջանին առաջին տարվա ընթացքում կորցնում են իրենց հաճախականությունը, հարաբերություններում ռոմանտիկան մղվում է երկրորդ պլան, ընտանեկան կյանքը կատարում է իր շտկումները և առաջադրում պահանջներ նոր սոցիալական սցենարում: Ամուսնական հարաբերությունների սկսվելուն պես երիտասարդ ամուսինները հաճախ բախվում են միմյանց արժեքային կոդմնորոշիչների անհամապատասխանության հետ: Սակայն, ըստ էության այս գործոնը նույնպես ներմուծված է ծնողական աշխարհայացքի համակարգով: Երիտասարդ ամուսիններն ունեն այն աշխարհայացքն ու ընտանեկան արժեքների այն սանդղակը, որը նրանք տեսել են ծնողական տանը: Սեփական ընտանեկան արժեքային կոդմնորոշիչները դեռ չեն ձևավորվել, այդ պատճառով մենք գործ ունենք ծնողական ընտանիքների արժեքային կոդմնորոշիչների անհամապատասխանության հետ, որի կրողները հանդիսանում են երիտասարդ ամուսինները: Ամուսնությունը պահանջում է պատասխանատվություն կրել ընտանիքի ճակատագրի նկատմամբ: Ընտանիքի նկատմամբ պատասխանատվության ընդունումը, երևի թե, ամենա բարդ պահանջն է, որը պետք է բավարարվի: Ընտանեկան կյանքի առաջին մեկ ու կես տարվա ընթացքում, որպես կանոն, բացահայտվում է հենց պատասխանատվության այդ դեֆիցիտը: Իր հերթին, ձևավորվում են ընտանիքի դերային կառուցվածքի հետ կապված խնդիրներ: Դերային սպասումները նույնպես կարիք ունեն վերանայման և վերագնահատման: Անմիջականորեն և միջնորդավորված երիտասարդ ամուսինների ծնողական ընտանիքները մշտապես փոփոխություններ են ներմուծում երիտասարդ ընտանիքի կյանք, շտկում են նրանց վարքը: Այս խնդիրը ընտանեկան հոգեբանության մեջ բավականին խորը ուսումնասիրության է ենթարկվել: Երիտասարդ ընտանիքի կայացման վրա ծնողական կերպարների ազդեցության արդիականությունը դժվար է թերագնահատել: Այս խնդրին նվիրված է սոցիալական և հոգեդինամիկ հոգեբանության մեծաքանակ հետազոտություններ: Մենք կարող ենք անդրադառնալ այդ ոլորտի հետազոտությունների փոքր մասին: Ծնողների դերերի ուսումնասիրությունը երիտասարդ ընտանիքներում հանդիպում են է.Է-

րիկսոնի, Լ.Հյելի, Դ.Զիգլերի, Դ.Վ.Վիննիկոտի, Ֆ.Րիմանի, Գ.Գ.Ֆիլիպովայի, Դ.Կ.-Պատերսոնի, Բ.Սպոկի, Ռ.Սիրեյի, Ա.Ադլերի, Ջ.Ֆրեյդի, Մ.Ի.Լիսինայի, Դ.Բ.Էլկոնինի, Է.Բերնի, Ֆ.Դալտոյի, Ա.Ե.Լիչկոյի, Ի.Ս.Կոնի, Ս.Կրասոխովի, Վ.Ս.Մուխինայի, Ռատտերի և այլոց աշխատանքներում: Ինչպես հայտնի է, անձի հիմնական կառուցվածքը ձևավորվում է առաջնային սոցիալականացման ինստիտուտի շնորհիվ: Անձի ձևավորումը սոցիալական գործընթաց է: Սոցիալական վարքի մոդելները հակառակ սեռի հետ շփման և փոխհարաբերությունների կարողությունները ձևավորվում են ընտանիքում՝ նույնականացման գործընթացի շնորհիվ: Ընտանիքում սոցիալական հարաբերությունների բարդ համակարգը աստիճանաբար յուրացվում է երեխայի կողմից, դառնում նրա սոցիալական և հոգեբանական սեփականությունը: Ընտանիքում, ծնողական կերպարների ակտիվ ազդեցության տակ, ձևավորվում են նաև տղամարդու և կնոջ վերաբերյալ սուբյեկտիվ դիրքորոշումները: Ծնողների կերպարները անտեսանելի ձևով առկա են երիտասարդ ամուսինների կյանքում, և ոչ միայն առկա են, այլ նաև հավակնում են նրանց հոգեբանական տարածք ներխուժելուն: «Մարդկանց փոխհարաբերությունների ժամանակ նրանց հոգեբանական դաշտերը ևս փոխհարաբերվում են. նրանք կարող են հատվել, օկուպացվել, հարգվել կամ բռնությամբ սահմանափակվել»:⁵⁴⁵ Յուրաքանչյուր երիտասարդ ընտանիք, այսպես թե այնպես, ենթարկվում է ծնողական կերպարների ազդեցությանը, կամ ավելի ճիշտ, տարբեր սոցիալ-հոգեբանական իրավիճակներում ծնողական վարքային մոդելների ազդեցությամբ: Ե.Վ. Յեմելյանովան այդ ազդեցությունն անվանում է երիտասարդ ամուսինների հոգեբանական տարածության խախտում: Հոգեբանական տարածությունը, ըստ էության, իրենից ներկայացնում է անձի որոշակի կառուցվածք, որը ըստ Ե.Վ. Յեմելյանովայի իր մեջ ներառում է մի քանի գործոններ. ինքն իր մասին ունեցած պատկերացումների համակարգը, աշխարհում իր զբաղեցրած տեղի մասին պատկերացումները, ուրիշների հետ փոխազդեցության ձևերն ու ոճերը, էքզիստենցիալ դիրքորոշումների համակարգը, որոնք վերաբերվում են կյանքին և կատարվող իրադարձությունների իմաստին, սեփական հնարավորությունների մասին պատկերացումները և այլն: Ընտանիքի զարգացման հետագա ճգնաժամային շրջաններն արդեն վերաբերվում են ընտանեկան կյանքի համատեղ երկարատև փորձ ունեցող ընտանիքներին: Ն.Ա. Կովալն առանձնացնում է ընտանիքի կենսագործունեության կրիտիկական կետերը. «Ընտանիքն իր զարգացման ընթացքում անցնում է մի շարք փուլերով, որը ենթադրում է կրիտիկական անցումային կետերի գոյությունը՝ զարգացման մի կետից մյուսին անցման ժամանակ»:⁵⁴⁶ Այլ կերպ ասած, այս կրիտիկական կետերը կարող են սահմանվել որպես ընտանիքի զարգացման փուլեր: Հա-

⁵⁴⁵ Емельянова Е.В. Кризис в созависимых отношениях. Принципы и алгоритмы консультирования / Е.В. Емельянова. СПб.: Речь, 2004. - 368 с. Стр.16)

⁵⁴⁶ Коваль Н.А. Психология семьи и семейной дезадаптивности. Изд-во ТГУ, 2007., 351 стр.163

կիրճ ներկայացնենք Ն.Ա. Կովալի գիտական դիրքորոշումը. «Ամուսնական կյանքի առաջին տարին բնութագրվում է միմյանց հարմարման կոնֆլիկտներով, երբ երկու «Ես»-երը դառնում են «Մենք»: Տեղի է ունենում զգացմունքների էվոյուցիա, սիրահարվածությունն անհետանում է, և ամուսինները միմյանց ներկայանում են այնպիսին, ինչպիսին որ կան»:⁵⁴⁷ Հարմարման կոնֆլիկտներն անխուսափելի են այն պարզ պատճառով, որ մինչ ամուսնական սիրահետման շրջանում երիտասարդ անձանց միջև առկա փոխհարաբերությունների էությունը ամուսնական կյանքի առաջին օրերից սկսած փոփոխվում են: Էյֆորիան փոխարինվում է իրական առօրյա կյանքով, ռոմանտիկան դիրքերը զիջում է ռեալիզմին: «Տարբեր անձանց հոգեբանական տարածքները կարող են հանդիսանալ այս կամ այն աստիճանի կայուն գոյացություններ և ունենալ համեմատաբար ամուր սահմաններ, որոնց խախտումը միշտ առաջացնում է բացասական հակազդում՝ թեթև անհարմարության զգացումից մինչև սուր ցավային ապրումներ: Հոգեբանական տարածության սահմանների խախտումը մենք կանվանենք որպես մի մարդու ազդեցությունը այս կամ այն աստիճանի բռնի կերպով, որը նպատակ ունի իր հայեցողությամբ փոփոխել մարդու ունեցած պատկերացումները ինքն իր, իր հնարավորությունների, ռեսուրսների, աշխարհում իր զբաղեցրած տեղի մասին»⁵⁴⁸ Ծնողական կերպարների ներազդման այս գործընթացը, երեխաների ամուսնական հարաբերությունների վրա, սկսվում է վաղ մանկությունից, երեխայի սեփական հոգեբանական տարածության ձևավորման պահից: Նա յուրացնում է այնքան տարածություն, որքան թույլ են տալիս նրա ծնողները: Հենց այս կերպ է ձևավորվում փոխկախվածության մեջ գտնվող հարաբերությունները, որոնք հետագայում ամուսնության դեպքում պահպանվում են: Հոգեբանական տարածության գրավումը կամ ծնողական կերպարների ազդեցությունը, երիտասարդ ամուսնական զույգի փոխհարաբերությունների վրա, բոլորի կողմից ընդունված փաստ է հանդիսանում, որը հատուկ ապացույց չի պահանջում: Շատ երիտասարդ ընտանիքներ բառացիորեն ամբողջ կյանքում կրկնում են իրենց ծնողների ամուսնական հարաբերությունների փորձը: Հատկապես, այս գործընթացն առավել ակնառու կերպով է դրսևորվում փակ, կոլեկտիվ, ավանդական մշակույթներում, մասնավորապես, պարզ նկատվում է հայկական ընտանեկան միջավայրում: Ամուսնության սոցիալ-հոգեբանական պատկերում ծնողական կերպարների ազդեցությունը ի սկզբանե իրականացնում է հարմարման ֆունկցիա՝ սոցիալական և սեռա-դերային նոր իրականության համար: Երիտասարդ ամուսինները չունեն ամուսնական հարաբերությունների փորձ, սոցիալական դերերը դեռևս ընդգծված չեն անհատական համատեքստում: Քանզի ամուսնական վարքի ծնողական մոդելները ամուսնության

⁵⁴⁷ Коваль Н.А. Психология семьи и семейной дезадаптивности. Изд-во ТГУ, 2007., 351 стр.163

⁵⁴⁸ Емельянова Е.В. Кризис в созависимых отношениях. Принципы и алгоритмы консультирования, стр.16

առաջնային շրջանում պայմանավորում են երիտասարդ ամուսինների միջև առկա հարաբերությունները, այդ հարմարման գործընթացը կրում է ավանդական բնույթ: Ծնողական ընտանիքի ավանդույթները տեղափոխվում են երիտասարդ ընտանիք: Դա նշանակում է այն, որ որքան երկար է ծնողների կողմից երիտասարդ ընտանիքի վրա ավանդական ներազդման գործընթացը, այնքան քիչ է այն բանի հավանականությունը, որ երիտասարդ ընտանիքը կձևավորի ամուսնական հարաբերությունների իր սեփական մարտավարությունը: Ամենից առաջ, խոսելով ամուսնական հարաբերությունների մարտավարության մասին, մենք նկատի ունենք ճգնաժամերը և ամուսնական կոնֆլիկտների լուծման ձևերը: Մենք խնդիրը տեսնում ենք նրանում, որ նորմատիվ ճգնաժամերի ժամանակ կոնֆլիկտների լուծման ձևերը նույնպես ավանդական բնույթ են կրում, երիտասարդ ամուսինները ցուցադրում են կոնֆլիկտների լուծման ծնողական ձևերը, որոնք հաճախ ոչ ադեկվատ են և նոր ընտանիքի համար ոչ արդյունավետ: Ամուսնական կոնֆլիկտներ հասկացությունը համընդհանուր է և կախված չէ հասարակության սոցիալական և էթնիկական մշակույթից: Յուրաքանչյուր հասարակության մեջ գոյություն ունեն որոշակի ամուսնական կոնֆլիկտներ, որոնք բնորոշ են յուրաքանչյուր երիտասարդ ընտանիքին: Սակայն, ինչպես նշում է Ն.Ա. Կովալը. «Ժամանակակից գիտության մեջ գոյություն չունի ամուսնական կոնֆլիկտների որոշման մեկ եզակի մոտեցում կապված այդ ֆենոմենի բազմակողմանիության և տեսական մոտեցումների բազմազանության հետ»:⁵⁴⁹

Ճգնաժամային երկրորդ շրջանը կենտրոնացած է առաջին երեխայի ծննդյան ժամանակահատվածի շուրջ: Այս շրջանի էությունը այն է, որ երիտասարդ ամուսինները հոգեբանորեն պատրաստ չեն իրենց վրա պատասխանատվություն վերցնել երեխայի համար, նրանք դեռ չունեն անհրաժեշտ սոցիալական հասունություն: Որպես կանոն, այդ ճգնաժամային շրջանը երիտասարդ ընտանիքների համար հատկապես ցավալի կերպով է ընթանում՝ փորձելով ինքնուրույն ապրել, առանց օգնության և ծնողների հովանավորության: Ավանդական հայկական ընտանիքներում, որտեղ ապրում են տարբեր սերունդների ներկայացուցիչներ, այս ճգնաժամային շրջանն ընթանում է առանց նշանակալի ցնցումների: Սակայն, այդուհանդերձ, երիտասարդ ամուսինները այս նորմատիվ ճգնաժամի մեջ հոգեբանորեն ամբողջովին չեն մտնում, այսինքն, նրանց մոտ երեխայի դաստիարակության հետ կապված պատասխանատվության սեփական փորձ չի ձևավորվում: Սակայն ճգնաժամային այս շրջանը, նույնիսկ ավանդական ընտանիքներում այսքան հարթ չի ընթանում, երիտասարդ ամուսինները բախվում են նոր խնդիրների հետ՝ ուշադրության բաշխումը, կնոջ կողմից՝ երեխային, այլ ոչ թե ամուսնուն, ավելի շատ ժամանակի և հոգատարության տրամադրումը, սեռական

⁵⁴⁹ Коваль Н.А. Психология семьи и семейной дезадаптивности. Изд-во ТГУ, 2007., 351 стр. с.169

ակտիվության որոշակի նվազումը: Այս նոր խնդիրների հետևանքով հնարավոր է ամուսինների մոտ միմյանց նկատմամբ հուզական անտարբերության առաջացում:

Բանալի բառեր – Ամուսնական փոխհարաբերություններ, երիտասարդ ընտանիքներ, կոնֆլիկտներ, ճգնաժամային շրջան, երիտասարդ ամուսիններ, ծնեղներ, հոգեբանական առանձնահատկություններ:

Նաիրա Սարհատյան, Ամուսնական փոխհարաբերությունների զարգացման ճգնաժամային շրջանների հոգեբանական առանձնահատկությունները - Երիտասարդ ընտանիքների կայացման և զարգացման ընթացքում ճգնաժամային ժամանակահատվածների վերլուծությունը չի կարող հաշվի չառնել հասարակության զարգացման սոցիալական և տնտեսական բոլոր համակարգերի ճգնաժամային վիճակը, արժեքային կողմնորոշումների փոփոխությունները, նոր հասարակությունում էթնիկական և իրավական նորմերի փոխազդեցության որոշակի վերանայումները: Սոցիալական նոր աշխարհի հայացքները չեն կարող չազդել ընտանիքի, երիտասարդ զույգի փոխհարաբերությունների վրա:

Наира Саргатын. Психологические особенности кризисных периодов в супружеских отношениях - Человек склонен объяснять свой разрыв отношений как раз мелкими поводами, в то время как истинная причина им просто игнорируется. Этот подход к объяснению семейных конфликтов и разводам присущ обществу, для которого важны не истинные причины развода, а те, которые понятны всем. Общество нуждается в социальных объяснениях, между тем причины супружеских конфликтов, как правило, скрыты от самих конфликтующих сторон.

Naira Sarhatyan, Psychological features of crisis periods in marital relations - If marital conflicts are constant companions of marital relations, then it may be worth perceiving them within the limits of the norm inherent in marital relations? A person is inclined to explain his break in relations with just minor reasons, while the true reason is simply ignored. This approach to explaining family conflicts and divorce is inherent in a society for which the true causes of divorce are not important, but those that are clear to everyone. The society needs social explanations, but the causes of marital conflicts are usually hidden from the conflicting parties themselves.

**ՄԱՀՄԱՆԱՄԵՐԶ ԳՈՏՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՍԹՐԵՍ-ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ
ՄԱԿԱՐԴԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎՐԱ**

ԱՆՆԱ ՔԱՄԱԼՅԱՆ

Արտակարգ կամ անսովոր պայմաններում անձի համար կարևորագույն հիմնախնդիր է հանդիսանում սթրեսների նկատմամբ կայունություն պահպանելու ունակությունը: Սթրես-կայունության խախտման հետևանքով տեղի են ունենում բազմաթիվ տեղաշարժեր, որոնք արտահայտվում են անձի հոգեվիճակների, ինքնագնահատականի, տրամադրության, ակտիվության, ինքնագագացողության, վեգետատիվ համակարգի և այլ փոփոխություններով:⁵⁵⁰

Մեր կարծիքով, սահմանամերձ շրջաններում ապրող երիտասարդների հոգեկան առողջության հանդեպ սպառնալիքների կանխատեսման և առողջության պահպանման նպատակով պահանջում է վերը թվարկած բաղադրիչների մանրագննիս հետազոտում:

Փորձարարական հետազոտական աշխատանքներն իրականացվել են ՀՀ Տավուշի մարզի Պառավաքար, Չորաթան, Կոթի, Արծվաբերդ, Նավուր սահմանամերձ համայնքներում 2015-2017 թթ.-ի ընթացքում:

Հետազոտական աշխատանքներն իրականացնելու համար համագործակցել ենք « ՍՈՍ մանկական գյուղ» ՀԲՀ ՀԱՏՕ Տավուշ ծրագրի հետ:

Հետազոտվողների համակարգմը դասակարգվել է երկու խմբի՝ թիրախ և ստուգիչ: Հետազոտական թիրախ խմբում ընդգրկվել են ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի 21-30 տարեկան 100 երիտասարդներ, որոնցից 50-ը՝ իգական սեռի ներկայացուցիչներ, 50-ը՝ արական սեռի: Ստուգիչ խմբում ընդգրկվել են ՀՀ Երևան քաղաքի 21-30 տարեկան 100 երիտասարդներ, որոնցից 50-ը ևս եղել են իգական սեռի ներկայացուցիչներ, իսկ 50-ը՝ արական:

Նախքան բուն հետազոտություններին անցնելը խմբերի մասնակիցների հետ կատարվել է բացատրական և հրահանգավորման ընթացակարգ՝ կատարվելիք հետազոտության նպատակների, խնդիրների, ինչպես նաև հետազոտողի պահանջների, հետազոտվողի կողմից տարբեր պահանջների կատարման վերաբերյալ: Հետազոտությունն իրականացնելու համար կիրառվել են հոգեբանական թեստավորման և դիտման մեթոդներ, օգտագործվել են բժշկական սարքավորումների

⁵⁵⁰ Մկրտումյան Մ. Պ., Արտակարգ իրավիճակների հոգեբանության կանխարգելման և վերականգնողական հիմնախնդիրները: Ուս. Ձեռնարկ Եր...: Զանգակ-97 2008-45 էջ:

միջոցով ստացված ցուցանիշները, կատարվել է փորձարարական միջամտություն՝ հոգեվերականգնողական թրենինգային ծրագրով:⁵⁵¹

Հետազոտողական աշխատանքների ընթացքում իրականացվել է սթրես-կայունության ուսումնասիրման բոստոնյան հարցարան: Թեստը մշակվել է Բոստոնի համալսարանի Բժշկական կենտրոնի հետազոտողների կողմից: Անհրաժեշտ է պատասխանել հարցերին՝ ելնելով նրանից, թե որքանով են այդ համոզմունքները ճիշտ: Անհրաժեշտ է պատասխանել բոլոր կետերին: Տեստը բացահայտում է անձի սթրես-կայունության ցածր, միջին, բարձր, շատ բարձր մակարդակները: Ցածր մակարդակի դեպքում անձի մոտ առկա է փայլուն կայունություն սթրեսային իրավիճակների նկատմամբ (նրա առողջությանը ոչ մի վտանգ չի սպառնում): Միջին մակարդակը արտահայտում է նորմալ սթրեսի մակարդակ, որը համապատասխանում է ակտիվ մարդու կյանքի լարվածությանը: Բարձր մակարդակը ցույց է տալիս, որ սթրեսային իրավիճակը միջին չափով է ազդում մարդու կյանքին, անձը շատ ուժեղ չի հակադրվում դրան: Շատ բարձր մակարդակի դեպքում անձը շատ է հակված սթրեսին, նրա մոտ առկա է անկայունության բարձր մակարդակ, որի հետևանքով նա պետք է մտածի իր առողջության մասին: Թեստը բաղկացած է 20 հարցապնդումներից:

Ինչպես երևում է աղյուսակ 1-ում ներկայացված տվյալներից, թիրախ խմբում ընդգրկված 50 կանացից ոչ ոքի մոտ սթրես-կայունության մակարդակի շատ բարձր աստիճան չի գրանցվել, 6%-ի մոտ սթրես-կայունության մակարդակը բարձր է, 18%-ի մոտ այն գտնվում է միջին մակարդակում, 76 %-ի մոտ այն ցածր մակարդակում է: Թիրախ խմբի 50 տղամարդկանցից 4%-ի սթրես-կայունության մակարդակը շատ բարձր է, 10%-ի մոտ այն գտնվում է բարձր մակարդակում, 42%-ի մոտ սթրես-կայունությունը միջին մակարդակում է, իսկ 44%-ի մոտ այն ցածր մակարդակում է: Ի տարբերություն թիրախ խմբի՝ ստուգիչ խմբի կանանց մոտ սթրես-կայունության մակարդակը 16%-ի մոտ շատ բարձր է, 54%-ի մոտ բարձր, 18%-ի մոտ միջին, իսկ 12%-ի մոտ ցածր: Տղամարդկանց մոտ ստացված ցուցանիշները վկայում են, որ 22%-ի սթրես-կայունությունը գտնվում է շատ բարձր մակարդակում, 62%-ի մոտ այն բարձր մակարդակում է, 14%-ի մոտ այն միջին մակարդակում է, իսկ 2%-ի մոտ այն գտնվում է ցածր մակարդակում: Ինչպես երևում է թիվ 1 նկարում արտահայտված տվյալների արտահայտությունից, թիրախ խմբի կանանց մոտ սթրես-կայունության մակարդակը, ի համեմատ տղամարդկանց, գտնվում է ցածր մակարդակում, տղամարդկանց մոտ առավել գերակշռում են միջին ցուցանիշները: Ստուգիչ խմբի ցուցանիշները երևում է, որ սթրես-կայունությունը գտնվում է բարձր մակարդակում, սակայն կանանց և տղամարդկանց ցուցանիշները այս խմբում ևս տարբերվում են: Տղամարդկանց մոտ նկատելի է առավել


⁵⁵¹ Куликов Л.В. Стресс и стрессоустойчивость // Теоретические и прикладные вопросы психологии. Вып. 1 Ч. изд-во СПбГУ. 12014. С. 123-132.

բարձր սթրես-կայունության մակարդակ, քան կանանց մոտ: Թիրախ խմբի մասնակիցների մոտ առկա է սթրես-կայունության ցածր մակարդակ, ինչը նշանակում է, որ սահմանամերձ գոտու երիտասարդների (հատկապես կանանց մոտ) կայունության մակարդակը սթրեսային իրավիճակների նկատմամբ ցածր է: Ստուգիչ խմբում առկա է սթրես-կայունության բարձր մակարդակ, ինչը ցույց է տալիս, որ նրանք սթրես գործոնների նկատմամբ կայունություն են ցուցաբերում: Բարձր կայունությունը սթրեսների նկատմամբ այնպիսի հատկությունն է, որի շնորհիվ անձը կարողանում է անսովոր պայմաններում պահպանել իր հոգեֆիզիոլոգիական համակարգերի գործառնության ամբողջականությունը, համագործակցությունը:

Աղյուսակ 1. *Սթրես-կայունության %-ային արտահայտվածությունը հետազոտվող խմբերում*

սթրես-կայունության մակարդակ	հիմնական խումբ		ստուգիչ խումբ	
	կին (50 հոգի)	տղամարդ (50 հոգի)	կին (50 հոգի)	տղամարդ (50 հոգի)
	քանակը/տոկոսը	քանակը/տոկոսը	քանակը/տոկոսը	քանակը/տոկոսը
շատ բարձր	0 / 0%	2 / 4%	8 / 16%	11 / 22%
Բարձր	3 / 6%	5 / 10%	27 / 54%	31 / 62%
Միջին	9 / 18%	21 / 42%	9 / 18%	14 / 7%
Ցածր	38 / 76%	22 / 44%	6 / 12%	2 / 1%

Նկար 1. *Սթրես-կայունության դրսևորման արտահայտվածությունը կանանց և տղամարդկանց խմբերում*



Հետազոտական աշխատանքների ընթացքում իրականացվել է ինքնագնահատականի մակարդակի չափման թեստ: Թեստը ուղղված է բացահայտելու

անձի ինքնագնահատականի մակարդակը: Տրվում են 32 դատողություններ՝ ինքնագնահատականի մակարդակը ախտորոշելու համար: Կախված նրանից, թե որքանով են այդ մտքերը հատուկ հետազոտվողին, նա պետք է նշի «շատ հաճախ», «հաճախ», «երբեմն» կամ «երբեք» տարբերակները: Թեստը բացահայտում է անձի ինքնագնահատականը՝ բարձր, միջին, ցածր մակարդակներում: 0-25 միավորները համապատասխանում են բարձր ինքնագնահատականի մակարդակին, 26-45 միավորները համապատասխանում են միջին ինքնագնահատականի մակարդակին, 46-128 միավորները համապատասխանում են ցածր ինքնագնահատականի մակարդակին: Բարձր ինքնագնահատականի առկայությունը վկայում է նրա մասին, որ անձը ինքնավստահ է, և չի կասկածում իր գործողությունների ճշգրտության մեջ: Միջին ինքնագնահատականի ցուցանիշը ցույց է տալիս, որ անձը ունենում է երբեմն անլիարժեքության զգացում և հազվադեպ է ենթարկվում ուրիշների կարծիքներին: Ցածր ինքնագնահատականի դեպքում հետազոտվողը անվստահ է, և անկայուն, դանդաղ է արձագանքում միջավայրում տեղի ունեցող իրադարձություններին:


Ինքնագնահատականի չափման տվյալների վերլուծությունից պարզ դարձավ, որ թիրախ խմբի 50 կանանցից 4%-ի մոտ ինքնագնահատականը բարձր է, 18%-ի մոտ այն միջին է, 78%-ի մոտ այն գտնվում է ցածր մակարդակում: Թիրախ խմբում 50 տղամարդկանցից 12%-ի մոտ ինքնագնահատականը բարձր է, 28%-ի մոտ այն ունի միջին արտահայտվածություն, իսկ 60%-ի մոտ այն բարձր է: Սա նշանակում է, որ այս խմբի կանանց ինքնագնահատականը ավելի ցածր է, քան տղամարդկանցը: Ստուգիչ խմբի հետազոտվող կանանց 54%-ի մոտ առկա է ինքնագնահատականի բարձր մակարդակ, 30%-ի մոտ այն համապատասխանում է միջին մակարդակին, իսկ 16%-ի մոտ այն ցածր է: Ստուգիչ խմբի տղամարդկանցից 66%-ի մոտ առկա է ինքնագնահատականի բարձր մակարդակ, 34%-ի մոտ ինքնագնահատականը միջին է, իսկ 2%-ի մոտ այն ցածր մակարդակում է (հետազոտության արդյունքների տոկոսային արտահայտվածությունը արտացոլված է աղյուսակ 2-ում): Ստացված արդյունքները ավելի պատկերավոր ներկայացնելու համար տվյալների արտահայտվածությունը ներկայացրել ենք նաև դիագրամի տեսքով: Նկար 2-ում երևում է, որ հետազոտական խմբի մասնակիցների ինքնագնահատականը ցածր մակարդակում է, կանանց ինքնագնահատականը ավելի ցածր է, քան տղամարդկանցը: Ստուգիչ խմբի երիտասարդների ինքնագնահատականի մակարդակը համեմատաբար բարձր է, բայց սեռերի միջև ևս առկա են ցուցանիշների տարբերություններ: Ցածր ինքնագնահատականի դեպքում անձը թերագնահատում է իր հնարավորությունները: Մովորաբար այն բերում է անվստահության, անկայունության ձևավորման. նմանատիպ մարդիկ ընդունակ չեն ի-

րացնելու իրենց ընդունակությունները: ⁵⁵²Նրանք իրենց առջև դժվար հասանելի նպատակներ չեն դնում, սահմանափակվում են առօրեական խնդիրների լուծումներով, չափազանց քննադատաբար են վերաբերվում իրենց նկատմամբ: Ցածր ինքնագնահատականը խախտում է ինքնակառավարման, ինքնավերահսկման գործընթացը: Բարձր ինքնագնահատականի առկայության դեպքում մարդը ինքնավստահ է, արագ կողմնորոշվում է դժվար և անսովոր իրավիճակում և կարողանում է վերահեսկել ու կառավարել իր հոգեվիճակները:

Աղյուսակ 2. Հետազոտական խմբերում դրսևորվող ինքնագնահատականի %-ային արտահայտվածությունը

ինքնագնահատականի մակարդակ	հիմնական խումբ		ստուգիչ խումբ	
	կին (50 հոգի)	տղամարդ (50 հոգի)	կին (50 հոգի)	տղամարդ (50 հոգի)
	քանակը/տոկոսը	քանակը/տոկոսը	քանակը/տոկոսը	քանակը/տոկոսը
բարձր	2 / 4%	6 / 12%	27 / 54%	33 / 66%
միջին	9 / 18%	14 / 28%	15 / 30%	16 / 32%
ցածր	39 / 78%	30 / 60%	8 / 16%	1 / 2%

Նկար 2. Հետազոտական խմբերում կանանց և տղամարդկանց արդյունքների արտահայտվածությունը



Ամփոփելով հետազոտության արդյունքները, կարող ենք պնդել, որ սահմանամերձ գոտու երիտասարդների հիմնական խմբի մասնակիցների մոտ առկա է սթրես-կայունության ցածր մակարդակ: Սա նշանակում է, որ սահմանամերձ

⁵⁵² Апчел В.Я., Цыган В.Н. Стресс и стрессоустойчивость человека.- СПб.: ВМА, 2014. -86 с.

գոտու երիտասարդների (հատկապես կանանց մոտ) կայունության մակարդակը սթրեսային իրավիճակների նկատմամբ ցածր է: Ստուգիչ խմբի մոտ առկա է սթրես-կայունության բարձր մակարդակ, ինչը ցույց է տալիս, որ նրանք սթրես գործոնների նկատմամբ կայունություն են ցուցաբերում: Հիմնական խմբում ընդգրկված մասնակիցների մոտ առկա է տագնապալիության, ֆրուստրացիայի, ագրեսիայի, ռիզիդության բարձր մակարդակ: Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ կան տարբերություններ նաև սեռերի միջև: Նույն տարբերությունները նկատելի են նաև ստուգիչ խմբի մասնակիցների համար: Հատկապես կանանց մոտ բավարար ցուցանիշները ավելի շատ են արտահայտված, քան տղամարդկանց մոտ: Հետազոտությունների ընթացքում պարզաբանվեց, որ սթրեսկայունության ցածր մակարդակը անդրադառնում է սահմանամերձ գոտու երիտասարդների կենսակերպի կազմակերպման ընթացքի վրա: ⁵⁵³


Երիտասարդների սթրես-կայունության հոգեբանական մեխանիզմը կենսակերպի կազմակերպման տեսանկյունից կարելի է մեկնաբանել Ռ. Յերկսի և Ջ. Դոդսոնի օրենքի տեսանկյունից: Ըստ այդ օրենքի, նյարդային համակարգի ակտիվացման աճի հետ մինչև որոշակի մակարդակը գործողությունների ակտիվությունը աճում է, մինչդեռ ակտիվացման հետագա աճի ընթացքում այն սկսում է իջնել: Ակտիվացումը նպաստում է աշխատանքի ընթացքում ծագող դժվարությունների հաղթահարմանը այնքան ժամանակ, քանի դեռ չի անցել որոշակի կրիտիկական (ճգնաժամային) կետից: Այդ պարագայում արդեն օրգանիզմում զարգանում է գերմոբիլիզացման գործընթացը: Արդյունքում խախտվում են ինքնակարգավորման մեխանիզմները, խախտվում են գործունեության արդյունավետությունն՝ ընդհուպ մինչև գործունեության դադարում: Յերկս-Դոդսոնի օրենքը մեր համակարգի համար յուրահատուկ արտահայտություն է ստանում. սթրես գործոնների ազդեցության պայմաններում հարմարմանն ուղղված հոգեֆիզիոլոգիական հակազդումները համապատասխանեցվում են դրսևորված ֆրուստրացիայի, ռիզիդության, տագնապի, տրամադրության, ինքնագնահատականի փոփոխության տարբեր մակարդակներին: Դեռ ավելին՝ սթրես-կայունության եքստերնալ և ինտերնալ հակազդումները հանդիսանում են երիտասարդների հոգեկան գործունեության առանձնահատուկ դրսևորումներ, որոնց ճանաչումը և դրանց առաջացման մեխանիզմների մեկնաբանությունը հնարավորություն է տալիս դժվար, ճգնաժամային, արտակարգ իրավիճակներում կանխարգելման և վերականգնողական ծրագրերի մշակման ու իրականացման համար: Մյուս կողմից՝ սահմանամերձ գոտում ապրող երիտասարդների շրջանում դրսևորվող երևույթները նմանվում են սթրեսի պայմաններում գործող անձանց գործունեության մոդելի հատկանիշներին՝ որոշե-

⁵⁵³ Реан А.А., Кудашев А.Р. А.А. Баранов Психология адаптации личности.-СПб.:ПРАЙМ- ЕВРО-ЗНАК, 2016.-479 с

լով արտակարգ, ճգնաժամային իրավիճակներում ընդհանուր և հոգեկան աշխատունակության չափը:

Յերքս-Դոդսոնի օրենքի համաձայն, գործունեության իրականացման ընթացքում նյարդային համակարգի ակտիվացումը կապվում է գործողությունների արդյունավետության հետ, որում գոյություն ունեն երկու ելքեր.⁵⁴

- I. երբ ակտիվացման աճը տանում է արդյունավետության աճի,
 - II. երբ ակտիվացման նույնաչափ աճը տանում է արդյունավետության անկման:
- Վերը նշված մոդելի մեկնաբանությունը կարելի է բացատրել հեղինակների առաջադրած սխեմայով:



Նկար 2.Յերքս-Դոդսոնի սխեմա
որտեղ՝ *AKP ակտիվացման կրիտիկական մակարդակն է,*
AW 1- ն արդյունավետության բարձրացումը,
W2 -ը արդյունավետության անկում:

Ինչպես երևում է վերևում ներկայացված կորից, սթրեսը աշխատանքի, գործունեության արդյունքների վրա դրականորեն է ազդում (մոբիլիզացնում է): Այս ապացուցված է դեռևս Հ. Սելյեի, Բ. Վյատկինի, Վ. Սուվորովայի, Վ. Բոդրովի և այլոց հետազոտություններով:⁵⁵⁵

Սակայն, այս դեպքում, դա տեղի ունի միայն սկզբնական փուլերում: Սթրեսի հետագա փուլերում, որը շատ բնորոշ է սահմանամերձ գոտում ապրող երիտասարդությանը, առաջ են գալիս հարմարման և ապահարմարման, սպառման և սահմանային հնարավորությունների դրսևորման հակազդումներ, ինչպիսիք են տրամադրության փոփոխությունները, ագրեսիվության, ֆրուստրացիայի, ռիզիկոյան, ակտիվության դրսևորման տարբեր մակարդակները:

Սակայն ոչ միայն հոգովիճակների զգայաշարժական համակարգի ու հոգեֆիզիոլոգիական, արյան շրջանառության, գազափոխանակության ու նյարդային համակարգերի գործառության ինտրավորությունների ցուցանիշ են, այլև ուղղակիորեն առնչվում են երիտասարդների առողջության, նրանց ընդհանուր ակտիվության բնութագրերի հետ:

Քանալի բառեր. Սահմանամերձ գոտի, սթրես-կայունություն, երիտասարդ, հոգեվիճակ, անբարենպաստ պայմաններ

Աննա Քամալյան, Սահմանամերձ գոտու երիտասարդների սթրես-կայունության մակարդակի ազդեցությունը կենսական պայմանների վրա -Մինչ այսօր ՀՀ-ում հրադարի խախտման հետևանքով, սահմանամերձ գոտում շարունակվում են սթրեսածին վիճակները, որոնք բացասաբար են անդրադառնում երիտասարդների սթրես-կայունության վրա:

Սթրեսակայունությունը մարդու ունակությունն է ադեկվատ գնահատելու լարված իրավիճակը, թեթևությամբ այն անցնել՝ չընկղմվելով սթրեսային վիճակի մեջ:

Սթրես-կայունությունը ենթադրում է մարդու հոգեկան գործունեության բոլոր բաղադրիչների փոխազդեցություն, մասնավորապես՝ հուզական, ինտելեկտուալ, դրդապատճառային, որոնք ապահովում են նպատակի իրականացումը բարդ իրավիճակներում:

Анна Камалян, Влияние уровня стрессоустойчивости молодежи приграничной зоны на образ жизни - До сих пор в Армении по причине нарушения премирия, в пограничных зонах продолжают стрессогенные состояния, которые

⁵⁵⁵ Осипова А.А. Справочник психолога по работе в кризисных ситуациях. - Ростов н/Д. Феникс, 2015. -315 с

негативно воздействуют на стрессоустойчивость молодежи. *Стрессоустойчивость это* способность человека адекватно реагировать на какую-либо напряженную ситуацию и легко переносить ее, не погружаясь в состояние стресса. Стрессоустойчивость предполагает взаимодействие всех компонентов психической деятельности человека, а именно, эмоциональных, волевых, интеллектуальных, мотивационных, которые обеспечивают успешное достижение цели деятельности в сложной обстановке.

Anna Kamalyan, Influence of the level of stress resistance of young people of the border zone on the way of life - Until now, in Armenia due to ceasefire violations, stressful state continues in the border areas, which adversely affect the ability to handle stress youth. Stress resistance is the ability of a person to adequately respond to any stressful situation and easy to carry it, without sinking into a state of stress. Stress resistance involves the interaction of all components of human mental activity, namely, emotional, volitional, intellectual, motivational, that ensure the successful achievement of the goal of activities in a difficult environment.

**ՑԱՆՑԱՅԻՆ ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ՎԱՃԱՌՈՂՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԴԻՄԱՆԿԱՐԻ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

ՆՈՒՆԵ ԱՂԱՍՅԱՆ

Ժամանակակից աշխարհում մասնագիտական գործունեության և մասնագետների ընտրության նկատմամբ առավել սուր ուշադրության պայմաններում առավել հետաքրքրական են դառնում այն հետազոտությունները, որոնք վերաբերում են կոնկրետ մասնագիտությունների կողմից ներկայացվող պահանջների և վերջինիս հիման վրա իրականացվող հոգեբանական դիմանկարի ստեղծման ուղղությամբ: Այս հիմնախնդիրը մեր իրականության մեջ բավականին ուսումնասիրված է այնպիսի հեղինակների մոտ ինչպիսիք են՝ Վ. Աղուզումցյան, Հ.Մ. Ավանեսյան, Լ.Հ. Պետրոսյան⁵⁵⁶57558559560: Ցանցային մարքեթինգի ոլորտը չնայած իր տարածվածությանը մեր իրականության մեջ դեռևս բավականին ուսումնասիրված չէ հայ հոգեբանների կողմից թե հոգեբանական ազդեցությունների կիրառման, թե ոլորտի մասնագետների հոգեբանական որակների և մասնագիտական պատրաստման տեսանկյունից: Մեր հոդվածի շրջանակներում կներկայացնենք լայնածավալ հետազոտության արդյունքների այն հատվածը, որը վերաբերում է կոնկրետ դիստրիբյուտորների հոգեբանական առանձնահատկությունների բացահայտմանը: Հետազոտությունը իրականացրել ենք ցանցային մարքեթինգի Ֆաբերլիք, Օրիֆլեյմ և Ֆրեդերիկ ընկերություններում աշխատող 28-45 տարեկան 30 դիստրիբյուտորների հետ՝ հետազոտելով վերջիններիս անձնային առանձնահատկությունները, հուզական ինտելեկտը և վարքի վերահսկման լոկուսը (էքստերնալ և ինտերնալ):

Մինչ անդրադառնալը հետազոտության արդյունքներին փորձենք ստորև հալիք՝ ներկայացնել մասնագիտական գործունեության նկատմամբ հոգեբանական

⁵⁵⁶**Հ.Ավանեսյան** Մասնագիտական գործունեության նոր պայմաններին անձի հարմարման հիմնախնդրի ուսումնասիրման մոտեցումների վերլուծություն Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները 5 միջազգային գիտաժողովի նյութեր Երևան 2015, 686 էջ Էդիթ Պրինտ

⁵⁵⁷**Ռ.Աղուզումցյան** Կառավարիչների գործունեության կադրային քաղաքականության հոգեբանական աջակցության համակարգ մշակելու մասին: Հանրային կառավարում Գիտական հանդես 3-4/201

⁵⁵⁸**Ռ.Վ. Աղուզումցյան, Լ.Հ. Պետրոսյան, Ս.Հ. Պողոսյան, Ա.Ռ. Խաչատրյան**, Կառավարիչների հոգեբանական ընտրության գործընթացի առանձնահատկությունները, Կոլեկտիվ մենագրություն Եր. 2016., 208 էջ

⁵⁵⁹**Լ.Պետրոսյան** Մասնագիտական և հոգեբանական որակների բնութագրերը պետական ծառայության համակարգում Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները 5 միջազգային գիտաժողովի նյութեր Երևան 2015, 686 էջ Էդիթ Պրինտ

⁵⁶⁰**Р.В. Агузумян** Психологические особенности профессиональной деятельности. Социальный мир человека вып.6. Материалы 6 международной конференции Человек и мир: под ред. Н.И. Леонова Ижевск, 2016

մոտեցումները և տեսական ընդհանրացումները: Մասնագիտական գործունեությունը հատուկ տեղ է զբաղեցնում անձի հասարակական գործունեության շարքում: Մարդը, որպես գործունեության սուբյեկտ, իր կյանքի մեծ մասը նվիրում է մասնագիտական աշխատանքին՝ որպես մարդկային էության կայացման հիմնական ուղղության⁵⁶¹:

Ն.Վ. Սամոուկինան նկարագրում է մասնագիտական գործունեության հայեցակարգը որպես գործունեություն հասարակության մեջ: Ներկայացնելով մասնագիտական գործունեության մեջ հաջողություն տերմինը Սամոուկինան տալիս է հետևյալ ձևակերպումը. «Հաջողությունը մասնագիտական գործունեության մեջ դրսևորվում է հիմնականում նշանակալի նպատակների հասնելու մեջ և այդ նպատակին հասնելուն խանգարող պայմանների հաղթահարման կամ վերափոխման մեջ⁵⁶²»: Ժամանակակից կյանքում, ցանկացած մասնագիտական գործունեության հաջողությունը դառնում է ավելի կարևոր: Առավել մեծ քանակությամբ փորձագետներ գտնում են, որ գործունեության արդյունավետությունը կախված է անձի ներքին կարողություններից: Անձի կառուցվածքի կարևոր բաղադրիչներից է մոտիվացիան, որը հասկացություն է, որ բացատրում է անձի վարքի ներքին ուժերը: Յուրաքանչյուր գործունեության (այդ թվում, մասնագիտական), ժամանակակից հոգեբանության կարևորագույն խնդիրներից է⁵⁶³

Անձի մոտիվացիոն կառուցվածքը ըստ Վ.Ի. Կովալյովի հանդիսանում է ոչ միայն առկա պահանջմունքները եւ առկա դրդապատճառները, այլև կայուն մոտիվացիոն կազմավորումները:(անձի կողմնորոշումը հետաքրքրությունները դիրքորոշումները, ցանկությունները, եւ այլն), որոնք նա և բազմաթիվ այլ հեղինակներ անվանում են պոտենցիալ դրդապատճառներ⁵⁶⁴: Յանցային մարքեթինգը ունի իր յուրահատկությունները, այստեղ մարդ-մարդ փոխազդեցության բարդ հոգեբանական մեխանիզմների ներքո է իրականանում վաճառքի գործընթացը: Այն առավել կարևոր է դարձնում վաճառողի ինչպես մասնագիտական, այնպես էլ անձնային հոգեբանական առանձնահատկությունների դրսևորումը վաճառքի գործընթացի էֆեկտիվության ապահովման համար: Յանցային մարկեթինգում դիստրիբյուտորի գործունեության առանձնահատկությունը առաջին հերթին, արագ և ճիշտ արձագանքելու ունակությունն է չնչին փոփոխվող իրավիճակում: Յուրաքանչյուր հաճախորդի նկատմամբ պետք է գտնել անհատական մոտեցում:

Աշխատանքային ժամանակի մեծ մասը, վաճառքի խորհրդատուն գտնվում է մարդկանց հետ շփման մեջ՝ անձամբ կամ հեռախոսով: Շփման մեջ իր բոլոր դրսևորումներով նա առավել շատ ժամանակ է ծախսում, քան այլ մասնագիտությո-

⁵⁶¹Климов, ЕА. Введение в психологию труда. - М., 1988 – 200ст.

⁵⁶²Nàlloééí È. À., Nàlloééíà Í. À., Øeøià À. Í. Íñèðíèiàèý áèçíàñà. — Í. : Æññòèàòøèý áàðíðíà è èçààðàèáé «Òàíààì» : ÝÈÍÎÑ, 1997. — 272 ñ. էջ՝ 19

⁵⁶³Նույն տեղում՝ Климов, ЕА. Введение в психологию труда. - М., 1988 – 200ст.

⁵⁶⁴Климов, ЕА. Введение в психологию труда. - М., 1988 – 200ст.

յան տեր մարդիկ: Նա հաճախշփվում է մարդկանց հետ ովքեր անվստահությամբ, երբեմն նույնիսկ ագրեսիվ կերպով են տրամադրված վերջինիս հանդեպ: Դիստրիբյուտորի աշխատանքի հաջողությունը կախված է նաև նրա ունակությունից հաղթահարել կոնֆլիկտային իրավիճակները, որոնք ստեղծվում են ոչ իր կողմից:

Ընկալել և վերամշակել ստացվող ամբողջ ինֆորմացիան, ադեկվատ կերպով վերաբերվել մարդկանց մերժումներին և թերահավատությանը՝ այս ամենը հանդիսանում է նրա աշխատանքի անբաժանելի մասը:

Մեկայլտարբերակիչ առանձնահատկությունը այսմասնագիտության հանդիսանում է կայունությանբացակայությունը: Ժամանակաոժամանակ, անկախջանքերից, ստացված արդյունքը կարող է լինել մինիմալ, այնուամենայնիվ, իրավիճակը կարող է փոխվել, քամուարագությամբ, ևղրանովիսկ տվյալ գործունեության յուրահատկությունը պետք է ապահովի համապատասխան ունակություններ արագ դուրս գալ սթրեսային իրավիճակներից նվազագույն նյարդահոգեկան կորուստներով:

Համապատասխանաբար, ցանցայինընկերության վաճառքի խորհրդատուի ամբողջ գործունեությունը պահանջում է անձի որոշակի մոտիվացիոն առանձնահատկություններ, որոնք կարող են ապահովել աշխատանքի հաջողությունը:

Որպես լիիրավ դրդապատճառներ կարող են հանդիսանալ հետաքրքրությունը այս տեսակի գործունեության նկատմամբ, նորբան սովորելու ցանկությունը, և մի շարք այլ ներքին դրդապատճառներ:

Վաճառքի խորհրդատուի մասնագիտական գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է կողմնորոշմամբ դեպի հաջողությունը կամ խուսափում անհաջողությունից: Վաճառքի խորհրդատուները, որոնք կողմնորոշված են դեպի հաջողություն վստահ են իրենց նախաձեռնության հաջող ընթացքին, նրանք բնութագրվում են վճռականությամբ անորոշ իրավիճակներում, հակված են ողջամիտ ռիսկի, հաստատակամ են նպատակներին հասնելու գործընթացում, ունեն հավակնությունների համապատասխան մակարդակ: Նրանք, ովքեր կենտրոնացած են ձախողման վրա նախապես ընկալում են իրենց հնարավորությունները անբավարար նպատակին հասնելու համար: Ընտրելով կոնկրետ նպատակ, այդ մարդիկ դեկավարվում են ձախողման վախով և հետևաբար ընտրում են այնպիսի թիրախ, որը իրենց կողմից ընկալվում է որպես առավել դյուրին քան մյուսները: Պարզ է նաեւ, որ այս տիպի մարդիկ նպատակին հասնելու ճանապարհին խոչընդոտների դեպքում մշակում են նահանջի ուղիներ, որոնք նրա կողմից ընկալվում են որպես հնարավոր ձախողման ազդանշան:

Մարդիկ, որոնք կողմնորոշված են դեպի հաջողությունը, իրենց կարողությունները բավարար են համարում նպատակին հասնելու համար, արդեն ներքին ակտիվության փուլում այլ կերպ են վարվում, քան այն մարդիկ ովքեր կողմն-

րոշված են ձախողման:Նրանք վերլուծում են այն տարբերակները, որոնք ըստ իրենց լավագույնս բավարարում են իրենց պահանջմունքները:

Հաջող մասնագիտական գործունեություն ապահովելու համար վաճառքի խորհրդատուն պետք է օժտված լինի սեփական գործունեությունը պլանավորելու և վերահսկելու ունակությամբ :

Կարևոր է նաեւ, թե ինչպես է մարդը կառուցում իր դրդապատճառների բազան՝ հիմնվելով իր ներքին հնարավորությունների, ջանքերի, թե այս կամ այն հանգամանքների կամ իրավիճակի վրա: (ներքին եւ արտաքին վերահսկողության լոկուսներ): Առաջինները կարծում են, որ հաջողությունը և անհաջողությունը պայմանավորված են իրենց անձնային գործոններով, նրանք հիմնականում կողմնորոշված են իրենց կարողությունների վրա: Երկրորդ դեպքում մարդիկ համոզված են, որ հաջողությունը կամ ձախողումը դեկլարվում է արտաքին ուժերի (ճակատագրի դեպքում, շրջակա միջավայրի) կողմից, նրանք կողմնորոշված են իրավիճակի վրա:

Աշխատանքի հաջող կատարման համար դիստրիբյուտորը պետք է ունենա զարգացած հաղորդակցման հմտություններ, հեշտությամբ շփումներ հաստատելու կարողություն, հաճախորդների պահանջները բացահայտելու ունակություն հստակ բացատրելու և ակնառու կերպով ցուցադրելու ապրանքը և այլն: Այս ամենը իրականացվում է հաղորդակցման գործընթացում:

Ցանցային ընկերության վաճառքի խորհրդատուի (դիստրիբյուտորի) համար հաղորդակցումը հանդիսանում է աշխատանքային հիմնական գործիք:

Այստեղ է, որ կարևոր է դառնում այս տեսակի գործունեության նրբությունները:


Սա ներառում է զրույց, ձայնի տոնը, երանգը, ժեստիկուլյացիան, մարմնի դիրքը տարածության մեջ, այսինքն հաղորդակցման բոլոր վերբալ և ոչ վերբալ բաղադրիչները:

Այսպիսով հաշվի առնելով վերը նշված բոլոր գործոնները կարելի է ենթադրել, որ ցանցային մարքեթինգի վաճառքի խորհրդատուի աշխատանքի հաջողության ապահովման համար անհրաժեշտ են ոչ միայն հատուկ անձնային և մասնագիտական որակներ, այլև համապատասխան մոտիվացիոն բազա սեփական պահանջմունքները բավարարելու և աշխատանքի հաջողությունը ապահովելու համար: Քանի որ տվյալ մասնագիտության մեջ բավականին ուսումնասիրված է անձի մոտիվացիոն ոլորտը մենք մեր հետազոտության շրջանակներում առավել ուշադրություն ենք դարձրել վաճառողի անձնային գործոնների, հուզական ոլորտի և վարքի վերահսկման լոկուսի դրսևորման առանձնահատկություններին:

Այժմ ներկայացնենք մեր հետազոտության արդյունքների վերլուծությունը:

ԱՆՁՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՄՊԱՌՈՂՆԵՐԻ ՄՈՏ

Փորձարարական խմբերի հոգեբանական առանձնահատկությունները ուսումնասիրելու համար կիրառել ենք Կետտելի անձնային գործոնների բացահայտման մեթոդիկան⁵⁶⁵ Թեստի արդյունքների վերլուծությունը թույլ է տվել դուրս բերել հետևյալ տվյալները:



Նկար 1. Անձնային գործոնների միջին ցուցանիշները

Աղյուսակ 1.

Անձնային գործոնների միջին ցուցանիշները և ստանդարտ շեղումները (n=30)

N	Անձի հատկանիշներ	M	σ
	Շփվողականություն	9	2,1
	Ինտելեկտ	4	1,3
	Հուզական կայունություն	7	2,2
	Իշխելու ձգտում	5	2,0
	Զսպվածություն	5	2,2
	Բարեխղճություն	10	1,6
	Համարձակություն	8	1,9
	Նրբազգացություն	7	1,9
	Կասկածամտություն	4	2,0
	Երազկոտություն	6	1,8

⁵⁶⁵ **Райгородский Д. Я.**, Практическая психодиагностика, методики и тесты, Издательский: Дом «БАХРАХ-М» Самара 2001, 664 с.

	Ուղղամտություն	7	1,6
	Տազնապայնություն	7	2,1
	Կոնսերվատիզմ	7	2,4
	Կոնֆորմիզմ	4	1,7
	Վարքի հսկողություն	9	1,4
	Լարվածություն	6	2,6
	Ինքնագնահատական	7	2,9

Վաճառողների մոտ շփվողականությանցուցանիշները փարձրեն: Նրանք միջանային փոխհարաբերություններ հեշտությամբ են հաստատում, պատրաստ են մարդկանց հետ համագործակցել: Նրանք հակված են լուծել կոնկրետ բնույթ ունեցող խնդիրներ: Որոշ իրադրություններում են կարողանում կառավարել հույզերի և զգացմունքների դրսևորումը: Հետաքրքրությունները փոփոխական են, կարող են նկատվել տրամադրության փոփոխություններ, դյուրագրգռություն: Միջանային փոխհարաբերություններում զիջող են, նրբանկատ, դյուրահավատ, ուղղամիտ, անմիջական, կենսուրախ, հանգիստ, անվրդով: Առաջնորդվում են պարտքի և պատասխանատվության զգացումով, հետևում համընդհանուր սահմանված նորմերին, կարող են դրսևորել համառություն նպատակներին հասնելու գործում: Կարող են դրսևորել նախաձեռնողականություն, ակտիվություն, ընդունել ոչ ստանդարտ որոշումներ, պատրաստ են համագործակցել անձանոթ մարդկանց հետ անձանոթ միջավայրում: Ինքնավստահ են, ունեն գործնական ուղղվածություն, իրատես են: Հեշտությամբ են լուծում գործնական բնույթ ունեցող խնդիրներ: Դժվարությամբ կարող են ընդունել փոփոխությունները, հակված են հետևելու ավանդույթներին: Կախված են խմբի կարծիքներից և պահանջներից, հակված են նրանցից սոցիալական խրախույս ստանալուն: Նպատակաուղղված են, ունեն ուժեղ կամք, կարողանում են հսկել վարքը: Ինքնաբավ են, իրատեսորեն են գնահատում իրենց հնարավորությունները: Լարվածության, ինքնագնահատականի, կոնսերվատիզմի ստանդարտ շեղումները բարձր են, այսինքն՝ այս դեպքում տվյալները ցրված են միջին արժեքի շուրջ:

Այսպիսով, ակտիվ սպառողներին բնորոշ են՝


- ◆ Շփվողականությունը
- ◆ Զսպվածությունը
- ◆ Բարեխղճությունը
- ◆ Համարձակությունը
- ◆ Վարքի հսկողությունը
- ◆ Համարժեք ինքնագնահատականը:

Վերը նշված հատկանիշները այն առավել արտահայտված անձնային գործոններն են, որոնք բնորոշում են այս ոլորտի վաճառողներին: Շփվողա-

կանությունը անհրժեշտ հատկանիշ է սպառողի հետ փոխազդեցությունն առավել արդյունավետ կազմակերպելու համար, զսպվածությունը բնորոշում է վարքի վերահսկման հմտությունների տիրապետումը, ինչպես նաև հուզական կառավարելիությունը որը կարևոր է մարքեթինգային կոմունիկացիաների հաջող ընթացքի համար: Բարեխղճությունը այն կարևոր անձնային հատկանիշն, որը կարևոր է յուրաքանչյուր տիպի մասնագիտական գործունեության իրականացման համար, իսկ այս ոլորտում անհրաժեշտ է սպառողների վառ արտահայտված թերահավատությունը վաճառքի տվյալ ոլորտի նկատմամբ հաղթահարելու համար: Համարձակությունը այս պարագայում կարևոր է արագ որոշումներ կայացնելու և անընդհատ ռիսկային իրավիճակները հաղթահարելու համար և վերջապես համարժեք ինքնագնահատականը օգնում է յուրաքանչյուր ոլորտի մասնագետին համարժեք գնահատել իր կարողությունները և անընդհատ աշխատել անձնային և մասնագիտական աճ գրանցելու ուղղությամբ:

Այժմ դիտարկենք վաճառողների հուզական ինտելեկտի հետազոտության արդյունքները⁵⁶⁶:

Հուզական ինտելեկտի միջին ցուցանիշները ներկայացված են հիստոգրամի տեսքով:



Նկար 2. Վաճառողների հուզական ինտելեկտի միջին ցուցանիշները

⁵⁶⁶Ռ.Վ. Աղուզումցյան, Լ.Հ. Պետրոսյան, Ս.Հ. Պողոսյան, Ա.Ռ. Խաչատրյան, Կառավարիչների հոգեբանական ընտրության գործընթացի առանձնահատկությունները, Կոլեկտիվ մենագրություն Եր. 2016., 208 էջ

Վաճառողների հուզական ինտելեկտը գտնվում է միջին մակարդակում: Հուզական տեղեկացվածությունը ևս միջին մակարդակում է գտնվում, այսինքն՝ նրանք մասամբ են տեղեկացված իրենց հույզերի և զգացմունքների մասին, գիտակցումն հասկանում իրենց հույզերն ու զգացմունքները: Ինքնամոտիվացիայի ցուցանիշը միջին մակարդակում է գտնվում, այսինքն՝ որոշ իրադրություններում կարող են հսկել վարքը՝ հույզերը գիտակցելու շնորհիվ: Ապրումակցման ցուցանիշները ևս միջին մակարդակում են գտնվում: Ապրումակցումն իրենից ենթադրում է այլ մարդկանց հույզերի հասկացում, այլ մարդու հուզական վիճակը հասկանալու կարողություն, ինչպես նաև օգնություն ցույց տալու պատրաստակամություն: Այն մարդու հուզական վիճակն ըստ դիմախաղի, ժեստերի, խոսքի երանգի, մարմնի դիրքի հասկանալու կարողությունն է: Այսինքն՝ նրանք կարող են հասկանալ ուրիշ մարդկանց հույզերն ու զգացմունքները, ապրումակցել, ազդեցություն գործել դրանց վրա: Ակտիվ սպառողների սեփական հույզերի կառավարումը թույլ է զարգացած: Չնայած հուզական ինտելեկտի ցուցանիշը ընդհանուր առմամբ գտնվում է միջին մակարդակում, սակայն դիտարկենք առավել արտահայտված ցուցանիշների դրսևորումները:

Այսպիսով, վաճառողներին բնորոշ են՝ հուզական տեղեկացվածության համեմատաբար բարձր ցուցանիշ, քանզի այս հատկանիշը օգնում է ճանաչել մարդու հույզերը և գործել ըստ սպառողի հուզական դրսևորումների, առավել արտահայտված են ապրումակցման ցուցանիշները քանզի այս մասնագիտության տեր անձանց համար կարևոր է սպառողի հուզական վիճակի մեջ մտնելու ինչպես նաև վերջինիս հույզերի վրա համապատասխան ազդեցություն ունենալու կարողությունը: Համեմատաբար բարձր են նաև ինքնամոտիվացիայի ցուցանիշները որոնք նպաստում են մասնագիտական գործունեության կազմակերպման և հաջող իրականացմանը: Առավել ցածր են սեփական հույզերը կառավարելու ցուցանիշները որը խոսում է այն մասին որ անձի հուզական ոլորտի զարգացման բարձրագույն մակարդակը ի վերջո սեփական հուզական կառավարելությունն է որը այս պարագայում ունի զարգացման կարիք: Քանզի մենք ուսումնասիրել ենք հիմնականում միջին օղակի վաճառողներին, ենթադրում ենք որ տվյալ ոլորտում մասնագիտական աճին զուգընթաց իրականանում է նաև հուզական ոլորտի զարգացում: Հետագայում կարևորում ենք նաև համեմատական վերլուծության ենթարկել միջի և առավել բարձր օղակի վաճառքի մասնագետների հատկապես հուզական ինտելեկտի ցուցանիշները պարզելու տվյալ ոլորտի փոխկապվածությունը մասնագիտական աճի հետ:

Եվ վերջում դիտարկենք վարքի վերահսկման լոկուսի հետազոտման արդյունքները վաճառողների մոտ:

	Ակտիվ սպառողները
էքստերնալություն	12
ինտերնալություն	18

Աղյուսակ 2

Ինչպես երևում է, ակտիվ սպառողների մեծամասնությունն ինտերնալներ են, էքստերնալներն ավելի փոքրաթիվ են: Ինտերնալներն առանձնանում են սոցիալական պատասխանատվության բարձր զգացումով, կյանքի իմաստին կենսական նպատակների բարձր գիտակցմամբ: Նրանց մեջ ուժեղ են արտահայտված շփվելու կարողությունը, շիտակությունը, անկեղծությունը, սեփական «Ես»-ի ընդունումը, ինքնավերահսկումը և հուզական կայունությունը: Նրանք ունակ են հանուն երկարաժամկետ նպատակների հետաձգելու տվյալ պահին բավարարություն ստանալու հակումը, սթրեսային իրավիճակներում և խմբային ճնշման պայմաններում դրսևորում են բարձր դիմացկունություն և տոկունություն, ըստ այդմ ինտերնալությունը զուգորդվում է ինքնուրույնության հետ: Ինտերնալներին բնորոշ է պատասխանատվության առավել բարձր մակարդակ մասնագիտական պարտականությունները կատարելիս, սակայն առկա է նաև իրական բարդ կախվածության վտանգ՝ զրկվելով ինքնակազմակերպման և ինքնավերահսկման հնարավորությունից, ավելի վատենաշխատում, քան էքստերնալները: Ուստի անհրաժեշտ է հաշվի առնել մարդկանց անհատական առանձնահատկությունները և անձի գործունեությունը (աշխատանքային, գիտական, ուսումնական, մանկավարժական) արդյունավետ դարձնելու համար փնտրելու գտնել տարբերակված միջոցներ: Ինտերնալ հսկողությամբ անձինք ավելի ակտիվ են, անկախ, աշխատանքի մեջ ինքնուրույն, ունեն դրական ինքնագնահատական, որը կապված է արտահայտված ինքնավստահության հետ և այլ մարդկանց նկատմամբ համբերատարության հետ: Այսպիսով, յուրաքանչյուր անձի ինտերնալության աստիճանը կախված է իր զարգացման և անձնային աճի նկատմամբ վերաբերմունքից: Այսպիսով ցանցային մարքեթինգի վաճառողներին՝ դիստրիբյուտորներին բնորոշ հիմնական առանձնահատկություններն են՝ շփվողականությունը, բարեխղճությունը, զսպվածությունը, հուզական տեղեկացվածությունը, վարքի վերահսկման ներքին լոկուսը (ինտեռնալությունը), համարձակությունը, ինքնամոտիվացիան, այլ մարդկանց հույզերի ճանաչումը: Հուզական ինտելեկտի ընդհանուր ցուցանիշը գտնվում է միջին մակարդակում, որը ունի զարգացման միտում, քանի որ ըստ հետազոտությունների ընդհանրական

պատկերի հանդիսանում է վաճառքի գործընթացի արդյունավետության ապահովման կարևոր գործոն:

Բանալի բառեր - հոգեբանական դիմանկար, ցանցային մարքեթինգ, մասնագիտական ընտրություն, դիստրիբյուտոր (վաճառքի խորհրդատու)

Նունե Աղասյան, Ցանցային մարքեթինգի վաճառողների հոգեբանական դիմանկարի փորձարարական վերլուծությունը - Սույն հոդվածի շրջանակներում իրականացվել է ցանցային մարքեթինգի վաճառողների հոգեբանական դիմանկարի փորձարարական վերլուծությունը: Հետազոտության արդյունքները դուրս են բերել այն հիմնական անձնային հոգեբանական առանձնահատկությունները՝ հուզական, անձնային, վարքային, որոնք կարող են նպաստել մասնագիտական ընտրության և մասնագիտական հոգեբանական որակների զարգացման հիմնախնդիրների լուծմանը:

Нуне Агасян, Экспериментальный анализ психологического портрета дистрибьюторов сетевого маркетинга - В этой статье был проведен экспериментальный анализ психологического портрета дистрибьюторов сетевого маркетинга. Результаты исследования привели к установлению основных личностных психологических особенностей: эмоциональных, личностных, поведенческих, которые могут способствовать решению вопросов профессионального выбора и профессионального психологического развития дистрибьюторов.

Nune Aghasyan, Experimental analysis of the psychological portrait of network marketing distributors - An experimental analysis of the psychological portrait of network marketing distributors was carried out within this article. The results of the study have revealed the main personal psychological peculiarities, emotional, personal, behavioral, which can contribute to the solution of the professional choice and professional psychological development issues.

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ

ԱՎԱԳ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՒՋԱԿԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԻՐԻՆԱ ՊՈՆՈՄԱՐԵՆԿՈ

Տարիներ շարունակ հասարակությունը բախվել է հուզական դժվարություններ և սոցիալական անցանկալի վարք դրսևորող երեխաների հետ և տարեցտարի արդիական է դառնում այս հարցի նկատմամբ այն հոգեբանների և մանկավարժների հետաքրքրությունները, որոնք ցանկանում են պարզել, թե որոնք են հուզական դժվարությունների և վարքային անցանկալի դրսևորումների պատճառները, որոնք են դրանց հաղթահարման ուղիները և ճիշտ է արդյոք հղժվար՝ տերմինը երեխայի հուզական դժվարությունները և վարքի խաթարված դրսևորումները բացատրելու համար:

Այսօր հստակորեն նկատվում է դաստիարակության առումով հղժվար՝ բնութագրվող երեխաների քանակական աճ: Ինչ խոսք, այդ երևույթն ունի իր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները: Օբյեկտիվ պատճառներից են սոցիալ-տնտեսական պայմանները, հասարակական հարաբերությունների անկայունությունը, սոցիալական արժեքների վերագնահատումը և այլն: Սուբյեկտիվ պատճառների թվին են դասվում անբարենպաստ ընտանիքները, դաստիարակության ավանդական մեթոդների կիրառումը, երեխայի սոցիալականացման դժվարությունները և այլն:

Երեխայի աճին ու զարգացմանը զուգընթաց առաջ են գալիս հուզական նորանոր դժվարություններ, որոնց հաղթահարումը, անշուշտ կնպաստի հասարակության բարդ պայմաններին հարմարվելու ընթացքին: Իսկ երեխայի հուզական դժվարությունների անտեսման, դրանց անընդհատ խորացման, չլուծված խնդիրների կուտակման դեպքում ի հայտ կգան վարքի անցանկալի դրսևորումներ: Արդյունքում էլ ավելի կբարդանա դաստիարակության գործընթացը և երեխան կդառնա «դժվար» դաստիարակվող:⁵⁶⁷

Այժմ փորձենք հիմնավորել նաև «դժվար» երեխա հասկացությունը:

Սովորաբար «դժվար» է համարվում այն վարքը, որը չի համապատասխանում նորմայի չափանիշներին և տարբերվում է մեծամասնության վարքագծից: Սոցիալ-նորմատիվային չափանիշի համաձայն շեղվող է համարվում այն վարքը,

⁵⁶⁷ «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես, թիվ 3-4, /Պոնոմարենկո Ի./- «Դժվար» երեխայի հուզական վարքագծի հիմնական դրսևորումները, Երևան 2005թ. էջ 81-85:

որը հակասում է սոցիալական նորմերին: Կան նաև հոգեախտաբանական, տարիքային, սեռադերային և այլ չափանիշներ:⁵⁶⁸

Բժշկական հոգեբան Վ. Դ. Մենդելիչը գտնում էր, որ հույզերի արտահայտման դժվարությունները գտնվում են հոգեբանության և հոգեբուժության սահմանագլխում՝ նորմայի և ախտաբանության միջև:⁵⁶⁹

Հոգեբանության չափանիշների տեսանկյունից՝ հուզական դժվարությունները հակասում են երեխայի անձնավորության կայացմանը, ինքնակատարելագործմանն ու ստեղծարարությանը:

Կենսաբանական մոտեցման ներկայացուցիչները գտնում էին, որ հուզական դժվարություններով և ճգժգոյությամբ վարքագծով երեխաները կենսաբանորեն լիարժեք մարդիկ են՝ ֆիզիկական, հոգեկան որոշակի թերություններով, որոնց պատճառը ժառանգականությունն է:

Պ. Ֆ. Լեսգաֆտը երեխաների հուզական դժվարությունների և վարքային շեղումների հիմք էր համարում չարդարացված պահանջմունքները, որոնք հիմնականում զարգանում են անբարենպաստ ընտանեկան մթնոլորտում, իսկ Գ. Շուլմանը գտնում էր, դրանց ակունքները թաքնված են ներընտանեկան վատ հարաբերությունների հիմքում:⁵⁷⁰

Անդրադառնալով անբարենպաստ ընտանեկան մթնոլորտին՝ Ս. Արգումանյանը հուզական դժվարությունների առաջացմանը նպաստող գործոնների շարքին է դասում հատկապես ամուսնալուծությունները, որի մասին խոսել է նաև գերմանացի հոգեբան Գ. Ֆիգդորը:

Նա գտնում էր, որ ամուսնալուծությունը խոր հետք է թողնում երեխայի վրա, որը հանգեցնում է վերջինիս մոտ հուզական և վարքային դժվարությունների առաջացման: Եվ, իսկապես, նման երեխաները գտնվում են ռիսկային գոտում և հավանականությունը շատ մեծ է, որ նրանց մոտ կձևավորվեն հուզական և վարքային մի շարք խաթարումներ:⁵⁷¹

Է. Դյուրկհեյմը, անդրադառնալով հուզական դժվարությունների և վարքային շեղումների խնդրին, առաջ է քաշել Տանոմիա՝ հասկացությունը, որը հասարակական չափանիշային համակարգի անկազմակերպ, քայքայված վիճակն է, այսինքն՝ սոցիալական ապակառուցողականությունը:⁵⁷²

Անոմիան կարող է առաջանալ նաև ներանձնային ճգնաժամի հետևանքով, որը կարող է ամբողջովին փոխել երեխայի համոզմունքների ողջ համակարգը՝ վերափոխելով նրա բարոյական չափանիշների դիրքորոշումները: Նա նշում էր նաև,

⁵⁶⁸ Выготский Л. С. Трудное детство, Собр.соч. Т. 5. М., 1983 с. 137-149.

⁵⁶⁹ Менделевич В. Психология девиантного поведения., **Издательство:** «Речь» 2004, 445с.

⁵⁷⁰ Лесгафт П.Ф. Избранные педагогические сочинения.//сост. И.Н.Решетень, М., 1990, -400с.

⁵⁷¹ Фигдор Г. Дети разведенных родителей. М., Наука, 1995.-376 с.

⁵⁷² Дюркгейм Э. Метод социологии. <<Западно-Европейская социология XIX-начало XX века, М., 1996, с. 256-309.

որ անումիան առաջանում է այն պատճառով, որ հին նորմերն այլևս չեն համապատասխանում իրականությանը, իսկ նորերն էլ դեռ չեն ձևավորվել:

Ըստ դիֆերենցված ասոցիացիայի տեսության վարքն այն ժամանակ է միայն համարվում խաթարված, երբ նկատելի է դառնում այլ մարդկանց ուշադրությունը վերջինիս նկատմամբ:

Սոցիոլոգիական տեսությունների շարքին են դասվում Ս. Ա. Երոֆեևի «Ժամանակակից տեսակետներ» աշխատության մեջ ներկայացված Է. Լեմերտի, Տ. Հոֆմանի, Գ. Բեկկերի կողմից մշակված տեսությունները, երբ վարքային և հուզական դժվարությունները անձի պիտակավորման հետևանք են, երբ երեխայի գործողությունները հարաբերակցվում, համեմատվում են վերացական կանոնների, նորմերի հետ: Աստիճանաբար ձևավորվում է անձի բացասական հատկանիշը, ինչը ստիպում է երեխային հարմարվել այդ դերին:⁵⁷³

Գ. Բեկկերը գտնում էր, որ անումիան առկա է յուրաքանչյուր հասարակության մեջ, որը սոցիալականացման թերությունների հետևանք է:

Ա. Ա. Բելիչևան վկայում է որ, հույզերի դրսևորման դժվարությունները հանդիսանում են սոցիալական անբարենպաստ զարգացման արդյունք, որն ի հայտ է գալիս տարիքային տարբեր փուլերում՝ ներառելով նախադպրոցական տարիքը:⁵⁷⁴

Որոշ հեղինակներ (Վ. Մուխինա, Լ. Ֆիլոնով և այլոք) գտնում են, որ ավագ նախադպրոցական տարիքում հուզական և վարքային դժվարությունները բնական և նորմալ երևույթ են, քանի որ նպաստում են երեխաների անհատական փորձի ընդլայնմանը, վարքի փոփոխությանը և հասակակիցների հետ հարաբերությունների զարգացմանը:⁵⁷⁵

Ս. Ջ. Արգումանյանը, կատարելով մի շարք հետազոտություններ, հանգեց այն եզրակացության, որ հուզական դժվարությունների և վարքային շեղումների առաջացմանը նպաստող գործոնը սոցիալական միջավայրն է՝ իր դրական և բացասական ազդեցություններով, ուր ապրում և դաստիարակվում է երեխան:⁵⁷⁶

Վ. Բելխտերովը, անդրադառնալով ավագ նախադպրոցականների հուզական և վարքային դժվարություններին, հետազոտության կարևոր օբյեկտ էր համարում սոցիալ-տնտեսական գործոնների վերլուծությունը: Նա գտնում էր, որ հուզական դժվարությունների և վարքային շեղումների առաջացմանը նպաստում է երեխայի զգացմունքային, կամային, մտավոր, իմացական ոլորտների դեֆորմացիան:⁵⁷⁷

⁵⁷³ Контексты современности-2, Ерофеев С.А., Казань, Изд.-во КГУ, 2001,-188с.

⁵⁷⁴ Беличева С.А. Основы превентивной психологии. – М.: РИЦК Социальное здоровье России, 1994. – с.-27 /221 с./

⁵⁷⁵ Мухина В.С. Возрастная психология, М., 1997, с.-61-69

⁵⁷⁶ Арзуманян С. Д. Микросреда и отклонение социального поведения детей и подростков, Изд.-во <<Луис>> Ереван 2010-254 с.

⁵⁷⁷ Бехтерев В.А. Избранные работы по социальной психологии. М., Наука, 1994,-400с.

Լ. Ս. Վիգոտսկու կարծիքով նորմային բացարձակ համապատասխանող վարք գոյություն չունի, միշտ էլ որոշակի շեղումներ պատահում են, սակայն երբեմն այն հասնում է քանակական այն չափանիշին, երբ ստանում է ճղվարձ վարք անվանումը:

Վարքի անոմալ դրսևորումները բաժանվում են՝

- երկարատև և պատահական,
- երկարատև և հաստատուն (ներոգ, պսիխոգ և այլն)
- վարքի մշտական շեղումներ:⁵⁷⁸

Այսպիսով, հոգեբանամանկավարժական գրականության վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ ավագ նախադպրոցականների հուզական դժվարությունների և վարքի շեղումների հիմնահարցը շատ արդիական է, բայց և փաստում է այն մասին, որ այդ հետազոտությունները դեռևս բավարար չեն խնդրի լուծման համար: Այն լուրջ ուսումնասիրության կարիք ունի և պահանջում է հետևողական մեծ աշխատանք:

Բանալի բառեր - ավագ նախադպրոցական, հուզական դժվարություններ, հոգեբանամանկավարժական վերլուծություն:

Պոնոմարենկո Իրինա, Ավագ նախադպրոցականների հուզական դժվարությունների հոգեբանամանկավարժական վերլուծությունը - Տարիներ շարունակ հասարակությունը բխլվել է հուզական դժվարություններ և սոցիալական անցանկալի վարք դրսևորող երեխաների հետ և տարեցտարի արդիական է դառնում այս հարցի նկատմամբ այն հոգեբանների և մանկավարժների հետաքրքրությունները, որոնք ցանկանում են պարզել, թե որոնք են հուզական դժվարությունների և վարքային անցանկալի դրսևորումների պատճառները, որոնք են դրանց հաղթահարման ուղիները և ճիշտ է արդյոք «դժվար» տերմինը երեխայի հուզական դժվարությունները և վարքի խաթարված դրսևորումները բացատրելու համար: Ուստի, այս հոդվածում, փորձել ենք անդրադառնալ վերը նշված հարցերի հետազոտմանն ու վերլուծությանը:

Пономаренко Ирина, Анализ психо-педагогических эмоциональных трудностей у старших дошкольников - Многие годы, общество сталкивается с эмоциональными трудностями и с проявлением социально-нежелательного поведения у детей. Год за годом эта проблема становится актуальной для тех психологов и педагогов, которые хотят выяснить причины эмоциональных трудностей и проявлений нежелательного поведения, а так-же выяснить методы их преодоления, и необходимость употребления термина „трудный“, для объяснения эмоциональных трудностей и нежелательных проявлений в поведении детей.

⁵⁷⁸ Выготский Л. С. Трудное детство, Собр.соч. Т. 5. М., 1983 с. 137-149.

Именно, исследование и анализ вышеупомянутых вопросов, затронуты в этой статье.

Irina Ponomarenko, The psychological and pedagogical analysis of emotional problems of senior preschool children - For many years the society is faced with the emotional difficulties and the manifestation of social and undesirable behavior in children. Year by year, this problem becomes actual for the psychologists and pedagogues, who want to find out the reasons of emotional difficulties and manifestations of undesirable behavior, and whether “difficult” term is the right term to describe the children with emotional difficulties and distorted behavior.

So, this article is referred to the review and analysis of the above mentioned issues.

**«ԴԻԶԱՅՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՏԵՍԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ
ՄԵԹՈԴԻԿԱՆ**

ՄԱՐՏԻՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Դիզայնի պատմություն տեսական դասընթացն ընդգրկված է Հայաստանի, ինչպես նաև արտասահմանյան մի շարք արվեստի բուհերի ուսումնական ծրագրերում: Հայաստանյան արվեստի բուհերում դասընթացն իրականացվում է 30-45 ժամերի ընթացքում, հիմնականում դասախոսություններով: Մասնագետները նյութերը, ինչպես նաև դասախոսությունները ներկայացնում են հիմնականում արտասահմանյան գրականության նմուշներից ու ինտերնետային կայքերում տեղ գտած հոդվածներից, քանի որ առկա չէ դիզայնի պատմության տեսական դասընթացի ուսումնամեթոդական Տթարմ! ձեռնարկ կամ աշխատություն, իսկ եղած նյութերը և գրականության նմուշները ունեն թարմացման կարիք, իսկ դիզայնի պատմությանը վերաբերող նյութերն ավելանում են օրեցօր. դիզայնը դեռևս համարվում է զարգացող մասնագիտություն, իսկ նրա տեսակները տարեցտարի ընդարձակվում և ճյուղավորվում են, ինչն էլ դարձնում է դասավանդման պրոցեսը մի կողմից ավելի հետաքրքիր և հագեցած, մյուս կողմից դժվարամատչելի, քանի որ դասավանդողները պետք է լիովին տիրապետեն նոր նյութերին ու մեթոդներին:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում, որտեղ առկա է դիզայն մասնագիտությունը 2017-2018 ուսումնական տարում նույն մասնագիտության 4-րդ կուրսերում առաջին անգամ անցկացվեց դիզայնի պատմություն տեսական դասընթացը, որը նախապես մշակվել էր ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու և դիզայնի պատմության դասախոս Մարտին Հարությունյանի կողմից: Քանի որ դասընթացի մշակված մեթոդիկան տվեց դրական արդյունք. այն դրական արձագանքի արժանացավ թե՛ ուսանողների, և թե՛ պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից, ուստի ներդրված մեթոդը համարում ենք արդյունավետ և կարևոր. այժմ հակիրճ կներկայացվի դասընթացի ուսումնամեթոդական նյութը:

Դասավանդման պրոցեսը ճիշտ կազմակերպելու, հետաքրքիր և հագեցած դարձնելու, ինչպես նաև դրական վերջնարդյունքներ ունենալու համար անհրաժեշտ են հետևյալ գործողությունները.

1. Դասավանդման ողջ ժամաքանակը բաժանել 3 հավասար մասերի:
2. Առաջին հատվածում պետք է ընդգրկել միայն դասախոսություններ, որոնք պետք է պարունակեն համաշխարհային դիզայնի պատմությանը վերաբերող նյութեր՝ սկսած միջնադարից մինչև

մեր օրեր (Եվրոպա, ԽՍՀՄ, ԱՄՆ, Արգենտինա, Բրազիլիա, Ճապոնիա, Չինաստան, ԱՄԷ, Հայաստան): Անհրաժեշտ է ներկայացնել նաև տվյալ ժամանակահատվածի արդյունաբերական, կիրառական արվեստի դիզայն-նախագծերն ու համաշխարհային հնչեղություն ունեցող ճարտարապետական կառույցներն ու ինժեներական նախագծերը:

3. Դասախոսություններն, իհարկե, պետք է ուղեկցվեն լրացուցիչ նյութերի քննարկումներով, հարց-պատասխանով:
4. Դասավանդման երկրորդ մասը պետք է հատկացնել ուսանողների ինքնուրույն առաջադրանքներին, որոնք պետք է ներկայացվեն ռեֆերատի տեսքով և պետք է քննարկվեն լսարանում, որոնց ներկայացմամբ ուսանողները կտիրապետեն լրացուցչ. նյութերի, ինչպես նաև դիզայնի ու դրա ճյուղերի տվյալ ժամանակահատվածի ակտուալ նախագծերին: Ուսանողները նյութերը պետք է փնտրեն հիմնականում համացանցից, կատարեն թարգմանություններ և նյութը ներկայացնեն ինֆորմատիվ տեսքով՝ սլայդերով, նկարներով, հոլովակներով և այլն:
5. Դասավանդման երրորդ և կարևորագույն մաս ենք համարում վիդեոհոլովակների դիտումը: Դրանք պետք է պարունակեն ոչ միայն ձայնագրված դասախոսություններ հայերեն, ինչպես նաև օտար լեզուներով, այլև կարճամետրաժ ֆիլմեր ու հոլովակներ, որտեղ կներկայացվեն հայտնի նախագծերի ու դրանց հեղինակների բացատրությունները, նախագծերի ընթացքը և այլ կարևոր նյութեր դիզայներների կյանքի ու նրանց ստեղծագործությունների վերաբերյալ:

Ստորև ներկայացնենք նաև ինքնուրույն առաջադրանքների համար անհրաժեշտ թեմաները, որոնք ցանկալի է ներկայացնել ռեֆերատների կամ ինֆորմատիվ այլ նյութերի տեսքով՝

- Թոմաս Մալդոնադա (կյանքը և հայտնի նախագծերը),
- Էյֆելյան աշտարակ,
- Տատլինի աշտարակ,
- Դիզայնի տեսակները,
- Հայ մոդելավորողներ,
- Դիզայնի զարգացումը ԽՍՀՄ-ում,
- Դիզայնի զարգացումը նորանկախ Հայաստանում,
- ԱՄԷ (ճարտարապետություն),
- Եվրոպական նորագույն ճարտարապետություն,
- Բեմական նորագույն տեխնոլոգիաներ (Սցենոգրաֆիա),

- Բառահառույթի սաները,
- Գրաֆիկական դիզայնը Հայաստանում,
- Դիզայնի զարգացումը Ասիայում,
- ԱՄՆ (ճարտարապետություն),
- Բրազիլիա (ճարտարապետություն և արդյունաբերական դիզայն),
- Եվրոպական դիզայն-դպրոցներ:

Թեմաները բազմազան են, որոնք անհրաժեշտ է փոփոխել յուրաքանչյուր ուսումնական տարի:

Տվյալ ուսումնամեթոդական աշխատանքի դասավանդման վերջնարդյունքները ստուգելու համար առաջարկվում է 1 հանրագումարային քննություն 20 միավորով կամ 2 ընթացիկ (առանց եզրափակիչ գնահատմամբ) քննություններ՝ յուրաքանչյուրը 10-ական միավորով: Քանի որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում Կիրառական արվեստի ֆակուլտետում դիզայնի պատմություն տեսական դասընթացի ստուգումները տեղի են ունենում 2 ընթացիկ քննությունների միջոցով, ուստի ստորև կներկայացնենք 10-ական միավոր պարունակող թեստային նմուշ-օրինակը (հավելված 1): Թեստային օրինակը բաղկացած է 3 մասից՝ 1-ին մասը պարունակում է 10 հարց (յուրաքանչյուր հարց պարունակում է 4 պատասխան, 1 ճիշտ և 3 սխալ)՝ յուրաքանչյուր ճիշտ պատասխանը 0,5 միավոր. ընդհանուրը՝ 5 միավոր, 2-րդ մասը բաղկացած է 3 հարցից՝ յուրաքանչյուրը 1 միավոր. ընդհանուրը՝ 3 միավոր, իսկ վերջին՝ 3-րդ մասը պարունակում է մեկ հարց, որի վերաբերյալ ուսանողը կարող է պատասխանել ազատ ոճով՝ գրելով մինչև 10 նախադասություն, այս հատվածի ճիշտ և լիարժեք պատասխանի դեպքում ուսանողին կտրվի 2 միավոր: Ամբողջական թեստը կգնահատվի 10 միավորով՝ 5+3+2:

Բանալի բառեր - դիզայնի պատմություն, դասընթաց, մեթոդիկա, դիզայնի տեսակները, դիզայն մասնագիտություն

Մարտին Հարությունյան, «Դիզայնի պատմություն» տեսական դասընթացի դասավանդման մեթոդիկան - Ուսումնամեթոդական աշխատանքը ներառում է Հայաստանի արվեստի բուհերում «դիզայնի պատմություն» տեսական դասընթացի անցկացման մեթոդիկան, արդիական և անհրաժեշտ նյութերի թեմաներն ու մշակված քննական թեստի նմուշ-օրինակը:

Мартин Арутюнян, Методика преподавания теоретического курса “История дизайна” - В учебно-методической работе представлена методика проведения теоретического курса История дизайна” в вузах искусств Армении, темы современных и необходимых материалов, а так же разработанный образец экзаменационного теста.

Martin Harutyunyan, The Teaching Methods of the Theoretical Course “History of Design” - The teaching-methodological work includes the methodology of

the theory course “History of Design” in Armenian Art Universities, the themes of modern and necessary materials, and designed sample of exam test.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ
Դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոն
Դիզայնի պատմություն Տոմս N

Թվարկվածներից որ ՞ դիզայնի տեսակ չէ:													
Ճարտարապե տական դիզայն	☐	☐	☐	Էկոդիզայն	☐	☐	☐	Game դիզայն	☐	☐	☐	Ֆիզիկական դիզայն	☐
Ո՞րն է եղել էվրոպական ամենահայտնի դիզայնի դպրոցը:													
Բեռլինի գեղարվեստի դպրոց	☐	☐	☐	Միլանի գեղարվեստի դպրոց	☐	☐	☐	Բաուհաուզ	☐	☐	☐	Բիդիզայն	☐
Թվարկվածներից ո՞րն է դիզայն բառի հայերեն թարգմանությունը:													
Ձևավորել	☐	☐	☐	Դիզայնավորել	☐	☐	☐	Նախագծել	☐	☐	☐	Կառուցել	☐
Թվարկվածներից որ ՞ կամ որո՞նք է համարում դիզայնի ճյուղ հայտնի գեղագետ Թոմաս Մոներոն:													
Ճարտարապե տական դիզայն	☐	☐	☐	Պլաստիկ վիրաբուժությունը	☐	☐	☐	Օձանելիքի պատրաստումը	☐	☐	☐	Ճիշտ են B և C տարբերակները	☐
Ռուսական մասնագիտական գրականությունում երկար տարիներ, ո՞ր տերմինն է օգտագործվել որպես դիզայնի հոմանիշ:													
Ճարտարապե տական դիզայն	☐	☐	☐	Գեղարվեստական ճարտարապետություն	☐	☐	☐	Տեխնիկական ձևավորում	☐	☐	☐	Տեխնիկական էսթետիկա	☐
ՀՀ-ում գործող նշված ԲՈՒՀ-երից որտե՞ղ առկա չէ ԴԻԶԱՅՆ մասնագիտությունը:													
Ճիշտ են C և D տարբերակները	☐	☐	☐	Երևանի Մ. Մաշտոցի անվան համալսարան	☐	☐	☐	Ռուս-հայական սլավոնական համալսարան	☐	☐	☐	Հայաստանի ֆիզիկա-կան կուլտուրայի պե-տական ինստիտուտ	☐



1959 թ.-ի Կենցաղային դիզայնի համաշխարհային կազմակերպությունների միության գլխավոր խորհրդածոռովում, որպես միջազգային տեղմին ընտրվեց կիրառելու															
Fine Arts				Industrial Design				Design Concept				Architectural Design			
Նշել արգենտինացի հայտնի նկարիչ-դիզայների անունը, ով 1959 թ.-ին մասնակցել է Կենցաղային դիզայնի համաշխարհային կազմակերպությունների միության գլխավոր խորհրդածոռովին:															
Թոմաս Ռիվիեյրա				Թոմաս Մաքրոնալդ				Թոմաս Մալդոնադո				Թոմաս Թոմսոն			
Թվարկվածներից որն է հայտնի ռուս արվեստաբան, տեսաբան Վ. Լ. Գլազիչևի դիզայնին նվիրված գրքի անվանումը:															
«Наука и дизайн»				«О дизайне»				«Техническая эстетика»				«Дизайн в СССР»			
Որքան է Էյֆելյան աշտարակի բարձրությունը:															
300մ				450մ				650մ				690մ			

- Ընտրել ճիշտ պատասխանը X նշումով: 1-ից ավել կամ այլ նիշով նշելու դեպքում պատասխանը կհամարվի սխալ կամ անվավեր:
Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի դեպքում՝ 0,5 միավոր:

Չլրացնել

2. Ընտրել ճիշտ պատասխանը X նշումով: 1-ից ավել կամ այլ նիշով նշելու դեպքում պատասխանը կհամարվի սխալ կամ անվավեր:
Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի դեպքում՝ 1 միավոր:

"Կենցաղային դիզայնի համաշխարհային կազմակերպությունների միություն"՝ նշել անգլերեն (միջազգային) հասկացվումը:															
ICCID			☐	ISSDD			☐	IC & D			☐	ICSID			☐
Թվարկվածներից դիզայնի որ[՞] տեսակն է ընդունված անվանել "event design":															
Հարսանել ան արարողություն			☐	Ծննդյան արարողություն			☐	Արարողություններ			☐	Սեղանի ձևավորում			☐
Վոլֆգանգ Գյոթեն ժամանակին նկատել է, որ գույները մարդու մեջ արթնացնում են ...															
Գունատեսությ ան զգացողություն			☐	Հոգեբանակա և առանձնա- հատուկ տրամադրություն			☐	Դրական էմոցիաներով բանաստեղծությ ուններ գրելու ցանկություն			☐	Հիշողություննե ր			☐

☐
☐
☐

4. Ազատ ոճով պատասխանել հարցին՝ օգտագործելով դասընթացում ձեռք բերած գիտելիքները:

Մտքերը շարադրել հստակ, ընթեռնելի:

Նախադասությունները ձևակերպել հակիրճ: Շարադրել նվազագույնը 4-5 նախադասություն:

Էյֆելյան աշտարակ (կառուցումը, հեղինակը, առանձնահատկությունները)



Կախված շարադրած մտքերից և ճիշտ պատասխանից՝ առավելագույն միավորը 2:

Ընդամենը



ԹԱՏՐՈՆԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԳՈՇ ՄԱՐԳՍՅԱՆ

Գեղարվեստական արժեքավոր աշխատանքները տարիների ընթացքում չեն կորցնում իրենց նշանակությունը, այլ շարունակում են մնալ գեղագիտական հաճույքի օբյեկտներ և հիմք տալ նոր տաղանդների աճին:

Թատրոնի հոգեբանական մթնոլորտի առանձնահատկությունները, դերասանի և հանդիսատեսի միջև էներգետիկ փոխանակումը, զանգվածային ընկալումը և ինքնաբուխ հասարակական արձագանքը հնարավորություն են տալիս պնդել, որ թատրոնը ազդում է հասարակական կարծիքի վրա և ընդհանուր առմամբ կապված է հասարակության կյանքի հետ, քան այլ արվեստները⁵⁷⁹:

Թատրոնում դերասանը պետք է տիրապետի դերերի համակարգին, պետք է ըմբռնի սոցիալական կարծրատիպերը և գիտակցի իր արարքների իմաստացիությունը: Թատրոնը սոցիալական ուղղվածության ձև է, քանի որ դա զգացմունքային և ստեղծագործական բնույթ է կրում, օգնում է հանդիսատեսին օգտագործել թատերական փորձի զինանոցում ստացած տեղեկությունները: Այսպիսով, հերոսի հետ նույնացնելով, հանդիսատեսը իրեն համեմատում է սոցիալական նորմերի օժանդակության հետ, այն ունի խթան մոտեցնելու բարոյական իդեալին: Ազատ ընտրության զգացումից, գեղագիտական գոհունակությունից և ստեղծագործությունից հետո, հանդիսատեսը գնահատում է բազմակարծության մարդկային վարքը:

Արվեստի տարբեր ճյուղերի կարողությունների համատեղման և օգտագործման արդյունքում թատրոնը դիմում է մարդկային զգացմունքների, փորձի, ազդեցության ամբողջ ծավալին՝ մարդկային զգացմունքների և ունակությունների ամբողջությանը: Նա պահանջում է «թատրոնի երրորդ մասնակցից»՝ հանդիսատեսից համադրություն և երևակայության զարգացման բարձր մակարդակ: Թատրոնին բնորոշ ուշադրության և ընտրողականության մեծ ծավալը, ընկալման խիստ կազմակերպման բացակայությունը և պարտադիր տեսանկյունը որոշում են դիտողի անձի ստեղծագործական ներուժը իրացնելու իր ունակությունը⁵⁸⁰:

Դրամայում իմաստի համակենտրոնացումը սահմանափակվում է, և, համապատասխանաբար, դիտողը ստանում է կենտրոնացված կյանքի փորձ նա մի քանի ժամում ապրում է մի քանի մարդու կյանք: Միևնույն ժամանակ ամենօրյա միջոցառման ձևը պահպանվում է, քանի որ ամեն ինչ տեղի է ունենում թատրոնում, այն տեսողական է մասնավորապես, և ընթանում է հանդիսատեսի աչքի առջև: Միևնույն ժամանակ, թատրոնը այնքան էլ «բռնակալ չէ» (թեև դա կարող է ազդել և ազդեցությո-

⁵⁷⁹ Орлова Э.А. Культурная (социальная) антропология. М.: Академический Проект, 2004. - 480с.

⁵⁸⁰ Берн Э. Игры, в которые играют люди. Люди, которые играют в игры. М.: Эксмо, 2008. 576 с.

յուն ունենալ հասարակության վրա նույնիսկ թատրոնից դուրս), որքան զանգվածային հաղորդակցության այլ տեսակները, կենդանի և ստեղծագործ հաղորդակցությունը հասարակությանը ազատում է ընդհանուր չափանիշներից:

Նախորդ սերունդներից ժառանգված բարոյական արժեքների հիմքը մեծապես ձևավորվել է անցյալի թատրոնի ազդեցությամբ: Թատրոնը այսօր սահմանում է ոչ միայն մեր ներկայիս աշխարհայացքը:

Ըստ Ստանիսլավսկու. «Արարման պահին, բառերը ստեղծվել են բանաստեղծի կողմից, ենթատեքստը արվեստագետի: Եթե դա այլ կերպ լիներ, ապա հանդիսատեսը չէր ցանկանա ներկայացումը դիտել, տեսնել դերասանին, այլ կնախընտրեր տանը գիրք կարդալ: Այսպիսով թատրոնում ծնվում է ենթատեքստ: Թատրոնը գիտի, թե ինչպես կարելի է խոսել այն մասին, ինչի մասին խոսքեր գտնելն անհնար է: Թատրոնի ոլորտում ճանաչողական գործառույթի «կոնկրետ գոյությունը» ինչ-որ չափով գիտակցաբար կամ նույնիսկ անգիտակցաբար կատարում է հանդիսատեսը»⁵⁸¹:

Իրականում, թատրոնը կյանքի լավագույն դպրոցն է, քանի որ այն գործում է որպես տեղեկատվության աղբյուր, աշխարհի, կյանքի մասին, ստիպում է մտքին աշխատել: Մարդկային գոյության իմաստի մասին մտածելու, մարդու հոգու խորքերը թափանցելու նպատակն է հետապնդում թատերական արվեստը: Այսպիսով, թատրոնի ամենակարևոր գործառույթներից մեկը ճանաչողական գործառույթն է: Դրա շնորհիվ սոցիալական փորձը փոխանցվում է մեկ սերնդից մյուսին, մեկ երկրներից և ժողովուրդներից մյուսին: Հետևաբար, անչափ կարևոր է երիտասարդ հանդիսատեսին ներկայացնել թատրոնը: «Սակայն ինչ է տեղի ունենում մարդու հետ տասնյոթ տարեկանում: Իրականում, կարծես թե ոչինչ, բայց միևնույն ժամանակ դա մեր կյանքի ամենահետաքրքիր և կարևոր տարիքն է, քանի որ տասնյոթ տարեկան տղան հանդիպում է մի տղամարդու, իսկ աղջիկը՝ կնոջ: Եթե մենք թոչուն լինեինք, այդ ժամանակ մեզ կբացահայտեին մեր հայրենի բնից, բայց քանի որ մենք թոչուն չենք, այլ մարդիկ, մենք կարող ենք գնալ թատրոնում սովորելու»⁵⁸²:

Թատերական արվեստի ճանաչողական գործառույթի հետ միասին, օրինականորեն գոյություն ունեն մի շարք այլ (գեղագիտական, զվարճալի, հաղորդակցական, ընկերակցող, շփվող, փոխհատուցողական, նորմատիվ և այլն), բազմաֆունկցիոնալ և հետևաբար հասարակության կյանքում կարևոր տեղ զբաղեցնող գործառույթներ:

Զվարճանքի գործառույթը ներառում է բեմադրության կողմնորոշումը անհարմար իրավիճակներում, հանդիպումը սիրելի դերասանների հետ, բեմադրության վառ զվարճանքը (երաժշտություն, լույս, դեկորացիա, հագուստ): Այս գործառույթը սերտորեն կապված է շփվող գործառույթի հետ: Թատրոնը, շոուն աճել է ազգային

⁵⁸¹ Станиславский К.С. Собр. Соч. В 9 т. М.: Искусство: Московский Художественный театр, 1999.

⁵⁸² Simhandl P. - Theatergeschichte in einem Band. Berlin: Henschel Verlag, 2001.-555 p.

տոնից, ծեսից, որի պայծառ պահերը բոլոր մասնակիցների գործունեությունն էին: Այսպիսով, գյուղատնտեսական տոների ժամանակ ցուցադրությունը համակցված էր ակցիայի հետ: Այս կամ այն ծիսակատարության մասնակիցները միաժամանակ հանդես էին գալիս ինչպես ներկայիս դերասանները: Ավանդական բանահյուսական փառատոների մյուս կողմը հիմնված է՝ փորձի, զգացմունքների, գործողությունների վրա: Այսպիսով, մենք կարող ենք ենթադրել, որ սրանք ավանդական բանահյուսական հատկություններ են, որը պետք է ազդի այսօրվա թատրոնի գնահատման վրա:

Բոլոր արվեստներից միայն թատրոնն է, որ համակցվում է բնության հետ, նմանակելով մարդկանց շփումները վերածելով այն արվեստի, այն օգնում է մարդկանց համագործակցել, ինչ որ անհայտ ձևով մարդուն հնարավորություն է տալիս ստեղծել նորանոր հարաբերություններ, հավատալ ինքն իրեն: Այսպիսով, թատրոնի հաղորդակցական գործառույթը պատասխանատու է հասարակության ամբողջականության պահպանման համար: Սա այն գործառույթն է, որը թույլ է տալիս հասարակությանը այն դիտել, որպես հատուկ սոցիալական արժեք, հասարակության համար⁵⁸³:

Խաղը հասկանալուց հետո ազատ գեղարվեստական ստեղծագործությունից ելնելով, Ֆ. Շիլերը կառուցեց իր գեղագիտական գործունեությունը: Իսկ հայտնի հոլանդացի մշակութաբան Ջ. Հեյզինգը խաղի մեջ տեսավ մարդկային էության ամենակարևոր դրսևորումը: Խաղը պահանջում է մասնակիցների մեկուսացում ամենօրյա կյանքում, արտադրական գործունեությունից, նորմատիվային սոցիալական միջավայրից:

Թատրոնի հասարակական գործառույթը կապված է թատրոնի արտադրանքի նորաձևության և հեղինակության հետ: Դիտել նորաձև արտադրությունը, հայտնի դերասանի մասնակցությամբ, այն միշտ էլ ունեցել է իր կարևոր նշանակությունը դիտողի բնագավառում: Այս ամենը, ինչպես նաև բազմաթիվ այլ գործառույթներ մշտական փոխազդեցության մեջ են և լրացնում են միմյանց:

Ժամանակակից թատրոնը հավատարիմ է իր բազմազանությանը: Թատրոնի բազմազանությունը, ֆունկցիոնալ փոփոխականությունը հասարակության նորմերի և գեղարվեստական չափանիշների նկատմամբ անխուսափելիորեն հանգեցնում է նրա սոցիալական գործառույթների, փոխազդեցության և «վարքի» տեսակների և ուճերի միջև փոփոխության: Իրականում թատերական գաղափարների, իմաստների, ձևերի, ոճերի, նպատակների, գնահատականների, թատրոնի կողմնորոշումների առատությունը ապահովում է գեղարվեստական մշակույթի զարգացում և վերականգնումը՝ իր կառուցվածքային տարրերի նոր համադրությամբ⁵⁸⁴:

⁵⁸³ http://www.gumer.info/bibliotek_Buks/Culture/Teatr/_117.php

⁵⁸⁴ Свобода И. Тайна театрального пространства. М.: ГИТИС, 2005. 144 с.

Դերասանը համագործակցելով խաղընկերների հետ, օգտագործում է այն միջոցները որոնք պետք են մարդկությանը անմիջական սոցիալական հաղորդակցության, առաջին հերթին խոսքի և ժեստի ստեղծման համար: Բեմում ներկայացումը ոչնչով չի տարբերվում իրականությունից, իսկ հույզերն ավելի գունագեղություն են հաղորդում ներկայացման մեջ: Դերասանների արվեստը կյանքի հաղորդակցության արվեստն է: Սա թույլ է տալիս խոսել դերասանի ստեղծած պատկերի սոցիալական ընկալման մասին, որը մենք ընկալում ենք, որպես դերասանի իրական պատկերով կոնկրետ անձ: Եթե դերի գեղարվեստական ընկալումը որոշվում է իր գաղափարական բովանդակությամբ, դերասանի վարպետությունը և խաղերի ամբողջ կառուցվածքը ընկալվում է սոցիալական հասարակության մեջ:

Կան մի շարք ապացույցներ (օրինակ, բազմաթիվ նամակներ), որ մենք տեսնում ենք դերասաններին ոչ թե որպես արվեստագետների այլ սոցիալական արժեքների կրողի: Կարևոր է ընդգծել, որ ոչ միայն դերասանի հմտությունն է հարկավոր այլ նաև հանդիսատեսի կարծիքը դերասանի նկատմամբ որպեսզի նա չմնա մշուշում: Հենց դրա համար էլ դերասանը ամեն գնով պետք է բավարարի հանդիսատեսի սպասելիքները: Միևնույն ժամանակ, պետք է հիշել, որ դերասանը հիմնականում ստեղծագործող է, և պետք է ավելի կատարելագործվել, որն էլ հանդիսանում է դերասանի հիմնական խնդիրներից մեկը:

Դերասանի և հանդիսատեսի միջև հարաբերությունները գիտակցաբար և անգիտակցաբար ձևավորվում են, նրանք լի են կոնկրետ սոցիալական բովանդակությամբ, որոնցում մարդու կյանքի ողջ տպավորությունները անբաժանելի են արվեստագետի դեր ստացած տպավորություններից: Դերասանի զանգվածային կերպարը հանդիսատեսի մտքում ձևավորվում է «պատկերի» մեջ, որի մեջ անհատը և դերասանը կազմում են «դերասանի անբաժանելի կերպարը»: Այսպիսով, դերասանի դերերի և դերասանի մարդկային հատկությունների դերը կամ համադրությունը ինքն իրեն միավորում է հանդիսատեսի մտքում ⁵⁸⁵:

Դերասանի այս կերպարը իդեալական կերպար է, նրա մեջ միշտ էլ դերասանի անձնավորությանը բնորոշ ոչինչ չկա, նրա դերերից, կերպարներից: Բայց հասարակության համար նա հանդես է գալիս որպես իրականություն, որի մեջ դերասանի անձը և այն, ինչ բնորոշ չէ, անբաժանելի են: «Նույնիսկ երբ հանդիսատեսը հնարավորություն ունի արվեստագետին տեսնելու ոչ թե դերում այլ իրականում, ապա այս դեպքում նա տեսնում է ոչ թե դերասանի գեղարվեստական փոխադրությունը հասարակության հետ, այն նրա դերակատարի դերը» ⁵⁸⁶:

Այսպիսով, «դերասանի ամբողջական պատկերը» ազդում է մեկ կամ մեկ այլ գեղարվեստական պատկերի ընկալման վրա, սակայն դերասանի դերերի բազմա-

⁵⁸⁵ Шпет Г.Г. Театр как искусство // Г.Г. Шпет. Философия и психология культуры. М.: Наука, 2007. С. 394-411.

⁵⁸⁶ Станиславский К.С. Собр. Соч. В 9 т. М.: Искусство: Московский Художественный театр, 1999.

զանությունը թույլ է տալիս բացահայտել իր ստեղծագործական ունակությունների լիարժեք լայնությունը, անտարբեր չթողնելով հանդիսատեսի կարծիքները:

Բանալի բառեր - թատրոնի հաղորդակցական բնույթ, արվեստի վերապրում, դերասանի վարպետություն, թատրոն-հասարակություն:

Գոշ Սարգսյան, Թատրոնի հոգեբանական առանձնահատկությունը, և հասարակական նշանակությունը - Հոդվածում քննարկվում է, թե որն է այսօրվա թատրոնի սոցիալական հասցեն և ինչպես կարելի է որոշել իր սոցիալ-գեղագիտական գործառույթը: Որոշարկվում է թատրոնի դերը և տեղը գեղարվեստական կրթության և անձի ձևավորման համակարգում:

Гош Саргсян, Психологическая особенность театра, его социальная значимость -В статье рассматриваются вопросы социально-эстетической функции театра, его социальный адрес, роль и место театра в системе художественного воспитания и формирования личности.

Gosh Sargsyan, The psychological peculiarity of the theater, and social significance - In article it is discussed , which one is the nowadays social address of theatre and how can decide its social-aesthetic function. The role and place of theatre is clarified in the art education and in the system of formation of a person.

ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԱՐԱԳԱՌԺԱՅԻՆ ՄԱՐԶԱԶԵՎԵՐՈՒՄ

ԳՐԻԳՈՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Սպորտային պատրաստության ցուցանիշների ներքին կառուցվածքի ուսումնասիրության առավել արդյունավետ եղանակներից է համարվում մաթեմատիկական գործոնային (ֆակտորային) վերլուծությունը: Այն հնարավորություն է տալիս բազմակողմանիորեն բնութագրել բարձր օբյեկտները, հանձինս մարզիկի սպորտային պատրաստվածության աստիճանի՝ բացահայտել գաղտնի ընթացող փոփոխությունները, որոնցով պայմանավորված են մարզական բարձր արդյունքները, կենտրոնացնել հիմնական ինֆորմացիան, որը ստացվում է նրա տարբեր ոլորտների ուսումնասիրություններից (սպորտային մանկավարժական, հոգեֆիզիոլոգիական, մրցակցային գործունեության արդյունավետության օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշներ և այլն)[1;4]: Գործոնային վերլուծությունը բխում է այնպիսի ենթադրություններից, որ կարող են լինել նաև մեր ուսումնասիրած ցուցանիշների փակ գաղտնի միավորող (ինտեգրող) համակարգեր (գործոններ), որոնք էապես բնութագրում են սպորտային պատրաստվածության ուժեղ կամ թույլ կողմերը: Գործոնային վերլուծության մեր ընտրած տարբերակը հնարավորություն ունի միատեղելու և համահարաբերակցական կապեր բացահայտելու տարասեռ բնույթի ցուցանիշներ միջև:

Գործոնը (ֆակտորը) իրենից ներկայացնում է այդ ցուցանիշների բարձր գործոնային բեռնվածությամբ (կշռով) շարային համադրություն (կոմբինացիա): Իր հերթին, յուրաքանչյուր առանձին ցուցանիշի գործոնային բեռնվածության մեծությունը բնութագրում է նրա փոփոխվելու չափաբաժինը, ինչը կարող համապատասխան դեր խաղալ գործոնի բնույթի փոփոխության առումով [2;3]:

Նախնական վերլուծությունների հիման վրա, նախապես հետազոտված 34 ցուցանիշներից (80 բարձրակարգ մարզիկներ. աթլետիկա, բռնցքամարտ, ըմբշամարտ, ծանրամարտ) գործոնային վերլուծության համար ընտրել ենք 25 առավել նշանակալիները, որոնք դրսևորել են համահարաբերակցական հավաստի կապեր մրցակցային գործունեության արդյունավետության ցուցանիշների հետ և միմյանց միջև (աղ. 1):

Ներկայացվող գործոնների վերլուծության մեջ առանձնակի ուշադրություն է դարձվել այն ցուցանիշներին, որոնք ունեն 0.40 և ավելի գործոնային կշիռ: Առանձին դեպքերում հաշվի ենք առել նաև մինչև 0.40 գործոնային բեռնվածությունները, որոնք ունեն նշանակալի մակարդակի հասնելու հակվածություն:

Աղյուսակ 1.

**Գործոն 1. Մարզական բարձր արդյունքների ցուցադրման՝ գործոնային նշանակալի բեռնվածության ցուցանիշները (r)
(բարձրակարգ մարզիկներ n=80)**

№	Ցուցանիշների և մեթոդների անվանումները	— X ± m	Գործոնային բեռնվածություն
1	5 արագ կրանիստ ծանրաձողը ուսերին, մարզիկի քաշի 75%-ով (վրկ, օբյեկտիվ գնահատական)	5.67 ± 0.031	-0,97
2	Մարզիկի հասակը (սմ, օբյեկտիվ գնահատական)	176.4 ± 1.65	+0,93
3	Վերին վերջույթների բացվածքի մեծությունը (սմ, օբյեկտիվ գնահատական)	180.8 ± 1.78	+0,91
4	Հեռանկարային նպատակի՝ աշխարհի չեմպիոն՝ իրագործում (տարի, սուբյեկտիվ գնահատական)	3 ± 0.09	-0,90
5	Ստորին վերջույթների երկարությունը (սմ, օբյեկտիվ գնահատական)	83.8 ± 1.09	+0,88
6	4x20մ մաքուրավազք (վրկ, օբյեկտիվ գնահատական)	14.65 ± 0.06	-0,86
7	Մարզիկի քաշը (կգ, օբյեկտիվ գնահատական)	70.8 ± 1.04	+0,85
8	Վազք 30մ ընթացքից (վրկ, օբյեկտիվ գնահատական)	3.46 ± 0.029	-0,85
9	5կգ գնդի նետում ցածից առաջ (մ, օբյեկտիվ գն.)	15.15 ± 0.17	+0,85
10	Հեռանկարային նպատակի՝ Եվրոպայի չեմպիոն՝ իրագործում (տարի, սուբյեկտիվ գնահատական)	2.3 ± 0.08	-0,84
11	Մրցակցային միջին արդյունքը (բալ, օբյեկտիվ գն.)	3.7 ± 0.08	+0,84
12	Հեռանկարային նպատակի՝ Հանրապետության չեմպիոնի՝ իրագործում (տարի, սուբյեկտիվ գն.)	1.2 ± 0.05	-0,83
13	Մարզական ստաժը (տարի, օբյեկտիվ գնահատական)	6.7 ± 0.22	+0,81
14	Անհատական ռեկորդ (բալ, օբյեկտիվ գնահատական)	4.7 ± 0.11	+0,80
15	Բարդ շարժողական ռեակցիա (մլվրկ, ռեակցիոմետրիա - օբյեկտիվ գնահատական)	332.5 ± 2.28	+0,76
16	Հեռացատկ տեղից (մ, օբյեկտիվ գնահատական)	2.83 ± 0.017	+0,76
17	Շարժողական տեմպի չափավորում (առավելագույն հարվածների 50%-ը, տեպինգ թեստ - օբյեկտիվ գն.)	43.5 ± 0.52	-0,71
18	Հուզական լարվածություն (ձեռքերի դինամիկ դող՝ հպում, տրեմոմետրիա - օբյեկտիվ գնահատական)	33.5 ± 0.7	-0,70
19	Առավելագույն մոբիլիզացիա (հարված 10վրկ ընթացքում, տեպինգ թեստ - օբյեկտիվ գնահատական)	74.2 ± 0.67	+0,68
20	Միսլ ռեակցիա (մլվրկ, ռեակցիոմետրիա - օբյեկտիվ գնահատական)	245/30%	-0,54
21	Չափավորված մկանային ճիգեր (առավելագույնի 50%-ը, դինամոմետրիա - օբյեկտիվ գնահատական)	37.8 ± 0.73	+0,48
22	Հուզական լարվածություն (ձեռքերի ստատիկ դող՝ հպում, տրեմոմետրիա - օբյեկտիվ գնահատական)	6.5 ± 0.46	+0,48

23	Առավելագույն մկանային ճիգեր (կգ, դինամոմետրիա - օբյեկտիվ գնահատական)	64.2 ± 0.82	-0,43
24	Վստահությունը 'Հանրապետության չեմպիոնի' իրագործման մեջ (% , սուբյեկտիվ գնահատական)	94.8 ± 1.06	+0,40
25	Պարզ շարժողական ռեակցիա (մվրկ, ռեակցիոմետրիա - օբյեկտիվ գնահատական)	172.5 ± 1.83	+0,39

Առաջին գործոնը անվանակոչել ենք որպես Մարզական բարձր արդյունքի ցուցադրման պատրաստություն:

Այն ներառում է 25 ցուցանիշներ, որոնք ունեն նշանակալի գործոնային կշիռ: Այդ շարքում տեղ են գտել առավել բարձր գործոնային կշիռ ունեցող տարաբնույթ ցուցանիշներ, որոնք կարելի է դասակարգել հետևյալ խմբերի.

1. *Շարժողական ընդունակությունների ցուցանիշներ.* արագային ուժը՝ 5 արագ կքանիստ ծանրաձողը ուսերին, մարզիկի քաշի 75%-ով (-0.97), արագային դիմացկունություն՝ 4x20մ մաքոքավազք (-0.86), արագաշարժությունը՝ վազք 30մ ընթացքից (+0.85), պայթուցիկ ուժ՝ 5կգ գնդի նետում ցածից առաջ (-0.85) և հեռացատկ տեղից (+0.76):

2. *Ֆիզիկական զարգացման ցուցանիշներ.* վերին վերջույթների բացվածքի մեծությունը (+0,91), ստորին վերջույթների երկարություն (+0.88), մարզիկի հասակը (+0.93), մարզիկի քաշը (+0.85):

3. *Մրցակցային գործունեության արդյունավետության ցուցանիշներ.* մրցակցային միջին արդյունք (+0.84), մարզական ստաժ (+0.81), անհատական ռեկորդ (+0.80), հեռանկարային նպատակների իրականացման ժամանակահատվածի սուբյեկտիվ գնահատականները՝ աշխարհի չեմպիոն (-0.90), Եվրոպայի չեմպիոն (-0.84), Հանրապետության չեմպիոն (-0.83), ինչպես նաև վստահության տոկոսը դրանց իրականացման մեջ (+0.40):

4. *Հոգեֆիզիոլոգիական ցուցանիշներ,* որոնք ընկած են մարզիկի՝ ֆիզիկական, տեխնիկական, տակտիկական և հոգեբանական պատրաստությունների հիմքում ու նպաստում են դրանց առավել արդյունավետ դրսևորմանը: Դրանք են հանդիսանում՝ *տեպինգ թեստ* - շարժողական տեմպի չափավորումը (դիֆերենցիացիա) առավելագույնի 50% (-0.71) և առավելագույն մոբիլիզացիոն ընդունակություններ (+0.68), *տրեմոմետրիա* - հուզական լարվածություն. ձեռքի դող՝ ստատիկ (-0.43) և դինամիկ (0.70), *ռեակցիոմետրիա* - շարժողական ռեակցիաներ՝ բարդ (-0.76), պարզ (0.39) և սխալ ռեակցիա (-0.54), *դինամոմետրիա* - մկանային ճիգերի դրսևորման ընդունակությունները՝ առավելագույն (+0.43) և չափավորված (դիֆերենցիացիա) 50% (+0.48):

Տվյալ գործոնի ցուցանիշների առկայությունը վկայում է սպորտային պատրաստության բարձր մակարդակի դրսևորման մասին՝ այդ թվում համապատասխան ինքնագնահատականի, հեռանկարների առկայության, մարզական - մրցակցային դրդապատճառների, բարձր հավակնության աստիճանի և դրանց իրականաց-

ման մեջ վստահության համապատասխան մակարդակի մասին: Հստակ են արտահայտված մարզիկի մոտ հոգեշարժիչ գործողությունների դրսևորման ընդունակությունները, հուզական լարվածության կանոնավորման և հաղթահարման կարողությունները, առավելագույն մոբիլիզանալու և մկանային ճիգեր դրսևորելու ու դրանց դիֆերենցիացիայի (չափավոր բաշխելու) ցուցանիշները, որոնք ապահովում են արագաուժային ընդունակությունների առավելագույն դրսևորումը: Այս գործոնի ցուցանիշները ինտեգրալ արտահայտությամբ իրենց տեղն են գտնում մարզական բարձր արդյունքների նվաճման գործում, արագաուժային մարզաձևերում:

Երկրորդ գործոնը իր բնույթով անվանակոչել ենք Մարզական ցածր պատրաստության (աղ. 2): Նրանում ներկայացված են գործոնային միջին և ցածր կշիռներով ընդամենը 13 ցուցանիշներ:

Համեմատելով առաջին և երկրորդ գործոնների ցուցանիշների բովանդակությունը, քանակակազմը, գործոնային կշիռը, հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

- ա) երկրորդ գործոնը իր մեջ ներառում է միայն 50% ցուցանիշների քանակ,
- բ) եթե առաջին գործոնում ցուցանիշների առավելագույն գործոնային բեռնվածությունը կազմել է 0.97, ապա երկրորդում՝ 0.66,
- գ) իրենից գործոնային ցածր կշռի պատճառով պատրաստության 50% գործոնները, դուրս են մնացել քանակակազմից, իսկ ներկաներն էլ նշանակալի ցածր են նախորդ գործոնում ունեցած մեծություններից,
- դ) առաջին գործոնում նշված բարձր գործոնային կշիռ դրսևորած 4 խումբ ցուցանիշներից, երկրորդում տեղ չեն գտել ինչպես ամբողջական խումբը, այնպես էլ առանձին ցուցանիշներ. օրինակ ֆիզիկական զարգացման ցուցանիշների խումբը, կամ տեղ չեն գտել՝ մրցակցային գործունեության արդյունավետության, շարժողական ընդունակությունների կամ էլ հոգեֆիզիոլոգիական կարևորագույն ցուցանիշները (աղյուսակներ 1-ի և 2-ի համեմատում), որոնք էական դեր են խաղում արագաուժային մարզաձևերում մարզիկի սպորտային պատրաստության համակարգում և հավաստի ու անմիջական կապերով կապված են մրցակցային գործունեության արդյունավետության ցուցանիշների հետ (անհատական ռեկորդ, մրցակցային միջին արդյունք, դրանց տարբերությունը):

Երկրորդ գործոնում ներկայացված ցուցանիշների քանակակազմի և գործոնային կշիռների վերլուծությունը վկայում է, որ բացակայում է մարզիկի մոտ հակվածությունը դեպի պայթուցիկ ուժի դրսևորումը, ինչը բնորոշ է արագաուժային մարզաձևերին: Դիտարկվող գործոնը բնութագրվում է որպես մարզական դժվարին նպատակների իրականացման մեջ մարզիկի ցածր հավակնության և վստահության աստիճան, ցածր են հոգեշարժիչ ցուցանիշների մոբիլիզացիոն ընդունակությունները, ինչը կարող է վնասել գործողությունների կատարման ճշգրտությանը և արագությանը, հատկապես ծանր ու բարդ խնդիրներով լի իրավիճակներում: Նման մար-

զական, հոգեֆիզիոլոգիական, շարժողական ցուցանիշները բավարար չեն մարզական բարձր արդյունքների ցուցադրման համար:

Աղյուսակ 2.

Գործոն 2. Մարզական ցածր պատրաստության գործոնի նշանակալի գործոնային կշռով արտահայտված ցուցանիշներ (r)

N	Ցուցանիշների և մեթոդների անվանումները	Գործոնային բեռնվածություն
1	4x20մ մաքոքավազք (վրկ, օբյեկտիվ գնահատական)	-0,66
2	5 արագ կքանիստ ծանրաձողը ուսերին, մարզիկի քաշի 75%-ով (վրկ, օբյեկտիվ գնահատական)	-0,63
3	Վազք 30մ ընթացքից (վրկ, օբյեկտիվ գնահատական)	-0,61
4	Հուզական լարվածություն (ձեռքերի ստատիկ դող՝ հպում, տրեմումետրիա - օբյեկտիվ գնահատական)	+0,59
5	Առավելագույն մոբիլիզացիա (հարված 10վրկ ընթացքում, տեպինգ թեստ - օբյեկտիվ գնահատական)	+0,57
6	Մխալ ռեակցիա (մլվրկ, ռեակցիոմետրիա - օբյեկտիվ գնահատական)	-0,50
7	Պարզ շարժողական ռեակցիա (մլվրկ, ռեակցիոմետրիա - օբյեկտիվ գնահատական)	-0,51
8	Առավելագույն մկանային ճիգեր (կգ, դինամոմետրիա - օբյեկտիվ գնահատական)	+0,49
9	Բարդ շարժողական ռեակցիա (մլվրկ, ռեակցիոմետրիա - օբյեկտիվ գնահատական)	-0,48
10	5կգ գնդի նետում ցածից առաջ (մ, օբյեկտիվ գնահատական)	+0,43
11	Հեռացատկ տեղից (մ, օբյեկտիվ գնահատական)	+0,41
12	Հեռանկարային նպատակի՝ Հանրապետության չեմպիոնի՝ իրագործում (տարի, սուբյեկտիվ գն.)	-0,39
13	Անհատական ռեկորդ (բալ, օբյեկտիվ գնահատական)	-0,38

Մարզական ցածր պատրաստության գործոնը իր հերթին կարող է անբարենպաստ անդրադառնալ ոչ միայն մարզիկի սպորտային պատրաստության վրա, այլ նաև հոգեբանական ոլորտին, այսինքն մարզիկը չկարողանա լիարժեք կառավարել սեփական վարքը, գործողությունները, անհրաժեշտության պահին մոբիլիզացնել պահուստային էներգիան և պատրաստվածության մյուս կողմերը, հատկապես բարդ ու պատասխանատու իրավիճակներում:

Կարգային մարզիկների մոտ նույն ցուցանիշների գործոնային վերլուծությունը առավել հիմնավոր է դարձնում սպորտային պատրաստության գործոնային կառուցվածքի ձևավորման սկզբունքն ու մեխանիզմը:

Հիմք ընդունելով հետազոտությունների արդյունքները և գործոնային վերլուծության ցուցանիշները, կառուցել ենք արագաուժային մարզաձևերում մարզական բարձր արդյունքների ցուցադրման հիմնական գործոնների մոդելային սխեմա, ինչը կարող է նաև հիմք ծառայել տարբեր մարզաձևերում մարզիկների սպորտային պատրաստության գործընթացի վերահսկման ու գնահատման համար:

Գրականություն

1. **Պողոսյան Մ.Ն.** Վիճակագրական մեթոդների կիրառումը ֆիզիկական դաստիարակություն և սպորտային պատրաստության բնագավառում. – Եր.: 2006. – 88էջ
2. **Коростелькин Б. Г.** Применение методов корреляционного и факторного анализа в психолого-педагогических исследованиях/Бюллетень Челябинского университета. Серия 5. Педагогика, психология. – 2001. – №1, стр. 46-55.
3. **Митина О.В., Михайловская И.Б.** Факторный анализ для психологов: Учебно-методический коллектор. – М.: Психология, 2001. –169с.
4. **Самсонова А.В.** Факторный анализ в педагогических исследованиях физической культуры и спорта: учеб. / СПб.: 2013. – 90с.

Բանալի բառեր - գործոնային վերլուծություն, սպորտային պատրաստություն, մարզական բարձր արդյունքներ, արագաուժային մարզաձևեր, բարձրակարգ մարզիկներ:

Գրիգոր Բարսեղյան, Գործոնային վերլուծության ցուցանիշները արագաուժային մարզաձևերում - Սպորտային պատրաստության ցուցանիշների ներքին կառուցվածքի ուսումնասիրության առավել արդյունավետ եղանակներից է համարվում մաթեմատիկական գործոնային (ֆակտորային) վերլուծությունը: Այն հնարավորություն է տալիս բազմակողմանիորեն բնութագրել բարձր օբյեկտները, հանձնա մարզիկի սպորտային պատրաստվածության աստիճանի:

Հետազոտված 34 ցուցանիշներից (80 բարձրակարգ մարզիկներ. աթլետիկա, բոքսամարտ, ըմբշամարտ, ծանրամարտ) գործոնային վերլուծության համար ընտրել ենք 25 առավել նշանակալիները, որոնք դրսևորել են համահարաբերակցական հավաստի կապեր մրցակցային գործունեության արդյունավետության ցուցանիշների հետ և միմյանց միջև:

Григор Барсегян, Показатели факторного анализа в скоростно-силовых видах спорта - Одним из наиболее эффективных способов изучения внутренней структуры показателей спортивной подготовки является факторный анализ. Это дает универ-

сальное определение сложных объектов, таких как уровень спортивной подготовленности спортсмена.

Для факторного анализа из 34 показателей (80 высококлассных спортсменов: легкая атлетика, бокс, борьба, тяжелая атлетика) из них мы выбрали 25 наиболее значительных, которые имеют сильные корреляционные связи с *показателей* эффективной соревновательной деятельности и между собой.

Grigor Barseghyan, Indicators of factor analysis in speed-power sports - One of the most effective ways of studying the internal structure of the indicators of athletic preparedness is factor analysis. This gives a universal definition of complex objects, such as the level of athletic fitness.

For the factor analysis of the 34 indicators (80 high-class athletes: athletics, boxing, wrestling, weightlifting), we selected the 25 most significant of them, which demonstrated a reliable correlative connection between competitive performance indicators and among themselves.

**ՄԻՆԶԳԻՐԱՀԱՏԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԲԱՑ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՌԻՆՈԼԱԼԻԱ ՈՒՆԵՑՈՂ
ԵՐԵՒԱՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀՆԱՐՆԵՐԸ, ՄԻՋՈՑՆԵՐԸ և
ՄԵԹՈԴՆԵՐԸ**

ՄԻՐԱՆՈՒՇ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ԼԻԼԻԹ ԱՂԼՈՅԱՆ

Հայտնի է, որ երեխայի լիարժեք հաղորդակցումը, ներկայացված տեքստային նյութի ստույգ ընկալումը և վերարտադրումը, հարցերին լիարժեք պատասխաններ տալու, սեփական եզրահանգումներն ինքնուրույն շարադրելու կարողությունը պայմանավորված են կապակցված խոսքի (երկխոսություն, մենախոսություն) զարգացման բարձր մակարդակով [5]:

Մեր կողմից անցկացված հաստատող գիտափորձի արդյունքները փաստում են, որ բաց օրգանական ռինոլալիա ունեցող նախադպրոցականների կապակցված խոսքն իր զարգացման մակարդակով էականորեն զիջում է խոսքի բնականոն զարգացում ունեցող նախադպրոցականների կապակցված խոսքին:

Այս երեխաների կողմից կազմված պատմվածքներն իրենց ծավալով փոքր են, հաճախ դրանցում դիտվում են իրադարձությունների տրամաբանական հաջորդականության խաթարումներ, պատճառահետևանքային կապերի արտացոլման դժվարություններ, ինչպես նաև դրանց բառաքերականական ձևակերպման առանձնահատկություններ [3,4,7]: .

Ինչպես վկայում են նաև բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների հետ աշխատող մասնագետների սոցիոլոգիական հարցման արդյունքները, մինչվիրահատական շրջանում այս երեխաների կապակցված խոսքի զարգացման ուղղությամբ աշխատանքներ գրեթե չեն իրականացվում, ինչի հետևանքով նրանց կապակցված խոսքը իր զարգացման որակական հատկանիշներով զիջում է բնականոն զարգացում ունեցող իրենց հասակակիցներին:

Մեր կարծիքով, սա պայմանավորված է այն հանգամանքով, որ այս երեխաների խոսքը հնչյունային ձևակերպման և արտահայտչականության (ձայնի տեմբրի) տեսանկյունից բավարար հստակ չէ, ինչով էլ պայմանավորված դիտվում են հուզականային ոլորտի առանձնահատկություններ, ինչպես նաև նրանց բնորոշ են արտահայտված սոմատիկ խնդիրներ: Վերը նշվածը յուրովի անդրադառնում է նրանց շփման գործընթացին՝ սահմանափակելով հասակակիցների հետ խաղային գործունեությունը և խոսքային հաղորդակցումը:

Բացի այդ, մասնագիտական գրականության վերլուծությունը, ինչպես նաև մեր կողմից իրականացված փորձարարական հետազոտությունները փաստում են, որ նրանց բնորոշ են նաև բարձրագույն հոգեկան գործընթացների ձևավորման առանձնահատկություններ[6,7,]:

Վերը նշված գործոնների համադրությունն էլ, մեր կարծիքով, իր կնիքն է թողնում այդ երեխաների սոցիալական հարմարեցման և հետագայում նաև՝ նրանց դպրոցական ուսուցման գործընթացի վրա:

Կողմից իրականացված հաստատող գիտափորձի արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս հստակեցնել և փորձարարորեն հիմնավորել մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող նախադպրոցականների կապակցված խոսքի զարգացման հնարավոր ուղիները:

Բաց օրգանական ռինոլալիա ունեցող նախադպրոցականների կապակցված խոսքի զարգացմանն ուղղված լոգոպեդական աշխատանքներում մենք հիմք ենք ընդունել լոգոպեդիայում խնդրո առարկայի շուրջ առկա հիմնական մոտեցումները[1.2]:

Բաց օրգանական ռինոլալիա ունեցող նախադպրոցականների կապակցված խոսքի զարգացմանն ուղղված լոգոպեդական աշխատանքի մանկավարժական գիտափորձի հիմքն են կազմել մեր կողմից մշակված հատուկ վարժությունները, առաջադրանքները, տեքստերը, հեքիաթները, խաղերը:

Փորձարարական ուսուցման ընթացքում կապակցված խոսքի զարգացմանն ուղղված լոգոպեդական աշխատանքի տարբեր փուլերում մեր կողմից արժևորվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները.

1.Բարձրագույն հոգեկան գործընթացների՝ մասնավորապես, խոսքային հիշողության և ուշադրության, ինչպես նաև վերլուծահամադրական գործունեության զարգացում,

2.Բառապաշարի և խոսքի քերականական կառույցի զարգացում,

3.Կապակցված խոսքի ձևերի՝ մենախոսության և երկխոսության զարգացում, որի շրջանակներում մեր կողմից հատկապես արժևորվել է

Ա.Երկխոսության զարգացում՝ սյուժետային նկարների հիման վրա,

Բ.Երկխոսության զարգացում՝ ըստ առաջադրված իրադրության,

Գ.Մենախոսության զարգացում՝ սյուժետային նկարի հիման վրա պատմվածքի կազմում,

Դ.Մենախոսության զարգացում՝ տեքստի վերապատմում,

Ե.Մենախոսության զարգացում՝ ստեղծագործաբար պատմվածքի կազմում, տրված պատմվածքի նախաբանի, կամ վերջաբանի ավելացում:

Կապակցված խոսքի զարգացմանն ուղղված լոգոպեդական աշխատանքն իրականացնելիս մենք կարևորել ենք հատկապես հետևյալ սկզբունքների կիրառումը՝ լոգոպեդական աշխատանքում տարբեր վերլուծիչների լայնորեն ներգրավում, լոգոպեդական աշխատանքների կազմակերպում ըստ օնտոգենետիկական սկզբունքի հաշվառման, համակարգայնության սկզբունքի կիրառում՝ լոգոպեդական աշխատանքի իրականացում խոսքի բոլոր բաղադրիչների ձևավորման և զարգացման շուրջ, երեխայի առաջատար գործունեության հաշվառմամբ, լոգոպեդական աշխա-

տանքում զննականության լայնորեն կիրառում, խոսքի և մյուս բարձրագույն հոգեկան գործընթացների փոխկապվածության կիրառման սկզբունքի արժևորում:

Մեր կողմից իրականացված լոգոպեդական աշխատանքները հիմնականում կրել են խաղային բնույթ՝ հաշվի առնելով երեխաների տարիքային շեմը և առաջատար գործունեության բնույթը:

Մեր կողմից մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող նախադպրոցականների կապակցված խոսքի զարգացմանն ուղղված աշխատանքներում կիրառվել են խաղերի հետևյալ ձևերը.

- դիդակտիկ խաղեր,
- սյուժետադերային խաղեր,
- խաղ-բեմականացումներ,
- կառուցողական խաղեր:

Խաղերի ընտրությունը մեր կողմից կատարվել է՝ հաշվի առնելով փորձարկվողների տարիքը, ընդհանուր զարգացման մակարդակը, հետաքրքրությունները, անհատական առանձնահատկությունները:

Խաղերը մեր կողմից կիրառվել են՝ նպատակաուղղված երեխաների

- ուշադրության,
- հիշողության,
- վերլուծահամադրական գործունեության,
- խոսքային ակտիվության զարգացմանը:

Բոլոր խաղերը կիրառվել են հուզական վառ երանգավորումով, որի նպատակն էր երեխաներին դրդել խոսքային արտահայտման, նրանց մոտ խոսքով ակտիվորեն հաղորդակցվելու ցանկություն առաջացնել:

Մեր կողմից լոգոպեդական աշխատանքում լայնորեն կիրառվել են նաև հեքիաթները:

Հեքիաթների հետ աշխատանքները տարվել են դրանք ունկնդրելու և հեքիաթի հերոսի բնութագրման, դրանց բեմականացման, դրանց բովանդակության փոփոխության (ըստ երեխայի ցանկության) միջոցով:

Բացի այդ, հեքիաթների միջոցով աշխատանքներ են տարվել նաև ուշադրության, հիշողության, վերլուծահամադրական գործունեության, հուզականային ոլորտի կարգավորման, խոսքային ակտիվության խթանման շուրջ:

Կապակցված խոսքի զարգացման շրջանակներում մեր նպատակն է եղել զարգացնել.

-պատմվածքում արտացոլված իրադարձությունների ստույգ հաջորդականությունը որոշելու կարողությունը,

-պատմվածքում արտացոլված իրադարձությունների միջև պատճառահետևանքային կապերն ընկալելու և մեկնաբանելու կարողությունը

-պատմվածքի գլխավոր և երկրորդական միտքը որոշելու և առանձնացնելու կարողությունը

-պատմվածքը համառոտ և ընդարձակ պատմելու կարողությունը:

Մեր կողմից իրականացվող լոգոպեդական աշխատանքի համակարգում առանձնահատուկ տեղ է գրավում բառապաշարի և խոսքի քերականական կառույցի զարգացմանն ուղղված աշխատանքը:

Բառապաշարի զարգացմանն ուղղված լոգոպեդական աշխատանքը մեր կողմից իրականացվել է հետևյալ ուղղություններով.

-պասիվ և ակտիվ բառապաշարի համալրում

-ընդհանրական հասկացությունների և փոխաբերական իմաստ ունեցող բառերի ձևավորում,

-յուրացված բառապաշարի կիրառում կապակցված խոսքի տարբեր ձևերում՝ մենախոսություն, երկխոսություն:

Խոսքի քերականական կառույցի զարգացմանն ուղղված լոգոպեդական աշխատանքը մեր կողմից իրականացվել է հետևյալ ուղղություններով.

-նախադասության մեջ բառերն ըստ դեմքի, թվի, հոլովի, ճիշտ համաձայնեցնելու կարողության զարգացում


-կապերը և շաղկապները ճիշտ կիրառելու կարողության զարգացում,

-ձեռք բերված հմտությունների կիրառում կապակցված խոսքում:

Բաց օրգանական ռինոլալիա ունեցող նախադպրոցականների կապակցված խոսքի զարգացմանն ուղղված փորձարարական ուսուցման հիմքում ներդրվել է մեր կողմից մշակված լոգոպեդական աշխատանքի օրինակելի համակարգը (գծապատկեր 1):

Մինչ վիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական աշխատանքում մեր կողմից հատկապես կարևորվել է երեխայի ծնողների և ընտանիքի ակտիվ ներգրավումը տվյալ գործընթացում: Մեր կողմից մշակվել են և ներդրվել են մի շարք խորհուրդներ՝ ուղղված այս երեխաների ծնողներին: Լոգոպեդական պարապմունքների ընթացքում մեր կողմից ստեղծվել են բազմազան իրադրություններ, որոնք ուղղված են եղել երեխաների խոսքային ակտիվության խթանմանը, կապակցված խոսքի լայնորեն կիրառմանը: Մեր կողմից լոգոպեդական աշխատանքներն իրականացվել են՝ հիմնվելով կապակցված խոսքի ձևավորման լեզվաբանական և հոգելեզվաբանական պատկերացումներին, երեխայի խոսքի բնականոն զարգացման օրինաչափություններին:

Գծապատկեր 1. Մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիայով երեխաների կապակցված խոսքի զարգացման լոգոպեդական աշխատանքի օրինակելի համակարգ



Էականորեն կարևորելով անրաժեշտ խոսքային միջավայրի ներագոյացությունը կապակցված խոսքի զարգացման համատեքստում, մեր կողմից ծնողների խորհրդատվությունը իրականացվում էր հիմնականում հետևյալ 2 ուղղություններով.

1. Սոցիալական շփման հնարավորությունների ընդլայնում (մանկական կոլեկտիվում ներգրավում, մանկական միջոցառումների մասնակցություն և այլն)

2. Ընդարձակ խոսքային արտահայտությամբ հաղորդակցման կարողության խթանում (մտքերը ընդարձակ շարադրելու կարողության զարգացում, տրված հարցերին ծավալուն նախադասությամբ պատասխաններ տալու խրախուսում և այլն)

Այսպիսով բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաներին մինչվիրահատական շրջանում բնորոշ են կապակցված խոսքի ձևավորման որոշակի առանձնա-

հատկություններ, որոնք զգալիորեն դժվարեցնում են նրանց հաղորդակցման գործընթացը: Այս համատեքստում առավել կարևորվում է մինչվիրահատական շրջանում նրանց հետ կապակցված խոսքի զարգացմանն ուղղված համակարգված լոգոպեդական աշխատանքի անհրաժեշտությունը:

Գրականության ցանկ

1. Կարապետյան Ս. Գ. Խոսքային խանգարումների շտկմանն ու խոսքի զարգացմանն ուղղված լոգոպեդական խաղեր 5-7 տ. Երեխաների համար Ե. 2008, էջ 80:

2. Կարապետյան Ս. Գ., Կիրակոսյան Ա. Ա. Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի հարստացումը/ ուսումնամեթոդական ձեռնարկ/ Ե. 2013, էջ 96:

3. Юрова, Р. А., Одинец, О. И. Особенности связной речи детей с ринолалией (дошкольный возраст), /Дефектология №1, М. 1990. С. 81-83

4. Дубов Б. М Клиническая картина при расщелинах неба// Нарушения голоса и звуко- произносительной стороны речи: часть 2: Ринолалия и Дизартрия, М. 2003, С 20-32 <http://www.studfiles.ru/preview/3539865/>

5. Глухов В.П. Формирование *связной* речи детей дошкольного возраста с общим недоразвитием речи . -- 2-е изд., испр. и доп. - М.: АРКТИ, 2004. - 168 с.

6. Чекусова Ю. Г. Психолого-педагогические условия коррекции звукопроизношения у детей старшего дошкольного возраста с открытой органической ринолалией// Научный альманах · 2015 · N 11-2(13) С. 441

7. Уклонская Д, В., Агаева В.Е. – Основные направления логопедической коррекции произносительной стороны речи при врожденных и приобретенных дефектах и деформациях челюстно-лицевой // Вестник КГУ им. Н.А. Некрасова 2016, Том 22, с.218-221

Բանալի բառեր - Բաց օրգանական ռինոլալիա, կապակցված խոսք, երկխոսություն, մենախոսություն, խոսքի բառաքերականական կառույց, բարձրագույն հոգեկան գործընթացներ լոգոպեդական աշխատանք

Միրանուշ Կարապետյան, Լիլիթ Աղլոյան , Մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի զարգացման հնարները, միջոցները և մեթոդները - Մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական աշխատանքում մեր կողմից հատկապես կարևորվել է կապակցված խոսքի զարգացման մեթոդները:

Տիրանուշ Կարապետյան, Լիլիթ Աղլոյան, Методические подходы по развитию связной речи детей с врожденными расщеленными неба в дооперационном периоде - В статье представлена проблема оказания ранней логопедической помощи детям с врожденными расщеленными неба, раскрываются методические подходы по развитию связной речи в дооперационном периоде.

Siranush Karapetyan, Lilit Adloyan, Tools and Methods for Developing Connected Speech in Children with Open Organic cleft palate Pre-Surgery - The article describes the work of children with cleft palate during period.before surgery: Methodical approaches to the development of connective speech in the preoperative period.

**ՓՈՂԻ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ
ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ**

ԱՆՆԱ ՄԻՄՈՆՅԱՆ

Փողը բոլոր ժամանակներում էլ եղել է հասարակության սոցիալ-տնտեսական, քաղաքական կյանքի բաղկացուցիչ մասը: Դրամական հարաբերությունները գոյություն են ունեցել դեռևս ստրկատիրական հասարակարգում, և այդ նույն ժամանակաշրջանից ի վեր փողը զգալի դեր է խաղում հասարակության կյանքի և առևտրատնտեսական հարաբերությունների ընթացիկ զարգացման գործում, ընդ որում, որքան զարգացած է պետությունը, այնքան ավելի ակտիվ են փողային հարաբերությունները:

Մեր հասարակության մեջ երեխա - փող հարաբերությունների, տնտեսական վարքագծի վերաբերյալ ուսումնասիրությունները դեռևս նոր են սկսվում: Այս բնագավառում ուսումնասիրությունների համար հատկապես հիմա է բացվում լայն ապարեզ: Վերջինս պայմանավորված է մի շարք հանգամանքներով.

- Սոցիալ-տնտեսական,
- Գաղափարական -քաղաքական,
- Հասարակության մեջ և գիտական շրջանակներում հետազոտության օբյեկտի նկատմամբ յուրահատուկ դիրքորոշմամբ:

Վերը նշված հանգամանքով էլ պայմանավորված են հիմնախնդրի արդիականությունը և մեր կողմից տվյալ թեմայի ընտրությունը:

Սույն աշխատանքի նպատակը երեխաների՝ փողի նկատմամբ դիրքորոշման և տնտեսական վարքագծի ձևավորման ուսումնասիրությունն ու առանձնահատկությունների բացահայտումն է:

Այս հիմնախնդրին հանգամանորեն անդրադարձել է հոգեբան Ա.Մետյուզը, որի կարծիքով շատ հոգեբանական շեղումներ՝կապված փողի հետ (պաթոլոգիկ ժլատություն, խաղամոլություն, կլեպտոմանիա, գնումներ կատարելու սևեռուն ցանկություն և այլն) արմատներով գնում են դեպի ընտանեկան խնդիրները:

Փողի անհարկի, շվայտ ծախսման վերաբերյալ Ա. Մետյուզը եկել է այն եզրակացության, որ այսպիսի վերաբերմունքը դեպի փողը և նման վարքագծի հիմքերը գալիս են վաղ մանկությունից, որը հանդիսանում է հուզական շարժունության, ծնողների, ընկերների, հարազատների, հարևանների հետ ունեցած շփման արդ-

յունք, ինչպես նաև մշակութային և կրոնական արմատացած սովորությունների և նորագույն տեխնոլոգիաների ազդեցության արդյունք⁵⁸⁷:

Մի շարք ուսումնասիրությունների ժամանակ պարզվել է, որ երեխաները իրենց փխրուն և անկայուն հոգեկան ներաշխարհով հանդերձ ավելի շուտ են հարմարվում տնտեսական ճգնաժամին և ֆինանսական սղությանը, քան՝ մեծահասակները: Այսպիսի վառ օրինակ էր Լեհաստանի տնտեսական ճգնաժամը, որի ժամանակ երեխաները իրենց կյանքի մեծ մասը ապրել էին փողային ճգնաժամի և աղքատության մեջ: Նրանցից շատերը նույնիսկ ավելի լավ գիտեին դուլարի կուրսը, քան՝ մեծահասակները: Այս իմաստով Ն. Կեդրովան գրում է. «Շատ ճշմարտություններ մեր «ծերացող» հայացքներում դառնում են անհամատեղելի, օրինակ՝ այսօրվա փոքրիկը մերկողմից ընդունվում է բազմաթիվ տարակուսանքներով, քանի որ երբեք էլ հասկանալի չի եղել և չի էլ լինի, թե ինչպես են դպրոցականները ծաղրում ուսուցչին: Դա արդյունքն է այսօրվա արագ փոփոխվող իրականության և այն անկասկածաբար, որմեր երեխաները ականատես են լինում շրջապատող աշխարհում»⁵⁸⁸:

Յուրաքանչյուր ընտանիքում ծնողները մտածում են՝ ինչպես ճիշտ կազմակերպել իրենց երեխայի ճիշտ կրթությունը և դաստիարակությունը: Այս հարցը որքան պարզ, այնքան էլ դժվար է: Դաստիարակության նպատակները և մոտիվները՝ երեխային երջանիկ, լիարժեք կյանքով ապրող վաղվա քաղաքացի տեսնելն է: Այս ամենին պետք է ուղղված լինի ընտանեկան դաստիարակության ողջ գործընթացը: Երեխաների տնտեսագիտական դաստիարակության խնդիրը ևս հեշտ չէ: Նրանում առանձնացվում են բազմաթիվ խնդիրներ, և որոնցից այսօր մենք կարևորում ենք երեխա-փող հիմնախնդիրը: Դաստիարակելով երեխաներին, մենք վաղ թե ուշ ստիպված ենք մտածել դրա մասին: Մեծահասակների անփութ վերաբերմունքը փողինկատամբ, երեխաներին նյութական խնդիրներից հեռու պահելու ձգտումը կարող է վերջիններիս մոտ դաստիարակել ընտանիքի հնարավոր տնտեսական խնդիրների մասին տեղյակ լինելու ցանկության բացակայություն:

Մյուս ծայրահեղությունը՝ փողի մասին անընդհատ խոսակցություններն են, դրանց կարևորության չափազանցումը, որը կարող է դաստիարակել շահամոլություն և նախանձ: Ծնողների բարդ խնդիրն է՝ գտնել ոսկե միջինը: Հոգեբանամանկավարժական գրականության ուսումնասիրության արդյունքում ներկայացնում ենք մի շարք մեթոդական հանձնարարականներ, որոնք արժեքավոր են ոչ միայն ծնողների, այլ՝ երեխաների հետ անմիջականորեն աշխատող հոգեբանների, մանկավարժների համար:

❖ *Վաղ տարիքից փորձեք երեխաներին տեղեկացված պահել ընտանիքի տնտեսական հոգսերի մասին:* Նա պետք է գոնե ընդհանուր առմամբ իմանա ընտանեկան բյուջեն, հիմնական ապրանքների գները՝ հաց, կաթ, միս,

⁵⁸⁷ 1, էջ 23-27

⁵⁸⁸ 3, էջ 50-52:

ձուկ, բանջարեղեն և այլն: Երեխայի զարգացմանը զուգահեռ անհրաժեշտ է նրան տեղեկացնել իրերի մասին, օրինակ՝ հագուստի, կոշիկի գների մասին: Փորձեք դա անել խաղային ձևով, կամ օրինակ՝ մաթեմատիկայի ուսուցման ձևով. «Ահա մենք գազար ունենք: Ի՞նչ արժե այն: Ահա հացը: Ի՞նչ արժե այն: Ահա կաթը: Ի՞նչ արժե կաթը: Իսկ հիմա արի հաշվենք՝ որքան արժե ողջ նախաճաշն ամբողջությամբ»: Երեխան պետք է իմանա ընտանեկան բյուջեն, ընտանիքի մոտավոր ծախսերն օրվա, ամսվա ընթացքում: Նրա համար օգտակար է պատկերացումներ ունենալ հիմնական սննդամթերքների գների մասին: Մեծանալով՝ երեխան պետք է իմանա, թե ինչ արժեն իրերը, որքան գումար է ծախսվում բնակարանի վերանորոգման, տարբեր ձեռքբերումների վրա: Ավելի մեծ երեխաները պետք է կարողանան տնտեսությունը վարել և ծնողների բացակայության դեպքում փոխարինել նրանց: Ընդ որում, խոսքը միայն նախաճաշ պատրաստելու, բնակարանը մաքրելու կարողության մասին չէ, այլև տնտեսության համար նախատեսված փողերը հաշվարկելու: Եթե ծնողները լրացուցիչ աշխատանք են կատարում, երեխաները պետք է իմանան, որ նրանք աշխատում են, որ ընտանիքում բոլորն ավելի լավ ապրեն:

❖ *Երեխաների մեջ ձևավորել գիտակցված պահանջմունքներ.* Պատմեք երեխային՝ ինչ կարիքներ ունի ձեր ընտանիքը: Բացատրեք, որ առաջին հերթին, այն գումարը, որը դուք վաստակում եք, անհրաժեշտ է ծախսել հիմնական կարիքները հոգալու համար. վճարել կոմունալները, գնել սնունդ, հագուստ և այլն:

❖ *Երեխաներին սովորեցնել տեսնել աշխատանքի և փողի միջև առկա կապը.* Երեխան պետք է հասկանա, որ ոչ ոքի հենց այնպես գումար չեն տալիս:

❖ *Պատմեք երեխային ձեր մասնագիտության մասին՝* որտեղ եք աշխատում և ինչով եք զբաղվում: Հնարավորություն դեպքում տարե՛ք երեխային ձեր աշխատավայր, ծանոթացրեք ձեր գործընկերների հետ, բացատրեք, թե որքան կարևոր է յուրաքանչյուր աշխատողի ներդրումը՝ լավ արդյունքի հասնելու համար:

❖ *Խաղացեք երեխայի հետ «Մասնագիտություններ»* խաղը: Տնային գործերը կատարելիս՝ առաջարկեք երեխային ժամանակավոր դառնալ լրագրող և պատրաստել հաղորդում «Օգտակար խորհուրդներ» թեմայով:

❖ *Սովորեցրեք երեխային ապրանք ընտրել և գնել.* Երեխայի հետ այցելեք մեծ խանութներ: Յույց տվեք նրան, թե որտեղ են գտնվում տարբեր տեսակի ապրանքները՝ հացաբուլկեղենը, կաթնամթերքը, գրենական պիտույքները, խաղալիքները և այլն: Երեխային բացատրեք, որ միևնույն ապրանքը կարող է ունենալ տարբեր ձև, չափս, գույն: Օրինակ՝ հյութը կարող է լինել և՛ մեծ, և՛ փոքր թղթե տուփերով, ապակե տարաներով, շշերով և ա այլն: Երեխայի ուշադրությունը հրավիրեք, թե ինչպե՞ս պետք է վճարել ապրանքի համար՝ կանխիկ

կամ քարտերով: Խանութ գնալուց առաջ երեխայի հետ որոշեք, թե ինչ է պետք գնել: Կարելի է երեխային ցույց տալ ապրանքների զեղչման բուկլետը և բացատրել, որ գնելով այդ ապրանքները, կարելի է այդպիսով որոշակի գումար խնայել:

Այսպիսով, ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ փողը դաստիարակում է: Վաղ, թե ուշ երեխան առնչվելու է նրա հետ: Երեխաները բավականին վաղ են բացահայտում ու հասկանում փողի և իրենց ցանկությունների բավարարման միջև գոյություն ունեցող կապը: Հետևաբար, մեծահասակները չպետք է խուսափեն դրանից և « փակեն » խնդիրը: Եթե մենք ցանկանում ենք մեծացնել ինքնուրույն, խելացի, մտածող մարդ, ապա մենք չենք կարող զրկել նրան այդպիսին լինելու փորձերի հնարավորությունից՝ սկսած վաղ տարիքից:

Գրականության ցանկ

1. Matthews A. If I think about money so much, why can't I figure it out. N.Y.: Summit Books, 1991
2. Виноградова Н. Ф., Куликова Т. А. Дети, взрослые и мир вокруг нас. — М., 1993.
3. Кедрова Н.Б. Ум, честь и совесть отмирают // Власть. 1999
4. Котюсова И. М., Лукьянова Р. С. Экономика в сказках и играх. Пособие для воспитателей. — Н.Новгород, 1994.
5. Курак Е. А. Экономическое воспитание дошкольников. — М., 2002.
6. Смоленцева А. А. Сюжетно-дидактические игры с математическим содержанием. — М., 1993.

Բանալի բառեր: փող, տնտեսական վարքագիծ, դրամական հարաբերությունները, նախադպրոցական տարիք:

Աննա Միմոնյան, Փողի և ընտանեկան բյուջեի մասին պատկերացումների ձևավորումը նախադպրոցական տարիքում - Հոդվածում ներկայացված են փողի և տնտեսական կրթության վերաբերյալ մի շարք հարցեր: Նախադպրոցական երեխաների տնտեսական կրթությունը նախադպրոցական մանկավարժության նոր ուղղություն է: Վերջին տասնամյակում գտնում են , որ յուրաքանչյուր ժամանակակից մարդը պետք է ունենան բիզնես որակներ: Հասարակության այդ պահանջները կապված են նախադպրոցական տարիքի հետ, քանի որ հենց այդ տարիքից երեխան սկսում է շփվել տնտեսական այնպիսի կատեգորիաների հետ, ինչպիսիք են՝ փողը, իրերը, աշխատանքը, արժեքը:

Анна Симонян, Деньги и формирование представлений о семейном бюджете в дошкольном возрасте - В статье представлен ряд вопросов, касающихся денег и экономического образования. Экономическое воспитание дошкольников — новое направление дошкольной педагогики. В последнее десятилетие встал вопрос о том, что любой современный человек должен обладать деловыми качествами. Эти

требования общества сделали проблему экономического воспитания актуальной уже применительно к дошкольному возрасту, так как ребенок с малых лет соприкасается с такими экономическими категориями, как деньги, вещи, труд, стоимость.

Anna Simonyan, Money and the formation of ideas about the family budget in the preschool age - The article presents a number of questions concerning money and economic education. The economic education of preschool children is a new direction of preschool pedagogy. In the last decade, the question arose that any modern person should have business qualities. These requirements of society made the problem of economic education relevant already in relation to preschool age, since a child from a small age comes into contact with economic categories such as money, things, labor, and value.

ՔՆԱՐԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հայ գրականությունը մեծ ու տարողունակ հասկացություն է, երբեմն անվերջանալի ու անպարփակ թուացող գիտություն: Դասաւանդող մասնագէտից պահանջում է նիւթը համակարգելու, դասդասելու եւ լսարանին մատուցելու ճանաչողական ջանքեր: Սա վերաբերում է թէ՛ հեղինակների, թէ՛ նրանց ստեղծագործությունների ծաւալային ընդգրկումների, թէ՛ ասելիքի ուղղութեան հարցադրումներին: Դասաւանդողից ակնկալում է ոչ միայն գիտելիքների կայուն պաշար հաղորդել ուսանողներին, այլեւ հաշուի առնել եւ չմոռանալ նաեւ ոչ երկրորդական մի հանգամանք, այն, որ մանկավարժական հաստատությունում գործ ունենք ապագայ մանկավարժների հետ, որոնք վաղը դպրոց են մտնելու: Հարկ է, որ սովորողները հնարաւորինս տիրապետեն վաղն իրենց վստահուելիք նիւթին: Այսինքն՝ այստեղ կարելոր է ոչ միայն սովորեցնելը, այլեւ յետագայում այդ գիտելիքն իբրեւ գործիքակազմ գործածելու հնարաւորություն ընձեռելը:

Առարկայի դասաւանդումը առաջին հայեացքից իրագործելի է թուում մէկ ու միասնական չափանիշի կիրառութեամբ, այսինքն՝ գրողի դիմանկարի ու ստեղծագործական ընդհանուր տիպաբանութեան վերհանումով: Ի հա՛րկէ, չմոռանանք ինտերակտիւ քննարկումների եւ նորագոյն այլ մեթոդների գործածութեան պայմանն ու անհրաժեշտութիւնը, ուսանողներին ուսումնառութեան գործընթացում իբրեւ ակտիւ, գործուն կողմ դիտարկելու նախապայմանը:

Խ. Աբովեանի անուան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանում մեր աշխատանքի ընթացքում, եւ այս եզրակացութեան յանգել ենք նաեւ ուսանողների պրակտիկայի շրջանակներում դպրոցների հետ մեր ունեցած գրեթէ ամէնօրեայ շփումների արդիւնքում, նկատել ենք, որ որոշակի վերապահումով կամ աւելի ճիշդ՝ ուշադրութեամբ պիտի վերաբերուել արեւմտահայ հեղինակների դասաւանդմանը, որովհետեւ առանձնապէս գաղտնիք բացած չենք լինի, եթէ ասենք, որ մեր ուսանողութեանը այս հեղինակները համեմատաբար դժուարութեամբ են տրւում: Բայց սա չի նշանակում, թէ այդ մասնաւոր ուշադրութիւնը պիտի յանգեցնի նիւթի ոչ լիարժէք մատուցման կամ ստեղծագործությունների ուսումնասիրման կրճատման:

Մենք նկատի ունենք այդ հեղինակների դասաւանդման ճանապարհին դասախօսի որոշակի ծանրաբեռնուածութեան գործօնը, երբ նա ստիպուած է երկու հատուածների հեղինակների մատուցման զուգակշիռը պահելու համար գործածել որոշակի մեթոդաբանութիւն:

Որո՞նք են այն շեշտադրումները, որոնք առաւել արդիւնաւէտ կը դարձնեն «հայ գրականություն» առարկայի ամբողջական ընկալումը, երբ մասնաւոր բանասիրական բաժանմունքի բակալարիատում այն աւանդում է իբրեւ միասնական գրակա-

նութեան բաղադրիչ, եւ նուագագոյնի կը հասցնեն արեւելահայ եւ արեւմտահայ հեղինակների՝ ուսանողների կողմից իւրացման տարբերութիւնները:

Այստեղ, գուցէ ցաւ ի սիրտ, բայց գործում է ամէնից մեծ պատնէշը՝ լեզուամտածողութեան տարբերութիւնը, ինչը ըստ էութեան բաւական դժուարամարս է դարձնում նիւթի ընկալումը ուսանողութեան շրջանում: Ամէն մի չնչին տարբերութիւն իր իմացած, ճանաչած լեզուական կաղապարներից ուսանողի (հետեւաբար վաղը նրա աշակերտի) մօտ նորանոր հարցեր կարող է առաջացնել:

Նախ, ուսանողներին պէտք է բացատրել, որ գրականութեան մի շրջափուլից անցումը միւսին պայմանաւորուած է գրամշակութային կեանքում որոշակի որակական տեղաշարժերով, որոնք էլ արձանագրում են մի նոր համակարգի ծնունդը: Այդ տեղաշարժերն են ձեւաւորել նոր եւ նորագոյն շրջանների տարբաժանումները:

Կարելոյ է, որ հենց նոր շրջանի գրականութեան պատմութեանը վերաբերող ներածական դասախօսութեան մէջ պահպանուի արեւելահայ եւ արեւմտահայ գրամշակութային համակարգերի զուգակշիռ քննութեան պահանջը, համամասնօրէն տրուեն մամուլի, գրական դեմքերի, միջավայրերի տարբերակումները, լեզուական իւրայատկութիւնները, ինչը նախապայման է նաեւ յետագայում ուսանողութեան մէջ սովորույթի կարգ անցած շփոթներից խուսափելու համար:

Գրականութեան ուսուցանումը միջառարկայական կապերի լայն հնարաւորութիւն է բերում, որոնք մասնաւորապէս առնչւում են աշխարհագրութեան, պատմութեան եւ այլ գիտակարգերի: Եւ սա բխում է գրականութեան պատմութեան տուեալ շրջանի առանձնայատկութիւններից: Այսպէս, պէտք է կողմնորոշել ուսանողին, որ աշխարհագրական առումով հայ նոր գրականութիւնը գրեթէ գերազանցապէս զարգացել է բնօրրաններից դուրս, ինչպէս Նոր Նախիջեւանում, Թիֆլիսում, Մոսկուայում, Պետերբուրգում կամ Զմիւռնիայում, Պոլսում, Վենետիկում, Վիեննայում եւ այլուր: Սովորողների օգնութեամբ պիտի յստակօրէն տարբերել այս կենտրոնները:

Գաղտնիք չէ, որ այսօր մեր ուսանողների մեծ մասը չի տիրապետում տարրական ճանաչողական գիտելիքների, երբ, ասենք, Կիլիկիայի քաղաքները՝ Զէյթունը, Ադանան, Հաճընը, Մարաշը, Սիսը, այդ թւում եւ, ասենք, «թուրքական» Պոլիսը, ներառում է «Արեւմտեան Հայաստան» հասկացութեան մէջ: Երբեմն նրանք, միջավայրերի զանազանութիւնը չհասկանալով, անբերեակայելի էքսկուրսիա-ճամբորդութիւններ են կատարում, երբ օրինակ՝ առանց վարանելու Մկրտիչ Պէշիկթաշլեանին ուղարկում են սովորելու Մոսկուա, իսկ Սունդուկեանին եւ Մուրացանին՝ Պոլիս:

Դասընթացն առաւել հետաքրքրական դարձնելու նպատակով զուտ մի քանի փաստական տուեալների շուրջ համադրական աշխատանքը նոյնպէս կարող է օգտակար լինել ուսանողութեան մշակութային ճանաչողութեան համար, ինչպէս ասենք այն, որ առաջին աշխարհաբար պարբերականը՝ «Արշալոյս Արարատեանը»,

1840-ին լոյս է տեսել հենց արեւմտահայերէնով, Զմիւռնիայում⁵⁸⁹, որ առաջին հայկական դպրոցը՝ Մեսրոպեան վարժարանը, 1875-ին բացուել է նոյնպէս Զմիւռնիայում⁵⁹⁰: Ուսանողներին պիտի յիշեցնել, որ Զմիւռնիան կամ Իզմիրը, ճիշդ է, հայաշունչ, բայց ոչ հայկական բնակավայր է, ինչպէս յաճախ կարծում են նրանք, եւ ոչ միայն նրանք:

Մանկավարժ ուսանողների հետ տեւական աշխատանքում այսպիսի բացատրութիւնները անհրաժեշտ են համակողմանի գիտելիքի խորացման տեսանկիւնից: Ի հաւրկէ, առանձին դէպքերում սովորողներին կարելի է մղել ինքնուրոյն որոնումների, բայց այնքանով, որքանով այդ հարցերի պատասխանները հնարաւոր է «յետաձգել», եւ այնքանով, որքանով դա բխում է դասի նպատակներից:

Առանձին ու հիմնաւոր քննութեան նիւթ պիտի դարձնել Մխիթարեան Միաբանութեան գործունէութիւնը՝ եւ՛ հրատարակչական, եւ՛ նախորդ շրջանի հայ գրական արժեքների մեկնութեան, եւ՛ ինքնուրոյն գրականութեան ստեղծման ճանապարհին, ինչը բոլորովին էլ չի բխում արեւմտահայ հեղինակների հանդէպ «պահանջուող» ուշադրութեան պայմանից:

Արեւմտահայ հեղինակների դասաւանդման առարկայական դժուարութիւններից մէկն էլ կապ ունի ուսանողների նախնական գիտելիքների անբաւարար մակարդակի հետ: Արեւելահայ հեղինակները որոշ չափով «մարսուած են» հանրակրթական դպրոցից, աւելին՝ սովորողները այս պարագայում հեղինակների հետ նոյն լեզուակիրներն են: Իսկ ահա արեւմտահայ շատ հեղինակների պարագայում ծանօթութիւնը առաջին անգամ է տեղի ունենում:

Նոր շրջանի գրականութեան ուսումնասիրութեան ոլորտում հանդիպող առաջին արեւմտահայ հեղինակը Հայր Դեւոնդ Ալիշանն է, ուստի հենց այս գրողին անցնելիս դասաւանդողը պիտի լուրջ ուշադրութիւն դարձնի այն հիմնական տարբերութիւններին, որոնք առկա են արեւելահայ եւ արեւմտահայ բնագրերի միջեւ: Դ. Ալիշանի բնագրի ընկալումն առաւել դժուար է, քանի որ նրա աշխարհաբարի մէջ դեռեւս կենսունակ են գրաբարեան մտածողական շերտերը: Չմոռանանք կրկնել, որ նա Մխիթարեան միաբանութեան անդամ էր, իսկ Մխիթարեանները գրապայքարի մէջ պահպանողական թէն էին կազմում, թէպէտ ոչ այնքան սուր կերպով, ինչպէս ասենք, յետադիմականներ Յովհաննէս Չամուռճեան-Տէրոյենցը կամ Գաբրիէլ Այվազովսկին, որոնց դէմ սուր ճակատ կազմեց Միքայէլ Նալբանդեանը (յիշենք թէկու՞զ վերջինիս «Երկու տող» պամֆլետը կամ «Մանկութեան օրեր» յայտնի բանաստեղծութիւնը):

Ելնելով ուսանողների համար արեւմտահայ բնագրի դժուարամարս լինելու հանգամանքից՝ պիտի որոշակի բացատրութիւններ տրուեն տեքստի շուրջ՝ անգամ

⁵⁸⁹ «Հայ պարբերական մամուլը» / մատենագիտական համահաւաք գրացուցակ (1794-1980), կազմեց՝ Մ. Ա. Բաբլոյեան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., Եր., 1986, էջ 25:

⁵⁹⁰ **Քօւեան Յ.**, Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս, Վիեննա, Մխիթարեան տպ., 1899, էջ 117-118:

պատկերից առաջ բառային մակարդակում: Դիմենք «Հայոց աշխարհիկ» բանաստեղծության ընկալման շերտերին:

Նախ, եթե ոչ ամբողջապես, ապա կարելի է ընթերցել բնագրից բնութագրիչ հատուածներ.

Այլ ես Նահապետ ցամքած ծերունիս՝
Երթամ մեր հին **հարցն** տամ աւետիս,
Ասեմ, թէ գարուն **երեկ** տան Հայոց,
Դուք Նահապետիս ասացէք՝ Հոգւո՛ց⁵⁹¹:

Այստեղ առ նուազն երեք բառ կարող է բացատրութեան կարիք ունենալ: Նախ՝ արեւմտահայ լեզուամտածողութեան մէջ **այլ** բառը գործածուում է նաեւ **իսկ**, **բայց** իմաստներով: **Երեկ**-ը կապ չունի նախորդ օրուայ հետ, այլ նշանակում է **եկաւ**⁵⁹²:

Վերլուծութեան ժամանակ բանաստեղծութեան պատկերներին մեր անդրադարձը ցոյց է տալիս, որ ուսանողութեան բացարձակ մեծամասնութիւնը չի կարողանում հասկանալ **հարց** բառի նշանակութիւնը, որն էլ իր հերթին աղճատում է պատկերի ընկալումը: **Հին** յատկանիշը նրանց մտածողութեան մէջ ամրագրում է **հարցը՝ հարց տալու** իմաստով, մինչդեռ հեղինակը դիմում է իր նախնիներին, այսինքն՝ հայրերին՝ գրաբարեան յայտնի քերականական ձեւով: Այստեղ կարող է «օգնութեան հասնել» անգամ Բաֆֆու «Սամուէլ» վէպի «Երեք երիտասարդ ուժեր» հատուածում Սահակ Պարթևի խօսքը, որտեղ **նախահարց** բառագործածութեան մէջ նոյն քերականական կարգն է՝ **նախահայրերի** նշանակութեամբ⁵⁹³:

Ստացում է, որ դասուանողողը երկշերտ աշխատանք պիտի կատարի. առաջին՝ բնագիրը բացատրի բառական-քերականական մակարդակում, ապա անցում կատարի գրականագիտական մեկնութեանը:

Դժուարութիւնը կապուած է նաեւ այն բանի հետ, որ արեւմտահայերէն ուսանողը անցնում է շատ աւելի յետոյ, եւ ընդամենը կէս կիսամեակի շրջանակում, մինչդեռ թե՛ հեղինակների առումով, թե՛ լեզուի գործածութեան տեսակետից երկու ճիւղերը հաւասարապես պիտի ուսումնասիրուեն: «Գրականութեան ուսուցիչը պէտք է տիրապետի արեւելահայերէն եւ արեւմտահայերէն լեզուներին: Նրա համար ընտանի պէտք է լինի ե՛ւ Դանիէլ Վարուժանի արեւմտահայերէնը, ե՛ւ Վահան Տերեանի արեւելահայերէնը»⁵⁹⁴: Իսկապէս, մասնագիտական հրամայական է Ալիտա Դոլուխանեանի նկատառումը: Բայց արդե՞՞ք մեր ուսուցիչների գերակշիռ մասը տիրապե-

⁵⁹¹ «Նուազք Հայր Դեռնդեայ Մ. Ալիշանեան Մխիթարեան Վարդապետի», հատոր Գ. / Հայրունի, Գ. տպ., Վենետիկ, Սուրբ Ղազար, 1926, էջ 237:

⁵⁹² «Նոր բառգիրք Հայկազեան Լեզուի», հատոր Առաջին, Ա-Կ, Եր., Երեւանի Համալսարանի հրատ., 1979, էջ 526:

⁵⁹³ «-Եթէ մի օր նախախնամողի կամքը՝ իմ **նախահարց** նման՝ կը կոչէ ինձ Հայաստանի հայրապետական աթոռի վրայ, իմ առաջին հոգսը կը լինի՝ հայոց եկեղեցու ընթերցուածները մայրենի լեզուի վերածել եւ հայ ժողովրդի կրթութեան գործը ազգային բուն հիմունքների վրայ դնել...» (Բաֆֆի, Երկերի ժողովածու տասը հատորով, հատոր Եօթերորդ, Եր., Հայպետհրատ, 1963, էջ 83):

⁵⁹⁴ Դոլուխանեան Ա., Հայ գրականութեան դասուանդման մեթոդիկա, Եր., «Զանգակ - 97», 2006, էջ 7:

տում է երկու լեզուաճիւղերին: Խնդիրը համակարգային է եւ տարածում է առ հասարակ կրթական համակարգի վրայ:

Ուսումնասիրուող մէկ այլ ծրագրային հեղինակի՝ Պետրոս Դուրեանի պարագայում արդէն առանձնացնում ենք դասական ռոմանտիզմի յատկանիշների իւրացումը՝ ուսանողներին ուղղորդելով ճանաչել գեղագիտական համակարգի նրբութիւնները, յատկապէս «Սիրել» բանաստեղծութեան օրինակով, որի առաջին տան տողերի մանրամասն քննութիւնը մեզ կանգնեցնում է ռոմանտիկական զինանոցի գրեթէ ամբողջական ճանաչման ճանապարհին, ինչին համակողմանիօրէն անդրադարձել է գրականագէտ Սուրէն Դանիէլեանը⁵⁹⁵:

Զմոռանանք, որ Պ. Դուրեանը առաջին հերթին ծրագրային հեղինակ է նաեւ դպրոցում, ինչից ուսանողի պատասխանատուութիւնը կրկնակի ծանրանում է: Բանաստեղծի ուսումնասիրութիւնը աշակերտն սկսում է արդէն միջին դասարաններից, մասնաւորաբար՝ ութերորդից: Սա, ըստ էութեան, աշակերտի առաջին հանդիպումն է արեւմտահայ հեղինակի հետ, ուրեմն՝ ուսուցիչը պիտի խիստ ուշադիր լինի, մանաւանդ մեզ առաջարկուող մեթոդական աշխատութիւններում շեշտադրութիւնները միշտ չէ, որ բխում են բուն նիւթի ընկալման սահմանից, ինչպէս օրինակ «Լճակ» բանաստեղծութեան դասաւանդման առաջարկուող մոդելում, երբ ԽԻԿ համակարգի իմաստի ընկալման փուլում, փոխանակ շեշտադրուէն պատկերային մեկնական պահանջներ, ստեղծագործութեան շարժառիթներն են մեկնաբանութեան նիւթ դառնում⁵⁹⁶, ինչը միայն որոշ չափով է ծառայում նպատակին: Մինչդեռ այս փուլում կարելորը բնագրային իւրացումն է⁵⁹⁷: Այս դասագրքում մեզ համար փոքրինչ տարակուսելի է թուում «Տրտունջ» բանաստեղծութեան առկայութիւնը՝ կապուած քերթութեան խոհափիլիսոփայական խտացումի եւ աշակերտի տարիքային գործոնի անհամապատասխանութեան հետ⁵⁹⁸:

Վերադառնալով արեւմտահայ հեղինակների բուհական ուսուցման իւրայատկութիւններին՝ կարող ենք առանձնացնել ոչ երկրորդական այլ հանգամանքներ: Հայ գրականութեան պատմութեան մէջ առանձին ուշագրաւ իրողութիւններ առաւել բնորոշ են արեւմտահայ գրականութեանը: Այդ առանձնայատկութիւններից մէկը, օրինակ, վերաբերում է արձակ բանաստեղծութեանը, որը գրականութեան տեսաբան Աստղիկ Բեքմէզեանի իրաւացի դիտարկմամբ՝ իբրեւ ժանր առաջին հերթին բնութագրում է հենց արեւմտահայ գրականութիւնը: «Արեւելահայ գրականութեան համեմատութեամբ արեւմտահայ հատուածում արձակ բանաստեղծութեան հեղի-

⁵⁹⁵ Այս մասին մանրամասն տե՛ս՝ **Դանիէլեան Ս.**, Արեւմտահայ գրականութիւն. Տիտանի՞կ թէ շարունակականութիւն, Եր., «Գասպրինտ», 2014, էջ 57-64:

⁵⁹⁶ **Կիբակոսեան Գ.**, Հայ գրականութեան դասաւանդման մեթոդիկա / ուսումնամեթոդական ձեռնարկ, Եր., 2015, էջ 74:

⁵⁹⁷ **Տոդանեան Ն., Խաչատրեան Հ.**, Գրականութիւն 9 / մեթոդական ձեռնարկ, Եր., 2012, էջ 56-57 (տե՛ս «Լճակ» բանաստեղծութեան ուսուցմանը նուիրուած հատուածը):

⁵⁹⁸ Տե՛ս **Գասպարեան Դ.**, Գրականութիւն, 8-րդ դասարան, Եր., «Տիգրան Մեծ», 2012, էջ 51-54:

նակների թիւը շատ է»⁵⁹⁹, - գտնում է նա՝ իր մեկնական խօսքը կառուցելով միայն արեւմտահայ հեղինակներից բերուած օրինակների վրայ, ինչպէս Եղիա Տէմիրճիպաշեան, Արշակ Չօպանեան, Թլկատինցի, Լեւոն Բաշալեան եւ ուրիշներ:

Քննութեան նիւթ կարելի է դարձնել երգիծանքի յատկանիշների իւրացման ընթացքը: Ի հա՛րկէ, մեր ուսանողը քաջածանօթ է Խաչատուր Աբովեանի, Ռափայէլ Պատկանեանի, Միքայէլ Նալբանդեանի երգիծանքի առանձին կողմերին, բայց անժխտելի է, որ երգիծաբանական դպրոցի առաջնորդութիւնը հայ գրականութեան պատմութեան մէջ կապում է երկու հսկաների՝ Յակոբ Պարոնեանի ու նրա հաւատարմ աշակերտ Երուանդ Օտեանի անունների հետ եւ շարունակում մինչեւ Լեո Կամսար, Առանձար եւ ուրիշներ: Այստեղ կարելոր է, որ ուսանողները համադրական քննութեան միջոցով կարողանան յստակ գանազանել՝ ինչ է իրենից ներկայացնում երգիծանքի տարրերի առկայութիւնը հեղինակի ստեղծագործութեան մէջ, եւ ինչ է երգիծանքը՝ իբրեւ ստեղծագործական մեթոդ: Այս առումով բաւական է միայն կողք կողքի դնել Միքայէլ Նալբանդեանի «Աղցմիք» պարոդիան եւ Յակոբ Պարոնեանի «Ազգային ջոջեր» դիմանկարների շարքը (թէկուզ երկու հեղինակների՝ արեւմտահայ բանաստեղծ եւ հոգեւոր գործիչ Խորէն Գալֆայեանի կերպարի վերհանման առանձնայատկութիւնների տարբերակումով):

Այդպէս նաեւ հայ գրականութեան պատմութեան մէջ հենց արեւմտահայ հեղինակի՝ Գրիգոր Զօհրապի ստեղծագործութեան ուսումնասիրութեան շնորհիւ է, որ մենք կարող ենք ամբողջական գաղափար կազմել նովելի ժանրի մասին, ինչը նկատուել է նաեւ տեսաբանական դիտարկումներում. «Զօհրապը սուր ձեւով զգացել է նովելի սպեցիֆիկան: Նա, թերեւս, միակն է հայ նովելիստներից, որ սպառել է այս ձեւը՝ իր դասական արտայայտութեամբ»⁶⁰⁰:

Զուտ արեւմտահայ գեղագիտական իրողութիւն է «հեթանոսական» գրական շարժումը, առանց որի տրամաբանութեան ուսումնասիրութեան թերի կը մնայ «ամենի Վարուժանի» արուեստի ընկալումը: Նմանօրինակ քննութեան ճանապարհին անպայմանօրէն պիտի նկատի ունենալ գրապատմական առնչութիւնները, որոնք գոյութիւն ունեն արեւելահայ եւ արեւմտահայ հատուածների հեղինակների ու իրողութիւնների միջեւ: Ասենք, այս պարագայում խիստ կարելոր է նաեւ արեւելահայ գրականութեան մէջ շարժման մեկնաբանութիւններին դիմելու անհրաժեշտութեան գիտակցութիւնը, ինչպէս օրինակ, Վահան Տէրեանի եւ Եղիշէ Զարենցի յայտնի գնահատութիւններն ու վերաբերմունքը⁶⁰¹, որոնք ցոյց են տալիս գրականութեան երկու

⁵⁹⁹ «Մանկավարժական միտք» հանդէս, թիւ 1-2, 2015, Եր., «Զանգակ - 97», էջ 131 (տե՛ս «Ժամանակաշրջանի եւ թեմայի փոխկապակցուածութեան խնդիրը գեղարուեստական ստեղծագործութեան մէջ» յօդուածը):

⁶⁰⁰ «Գրական ժանրեր. պատմական զարգացումը եւ ժամանակակից վիճակը» / Զրբաշեան Էդ., Փանեան Եւռ., Մարգարեան Հ., Մարգունի Հ., Եր., ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1973, էջ 356:

⁶⁰¹ Երկու հեղինակներին էլ «չի բաւարարում» «հեթանոսական» գրական շարժումը եւ յատկապէս Դանիէլ Վարուժանի ստեղծագործութիւնը: Նրանցից Վահան Տէրեանը «Հայ գրականութեան գալիք օրը» յօդուածում յայտարարում էր. «Յովհ. Թումանեանի մի «Փարւսնա»-ն եւս չեմ փոխի պոլսահայ

թելերի առընչություններն ու յարաբերությունները, որոնք երբեմն կարող են լինել ներհակ ու բարդ, բայց հետազոտողին թոյլ են տալիս մեկ միասնական բնագրում ճանաչել գրականության զարգացման տրամաբանությունը:

Ցաօթ, մենք այսօր չենք կարող պնդել, որ գրական այդ միասնական ընկալումը իրողություն է: Մասնագիտական բաժանմունքներում թերեւս, ելնելով հենց նոյն մասնագիտական պահանջից, կարելի է խօսել այդպիսի մատուցման ու ընկալման ջանքից, իսկ ահա ոչ բանասեր ուսանողներին դասաւանդող դասախօսի եւ այդ բաժանմունքների սաների համար առաւել բարդ է խնդիրը:

Մեր դասաւանդման փորձը յարակից բաժանմունքներում (մասնաւորապէս՝ կրթութեան հոգեբանութեան եւ սոցիոլոգիայի, օտար լեզուների) ցոյց է տալիս, որ «Հայոց լեզու եւ գրականութիւն» առարկայի շրջանակում դասախօսի համար փորձութեան նման մի բան է արեւմտահայ հեղինակների մատուցումը, երբ մասնաւոր փորձ է արւում տրուած փոքր ժամաքանակի մէջ պահպանել հաւասարակշռութիւն՝ ներառելով նաեւ սփիւռքահայ գրականութեան ներկայացուցիչներին, այս պարագայում՝ Վահան Թեքեանին: Վերջինիս անունն անգամ անձանօթ է հենց նոր դպրոցական նստարանը լքած մեր ուսանողութեանը: Նոյնիսկ այնպիսի քնարական ու սրտխօսիկ բանաստեղծը, ինչպիսին Միսաք Մեծարենցն է, երբեմն «դիմադրութեան» է հանդիպում՝ «չենք հասկանում» յայտնի ձեւակերպումով: Սակայն այս պարագայում կարելորդ է ճիշդ մեթոդաբանութեան ընտրութիւնը: Այսպէս, Մ. Մեծարենցի դիմաց եւ ի հակակշիռ ուսանողները բերում են Վ. Տէրեանի անունը: Հենց այս հակադրութիւնն էլ «շահարկելով»՝ կարելի է հասնել դրական արդիւնքի: Բաւական ջանքեր են պահանջուում մասնագէտներից ուսանողներին համոզելու, որ նոյնքան սիրելի ու ուժգին են մեծարենցեան պատկերները: Այստեղ կարող է օգտակար եւ արդիւնաւետ լինել գուգադիր քննութիւնը, երբ ճանաչելիի միջոցով սովորողը ընդառաջ է գնում անձանաչին, ինչն աւելի հետաքրքիր եւ ամբողջական է դարձնում նրա մտահորիզոնի ընդլայնումը:

Այսպէս, Մ. Մեծարենցի բնութեան պատկերները, թախծի տրամադրութիւնները կարելի է մեկնաբանել հենց Վ. Տէրեանի նոյնայանգ բանաստեղծութիւնների պատկերային համակարգի շրջանառութեան միջոցով, որտեղ հետաքրքիր գուգահեռներ

բոլոր յանկարծակի հեթանոսացած պօետների արտադրութեանց հետ» (Տէրեան Վ., Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 3 / յօդուածներ եւ գեղուցումներ, Եր., «Հայաստան», 1975, էջ 94): Այդպէս է վարւում նաեւ Եղիշէ Զարեանը՝ «Մերի դաշնագրից մինչեւ «Հայ կանանց ալեծուփ մագերը եւ հեթանոս մարմինը» կամ ընդհակառակը» յօդուածում սլաքն ուղղելով «Նաւասարդ»ի դէմ. «Նրանք (շարժման ներկայացուցիչները – Ք.Ա.) երազում էին վերադարձած տեսնել հայկական ֆեոդալական միջնադարը՝ իր լեզենդական արքաներով եւ աստուածներով: Եւ կարծում էին, թէ նախակարապետներն են հայկական նոր Ոսկեդարի, նորագոյն Ռենեսանսի, երբ դարերի մոխրից, աւերից ու աւարից ելնելով նոր թռիչք է ստանում նայիրեան հանճարը.

Հանճարդ հայկեան, նաւասարդեան...

Գիտէ՞ք այս երբ էր գրուում, ընթերցո՞ղ... 1914 թուականին» (Զարեան Ե., Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 6, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, էջ 156):

են պարզում «սատափե» ու «նրբակերտ» մթնշաղների («Աքսսիաներու շուքին տակ» եւ «Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ...»), «երագներու պերճուհու» եւ «գունատ աղջկայ» («Վայրկեան» եւ «Տխրութիւն») համադրումների ճանապարհով, ինչն օգնում է ոչ միայն պարզել երկու հեղինակների զուտ պատկերային մտածողութեան նմանութիւնը, այլեւ ուսանողներին գաղափար տալ սիմվոլիզմի դրսեւորումների մասին:

Նոյն սկզբունքով կարելի է «սիրցնել» Վահան Թեքեանի բանաստեղծութիւնը՝ այս անգամ դիմելով ամենայն հայոց բանաստեղծի բարերար ներգործութեանը: Այստեղ արդէն համեմատութեան եզրերը երեւան են գալիս հայրենիքի ու նրա ճակատագրի շուրջ երկու հեղինակների մտահոգութիւնների փոխկանչից: Այսօրինակ հետաքրքիր քննութեան դաշտ են բացում Վ. Թեքեանի եւ Յովհ. Թումանեանի «Հայու հոգին» եւ «Հայոց վիշտը», «Հայ ազգին» եւ «Հայրենիքիս հետ» ստեղծագործութիւններում ազգային նիւթի հանդէպ մօտեցումների իւրայատկութիւնների վերհանումները, «Աստուծոյ», «Հաշուեյարդար» բանաստեղծութիւնների եւ թումանեանական քառեակների ճանապարհով հեղինակների աշխարհափիլիսոփայութեան, մարդու ու աստուածայինի խորհուրդների մեկնութիւնները: Աշխատանքի արդիւնաւետութիւնը ակնյայտ է դառնում, մանաւանդ երբ ակտիւօրէն նոր գիտելիքի բացայայտման ճանապարհին իրենց կարծիքներն ու դիտարկումներն են կատարում նաեւ ուսանողները, որտեղ գիտելիքի ինքնուրոյն ձեռք բերումը սովորողին դարձնում է շահագրգիռ կողմ, մղում նոր կապերի ու առընչութիւնների վերհանման:

Եթէ ամփոփելու լինենք, կարող ենք ասել, որ մենք ընդհանուր գծերով փորձեցինք անդրադարձ կատարել արեւմտահայ հեղինակների՝ մանկավարժական ուսումնական հաստատութիւններում դասաւանդման մեր նկատած խնդիրներին: Այս համարնագրում պիտի դիտել նաեւ արեւմտահայ նորագոյն՝ սփիւռքահայ գրականութեան դասաւանդումը: Այստեղ մխիթարական է այն հանգամանքը, որ սփիւռքահայ գրականութիւնը բարձրագոյն ուսումնական հաստատութիւնների մասնագիտական բաժանմունքներում դիտուում է իբրեւ առանձին դասընթաց, քանի որ իր զարգացման առանձնայատկութիւններով, շարժումների տրամաբանութեամբ, գաղթօջախների բազմազանութեամբ, մտահոգութիւնների ու թեմատիկայի առումով անջատ, առանձին համակարգ է: Այս պարագայում իւրացման արդիւնաւետութիւնը կախում ունի արդէն դասաւանդող մասնագէտի աշխատառճից՝ ի հա՛րկէ, այս ամենի կողքին հաշուի առնելով արեւմտահայ բնագրերի ուսուցման նրբութիւնները, ի մտի ունենալով հայ գրականութեան միասնական պատմութեան ճանաչողութեան շարունակական հրամայական-պահանջը:

Բանալի բառեր – արեւմտահայ գրողներ, արեւմտահայերէն, դասաւանդման իւրայատկութիւններ, ուսումնական հաստատութիւն, մեթոդաբանութիւն, համադրական աշխատանք, լեզուամտածողութեան տարբերութիւն, գրականութեան պատմութիւն, գրամշակութային կեանք, բնագրի ընկալման խոչընդոտ:

Քնարիկ Աբրահամյան, Արեւմտահայ հեղինակների դասաւանդման մեր փորձից
- Գաղտնիք չէ, որ մեր ուսանողութեան եւ աշակերտութեան շրջանում արեւմտահայ հեղինակների իւրացումը բաւական խնդրայարոյց է: Այդ խնդիրներից ամենից կենսականը թերեւս լեզուական գործօնն է: Յօդուածում փորձ է արուել մատնանշել այն խոչընդոտները, որոնց յաղթահարումից է կախուած այդ հեղինակների դասաւանդման արդիւնաւէտութիւնը: Հիմնականում նկատի ենք ունեցել մանկավարժական ուսումնական հաստատութիւններում «Հայ գրականութիւն» առարկայի ուսուցման համատեքստում արեւելահայ եւ արեւմտահայ հեղինակների հնարաւորինս միասնական քննութեան անհրաժեշտութիւնը՝ մեր դիտարկումները հիմնաւորելով Ղ. Ալիշանի, Պ. Դուրեանի, Յ. Պարոնեանի, Մ. Մեծարեւնցի, Գ. Զօհրապի, Դ. Վարուժանի, Յովհ. Թումանեանի, Վ. Տէրեանի, Դ. Վարուժանի, Ե. Չարենցի ստեղծագործութիւնների ու գրական իրողութիւնների զուգադիր վերհանման ճանապարհով:

Кнарлик Абраамян, Из нашего опыта преподавания западноармянских авторов - Не секрет, что изучение произведений западноармянских авторов для наших студентов филологических факультетов и учеников общеобразовательных школ, остаются проблематичными. Важнейшим из этих проблем является лингвистический фактор. В статье мы стремились указать те препятствия, преодоление которых во многом решает эффективность преподавания этих авторов. В основном мы имели ввиду преподавание общеармянской литературы в вузах в едином русле восточноармянских и западноармянских авторов, основываясь на творчество Г. Алишана, П. Дуриана, А. Пароняна, М. Мецаренца, Г. Зограба, О. Туманяна, В. Теряна, Д. Варужана. Е. Чаренца и других.

Knarik Abrahamyan, From our Teaching Experience of Western Armenian Authors - It does not come as surprise that learning Western Armenian authors is quite problematic for philology students and pupils of secondary school. The most important of these problems is the linguistic factor. The article attempts to point out the barriers, overcoming which can influence greatly the effectiveness of teaching those authors. We have mainly mentioned the necessity of parallel analysis of Eastern Armenian and Western Armenian authors in the context of teaching "Armenian literature" in higher pedagogical educational institutions. We had established our observations on literary works of G. Alishan, P. Duryan, H. Paronyan, M. Metsarents, G. Zohrap, D. Varuzhan, H. Tumanyan, V. Teryan, D. Varoujan, E. Tcharenc and others.

QUELQUES PROBLÉMATIQUES DEL'ENSEIGNEMENT DE L'EXPRESSION ÉCRITE

AÏDA MARDANIAN, ANAHIT HOVHANNISSIAN

L'expression écrite est la forme la plus difficile d'acquisition d'une langue étrangère. L'acquisition de la langue écrite est liée aux certaines difficultés qui ne sont pas propres à la langue parlée.

La langue écrite est toujours surchargée du matériel lexical et exige des constructions syntaxiques volumineuses. «Il est évident que la langue parlée est aidée des moyens prosodiques : intonation, geste, mimique ce qui manque à celui qui produit la langue écrite».⁶⁰²

L'approche communicative de l'enseignement d'une langue étrangère a mis l'accent sur l'aspect pragmatique de la production écrite. L'écrit n'est plus, comme dans les méthodologies traditionnelles, la norme souveraine du langage, ni, comme dans les méthodologies audio-visuelles, subordonné à l'oral. Ecrire devient un acte de communication fonctionnel, un savoir et un savoir-faire spécifique permettant à l'apprenant de s'exprimer et de communiquer au moyen d'un système de signes spécifiques, les signes graphiques.

«Tout le monde n'a sans doute pas le talent d'un écrivain, mais chacun de nous peut parvenir à écrire de façon correcte pour les besoins de sa vie étudiante ou professionnelle. Passé le temps de l'école où les cours de français paraissent souvent inutiles, on se rend vite compte qu'il faut sans cesse écrire: des mails, des lettres de motivation, des rapports de stage, des compte-rendus de réunion, des mémoires....»⁶⁰³.

Comme tout acte langagier, l'acte d'écrire s'inscrit dans une situation de communication particulière, met en œuvre des structures linguistiques, et réalise une intention de communication. L'aspect socio-culturel de la communication écrite mais aussi l'aspect individuel et affectif du scripteur sont pris en compte.

Si l'approche communicative répond à la question «écrire pour quoi faire?», la réponse à la question «comment faire pour écrire?» reste problématique. La compétence de production écrite demeure une compétence langagière délicate à enseigner et à faire acquérir. En effet, la communication écrite est soumise à des paramètres bien spécifiques que nous évoquons rapidement.

La communication écrite se caractérise par l'absence d'un face-à-face entre le scripteur et le destinataire; l'émetteur du message et le récepteur n'étant pas en contact direct, la communication est de fait différée. D'autre part, puisque le destinataire est absent,

⁶⁰² A. Mardanian, Z. Arakélian, *Méthodologie de l'enseignement du français*, Erévan, 2016

⁶⁰³ Michèle Longour – *Améliorer son expression écrite*, Paris 2012

voire virtuel, l'émetteur d'un message écrit (le scripteur) ne peut pas contrôler l'effet de son message sur le destinataire.

Ce décalage dans le temps et cette absence dans l'espace impliquent des contraintes spécifiques à la production écrite:

- l'organisation rigoureuse des signes graphiques (écriture lisible, orthographe, ponctuation, typographie) pour la lisibilité et l'expressivité du texte;

- la clarté du message (précision du vocabulaire, correction de la syntaxe, concision). Puisque il n'est pas possible de s'expliquer en direct, il est nécessaire de lever les ambiguïtés possibles du message en fournissant au lecteur des repères de sens (récurrence de mots ou de thèmes, redondances de constructions, connecteurs, anaphoriques);

- l'élaboration d'un discours en continu (phrases complexes, liens logiques, cohésion textuelle) car il n'aura pas d'interruption.

Le texte écrit doit donc être un tout, lisible, clair, construit et achevé pour une meilleure réception possible.

En contrepartie, le scripteur n'étant pas en situation de dialogue, a le temps et la solitude pour lui, ce qui permet de reformuler son message. Il a donc la maîtrise de la situation et reste celui qui initie et construit un discours sans être interrompu. Cette stabilité de rôle lui permet de prendre du recul par rapport à son projet de texte, voire de modifier son intention de communication. En l'absence des réactions immédiates du récepteur, il a toute latitude pour faire ses choix lexicaux et syntaxiques. Ce recul possible vis-à-vis de son texte lui permet d'organiser, de modifier, de réviser son discours avant qu'il ne parvienne au destinataire (ce qui est impossible à l'oral).

Pourtant, la situation d'écriture demeure très «anxiogène» (l'angoisse de la page blanche) car les apprenants ont généralement une représentation normative de l'écrit (il est difficile de bien écrire même dans sa langue maternelle) et des souvenirs d'apprentissage parfois traumatisants. Ainsi l'enseignement devra-t-il dédramatiser l'acte d'écrire en renforçant la motivation de l'apprenant.

Il y aurait à l'écrit un transfert de compétence d'une langue à l'autre. Il semble, en effet, que les progrès en production écrite sont transférables d'une langue à l'autre: ainsi, si les apprenants améliorent leur orthographe en langue étrangère, ils progressent également en orthographe dans leur langue maternelle ce qui constitue un facteur de motivation pour eux.

La production écrite en langue étrangère induit une certaine immaturité dans l'écriture car les apprenants débutants en langue étrangère (bien qu'adultes) ont des stratégies d'apprentissage qui se rapprochent de celles des enfants en langue maternelle (production de textes courts, syntaxe juxtaposée simpliste). Ils perdent de vue le sens global de leur production en focalisant leur attention sur des détails orthographiques ou grammaticaux.

Il faut, donc tenter de contrecarrer cette focalisation sur les formes de la langue écrite par une sensibilisation à la globalité du texte et, pour cette raison, il est indispensable d'exposer ces scripteurs à des textes riches et variés que l'on choisira, le plus souvent, un peu au-dessus de leur capacité moyenne de compréhension.

Nous distinguons deux types de savoir-faire écrits à enseigner:

- savoir orthographier (assurer le passage du code oral au code écrit, activité qui implique la connaissance du système graphique du français);
- savoir rédiger (construire une phrase écrite, enchaîner des paragraphes, produire un texte cohérent).

Il faudra donc aider l'apprenant à maîtriser ces deux niveaux de compétences (discours et langue), en travaillant chaque niveau avec précision, mais en les réunissant toujours dans des activités de productions d'écrits. Pour le faire, il sera nécessaire de suivre les conseils suivants.

Ne pas demander aux apprenants d'écrire un texte à partir de rien (même un petit récit personnel) s'ils n'ont pas été confrontés auparavant à des récits écrits dans la langue cible, mais toujours s'appuyer sur une analyse de texte préalable. «Le texte analysé « déconstruit » fonctionnera alors comme un modèle (on évite d'ailleurs ainsi l'angoisse de la page blanche). On utilisera les manières d'écrire mises à jour comme une matrice pour créer un nouveau texte.»⁶⁰⁴

Par exemple, avec des débutants, il est possible d'utiliser des poèmes simples à phrases récurrentes, ou de choisir des extraits de romans décrivant en peu de lignes un personnage, ou un paysage, ou selon le niveau, de courtes critiques de films dans les journaux, ou des faits divers. L'essentiel est de comparer des «échantillons» d'écrire de même type, d'en dégager la structure commune pour pouvoir l'imiter.

Il n'est pas nécessaire d'attendre que les apprenants maîtrisent tout le système grammaticale et orthographique pour leur demander de produire des textes. Les diverses compétences sont en interaction; on sait qu'écrire peut aider à lire et vice versa. Dès le début de l'apprentissage, il faut faire inclure la lettre dans un mot, le mot dans une phrase, la phrase dans un texte et le texte dans un message. On inculque alors aux apprenants le sens de la chaîne écrite dans sa spatialité et dans son sens.

La progression se fondera d'abord sur la longueur de l'écrit demandé et sur le vocabulaire (c'est le lexique qui porte le sens en début d'apprentissage).

1. Faire produire des textes courts (petits mots pour informer ou s'excuser; réponse à une invitation, description de sa chambre, etc.
2. Puis demander des textes plus longs (récits chronologiques, évocation de souvenirs) qui mettront en jeu des structures narratives.

⁶⁰⁴ F. Desmons, F. Ferchaud, *Enseigner le FLE* (français langue étrangère), Paris, 2005

3. Ensuite, faire rédiger des critiques pour l'argumentation (emploi des connecteurs logiques).

Il faut établir avec les apprenants une liste des types d'écrits qui leur sont ou leur seront utiles dans le pays étranger ou dans leur pays et qu'ils souhaitent maîtriser (écrits fonctionnels comme la lettre de motivation, de demande, de renseignement, de réalisation de bail, etc.). L'apprenant sera plus motivé en rédigeant, à partir des modèles authentiques, des écrits qui ont du sens pour lui: sens social fonctionnel (écrits utilitaires) ou affectif rationnel (relations amicales, amoureuses).

Il faut utiliser les écrits littéraires pour imiter leurs structures narratives et descriptives, mais aussi pour faire pratiquer le plaisir de l'écrit non-fonctionnel, l'écrit intérieur et créatif, l'écrit pour soi. L'on fera des exercices d'écriture type « à la manière de... », ce qui intéresse et motive les apprenants. L'apprenant sait que devenir un écrivain ne s'apprend pas (même en langue maternelle), mais il est gratifiant de produire un beau texte surtout en langue étrangère.

Bibliographie

1. Fabienne Desmons, Françoise Ferchaud et d'autres - « Enseigner le FLE » (français langue étrangère) (Pratique de classe), Paris, Edition Belin, 2005
2. Aïda Mardanian, Zarouhie Arakélian - « Méthodologie de l'enseignement du français », Erévan, 2016
3. Աստվածատրյան Մ. Գ. - « Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա », Երևան, Լույս, 1985
4. Michèle Longour « Améliorer son expression écrite », Paris 2012
5. Debyser, F. - "Guide pédagogique pour le professeur de français langue étrangère", Paris, Librairie Hachette, 1971
6. Miniar-Beloroutchiev - « Méthodologie de l'enseignement du français », Moscou, 1984

Mots clés - prosodique, pragmatique, un savoir-faire, acquérir, le scripteur, le récepteur, la page blanche, induire, inculquer.

Aïda Mardanian, Anahit Hovhannissian -- *Quelques problématiques de l'enseignement de l'expression écrite.* - En étudiant quelques problématiques de l'enseignement de l'expression écrite nous sommes arrivées à la conclusion que celle-ci est la forme la plus difficile d'acquisition d'une langue étrangère qui est liée aux certaines difficultés qui ne sont pas propres à la langue parlée.

La communication écrite se caractérise par l'absence d'un face-à-face entre le scripteur et le destinataire.

Nous distinguons deux types de savoir-faire écrits à enseigner: savoir orthographier, savoir rédiger.

Il faudra donc aider l'apprenant à maîtriser ces deux niveaux de compétences(discours et langue), en travaillant chaque niveau avec précision , mais en les réunissant toujours dans des activités de productions d'écrits. Il n'est pas nécessaire d'attendre que les apprenants maîtrisent tout le système grammatical et orthographique pour leur demander de produire des textes. Les diverses compétences sont en interaction; on sait qu'écrire peut aider à lire et vice versa. Dès le début de l'apprentissage, il faut faire inclure la lettre dans un mot, le mot dans une phrase, la phrase dans un texte et le texte dans un message. On inculque alors aux apprenants le sens de la chaîne écrite dans sa spatialité et dans son sens.

Աիդա Մարդանյան, Անահիտ Հովհաննիսյան, Գրավոր խոսքի ուսուցման որոշ հիմնախնդիրներ- Ուսումնասիրելով օտար լեզվով գրավոր խոսքի դասավանդման որոշ հիմնախնդիրներ՝ մենք եկանք այն եզրակացության, որ այն օտար լեզվին տիրապետելու գործընթացում ամենադժվար ասպեկտն է և այն կապված է որոշակի դժվարությունների հետ, որոնք հատուկ չեն խոսակցական լեզվին:

Գրավոր հաղորդակցումը բնութագրվում է նրանով, որ գրողն այդ պահին հնարավորություն չունի ճշտելու՝ արդյոք ինքը հասկանալի է, թե ոչ:

Մեթոդիկայում տարբերակվում են գրավոր հմտությունների դասավանդման երկու կողմ. Կարողանալ գրել ճիշտուղղագրությամբ, կարողանալ խմբագրել: Ուրեմն պետք է օգնել սովորողներին տիրապետել կարողությունների այս երկու մակարդակներին (լեզուն խոսք)՝ ճշգրտորեն աշխատելով յուրաքանչյուր մակարդակի վրա, բայց դրանք միշտ միավորելով գրավոր խոսքում: Պարտադիր չէ սպասել, որ սովորողները տիրապետեն ողջ քերականական և ուղղագրական համակարգերին, որպեսզի նրանցից պահանջենք տեքստեր վերարտադրել: Տարբեր կարողությունները փոխներգործության մեջ են: Հայտնի է, որ գրելը կարող է օգնել կարդալուն և ընդհակառակը: Ուսուցման հենց սկզբից պետք է տառը ներառել բառի մեջ, բառը՝ նախադասության մեջ, նախադասությունը՝ գրավոր խոսքի մեջ: Այսպիսով սովորողներին պատկերացում ենք տալիս խոսքի շղթայի մասին՝ իր տարածական և իմաստային առումներով:

Aida Mardanyan, Anahit Hovhannisyan , On some issues related to teaching writing. - Having studied some issues on teaching writing in a foreign language we've come to the conclusion that it's the most difficult of the aspects in the process of foreign language apprehension, and that's because of certain difficulties which are not specific to oral speech. Written communication is characterized by the fact that the writer doesn't have the opportunity to clarify whether he/she is understood or not. Two aspects in teaching writing skills – the ability to write using a correct orthography and to edit have been differentiated. Thus, learners should be aided in apprehending these two abilities – language and speech, working precisely on each level while constantly uniting them in written discourse. Learners aren't necessarily expected to have a full command of the grammatical and orthographical systems to be required to reproduce texts. The different

abilities are in interaction. It's a well-known fact that writing may assist in reading and vice versa. Right on the outset of learning the letter must be involved in a word, the word- in a sentence, the sentence – in written discourse. Thus, the learners get acquainted with the discorsal chain with reference to its area and meaning.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՈԱՑԻԿ ՆԱՀԱՊԵՏՄԱՆ

Ե.ԼԱԼԱՅԱՆԸ ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՑՄԱՆ ՄԵԹՈԴԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՂ.....5

ԷՂԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ, ՆԺԴԵՀ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1995-2001 ԹԹ.....20

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԵՐՈՔՅԱՆ

ՍՈՒՄԳԱՅԻԹՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ
1988 Թ. ՀՈՒՆԻՍ ԱՍՄԻՆ (ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ).....29

ՄԿՐՏԻՉ ԴԱՆԻԵԼՅԱՆ

1903 Թ. ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ
ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՄԱՍՈՒԼՈՒՄ.....49

ԱՐԱՐԱՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՕՇԻՆ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ ԳԱՂԹԸ ԿԻԼԻԿԻԱ 1073 Թ.....57

ՆԺԴԵՀ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1991-1994 ԹԹ.....66

ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԹԻՖԼԻՍՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ՀԱՅ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱԽՈՒՇՏԻ ԱՐՔԱՅԱԶՆԻ
«ՎՐԱՑԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ» ԵՐԿՈՒՄ.....77

ԱՐՄԵՆ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՊԱՐՄԿԱ-ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ VI ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ.....84

ԵԿԵՂԵՑԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ
ՍԱՀԱԿ Բ ԽԱՊԱՅԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ
ԵՐՈՒՍԱՂԵՄՅԱՆ ՇՐՋԱՆԸ.....97

ԱՐՇԱԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԵԿԵՂԵՑԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ
ԱՐԾՐՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ.....109

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԱՀԱՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ, ՄԵՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԵՐՊԱՐԱԿԵՐՏՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Ս. ԽԱՆՁԱՂՅԱՆԻ «ԽՈՍԵ՛Ք, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՌՆԵՐ»
ՊԱՏՄԱՎԵՊՈՒՄ.....121

ՌՈՒՋԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ

ՄԻՇԵԼ ՈՒԵԼԲԵՔԻ «ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ» ՎԵՊԸ
ԹԱՐԳՄԱՆՉԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ.....134

NARINE GASPARYAN

COMPLIMENTING IN ENGLISH AND IN ARMENIAN CULTURES.....142

ՆԵԼԼԻ ԱՅՎԱԶՅԱՆ

ՀՈՒՅՁԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ.....149

ՆԱՐԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՆԵՐԱԿԱ ԳՆԱՀԱՏՈՂԱԿԱՆ ԱՍՈՒՅԹՆԵՐ
ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԽՈՍՔԱՅԻՆ ԱԿՏԵՐ.....156

SVĖTA OHANIAN

L'EXPRESSION DES ACTES DE REMERCIEMENT
DANS LE FRANÇAIS.....163

ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԾԱՏՐՅԱՆ

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՄԻՋԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ.....168

АЙК СТЕПАНИЯН

ТЕЛЕОЧЕРК – КАК ОДИН ИЗ КЛЮЧЕВЫХ ФОРМАТОВ
ТЕЛЕВИЗИОННОГО ДОКУМЕНТАЛЬНОГО КИНО АРМЕНИИ.....177

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԾԱՏՐՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ԶԼՄ-ՆԵՐԸ՝
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄՈՒՄ.....183

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՆՈՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ.....191

ԱՐՓԻՆԵ ԵԳԱՆՑԱՆ

ԼԻԶԻՆԳԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ.....196

ԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ
ԲԱՆԻՄԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԿԱՐԵՎՈՐ ՈՐԱԿՆԵՐԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ.....203

ՎԱՀԱՆ ՊՈՏՈՍՅԱՆ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ
ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ
ՄԱՐԴԱՇԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀՀ ԼԵՌՆԱՅԻՆ և ԲԱՐՁՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ.....209

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՆԱՐԵԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԻԳՐԱՅԻՈՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ.....221

ԱՐՄԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ՀԻՄՔԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԸ (1922-1938թթ.).....213

ՎԱՐԴԱՆ ՂԱՓԼԱՆՅԱՆ

1992-1993 թթ ՎՐԱՑ-ԱԲԽԱԶԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ
ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐԻ
ՆԿԱՏՄԱՍԲ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՎԱՐԱԾ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....238

ЕВГЕНИЯ ГЯНДЖУМЯН

ПРАВО ПРИОБРЕТЕНИЯ ДОЛИ В
СТРОЯЩЕМСЯ ЗДАНИИ КАК ОГРАНИЧЕННОЕ
ВЕЩНОЕ ПРАВО В РА.....246

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԼԱԴԻՄԻՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ, ԼՈՒՄԻՆԵ ԿՏԻԿՅԱՆ

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՏԻՎԱՅԻԱՅԻ

ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐԸ.....252

ՄԱՂԵՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՕԺՏՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻՆ ԲՆՈՐՈՇ

ԱՆՁՆԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՀՈՒՋԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԻՑ

ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԲԵՎԵՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....261

ՆԱԻՐԱ ՍԱՐՀԱՏՅԱՆ

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՋԱՐԳԱՅՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....267

ԱՆՆԱ ՔԱՄԱԼՅԱՆ

ՄԱՀՄԱՆԱՄԵՐՉ ԳՈՏՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ

ՍԹՐԵՍ-ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎՐԱ.....277

ՆՈՒՆԵ ԱՂԱՍՅԱՆ

ՑԱՆՑԱՅԻՆ ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ՎԱՃԱՌՈՂՆԵՐԻ

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴԻՄԱՆԿԱՐԻ

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ.....286

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ

ԻՐԻՆԱ ՊՈՆՈՄԱՐԵՆԿՈ

ԱՎԱԳ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՒՋԱԿԱՆ

ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ.....296

ՄԱՐՏԻՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ԴԻՋԱՅՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՏԵՍԱԿԱՆ

ԴԱՍԸՆԹԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈՂԻԿԱՆ.....301

ԳՈՇ ՄԱՐԳԱՅԱՆ

ԹԱՏՐՈՆԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....309

ԳՐԻԳՈՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ԱՐԱԳԱՌԺԱՅԻՆ ՄԱՐՋԱԶԵՎԵՐՈՒՄ.....314

ՄԻՐԱՆՈՒՇ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ԼԻԼԻԹ ԱՂԼՈՑԱՆ
ՄԻՆԶՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԲԱՅ
ՕՐԳԱՆԱԿԱՆ ՌԻՆՈԼԱԼԻԱ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՎԱՆԵՐԻ
ԿԱՊԱԿՑՎԱԾ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀՆԱՐՆԵՐԸ,
ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ.....321

ԱՆՆԱ ՄԻՄՈՆՅԱՆ
ՓՈՂԻ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ.....328

ՔՆԱՐԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԴԱՍԱԻԱՆԴՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԻՑ.....333

AÏDA MARDANIAN, ANAHIT HOVHANNISSIAN
QUELQUES PROBLÉMATIQUES DE L'ENSEIGNEMENT
DE L'EXPRESSION ÉCRITE.....342

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱԿՈՒՆՔԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Ակունքում» տպագրության ներկայացվող հոդվածների տեխնիկական պահանջները.

Տպագրության ներկայացվող հոդվածները պետք է գրված լինեն Word տեքստային խմբագրի օգնությամբ:

Հոդվածները ներկայացնել հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն լեզուներով:

Հոդվածի շարվածքը լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝ նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A4:

Հոդվածի սկզբում գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ մեծատառերով:

Հղումները դնել տողատակում՝ համարների աճման կարգով, նշել աղբյուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը) և էջը (էջերը):

Հոդվածի վերջում գրել բանալի բառերը, հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը՝ 50-60 բառի սահմաններում:

Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև հեղինակի (հեղինակների) տվյալները՝ կոչումը, պաշտոնը, աշխատանքի վայրը, հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցե (e-mail):

Հոդվածներն ուղարկել akunq.ysuib@gmail.com էլեկտրոնային հասցեին:

ԱԿՈՒՆՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 1 (18)

Համարի պատասխանատու՝ Թ. Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

Տեխնիկական խմբագիր՝ Վ. Մ. ՂԱՐԱԽԱՆՅԱՆ

Չափսը՝ 70x100/16: Ծավալը՝ 22 պայմ. տպ. մամուլ: Տպաքանակը՝ 100

ԵՊՀ հրատարակչություն

Ք. Երևան, 0025, Ալ. Մանուկյան 1

A K U N Q
COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES
NUMBER 1 (18)

Executive editor: T. V. SARGSYAN

Cover and content design: V. M. GHARAKHANYAN

Format: 70x100/16. Size: 22 conventional printed sheets. Copies: 100.

YSU Publishing House

Yerevan, 0025, Al. Manukyan 1

